

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՍՈՎԻԵՏ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

VI

**ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ**

**ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ**

**ՏԱՍԸ ՇԱՏՈՐՈՎ**

**Շատրոպ վեցերորդ**

**ՀԱՅ ԱՐՁԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ  
(1950-1990-ական թթ.)**

**ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2010**

ՉՏԴ 891.981.0

ԳՄԴ 83.3 Հ

Խ 256

**Հեղինակ՝ Սոկրատ Խանյան  
Խմբագիր՝ Հովիկ Մուսայելյան**

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ 80-ամյակի  
կապակցությամբ հատորները տպագրվում են  
ԼՂՀ գրողների միության վարչության եւ  
Արցախի պետական համալսարանի  
գիտական խորհրդի երաշխավորությամբ

**ԽԱՆՅԱՆ Ս. Ա.**

Խ 256

**Ընտիր երկեր: Վեցերորդ հատոր: Հայ արձակի զարգացման  
միտումներն Արցախում (1950-1990-ական թթ.): Սոկրատ  
Խանյան: «Սոնա» գրահրատարակչություն, Ստեփանակերտ,  
2010 թ.: 480 էջ + 1 ներդիր:**

Սույն աշխատության մեջ դիտարկվում և գնահատվում են նորագույն  
շրջանի հայ արձակի արցախյան հատվածի նվաճումները: Գրքում ներ-  
կայացված են 1950-ական թվականներից սկսած հայ արձակում տեղի  
ունեցող խնդրումները և թեմատիկ-գաղափարական ու գեղարվեստա-  
կան առանձնահատկությունների երանգները: 20-րդ դարի երկրորդ կե-  
սին ասպարեզ իջած և ճանաչված արցախցի գրողների ստեղծագործու-  
թյունը վերլուծվում և գնահատվում է առանձին-առանձին, ըստ հեղի-  
նակների: Լուրջ ուշադրություն է դարձված ժողովրդի պատմական ան-  
ցյալը և արցախյան ազատագրական պայքարն արտացոլող երկերին:  
Գնահատման չափանիշները պահպանվել են հայ գրականության ընդ-  
հանուր նվաճումների շրջանակներում:

Նկատի առնելով գրքի ծավալը, հեղինակը նպատակադրվել է հետա-  
զայուն անդրադառնալ այն արձակագիրներին, որոնց մասին տվյալ  
գրքում խոսքն ասված է համառոտ:

ԳՄԴ 83.3Հ

ISBN 978-99941-58-40-9

© Ս.Խանյան, 2010

© «ՍՈՆԱ» ԳՐԱԿՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



## ՁԵՌՆԱՐԿ, ՈՐԻ ԿԱՐԻՔՆ ԶԳԱՑՎՈՒՄ Է

Չնայած Արցախ աշխարհի անջրպետված լինելուն մայր Հայաստանից 1920-1988 թվականներին, հայ արձակը զարգացման իր միտումներն է ունեցել նաեւ մեր գրական օջախում, ժամանակին գրվել են գրախոսություններ Արցախում ապրող եւ ստեղծագործող գրողների հրատարակած ժողովածուների, վեպերի եւ վիպակների մասին, սակայն առ այսօր ընդհանրացված խոսք չի ասվել այդ կապակցությամբ:

Հաճելի գործի է ձեռնամուխ եղել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանը: 2005 թ.-ին ԼՂՀ գրողների միության «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչությունը լույս ընծայեց վաստակաշատ գրականագետի «Հայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում (1950-1990-ական թթ.)» ծավալուն աշխատությունը, որն արժանացավ գրականագետների լուրջ գնահատականին, «Գրական թերթ»-ը տպագրեց պրոֆեսոր Ս. Դանիելյանի դրվատանքի խոսք ուսումնասիրության վերաբերյալ:

Ս.Խանյանն այժմ տպագրության է պատրաստել իր նոր ուսումնասիրությունը «Հայ արձակի զարգացման միտումներն Արցախում (1950-1990-ական թթ.)»

խորագրով: Ըստ էության այս աշխատությունը գրականագետի ծրագրային ուսումնասիրության երկրորդ հատորն է, որով ընդհանրացվում է հայ գրականության մի ուշագրավ մասը կազմող գեղարվեստական խոսքի դիտարկման եւ գնահատման միտումը: Եվ հենց սկզբից ասենք, որ այն հաջողվել է հեղինակին:

Ուսումնասիրության առաջաբանում անդրադառնալով հայ արձակի զարգացման ներքին միտումներին, կյանքի նկատմամբ դրսեւորած հեղինակային վերաբերմունքին, իրականության գեղարվեստական եղանակներին XX դարի երկրորդ կեսին, Ս.Խանյանը նկատել է, որ Արցախում արարվող գրականությունը թեկուզ ոչ միշտ, այնուամենայնիվ ձգտել է հավատարիմ մնալ անհատի պաշտամունքի քննադատությունից հետո ստեղծվող հայ գրականության զարգացման օրինաչափություններին՝ դրանք առնչելով ավանդական Արցախի ճակատագրի, սոցիալ-քաղաքական, բարոյահոգեբանական տեղաշարժերին եւ ոգորումներին:

Այս համապատկերի վրա գրականագետը ներկայացրել է գրական-ստեղծագործական խմորումները կոնկրետ կապված Բ. Ուլուբաբյանի, Ս. Աբրահամյանի, Ի. Ալավերդյանի համարձակ փորձերի հետ: Ճիշտ է վարվել գրականագետը՝ առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերելով Բ. Ուլուբաբյանի ստեղծագործության հանդեպ, որովհետեւ հենց նրա վարակիչ քայլերով է պայ-

մանավորված նկատելի զարթոնքը 1950-60-ական թթ. արձակի բնագավառում:

Գրական սերնդափոխության ժամանակի տեսանկյունից ուսումնասիրությունը շահել է: Նրանում վերլուծության մեթոդաբանական հիմունքներով գնահատվել են Մ.Հովհաննիսյանի, Կ.Դանիելյանի, Մարտիրոս Որնի, Մ. Հայկի ստեղծագործությունները: Առանձին մի երանգ է կազմում Ա. Ղահրիյանի, Կ.Գաբրիելյանի, Ն. Սողոմոնյանի, Ս. Քամալյանի, Ն. Գասպարյանի, Վ. Բաղդյանի եւ այլոց ձեռքբերումների գնահատականը:

Համադրումների ընթացքում պարզ ընդգծվում է այն արժեքավորը, որը բերել է բերում է հայ արդի արձակի անբաժանելի մասը կազմող մեր գրական ընտանիքում ստեղծվող արձակը:

Քրտնաջան եւ կարեւոր գործ է կատարել Ս. Խանյանը: Այն կհետաքրքրի ոչ միայն կրթության բնագավառի աշխատող ուսուցիչներին եւ դասախոսներին, այլեւ գրականության պատմաբաններին եւ ընթերցողներին:

**Հ.ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ**

**Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ**

*2009 թ.*

## ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈՒԱՐԵՆ

Քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ գրականության համապատկերի վրա Արցախում ստեղծված արդի արձակի ձեռքբերումները գնահատելու եւ տեղը նշելու համար անհրաժեշտ է հետադարձ հայացքով ցույց տալ այն հիմքերը, որ հող եւն հանդիսացել նրա զարգացմանը: Ո՞րն է այդ հողը, որո՞նք եւն այն պայմանները, որ նպաստել եւն ընդհանուր առաջընթացի եւ առանձին անհատականությունների ձեւավորմանը: Առանց դրա հնարավոր ու ճիշտ չի լինի արդի արձակի արժեքավորումը: Նախ, առանց ժամանակաշրջանի հարուցած քաղաքականությունը ի տես բերելու, հնարավոր չի լինի լուսաբանել ոչ միայն գրականության, այլեւ ամբողջ մշակույթի մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ թե՛ բովանդակության եւ թե՛ ժանրային ձեւերի ասպարեզում: Հայտնի է, որ արվեստի զարգացման հիմքը կյանքն է: Հենց նրա թելադրանքով է տեղի ունենում գրականության եւ արվեստի ընդհանուր թարմացումը, երեսն հանվում կարեւոր հիմնախնդիրների առաջադրումը, թեմատիկ-գաղափարական եւ գեղարվեստական առանձնահատկությունների խորքային ու բազմերանգ որոնումներն ու գտնումները:

Կարեւոր է ընդգծել անհատի պաշտամունքի քննադատությունը, որ սկսվեց 1954 թվականից: Իհարկե, ոչ միանգամից, այլ աստիճանաբար ճանապարհ հարթվեց դեպի իրականության ճշմարտացի պատկերում, արարող մարդու կերպարի ստեղծման վարպետություն, հերոսի ներաշխարհն ու դրա բացահայտումը: Դա էլ հենց նշանակում է բացառել կոմկուսի որդեգրած բյուրոկրատական կենտրոնացումն ու հրամանագրումը հոգեւոր կոթողների ստեղծման ուղղությամբ: Իսկ թե ինչպիսի հարվածներ էր ստացել



Մեր գրականությունը բյուրոկրատիզմի և տոտալիտար վարչակազմի անհիմաստ ու դաժան վերաբերմունքից, բավական է վերհիշել Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Վ. Թոթովենցի, Զ. Եսայանի և այլ անվանի արվեստագետների ողբերգական ճակատագիրը:

1950-60-ական թվականները այլևս 1920-30-ականները չէին քաղաքական առումներով: 50-60-ականներին ստեղծվող արձակը ամեն դեպքում շարունակելով Չարենցի-Բակունցի-Թոթովենցի ավանդույթները, ձգտում էր նոր երանգներ բերել, ճանապարհը գտնել և իր նպաստը բերել նորօրյա գրականության ստեղծմանն ու հարստացմանը:

Անցյալ դարի 60-ական թվականներին արձակը նոր ուղի մտավ իրականության և մարդու հոգեբանության մերձեցմամբ: Մարդու ճակատագիրը դարձավ գրողների մտահոգության առարկան՝ անցյալի և ներկայի զուգորդմամբ: Հասկանալի է, որ անցյալն այն արմատն է, որ սնուցում է ներկան՝ միտված ապագային: Անդրադառնալով պատկերվող անհատի ներաշխարհին, գրողները ներկայացնում էին ժողովրդի նորօրյա ոգորումներն ու ակնկալիքները: Այստեղից էլ այն դրսևորումները, որ կայացան սոցիալական կյանքի տարբեր կողմերը սրությամբ և խորությամբ պատկերելու ուղղությամբ: Դրա հետևանքով արձակը ձեռք է բերում քաղաքացիական երանգավորում և հետաքրքրում ընթերցողին: Այս երեւույթը լավագույն պատասխանն էր հետպատերազմյան շրջանում թմբակահարաված գրականության մեջ անկոնֆլիկտայնության տեսությանը: Անվանի գրականագետ Հր. Թամրազյանը երեւույթը գնահատել է այսպես. «Այդ թերրիայի արտահայտությունը պետք է համարել կենցաղային հարաբերությունների շաբլոնը, այդ անտանելի սխեմատիզմը և վեպերի նմանօրինակ երջանիկ վերջա-

բանները: Բոլոր վեպերը վերջանում են այնպես, որ դրական մարդիկ հաղթանակեն, նվաճեն առանց կորստի ու զոհողության, եւ ստացվում է այն տպավորությունը, որ կյանքում իսպառ վերացան բոլոր դժվարությունները: Խռովածները հաշտվում են, դժբախտները դառնում գիտնական, բաժան ամուսինները միանում են, հին սիրուհին նորից ընկնում է սիրածի գիրկը»<sup>1</sup>: Անկոնֆլիկտայնության տեսության պարտադրանքը թողնում էր իր բացասական հետքը, որի մասին գրականագետ Կ. Աղաբեկյանը գրել է. «Անկոնֆլիկտայնությունը իր հետ բերում, իրենով պայմանավորում էր թերությունների մի չընդհատվող հոսք: Կեղծ ու շինծու, հեշտությամբ լուծվող կոնֆլիկտներ, արագորեն հարթեցվող «հոգեբանական հավասարություններ», աղավաղված լեզվաբանություն, ընդհանուր պատումի հետ կապ չունեցող, միայն ծավալային միավորի դեր ստանձնած բնապատկերների առատություն»<sup>2</sup>:

Ժամանակին անկոնֆլիկտայնության տեսությունը իրենց քննադատական տեսադաշտի մեջ են առել անվանի գրականագետներ Ս. Սարինյանը, Ս. Արզումանյանը, Ս. Աղաբաբյանը, Դ. Գասպարյանը, Ա. Եղիազարյանը, Ն. Աղալյանը եւ այլք, ժխտելով դրա քարոզած համահարթեցումը, քաղցր-մեղր տեսարանները, մարդկային անարդյունավետ, ձուլածո ձգտումները, երջանկության անհրական կեցվածքը, պարզունակացված կյանքը, որի արդյունքում կենդանի կերպարների փոխարեն հանդես էին բերվում մտացածին սկզբունքների տեր խոսափողեր:

Այս պայմաններում 60-ականներին հանդես եկավ արձակագիրների մի սերունդ, որ պիտի բերեր նոր որակ: Իհարկե, նոր որակի ձգտումը նկատվում էր նաեւ ավագ

սերնդի գրական հունձքում: Ինչպես նշել է Ս. Աղաբաբյանը, ավագ սերունդը դրել էր նոր որակի հիմքերը:

Իրենց վեպերով, վիպակներով, պատմվածքներով հանդես եկան Հայրենական մեծ պատերազմից հետո գրականություն մուտք գործած արձակագիրներ Ս. Խանգաղյանը, Ա.Ս. Սահինյանը, Ս. Այվազյանը, Զ. Դարյանը, Խ. Հրաչյանը, Խ. Գյուլնազարյանը, Մ. Սարգսյանը, Ստ. Ալաջաջյանը, Աղ. Այվազյանը, Ա.Ս. Սեկոյանը, Հովհ. Ղուկասյանը, Բ. Հովսեփյանը, Ծ.Թաթիկյանը, Մ.Շաթիրյանը, Ար.Այվազյանը: Նրանց ստեղծագործությունները ներկայացվեցին թեմատիկ, գեղարվեստական ոճերի ու գեղագիտական հնչեղության ոլորտներով: Դրանք անվերապահորեն զարգացրին ազգային արձակը: Թեմատիկ առումով բազմազանության մեջ պատկերվեցին գյուղաշխարհը, արդյունաբերական նվաճումները, քաղաքային կյանքը: Կարելորն այն էր, որ բացահայտվեց ժամանակակից կյանքը՝ արդի կոնֆլիկտների եւ մարդկային փոխհարաբերությունների ներառմամբ: Այդ էտապի գրական երեւույթներ հանդիսացան Ս. Խանգաղյանի «Քաջարան», Գ.Սեւունցի «Պետական գաղտնիք», Ժ. Ավետիսյանի «Կապույտ արյուն», Ա.Ս. Սեկոյանի «Եթե Որոտանը խոսեր» եւ այլ գրողների մեծակտավ երկերը: Գյուղաշխարհի պատկերումը մնում էր որպես մեր գրականության առանցքային խնդիր: Ընթերցողները հետաքրքրություն ցուցաբերեցին Խ. Հրաչյանի «Ուրցի Մարան», Զ. Թափալցյանի «Հայրենաշեն», Լ.Հուրունցի «Աղմկում է Որոտանը», Ա. Սահինյանի «Կարոտ» երկերը, որոնք զգալի դեր խաղացին սովետահայ վիպագրության հետագա զարգացման գործում: Իհարկե, դրանք բոլորը չէ, որ գեղարվեստական որակով կարող էին պատասխանել ժանրին ներկայացվող անհրաժեշտ պահանջներին, սակայն առաջընթացը

առկա էր: Այստեղ կարելոր է նշել Ակ. Բակունցի ավանդույթների շարունակման նշանակությունը: Խոսքը վերաբերում է գյուղաշխարհի եւ նրա մարդկանց փոխհարաբերությունների բացահայտման՝ հոգեբանական խորքով: Նման երկերից հանդիսացան Ս. Խանգադյանի «Հողը», Մ. Գալշոյանի «Բովտուն» վեպերը, Հր. Մաթեոսյանի վիպակներն ու պատմվածքները:

Առաջընթաց նկատվեց վեպի նկարագրականությունից մարդու ներքին աշխարհը թափանցելու պահանջի իրականացման ուղղությամբ: Այստեղ անհրաժեշտ է նշել Ս. Խանգադյանի «Մատյան եղելությանց», Զ. Խալափյանի «Որտե՞ղ էիր, մարդ աստծո», «Մեռնող հառնող», Վ. Պետրոսյանի «Ապրած եւ չապրած տարիներ», Պ. Զեյթունցյանի «Մեզանից հետո», Վ.Գրիգորյանի «Տեղատվություն», Ն. Ադալյանի «Խաղաղ զորանոցներ», Հ. Մելքոնյանի «Քարավան», Գ. Արշակյանի «Թրաշուշաններ» վեպերն ու վիպակները: Նկատելի ավանդ էին Մ. Սարգսյանի երկերը՝ Հայրենական մեծ պատերազմի թեմայով, ինչպես նաեւ Հ. Խաչատրյանի պատմական վեպերը: 1960-70-ական թթ. հայ գրականության մեջ ներդրում հանդիսացան նաեւ Ս. Այվազյանի «Ճակատագիրն հայոց», Ս. Խանգադյանի «Մխիթար Սպարապետ», Հ.Ղուկասյանի «Ոսկան Երեւանցին», Զ. Դարյանի «Սայաթ-Նովա» պատմական երկերը:

Անդրադառնալով ժամանակի գրական խմորումներին, Ս.Աղաբաբյանը միաժամանակ ընդգծել է ավագ եւ նոր սերնդի բանավիճային մոտեցումների կարեւորությունը՝ գրականությունը նոր ուղեծիր դուրս բերելու նպատակով:

Այս դիտակետից նա նկատում է. «Հակադիր սկզբունքների բախումը սրվեց հատկապես Հրանտ Մաթեոսյանի մի շարք գյուղագրական երկերի առիթով («Մեքք եքք, մեր սա-

րերը», պատմվածքներ եւ այլն), որոնք հարուցեցին քաղաքագրության կողմնակիցների հախուռն արշավանքը գյուղագրական արձակի դեմ առհասարակ: Հրանտ Մաթեւոսյանը համարվում էր հետահայաց մտածող, որը մարդկությանը կոչ է անում վերադառնալ դեպի քարանձավներ, դեպի խաշնարածային գոյության շրջանը»<sup>3</sup>:

Բանավեճը տեղի էր ունեցել այսպես կոչված քաղաքագիրների եւ գյուղագիրների բորբոք կարծիքների շուրջ: Սակայն Հ.Մաթեւոսյանը շարունակում էր գրականությունը հարստացնել գյուղը պատկերող իր հրաշագործություններով: Վ.Պետրոսյանը ձգտում էր գիտականացնել գրականությունը՝ հենվելով քաղաքագրության վերաբերյալ ունեցած իր տեսությամբ:

Այնուամենայնիվ, Հրանտ Մաթեւոսյանը մեր արձակը հարստացրեց «Ալխո», «Օգոստոս», «Աշնան արեւ», «Գոմեջը», «Երկրի ջիղը», «Տերը», «Տաշքենդ» եւ այլ ստեղծագործություններով, իրեն դրսևորելով որպես երդվյալ գյուղագիր, կարեւորելով գրականության գլխավոր պրոբլեմի՝ մարդու կերպարի ստեղծումը, նրա ներաշխարհի հայտնագործումը:

ՅՕ-ական թվականներին ասպարեզ իջած գրողներին հուզում էր նաեւ մի այլ հարց: Դա գրականության հերոսի հիմնախնդիրն էր: Վերջապես կարելոր է, թե ինչպիսի՞ հարցեր են հուզում ժամանակակից մարդուն եւ գրողը ինչպե՞ս կարող է գեղարվեստական պատկերի խտացմամբ ներկայացնել դրանք: Այդ օրապահանջ հարցը լուծելու եկան Հր. Մաթեւոսյանը, Մ.Գալշոյանը, Վ.Պետրոսյանը, Ա.Այվազյանը, Զ. Խալափյանը, Հ. Մելքոնյանը, Գ. Արշակյանը, Պ. Զեյթունցյանը, Ռ.Հովսեփյանը, Վ.Գրիգորյանը եւ ուրիշներ: Հարցի սրությունը նկատվել է ոչ միայն հայ արձակում:

Ռուս քննադատ Ա. Բոչարովը գրել է. «Նոր արվեստը երբեք չի սկսվում նոր ձևերից, այլ միշտ՝ նոր հերոսից: Այս հայտնի ձևակերպումը ցույց է տալիս ոչ միայն բովանդակության առաջնությունը ձևի համեմատ, այլև հերոսի կերպարի էության մեջ հաստատում է հասարակական իրականության դիալեկտիկական միասնությունն ու հեղինակային կոնցեպցիան»<sup>4</sup>:

Նույն հարցի քննարկմամբ հանդես եկավ նաև ակադեմիկոս Ս.Սարինյանը: «Հիմնական հարցը,- գրել է նա.- որ տեսական ու գործնական իր ամբողջ նշանակությամբ է առաջադրվում, գրականության արդիականությունն է: Խնդրի իմաստը, տվյալ դեպքում, հանգում է ոչ միայն եւ ոչ այնքան պոետիկական ինչ-ի՞նչ ձևերի յուրացմանը, ինչպես ենթադրում են «նորարարության» որոշ երկրպագուներ, որքան թեմայի, գլխավոր հերոսի եւ գեղագիտական իդեալի որոնումներին»<sup>5</sup>:

Մի կողմից կյանքի թելադրանքով, մյուս կողմից գրաքննադատների լուրջ խորհուրդներով գրողները ձգտում էին հեռանալ սխեմատիզմից, թեմատիկ կաղապարներից, ուշադրության կիզակետում ունենալով անհատի հարուստ ներաշխարհի գեղարվեստական պատկերման դժվարին գործը: Ժամանակի ոգու եւ էության փիլիսոփայական, հոգեբանական վերլուծությունն ու գնահատումը դարձել էր անհրաժեշտություն:

Երջանիկ հայտնություն էր Մ. Գալշոյանի ստեղծագործությունը, որի միջոցով ընթերցողները ծանոթացան ժամանակաշրջանի կերպարներին՝ ազգային տիպիկ նկարագրով: Դրանք եղեռն, երկրի կորուստ, գաղթ տեսած, արարման վճռականություն եւ հարատեւելու կամք ունեցող մարդիկ են: Հայրենի բնաշխարհն ու ժողովրդի կենցաղը միաս-

Նաբար Աերկայացնելով, նա հաստատեց գաղթական հայերի շառավիղների կենարար ճանապարհը: Նրա «Ձորի Միրոն», «Կածանի ճամփորդներ» վիպակները, «Բովտուն» վեպը, «Մարութա սարի ամպերը» ժողովածուն ոչ միայն երանգավորեցին ժամանակի գրական աշխարհը, այլև նշանաձող հանդիսացան հետգալշոյանական մի շարք երիտասարդ գրողների համար:

1960-ական թթ. ասպարեզ իջած արձակագիրների ստեղծագործություններում երեւաց ժողովրդական հասարակ մարդը, առանձնապես գյուղական միջավայրում: Դրանք ժողովրդական կյանքի եւ մտածողության, հոգեբանության կրողներն են: Այդ տարիների արձակում հանդես է բերվում նաեւ մտավորական հերոսը, որ առավելագույնս գործում է քաղաքային միջավայրում:

Մեր գրողները չմոռացան նաեւ պատերազմական իրադրության մեջ գործող մարդկանց պատկերումը: Այստեղ հետաքրքրականն այն է, որ գրողներից ոմանք իրենք են մասնակցել երկրորդ համաշխարհային պատերազմին՝ համոզված լինելով, որ հիտլերյան ֆաշիզմի դեմ մարտնչելով պաշտպանում են Հայաստանը: Գրականության նյութ էր դարձել նաեւ թիկունքի մարդկանց խիզախությունն ու նվիրումը Մեծ Հաղթանակին:

Քսաներորդ դարի երկրորդ կեսի նվաճումներից ամենաընդգծվածը պատմվածքն է: Այդ նվաճումի թիկունքին կար ավանդույթը: Դ. Դեմիրճյանը, Ստ. Ջորյանը, Ա. Բակունցը, Գ. Մահարին, Վ. Թոթովենցը, Վ. Խչումյանը ստեղծել էին դասական պատմվածքի օրինակներ:

Ժառանգելով դասականի ավանդույթները, 20-րդ դարի երկրորդ կեսի գրողները ստեղծեցին լիարժեք ոչ քիչ պատմվածքներ: Գրականագետ Ն. Ադալյանն ուսումնասի-

րելով ժանրի ընթացքը, նշել է, որ հատկապես 60-ական թվականների պատմվածքը երեւան է հանում ե՛լ արվեստի որոշակի զգացողություն, ե՛լ կյանքի էական ճշմարտություններ: Սա մի նոր հոսանք էր, որը եկավ ասպարեզ եւ ընդգրկեց ստեղծագործական բոլոր ուժերը՝ ավագ գրողներից մինչեւ նորերը: Պատմություն եւ արդիականություն, գյուղ եւ քաղաք, սեր, կարոտ, ընտանիք, մարդու եւ ժողորդի ճակատագիր, հերոսական, կատակերգական, դրամատիկական իրավիճակների պատկերում եւ այլն, ահա, այսքան լայն են պատմվածքի թեմատիկ-հուզական ընդգրկման սահմանները<sup>6</sup>:

«Փոքր արձակում» գեղարվեստական ճշմարտության զարթոնքը կապվում է Գ. Մահարու «Սեւ մարդը» պատմվածքի հետ: Այնուհետեւ երեւան են գալիս Ս. Այվազյանի, Հր. Մաթեոսյանի, Խ. Գյուլնազարյանի, Խ. Հրաչյանի, Մ. Սարգսյանի, Հովհ. Մելքոնյանի, Մ. Մնացականյանի, Շ. Թաթիկյանի, Մ. Գալշոյանի, Վ. Պետրոսյանի, Կ. Տոնոյանի, Պ. Զեյթունցյանի, Գ. Արշակյանի պատմվածաշարերը, որոնք կարելի է համարել սովետահայ գրականության ակնառու նվաճումներ:

Հայ գրողների ձեռքբերումները տվյալ էտապում նկատելի դարձան այն արդյունավետ ստեղծագործական խոհանոցի շնորհիվ, որ առնված են հայ գրականության դասական ավանդույթների յուրացման, համաշխարհային գրականության փորձի ուսումնասիրության եւ գեղարվեստական խոսքի հանդեպ ունեցած խստապահանջ մոտեցումների հետ:

Տվյալ ժամանակաշրջանի գրաքննադատությունը նկատել է նաեւ Զ. Բալայանի եւ Ա. Ղահրիյանի մուտքը գրականություն եւ արժանվույն գնահատել նրանց պատմվածքները:



\*\*\*

Հայ արձակի զարգացման պահանջները ոչ միայն հասնում էին մայր Հայաստանից խլված Արցախ, այլև հաղթահարելով բոլոր տեսակի արգելքները, որ ստեղծվում էին Ադրբեջանի կառավարող շրջանների կողմից, նպաստում էին մեր լեռնաշխարհում ապրող գրողների ստեղծագործական աճին: Վերջապես «Արցախահայ գրականություն» հասկացությունը խորհրդանշական-պայմանական է, որովհետև այն ամբողջական հայոց գեղարվեստական խոսքի անբաժանելի մի մասն է կազմում: Վերհիշենք Ավ. Իսահակյանի բացման խոսքը՝ ուղղված Հայաստանի Գրողների Երկրորդ համագումարի մասնակիցներին 1946 թվականին: Իր բազմիմաստ ելույթում ողջունելով նաև առաջին անգամ Սփյուռքից Երեւան ժամանած հայ գրողներին, Վարպետն ընդգծել է. «Մի գրականություն՝ մի ժողովուրդ է: Մի որևէ ժողովրդի գրականությունը նրա ձգտումների և բաղձանքների, նրա տառապանքների և հավատքի, նրա խիզախումների և անկումների գեղարվեստական պատմությունն է: Այդպես է և հայերի գրականությունը: Սակայն հայ ժողովրդի գրականությունն ունի առանձնահատուկ իր դրամինանոր: Համաշխարհային պատմությունը հայ ժողովրդին վիճակել է հայրենիք՝ շրջապատված հզոր, աշխարհակալ պետություններով, որոնք ձգտել են հայ ժողովրդին ստրկացնել, կողոպտել և ոչնչացնել: Եվ այս դարձել է հայ ժողովրդի դաժան ճակատագիրը:

Այսպիսով, հայ ժողովրդի գրականությունն ազգային գոյամարտի գեղարվեստական պատմությունն է ընդդեմ իր ճակատագրի»<sup>7</sup>:

Ազգային գոյամարտի մեջ իրենց դժվարին պատմական առաքելությունը լավ էին գիտակցում նաև հայ գրականության արցախյան օջախի գրողները, որոնք զգում էին ադրբեջանական իշխանությունների բացահայտ հետապնդումներն ու ՊԱԿ-ի կողմից իրականացվող հալածանքները: Դրա խոսուհուն ու ցավալի վկայությունը 1948թ. տեղի ունեցած միջադեպն է՝ կապված Վարպետի Արցախ այցելելու հետ: Նրան ջերմորեն ընդունելու համար Սիբիր քստրովեց այն ժամանակ Արցախի գրական ընտանիքի քարտուղար Բ. Ջանյանը, իսկ իրենց պաշտոններից զրկվեցին մի շարք ղեկավարներ:

Արցախում ստեղծվող գրականությունը որոշակի ծլարձակում ապրեց անհատի պաշտամունքի քննադատությունից հետո: Իհարկե, ստեղծագործական այն խիզախությունն ու առաջընթացը, որ նկատվեցին Հայաստանի գրողների մոտ, Արցախում նույն մակարդակով տեղի ունենալ չէր կարող: Այնուամենայնիվ, որոշ աշխուժություն նկատվեց նաև մեր ընտանիքում: Արձակի բնագավառում այդ աշխուժացման առաջին ծիծեռնակները հանդիսացան Բ. Ուլուբաբյանը, Ս. Աբրահամյանը, Ի. Ալավերդյանը, Վ. Բալայանը, Զ. Սուլեյմանյանը: Այդ սերնդի սկսած գործը անմիջապես շարունակեցին արձակագիրներ Մ. Հովհաննիսյանը, Ա. Ղահրիյանը, Վ. Օվյանը, Մ.Առուշանյանը, Վ. Ստեփանյանը, ապա Կ. Դանիելյանն ու Մ. Պետրոսյանը: Մեկ տասնամյակ ուշ ասպարեզ իջան Մարտիրոս Որբը (Համլետ Մարտիրոսյան), Կ.Գաբրիելյանը, Ս. Քամալյանը, Ն. Սողոմոնյանը, ինչպես նաև բանաստեղծներ Ն.Ավագյանն ու Ն. Գասպարյանը եւ ուրիշներ:

Ասպարեզ է իջել երիտասարդ արձակագիրների մի սերունդ, որի հետ ընթերցողները հավատո հույսեր են կապում:

## ՍԱՐԳԻՍ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ



Ս.Աքրահամյանի մուտքը գրական ասպարեզ խորհրդանշական էր նորագույն շրջանի հայ գրականության արցախյան հատվածում: Առաջին հերթին նրա խոսքը հնչեց որպես հասուն գրողի հայտ, երկրորդ, նա հենց միանգամից մեր գրական ընտանիքի արծակը դրեց հայ ընթերցողների դատին թե՛ մեզ մոտ եւ թե՛ Հայաստանում ու Սփյուռքում: Նա ճանաչվեց միանգամից եւ ապա մեկը մյուսի հետեւից հրատարակեց «Սերունդների հետ» երկհատորյա վեպը (1957, 1958) Երեւանում, 1963-ին ընթերցողներին հանդիպեց «Մեր քաղաքը» վեպով, 1967-ին լույս ընծայեց «Ուլորաններում» վեպը (Երեւան), իսկ 1967 եւ 1973-ին Բաքվում տպագրվեցին «Հավատարմություն» եւ «Կարմիր մեխակներ» ժողովածուները: 1991-ին Երեւանում հրատարակվեց «Լեռնաստան» գիրքը:

Ժողովուրդը՝ ամենամեծ փիլիսոփան ու մարգարեն, ասել է. «Տաշած քարը գետնին չի մնա»: Այս իմաստությունը վերաբերում է նաեւ Ս. Աքրահամյանի ստեղծագործությանը: 2008 թվականին Երեւանում «Ամարաս» հրատարակչության կողմից լույս ընծայվեցին ճանաչված արծակագրի «Սերունդների հետ» վեպը՝ երկու հատորները միասին, «Մեր քաղաքը» վիպակը եւ «Երախտիք» ժողովա-

ծուն, որտեղ զետեղված են «Սեր եւ խանդ» վիպակն ու պատմվածքների մի շարք: Ուշագրավ է բանաստեղծ Յր. Բեգլարյանի խոսքը՝ «Երախտիք» ժողովածուի համար որպես մուտք: Նրանում նշված է, որ Ս. Աբրահամյանը տպագրված պատմվածքներից, վիպակներից ու վեպերից բացի թողել է ձեռագիր պատկանելի ժառանգություն: Դրանց մեջ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Սեր եւ խանդ» վիպակը: Յր. Բեգլարյանը նշում է. «Սեր եւ խանդ» վիպակը տաղանդավոր արձակագրի լավագույն գործերից է՝ տոգորված ազնիվ սիրո անհուն կարոտներով, մարդկային վսեմ առաքինություններով, հոգսերով ու տագնապներով, նվիրումներով ու մարդկանց բոլորանվեր ծառայելու հիպոկրատյան երդումով»:

Ինչպես իր խոսքի վերջում ընդգծում է Յր. Բելգարյանը, «Թող սա լինի համեստ մի գրական հուշարձան 54 տարեկանում մեզնից հեռացած, բայց միշտ մեզ հետ ապրող, այժմ արդեն 80-ամյա գրողի հիշատակին»: Այս խոսքը գրված է 1995թ., որից արդեն անցել է 13 տարի: Կանցնեն ոչ միայն օրեր, ամիսներ, այլեւ բազում տարիներ, եւ Ս. Աբրահամյանի երկերը կխոսեն սերունդների հետ: Ինչ վերաբերում է 2008թ. Երեւանում հրատարակված գրքերին, ապա դրանք կարող ենք համարել այնպիսի հուշարձան-խաչքարեր, որոնք թարմ են պահելու վաստակաշատ գրող Ս. Աբրահամյանի անունը գալիք ընթերցողների շուրթերին:

Ուշագրավն այն է, որ գրողի բոլոր երկերն անմիջապես

գրախոսվեցին՝ ընդունվելով որպես գրական արժեքներ:

40-ամյա գրողի երախայրիքը՝ «Սերունդների հետ» երկհատորյակը, ազդարարեց նրա էպիկական մտածողությունը, որը շարունակեց ծաղկել եւ հրամցնել իր հասուն պտուղները:

Ս. Աբրահամյանը ծնվել է 1915-ի դեկտեմբերի 28-ին, Լեռնային Ղարաբաղի Շոշ գյուղում: Ավարտել է Բաքվի մանկավարժական տեխնիկումը, ապա՝ Ադրբեջանի Լեռնի անվան մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի պատմության ֆակուլտետը: 1935-1937թթ. Ս.Աբրահամյանը Մարտունու շրջանի Ննգի գյուղի դպրոցում աշխատել է որպես պատմության ուսուցիչ: 1937-39-ին նա իր ծաղկուն ուժերը նվիրել է նույն շրջանի Ղզղալա (այժմ՝ Բերդաշեն) գյուղի միջնակարգ դպրոցին՝ որպես ուսուցիչ ու տնօրեն: 1940-ին նրան վստահվել է Մարտունու շրջանային ժողկրթության բաժնի վարիչի պաշտոնը: 1940-41-ին եղել է Ադրբեջանի ԼՂ մարզային կոմիտեի 3-րդ քարտուղար, 1941-49-ին՝ ԼՂ մարզային ժողկրթության բաժնի վարիչ, 1949-50թթ. ղեկավարել է Ստեփանակերտ քաղաքի միջնակարգ դպրոցի ուսումնական մասը: 1950-52-ին քաղաքական գիտելիքների տարածման մարզային ընկերության պատասխանատու քարտուղարն էր, իսկ 1952-53-ին՝ Ստեփանակերտի մանկավարժական երկամյա ինստիտուտի մարքսիզմ-լենինիզմի ամբիոնի վարիչը: 1953-54-ին աշխատավորների դեպուտատների մարզային խորհրդի կուլտուրայի բաժնի վարիչն էր: 1954-55-ին՝ ԼՂԻՍ աշխա-

տավորների դեպուտատների մարզային խորհրդի գործկոմի նախագահի տեղակալ, 1955-57-ին՝ կուսակցության ԼՂ մարզկոմի քարտուղար, 1957-61-ին՝ մարզկոմի երկրորդ քարտուղար, 1961-63-ին՝ մարզային խորհրդի կուլտուրայի բաժնի վարիչը, 1963-69-ին՝ կինոֆիկացիայի մարզային վարչության պետ: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով եւ մի շարք մեդալներով: Մահացել է 1969-ի հունիսի 15-ին, Ստեփանակերտ քաղաքում:

Ս. Աբրահամյանի «Սերունդների հետ» վեպը հաճելի անակնկալ հանդիսացավ եւ գրականագետների, եւ ընթերցողների համար: Սակայն այդ անակնկալն առողջ հիմքեր ու արձատներ ուներ: Անսպասելին այն էր, որ հեղինակը մինչեւ այդ ոչինչ չէր տպագրել: Ինչ վերաբերում է վեպի աշխարհ գալու, ապա այն պետք է վերագրել Ս. Աբրահամյանի ներաշխարհին, որ թեկուզ ինքնամփոփ, երանգավորված է եղել ստեղծագործողի ներքին ինտուիցիայով:

«Սերունդների հետ» վեպի ծնունդն առնչվում էր անհատի պաշտամունքի քննադատությունից հետո ամբողջ խորհրդային գրականության ընթացքում դրսևորված տեղաշարժերին, որոնք նախանշում էին թեմատիկ բազմազանություն, ժանրային առանձնահատկությունների ընդլայնում եւ թարմացում: Այս համապատկերին երեւան եկան նաեւ մանկավարժական-դպրոցական թեմատիկան լուսաբանող երկեր՝ թե՛ չափածո եւ թե՛ արձակ, ինչպես նաեւ դրամատիկական գործեր:

Ս.Աբրահամյանի հաջողության գրավականն այն էր, որ

Մնա գրականությունն մտավ դպրոցից, նրա արարման ակունքների մոտ միաձուլյ էին ուսուցիչն ու գրողը կամ գրողն ու ուսուցիչը:

«Սերունդների հետ» վեպի առաջին հատորի քննարկումն ու գնահատումը առաջինը կազմակերպեց «Գրական Աղբյուր» հանդեսը, որ 1957-ին նոր էր սկսել տպագրվել Բաքվի հայ գրողների պահանջով, որը միաժամանակ խորհրդանշում էր 1932-1941թթ. հայաշատ Բաքվում տպագրված «Խորհրդային գրող» ամսագրի վերածնունդը: «Գրական Աղբյուր» ամսագրի խմբագիրը բանաստեղծ Սամվել Գրիգորյանն էր, իսկ արձակի եւ քննադատության բաժնի վարիչը՝ արձակագիր Մարգար Դավթյանը: Ահա հենց այս երկու ճանաչված գրողների նախաձեռնությամբ էլ սկսվեց «Սերունդների հետ» վեպի քննարկումը:

Ընթերցողների ակտիվ մասնակցությունն ուրախալի էր երկու առումով. առաջին՝ որ գոյություն ունեւ գրասերների լուրջ բանակ, երկրորդ՝ որ նրանք անտարբեր չէին նոր հրատարակվող երկերի հանդեպ:

«Գրական Աղբյուր» հանդեսը 1957-ի 3-րդ համարում բացեց «Ընթերցողի ամբիոն» բաժինը: Առաջին խոսքն ասաց Բաքվի Վ.Ի.Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Արտաշես Թեւոսյանը, որ երկար տարիներ աշխատել էր դպրոցում՝ որպէս ուսուցիչ, ուսմասվար, տնօրէն: Ասել է թե՛ «Սերունդների հետ» վեպն ինչ-որ չափով վերաբերում էր նաեւ իրեն: «Սերունդների հետ» վե-

Այի մասին նրա հողվածի մուտքում բերված է խմբագրության ազդը. «Վերջերս Հայպետհրատի հրատարակությանը լույս տեսավ Սարգիս Աբրահամյանի «Սերունդների հետ» վեպը: Մեր հանդեսի խմբագրությունը ստացել է մի շարք ընթերցողների կարծիքներն այդ վեպի մասին:

Ստորեւ տպագրում ենք դրանցից մի քանիսը»:

Ա. Թելոսյանի հողվածին զուգընթաց հանդեսը զետեղել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի ուսուցչուհի Սարիամ Պողոսյանի «Դպրոցական կյանքի ճշմարիտ պատկերը» եւ Բաքվի թիվ 10 հայկական օրհորդաց դպրոցի ուսուցիչ Ա. Եսայանի «Շնորհակալ գործ» հողվածները: Բոլորն էլ առաջին հերթին ընդգծել են վեպի հաջողությունը եւ ողջունել այդ ստեղծագործության կարեւորությունը մանկավարժների համար: Այսպես, Ա. Թելոսյանը ողջունում է հեղինակին այն առումով, որ նա իր վեպի համար ընտրել է հրատապ եւ քիչ արծարծված թեմա:

Նշենք, որ Ա. Աբրահամյանի «Սերունդների հետ» վեպում պատկերված է գյուղական դպրոցի կյանքը՝ Հայրենական Մեծ պատերազմին նախորդող երկու տարում: Երկի լեյտմոտիվը մատաղ սերնդի դաստիարակության կարեւորագույն հիմնախնդիրն է: Ծանոթ լինելով իր ընտրած նյութին՝ գրողը հմտորեն պատկերել է դպրոցական առօրյան, ստեղծել ռեալիստական լիարյուն կերպարներ, որոնք ստիպում են ընթերցողին հուզվել, երազել, մաքառել լավ գործի, լուսավոր կյանքի համար:

Վեպում առաջին հերթին ուշադրության արժանի է Ար-



մեն Արամյանի կերպարը, որը եռանդուն կերպով մասնակցում է սյուժետային գլխավոր գծի զարգացմանը: Հեղինակին հաջողվել է դրական կերպարի առինքնող բնավորության գծերի ցուցադրումը: Այսօրվա հեռվից չես կարող չհամաձայնվել մանկավարժ-գիտնական Ս. Թելոսյանի կարծիքին. «Հեղինակը Արամյանին հանդես է բերում վեպի գրեթե բոլոր էպիզոդներում՝ աշխատելով պատկերել նրա՝ որպես լավ դիրեկտորի, ուսուցչի եւ, առհասարակ, քաղաքացու բնորոշ կողմերը: Անշուշտ, դա հեղինակին շատ դեպքերում հաջողվել է: Արամյանը իր գործունեության մեջ սկզբունքային է, անհաշտ՝ հնի եւ վնասակարի դեմ, հոգում է ընդհանուրի շահերի մասին, գիտե՞ թե՛ իր գործը եւ թե՛ իր առարկան, կարողանում է ներգործել սովորողների եւ ուսուցիչների վրա թե՛ աշխատանքում եւ թե՛ կենցաղում, մաքուր է, ազնիվ, զգայուն»<sup>1</sup>:

Հիրավի, այդպես է: Ընթերցողն ուշի-ուշով հետեւում է Արամյանի գործունեությանը, հիանում նրա մասնագիտական ունակությանը, ուսուցչին հատուկ համբերատարությամբ, ներողամտությամբ ու մարդասիրությամբ:

Վեպի սյուժեի հիմքում ընկած է սուր կոնֆլիկտ, որ առանձնակի ուժով դրսեւորվում է նորի ջատագով Արամյանի եւ հնաոճ սովորույթներին կառչած Սեդրակ Խուբլարյանի անհաշտ պայքարում: Ս. Աբրահամյանը լիապես բացահայտել է Խուբլարյանի եսասիրությունը, կռվարարությունը, շահամոլությունը: Վեպի հաջողված կերպարներից է Ջիվանը: Նրա բնավորության գծերը բացահայտվում են սյուժեի զար-

գացման ընթացքում: Այդ պատանու ներաշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պատկերված են հոգեբանական հմտությամբ, հավաստի եւ համոզիչ:

Վեպը ծավալուն է, նրանում հանդես են բերված տասնյակ գործող անձեր՝ շարքային ուսուցիչներ, աշակերտներ, կոմերիտական եւ պիոներական կազմակերպությունների ներկայացուցիչներ, տեխնիկական աշխատողներ, վերադաս մարմինների ղեկավարներ: Նրանց փոխհարաբերությունները դպրոցական կյանքի ընթացքում պատկերված են փոխկապակցված, ճշմարտացի:

Դիտարկելով ու գնահատելով վեպի հաջողությունն ապահովող գեղարվեստական հնարանքներն ու կերպավորման արվեստը՝ նկատվում են նաեւ որոշակի թերություններ, որոնցից են գլխավոր դրական հերոսի իդեալական վարքուբարքը՝ նրա թուլությունների ու թերությունների բացառմամբ, որոշ դեպքերում՝ հերոսներին հոգեբանական տեսակետից անհավանական վիճակներում դնելը, գործող անձանց մեծաթիվ լինելը, որի պատճառով ոմանք լիարյուն չեն բնութագրվել, ներկայացվել են սխեմատիկ: Կան նաեւ լեզվական թերություններ՝ օտար եւ բարբառային բառերի անտեղի օգտագործում, երկի որոշ մասերի ձգձգվածություն: Չնայած բերված թերություններին, վեպն ընթերցողի վրա ընդհանուր առմամբ թողնում է դրական տպավորություն:

Ժամանակին ընթերցողները նշել են վեպից զգալի օգուտ ստանալու մասին, առանձնապես, դպրոցների երի-

տասարդ դիրեկտորները եւ ուսուցիչները: Վեպն ուսուցանում է համառ եւ սկզբունքային լինել աշխատանքում, ճիշտ կազմակերպել մանկավարժական պրոցեսը, պայքարել խորթ ազդեցությունների ու երեւույթների դեմ՝ դաստիարակության բնագավառում, սիրել դպրոցը, լինել սերունդների հետ:

«Սերունդների հետ» վեպի գործառական նշանակության մասին է հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Մ. Պողոսյանի դիտարկումը: Լինելով երկար տարիների փորձ ունեցող մանկավարժ՝ հողվածագիրը խոսում է առաջին դեմքով՝ իր անունից. «Թերթում եմ գրքի էջերը, գրում է նա,- եւ իմ առջեւ բացվում է ինձ ծանոթ, հարագատ ու այնքան սիրելի աշխարհը՝ դպրոցը եւ նրա առօրյան»<sup>2</sup>:

Վաստակաշատ ուսուցչուհին բարձր է գնահատում գրողի կողմից դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, դեկավարության, աշակերտական կազմակերպությունների, ինքնագործ եւ արտադասարանական խմբակների գործունեության ճշմարտացի նկարագրությունը: Արձակագրի կերպավորման արվեստի շնորհիվ հաջողված է Արամյանի կերպարը: Չնայած երիտասարդ է Արամյանը, սակայն նա լավ է գիտակցում այն մեծ նշանակությունը, որ ունի աշակերտների դաստիարակության գործում մանկավարժական կոլեկտիվի, ուսուցիչների անձնական օրինակը: Ս. Աբրահամյանը կարողացել է ցույց տալ ուսուցչական կոլեկտիվի համատեղ, արդյունավետ աշխատանքը: Գրողը

Ի համոզիչ օրինակներով ընդգծել է, որ Արամյանը մենակ չէ, որ նրա հետ են իրենց գործն իմացող, բայց դրանով չբավարարվող եւ անընդհատ իրենց գիտելիքները հարստացնող, միշտ սովորել ու սովորեցնել ցանկացող ուսմասվարը, դասատուներ Մինասյանը, Լեբեդեւան, Գայանեն, Սարգսյանը: Նրանք աշակերտների հետ են ոչ միայն դասի ժամանակ, այլեւ դասից դուրս՝ էքսկուրսիաների, սպորտային խաղերի, դպրոցական այգի ստեղծելու եւ այն աճեցնելու պահերին: Պատահական չէ վեպի կերպարներից մեկի՝ ուսուցչուհի Մինասյանի համոզմունքը. «Ուսուցիչը պետք է իմանա մանկական հոգու ոչ միայն բացված, այլեւ չբացված էջերը: Նրա մեջ պետք է վատն արմատախիլ անել եւ լավի ծնունդն ու աճն ապահովել, իսկ դրա համար դասը քիչ է: Ուրեմն, հանգստի ու խաղի, անհոգ կատակի ու երազանքի, ուրախության ու վշտի պահերին նրա հետ լինելն անչափ անհրաժեշտ ու կարելոր է»:

Հայ վիպագրությունը մանկավարժական թեմայի արծարծման ուղղությամբ հարուստ չէ: Ս. Աբրահամյանի վեպը 50-ական թվականների առաջին գարնանալուր ծիծեռնակներից է: Ահա թե ինչով է պայմանավորված առանձնապես ուսուցիչ-ընթերցողների ոգելորությունը: Վեպում հանդես եկող ուսուցիչներից Լեբեդեւան, Սարգսյանը, Բաղմանյանը եւ ուրիշներ ամենուրեք հաստատում են, որ ուսուցչի պատմածն աշակերտի համար պետք է բարձրանա մինչեւ մտովի դիտողականության ու շոշափելիության աստիճանը, որպեսզի հուզի ու ապրեցնի, ուրախացնի ու

տխրեցնի, որպեսզի դասարանում ոչ մի հանգիստ սիրտ ու միտք չմնա: Եվ իրենց ուսուցիչներին հարգում ու ձգտում են նմանվել սովորողներ Ստելլան, Ջիվանը, Հասմիկը:

Գրախոս Մ. Պողոսյանը նկատել է նշել է նաեւ վեպի թերությունները: Այսպես, նա գրել է. «Սերունդների հետ» վեպն իր սյուժեով ու կերպարներով ինձ անչափ գրավել է: Սակայն պետք է ասել, որ գիրքը շատ կշահեր, եթե չլիներին հեղինակի կողմից երբեմն անտեղի մեկնաբանություններն ու հաճախ երեւալը: Շատ լավ կլիներ, եթե նա, ամեն տեղ լինելով հանդերձ, քիչ երեւար կամ չերեւար: Իմ կարծիքով, տիպական չէ, երբ Սեդրակ Խութլարյանին՝ նրա անգրագիտությունն ապացուցելու համար, աշակերտը հարց է տալիս. «Ի՞նչ տարբերություն կա խնդրի եւ վարժության միջեւ եւ ուսուցչի պատասխանն այդ հարցին:

Վեպում կան այնպիսի դեպքեր, որոնք չեն համոզում ընթերցողին: Բորիկի արագորեն վերափոխվելը, դպրոցի դիրեկտոր Արամյանի վրա կատարված մահափորձից անմիջապես հետո «հավաքվածների բարձր ծիծաղը», Արամյանի երկչոտության զանազան դեպքերը չեն արդարացվում հեղինակի կողմից: Վեպում կան լեզվական եւ ոճական անհարթություններ<sup>3</sup>:

Գրախոսը, սակայն, այս թերությունները համարում է մասնակի, որ դրանք չեն կարող ստվերել վեպը, որ այն ունի դաստիարակչական-ուսուցողական կարելոր նշանակություն ընթերցողների եւ հատկապես դպրոցական հավակարգի աշխատողների համար:

Փորձառու ուսուցիչ Ա.Եսայանը եւս նշում է, որ դպրոցական կյանքը, մատաղ սերնդի դաստիարակության հարցը քիչ է արժարժվում մեր գեղարվեստական գրականության մեջ, ուստի ողջունելի է Ս.Աբրահամյանի «Սերունդների հետ» վեպի լույս ընծայումը: Նա հաստատում է, որ դպրոցական կյանքին լավատեղյակ հեղինակը կարողացել է հիմնականում ճիշտ լուծել մատաղ սերնդի դաստիարակության հիմնախնդիրը: «Նրան,- գրում է նա,- հաջողվել է տիպականացնել դպրոցական կյանքի առանձին երեւույթներ ու մարդկանց՝ նրանց առանձնահատկությունները դրսեւորելով իրական կենսական կոնֆլիկտների մեջ: Իր հերոսներին անհատականացնելու համար Աբրահամյանը կարողացել է գտնել հոգեբանական որոշ ճիշտ մանրամասներ»<sup>4</sup>:

Գրախոսը հետաքրքիր է համարում Ջիվանի եւ Բորիկի վերափոխման ընթացքը, որ հեղինակը նրանց ներկայացնում է ոչ պատրաստի վիճակում, այլ զարգացման ընթացքում:

Գրախոս Ա. Եսայանին գրավել է պատումի պատկերավորությունը, եւ որպես օրինակ վեպից բերում է ուսուցչուհի Մարգարիտ Գասպարովնայի զրույցը Մուրադի հետ: Նա ասում է. «Ոչ, Մուրադ, մոխիրներով ծածկված կրակի վրա կերակուր չի եփվի: Զգացմունքից, կրքից ու վերաբերմունքից զուրկ դասից օգուտ չկա: Որքան քիչ լինես նման դասերին, այնքան լավ կլինի ուսուցչի, աշակերտի եւ մեր ամբողջ գործի համար: Նման դասերում ի՞նչ բնավորություն կարելի է ձեւավորել»: Ուսումնասիրելով վեպը՝ համոզվում ես, որ

Մրանում ճիշտ է տրված աշակերտական միասնական ու ժրաջան կոլեկտիվի ստեղծման, աշխատանքային դաստիարակության, աշակերտների մեջ ինքնուրույնության զարգացման, հասարակական որոշ աշխատանքների կազմակերպման, ընկերասիրության պատվաստման, դպրոցի նյութական բազայի ստեղծման եւ բազմաթիվ այլ կարեւոր հարցերի լուծումը: Խուբլարյանի, Սահակյանի եւ Սիմոնյանի կերպարները ռեալ են, որոնք լավագույն ուսուցիչների կողքին հանդես են գալիս որպես բացասական գծերով օժտված մանկավարժներ: Դրանք այն ուսուցիչներն են, որոնք անձնական շահը եւ փառամոլությունը բարձր են դատում հասարակական շահից եւ դպրոցի ու կոլեկտիվի պատվից:

Վարպետ գրչով է ստեղծված վեպի գլխավոր հերոս Արամյանի կերպարը, չնայած իր գործունեության ընթացքում նա դրսեւորում է որոշ թուլություններ: «Սերունդների հետ» վեպը սիրով ընդունվեց ընթերցասեր հասարակայնության, առանձնապես ժողովրդական լուսավորության ճակատում աշխատողների կողմից, որոնք այնտեղ գտան իրենց հուզող մի շարք հարցերի պատասխաններ:

«Սերունդների հետ» վեպի երկրորդ հատորը լույս է տեսել 1958 թվականին: Առաջին հատորի տպավորությունը դեռ վառ էր, երբ ընթերցողը ձեռքն առավ երկրորդը եւ կրկին համոզվեց, որ ե՛ւ հայ դասական, ե՛ւ նորագույն շրջանի հայ գրականությունը ունեցավ թեմատիկ առունձով արժեքավոր մի գիրք, որի պակասն զգացվում էր:

Ա.Աբրահամյանի հաջողության գրավականը կայացավ նրանում, որ նա ստեղծեց դպրոցի՝ մատաղ սերնդի դաստիարակության այդ հավերժական դարբնոցի գեղարվեստական պատկերը՝ հաստատելով նման գործերի կարելու դերը ժողովրդի կյանքում:

Վեպի հաջողությունը կենսական ճշմարտացիությունն է, որովհետև այն գրվել է ուսուցչի կողմից, ուսուցչի կյանքի մասին, ուսուցչի համար: Նրանում մտացածին ոչինչ չկա, դպրոցական կյանքի պատկերն է՝ իր դժվարին, պատվաբեր առօրյայով ու նպատակով:

Ուշագրավ է վեպի թեման: Այն ընդգրկում է Հայրենական Մեծ պատերազմին նախորդած երկու տարիները եւ պատերազմական ժամանակաշրջանը՝ մինչեւ նրա ավարտը:

Վեպի առաջին հատորի ընթերցողները լրիվ պատկերացում էին կազմել նախապատերազմական երկու տարիներին դպրոցում տեղի ունեցած խնորումների մասին եւ լսել ահավոր պատերազմի բոթը:

Ովքեր ականատես եւ ականջալուր են եղել Մեծ Հայրենականի առաջին օրերին եւ ովքեր լսել են պատերազմի բոթը, չեն կարող չհաստատել գրողի նկարագրությունը այդ առիթով: Ահա այն. «Ֆաշիստական Գերմանիայի հարձակման լուրը, որ կայծակի արագությամբ տարածվել էր գյուղում, շուտով հասավ եւ դպրոցը: Մի քանի վայրկյանում այստեղ ամեն ինչ կարծես մեռավ: Երգչախմբի «Սիրուն Ղարաբաղ» երգը կիսատ մնաց, պարախմբում Մար-



տինը սրինգը բերանից հանեց այն պահին, երբ Սուրենը լեզգինկայի պտույտի համար դիրք էր բռնել: Շրջանավարտների համար ծաղկեփնջեր պատրաստող աղջիկների մոտ կիսատ մնաց երեսունհինգերորդ ծաղկեփունջը: Խոհարարուհին այլևս փայտ չէր ավելացնում կրակին: Նա կիսաեփ կերակուրները թողեց հանգրած օջախների վրա ու լուռ նստեց:

Գյուղի հեռավոր ծայրում գորգի կանաչ թելը մնաց Յակոբ քեռու կնոջ բարձրացված ձեռքում եւ հինվածքի մեջ չմտավ: Գյուղամիջում իր աշխատանքը կիսատ թողեց Կուսաբերդի անվանի քարտաշ Արշակ քեռին, որ մանկապարտեզի մուտքի սյուների քարերն էր տաշում: Բորիկն արտասուքն աչքերին տանիք բարձրացավ եւ բռնած աղավնիներին մեկ-մեկ բաց թողեց»<sup>5</sup>:

Այս պատկերն աչքի է ընկնում ժողովրդական կենցաղի, սովորույթների, ակնկալիքների եւ համազգային ցավի պահին համախմբվելու ճշմարիտ հյուսվածքով: Այստեղ ընդգծված տազնապը եւս ազգային արմատներ ունի: Պատմության ընթացքում աշխարհի վրա տեղի ունեցած պատերազմներն աղետաբեր են եղել հայ ժողովրդի համար: Նրա հիշողության մեջ դեռես անանց վշտի մրմուռով ապրում էր 1915-1923 թվականներին Արեւմտահայաստանում, ինչպես նաեւ Կովկասի հայաշատ շրջաններում, առանձնապես Բաքվում եւ Շուշիում ազերի-թուրքերի կազմակերպած ցեղասպանությունը: Ահա թե ինչու ֆաշիստական Գերմանիայի դեմ մղված պատերազմին փոքրաթիվ

հայ ժողովրդի 600 հազարից ավելի քաջորդիներ, որոնցից 45 հազարը՝ միայն Արցախից, մարտնչեցին Վիլհելմ Երկրորդի ժառանգորդ Ռիտլերի հրոսակների դեմ՝ առաջադեմ մարդկության հետ մեկտեղ ապահովելով 1945-ի Մայիսի 9-ը: Նշված պատկերով եւ ընդգծված զգացումների ենթաբնագրային արժարժույթներով էլ ավարտվում է վեպի առաջին հատորը: Երկրորդ հատորն առաջինի անմիջական շարունակությունն է: Երկրորդ հատորում պատերազմական տարիների նկարագրությունն է: Ճիշտ է, երկում պատկերվում են մեկ դպրոցի իրադարձությունները, սակայն ընդհանրության մեջ խտացված է Արցախ աշխարհի ուսումնական բոլոր օջախների գործունեությունը նշված ժամանակաշրջանում: Եվ ոչ միայն Արցախի, այլեւ Հայոց աշխարհի դպրոցական կյանքի երանգների հյուսվածքն ենք տեսնում վեպում: Հայոց բազմադարյան դպրոցի մանկավարժների եւ սովորողների ձգտումների, բնավորությունների, ազգային նկարագրի նկատելի, գեղեցիկ մի հյուսվածք է այն: Այս դիտարկումի լավագույն վկայությունը երկի գլխավոր դրական կերպարն է՝ Արմեն Արամյանը: Երիտասարդ է նա, սակայն հայ մանկավարժության պատմության մեջ մշակված ազգային դիմագիծը ներկայացնող բոլոր սկզբունքների օրինակ է:

Հայտնի է, որ 1950-ական թթ. գրականագետներին հուզող հարցերից մեկը եղել է դրական հերոսի բնավորության ընկալումը: Ոմանք ձգտել են ապացուցել, որ դրական հերոսը չպետք է ներկայացվի որպես անխոցելի, անսխալա-

կան, հեղինակի լուսավոր միտումների գաղափարակիրը, որ նա եւս որպէս անհատականություն՝ կարող է ունենալ թերություններ, բնավորության թույլ կողմեր: Այս սկզբունքից ելնելով՝ Արտաշես Թեւոսյանը իր գրախոսականում գրել է. «Յեղինակը, ծագելով կերտել դպրոցի իսկական դիրեկտորի կերպար, թվում է, որ փոքր-ինչ իդեալականացրել է Արամյանին: Վեպում բանն այնպէս է պատկերված, որ Արամյանը շատ է ուժեղ, համարյա անսխալական: Լավ կլիներ Արամյանի շատ ու շատ դրական կողմերի հետ միասին ցույց տրվեին ու խարազանվեին բացերը, դրանց վնասները»<sup>6</sup>:

Գրականագետ Արշալույս Բաբայանը իր «Կենսական ճշմարտության ուժը» հոդվածում պատասխանել է հետեւյալ կերպ. «Ի դեպ, վերջերս քննադատության մի շարք ներկայացուցիչներ ընդհանրապէս շատ են խոսում այն հարցի մասին, որ գրական հերոսներն էլ պարտադիր կերպով պետք է ունենան որոշ սխալներ, նրանց անհատականությունը հաստատող մարդկային որոշ թերություններ: Թվում է, երբեք չի կարելի այդ խնդրին մոտենալ միակողմանի, ընդունել այն որպէս քարացած ճշմարտություն: Մի՞թե պարտադիր է, որ բոլոր դրական հերոսներն ունենան նաեւ մարդկային թուլություններ ու սխալներ: Կարելո՞րն այն է, որ դրական կերպարի մեջ համախմբված հատկությունների գումարը հաստատի նրա մարդկայնությունը, չեղծանի նրա բնավորության կենդանի գծերը»<sup>7</sup>:

Ծանոթանալով «Սերունդների հետ» վեպի գլխավոր

հերոսի գործունեության եւ բնավորության առինքնող գծերի նկարագրությանը՝ համոզվում ես, որ անվանի գրականագետ Ա. Բաբայանի կարծիքը տեղին է եւ ընդունելի: Վերջապես համաշխարհային գրականության մեջ քիչ չեն այն դրական հերոսները, որոնց բնավորության բոլոր գծերն առինքնող են, օրինակելի: Այստեղ կարելու է կերպարի ստեղծման վարպետությունը՝ պատկերի բոլոր տեսակների համաձուլվածքի առկայությամբ կոնկրետ երկի մեջ: Տվյալ դեպքում Ս. Աբրահամյանին հաջողվել է ստեղծել գյուղական դպրոցի դիրեկտորի՝ Արմեն Արամյանի թանձրացած դրական կերպարը: Նա օրինակելի վարքագիծ ունի, նրա համար կյանքի ամենամեծ դպրոցը մանկավարժի իր մասնագիտությունն է, որի իրականացման ճանապարհին կարողանում է հաղթահարել բոլոր խոչընդոտները: Այգեստանի յոթամյա դպրոցից տեղափոխվելով Կուսաբերո՝ նա կազմակերպում է կոլեկտիվի գործունեությունը, կարգավորում միջնակարգ դպրոցի աշխատանքները, բարձրացնում ուսման որակը, վերացնում ուսուցիչների միջեւ եղած հակասությունները, իրեն դրսեւորում որպես հմուտ, մարդասեր, հոգատար ղեկավար եւ ընկեր: Նրան սիրում եւ հարգում են ոչ միայն մանկավարժները, այլեւ աշակերտները: Հայրենասիրությունը ըստ Արամյանի՝ վերացական հասկացություն չէ, այլ կոնկրետ լավ աշխատանքի կազմակերպում ու ցուցադրում: Արամյանը փոխադարձ սիրով կապվում է Լեբեդեւայի հետ եւ կազմում օրինակելի ընտանիք, որով էլ ամբողջական է դառնում մանկավարժ-քաղաքացու

բարոյական դիմանկարը:

Արմեն Արամյանը կյանքի իր մկրտությունը ստացել է դպրոցում: Մեկնելով ռազմաճակատ՝ նա դառնում է անձնուրաց զինվոր, Ստալինգրադյան ռազմաճակատում հասնում գումարտակի կոմիսարի աստիճանին: Պատերազմական թոհուբոհի մեջ նա երբեք չի մոռանում Կուսաբերդի դպրոցը, իր ընկերներին, աշակերտներին: Մի կողմից ֆաշիստական հորդանների դեմ մարտնչող հայրենիքի, մյուս կողմից՝ թիկունքի բարվոք վիճակի ստեղծման հոգսերը հարստացնում են նրա հոգեկան աշխարհը: Արմենը անձնական եւ հասարակական շահերի միասնության դրսեւորողն ու ջատագովն է: Մեծ են նրա միտումներն ու գործերը, նա անհատականացված կերպար է, տիպական հանգամանքներում իրեն անմնացորդ դրսեւորող օրինակելի բնավորություն: Նա խոսում է Ս. Աբրահամյանի հատում տաղանդի մասին: Արամյանը ընտանիքում եւս գտնում է իր տեղը: Թեւ-թեւի, իրար հասկանալով ընտանիքի երջանկությունն են հյուսում Արամյանն ու ռուսաց լեզվի ուսուցչուհի Լյուբով Ալեքսանդրովնան: Ընթերցողը հավանում եւ հավատում է նրանց, որովհետեւ նրանց բնավորության գծերի դրսեւորումը վեպում ցույց է տրված գործողությունների զարգացման ընթացքում, համոզիչ: Լյուբով Ալեքսանդրովնան հասկանում է իր ամուսնուն: Նա հոգեպես մերվում է ուսուցչական կոլեկտիվին, հոգատար վերաբերմունք ցուցաբերում աշակերտների նկատմամբ, դաստիարակում որդուն՝ Վարդանիկին, պահում-պահպա-

նում ռազմաճակատ մեկնած ամուսնու կուրացած մորը Սոնա տատիկին:

Ս. Աբրահամյանը լավ իմանալով հայ նահապետական ամուր ընտանիքի ավանդույթները, միաժամանակ դրանց գունարել է 20-րդ դարի քաղաքակիրթ ընտանիքի ցանկալի սովորույթները: Ավանդականն ու նորն այստեղ բացահայտված են հմտորեն: Վեպի հաջողված կերպարներից է Լյուբով Ալեքսանդրովնան՝ ջերմ սրտի, հարուստ ներաշխարհի, ազնիվ զգացումների տեր ուսուցչուհին:

Ս.Աբրահամյանը ուշադրություն է դարձրել կերպարների զարգացման պահանջին՝ այն հմտորեն առնչելով սյուժեի զարգացմանը: Այս առումով տիպական են տնտեսվարուհի Արշալույսի եւ նրա եղբոր՝ Ջիվանի կերպարները: Լինելով դպրոցի նախկին դիրեկտոր Սեդրակ Խուբլարյանի զավակները՝ դաստիարակվում են ոչ թե հոր անընդունելի օրինակով, այլ դպրոցի առողջ ավանդույթների ջերմությամբ: Ս. Աբրահամյանը հոգեբան գրող է: Նա ուշադրություն է դարձրել դպրոցականների տարիքային առանձնահատկություններին, նրանց մտավոր զարգացման աստիճանին, հոգեբանական դրսեւորումներին: Արդյունքում ստեղծվել են Մեխակի, Ռազմիկի, Բորիկի, Յենրիկի հաջողված կերպարները:

Ս.Աբրահամյանը վեպում չի սքողել հասարակական արատներն ու դրանք կրող անհատների անհաճո արարքները: Հարազատ մնալով ռեալիզմի պահանջներին՝ նա համոզիչ երանգներով խիստ խարազանել է Խուբլարյանի ամ-

բարտավան բնավորությունը, փառասիրությունը, եսասիրությունը, կյանքի հանդեպ ունեցած նրա սխալ ընկալումներն ու վնասակար արարքները: Հենց դրա պատճառով նա լքվում է ընկերների կողմից: Նրանից հեռանում են նույնիսկ գոփող Սմբատ Ավետիքյանը, կաշառակեր ու հարբեցող Բաբկեն Սիմոնյանը, իր փեսան՝ Գայլ Դոնմազը: Նա կորցրել է հեղինակությունն անգամ իր զավակների մոտ: Ս. Աբրահամյանը խորհրդանշական, պայմանական իրավիճակների ու պատումների միջոցով ստեղծել է ուշագրավ պատկերներ: Խորհրդանշական են Սեդրակ Խուբլարյանի հիվանդությունն ու մահը, որ ներկայացված են վեպում: Այդ պատկերը վերաբերում է հասարակական կյանքում գոյություն ունեցող արմատների վերացմանը:

«Սերունդների հետ» վեպի առաջին եւ երկրորդ հատորները տրամաբանական սերտ կապ ունեն: Այն հերոսները, որոնք հանդես են բերվել առաջին հատորում, նույն հաջողությամբ շարունակում են գործել երկրորդում, առանձնապես Հայրենական Մեծ պատերազմի դաժան տարիներին:

Ինչպես հատուկ է բոլոր ստվարածավալ վեպերին, Ս. Աբրահամյանի երկհատորյա երկը եւս ունի որոշ թերություններ: Ոչ բոլոր հերոսներն են ավարտուն, ինչպես ասենք, Վինոգրադովի, Օրլովի կերպարները: Վեպում կան ձգձգված էջեր, լեզվաոճական թերություններ:

Ակադեմիկոս Ս. Արզումանյանը ժամանակին գնահատել է «Սերունդների հետ» երկը՝ նշելով. «Վեպում կոնֆ-

լիկտը կառուցվում է Արմեն Արամյանի եւ Սեդրակ Խուբլարյանի միջեւ: Եթե առաջինն ազնիվ, առաքինի անձնավորություն է, լավ գործ կատարելու ջանադիր, մատաղ սերնդի գեղեցիկ դաստիարակությանն անսահմանորեն նվիրված, երկրորդը դրա հակապատկերն է: Դավեր են նյութվում, լարվում հարաբերությունները, որոնց ընթացքում էլ որոշակի գծագրվում են բախվող կողմերի հոգեբանությունը, հասարակական-բարոյական դիմանկարը: Գործողությունների մեջ են մտնում բազմաթիվ հերոսներ, Լյուբով Ալեքսանդրովնան, Արարատ Բաղրամյանը, Մարգարիտա Գասպարովնան եւ ուրիշներ»:

Անվանի գրականագետը միաժամանակ ընդգծում է, որ «վեպի ոչ բոլոր կերպարներն են դարձել լիարյուն ու կենդանի, որոնք ամեն դեպքում սուվեր չեն ձգում վեպի հաջողության վրա <sup>8</sup>:

Ընդհանրության մեջ Ս. Աբրահամյանի «Սերունդների հետ» վեպը մնում է որպես արժեքավոր ներդրում նորագույն շրջանի հայ գրականության պատմության մեջ:

Ս.Աբրահամյանի ստեղծագործությունն ապացուցում է նրա դիտողունակությունն ու նրբանկատությունը կյանքի կարեւոր իրադարձությունների, ժողովրդի եւ անհատի ճակատագրի, երկրի առաջընթացն ապահովող գործընթացների նկատմամբ: Գրականության նվիրյալների այս զգացումը բնութագրական է բոլոր նշանավոր գրողների համար: Որպես արվեստատենչ, Ս.Աբրահամյանը եւս պետք է հաստատի գրական զարգացման բազմազանու-



թյունն ու միասնությունը: Հայտնի է այն ճշմարտությունը, որ գրականությունն ու արվեստը սերտորեն կապված են հասարակական կյանքի հետ:

Գրական-պատմական պրոցեսի այդ առանձնահատկությունն առնչված է գրական զարգացման բազմազանությանն ու միասնությանը: Այս դիտակետից թելադրվում է այն սկզբունքը, որ ամեն մի դարաշրջանի գրականությունն դիտվում է մի ամբողջության մեջ, որը ներկայանում է իբրև անընդհատ շարժվող, զարգացող երևույթ, որի ներսում տեղի է ունենում թեմաների, գաղափարների, ինչպես նաև գեղարվեստական ձևերի անընդհատ փոփոխություն: Իրականության զարգացման հետ փոխվում է նաև գրականության բովանդակությունը՝ իր մեջ ներառելով հասարակական կյանքի նոր կողմեր, մարդկային հարաբերությունների եւ հոգեբանության նոր երևույթներ: Սակայն գրականության զարգացումը միաժամանակ բնորոշվում է ներքին միասնությամբ: Դրա հիմքը ժամանակի սոցիալական կյանքն է, հասարակության գեղագիտական գիտակցությունը, որոնք եւ պայմանավորում են ժամանակի գրականության բազմազան, երբեմն հակադիր կողմեր: Ժամանակին Րաֆֆին գրել է. «Եթե վեպը կյանքի ու նրա երևույթների նկարագիր է, երբ վեպը մի արտահայտություն է ժողովրդի մտավոր եւ հոգեկան տրամադրության, շատ բնական է, որ միեւնույն ժամանակներում լույս տեսած զանազան վեպեր կարող են բավական նման լինել միմյանց եթե ոչ իրենց բովանդակությամբ եւ տիպերով, բայց զոնե ի-

րենց ոգու ընդհանուր ներշնչությամբ, իրենց գաղափարներով»<sup>9</sup>:

Ահա այս դիտարկումի հետքերով, երբ անդրադառնում ես 1950-ական թվականներից հետո ստեղծված երկերին, նկատում ես վերոնշյալ երեւոյթը: Այդ ժամանակահատվածում էր, որ հանդես եկան Հր. Մաթեւոսյանը, Պ.Ջեթբունցյանը, Վ.Պետրոսյանը, Հ.Մելքոնյանը, Մ. Գալշոյանը, Ն. Ադալյանը, Վրաստանում՝ Բ. Սեյրանյանը, Արցախում Բ. Ուլուբաբյանն ու Ս. Աբրահամյանը եւ ուրիշներ, որոնք հիմնականում ընթերցողին հանձնեցին վեպեր ու վիպակներ կյանքում տեղի ունեցող կարեւորագույն երեւոյթների մասին: Ընդհանուր այս համապատկերին որոշակի արժեքներ են ներկայացնում Ս. Աբրահամյանի այն էպիկական երկերը, որ գրել է «Սերունդների հետ» վեպից հետո:

Գրողի ստեղծագործութունների սյուժեների հիմքում ընկած կոնֆլիկտները տեղի են ունենում կյանքի դրական եւ բացասական երեւոյթները կրող մարդկանց, հեքիաթային իմաստով՝ բարու եւ չարի միջեւ: Այս առումով օրինակելի գործ է «Մեր քաղաքը» վիպակը: Ս.Աբրահամյան-արձակագրի հաջողության գրավականն իր կողմից նկարագրվող երեւոյթների խոր իմացութունն է: Ինչի մասին գրել է նա, տեղյակ է եղել, եւ կարող ենք ընդգծել, որ իր բոլոր գեղարվեստական գլխավոր կերպարներն ունեցել են իրենց նախատիպերը: Այստեղից էլ նրա ստեղծած կերպարների գործունեության հասարակական ուղղվածությունը՝ անհատ-հասարակություն հասկացության ոլոր-


տում: Վիպակում հանդես են բերված կյանքի տարբեր բնագավառների աշխատողներ, որոնց գործունեությունն ըստ գրողի գեղագիտական իդեալի, ունի դաստիարակչական արժեք: Այդ են վկայում վիպակի կերպարներից բժշկուհի Սուսաննա Մայիլյանի, նրա որդու՝ Ռաֆայելի բնավորության ոչ ընդունելի գծերի բացահայտումները: Դրանց հակադրված է վարպետ Մեսրոպի օրինակելի ընտանիքը, որի բոլոր անդամները ժողովրդի բարոյական առինքնող դիմագիծը պահպանող ու գեղեցկացնող քաղաքացիներ են: Ճիշտ է, «Մեր քաղաքը» վիպակի թեման հեռու է դպրոցական միջավայրը ներկայացնող «Սերունդների հետ» վեպի թեմատիկ-գաղափարական հիմքից, սակայն նրա դաստիարակչական ուղղվածությունը եւս հաստատում է ուսուցիչ-հեղինակի ձեռագիրը:

Ս. Աբրահամյանի վարած պաշտոնները նրան միշտ պահել են կյանքի բոլոր ոլորտների աշխատողների հետ սերտ կապի մեջ: Այդ է ապացուցում նաեւ «Ուլորաններում» վիպակը, որի թեման առնված է շինարարների գործընթացից: Նրանում եւս առկա է կոնֆլիկտը: Կոմպոզիցիոն հետաքրքիր միջոց է ընտրել հեղինակը: Պատումը ներկայացվում է վիպակի գլխավոր հերոսի՝ Վարդանի անունից: Երկի հաջողվածության հիմքը կերպարների ամուր դիրքորոշումներն են: Մնայուն կերպար է շինվարչության պետ, եսակենտրոն Ալեքսանդր Ամիրյանը, որն իր շուրջն է համախմբում իր սմաններին, առաջին հերթին, իր աներծագին՝ Վարդան Ջիվանյանին: Սակայն հասարակության հա-

վատը լավի հաղթանակի հանդեպ իրականություն է դառնում, տեղի է տալիս Ալեքսանդր Ամիրյանը՝ թողնելով վարչության պետի իր պաշտոնը: Ժողովրդական իմաստության կրողներից է վարպետ Խաչատուրը, որ չի հաշտվում երբեք բնավորության արատներ ունեցող մարդկանց հետ: Ծիշտ է նկատել գրականագետ Յ. Գրիգորյանը. «Չարկ է նշել, որ Աբրահամյանի կերտած դրական կերպարները վերացական, շինծու չեն, այլ գալիս են կյանքից, ունեն հասարակական-բարոյական, ինչու չէ՝ նաեւ ազգային ամուր հենարաններ, ինչով էլ պայմանավորված է նրանց հաղթանակը: Այդ «ազգայինը» գուցե թե այնքան էլ թափանցիկ չէ, գուցե «անզեն» աչքով տեսանելի չէ, բայց այդ առկա է, կա Սարգիս Աբրահամյանի շատ ստեղծագործություններում, ավելին հնարավոր էլ չէր Բաքվի շնչի տակ ստեղծագործող մարդու համար, թեւ երբեմն-երբեմն գրողի գրիչը «անգուշորեն» պատռում էր անթափանցիկության շղարշը»<sup>10</sup>:

ԽՍՀՄ փլուզումից հետո էլ Ս. Աբրահամյանի ստեղծագործությունը չի կորցրել իր գեղարվեստական արժեքը: Այդ են ապացուցում նրա երկերը ու դրանց թվում նաեւ՝ «Չավատարմություն» վեպը, «Սեր եւ խանդ» վիպակը, «Կարմիր մեխակներ» եւ «Լեռնաստան» ժողովածուները, նրանցում զետեղված պատմվածքները: Ս.Աբրահամյանը հայ արձակագրության մեջ մնում է որպես վեպի եւ վիպակի ճանաչված հեղինակներից մեկը՝ հարատելելու ճակատագրով:

## ԻՍԱՐԱԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ



Քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ մշակույթի հարստացման ու զարգացման գործընթացը չի կարելի պատկերացնել առանց Արցախի գրական ընտանիքի մասնակցության: Ծիշոտ է, մինչև 1988 թվականը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը պատնեշված էր մայր Հայաստանից, սակայն, ինչպես ասվում է, «ավյունը կարող է քնել, արյունը չի քնում երբեք»: Եվ չի քնել երբեք Արցախ աշխարհի հայ տերերի եւ նրանց ստեղծագործող զավակների արյունը: 1950-ական թվականներից սկսած, առանձնապես անհատի պաշտամունքի քննադատությունից հետո, Հայաստանում ապրող եւ ստեղծագործող մտավորականների նորահյուս երկերի ջերմացնող դասերը արձագանք էին գտնում նաեւ Արցախի գրական ընտանիքի ներկայացուցիչների արարող աշխարհում: Նրանց նախասիրություններում եւ երեւացող ստեղծագործություններում խոսում էր Հայկյան Առանի հայախոս ոգին՝ պատմական արմատների կենարար ավիշով եւ ապագայի հանդեպ ունեցած լուսաբեր հավատով: Նման ստեղծագործողների բույլի մեջ են մտնում Բ. Ջանյանը, Բ. Ուլուբաբյանը, Ս. Աբրահամյանը, Ի. Ալավերդյանը եւ ապա Գ. Գաբրիելյանը, Վ. Հակոբյանը, Մ. Հովհաննիսյանը, Յ. Բեգլարյանը, Ս. Խանյանը, Վ. Օվյանը, Ն. Ավագյանը, Ա. Հովհաննիսյանը, Ն. Գասպարյանը, Ժ. Բեգլարյանը, Ռ.

Եսայանը եւ ուրիշ շնորհաշատ գրողներ:

Արցախի գրական օջախի վաստակաշատ դեմքերից է արծակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, մանկավարժ, մշակույթի վաստակավոր գործիչ Իսահակ Սերգեյի Ալավերդյանը, որի գրական ժառանգությունը արժանի է ամենայն ուշադրության: Եվ հենց սկզբից նշենք, որ նրա գեղարվեստական արձակը, դրամատիկական երկերն ու թատերագիտական ուսումնասիրությունները ժամանակին գնահատվել են ականավոր գրողների, գրաքննադատների, թատերագետների եւ բարձրաճաշակ ընթերցողների կողմից: Եվ բնավորությամբ համեստ, աստվածային շնորհքի տեր, հայ դասական գրականության հմուտ գիտակ Իսահակ Սերգեյին ավելի մեծ պատասխանատվությամբ է վերաբերվել գրողի իր տաղանդին, գնալով նոր նրբերանգներով է հարստացրել թե՛ իր արձակը եւ թե՛ թատերագետի իր բացահայտումներն ու ընդհանրացումները: Ուստի բնական ու խոսուն են նրա 60 եւ 70- ամյա հորեւյանների առթիվ գրված տասնյակ հոդվածներն ու էսսեները:

\*\*\*

Իսահակ Ալավերդյանը ծնվել է 1917 թ. հունվարի 17-ին, Շուշի քաղաքում, Սերգեյ ու Թամարա Ալավերդյանների ընտանիքում: Նա ընտանիքի առաջնեկն էր, սակայն դարձավ վերջինը, որովհետեւ երկու տարի անց կյանքից հեռացավ մայրը: Իսահակի խնամքն իր վրա վերցրեց Մեծ մայրը՝ Մինա Ալավերդյանը: Մինա տատիկը ոչ միայն եղավ փոքրիկ Իսահակի խնամողը, այլեւ փրկարարը: Այդ նա էր,

որ 1920թ. գարնանը, թուրք-ազերի հրոսակներից կարողացավ փրկել թռանը: Բախտորոշ նշանակություն ունեցավ ռուսական կայազորի մուտքը Շուշի, որի շնորհիվ խաղաղ, բայց դառնություններով լի օրեր սկսվեցին Ալավերդյանների ընտանիքի համար: Իսահակի հայրը՝ Սերգեյը, հոր մահից հետո տնօրինում էր Խնձրստանի մետաքսագործական ֆաբրիկան: Թեև օրինապահ մարդ էր, սակայն 1928թ. Խորհրդային պետությունը կուլակաթափ արեց նրան: Հաջորդ հարվածը Սերգեյ Ալավերդյանի համար Ստեփանակերտի առանձնատան առգրավումն էր: Այդ տունը մինչեւ այսօր էլ կանգուն է՝ Ն. Ստեփանյան 7 հասցեում: Այն երկհարկանի շենք է, որ այսօրվա պահանջներով սովորական մի տուն է: Դա դեռ բուրդը չէր: 1933-ին Սերգեյ Ալավերդյանը աքսորվեց Սիբիր, որտեղից Ստեփանակերտ վերադարձավ 1944-ին՝ կուրացած: Վախճանվել է 1965-ին: Այսպիսի դաժան ու անօրինական պայմանների մեջ հասակ առավ ու կյանք մտավ Իսահակ Ալավերդյանը:

Կա ժողովրդական կենսափորձից ծնված մի իմաստություն, ըստ որի Աստված եթե մի կողմից գրկում է, մյուս կողմից նվիրում է: Աստվածային այդ ընծան Իսահակի ընդունակությունն էր, ուսման ծարավը, ուշիմությունն ու նպատակասլացությունը: Ապագա գրողը կրթություն ստացավ Ստեփանակերտի օրինակելի միջնակարգ դպրոցում: 1934-35 ուս. տարում միջնակարգն ավարտելուց հետո, իր խնդրանքով նա գործուղվեց Նախիջեւանիկ գյուղը, ապա Շուշիքենդ, որպես ուսուցիչ: Երկու տարի անց նա աշխատում է Շուշիի միջնակարգ դպրոցում՝ ուսմասվարի պաշտոնում:

Գիտելիքների ծարավը երիտասարդ ուսուցչին շուտով տանում է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտին կից երկամյա ուսուցչական հեռակա ինստիտուտը: Այնուհետև նա կրթությունը շարունակում է Ադրբեջանի Ս. Մ. Կիրովի անվան պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժնում եւ ավարտում հաջողությամբ: Մասնակցել է Մեծ հայրենականին:

1939-1977թթ. հայոց լեզու եւ գրականություն է դասավանդել թիվ 2 եւ 3 դպրոցներում: 1968-1990թթ. ղեկավարել է Ստեփանակերտի Մ. Գորկու (այժմ` Վ. Փափազյանի) անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գրական բաժինը` որպես վարիչ: Ի.Ալավերդյանը կյանքից հեռացել է 1992թ. սեպտեմբերի 7-ին, 75 տարեկան հասակում, Ստեփանակերտ քաղաքում:

\*\*\*

1974 թվականից, երբ բնակարան ստացա Ի. Ալավերդյանի հարեւանությամբ, ամեն օր հանդիպում էինք աշխատանքի գնալիս եւ վերադառնալիս: Ձերժինսկու (այժմ Վ. Սարոյանի) անվան փողոցի խաչմերուկից նա քայլում էր դեպի Վ. Փափազյանի անվան հայկական դրամատիկական թատրոն, իսկ ես` դեպի Արցախի պետական համալսարան: Միասին էինք գնում եւ մասնակցում գրական միջոցառումներին եւ վերադառնում: Հանդիպելիս թե բաժանվելիս մեր զրույցը հայկական մշակույթի արցախյան հատվածի ճակատագրի մասին էր, թատրոնի ձեռքբերումների ու երիտասարդության կրթության ու դաստիարակության նորօրյա խնդիր-



ների մասին, թատրոնի յուրաքանչյուր նոր ներկայացում, գրողների ամեն մի նոր գիրք այնպես էին ուրախացնում նրան, որ թվում էր, թե իր սեփական ստեղծագործություններն են աշխարհ եկել: Այդպիսին էր Իսահակ Սերգեյին:

Տարբեր են լինում արվեստագետների անձնական ճակատագրերը, սակայն մեկ՝ ժողովրդի եւ նրա մշակույթի հանդեպ եղած պատասխանատվության զգացումի մեջ: Տարբեր են լինում նրանց աստվածային շնորհքի աստիճանները, սակայն մեկ՝ ունեցածը նվիրելու անսպառ հաճույքով: Ի. Ալավերդյանը Արցախում ստեղծվող գրականությունն ու թատերական արվեստը հարստացնելու մեջ այնքան ծառայություններ ունի, որ մոռացության փոշին երբեք չի իջնի նրա գրական ժառանգությանը:

Մեր վերջին հանդիպումները արցախյան ազատամարտիկների կողմից հայրենի Շուշին ազատագրելուց հետո էին: Նա հիվանդ էր, բայց խոսում էր ոգեւորված: - Կազդուրվեմ, անպայման մորս շիրմաքարը կնորոգեմ Շուշվա գերեզմանոցում: Ինչպե՞ս մոռանամ,- ասում էր նա եւ ասես մի տեսիլք՝ մոր եւ Շուշվա պատկերով փարվում էր նրան: Նա լքում էր եւ երազկոտ շարունակում,- Այո, Շուշին նորից պիտի դառնա մեր մշակույթի կենտրոնը, Խանդամիրյանների թատրոնը կրկին պիտի գործի այնտեղ:

Գիտեի, որ Ի. Ալավերդյանը կանոնավոր օրագիր է պահում: Եվ երբ պիտի գրեի իմ այս խոսքը, թերթեցի նրա օրագիրը: 1987թ. ապրիլի 13-ին գրած հուշը անվանված է «Չոբեյանական երեկո»: Այն սկսվում է այսպես. «1987 թվի ապրիլի 13-ին, թատրոնի դահլիճում կայացավ իմ հոբեյա-

նական երեկոն: Բեմի ետնավարագույրին մի մեծ 70 էր՝ նստած դափնեճյուղին:

Նայում եմ դահլիճին ե՛լ հուզվում եմ, ե՛լ հրճվում, մեծամասամբ իմ սիրելի սաներն են, գործընկերներս, հարազատներս: Ներկա են եւ վաղուց, շա՛տ վաղուց դպրոցն ավարտած սաներս: Բոլորն էլ հոգեհարազատ, սիրող հայացքով են նայում ինձ: Ամենալավ, ամենապատվավոր գործը ուսուցչությունն է, նա կա ու կմնա այդպիսին...

... Բոլորի խոսքն էլ անկեղծ էր, ոչ մի ձեւականություն ու պաշտոնական կատարում չկար:

Երբ ձայնը տվեցին ինձ, ծաղիկներ հոսեցին դեպի բեմ... Ես հուզվել էի անասելի, խոսեցի շատ հուզված...

... Այդ երեկո կարծես նժարվեց իմ արածն ու թողածը՝ ես չեմ անցել կյանքի կողքով» (Ի.Ալավերդյան, «Ազատ Արցախ» հրատարակչություն, Ստեփ., 2001թ., էջ 115):

Հիրավի, Ի. Ալավերդյանը կյանքի կողքով չի անցել: Երբ սկսվեց Արցախյան ազգային ազատագրական պայքարը, արդեն 70-նն անց արվեստագետը մի նոր վերածնունդ ապրեց: Նրա օրագրում կարդում ենք. «Փետրվար, 1988 թիվ... Ամբոխվել է ժողովուրդը մարզկոմի շենքի առջեւ. այդպիսի ցույց իր օրում այս հրապարակը չի տեսել: Ղա՛րա՛-բա՛ղ, Յա՛-յա՛ս-տա՛ն՝ անվերջ այս բառերն են վանկարկում:

Արթնացել է դարաբաղու ոգին...

Թող ուժ առնի, թող ճախրի...

Թատրոնում հավաքվել են միտինգի: Կոչ-բողոք, պահանջ-նամակ կարդացին, եւ բոլորը ստորագրեցին: Շատե-

որը ելույթ ունեցան: Ես էլ խոսեցի... 70 տարվա փակված լեզուս բացվեց, սիրտս թեթևացավ: Խոսքս վերջացրի՝ եթե չմիանանք, Նախիջեւանի օրն ենք ընկնելու... Արթնացել է ղարաբաղցու ոգին, ալեկոծվում է, ափեափ է զարկվում, ցասումնալից կոչեր է հղում առ Մոսկվա: Դանակը ոսկորին է հասել: Ղարաբաղցին վճիռ է ուզում, ճշմարիտ վճիռ, ոչ խաբեություն, ոչ սուտ, ոչ կեղծ հաշտեցում:

Ահա թե ինչպիսի՞ն էս, Ղարաբաղ ու ղարաբաղցի... Դու այդպիսի հնար էլ ունե՞ս, բա ինչպե՞ս ես 70 տարի այդ չարորակ լուծը տարել... վախեցե՞լ ես...

Չէ, չես վախեցել, նզովյալ բեղավորը փակել էր բերանդ, կապել ձեռքերդ, միտքդ հանել գլխիցդ եւ իր «նակագը» դրել այնտեղ...

Արթնացել է ղարաբաղցու ոգին, միայն թե՛ չմարի, չհանգչի» (*Մույն տեղում, էջ 117*):

Դաժան էին օրերը: Շրջափակման մեջ էր Ստեփանակերտը: Ամեն օր ազերիները հարյուրավոր հրթիռներ եւ ռումբեր էին նետում քաղաքի վրա: Սարքին տանիք չէր մնացել, ինչպես նաեւ մեր թաղամասի տները: 1992թ. մարտին գրած օրագիրը ներկայացնում է այդ դժոխքը. «Խառն օրեր են, շփոթված կյանք, դրան գունարած՝ ռմբակոծությունից ավերված տունս: Տանիքը համարյա չկա, որ անձրեւներ սկսվեցին, ամեն ինչ կորած է եւ կրկնապատկվեմ վնասները: Պետք է շտապ գոնե տանիքը սարքել:

Վերջապես հաջողվեց վարպետներ կանչել՝ Ռազմիկ եւ Ժորա, օրինյալ լինեք: Վախվորած, հրթիռակոծության տակ 4-5 օրում վերականգնեցին տանիքը: Տունս, գրադարանս

Կիրակեց: Օրինյալ եղիցի...» (նույն տեղում, էջ 117):

Շուշին հարազատ անուն է բոլոր հայերի համար: Իսկ Շուշին Ի. Ալավերդյանի ծննդավայրն է, ահա, թե ինչ արումներով է շաղախված նրա զգացումը՝ կապված քաղաքի ազատագրման հետ. «8-9 մայիսի, 1992 թիվ: Ահավոր գիշեր եւ ահավոր լուսաբաց: Կրակում են անդադար... Դժվար գործ են ձեռնարկել տղերքը, Աստված օգնական Ձեզ, ուժ ու եռանդ, ազատեցեք Ձեր տունը, ինչ որ մերն է, մերը պետք է լինի...»

Մայիսի 9: Առավոտ լուսո. Արեգակն արդար... Վահրամը աչքալուսանքի եկավ՝ Պապիկ, Շուշին մերն է... Հրա՛շք, հրա՛շք, օրհնվեք դուք, քաջ ֆիդայիներ: Մերն է Ղազանչեցոց եկեղեցին, Կանաչ ժամը, որտեղ կնքել են ինձ, մորս գերեզմանը...

Փառքդ շատ, Աստված, ինձ արժանացրիր այս օրվան...» (նույն տեղում, էջ 117):

\*\*\*

Ի. Ալավերդյանի գրչին են պատկանում «Իմ սաները» (1964), «Թող խաղաղ մեծանա» (1969), «Անանուն մարդը» (1976), «Ծաղիկների երթը» (1978), «Կապույտ գլխաշորը» (1986) պատմվածքների, նովելների եւ արձակ բանաստեղծությունների ժողովածուները: Վերընթերցելով եւ դիտարկելով այդ գրքերը, կրկին համոզվում ես, որ Ի. Ալավերդյանը աշխարհ է եկել մանկավարժ-գրողի կոչումով, արվեստագետի արյան կանչով:

Նա արձակագիր է բառի բուն իմաստով,- սակայն քնա-

րերգուի հուզաշխարհով: Նրա երկերում էպիզոն եւ քնարականությունը այնպես են շաղախված միմյանց, որ հաճախ թվում է, թե արձակ բանաստեղծություն են կարդում: Նախ նշենք, որ նա իր ուժերը փորձել է պոեզիայի բնագավառում, գրել է չափածո առակներ, ընկերներին ընծայել է ձոներգեր: Բայց գոյություն ունի նաեւ մի հանգամանք, որ առնչված է նրա հոգու երանգներին, որ անհրաժեշտ ենք համարում նշել: Ի. Ալավերդյանը Վ. Տերյանի քնարերգության ոչ միայն երկրպագուն էր, այլեւ ասնունքողը: Տերյանին գիտեր ամբողջությամբ, արտասանում էր ինքնամոռաց, վարակիչ, վարպետորեն: Չի կարելի շրջանցել այս երեւոյթը, որ բխում էր նրա հուզաշխարհից, նրա հոգեկան կերտվածքից:

Կա նաեւ իրական, շոշափելի մի գործոն, որ ամենից կարելորդն է Ի. Ալավերդյանի ստեղծագործական խառնվածքի համար: Դա նրա ուսուցչի կոչումն է:

Մանկավարժ-գրող, թե՞ գրող-մանկավարժ: Դժվար է պատասխանել այս հարցին, որովհետեւ երկուսն էլ միաձույլ ու միանշանակ են դրսեւորվել Ի. Ալավերդյանի գործունեության ընթացքում: Նա կյանքի եւ գրականության փոխհարաբերության հարցը ընկալել է մանկավարժի հայեցակետով, մանկավարժությունը՝ գրողի: Ահա թե ինչու նրա բոլոր ժողովածուների միջով կարմիր թելի պես անցնում են առաջին հերթին դաստիարակության հարցերը: Ի. Ալավերդյան-արձակագրի խառնվածքը ուսուցչի խառնվածք է: Մի շարք պատմվածքների գլխավոր հերոսներից մեկը հենց ինքն է՝ Ալավերդյանը՝ Սիսակյան անվան տակ: Եվ այդ կեր-

Կարը լրիվ հնարավորություն է տալիս ընթերցողին, ինչպես հայելու մեջ, տեսնել գրողի հոգեկան աշխարհը, հետաքրքրությունների շրջանակները, զգալ նրա քաղաքացիական պաթոսը: Այդ են վկայում նրա այն պատմվածքներն ու նովելները, որոնցում անմիջականորեն ընդգծվում է գրողի դիմանկարը, որպես հոգեբան արվեստագետ:

Ընդհանրության մեջ Ի.Ալավերդյանը արձակում հոգեբանական ուղղության ներկայացուցիչներից է: Քննարկվող թեման նա կոմպոզիցիոն տարբեր ձևերի ու միջոցների կիրառմամբ արժարժել է հոգեբանի դիտակետից եւ հասել նպատակին: Վերցնենք նրա «Ներեցեք, ես շփոթել եմ» պատմվածքը: Պատմում է ականատես գրողը: Հոգեբանական պատում է այն: Տղան սիրում է իր ընտրյալին անմնացորդ, սակայն ամեն անգամ զանգելուց շփոթվում է: Նա մեկնում է բանակ, ծառայում, վերադառնալուց հետո զանգում է աղջկան, լսելով նրա ձայնը, կրկին շփոթվում է: Մի անգամ էլ զանգելով, հեռախոսափողի մեջ լսում է մանկան լաց: Տեղեկանալով, որ այդ երեխայի անունը Սուրիկ է(իր անունով), չափազանց հուզվում է: Ինչպես նկատում ենք, այս պատումի մեջ առկա է նաեւ հունորը՝ հոգեբանական բացահայտմամբ:

Ի.Ալավերդյանի պատմվածքներից շատերը գրված են դաստիարակչական միտումով: Նա իր հերոսների հուզաշխարհը տեսնում եւ ընթերցում է կենսափորձի հարստությամբ, ընդգծում իր գեղագիտական իդեալը որպես իմաստուն խորհրդատու: Այդ մասին է խոսում «Թորոս պապի կտակը» պատմվածքը: Բնական ու համոզիչ է Թորոս պա-

Կի վարմունքը՝ մարդասիրության հրամայականով: Պապին մոռացել են իր երեխաները, հարսերը վիճում են, թե նրա տունը ում է հասնելու: Արդյունքում թորոս պապը տունը նվիրում է իրեն խնամող Անուշի որդուն՝ Վաչիկին:

Չավերժական այս մոտիվը՝ առնչված ծնողների եւ որդիների փոխհարաբերությանը, այստեղ լուծվում է գեղարվեստական համոզիչ հնարանքներով: Պատահական չէ գրականագետ Ս. Աթաբեկյանի բարձր գնահատականը հիշյալ ստեղծագործության վերաբերյալ: «Թորոս պապի կտակը» պատմվածքում գործ ունենք դասական առումով կոկած ու հարմարեցրած մի կերպարի հետ: Գրողը կարողացել է ստեղծագործական փաստ դարձնել սերունդների հոգեբանության մեջ ծավալվող շարժումները, հանդես բերել իրական դրամայի հմուտ զգացողություն: Իսկ վերջում պատմվածքը բերում է էլեգիական մի նոր ալիք, որի մեջ անհնար է չնկատել կյանքին ու գրականությանը վայել դրամատիզմ (*«Գրական Աղբյուր», 1970, թիվ 1*):

Ի. Ալավերդյանի հաջողության գրավականներից մեկն էլ մարդու ներաշխարհը թափանցելու կարողությունն էր: Նրա պատմվածքներից շատերը կյանքի հեւքից եւ իմաստից ծնված պատումներ են, որոնք մի միասնություն են կազմում: Կարելորդն այն է, որ նրանցում զգացվում է մեր ավանդական լեռնաշխարհի շունչը, սրբագործված մեր պապենական օջախների անբիծ պատվի զգացումով: Պատերազմական թեմա է շոշափում, թե՛ բարոյական ու կենցաղային, նա ստեղծում է իր իդեալական կերպարների պատկերասրահը: Այսպես, խղճի, ազնվության գեղարվեստա-

կան հրաշալի պատկերներ են «Առաջին սեր», «Բարձիկներ», «Տիգրանը», «Պապն ու թռռը» եւ այլ գործեր: Նրանք, ովքեր ուսուցչություն են արել պատերազմական եւ հետպատերազմյան շրջանում, կարող են հաստատել «Բարձիկներ» պատմվածքի ճշմարտությունը, իհարկե, գրողի վառ երեւակայության ծածանումով: Գրողը դրսեւորել է մանկական աշխարհի խոր իմացություն, որի օգնությամբ, առանց ավելորդ քարոզի, նա առաջ է քաշել մարդասիրության, մերձավորի հանդեպ հոգատարության, ազնվության գաղափարներ: Միաժամանակ պարզորոշ նկատվում է արձակագրի ժխտողական վերաբերմունքը պատերազմի հանդեպ:

Սրտառուչ մի գրույց է «Տիգրանը» պատումը: Գիշտ է, նրանում չի շոշափված պատերազմի թեման, սակայն առկա է մարդու ճակատագրի հանդեպ եղած վերաբերմունքը: Պատերազմի օրերին քեռի Տիգրանը զրկվել է ձախ թեւից, իսկ փոքրիկ Աշոտը կորցրել է հորը: Անցել են տարիներ, սակայն չեն սպիացել մարդկանց վերքերը: Այդ ցավի գիտակցությամբ քեռի Տիգրանը գուրգուրանքով է վերաբերվում բակում խաղացող երեխաներին: Նրանք որոշում են «պատերազմ» խաղալ, բայց ոչ ոք չի ցանկանում հանդես գալ ֆաշիստի դերում: Ավելի դառնացած է Աշոտը, որի հայրը տուն չի վերադարձել կռվի դաշտից: Աշոտը խորթ հայր ունի՝ Միքայել անունով, սակայն Տիգրանը սրտի հասկանալի ցավով է գուրգուրում Աշոտին:

Հայ գրականությունը հարուստ է կենդանիների աշխարհը պատկերող պատմվածքներով, որոնցում անձնա-



վորման երանգը ներկայացված է հմտորեն:

Գրական անգուգական հրաշալիքներ են Հ. Թումանյանի, Ստ. Ջորյանի, Վ. Անանյանի գրույցները կենդանական աշխարհի ներկայացուցիչների մասին, որոնք աչքի են ընկնում հումանիստական-գաղափարական ընդհանրացումներով: Նման հաջողված գործերից է Ի. Ալավերդյանի «Բողարը» պատմվածքը: Այն հյուսված է կարոտի ու ցավի զգացումներից: Մի կողմից պատերազմը, մյուս կողմից կորուստների վիշտը ստեղծում են անմոռանալի մի համապատկեր, որի վրա ընթերցողը հոգու աչքերով տեսնում է պատմողի Սուրեն եղբորը եւ նրա շահած-պահած Բողարին: Պատմվածքն ավարտվում է նորավեպի հնարանքով: Պատերազմից տուն վերադարձած զինվորի ուսապարկից Բողարը հանում է հեռավոր արհավիրքից տուն չվերադարձած Սուրենի վերջին՝ եռածալ նամակը: Պատմողը՝ Սուրենի կրտսեր եղբայրը, վերհիշում է այդ սրտառուչ դեպքը. «Դեմս կանգնեց Բողարը՝ մի սպիտակ բան բերանին: Աչքերը շողում էին, աշխույժ խաղացնում էր պոչը: Բերանին նամակ էր: Այն եռանկյունաձեւ նամակներից, որ ֆրոնտից գրում էին զինվորները: Խլեցի եռանկյունին եւ պատրաստվում էի անկարգության համար պատժել Բողարին (ես գլխի ընկա, որ զինվորականի ուսապարկից է հանել): Բայց ճանաչեցի Սուրենի ձեռագիրը: Չէի հավատում: Կարդացի, ետ կարդացի... հետո Բողարի գլուխը գրկել ու լացում էի ուրախությունից: Ես կյանքում առաջին անգամն էր, որ ուրախությունից լաց էի լինում...

Մենք մինչեւ հիմա էլ սրբությանը պահում ենք Բողարի

Գտած եռանկյունին:

Դա իմ եղբոր վերջին նամակն էր»:

Մեծ Լոռեցին նշել էր, որ գեղարվեստական գործում մի բառը մի աշխարհ է: Այս երկի ավարտի մեջ կնշեի «ուրախություն» ,բառը, ուրախություն, որ արցունքներ է քամում պատերազմում նահատակված զինվորի հարազատների կարոտավառ սրտերից: Սփոփանքի խորհրդանիշ ու հիշատակ է զոհված եղբոր եռանկյունի նամակը, որով եզրափակվում է նշված ստեղծագործությունը:

Նշել ենք, որ Ի.Ալավերդյանը մասնակցել է Մեծ հայրենական պատերազմին: Տուն վերադառնալուց հետո նա որպես հերոսական մահեր տեսած զինվոր, խորապես զգացել է ժողովրդի տառապանքն ու կսկիծը, դրանք ընկալել եւ անցկացրել է իր սեփական հոգու պրիզմայով՝ թղթին հանձնել որպես պատկեր-ապրում: Դրանով էլ հենց պայմանավորված է այն հաջողությունը, որ նկատում է ընթերցողը պատերազմական թեման արծարծող պատումների շարքում: Որպես օրինակ կարելի է բերել գրողի «Պապն ու թռռը», «Տղան» ստեղծագործությունները, որոնցում լուսաբանված են ժառանգափոխության եւ դաստիարակության խնդիրները՝ մանկավարժականի եւ գեղարվեստականի հմուտ զուգակցմամբ:

Ինչպես 1960-70-ական թթ. հայ արձակը հարստացողների, այնպես էլ Ի. Ալավերդյանի պատմվածքներում նկատվում է գրական հերոսի նախասիրած տարբերակի ստեղծման արդյունավետ ձգտումը: Այդ երեւոյթը նկատելի են Դ. Մաթեւոսյանի, Մ. Գալշոյանի, Վ. Պետրոսյանի, Ա. Այ-

Վազյանի, Զ. Խալափյանի, Զ. Մելքոնյանի, Գ. Արշակյանի, Պ. Զեյթունցյանի, Ռ. Զովսեփյանի, Վ. Գրիգորյանի, Արցախում՝ Ս. Աբրահամյանի, Բ. Ուլուբաբյանի, Մ. Զովհաննիսյանի ստեղծագործություններում:

Ի. Ալավերդյանը, որ մեզանում ճանաչված էր որպես ընթերցող արձակագիր-մտավորական, ուշի-ուշով հետեւել է ժամանակակից արձակի զարգացման միտումներին: Զասկանալի է, որ առանց գրական հերոսի ներաշխարհի բացահայտման սկզբունքների, առանց նրա հոգեբանական վիճակների յուրացման նա չէր կարող հասնել իր ցանկալի արդյունքին: Ուստի միշտ ուշադրության կիզակետում է պահել հերոսին, ձգտել նրա ներաշխարհի բացահայտմամբ հաստատել իրականության կենսական երեւույթների եւ իր գեղագիտական իդեալի միասնությունը: Դրանով էլ բացատրվում են այն անմիջականությունն ու համոզչականությունը, որ հատուկ են «Գնաս բարով, արաբ», «Զրուցընկերները», «Բարեւ, Սիմոն», «Գնչուհին», «Նկարը», «Կենացը» պատմվածքներին: Դրանցում սխեմատիզմի երանգներ չկան, ընդհակառակը, նկատվում է անհատականությունների գեղարվեստական պատկերումը: Ի. Ալավերդյանի ստեղծած կերպարները ներկայացնում են իրենց ապրած վիճակների, անհատական կյանքն իմաստավորող կապերի եւ հարաբերությունների շրջանակներում:

\*\*\*

Ի.Ալավերդյանը որոնել է գտել է ժամանակի էությունն ու ոգին իրենց մեջ խտացնող մարդկանց եւ հաջողությամբ

կերտել նրանց կերպարները: Այս առումով խոսում վկայություն է «Սիսակյանի օրագիրը» նովելների շարքը, որ կարելի է որակել որպես մի ամբողջական վիպակ:

Տարիների ընթացքում մանկավարժ-գրողը իր ժողովածուների մեծ մասում իրեն հուզող ուսուցողական-դաստիարակչական հիմնախնդիրները գեղարվեստական հույզման է ներկայացրել ուսուցիչ Սիսակյանի կերպարի միջոցով: Եվ պատահական չէ ընդհանրացնող, նշված նովելաշարքը: Պատահական չէ նաեւ ստեղծագործական այն հասունությունը, որ նկատվում է շարքի մեջ: Նրանցում խոսում է հմուտ ուսուցիչ-դաստիարակի կենսափորձը, որ պատկերի տարբեր տեսակներով ներկայացվում է ընթերցողին: Անհրաժեշտ է ընդգծել, որ շարքում շոշափված դաստիարակչական հարցերը բազմազան են, ընդգրկում: Բազմաշերտ կյանքի բազմազան խնդիրների առջեւ իրենց խոհերով ու գործելակերպով, արարքներով ու բարքերով հառնում են գրողի իդեալական հերոսները, որոնք մեր նյարդային դարում գործում են բարոյահոգեբանական իրենց ընկալումներով, հասարակությունն առողջացնող իրենց նվիրումով ու հանդավածությամբ:

Ի.Ալավերդյան-արձակագրի հայեցողությամբ ամենամեծ դարոցը կյանքն է, որի հրամայականը ուսանելու, սովորելու, կոփվելու եւ շրջապատին լույս առաքելու իմաստությունն է: Այս դիտակետից ծրագրային, հագեցված խորհուրդ է «Ապտակը» նովելը: Հեղինակ-հերոսը Վահան Սիսակյանին ներկայացնում է որպես ուսուցչի հարուստ կենսափորձի խտացում, որի հուշերը սովորական ժամանցների

Մկարագրություններ չեն, այլ դաս ու ազդակ սերունդների համար: Ինչ վերաբերում է Սիսակյանի սան Հասմիկին, որ դասի ժամանակ թյուրիմացաբար ապտակել է դասընկերոջը՝ Սուրենին եւ ապա սիրել նվիրումով, մի կողմից խորիրդանշում է առաջին սիրո քաղցրությունը, մյուս կողմից սերունդների երախտագիտությունը իմաստուն ու ամենակարող ուսուցչի հանդեպ, ինչպիսին Սիսակյանն է, որը դեռեւս առաջին դասի ժամանակ դրսեւորում է մանկավարժին վայել համբերություն, ճիշտ կողմնորոշվելու ունակություն:

Ի.Ալավերդյանի ստեղծած կերպարները կենսաթոթիռ ապրումների տեր կենդանի մարդիկ են, հաճախ միամիտ, սակայն այդ միամտության մեջ ազնիվ ու մաքուր: Դրա վկայություններից է «Կուճուրը» նովելը: Ուսուցիչ Սիսակյանը ներկայացնում է Կուճուրին, որ իր իսկական Նորայր անունը չգիտե: Նա ամուսնանում է Շուշան անունով աղջկա հետ, տղա են ունենում, կնքում Արամ անունով: Պատերազմական տարիներին Նորայրը մամակներ էր բերում ժողովրդի համար: Նա հայրական կարոտը սրտում հրաժեշտ է տալիս կյանքին: Նրա գրպանից հանում են որդու՝ Արամի «սեւ թուղթը», որի մասին չէր ասել Շուշանին:

Ուսուցիչ Սիսակյանի կերպարում խտացված են մանկավարժի, հոր, եղբոր, հարազատի, բարեկամի հոգատարությունն ու ակնկալիքները: Նա ցնծում է, երբ իր աշակերտները սովորում են քանդակել («Ծիծեռնակ»), երբ իր սաներից՝ պատերազմում հաշմանդամ դարձած Աշոտը զբաղվում է կոշկակարությամբ, միաժամանակ նախատում հարբեցողի կյանք վարող ընկերոջը, որ չարաշահում է իր

հաշմանդանությունը եւ մուրացիկի կյանք վարում, ասելով. «Սրիկա՛, ինձնից շատ է թռակ ստանում եւ մուրում է անամոթաբար՝ չարաշահելով մարդկանց ազնիվ զգացմունքները, հետո լակում, խոզի պես թավալվում փողոցներում» («Հանդիպում»): Ուսուցիչ Սիսակյանը հայրական ջերմությամբ է վերաբերում Մուշեղին, որ մեղանչում է իր սխալ արարքի համար եւ ազատվում դատարանից («Խղճի խայթը»), հոգեպես ցնծում է, երբ կարողանում է համոզել աշակերտուհի Ցողիկին, որ հաշտվի մոր հետ: Ցողիկի հայրը զոհվել է: Մայրը որոշել է ամուսնանալ, Ցողիկը դժվար է հաշտվում մոր ցանկության հետ («Ցողիկը»): Սիսակյանը խոհեմ ու սրտացավ խորհրդատու է դառնում Աննման մայրիկի թոռան՝ Աշոտի համար, որ մեծացել էր տատի խնամքով եւ պիտի գնար մոր մոտ ու փարատեր նրա մեներթյան մեջ տառապող սրտի ցավը («Աննման մայրիկը»):

Ժողովածուի ուշագրավ գործերից է «Հուշարձանը» նովելը: Որդեկորույս մայրերի անմարում հույսերի եւ առեղծվածային հավատի խոսքակերտ մի կոթող է այն: Ծոռնիկը Աննման տատի ձեռքից բռնած բերել է, որ ցույց տա զոհվածների հուշարձանը (բացմանը հիվանդ է եղել տատը): Գյուղի մուտքի մոտ, բարձրադիր բլրի վրա դարերի հետ զրույց է բացել հուշարձանը: Մի երկարավուն պատ է այն՝ սրբատաշ քարերից, վրան բարձրաքանդակ մայր՝ մի անհուն կարոտ աչքերում, մազերը ջրվեժած ուսերին եւ նրա առաջ՝ երդման չոքած մի զինվոր, ավտոմատը գրկած: Կոթողի երկու քանդակազարդ եզրապատերին փորագրված են զոհվածների անունները: Թոռնիկը տատին բերում է եզրա-

Կատի մոտ: Տատը մոտենում է փորագրվածին, ցուցամատը քաշում տառափորվածքներով՝ Ա...ու...ր...ե...ն...

Արտառուչ են տատի արցունքախառն հարցումները:

Թոռը կարդում է բոլոր գոհյալների անունները, եւ երբ տատիկը մոտենում է մոր քանդակին, շշմջում է. «Բա դու էս-քանի ցավը ո՞նց պիտի տանես, ա՛յ խեղճ... քա՛ր ես, կտանես»: Որդեկուրույս մայրերի կարոտից եւ թոռների ու ծոռների հետ կապված նրանց հույզերից են հյուսված «Աննմանի կտակը», «Կթաղեք ինձ հետ», «Կապույտ գլխաշորը» նովելները:

Ի.Ալավերդյանի ուշադրությունից չեն վրիպել նաեւ հասարակական արատներ կրողները: Նրա «Իմ հարեւանը» նովելում խարազանված են հասարակական բարիքները խժռող, բյուրոկրատ ու շահամուլ ղեկավարները՝ ի դեմս Գրիգոր Ազատիչի, որը գրողի ստեղծած բացասական, մնայուն կերպարներից է՝ տիպական բոլոր ժամանակների համար:

Սիսակյանը Ի.Ալավերդյանի գաղափարակիրն է, որն ուղեկցել է նրան գրական-ստեղծագործական բոլոր շրջաններում: Դրանով է բացատրվում պատմվածքների ու նովելների մեծ մասի կոմպոզիցիոն միասնությունը՝ թեմատիկ-գաղափարական հենքով: Շարքի խոսուն արժեքներից է նաեւ «Մեր մաթեմատիկոսը» նովելը: Մաթեմատիկոսը ինքնամիտ ուսուցիչ է, եկել է Գյուլիսային Կովկասից, երեսուն տարեկան է, ամուրի է, «վշտոտ, խոհուն ու շիտակ մայրող մի մարդ, որը սնվում էր ոտի վրա: Դասամիջոցին մեկ էլ տեսար՝ քաշվեց ուսուցչանոցի մի անկյունը եւ սկսեց դան-

դադ ու աննկատ կրծել թղթի մեջ փաթաթած յուղահացը, երշկահացը կամ ձեթոտ կուտապն ու փքաբլիթը»: Մաթեմատիկոսը ծանրաբեռնված է պահանջվող դասաժամերով, բարձր աշխատավարձ է ստանում, սակայն ապրում է մեկուսացած, թողնում է ժլատի տպավորություն: Աստիճանաբար իրադարձությունները փոխում են խաբուսիկ կարծիքը նրա մասին: Փոստում Սիսակյանը իր ուսանող դստեր համար փող առաքելիս, տեսնում է, թե ինչպես մաթեմատիկոսը բավականին գումար է ուղարկում ռազմաճակատում ծանր վիրավորված իր ընկերոջը: Սիսակյանի հարցին, թե ում եւ ինչու է ուղարկում այդ գումարը, նա պատասխանում է. «Պատերազմը նրա համար չի ավարտվել: Ֆաշիստական զնդակը շարունակում է ավերել նրա առողջությունը: Շուտով հաղթանակի օրն է: Ցնծությամբ կնշենք: Իսկ նա՝ հաղթողը, վիրահատության սեղանին պիտի պառկի երկրորդ անգամ: Կա՞մ... կա՞մ... Հաղթող ու տարիներ շարունակ հետապնդող մահվան ուրվական: Սարսափելի է, չէ՞, ընկեր Սիսակյան: Երկվորյակ տղաներ ունի, իրարից չես կարող զանազանել: Հայրն էլ է շփոթում: Մայրն է անսխալ ճանաչում: Երեւի սրտով»:

Քիչ անց վերհիշելով գոտեմարտը ֆաշիստների հետ, մաթեմատիկոսը ավելացնում է. «Գնդակներն ինձ են եղել հասցեագրված՝ խոտի դեզի ետեւից: Ընկերս նկատել է եւ ցատկել ֆրիցի վրա... Ես ապրում եմ նրա անլուր տանջանքների հաշվին... Գուցե ծիծաղելի՞ է, բայց գիշեր-ցերեկ աղոթում եմ նրա համար»:

Ուսուցչանոց գալով, Սիսակյանը պատմում է ամեն ինչ:



Բոլորը հուզվում են: Այրի գրադարանավարուհին արտասու-  
վում է: Ուսուցիչները զղջում են, որ վիրավորել են նրան:  
Նովելն ավարտվում է ուրախ նոտաներով: Մաթեմատիկոսը  
նամակ է ստանում ընկերոջից, որտեղ գրված է. «Եղբայրս:  
Այսօր դուրս գրեցին հիվանդանոցից: Վաղվանից աշխա-  
տանքի պիտի գնամ: Արդեն մեկ ամիս է աշխատում է Ռո-  
զան: Իմ նոպաների ժամանակ նա ավելին էր տանջվում,  
քան ես: Եթե նա չլիներ իմ կինը, ես կապրեի»: Հագիվ թե: Ես  
այժմ եմ հասկանում իմ ճակատագրական վճռի ահավորու-  
թյունը... Ո՛չ: Պիտի ապրեմ: Պիտի ապրեմ, քանի որ աշխար-  
հում կա Ռոզայի պես կին ու քեզ նման ընկեր: Էլ փող չու-  
ղարկես: Ցմահ քեզ պարտական՝ եղբայրդ: Համբուրում եմք  
քեզ բոլորս: Պինդ-պինդ»:

Աստժո կողմից մարդկանց իրար սիրելու եւ նեցուկ լի-  
նելու խորհուրդի հաջող մի պատկեր է այս պատումը, որի  
դաստիարակչական արժեքը ինքնին խոսում է իր մասին:

«Թող խաղաղ մեծանա» նովելում գրողը ներկայաց-  
նում է մարդու ներաշխարհը՝ մի ուրիշ կտրվածքով: Գուր-  
զենին հանիրավի համարում են «ժողովրդի թշնամի» եւ  
աքսորում: Կինը ամուսնանում է ուրիշի հետ՝ երեխային  
թողնելով կեսուրի մոտ: Տատիկի մահից հետո երեխան տե-  
ղավորվում է մանկատանը: Աքսորից վերադառնալով, Գուր-  
զենը մեծ ցավ է ապրում ընտանիքի կորստի պատճառով:  
Նրան հաջողվում է իմանալ դատեր՝ Նունեի տեղը, որի հետ  
սկսում է հանդիպել Սիսակյանի տանը: Գուրզենի երեխային  
Սիսակյանի խորհրդով որդեգրել են ամուսիններ Վռամն ու  
Էմման, որ զավակներ չունեին: Հայրը համոզվում է, որ

ԴՐԱՍՏՐԸ ԵՐՋԱՆԻԿ Է ԵՆ ՃԻ ԿԱՐԵԼԻ ԽԱՓԱՆԵԼ ՆՐԱ ԵՐՋԱՆԿՈՒ-  
ՅՅՈՒՆՆԵՐ: ԹՈՂ ԽԱՂԱՂ ՄԵՃԱՆԱ:

Ի. Ալավերդյանը այս ստեղծագործության մեջ հմտու-  
թյամբ ներկայացրել է և լուծել է մարդկային փոխհարաբե-  
րությունների մի այնպիսի մթնոլորտ, որտեղ ոչ ոք իրեն մե-  
նակ ու դժբախտ զգալ չի կարող: Այսպես իրար թեև ու թի-  
կունք են դառնում Վռամը, Էմման, ինչպես նաև Գուրգենը,  
որոնց նկատմամբ իր գոհունակությունն է արտահայտում  
Սիսակյանը: Վերլուծելով տվյալ երկը, գրականագետ Ժ.  
Անդրյանը նկատել է. «Ալավերդյանը ստեղծագործական մի  
սիրած հնարանք ունի... ըստ որի պատմվածքների հան-  
գույցը լուծվում է հենց վերջին տողերում: Նա սիրում է ըն-  
թերցողին հանկարծակիի բերել դեպքերի անսպասելի շր-  
ջադարձով: Պետք է ասել, որ դա հնարավորություն է տա-  
լիս հեղինակին՝ իր պատմությունը դարձնել ավելի հե-  
տաքրքիր ու զգացմունքային» (*«Սովետական Ղարաբաղ»,  
2.10.1969թ.*):

Դրամատիզմի եւ լիրիզմի շաղախով հյուսված ստեղծա-  
գործություն է «Գրականության ժամին» նովելը, որտեղ տե-  
րյանական քնարը օգնում է բացահայտելու սիրող սրտերի  
տրոփյունը՝ կրկին ընդգծելով մեծ բանաստեղծի պոեզիայի  
ապրեցնող, քնքուշ շունչը: Ուշագրավն այն է, որ այստեղ  
գրողն արտահայտել է իր անհուն սերը անմահ Տերյանի  
քնարերգության հանդեպ:

Ի. Ալավերդյանի «Սիսակյանի օրագիրը» նովելաշարքը  
ինքնատիպ-գեղարվեստական խոսք է՝ գաղափարական  
խորքով ու գեղագիտական նշանակությամբ:

\*\*\*

Վաստակաշատ արձակագրի գրական ժառանգության հրաշալի էջերից է «Ծաղիկների երթը» մանրապատումների փունջը: Նրանում զգացմունքների անմիջականությամբ, քնարական հոլովումներով, սրտեր շոյելու եւ ճշմարիտ ճանապարհով տանելու ուժով պատկերված են մոր, հոր, որդու փոխհարաբերությունները: Սերը ներկայացնող շարքում խոսք է գնում մեր ժողովրդի ավանդական, լուսավոր զգացումների մասին՝ սիրո եւ ընտանիքի պահպանման կապակցությամբ: «Սիրիր», «Ճերմակ սեր», «Աշխարհում հոգեկից ունեմ», «Ձյուն է, ձմեռ» եւ այլ մանրապատումներ խոհական ընդհանրացումներ են: «Արեւածաղիկ» պատկերն ամբողջությամբ սիրո հավերժության գաղափարն է հաստատում՝ հուզիչ, համոզիչ: Համարյա բոլոր մանրապատումներն ավարտվում են ժողովրդական առածների եւ ասացվածքների խորքով: Բերենք օրինակներ. «Այդ ճառագայթը հավվեց սրտիս մեջ, դառավ հոգուս լույսը, կյանքիս իմաստը» («Դու խանդակաթ նայեցիր ինձ»), «Ջերմություն: Այդ էլ թող սիրահարներն իրենց մեջ որոնեն» («Լուսին»), «Ա՛խ, ինչ կլիներ, որ մարդ ճանաչվեր ու գնահատվեր լոկ իր սիրո մեծությամբ» («Ա՛խ, ինչ կլիներ»), «Ո՛չ, արցունքը անգույն հեղուկ չէ» («Արցունք»), «Ճշմարիտ որ՝ ազնիվ սիրո հրդեհից գեղեցկանում է մարդ...» («Սիրո հրդեհը») եւ այլն: Այս մանրապատումների անմիջական շարունակությունն է «Խառն խոհեր» շարքը, որտեղ ընդգծված պատկեր-ապրումներ են «Մարդը», «Վարը», «Փուշը», «Ազին», «Երկրորդ»

Անին», «Ժամանակը», «Թիթեռը» եւ այլ խոհեր, որոնք աչքի են ընկնում աֆորիզմների հասնող սեղմությամբ եւ իմաստությամբ: Նույն գնահատականը կարելի է տալ «Մի քիչ ժպիտ» շարքի գործերին: Այստեղ կյանքի դասն ընթերցվում է առինքնող ժպիտներով՝ ուսուցանող, անհրաժեշտ: Ահա եւ «Յետածոգողը» իմաստությունը. «Նա հաճույքով, սիրով ամեն ինչ հետածոգում էր վաղվան: Իսկ վաղերը ոչ սկիզբ ունեն, ոչ վերջ: Նա չէր մտածում, որ կգա մի հերթական վաղ, եւ ինքը էլ չի լինի: Վաղերը էլի կգան, բայց ոչ իր համար: Երբ գլուխը եկավ այս միտքը՝ շատ ուշ էր, բայց հաստատ վճռեց.

- Թե լավ զգամ ինձ, վաղվանից կսկսեմ...»:

Բերենք «Դերը» վերնագրով, թեւավոր խոսքի հասնող իմաստությունը, «Նրան չհաջողվեց ոչ մի դեր արվեստով եւ հավաստի ներկայացնել բեմի վրա:

Բայց նախանձի դերը գերազանց անձնավորեց կյանքում»:

Ժամանակների ժամանակավրեպ, բայց, ցավոք, շարունակվող անարդարացի բարքերի մասին է «Էշի քայլերով» հունորը: «Քարավանապետը նստել էր էշին եւ բռնել նառի՝ ուղտերի առաջնորդի սանձապարանից: Եվ նառը գնում էր էշին համաքայլ՝ փոքրացնելով իր հսկա քայլերը: Նառին հետեւում էին բազմաթիվ ուղտեր՝ լուռ ու մունջ՝ իշային քայլերով»: Ապա «Ցուցամատը» կոթողը. «Ցուցամատը կարծում էր, որ ամեն տեղ առաջինը ինքը պիտի երեւա, ինքը պիտի հաշվի, ինքը պիտի նշվի... Բայց մատանին հագցրին մատնեմատին»: Կամ «Նախանձը» ժպտաբեր սրամտությունը. «Ես սայթաքեցի եւ ընկա ուղիղ ճամփամի-

Ջին: - Անա ինչ ընկեր ես,- հանդիմանեց նախանձը,- ա տնաշեն, մի քիչ էն կողմը վեր ընկնեիր, էլի... էդտեղ ես էի ուզում վեր ընկնել...»:

Այսպես անեկրոտանման հյուսվածքների մի ժպտաբեր փունջ է «Մի քիչ ժպիտ» շարքը, որ Ի. Ալավերդյանի արձակը զարդարում է ըստ էության, ըստ նպատակի:

Ի. Ալավերդյանը նաեւ առակագիր էր: Առակը, որ ժողովրդի բանավոր ստեղծագործության հնագույն ժանրերից է, մեր գրավոր գրականության մեջ մտավ 12-րդ դարից, Մ. Գոշի շնորհիվ: Դարերի ընթացքում գրավոր առակի զարգացումը՝ սկսած Վ. Այգեկցուց (13-րդ դար) ընթացավ առանց ընդմիջվելու: Հայոց գրականության համարյա բոլոր ներկայացուցիչները դիմել են առակի ժանրին, այլաբանորեն քննադատելով թե հասարակական եւ թե՛ մարդկային-անհատական արատավոր բարքերն ու գծերը: Շարունակելով առակագրության ավանդույթը, Ի.Ալավերդյանը իր չափածո եւ արձակ առակներում ասաց իր ապրած ժամանակաշրջանի սովերոտ կողմերը վեր հանող ու խարազանող խոսքը: Դրանցից են «Քննադատները», «Բարի պետը», «Բահն ու ցախավելը» «Կադրի ընտրություն» չափածո, ինչպես նաեւ «Պատահում է», «Շինարար արջը», «Աղվեսի ճառը» եւ այլ արձակ առակներ: Ժամանակների բնութագրական երեւոյթի հրաշալի արտացոլում է «Ավանակիչ» առակը.

«Էշին պաշտոն տվին եւ նա երկար տարիներ նստեց կաղնեփայտյա գրասեղանի ետեւը: Ստորագրեց թղթեր, ընդունեց եւ ճամփեց մարդկանց: Եվ նրան կոչում էին.

- Ընկեր պետ...
- Սիրելի դեկավար...
- Հարգարժան այր...
- Իմաստության հայր...

Եվ օրերից մի օր նրա մոտ եկավ խնդրանքով մի մրջյուն ու դիմեց նրան.

- Էշ Ավանակիչ, շատ խնդրում եմ...
- Ի՞նչ...- ապշեց պետ էշը,- այս ինչպես՞ համարձակվեցիր... եվ խեղճի կոկորդը սեղմվեց...

Խեղճ էշը մոռացել էր իր իսկական անուն-հայրանունը»:

Ի. Ալավերդյանը ստեղծել է նաեւ գերկարճ առակներ, որոնք, հիրավի, չխամրող արժեքներ են:

Բերենք օրինակներ. «Ճանճի զարմանքը». (Ձարմանում էր ճանճը.

- Ինչպե՞ս կարելի է ապրել, քայլել, թռչել եւ հետք չթողնել): «Խոզի բողոքը»(Պատժեցեք ավտոյին, նա ինձ ցեխոտեց): «Օձի կոչը»(Մարդիկ, սիրեցեք ինձ, իմ թույնը բուժում է ձեզ...): «Գրագողը» (Մի հայտնի գրող վերապատմեց ժողովրդական մի հեքիաթ: Նույն հեքիաթը ավելի գեղեցիկ եւ նորովի վերապատմեց մի սկսնակ:

Քննադատները միաբերան գոչեցին՝ հայտնի գրողը մշակել է, իսկ սկսնակը գրագող է):

\*\*\*

Ի. Ալավերդյանի գրական ժառանգությունը բազմազան է եւ հետաքրքիր: Մշակութային մեծ արժեքներ են ներկայաց-

Մում նաեւ նրա պիեսներն ու նամականին, թատերագիտական ուսումնասիրություններն ու հոդվածները:

Մենք համոզված ենք, որ վաստակաշատ գրողի ամբողջական ժառանգությունը դառնալու է ուսումնասիրության լուրջ առարկա եւ վերաբեքավորվելու է մշտապես, քանզի այն խոսում է գրողի ժամանակի անունից՝ ժամանակների հետ:

Մենք հավատում ենք դրան:

2008 թ.

## ԲԱԳՐԱՏ ՈՒՆՈՒԲԱԲՅԱՆ



1929 թվականին Մաքսիմ Գորկին գտնվում էր Սորենտոյում, Իտալիայում: Նա խմբագրելու համար աչքի է անցկացնում «Советская страна» գեղարվեստական ավանախի նյութերը եւ նամակ ուղարկում խմբագրական հանձնաժողովի անդամներին՝ հետեւյալ բովանդակությամբ. «Բացառությամբ Սորիաշվիլու եւ Արազու պատմվածքների, մնացած բոլորը այնպես են գրվա, կարծես թե դրանց հեղինակները XIX դարի 70-ական թվականների օդով են շնչում, իսկ այն, որ օրացույցը ցույց է տալիս XX դարի երկրորդ քառորդը... հեղինակներին ոչինչ հայտնի չէ»:

Գորկին այս նամակով առաջ էր քաշում այն պահանջը, որ գեղարվեստագետը պետք է գտնվի կյանքի հորձանուտում, հետեւի ժամանակի գլխավոր ուղղություններին ու միտումներին, որսա նրա շունչն ու ռիթմը:

Ծանոթանալով Բագրատ Ուլուբաբյանի ստեղծագործությանը, ընթերցողը համոզվում է, որ նա իր գրական կյանքի առաջին իսկ քայլերից ըմբռնել է գրականության եւ կյանքի սերտ կապի կարեւորությունը, արվեստի ճանաչողական, դաստիարակչական եւ գեղագիտական նշանակության հրամայականը:

Այս գեղարվեստական պահանջի ոգով էլ նա ստեղծել է



իր բանաստեղծություններն ու պատմվածքները, վիպակներն ու վեպերը:

Բագրատ Ուլուբաբյանը գրական ասպարեզ մտավ որպես բանաստեղծ: Նրա երկու գրքույկները ընդունվեցին գրական հասարակայնության կողմից եւ հեղինակին համարեցին կյանքից եկող բանաստեղծ: Շուտով Ուլուբաբյանը իր ուժերը փորձեց նաեւ արձակում եւ ընթերցողի առջեւ բացեց մի նոր աշխարհ: Նրա պատմվածքները եկան հաստատելու, որ հայ արձակի մայրուղի է մտել շնորհալի մի արձակագիր: Իսկ երբ լույս տեսավ նրա «Հայրենի հող» վեպը, ընթերցողը բավականությամբ հաստատեց, որ նա ունի իր նախասիրած թեման, որի հետ կապվեց մեկընդմիջտ:

Բ.Ուլուբաբյանը Արցախի ավանդական լեռների ծնունդ է: Նրան թեւավորել են Քիրսն ու Մռովը, նրա հոգում մայրական քաղցր օրորի պես հնչել է հաչենի եւ Թարթառի, Վարանդայի եւ Իշխանագետի երգը, ամառային տոթ օրերին հանգիստ է առել քաղցրապտուղ թթենու ստվերում, երազանքը խառնել Արցախի երկնականարի ջինջ աստղերի շողերին, ամբողջ հոգով ձուլվել հայրենի լեռնաշխարհի անվանը եւ այն դարձրել իր ստեղծագործության հիմնական առանցքը: Հայրենի գեղեցիկ բնության, նրա մարդկանց մասին է գրել նա, ուրախացել հերոսի հետ, զայրացել նրանց դեմ, ովքեր ցանկացել են արատավորել հայրենամկեր արցախցու անունը, մարտնչել օտարի բռնությունների դեմ, դառնալով հայրենի երկրի ու ժողովրդի ազատության առաջամարտիկը: Դեպի հայրենի Արցախն ունեցած անմնացորդ սիրո արդյունք էր ստեղծագործական այն անսպառ եռանդը,

որ հատուկ էր Բ. Ուլուբաբյանին:

Ղարաբաղի բնությունն ու մարդկանց ոչ ոք գեղարվեստորեն չի մարմնավորել այնպես, ինչպես Ուլուբաբյանը: Սակայն պետք է նշել, որ դրանով չստեղծվի այն կարծիքը, որ Ուլուբաբյանի հետաքրքրությունների շրջանակը եղել է սահմանափակ: Բ. Ուլուբաբյանը իր օրերի հոգսերով ու երկրի ճակատագրով ապրող գրող էր: Նա իր երկերում բարձրացրել է այնպիսի խնդիրներ, շոշափել է այնպիսի մոտիվներ, որոնք առնչվել են ժողովրդի ճակատագրին, հուզել ընթերցողներին: Դա առավելություն էր, որով էլ ապահովվել է նրա ստեղծագործական հաջողությունը:

Բ. Ուլուբաբյանի առաջին մեծածավալ գործը «Հայրենի հող» վեպն է: Այստեղ երիտասարդ գրողը պատկերել է հողի մարդկանց վաստակն ու ձգտումները, արտահայտել այն գաղափարը, որ ժողովուրդը հարատևում է իր հողի վրա, իր պայեմական ավանդույթների հուլովմամբ:

«Հայրենի հող» վեպի կոնֆլիկտը խոսքատար է, լարված: Այստեղ ներկայացված են կոլտնտեսային գյուղի երկու հակադիր ուժերը՝ հնին կառչած գործիչը եւ երիտասարդ, առաջավոր անհատը: Նրանց անհաշտ պայքարում հաղթանակում է նորը, առաջավորը: Կոլտնտեսության նախկին նախագահ Սմբատ Սահակյանին, որը պահպանողական ուժերի ներկայացուցիչն է, փոխարինում է Գեւորգ Սարոյանը, երիտասարդ մի մասնագետ, որը լծվում է ժողովրդին ծառայելու պատվաբեր գործին: Վեպում Սարոյան-Սահակյան կոնֆլիկտից բացի առկա են անձնական կյանքի, մարդկային այլ ապրումների նկարագրություններ:

Վեպում գլխավոր սյուժեն խարսխված է կոլտնտեսությունների խոշորացման հարցի վրա, որը տվյալ էտապում համարվում էր անհրաժեշտ իրադարձություն: Գլխավոր հերոսը՝ Գեւորգ Սարոյանը, բարձրագույնն ավարտած, կարող մասնագետ է: Նա ցանկանում է իր գիտելիքներն ի սպաս դնել գյուղատնտեսության, առանձնապես այգեգործության զարգացմանը: Որպես այգեգործական բրիգադի բրիգադիր Մուշապատ եւ Սարիշեն խոշորացված կոլտնտեսությունում, նա ձգտում է իրականացնել ուսանողական տարիների երազները: Սակայն կյանքում նա հանդիպում է արգելքների: Նա հասկանում է, որ իր ձգտումները իրականացնելու համար պետք է ունենա անկոտրում կամք, պայքարելու համբերություն: Նրա դեմ-հանդիման կանգնում է նախագահ Սմբատ Սահակյանը, որին չեն հուզում ոչ այգեգործությունը, ոչ էլ նրա զարգացման հեռանկարները: Գեւորգը հենվելով գյուղի առաջավոր ուժերին, հասնում է նպատակին:

Ուլուբաբյանը ճշմարտացիորեն հաստատում է այն գաղափարը, որ երբ ղեկավարն ու ժողովուրդը միասին են, ապահովվում է առաջընթացը:

Վեպի հաջողված կերպարներից են Սամսոն Պողոսյանը, Վանես ապերը, Գերասիմ Խանումյանը, Գոհարիկը ու Շողիկը, որոնք խորհրդանշում են ժողովրդի ներաշխարհի գեղեցկությունն ու վեհությունը:

Խորհմաստ պատկերներ է ստեղծել Ուլուբաբյանը «Հայրենի հող» վեպում, որտեղ թթենին պատկերված է որպես Արցախի խորհրդանիշը: Ահա այդ պատկերը.

«Նայիր այդ թթենուն, դու էլ կհամոզվես, թե դա ինչ ուժի ու համառության, ինչ կամքի ու կենսունակության տեր ծառ է: Կոշտ ու կնճռոտ արմատները պատ է տվել քարաժայռերին, խրել նրանց կողերն ու ճեղքերը, ասես սեղմում է ու քանում արեւային հյութերը ադամանդի պես գեղեցիկ ու մեղրի պես քաղցր թթի համար: Նրան պետք չեն խնամք ու հոգատարություն: Նա գոհանում է անգամ ամենաքչով՝ գարնանն այդ ժայռերին թափվող մի բուռ անձրեւով... Եվ ծաղկում է, բայց այնպես համեստ ու աննկատ, որ կարծես թե իսկի չի էլ ծաղկում: Նա չունի ուրիշ ծառերի կախարդական գույները: Ոչ շառաչում է հողմերի դեմ, ոչ էլ խելահույզ շրշում առաջին անմիտ զեփյուռից... Սակայն երբ գալիս է ամառը, թթենին բեռնվում է իր քաղցրահամ պտուղներով, երեւի բարի է հիշում բրոնզացած այն գեղջուկին, որ մի շալակ հող է բերել իր համար եւ մի բուռ ջուր... Բարի է հիշում եւ համեստ ու անսեթեւեթ գեղեցկուհու պես այդ գեղջուկի առաջ փռում իր բուլոր հմայքները, ասում է՝ ա՛ռ, ճաշակիր, լիացիր...

Այդպես է թթենին, մեր թթենին, դարաբաղցու կենաց ծառ, դարաբաղցու կյանքի աղբյուր թթենին»<sup>1</sup>:

«Հայրենի հող» վեպում Ուլուբաբյանը հմտորեն է օգտագործել Ղարաբաղի ժողովրդական բառ ու բանը, կենդանի դարձվածները, առածներն ու ասույթները: Պահպանված է տեղական կոլորիտը, զգացվում է բնաշխարհի շունչը:

Սակայն պետք է նշել, որ վեպը գերծ չի թերություններից: Որոշ մասերում ձգձգված է հեղինակային խոսքը, ոչ

բոլոր կերպարներն են գեղարվեստական մարմնավորում ստացել: Ձգձգված է նաև Գեւորգի եւ Շողերի սիրո պատմությունը: Մի շարք դեպքերում հեղինակի նկարագրությունները, քնարական շեղումները սյուժեի հիմնական գծի բացահայտմանը չեն ծառայում: Նկատվում է կենցաղային մանրուքների, աննշան փաստերի նկարագրությունը: Որոշ կերպարների՝ առանձնապես ծերունիներ Դանիելյանի, Սողոմոնյանի հոգեբանությունը դրսևորվում է մակերեսորեն: Նշված թերություններով հանդերձ «Հայրենի հող» վեպը երիտասարդ գրողի տեսանելի քայլն էր, ամուր հիմնաքարը, որի վրա բարձրացավ գրական հունձքի այն շենքը, որով ճանաչվեց եւ ընդունվեց վաստակաշատ գրողը, պատմաբանը, հասարակական գործիչն ու անձնվեր հայրենասերը: Բ.Ուլուբաբյանի ստեղծագործական աճին բարեկամաբար հետևող ակադեմիկոս Ս. Արզումանյանը արձագանքելով վեպի աշխարհ գալուն, գրել է. «Հայրենի հողը» (1959) Բ. Ուլուբաբյանի առաջին լուրջ հայտն էր, կարելու մի նշանաձող, որ արձակագրին տանում էր դեպի իսկական գրականության մայրուղին: Ամբողջ վեպը շնչում է ժողովրդյան ոգու մեծարման, նրա ուժի, կենսասիրության, հայրենական հողի ու ջրի խանդավառ գովքով: «Հայրենի հողը» կոնկրետ դեպքում Լեռնային Ղարաբաղն է, սովետահայ գրողների տեսադաշտից դուրս մնացած մի գեղեցիկ անկյուն, որի մարդկանց հետաքրքիր կյանքը, ինքնատիպ կենցաղն ու սովորույթները առատ նյութ են տվել հեղինակին»<sup>2</sup>:

«Հայրենի հող» վեպից մեկ տարի անց Ուլուբաբյանը ընթերցողի սողանին դրեց «Այգեստան» վիպակը: Այստեղ

ենա, գրողի նյութը գյուղաշխարհն էր, նոր մարդու ծեւավորման խնդիրը: «Հայրենի հող» վեպին համեմատ «Այգեստանը» հերոսների ավարտուն վիճակներով որոշ առումով գիջեց, բայց եւ այնպես վիպակը կրկին հաստատեց, որ Ուլուբաբյանը ասելիք ունի: Երկի հիմնական գաղափարը աշխատանքի ընթացքում մարդու բնավորության ծեւավորման հարցն է: Նրանում բացահայտվել ու ճիշտ լուծում են գտել ղեկավարի ու մասսաների կապը, մորթապաշտների ու պաշտոնը չարաշահողների դեմ տարվող պայքարը, ընտանիքի ու նոր կենցաղի ծեւավորման խնդիրը:

Վիպակի կենտրոնական դեմքը Երվանդ Գասպարյանն է: Ընթերցողը նրան տեսնում է գործողությունների հանգույցում, որի ընթացքում բացահայտվում է նրա հոգեբանությունը: Երվանդ Գասպարյանը շրջկոմի առաջին քարտուղարն է: Նրան հակադրված է նորի ներկայացուցիչ, մեքենատրակտորային կայանի գոտու գծով շրջկոմի քարտուղար Վահան Վարդանյանը:

Երվանդ Գասպարյանը կտրվելով ժողովրդից, աշխատանքային առօրյայից, դարձել է կաթինետային ղեկավար: Ըստ էության նա վատ մարդ չի, սակայն հետ է մնացել կյանքից, լճացել, եւ դժվար է ընդունում դիտողություններն ու խորհուրդները: Նրան առաջին հերթին քննադատում է Վարդանյանը: Հեղինակը նրան մարմնավորել է որպես ազնիվ ընկերոջ ու նվիրյալ աշխատողի կերպարով: Վարդանյանի պայքարը իր անձնական շահերի համար չէ: Նրանց մտահոգում է շրջանի հասարակության սոցիալական պայմանների բարելավումը:

Ուլուբաբյանը բացասական կերպարի՝ Գասպարյանի հանդեպ սարկազմ չի օգտագործել: Ընդհակառակը, նրան տանում է դեպի ժողովուրդը, դեպի աշխատանքը: Գասպարյանը մեկնում է Այգեստան, լծվում լուրջ աշխատանքի, գյուղը դուրս բերում առաջավորների շարքը:

Ուլուբաբյանի մտածողությունը պատկերավոր է, որը հնարավորություն է տվել համոզիչ երանգներով օժտել բանջարաբույծ Յովհաննեսի, Սիմոնի, Անահիտի կերպարները: Սակայն պետք է նշել, որ Գասպարյանի անձնական դրաման լրիվ չի համոզում ընթերցողին, դժգույն է ներկայացված Անահիտի եւ Գասպարյանի փոխհարաբերությունը: Անհամոզիչ է նաեւ շրջկոմի նոր քարտուղարի բնավորությունը, թույլ է կուսկազմակերպիչ Ավագյանի կերպարը: Եթե երկուսն նույնիսկ չլինեն շրջգործկոմի նախագահ Մելքունյանի հետ կապված իրադարձությունները, սյուժեն ոչնչով չի տուժի: Որոշ հերոսների, առանձնապես Սարինյանի խմբի մարդկանց հոգեբանությունը համարյա չի բացահայտված: Ամեն դեպքում Բ. Ուլուբաբյանի էպիկական երկերը առինքնող են, նրանցում զգացվում է Արցախի բնաշխարհի բույրը, երեսում են արցախցիների ոգորումները, դժգոհությունները, հավատը դժվարին ստեղծվող գալիքի հանդեպ: Գրականագետ Յ. Գրիգորյանը գրել է. «Այգեստան»-ում դարձյալ ականատես ենք դառնում նորի, առաջադիմականի համար մղվող առողջ, ազնիվ պայքարի: Այստեղ նույնպես բախումը տեղի է ունենում ոչ թե անձնական շահերի հետապնդումով, այլ գյուղի, շրջանի, ընդհանուրի բարեկեցության համար...»<sup>3</sup>:

XX դարի երկրորդ կեսին ստեղծված լավագույն երկերից մեկը Ուլուբաբյանի «Թարթառ» վիպակն է, որն արժանացել է «Դրուժբա նարողով» ամսագրի մրցանակին: Նրանում ասես սինթեզվել են գրողի երկերում դրսևւորված լավագույն երանգները, թե՛ գաղափարական, եւ թե՛ գեղարվեստական առումով: Լավն այն է, որ Ուլուբաբյանը ձգտել է թափանցել մարդու ներաշխարհը եւ պատկերել այն:

«Թարթառ» վիպակի թեման նորից գյուղաշխարհն է, արցախցի աշխատավորն ու բնաշխարհը: Մարդկանց օգտակար լինելու, լավ գործ կատարելու գաղափարն է ընդգծված վիպակում: Երկի քնարական շունչը, կերպարների ներաշխարհը բացահայտելու կոմպոզիցիոն ձեւերն ու միջոցները, կերպավորման հմտությունը, բնության պատկերները հիմնական գաղափարին ծառայեցնելու կարողությունները վիպակը դարձրել են ամբողջական մի գործ, որն արժանացել է գրաքննադատների դրվատանքին: Արցախի գյուղաշխարհի առօրյան է նկարագրված վիպակում:

Երկի առաջին էջերից սկսած հեղինակը ընթերցողին տանում է դեպի կերպարների աշխարհը, որ հեղինակը տեսնում է ինչպես հայելու մեջ:

Հաջողության գրավականներից մեկն էլ այն է, որ գրողը քիչ է միջամտում հերոսների արարքների բնութագրմանը: Գլխավոր հերոսներից՝ մարգարյի թերթի շրջիկ թղթակից Աշոտ Հայրեպետյանը, ինքն է պատմում այն ամենը, ինչ տեղի է ունենում վիպակի սահմաններում: Եվ բնական ու անմիջական է պատումը:

Աշոտ Հայրեպետյանը, որ անփորձ, երիտասարդ թղ-



Քակից է, ներկայանում է շրջկոմ: Քարտուղարը պարտավորեցնում է հրահանգիչ Արտաշես Համբարձումյանին՝ միասին գնալ Ջրառատ, որը միացել է Կանաչ-Բացատին եւ կազմել մի տնտեսություն:

Կանաչ-Բացատից մի կուտնտեսական նամակ է գրել խմբագրությանը, պիտի ստուգեն: Իսկ Ջրառատում երիտասարդները պետք է մասնակցեն գյուղը ծառազարդելու եւ բարեկարգելու միջոցառմանը: Աշոտ Հայրապետյանի համար մի նոր աշխարհ է բացվում, դա ոչ թե բնության գեղեցիկ տեսարաններն են, այլ գյուղի մարդկանց հոգու հարուստ աշխարհն է, որ Բագրատ Ուլուբաբյանը կարողացել է տեսնել եւ պատկերել բնաշխարհի հետ համաձույլ, դարձրել մի միասնական աշխարհ: Դա նկատվում է ամբողջ վիպակում:

Գյուղը ճանաչում էր Ուլուբաբյանը, ճանաչում էր նրա մարդկանց: Դրա շնորհիվ է հենց, որ վիպակի հերոսներին ընթերցողը չի շփոթում միմյանց հետ, նրանք տարբեր մարդիկ են, առանձնահատուկ ապրումներով, յուրատիպ խոսելաձեւով, կյանքը ըմբռնելու յուրովի կարողություններով:

Գյուղ հասնելու հենց առաջին օրը Աշոտ Հայրապետյանը զգում է այն դժվարությունը, որը շատ անգամ է հաղթահարել Արտաշես Համբարձումյանը: Կանաչ-Բացատում, կոմերիտական ժողովում տապալվում է նա եւ հետեւյալ օրը նրան օգնության է հասնում Արտաշեսը:

Արտաշես Համբարձումյանը հայրենիքի սիրով թեւավորվող, իր հայրենակիցների լավագույն ապագային ամբողջապես նվիրված մարդ է: Նա հայրենասերի կատարյալ կերպար է, որը մտնում է Բագրատ Ուլուբաբյանի ստեղծա-

գործության պատկերասրահ եւ այստեղից՝ հայ գրականություն:

Արտաշես Չամբարծումյանը ծագումն է ճանաչել գյուղի մարդկանց, իմանալ՝ թե ով ինչով է ապրում: Նա, ինչպես ասում են, կյանքի բովում կոփված մարդ է: Ուստի ամեն պատեհ առիթով չի հուսահատվում, մարդկանց նկատմամբ իր կարծիքը իսկույն չի փոխում, հավատում է մարդուն: Նա հոգով նրանց հետ է, ուլքեր գնահատում են աշխատանքը եւ ծառայում հասարակությանը:

Նմաններից է Ռուբենը: Արտաշեսը քննադատում է Ալբերտին, որը պորտաբույծ է, բայց եւ այնպես կյանքի համար անպետք չէ: Արտաշեսը սիրում է կոմերիտկազմակերպության քարտուղարուհուն՝ Ջոյային, սակայն իմանալով, որ Ջոյան եւ Ալբերտը սիրում են միմյանց, ծագում է հեռանալ եւ չխանգարել:

Արտաշես Չամբարծումյանը սկզբունքային մարդ է: Նա իրեն օբյեկտիվորեն է գնահատում, երեւույթներին մոտենում է հասուն մարդու դատողությամբ, հենվում է լավին՝ վերացնելու մարդկանց բնավորության բացասական գծերը: Նա կոլտնտեսության նախագահի՝ Երեմ Կարապետովի բնավորության արատավոր գծերը բացահայտում է, բայց չի ցանկանում, որ գործից հեռացնեն նրան, կամ նույնիսկ նկատողություն տան, բավականանում է նրանով, որ Կարապետովը՝ ինքը, Ռուբենից ներողություն է խնդրում, ընդունում է իր սխալները, շարունակում ճշմարիտ ուղին:

Արտաշես Չամբարծումյանի նվիրվածությունը իր հայրենի լեռնաշխարհին գրողը շատ դիպուկ ու գեղարվեստո-

րեն է մարմնավորել՝ առանձնապես Թարթառին նվիրված պատկերի մեջ: Աշոտ Հայրապետյանը կարողում է Արտաշեսի բլոկնոտում եղած քնարական պատկերը. «Ես ամենից շատ իմ հայրենի Թարթառն եմ սիրում, սրընթաց ու որոտածայն, համեստ ու աշխատասեր՝ Թարթառը:

Նա սկիզբ է առնում երկինք մխրճված սարերի վսեմ գագաթներից, այդ գագաթները պարուրած ճերմակաթել ամպերից: Հոսում է մթին անտառներով, անդնդախոր ձորերով Նա չունի իր տափաստանային քույրերի խաղաղ հոսքն ու արծաթ փայլատակումները եւ իր մեջքին նավեր չի փոխադրում...

Բայց ես ամենից շատ սիրում եմ իմ հայրենի Թարթառը:

Հազարամյակների ավերիչ ուժը չի կարողացել փշրել Թարթառի ազատաբարձ ոգին, կասեցնել նրա լուսատենչ ընթացքը: Նա դարեր հոսել է իր քարակոփ հունով, խուլաբար զարկվել ժայռերի գրանիտյա կողերին ու կատաղի մռնչացել: Օ՛, այդ ժայռերը, որ նենգորեն տեղի են տվել, ստեղծել սեւ անդունդներ, կարծելով, թե իրենց կհաջողվի անդունդների մեջ սանձահարել անհնազանդ ու ամեհի Թարթառին:

Սակայն նա դրանից ավելի է հզորացել եւ առավել հախումն թափով է զարկում գրանիտակուռ ավերին, ապա դուրս է վազում փրփրաբաշ ու հաղթանակած, իր շառաչը տարածում թավուտ անտառներում, կանաչ հովիտներում եւ մթին ձորերում:

Ես ամենից շատ իմ հայրենի Թարթառն եմ սիրում, իմ

Ի համեստ ու աշխատասեր Թարթառը, նրան, որ լույս է դառնում՝ մտնում մարդկանց տները, ուժ է դառնում, գունարվում մարդու բազկի հզորությամբ: Դառնում է կապույտ ջրանցքներ, ստեղծում մեղմակարկաչ առուներ, ինչպես մարդը՝ զավակներ ու թոռներ, եւ իզուր չէ, որ մեր պապերը նրան կոչել են նահապետ Թարթառ:

Նահապետ Թարթառը կենսարար երակների պես տարածվում է բերքի դաշտերով մեկ, փոխվում ճերմակափրփուր բամբակի, առատ հացի եւ վաստակած ու խաղաղ՝ գալիս թափվում բերքի, լիության ծովը:

Թարթառի մի կաթիլն անգամ չի կորչում իզուր, նրա երկար կյանքի մի վայրկյանն անգամ չի թռչում անօգուտ:

Այսպես դարաբաղցին է անցնում իր ճամփան՝ խիզախ, համեստ ու աշխատասեր:

Ես ամենից շատ իմ հայրենի Թարթառն եմ սիրում»<sup>4</sup>:

Արծակ բանաստեղծությունն կարելի է համարել այս հատվածը, որի մեջ փայլում է գլխավոր հերոսի անմար սերը իր հայրենիքի նկատմամբ: Եվ դժվար չէ նկատել, որ Թարթառի անվան մեջ Բագրատ Ուլուբաբյանը մարմնավորել է Արցախ ու արցախցի հասկացությունները:

Այս պատկերը դեպի ծննդավայրը, դեպի հայրենի երկրամասը, հարազատ ժողովորդը ունեցած տազնապի եւ սիրո արտահայտություն է: Դրանումն է հենց գրականության ուժը:

Բ. Ուլուբաբյանը հաճախ քնարական մի շեղումով, անմիջական ու բնական արտահայտամիջոցով կարողանում է բացահայտել կերպարի բարդ աշխարհը, նրա խառնվածքը:

Բերենք օրինակ:

Աշոտ Հայրապետյանը հիացել էր Արտաշեսի գործունեությամբ: Մի անգամ էլ նա երկար նայեց Արտաշեսին, իսկ վերջինս նկատեց եւ հարցրեց.

- Ի՞նչ ես մտածում:

- Քո մասին եմ մտածում, Արտաշես... Ինչքա՛ն լավ, ինչքա՛ն բարձր ու խորն ես սիրում աշխարհը, մարդկանց, քո գործը...

- Սիրելի Աշոտ,- նա մոտեցավ, մի ձեռքով գրկեց ուսս, երազուն հայացքով նայեց աչքերիս մեջ,- այդ սերն է վերափոխում աշխարհը: Առանց այդ վերափոխող, ստեղծարար սիրո ինչի՞ է պետք մարդուս կյանքը:- Նա մի պահ լռեց, դեմքը շրջեց, մտածում էր, ապա ասաց.- Ինձ թվում է այդ սերը հենց ինքը՝ կյանքն է... եւ ընդհակառակը:

- Դու ինչքա՛ն շատ ես պետք մարդկանց, աշխարհին:

- Է, դու էլ հետաքրքիր տղա ես,- քնծիխաղեց նա եւ իր բարի ու թափանցող հայացքը նորից հառեց ինձ:- Թե որ մարդկանց պետք չեղար, լավ չի՞ լինես գերեզմանում...

Եվ այսպես մարդկանց, կյանքին պետք լինելու գաղափարով էլ համակված են վիպակի դրական բոլոր հերոսները:

Վիպակում ցույց է տրված Արտաշես Համբարձումյանի մահը: Նա Թարթառից Ալբերտին փրկելիս, ինքը նահատակվում է: Այս պատկերի մեջ մեծ գաղափար է դրել Ուլուբաբյանը: Մեր կյանքը լավագույն մարդկանց զոհաբերությամբ է այսքան լուսավորվել, հին լավագույն սերունդը նոր լավագույն սերնդի համար միշտ էլ կամուրջ է դառնում:

«Թարթառը» կոնֆլիկտ չունի: Այդ բացը լրացվում է բա-

ցասական կերպարների առկայությամբ, որոնց նկատմամբ ընթերցողը լցվում է ասելությամբ: Ինչո՞ւմն է գաղտնիքը, վերջապես, կոնֆլիկտը այն հիմնական հենքն է, որի համապատկերի վրա երեւում են դրական ու բացասական հերոսները: Ինչո՞ւ «Թարթառը» թեկուզ կոնֆլիկտ չունի, բայց հմայում է ընթերցողին: Այստեղ Ուլուբաբյանը շատ հմուտ ու ճիշտ է մոտեցել հարցին: Նա բացահայտելով դրական հերոսի հոգու բարդ աշխարհը, մի ուրիշ տեղ էլ ցույց է տալիս բացասական կերպարի ներաշխարհը: Եվ վերջապես, հերոսները հենց իրենց էլ համեմատում են այդ երկու ուժերին, համեմատում են՝ համակրանքով լցվում դեպի լավը, հակակրանքով՝ դեպի վատը:

Բերենք օրինակ:

Կանաչ-Բացասոցի Ջառվարդի ամուսինը զոհվել է կռվի դաշտում: Ջառվարդը պորտաբույժ դարձած Ալբերտի մայրն է:

Ռազմաճակատում զոհվել է նաեւ Աշոտ Չայրապետյանի հայրը: Աշոտի մայրը՝ այդ աշխատասեր, համեստ, իր երեխաների դաստիարակության գործին անձնագոհորեն նվիրված կինը, դարձել է բոլորի հարգելին ու սիրելին: Իսկ Ալբերտի մայրը՝ Ջառվարդը, ամուսնու զոհվելուց հետո իր անբարոյական վարքով շատերին է հանել իրար դեմ, վերջում էլ կապվել է կոլտնտեսության նախագահի հետ, արատավորել այդ լավ աշխատողի անունը:

Եվ ահա, մի անգամ Աշոտ Չայրապետյանը մայրում է առաջին անգամ տոնական զգեստ հագած իր մորը, նրան համեմատում Ջառվարդի հետ եւ ասում.

«Այո, ես հմայված էի, նա կանգնած էր իմ առաջ, եւ ես դիտում էի ու զնայլվում նրա վեհ ու պատկառելի գեղեցկությանը, այն գեղեցկությանը, որ կարելի է կոչել մայրական եւ որի մասին ես միայն կարողացել եմ գրքերում:

Ահա թե ինչ է զոհել իմ մայրը, զոհել է ինձ համար, մեր փոքրիկ ընտանիքի համար: Պատկերացնում եք:

Ինչո՞ւ մինչեւ այդ օրը ես չէի մտածել այդ մասին, այդ մեծ, անգնահատելի զոհաբերության մասին: Գյուղում էին բացվել մտքիս աչքերը, եւ բացողն էլ եղել է Ջառվա՞րը: Գուցե...»<sup>6</sup>:

Ջառվարդի վատ արարքները ստիպում են Աշոտին նրան համեմատել իր մոր հետ, տեսնել իր մոր առավելությունները: Այդ հմարանքը գրողի օգտագործած կոմպոզիցիոն հաջող ձեւերից մեկն է:

Վիպակի մնայուն կերպարներից են Աշոտ Չայրապետյանը, Ռուբենը, Ջոյան, Չասմիկը, Բարսեղ ապերը, Ալբերտը:

Բարսեղ ապերը հողի աշխատավորների լավագույն ներկայացուցիչն է: Կյանքի փորձը նրան իմաստուն է դարձրել, եւ թեկուզ վիպակում քիչ տեղ է տրված նրան, բայց նա հաջողված կերպար է:

Ուլուբաբյանը այս վիպակում ցուցաբերել է հերոսների հոգեբանությունը հասկանալու եւ պատկերելու անառարկելի հմտություն: Բավական է նշել Չասմիկի նամակները, դրանում համոզվելու համար:

«Թարթառ» վիպակի լեզուն հյութեղ է, պատկերավոր, անպաճույճ: Ուլուբաբյանը հմտորեն է օգտագործել Ղարաբաղի բառ ու բանը, առած-ասացվածքները, ժողովրդական

ի հունորը:

«Թարթառը» իր ամբողջության մեջ սովետահայ արձակի նվաճումներից է:

«Թարթառ» վիպակից հետո Բ. Ուլուբաբյանը ընթերցողին հանձնեց իր «Մարդը» վեպը: Թեման հեղինակը վերցրել է մարզկենտրոնի կյանքից: Եթե իր նախորդ գործերում Ուլուբաբյանը հիմնականում պատկերել է գյուղաշխարհը, ապա այս վեպում նա ձգտել է ցույց տալ քաղաքի բնակիչների կենցաղն ու սովորությունները, նրանց բնավորության գծերը: Պատմությունն ընթանում է երեք կազմակերպությունների շուրջ: Քաղկոմի, քաղաքային թերթի խմբագրության եւ քաղաքի շինարարական վարչության աշխատողների փոխհարաբերությունների: Նրանց դրական ու բացասական գծերն են երեւան հանված վեպում:

Երկու բանակի են բաժանված հերոսները: Մի բանակը, որը նորի, դրականի մարմնավորումն է, իր առաջ ազնիվ խնդիր է դրել՝ բարեկարգել հարազատ լեռնաշխարհի կենտրոնը՝ հայրենի քաղաքը, օգնել, որ բոլոր ձեռնարկությունները լինեն առաջավոր, նպաստել, որ փակվեն գեփողների ճանապարհը: Այդ բանակի ներկայացուցիչներն են քաղաքային թերթի խմբագիր Խորեն Թեւոսյանը, քաղկոմի երկրորդ քարտուղարը՝ Սուրեն Գրիգորյանը, Կարիմե Մարտիրոսյանը՝ շինարարական վարչության աշխուկը, վարպետ Սերոբը:

Մյուս բանակը բյուրոկրատների, ժողովրդի սեփականությունը յուրացնողների, իրենց անձնական շահերը ընդհանուրի շահերից բարձր դասողների խումբն է: Դրանց



Մերկայացուցիչներն են՝ կուսակցության քաղկոմի առաջին քարտուղար Ասատուր Հովհաննիսյանը, շինարարական վարչության պետ Արամ Պետրոսյանը, շինարարական վարչության աշխղեկ Ոսկան Պատվականյանը, Խորենի կինը՝ Ջարուհին, թերթի պարտիական բաժնի վարիչ Սեդրակ Ջաքարյանը եւ ուրիշներ:

Շնորհակալ թե՛մա է ընտրել Ուլուբաբյանը՝ հետապնդելով մի նպատակ. ցույց տալ մեծատառով Մարդու, ամեն տեսակ կեղտից հեռու, հասարակական հոգսերով ապրող անհատի անհրաժեշտությունը:

Իր այդ նպատակը հեղինակը հաջող է լուծել վեպի վերջին մասում, հերոսներից մեկի՝ վարպետ Սերոբի, կամ ինչպես ասում են՝ Բեղավոր Սերոբի կերպարով:

Կենտրոնի քարտուղարը գալիս է մարզկենտրոն եւ քաղաքի հետ ծանոթանալիս հանդիպում է վարպետ Սերոբին, որը քար է տաշում: Քարտուղարը չի ներկայացնում իր ով լինելը, Բեղավոր Սերոբն էլ չի իմանում այդ մասին: Բայց նրանք մտերմորեն զրուցում են: Եվ երբ քարտուղարը խոսք է բացում պլանների կատարման մասին, Բեղավոր Սերոբը պատասխանում է.

- Պլան,- գորշ որձաքարի հսկայական բեկորի վրա մուրճով կտկտացնում էր վարպետը:- Պլանն ի՞նչ բան է, որ բերանդ բացում ես, թե չէ պլան: Ուզում ես ծանոթանալ, ասի՝ «Այ ուստա, անունդ ի՞նչ է»: Ես էլ ասեմ՝ Բեղավոր Սերոբ: Հետո էլ հարց ու փորձ արա, տես՝ ինչ մարդ է ես Բեղավոր Սերոբը: Գուցե ասելու ես՝ էն երկար-ականջավորը քեզանից լավ է կամ թե չէ, ասելու եմ՝ արա, շուտ արեք նրա պատկերը

քաշեցեք ու կայցրեք էն պատվո տախտակի մեջտեղը...- ապա քթի տակ, իբր, միայն իր համար ասաց.- Ասենք՝ հենց մի գուցե էնտեղ էլ տեսել ես: Բայց վնաս չունի, է՛, թե որ ուզում ես ծանոթանալ, հարցրու, տես ի՞նչ մարդ եմ, ինչացո՞ւ եմ, քանի՞ կոպեկանոց»:

Իսկ մի ուրիշ տեղ ահա թե ինչ է մտորում նա.

«Մա՛րդը, մա՛րդն է կարելորդ: Մա՛րդն է որոշում ամեն ինչ: Պլանները մարդու աշխատանքի, նրա դրսեւորման աստիճանն են: Եվ վերջապես մեր բոլոր ջանքերը, մեր պայքարը մի նպատակ ունեն՝ նոր հասարակարգի կառուցումը: Իսկ ի՞նչ է այդ հասարակարգը. մարդու կյանքի լավագույն, ամենաերջանիկ ձեւը»:

Հաջողվե՞լ է արդյոք հեղինակին «Մարդը» վեպում ստեղծելու մնայուն, անթերի կերպարներ: Հաջողվե՞լ է արդյոք հեղինակին ստեղծել կոմպոզիցիայի, սյուժեի կուռ կառուցվածք ունեցող, գեղարվեստական չափանիշների բոլոր պահանջներին համապատասխանող վեպ: Կարող ենք պատասխանել՝ ե՛ւ այո, ե՛ւ ոչ:

Գիրքը իր ընդհանրության մեջ վատ տպավորություն չի թողնում, եւ երբեք չի կարելի ասել՝ իզուր են տպագրել: Եվ միաժամանակ այն չի կարելի դասել սովետահայ հաջողված երկերի շարքը:

Ո՞րն է պատճառը, ինչո՞ւ է այդպես ստացվել: Նախ, քննարկենք վեպի կոմպոզիցիայի խնդիրը:

Ամեն մի ստեղծագործություն (անկախ նրա բովանդակությունից կամ ժավալից) ունի իր որոշակի կառուցվածքը: Գրողի ամենակարելոր խնդիրներից մեկը ստեղծագործու-

թյան տարբեր մասերի կուռ կառուցվածք ստեղծելն է՝ գաղափարական-գեղարվեստական խնդրին համապատասխան:

Գեղարվեստական բարձրարվեստ երկի մեջ միշտ առկա է տարբեր մասերի ներքին սերտ կապը, բոլոր բազմազան տարրերի խմբավորումը, դասավորությունը, նրանց փոխադարձ կապը ու պայմանավորվածությունը, որը եւ կոչվում է կոմպոզիցիա: Եվ ինչ էլ ուզում է լինի, հեղինակը պետք է երկի բոլոր մասերը բխեցնի մի հիմնական խնդրից, ծառայի նրա իրագործմանը:

Բելինսկին գեղարվեստական ստեղծագործությունը անվանել է «ինքն իր մեջ ներփակված մի աշխարհ», որի բոլոր մասերը ներքնապես պայմանավորված եւ անհրաժեշտ են, իսկ երկը ամբողջությամբ՝ ավարտված է, ներդաշնակ, նրա մեջ ոչինչ չի կարելի ավելացնել կամ պակասեցնել:

Բ. Ուլուբաբյանին հաջողվե՞լ է արդյոք կոմպոզիցիայի շրջանակներում կյանքի բազմազան երեւույթների մեջ ընտրություն կատարել երկում, առանձնացնել գլխավորը եւ նրա շուրջ հրավիրել ընթերցողի ուշադրությունը:

Շճնարտությունը պահանջում է ասել, որ այս առումով հեղինակը հմտորեն չի վարվել: Նա չի կարողացել իր ուշադրությունը կենտրոնացնել մեկ կարեւոր երեւույթի, մեկ հիմնախնդրի շուրջ: Վեպի կենտրոնական առանցքը, արդյոք, շինարարական վարչություն՞ւնն է, որտեղ կազմակերպվել է գեփողների մի ջոկատ, որի դեմ պայքարում է Կարինե Մարտիրոսյանը: Կուսակցության քաղկո՞մն է, որ երկար

տարիներ գործել է անձնական շահերով տարված, բյուրոկրատ, առաջին քարտուղար Ասատուր Յովհաննիսյանն իր համախոհների հետ, թե՞ քաղաքային թերթի խմբագրություն՝ ևն է, որտեղ բազմաթիվ անարժան մարդիկ են աշխատում, բացառությամբ խմբագիր Խորեն Թեւոսյանի եւ որոշ երիտասարդ աշխատողների:

Ընթերցողը չի կողմնորոշվում, թե ո՞րն է սյուժեի գլխավոր գիծը, որի շուրջը պիտի գործեն բոլոր դեմքերը:

Կցանկանայինք բերել մեկ օրինակ մեր դասական գրականությունից: «Արտիստը» պատմվածքում Շիրվանզադեն նպատակ է ունեցել արժարժել բուրժուական հասարակությունում տաղանդի կործանման թեման: Այդ նպատակով նա ուշադրությունը սեւեռել է Լեւոնի ճակատագրի պատկերման վրա, մյուս կերպարները՝ Լեւոնի մայրը, Լուիզան, Կավալարոն, Իցկոն ու Չաուշենկոն, նավաստիները, պատմող հեղինակը, ծառայեցրել է գլխավոր հերոսի ողբերգությունը ճշմարտացի ցուցադրելուն:

Ռուս նշանավոր գրող Ա. Տոլստոյը ընդգծել է կուռ կոմպոզիցիայի անհրաժեշտությունը՝ մշելով, որ կոմպոզիցիան, ամենից առաջ, արվեստագետի տեսողության կենտրոնի հաստատումն է: Արվեստագետ գրողը չի կարող միանման հետաքրքրությամբ, միեւնույն զգացումով ու կրթով վերաբերվել տարբեր գործող անձանց, ինչպես նկարիչը նկարչական կտավի վրա չի կարող մի քանի կենտրոն ունենալ... կոմպոզիցիան նպատակի, կենտրոնական ֆիգուրայի եւ ապա մնացած գործող անձանց հաստատումն է, որոնք վայրընթաց սանդուխքով տեղավորվում են այդ ֆիգուրայի շուրջ:

Բայց ինչպե՞ս է վարվել Բագրատ Ուլուբաբյանը «Մարդը» վեպում: Նշենք, որ նա համարյա համաչափ կենտրոնացել է բոլոր դեպքերի ու դեմքերի վրա, չի որոշել գլխավոր կենտրոնը: Այդ իսկ պատճառով, տուժել է վեպը կառուցվածքի շրջանակներում:

Այժմ տեսնենք, թե հեղինակը ինչպիսի կոմպոզիցիոն միջոցներ ու ձևեր է օգտագործել: Հայտնի է, կոմպոզիցիոն բազմազան միջոցների եւ ձևերի գոյությունը: Երկում դեպքերի մասին կարող է պատմել հեղինակը, պատմությունը կարող է վարել ականատեսը, լինում են երկեր, որ պատմությունը շարադրում է գլխավոր հերոսներից մեկը, ինչպես օրինակ Ուլուբաբյանի «Թարթառ» վիպակում, որտեղ ամբողջ պատմությունը վարում է գլխավոր հերոսներից մեկը՝ Աշոտ Հայրապետյանը:

«Մարդը» վեպում հեղինակը համարյա ինքն է վարում ամբողջ պատմությունը: Այդ իսկ պատճառով նկատելի է կերպարի ընդհանրացված գնահատման սկզբունքը:

Օրինակ, խմբագրության համարյա բոլոր աշխատողները, բացառությամբ խմբագրի, գնահատված են ընդհանրացված ձևով: Այդ պատճառով էլ ընթերցողը շատերին չի հիշում:

Ծիշտ է, Բ.Ուլուբաբյանը կոմպոզիցիոն կառուցվածքի մեջ օգտագործել է նաեւ երկխոսությունը: Սակայն, ցավոք, ոչ բոլոր երկխոսություններն են ստացվել:

Գեղարվեստական ծավալուն երկի հաջողությունը մեծապես կախված է սյուժեից: Գրական ստեղծագործության մեջ, հատկապես էպիկական եւ դրամատիկական երկե-

րում, կարելոր է սյուժեն, որը պատկերված դեպքերի, գործողությունների, մարդկային կապերի ամբողջությունն է:

Վեպի կոմպոզիցիայի (այլ կերպ ասած ստեղծագործության բոլոր մասերի կառուցվածքի) մասին խոսելիս, նշեցինք, որ հեղինակը մի հիմնական ծանրության կենտրոն չի գտել: Այդ թերությունը վերաբերում է նաև սյուժեին:

Ստեղծագործության սյուժեն իր տարբեր տարրերով միասնական պետք է լինի եւ նրա բոլոր մասերը պետք է ծառայեն արծարծվող թեմայի եւ գաղափարի մարմնավորմանը: Սյուժեի միասնությունը չպետք է հասկանալ միայն մեկ վիճակի հետ կապված դեպքերի արտացոլում: Երկի մեջ կարող են լինել բազմաթիվ գործող անձեր, հիմնական սյուժետային գծին զուգընթաց կարող են ներկայացվել երկրորդական տարբեր սյուժետային գծեր: Դրանք չպետք է խախտեն սյուժեի միասնությունը, այլ պիտի կազմեն մի ամբողջություն, եւ ընթերցողին օգնեն երկի բովանդակության ըմբռնմանը: Աշխարհահռչակ Լեւ Տոլստոյի «Պատերազմ եւ խաղաղություն» վեպում հանդես են բերված 500-ից ավելի գործող անձեր, ընդգծված են բազմաթիվ երկրորդական սյուժետային գծեր, սակայն կազմում են մի օրգանական միասնություն, որովհետեւ ծառայում են ստեղծագործության համապարփակ թեմայի՝ 1812թ. հայրենական պատերազմի, նրան նախորդող եւ հաջորդող դեպքերի, ռուս հասարակության տարբեր խավերի վարքագծի պատկերմանը:

Բերենք մի օրինակ եւս: 150-ից ավելի հերոսներ են

Իհանդես բերված Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում, նրանք եւս կենտրոնացված են սյուժետային հիմնական գծի շուրջ, որն ուղղված է 5-րդ դարի ազատագրական պայքարի, համաժողովրդական սխրագործության պատկերմանը:

Բ. Ուլուբաբյանի վեպում ցրված է սյուժեն, հիմնական գիծը դժգույն է: Ծիշտ է, նրա շուրջը շատ դեպքեր ու դեմքեր են պատվում, բայց մի հիմնական առանցք չեն կազմում...

Վեպը կարդալուց հետո ընթերցողը դժվարանում է կենտրոնանալ եւ խորհել գլխավոր թեմայի շուրջ, հստակորեն չի պատկերացնում գլխավոր հերոսին:

Այստեղից էլ բխում է նաեւ հերոսների կենսական հակասությունների, այսինքն կոնֆլիկտի թուլությունը: Ո՞րն է հիմնական կոնֆլիկտը երկում - ընտանեկան կոնֆլիկտը Թեւոսյանի եւ իր կնոջ միջեւ, կոնֆլիկտը թերթի խմբագրի ու բաժնի վարիչ Սեդրակ Զաքարյանի՞ միջեւ, քաղկոմի առաջին քարտուղար Ասատուր Զովհաննիսյանի եւ Խորեն Թեւոսյանի՞ միջեւ, շինարարական վարչության պետի համախոհների եւ խմբագրի միջեւ: Այսպես հեղինակը ստեղծել է հակասությունների մի շարան, որը չունի իր հիմնական հանգույցը:

Չնայած նշված թերություններին, Բ. Ուլուբաբյանի «Մարդը» վեպը վատ տպավորություն չի թողնում, ընթերցվում է հետաքրքրությամբ, որովհետեւ նրանում ճշմարիտ է ներկայացված մարդկանց, ժողովրդի կենցաղը, միջավայրը: Լեզուն պատկերավոր է, կոլորիտային:

\*\*\*

1918 թվականը Հայոց պետականության վերականգնման արշալույսը դարձավ: Վեցհարյուրամյա կորստից հետո հայ ժողովուրդը պետք է իր պետական օրհներգը հնչեցներ, ծածաներ եռագույնը եւ աշխարհին պարզեր իր գինանշանը: Ավարայրից հետո Սարդարապատը կրկին ոգեշնչեց եւ ոգեզինեց ժողովրդին եւ հուշեց մի պարզ ճշմարտություն՝ եթե ուզում ես ապրել, պետք է կարողանաս պատերազմել եւ մահվան ճիրաններից փրկել ազատությունը:

Հռչակավոր բանահավաք Գ. Սրվանձոյանը գրել է, որ հայ սերունդները Ավարայրի ոգով սովորել են ապրել, այն էլ՝ հայաբար: Իսկ մեր դասական բանաստեղծներից Ս. Շահազիզը ուսումնասիրելով Ավարայրի պատմությունը, ընդհանրացրել է. «Մեր անցած կյանքի մեջ փառավոր հաղթություններ էլ են եղել, բայց ոչ մի փառավոր հաղթություն չի ունեցել այնքան կախարդիչ ազդեցություն, որքան ունեցել է Ավարայրի փառավոր պարտությունը»:

Ս. Շահազիզի այս ապրեցնող խորհուրդ-ընդհանրացումից հետո հայ ժողովուրդը տեսավ ոչ մեկ արհավիրք: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հարուցած ծանր հարվածները մեր բազմաչարչար ժողովրդին, 1895-97թթ. Սուլթան Համիդի կազմակերպած հայկական ջարդերը Վասպուրականում, 1909թ. Կիլիկիայի ահավոր կոտորածները եւ վերջապես 1915թ. երիտթուրքերի կողմից իրականացված մեծ ցեղասպանությունը անդունդի եզրին էին հասցրել հայ



Ժողովրդին իր ավանդական երկրում: Սակայն ինչպես հատուկ է եղել մեր ժողովրդին, նրա լուսամիտ զավակներին, այդ անընդմեջ կորուստներից հետո էլ նրա հույսը չի մարել, չէր քնել Վարդանանց ոգին, որից ելնելով Մեծն Լուսեցին գրել է. «Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը, ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անասան հավատքով: Կենսունակությունն էլ որ ասում եմ՝ ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով: Եվ ոչ մի բռնակալ, ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հատկությունը: Ամեն անգամ ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել վարդանանց խոսքը, թե դու կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա ոգու հետ ի՞նչ ես անելու...»<sup>6</sup>:

Սարդարապատը, հիրավի, արթնացրել է մեր ժողովրդի մաքառման, հարատեւման ու արարման ոգին, դարձել նրա ազգային-քաղաքական իմաստության ու խիզախության առհավատչյան:

Շարունակելով ու յուրացնելով հայ պատմավեպի դասական ու նորօրյա նվաճումները, Բ. Ուլուբաբյանը ստեղծեց «Սարդարապատ» վեպը, մի նոր երանգ ավելացնելով գեղարվեստական խոսքի իր կուտակումներին, միաժամանակ նորագույն շրջանի հայ գրականության խոսուն հունձքին:

«Սարդարապատ»-ը լայն արձագանք գտավ ոչ միայն գրաքննադատների, այլև պատմագետների շրջանում:

Վեպի առաջաբանում Բ. Ուլուբաբյանը նշել է Սարդարապատի ճակատագրական նշանակությունը, ընդգծելով,

որ նրա մեջ իրար են ագուցվել ժողովրդի պատմական փորձն ու անսպառ իմաստությունը, ուժերի լարումն ու խիզախումը: Սարդարապատը աստեղային ժամ էր, որ կայծակի պես լուսավորեց խավարի մեջ ձգված մեր ճանապարհը, մեր ազգի համար դարձավ գոյատևման եւ ազգապահպանության հզոր խարիսխ: Անդրադառնալով վեպի ժանրային առանձնահատկություններին, նա նշել է. «Գրքիս ճակատին գրված է «վեպ»: Դա կարող է տարօրինակ թվալ բժախնդիր ընթերցողին, որը գուցե զարմանա բազմաթիվ էջերում սփռված «ո՛չ վիպական» տարրերի՝ պատմագիտական հետախուզումների, դիվանական չեղծված նյութերի, հեղինակային խորհրդածությունների, հերոսների օրագրային գրառումների եւ հատկապես գրական ոչ մի ժանրի ավանդական սահմանների մեջ չտեղավորվող ազատ շարադրանքի վրա: Սակայն նախ ասեմ, որ այս տարրերը վաղուց արդեն կազմում են ժամանակակից եվրոպական (եւ ո՛չ միայն եվրոպական) վեպի բաղկացուցիչները: Այա՛ տես գրել եմ գիրք Սարդարապատի մասին, եւ նյութն ինքն է հուշել արտահայտության եղանակն ու ձեւերը: Նյո՛ւթը, որի տիրապետությունը, ինչպես վերն ասացի, ինձ վրա է եղել ոչ միայն շարադրանքի ընթացքում, այլեւ նախընթացին, որ իմ ամբողջ գիտակցական կյանքն է»<sup>7</sup>:

Չեղինակի այս խոստովանությունը հրաշալի բանալի է՝ վեպը դիտարկելու եւ գնահատելու համար: Պետք է նկատի ունենալ այն փաստը, որ գրողի հայրը՝ մուշկապատցի Արշակը, մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին, եւ հոր պատմածները խմորել են ապագա գրողի էությունը որ-

Կես կաթն-սնունդ, ուղեկցել նրան մինչեւ վեպն ստեղծելը:

Կառուցվածքի եւ կերպավորման արվեստի առումներով վեպը ինքնատիպության արտահայտություն է: Կոմպոզիցիոն բազմազան ձևերի եւ միջոցների, սյուժետային տարրերի շրջանակներում միաձուլված են պատմական ու երեւայականը, ուստի այն պետք է ներկայացնել որպես վավերագրական պատմա-գեղարվեստական վեպ: Նկատի պետք է առնել այն երեւույթը, որ վեպի հերոսները, հատկապես գլխավոր գործող անձինք իրական-պատմական են եւ գրողը նրանց հանդես է բերել իրենց անուն-ազգանուններով, կենսագրական տվյալներով: Ուլուբաբյանը նկատի է առել նրանց խաղացած դերը Սարդարապատի վճռական ճակատամարտում:

Կարելու է այն հանգամանքը, որ արձակագիր Բ. Ուլուբաբյանը նաեւ հմուտ պատմաբան էր: Մեկ անգամ չէ նա անդրադարձել նաեւ Արցախի պատմությանը՝ դարերին հանձնելով «Խաչենի իշխանության պատմությունը (10-16-րդ դարեր)», «Դրվագներ հայոց Արեւելից կողմաց պատմությունը (5-7-րդ դարեր)», «Գանձասար» ժանրակչիռ աշխատությունները, նրա սպառնիչ բանավիճային հողվածներն ու ուսումնասիրությունները ազերի-թուրք «պատմագետների» գրպարտությունների եւ կեղծիքների դեմ: Բ. Ուլուբաբյանը պատմության խորքերից քայլեց դեպի մեր ժողովրդի աստեղային ժամ հանդիսացող Սարդարապատ եւ իմաստավորեց այն որպես գրող-պատմաբան կամ պատմաբան-գրող: Վեպի հաջողության գրավականներից մեկն էլ գրողի ստեղծագործական փորձն էր, որի շնորհիվ նա իրեն դրսե-

Լորեց որպես հետազոտող-տարեգիր, ընթերցողներին հանձնելով մի անառարկելի հերոսապատում: Մեր պատմությանը քաջատեղյակ լինելը հնարավորություն է տվել Ուլուբաբյանին գեղարվեստական հնարանքների համապատկերի վրա ներկայացնել վավերագրական փաստերը պատմական անձնավորությունների շրթերով: Հայտնի է, որ Սարդարապատի վճռական ճակատամարտը տեղի է ունեցել մայիսի 26-ին: Ահա թե ինչու սրբազան Գարեգին Հովսեփյանի կոչ-ուղերժում խորհրդանշական նոր իմաստ է ձեռք բերում ու գնահատվում ճակատամարտը: Սրբազանը իր կոչ-ուղերժում ընդգծում է. «Արդեն քանի հարյուրամյակ հայ ժողովրդի ու նրա առաքելադիր եկեղեցու համար սրբազան է այս օրը իբրև հայրենիքի, ազգի, մեր հավատի ու սուրբ մայրենիի համար ազգովին կռվելու եւ նահատակվելու օր: Հայոց սպարապետ Վարդանն ու սրբազան ուխտին հավատարիմ նախարարները, հայոց հոգեւորականներն ու ազատները, հայ ոստանիկն ու շինականը միական ու միահանուռ Ավարայրի դաշտ էին գնացել՝ իրենց հավատն ու ազգային ինքնությունը պաշտպանելու մազդեզաց մոխրամուլ բռնությունից: Հայությունը կռվեց մինչեւ վերջին շունչը, նահատակվեց Ավարայրի դաշտում, ապա ողջ մնացած փշրանքներով ամրացավ իր բերդերում ու լեռներում եւ ապրեց, դիմացավ... Թշնամին, որ պարսիկ ուժացնող կռապաշտն էր, տեսավ եւ համոզվեց, ապա ականջին օղ արեց, թե հայը կմեռնի-կնահատակվի, սակայն չի հրաժարվի իր հավատից ու ազգային ինքնությունից»<sup>8</sup>:

Սարդարապատը հայ ժողովրդին դատապարտել էր

միայն ու միայն հաղթանակի: Դա գիտակցում էին եւ ճակատամարտի մասնակիցները, եւ այն գրողները, ովքեր անդրադարձել են դրա գեղարվեստական պատկերմանը: Բ. Ուլուբաբյանը եւս վեպի մտահղացման եւ ստեղծման առանցքում դրել է այդ ճշմարիտ ու փրկարար գաղափարը: Ահա թե ինչպես է խորհում ճակատամարտի հրամանատար Դանիելբեկ Փիրումյանը. «Պիտի հաղթել թշնամուն, հասկանո՞ւմ ես, պիտի հաղթել: Այս կռիվը մեր միակ ելքն է: Մե՞կ էլ կրկնեմ, մեր ազգի գոյությունը կախված է այս միակ ու վերջին ճակատամարտից: Միակ ու վերջին: Վերջին, եթե պարտվենք»<sup>9</sup>: Բացասելով պարտությունը, Սարդարապատի զինվորները նվաճեցին հաղթանակը: Սա եւ պատմության հրամայականն էր, եւ վեպի հիմնական գաղափարը, որ անցնում է երկի միջով՝ սկզբից մինչեւ վերջը:

Մեր պատմության ոսկի էջերը ստեղծողներ Դանիելբեկ ու Պողոսբեկ Փիրումյանները, Արամ Մանուկյանը, Ալեքսանդր Խատիսյանը, Հովհաննես Քաջազունին, Սիմոն Վրացյանը, Ավետիս Ահարոնյանը, Գարեգին Սրբազանը, ռազմական ու պետական շատ գործիչներ վեպում նկարագրված են պատմական իրենց դերով՝ հասցված գեղարվեստական կերպարի աստիճանի: Հեղինակը կարողացել է էպիկականն ու երեւակայականը ներկայացնել պատկերային համակարգում, չափի զգացումով:

Մեծ է «Սարդարապատ» վեպի ճանաչողական եւ դաստիարակչական արժեքը: Իսկ նրա գեղագիտական նշանակությունը պայմանավորված է բարոյա-հոգեբանական այն սկզբունքներով, որ երկի շաղախն է կազմում: Չենք կարող

շրջանցել այն իրողությունը, որ Բ. Ուլուբաբյանի մտահղացումը թելադրված է դեռևս 1960-ական թվականների արցախյան շարժման հրամայականով: Լինելով Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ջահակիրը, 1965թ. սկսած, Բ. Ուլուբաբյանը երազել է Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու սրբազան օրը: Ադրբեջանի կառավարող շրջանների, ՊԱԿ-ի, տեղական սատրապների հետապնդումների արդյունքում անվանի գրող-պատմաբանը տեղափոխվեց Երևան: Նրա սիրտը մշտապես եղել է Արցախի պապենական լեռներում, որ դրել է իր գեղարվեստական երկերի մեջ:

«Սարդարապատ» վեպը գրողի ոչ միայն տարեգիրք-հերոսապատում է, այլև փորձառու մտավորականի իմաստուն խորհուրդ՝ միտված սերունդներին: Ուլուբաբյանը մի ներքին պայծառատեսությամբ Սարդարապատը կտակել է նրանց, ովքեր աշխարհասփյուռ հայ ժողովրդի եւ նրա հույսի հանգրվան Հայաստանի Հանրապետության հարատևումը կապում են միասնության հետ, ովքեր պետք է Արցախը փրկեին եւ ապահովեին միասնական Հայրենիքի իրական երթը:

Այս գաղափարը վեպում քարոզի չի վերածվել: Ելնելով Սարդարապատին մասնակցած դարաբաղցի մահապարտների խիզախումներից, Ուլուբաբյանը վեպում լուրջ ուշադրություն է դարձրել Հայաստան-Արցախ միասնությունն ապահովող իրադարձությունների գեղարվեստական պատկերմանը:

Սարդարապատի ճակատամարտին մասնակցել են

արծվասիրտ ղարաբաղցիներն իրենց սրտերի թելադրանքով: Նրանք մեկնել են Երեւան վտանգված ճանապարհով, որ անցնում էր լեռնափեշերով ու անհարմար դարավանդներով: Ինչպես ներկայացնում է գրողը, լեռնային դժվար վերելքներին ու վայրէջքներին ծանոթ ղարաբաղցիներն անմռունչ հաղթահարում էին արգելքները՝ յուրաքանչյուր ձոր ու սար անցնելուց առաջ հայացքով որոշում երկու կետերի միջեւ ընկած ամենակարճ ուղին: Եվ նրանք գիտակցում էին իրենց առաքելության նշանակությունը, գնում էին հայրենի եզերքը փրկելու բռնությունից: Խմբի մեջ են Ներսիսյան ճեմարանի վերջին խմբի սան, հաթերքցի Գեւորգ Բաբայանը, որը նաեւ բանաստեղծ է: Նա լավ գիտե, որ վտանգված է նաեւ իր ծննդավայրը, սակայն խորհում է այսպես. «Ների՛ր ինձ, Թարթառ, ների՛ր, հարազատս, մայր Արաքսն է վտանգված, գնում եմ նրա կանչին: Թե որ մեր ազգի մայր գետն արյան ու ավերի բերանին թողած՝ քո գիրկը վազեի, պիտի որ ինքդ էլ ինձ չներեիր, չէ՞ որ Արաքսը քո մայրն է նաեւ: Ների՛ր ինձ, Թարթառ»<sup>10</sup>:

Երեւանում նրանց առաջնորդեցին Ազգային խորհուրդ: Այնտեղ էր Արամ Մանուկյանը: Նա սիրով ընդունեց եւ խորհուրդ տվեց միանալ Ղարաբաղյան գնդին, որի հրամանատարը գնդապետ Պողոսբեկ Փիրումյանն էր:

Հայ բոլոր զինվորայիները լավ էին հասկանում, որ Հայոց հողն այլեւս տեղ չունի նահանջելու: Պողոսբեկի եւ Դանիելբեկի հետ ունեցած հանդիպման ժամանակ Գարեգին սրբազանը զրուցում է հայ ժողովրդի վարած պատերազմների մասին եւ ապա բնութագրում տվյալ ժամանակահատվածը. «Հայոց տասնհինգ աշխարհներից հավաքվել է փոք-

րաքանակ մի զորաշար, որն իր վրա պիտի տանի այս սրբազան պատերազմի ծանրությունը: Այստեղ է նաեւ մեր Արցախական աշխարհը: Փոքր է նրա գունդը: Բայց դա հայրենանվեր ու քաջ զինվորների գունդ է, որին առաջնորդում են Ասրիբեկյան-Փիրումյան փառավոր տոհմի պայազատները: ...Մեր հայրենի գունդը գնում է մի պատերազմի, որից չկա նահանջ, կա մահ կամ հաղթանակ: Ուրեմն, դա ազգի ու հայրենիքի վերին կամքով մահվան դատապարտվածների գունդ է, մահապարտների գունդ»<sup>11</sup>:

Ղարաբաղցիները խորհում էին երկրի եւ ազգի ճակատագրի մասին, համոզված էին, որ պիտի շահեն հաղթանակը: Մարտից առաջ դարձյալ խոսում է Գարեգին սրբազանը. «Իմ հայրենակիցներ, շատ սիրելի, պաշտելի Արցախ աշխարհի քաջ զավակներ: Այն բառերը, որ դրին իմ անվան կողքին, այս րոպեին կապ չունեն ինձ հետ: Հիմա ես ձեզանից մեկն եմ, օրհասի առաջ կանգնած հայրենիքի զինվորը: Ես էլ ձեզ պես եկել եմ պատերազմի դաշտ եւ ինձ համար չկա ո՛չ նահանջ, ո՛չ վերադարձ, քանի Արարատյան երկրում թուրք ասկյարն է քայլում, քանի մեր ազգի ու հայրենիքի վրայից վերացած չէ մահացու վտանգը: Ես ինձ համարում եմ մահապարտ մեկը, որը միայն հաղթական պատերազմում կարող է ետ նվաճել իր կյանքը, իր ապրելու իրավունքը: Ես չեմ կարծում, թե ձեր շարքերում կգտնվի մեկը, որ ուրիշ տեսակ կմտածի: Ուրեմն, դուք էլ մահապարտներ եք, թանկագին հայրենակիցներ, եւ մահապարտների գունդ է այս հայկական-ղարաբաղյան Հինգերորդը, որ հայրենիքի փրկության համար պիտի կռվի մինչեւ վերջին շունչը, մին-



չել հաղթանակը... Մի մոռանաք, որ մեր թիկունքում էջմիածինն ու Երեւանն են մնացել, մնացել է մեր հայրենիքի սիրտը: Այնտեղ ազգի վերջին բեկորներն են հավաքվել եւ սպասում են մեր հաղթական խոսքին, որ լինելու է հայոց երկրի փրկության մասին...»<sup>12</sup>:

Գնդի հրամանատարը Պողոսբեկն էր: Նրա խոսքը եւս հնչեց որպես հաղթանակի կոչ: Նա սրբազանի խոսքից հետո ձախ ձեռքով արծաթապատ թուրը կողքի բռնած, աջով դրոշի փեշը՝ գնդի անունից երդվեց բարձրածայն. «Մենք՝ Հայկական Հինգերորդ հետեւակային գնդի բոլոր զինվորներս ու սպաներս, գիտակցում ենք, որ հայ ազգի ու հայոց հայրենիքի վրա կախված է մահվան վտանգը: Այս օրերին, երբ մեր դարավոր թշնամի թուրքը մեր ժողովրդի կեսը ոչնչացնելուց հետո, շարժվում է նաեւ մյուս կեսը բնաջնջելու, մենք ուրիշ ելք չունենք, քան այս պահից կոչված մահապարտներ՝ երդվենք մեր գնդի դրոշի առաջ, մեր ազգի ու հայրենիքի առաջ, որ կկռվենք մինչեւ վերջ եւ կհաղթենք թշնամուն... Հաղթանակ կամ մահ: Հաղթանակ, միայն հաղթանակ»<sup>13</sup>:

Հրամանատարի երդումի խոսքը թնդում է գնդում, ժածանվելով Արարատի դիմաց. «Երդվում ենք, երդվում ենք, երդվում ենք»:

Սարդարապատի ճակատամարտը սկսվեց 1918-ի մայիսի 26-ին, վարդանանց սրբազան պատերազմի օրը: Ռազմաճակատի հրամանատարը՝ Դանիելբեկ Փիրումյանը, սրբազան Գարեգին Հովսեփյանը եւ մյուս զինվորյալները համոզված էին, որ այդ կռվում հայ զինվորների հետ է լինելու

Ավարայրի ոգին, հայոց ազգը, ամեն ազգայինը փրկելու հաստատակամությունը: Ոգելորված էր նաեւ զնդապետ Շահնազարյանը եւ պատրաստ էր նշված ժամին իր զինակիցների հետ միասին նետվել մարտի:

Բ. Ուլուբաբյանը ոչ միայն նկարագրել է Սարդարապատի ճակատամարտը, այլեւ իմաստավորել է այն՝ ցույց տալով հայ ժողովրդի հերոսական անցյալի եւ վճռական ներկայի միասնությունը: Պատահական չէ, որ աշխարհիկ զորավարները իրենց համարում էին վարդանանց ժառանգորդները, իսկ Գ. Յովսեփյանին Դանիելբեկը համեմատում է 5-րդ դարի Ղեւոնդ Երեցի հետ:

Պատմական շատ անձնավորությունների է անդրադարձել Բ. Ուլուբաբյանը: Այստեղ են Յ. Բաղդամյանն իր հեծյալ հնգյակի հետ, այստեղ են ղարաբաղցի Զաքարը, մուշկապատցի Արշակը, հրաշքներ է գործում Երեւանի գորամասի հրամանատար գեներալ Սիլիկյանը, պատանի Յովսեփ Փիրունյանը, նրա եղբայրը, որոնք սխրանքի ժամանակ շրջապատվում են թուրք ենիչերիներով եւ գերի վերցվում:

Վեպում հեղինակը լուրջ ուշադրություն է դարձրել նաեւ հայ-ռուս ժողովուրդների բարեկամական կապերին: Պատահական չէ ռուս զինվորների մասնակցության նկարագրությունը Սարդարապատի ճակատամարտում:

«Սարդարապատ» վեպը բոլոր ժամանակների համար է գրված, այն հայոց բոլոր սերունդներին հուշելու է մաքառման դասը, մաքառումով հարատեւելու խորհուրդը:

Բ. Ուլուբաբյանի գրական ժառանգության պայծառ էջե-

րից է «Զրուցարան» ժողովածուն, որտեղ զետեղված են նրա պատմա-գեղարվեստական ակնարկները՝ նվիրված հայրենի պատմության առավել կարեւոր ու ճակատագրական պահերին եւ հայոց բազմադարյան մշակույթին՝ իր կազմավորման մշուշոտ ժամանակներից մինչեւ նոր ու նորագույն օրերի աննախադեպ նվաճումները: Պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում նրա հրապարակախոսությունն ու պատմական աշխատությունները:

Ժամանակները դեռ խոսելու են նոր սերունդների շրթերով, նոր ընկալումների եւ անելիքների դիտակետից:

2005 թ.

## ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### ՈՐՊԵՍ ՍՈՒՏՔ



Մ.Հովհաննիսյանն իր երկհատորյակի առաջին գրքի մուտքում գրել է. «... Մենք ապրում էինք հետին թվով: Կորստի եւ կարոտի սարսուռները մեզ հետապնդում էին: Թաքապահուստ մտքերը եւ դրանց բարձրաձայն ձեւակերպումները կոխ էին մտնում, չափ եզների պես ծախուշեղ քաշում: Մաշողը մենք էինք:

Կոշտ իրականությունը հարում էր մեր մեջքը եւ արդեն համակերպվել էինք չսպիացող վերքի ներկայությանը: Լեզվի փառը եւ այնտեղ ծալապատիկ նստած տտիպությունը չէին անցնում՝ ինչ հեղուկով էլ ողողում էինք:

Մեր գիշերները ծանր էին լուսանում...  
«Նարնջագույն գիշերներ», «Գյուղացի մարդիկ», «Բաց դռներ», «Հարա՛ր, Հարա՛ր...», «Այլ պատմվածքներ» եւ մյուսները իմ տեսած ու զգացած կյանքի հատորներն են, իմ խոկումների պտուղը»<sup>1</sup>:

Տաղանդավոր գրողի այս խոստովանությունը կախարդական բանալի է՝ նրա ստեղծագործությունների դիտարկման, վերլուծության եւ գնահատման համար: Վերընթերցելով Մ. Հովհաննիսյանի պատմվածքները, վիպակներն ու էսսեները, համոզվում ես, որ նա ինքնաճանաչման

ու ինքնաբացահայտման նախանձելի քիմք ունի, եւ դա շատ է լավ, քանզի ապացուցում է, որ գրողը հոգու եւ մտքի արմատներով սերտորեն կապված է ազգային այն հողին, առանց որի ընդհանրապես արվեստ չկա: Դրա ապացույցներից մեկն էլ դարձյալ իր իսկ ընդգծումն է. «Իմ հերոսները այն միջավայրի մարդիկ են, որտեղ ես ապրել եմ ինքս էլ նրանցից մեկը: Մենք իրար հարաբերվում էինք տանու շորերով. իրարից քաշվելու հարկ չկար, թաքցնելու բան չկար եւ մանավանդ անհրաժեշտություն չկար»<sup>2</sup>:

Ի՞նչ է սա, սեփական կյանքի հուշապատո՞ւմ, թե՞ գրողի գեղագիտական ուսանելի ընդհանրացում: Կարող ենք ասել՝ ե՛լ մեկը, ե՛լ մյուսը, քանզի համաշխարհային գրականության եւ գրականագիտության մեջ Հոմերոսից մինչեւ Թումանյան, Արիստոտելից մինչեւ Բելիմսկի, ապացուցվել է, որ արվեստի ուժը ճշմարտացիության մեջ է: Իսկ ճշմարտացիությունը ծլարձակում է այնտեղ, որտեղ գրողի կենսագրությունն է՝ համեմած սեփական ժողովրդի ցավի եւ ակնկալիքների երանգներով:

Մ.Հովհաննիսյան-գրողի ստեղծածի հանդեպ լուրջ եւ անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերելու, ժամանակակից չափանիշներով գնահատելու համար անհրաժեշտություն կա վերծանել եւս մի շատ կարեւոր խնդիր, որ առնչվում է նրա թեմատիկային եւ ընտրած թեմաներին:

Մ.Հովհաննիսյանը հասակ է նետել արցախյան գյուղում, ձեւավորվել, գեղագետի իր ներկայանակը ստեղծել արցախյան ավանդական ոսկեփոշուց, երանգները եփել

արցախահայի երազից ու տառապանքից, ցավից ու ակնկալիքից, եւ ապա մասունք-մասունք, նշխար-նշխար հյուսել արցախահայի դիմանկար-գորբելենը՝ բնության եւ նրա տիրոջ հոգու գույների ներդաշնակությամբ: Այստեղից էլ խնդրո առարկա հարցի վերանայման եւ վերարժեքավորման կարելոթությունը: Պարզ է, որ խոսքը գյուղագրութուն հասկացողության մասին է, իսկ Մ. Յովհաննիսյանի գրական հունձքի առյուծի բաժինը վերաբերում է գյուղաշխարհին, ասել է թե՛ նրա գրական կերպարների պատկերասրահը ներկայացնում է գյուղաշխարհի մարդկանց:

Հայ իրականության մեջ Հր. Մաթեւոսյանն առաջիններից մեկն էր, որ պատասխանեց գյուղագիր եւ գյուղագրութուն հասկացողությունների մասին եղած հնամաշ կարծիքին: Նա չի ընդունել գրողներին ըստ թեմաների դասակարգելու երեւութը, ընդգծելով գրականության գլխավոր առարկայի՝ հասարակական մարդու կերպարի ստեղծման առաջնահերթ խնդիրը: Հր. Մաթեւոսյանը ժամանակին առարկել է արծակագիրներ Վ.Պետրոսյանի եւ Գ.Արշակյանի այն դրույթի դեմ, թե գյուղագրությամբ զբաղվողները իմիտատորներ են, քաղաքագրությամբ զբաղվողները՝ որոնող վարպետներ: Մաթեւոսյանը հասկացրել է, որ Վ. Պետրոսյանը եւ Գ. Արշակյանը բոլորովին անտեսել են գրողական ոճը: Անվանի գրողը ընդգծել է ավանդույթի եւ նորարարության սերտ կապը, միաժամանակ նշել, որ յուրաքանչյուր գրող գրասեղանի մոտ նստում է մեն-մենակ, դժվար է յուրաքանչյուր գրողի գործ: Բակունցը չի օգնում ոչ մի գրո-

ղի, իսկ եթե օգնում է որեւէ գյուղագրի, կարող է օգնել նաեւ քաղաքագիրներին, որովհետեւ, ինչպէս նկատում է Մաթեւոսյանը՝ «ոչ գյուղն ու քաղաքն են սոցիալական հակադիր բեւեռներ, ոչ գյուղացին եւ քաղաքացին են մարդկայնորեն հակադիր որակներ, ոչ էլ ժամանակներն են դատարկվում հին բովանդակությունից ու լցվում նոր բովանդակությամբ այնքան արագ, որ հետնորդ սերունդը չհասկանար նախորդ սերնդին, եւ գրականությունն էլ դեռեւս մնում է իր հին մարդագրության կոչման բարձունքին»<sup>3</sup>:

Այս ճշմարիտ եւ ընդունելի դիտարկումից հետո Յ. Մաթեւոսյանը գտնում է, որ կյանքի հավերժական ճանապարհին գրականության բնապաշտական թեքումը շարունակվում է: Նա խորհուրդ է տալիս չմոռանալ, որ արվեստը միշտ էլ խրված է մարդասիրության հողում, որ կարիք չկա քաղաքակրթության անունից սպառնալ գյուղագրությանը, որ գյուղագրությունը քաղաքակրթության ծնունդն է, որ գյուղարգությունը քաղաքակրթություն է: Վերջնակետում նա ընդհանրացնում է. «Չկա գյուղագրություն կամ քաղաքագրություն, կա միայն մարդկային հայացք բնությանն ու աշխարհին»<sup>4</sup>:

Ահա, հենց բնության եւ աշխարհի հանդեպ ունեցած հայացքի կոնկրետ դրսեւորման մեջ էլ պետք է արժեքավորել Մ. Հովհաննիսյանի ստեղծագործությունը:

\*\*\*

Մ. Հովհաննիսյանի մուտքը գրականություն՝ աստծո

Օրինանքով էր: Պատանեկան նրա հուզաշխարհը ձեւավորվել ու ծնվել էր նախախնամության ընծայականով: Արցախ աշխարհի հեքիաթային բնության նրբերանգները հոգու մեջ առած՝ նա խենթորեն սիրահարվեց ստեղծագործական աշխատանքին, ընտրեց լրագրությունը եւ մտավ քարքարոտ ու վերընթաց մի ճանապարհ, որ կոչվում է գրողի ճակատագիր: Նա հավատարիմ մնաց իր ճակատագրին, իսկ ճակատագիրը երես չտվեց նրան, շոյեց հարազատ հոր պես՝ պահանջելով քրտնաջան օր ու ժամ, գուրգուրեց մոր նման՝ ցնծալով նրա արած-դրածից: Այսպես, տասնյակ տարիներ նա հյուսեց գեղարվեստական իր խոսքը՝ սեփական թույրով ու բույրով, անհատականության իր կնիքով: «Իմ հիմ լորենի» երախայրիք գրքույկն ազդարարեց, որ ասպարեզ է իջել արծակի հոգեբանական ուղղության ինքնատիպ մի գրող, որի ճամփան հաստատուն է եւ հեռագնա:

Անվանի արծակագրի վիպելու կարողության գրավականը երկակունք աղբյուրի մեջ է՝ հայրենի բնության եւ ժողովրդական կենցաղի իմացության, ապա՝ ժողովրդական հոգեբանության եւ բառ ու բանի յուրացման: Դրանք էլ հենց բավարարել են, որ նա գնալով լայնորեն բացի սրտի եւ հոգու դռները եւ մայրենի գրականությունն բերի մարդուն մարդ պահող ժողովրդի ցավն ու կարոտը, լացն ու ժպիտը, հպարտությունն ու հարատեւելու իրավունքը:

\*\*\*

Մ. Հովհաննիսյանը ծնվել է 1934 թ. Լեռնային Ղարաբաղի Ասկերանի (նախկինում՝ Ստեփանակերտի) շրջանի



Հարավ գյուղում: 1952 թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 2 դպրոցը, 1958 թ.՝ Երեւանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը՝ ստանալով լրագրողի մասնագիտություն: 1958-ից աշխատել է Լեռնային Ղարաբաղի զանգվածային լրատվության բնագավառում: Եղել է ռադիոհաղորդումների մարզային վարչության թղթակից, ավագ խմբագիր: 1967-1971 թթ. աշխատել է «Խորհրդային Ղարաբաղ» թերթում՝ որպես բաժնի վարիչ:

1971-1986 թթ. աշխատել է որպես ռադիոհաղորդումների մարզային վարչության գլխավոր խմբագիր:

1986-87 թթ. աշխատել է որպես Ստեփանակերտի Մ.Գորկու (այժմ՝ Վ.Փափազյանի) անվան պետական թատրոնի տնօրեն, 1988-93 թթ. «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր, 1993-95 թթ. ԼՂՀ լրատվության եւ մամուլի դեպարտամենտի ղեկավար, 1995-ից՝ «ԼՂ Հանրապետություն» թերթի գլխավոր խմբագիր: Այժմ ԼՂՀ հանրային հեռուստառադիոհաղորդումների խորհրդի նախագահն է:

«Մենք» ժողովածուի համար 1989 թ. Ս. Հովհաննիսյանն արժանացել է Հայաստանի գրողների միության Դ. Դեմիրճյանի անվան մրցանակի, 1997 թ. «Գնում ենք արեւին դիմավորելու» գրքի համար արժանացել է ԼՂՀ Եղիշեի անվան մրցանակի: Նա ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի ասպետ է: Լույս են տեսել գրողի հետեւյալ գրքերը. «*Իմ հին լորենի*» (Բաքու, 1970 թ.), «*Գարնան կարոտ*» (Երեւան, 1971թ.), «*Գյուղացի մարդիկ*» (Բաքու, 1977 թ.), «*Եվ սիրտն ասաց*» (Բաքու, 1980 թ.), «*Նարնջագույն գիշերներ*» (Երե-

լան, 1985 թ.), «Շոգ» (Բաքու, 1986 թ.), «Մենք» (Երեւան, 1989 թ.), «Գնում ենք արեւին դիմավորելու» (Երեւան, 1991 թ.), «Արցախ իմ, ցավ իմ» (Երեւան, 1998 թ.), «Երկեր» 2 հատորով, հ. I (Ստեփանակերտ, 2004թ.), հ. II (Ստեփանակերտ, 2006թ.):

### ԳՅՈՒՂԱՇԽԱՐՀԻ ՏԵՐԵՐԸ

Հայ գրականության բազմերանգ քարտեզի վրա Մ. Հովհաննիսյանը նախագծել է իր կենսական տարածությունը, դա արցախյան նախաստեղծ բնության ծփանքների մեջ արցախցու հայախոս հոգեբանության պատկերն է: Վաստակաշատ արձակագրի հմտությամբ, նա հայրենի եզերքի ավանդներն ու նոր ոգորումները մարմնավորեց իրար չկրկնող կերպարների պատկերասրահով: Դրանք գրողի հայրենակիցներն են, որոնց կրած տառապանքը եւ արթուն ակնկալիքների ականատեսն ու ցավընկերն էր ինքը: Այստեղից էլ նրա «Գյուղացի մարդիկ» շարքի անմիջական խոսքի ու ավսոսանքի ապրեցնող դասը: Գրողի նկարագրած գյուղաշխարհի մարդիկ մերոնք են, մեր մեջ են, մենք ենք, մեզնից սերվածներն են: Նրա համար գյուղական կյանքի ճշմարտացի պատկերումը եւ ստեղծագործական հոգեբանություն է, եւ մտահղացման իրականացում: Այդ առումով նա միշտ հավատարիմ է մնացել իրեն, չի երերացել, չի տարակուսել, գիտակցել է՝ ինչքան մոտ հայրենի հողին, ինչքան հարազատ՝ ժողովրդին, այնքան լավ արվեստագետի համար: Ահա, այս պահանջի գիտակցումով ապահովվել

է եւ թեմաների ընտրությունը, որով պայմանավորված է նրա գրեւածելը, եւ գեղագիտական սկզբունքների բացահայտումն ու հաստատումը:

Ուշադրության կենտրոնում պահելով գյուղաշխարհի թեմատիկան, Մ. Հովհաննիսյանը նախընտրել է ժողովրդին մոտիկից ճանաչելու, պապենական օջախները շեն պահող մարդկանց հոգեբանության եւ սոցիալական կեցության նկարագրության, հայրենի բնաշխարհի գեղեցկություններն անձնավորելու պահանջները, առանց որոնց գեղարվեստական խոսքն անիմաստ է, չոր ու ցամաք: Նրա գեղարվեստական ըմբռնումների դրսեւորումն ու հաջողությունն ամբողջությամբ համընկնում է 1960-ական թթ. հետո հայ արձակում տեղի ունեցած փոփոխություններին եւ հաջողություններին:

Ֆրանսիացի հայտնի տեսաբան Ռոլան Բարթը նշել է. «Չարմանալի ոչինչ չկա. եթե որեւէ երկիր պարբերաբար հետադարձ հայացք է ձգում իր անցյալի վրա եւ վերածեքավորում այն՝ իմանալու, թե դրանով ինչ կարող է անել. ահա դրանք՝ գնահատման կանոնավոր գործընթացները»: Օգտակար պահանջ է: Այսօր Մ. Հովհաննիսյան-արձակագրի ձեւավորման, ինքնահաստատման, ստեղծածի գեղարվեստական արժեքի ու տեղի հարցերը բնորոշելիս անհրաժեշտ է բացահայտել եւ նրա կրած ազդեցությունների, եւ ժամանակակիցների գրական որոնումների հետ ունեցած առնչությունների, եւ գտնումների իրողությունները:

Հայ գրականագիտության մեջ 1960-70-ական թթ. արձակը գնահատվում է որպես մեր գրականության առանձնահատուկ փուլերից մեկը: Այն պարզապես կապվում է հասարակական կյանքում, անհատի հոգեբանության մեջ տեղի ունեցած սոցիալ-քաղաքական, բարոյահոգեբանական տեղաշարժերի ու փոփոխությունների հետ: Սակայն չպետք է մոռանալ, որ անհատի պաշտամունքի քննադատությունից հետո էլ կոմկուսը շարունակել է իր հրամայող վերաբերմունքը արվեստի հանդեպ՝ քարոզելով լեռնիյան դասերը, ճնշելով նշանավոր գրողներին: Չմոռանանք, որ հենց այդ տարիներին գրողների միությունից հեռացվեց տաղանդաշատ Պաստեռնակը, ԽՍՀՄ-ից վտարվեց Սոլժենիցինը, Երեւանում կալանվեց Պ. Սեւակի «Եղիցի լույսը», «Աինիժոր» ակնարկի համար հալածվեց Հր. Մաթեոսյանը: Այս ամենով հանդերձ, գրական աշխարհում սկսված ձնհալը աստիճանաբար ունեցավ իր դրական արդյունքը: Շարունակելով անցյալի գրական ժառանգության լավագույն ավանդույթները, հայ գրողները կատարեցին խոստումնալից քայլեր: Խոստովանենք, որ առաջին գծում երեւաց Հր. Մաթեոսյան-Ֆեյնմենը, որը հեղաշրջում մտցրեց մարդու ճակատագրի բարձրարվեստ պատկերման ասպարեզում: Տաղանդավոր գրողի հոգեւոր շփումները Ա. Չեխովի, Զ. Թումանյանի, Ա. Բակունցի, Ստ. Ջորյանի, Զ. Մնձուրու, Համաստեղի հունձքին, նկատելի բարձունքի հասցրեց նրան: Եվ ընդհանրության մեջ հայ արձակը 60-ական թվականներից սկսած կյանքի բազմաշերտ հիմնախնդիրների բացա-

հայտնամբ նոր ծիրի մեջ մտավ, ստանալով քաղաքացիական կրքի եւ ազնիվ մարդասիրության ավիշ:

Գրողները ձգտում էին, որ իրենց ստեղծագործությունների մեջ ավելի ուժեղ զգացվի ժողովրդի շնչառությունը, որ իրենք էլ դառնան ժողովրդի կամքի կրողն ու արտահայտիչը:

Չեռպատերազմյան շրջանի (1945-ից) արձակի մասին խոսելիս անպայման պետք է հիշատակել Խ.Դաշտենցի, Վ. Խեչումյանի, Ա. Ավագյանի, Ռ. Արամյանի, Ս. Ալաջաջյանի, Ս.Խանգադյանի, Ս. Այվազյանի, Մ. Սարգսյանի եւ այլոց անունները: Բայց ճշմարտությունը պահանջում է ընդգծել, որ 20-րդ դարի 60-90-ական թթ. արձակի ամենաբեղմնավոր երակն այն սերունդն էր, որի մեջ էին Ջ. Խալափյանը, Պ. Ջեյթունցյանը, Ռ. Յովսեփյանը, Յ.Մելքոնյանը, Ա.Այվազյանը, Վ. Պետրոսյանը, Մ. Գալչոյանը եւ այլոք: Սերնդի դրոշակակիրը դարձավ Յր. Մաթեոսյանը: Այդ նա էր, որ լուրջ ուշադրություն դարձրեց եւ լուծեց բնավորության ստեղծման խնդիրը: Մ. Յովհաննիսյանը 60-ականների սերնդի բույլի մեջ է մտնում իր ինքնատիպ արվեստով, մտածողությամբ, արժարձած խնդիրների կարեւորությամբ, գյուղաշխարհի հոգսերի պատճառահետեւանքային կապերի բացահայտմամբ, կյանքի ընդգծված, սոցիալ-բարոյական հարցադրումներով, անհատի եւ նրա սոցիալ-քաղաքական միջավայրի ցուցադրմամբ, մարդու եւ հայրենի հողի հարաբերությունների զննումով, մարդկային ճակատագրերի հմուտ վերծանումով:

Մ.Յովհաննիսյանի գեղարվեստական ըմբռնումներին, պատասխանատվության զգացումին, գրականության դերի ընկալման սկզբունքներին ծանոթանալու համար հաջող բանալի է նրա «Գյուղացի մարդիկ» շարքի «Որպես նախաբան» գործը: Այս պատմվածքը հնարավորություն է տալիս տեսնելու գրողի կապը ժամանակի եւ ժողովրդի գոյատեւման ընթացքի հետ: Այստեղ որպես բնաբան բերված է Յ. Սահյանի երկտողը. «Եվ տխրությունս կամաց-կամաց փոխվում է լացի»: Պատմվածքի հերոսն ապրում է քաղաքում եւ հազվադեպ է լինում հայրենի գյուղում: Այդ կապակցությամբ նա խոստովանում է. «Հիմա ես հազվադեպ եմ լինում մեր գյուղում՝ տարեկան մեկ-երկու անգամ: Հիմա Տանձուն աղբյուրին այծապոչ ծամերով աղջիկներ եմ տեսնում ու չեմ ճանաչում: Եվ տղաների եմ հանդիպում, Բինաձորից մորի քաղած ու մորու պես լիք-լցված թշերով տղաների, որոնց մոտ ծանոթ դիմագծեր որոնելով եմ կռահում, թե ունոնցից են սերված: Տասը տարի առաջ, երբ առաջին անգամ ինձ քեռի ասացին, ես, նախ՝ զարմացա, հետո անծանոթ մի թախիծ պատեց ինձ: Հետո համակերպվեցի-հարմարվեցի Հայրունց Օհաննեսի թռռան՝ իմ տարիքի նոր որակավորմանը: Հիմա բառը տոփանվել ու մաշվում է»<sup>2</sup>: Բառը որպես մի աշխարհ, Մ. Յովհաննիսյանին զգուշացնում է արվեստագետի պատասխանատվության մասին: Եվ նա չի գնում տոփանված ու մաշված կածաններով, նայում է շուրջը, գտնում նոր ու թարմ բառապատկերներ՝ թելադրված ժամանակի եւ կյանքի հրամայականով:

Տաղանդավոր արծակագրի կենսափիլիսոփայությունը եւ ծրագրային նպատակը պատմվածքում ընդգծված են հարեւան քոլուտցիների եւ լեռնաղբյուրցիների՝ առողջ հումորի, իրար ձեռ առնելու սրամտության, միմյանց հաստատող ծիծաղի երանգներով: Խորհրդածելով աշխարհում ծննդի եւ մահվան շուրջ՝ հերոսը հպարտանում է Լեռնաղբյուրի երեխաների առատությամբ: Եվ երբ քոլուտեցիք զարմանում են երեւույթով, լեռնաղբյուրցիք պատասխանում են. «Մեր հանդերը գյուղին մոտ են, մարդիկ կեսօրահացին տուն են գալիս»<sup>3</sup>: Գրողն առաջ է ընթանում իր հերոսի հետ: Առաջին այս տպավորությանը հետեւում են Լեռնաղբյուրի աշխարհը ներկայացնող պատկերները: Դրանք համեմված են կյանքից հեռացողների հանդեպ ծփացող կարոտով, նոր աշխարհ եկած երեխաների առողջ, պղըր-պուղիական պատմություններով, նրանց մեծավարի դատելու եւ զրուցելու կարողություններով:

Ժողովրդական հումորի հմուտ օգտագործման, կերպարի բնութագրման, դիպուկ ու հակիրճ երկխոսությունների ստեղծման հաջող օրինակ է հետեւյալ պատկերը, որ բերվում է պատմողի կողմից. «Անցյալ տարի ուզում էի Ցուրտ աղբյուրից ջուր խմել: Օրը շոգ էր, օդը խեղդուկ, ասացի՝ գնամ Ցուրտ աղբյուրից սառը-սառը ջուր խմեմ: Սաքունց կապով իջնելիս, որտեղից՝ հանկարծ մի գիժ քամի ելավ ու գլխարկս թռցրեց ներքեւները: Շվարած կանգնել էի ու մեկ էլ երկու տղա, չգիտեմ ինչպես, բուսան քթիս տակ՝ ծոցները լի խակ սալոր, գլխարկս՝ տարիքով մեծի գլխին:

- Շլորը խակ չի՞,- առնելով գլխարկս, հարցրի ես:

- Ուտելու ժամանակն է:

- Տուր՝ տեսնենք:

Խակ սալորն ուտելով իջա Սաքուն ձորը: Հետեւից լսեցի նրանց խոսակցությունը եւ ականայից ոտս կախ գցեցի:

- Ո՞վ է,- խորհրդավոր հարցրեց փոքրը:

- Մեր գյուղացի կլինի:

- Ի՞նչ գիտես, գուցե լրտես է:

- Լրտեսը հայերեն չի իմանա,- վստահ ասաց մեծը ու, քիչ մտածելուց հետո, ավելացրեց,- լեռնաղբյուրեցի գծերից է, երեւի կարոտել է Ցուրտ աղբյուրի ջրին:

Փոքրը երեւի չհավատաց, բայց ոչինչ չասաց:

- Չե՞ս հավատում՝ հարցնեմ:

- Հարցրու:

- Քեռի, հե՛-հեե՛քեռի:

- Հեե՛յ,- նույն տոնով պատասխանեցի ես:

- Ո՞ւր ես գնում:

Լեռնաղբյուրեցու ծռությունը շարժվեց մեջս:

- Քեռակինդ ասել է՝ գնա ձվածեղի չոփ բեր՝ ձվածեղ անեմ:

- Հաա՞...

- Հաաա՛...

- Քեռի՛...

- Ի՞նչ էե՛...

- Չոփը կհավաքե՛ս, հետո Ցուրտ աղբյուրից ջուր կխմես, հետո կբարձրանաս գերեզմանատուն...



- Գերեզմանատանը ի՞նչ կաա՛...

- Քեռակինս այնտեղ էե՛...

Հետո, ձայնը ցածրացնելով, ասաց ընկերոջը.

- Տեսա՞ր, որ ասում եմ՝ լեռնաղբյուրեցի է...»<sup>4</sup>:

Կերպարները բնութագրող սրամտություններով հարուստ է պատմվածքը: Մրցում են քոլուտեցին ու լեռնաղբյուրցին, մեջտեղ է գալիս Օհանես ապերը, գրույցի մեջ բնութագրում գյուղից հեռացած, հինգ-վեց տարուց հետո գյուղ վերադարձած տղաներին: Պատմվածքում իրար հաջորդում են էպիզոդիկ պատումները, սակայն բնութագրումները հյութեղ են, ընդգծվում են դիմանկարներ, որոնց հնարավոր չէ մոռանալ: Նման կերպարներ են քարից հաց քամող Անուշավանն ու Մուլեղը, նախագահ Սամսոնը, տաքարյուն Սիրանը: Սրանցից յուրաքանչյուրն իր աշխարհն ունի, իսկ բոլորը միասին՝ հինավուրց մի գյուղաշխարհ՝ Ցուրտ աղբյուրի կաթնահամ ջրով, հարուստ հոտով ու հասկով, ինքնատիպ կենցաղով, երեխաների հանդեպ ունեցած անանց սիրով, աղքատության մեջ վեհանձն ու քնքույշ սրտերով:

Ստեղծագործության հերոսի շրթերով Մ. Հովհաննիսյանը պատմում է հարազատ ծննդավայրի՝ Արցախ աշխարհի հանդեպ ունեցած հավատամքի մասին: «Լեռնաղբյուրը մի հատ է: Այդ լածիրակ երեխաները Լեռնաղբյուրում մեծանում են ու գնում ուրիշ տեղեր տուն շենացնում... Գնում են ու իրենց հետ տանում Լեռնաղբյուրի բույրերը: Լեռնաղբյուրին հատնել չկա, ինչքան քաղեն տանեն, նրան հատնել չկա:

Բայց երբ հայտնում են, որ Հայրունց Օհանեսը տեղատակ է ընկել, Բուդին, կնոջ մահանալուց հետո, տեղափոխվել է քաղաք, ես մեջս սկսում եմ փրփրել: Լեռնադքյուրում խելքին մի մարդ չկա՞ր, որ Բուդու ձեռքից բռներ ու ասեր՝ ախպեր տղա, քեզնից ոչ վարժապետ դուրս կգա, ոչ քաղաքացի, եւ քո էս դասալքությունը բանի նման չի...

... Մեր գյուղում սիրտս տխուր-տխրում է: Միայն երբեմն մի թաքուն հույս ինձ սփոփում է...»<sup>5</sup>:

Գրողն իր գեղագիտական իդեալը կրող հերոսի այս մտորումներով սկսում է «Գյուղացի մարդիկ» պատմվածաշարը՝ գյուղաշխարհի կյանքը ներկայացնելով բազմազանության մեջ՝ իր փոփոխությամբ, ցավից ծնված լուսավոր հույսով:

«Գյուղացի մարդիկ» պատմվածաշարի մեջ մտնող գործերը մի-մի գեղանկարներ են, որոնց մեջ արտացոլված են լեռներն ու հանդերը, արտերն ու այգիները եւ նրանց շունչ ու հավերժող երգ պարզեւող մարդիկ:

Գրական աշխարհում թեւավոր միտք է դարձել այն իմաստությունը, ըստ որի՝ գրողին ճանաչելու համար պետք է լինել նրա ծննդավայրում: Ժխտելու առիթ չկա այս խորհուրդը: Հայ գրականության մեծերը եւս հաստատել են այս ճշմարտությունը: Թումանյան-Լոռի, Իսահակյան-Շիրակ, Բակունց-Սյունիք, Մաթեւոսյան-Ահմիծոր (Ծմակուտ), Գալշոյան-Արագածոտն եւ այլն եւ այլն: Մ. Հովհաննիսյանի անվան հետ կարող ենք հղովել Լեռնադքյուրը: Իսկ Լեռնադքյուրը ոչ այլ ինչ է, եթե ոչ ամբողջ Արցախը: Յուրաքանչյուր

արցախցի կարդալով Մ. Հովհաննիսյանի «Լեռնադէյուր» պատկերը, կասի՝ սա մեր գյուղն է, լեռնադէյուրցին էլ ես եմ: Դա բախտավորություն է գրողի համար, որ տրվում է ոչ բոլորին:

Մ. Հովհաննիսյանը ստեղծագործական ճանապարհի սկզբից զգաց Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Ջորյանի ուսուցանող շունչը, հավատով եկավ եւ սեղմեց 20-րդ դարի 60-ականների հսկա Յ. Մաթեոսյանի ձեռքը, ու նա ողջունեց Մաքսիմին եւ նրա գրական նկատելի հունձքից հետո գրեց. «Հիանալի է, որ մեր խոսքի ավելորդության, մեր ժամանակի անցածության, ուրվագծվող նոր ժամանակներից մեր էպոխայի հեռանալու այս բոլոր օրերում Մաքսիմ Հովհաննիսյանը չի լքել խոսքի ապաստանը, չի լքել հավատը՝ թե մենք եւ մեր խոսքը ավելորդ չենք եւ թե ուրվագծվող նոր աշխարհը պատկերի է գալիս ըստ մեր խոսքի»: Հիրավի, Մ. Հովհաննիսյանի խոսքը հարազատ գյուղաշխարհի պատկերն է, որը գեղարվեստական գրականության առաջին երաշխիքն է: Ահա եւ Լեռնադէյուրը, որ դարերի խոսքն ու գրույցն ուսած բաժանվել էր թաղերի, «ամեն մի թաղով մի նահապետական ընտանիք՝ 7-8 եղբայրներով, նույնքան հարսներով եւ շատ երեխաներով, այնքան, որքան հարսների թիվը՝ քառակուսի բարձրացած»<sup>6</sup>: Գրողը բացում է լեռնադէյուրցիների երազների եւ արարման ուժի վարագույրը, հպարտությամբ նշում նրանց հողի մշակ, այգեգործ ու արհեստավոր լինելը, եւ ամենից կարեւոր բարեմասնությունը. «Բոլոր թաղերն էլ իրար բարեկամ էին: Իրար աղջիկ

էին տալիս, իրար քավոր կանգնում: Մինչեւ հիմա էլ այդպես է»<sup>7</sup>: Գրողի հարազատ Սաքունց թաղը հիմա չկա: Նախագահ Իշխանը սոցիալիստական գյուղ կառուցելու նպատակով ժայռեղեն բնակավայրից տեղափոխեց հարյուր տարվա այգի, որը բաժան-բաժան արին: Ու հին գյուղը սկսեց դատարկվել:

Մ.Հովհաննիսյանի ստեղծած յուրաքանչյուր պատկերի տողատակ շերտավոր պատկերներ կան, խորհրդանշող, խտացված կենսափիլիսոփայություն: Ահա եւ մի օրինակ քննարկվող պատմվածքից: Գյուղի «տները կառուցված են ժայռի քարեղեն պռնկին, որոնց արեւելահայաց պատուհանները բացվում են խոր կիրճի վրա: Պատուհանից ցած նայողի գլուխը կիրճի ահավոր խորությունից պտտվում է, թվում է, ահա-ահա տունը շուռ կգա եւ ահռելի դղրդոցով կթափվի կիրճը՝ խլացնելով այստեղ թափվող առվի վշտոցը: Ձորի երկու փեշերից բանջարանոցներ կային: Այդ բանջարանոցների վարունգն ու կարտոֆիլը, լորին ու տաքդեղը հիմա չկա: Դրանց համը ուրիշ էր: Ախր Յուրտ աղբյուրի ջրով էին ջրում: Դուշի տատը օրական քանի՜ անգամ էր Սաքունց կապով իջնում ձորն ու բարձրանում: Նրա համար գոյություն չունեին սրտի անբավարարվածություն, սրտի նուպա եւ նման բաներ: Հենց որ ուլերը մտնում էին բանջարանոցը, նա փեշերը հավաքում էր եւ գլորվում ձորը, եւ ձորը լցվում էր նրա ձայնով՝ հե՛, հե՛, հե՛...»<sup>8</sup>:

Ձորն էլ նրան էր ձեռ առնում.

- Հեե՛, հեե՛, հա՛-հա՛-հա՛, հի՛-հի՛-հի՛...»<sup>8</sup>:

Անցյալի եւ ներկայի հողեղեն եւ հոգեւոր կապի այս պատկերը կարելի է համարել մի էսսե կամ հենց դիմանկար: Սակայն գրողը չի բավարարվում դրանով: Ժամանակի եւ տարածության փոխհարաբերության պահանջը լուծվում է դարձյալ թեկուզ սեղմ, բայց ընդհանրացված խոսքով ու բնանկարով: Ժամանակները չեն խաթարել Լեռնադբյուրի ընթացքը: Սաքունց քերժը դարձել է քարահանք: Անձնավորելով բնությունը, գրողը մի կողմից ընդգծում է նահապետական անցյալի գեղեցկությունը, մյուս կողմից էլ ներքին այն հպարտությունը, որ ինքը այդ անցյալի շարունակությունն է, այդ անկրկնելի գեղեցկության ժառանգորդը, ինչպես ինքն է ընդհանրացնում. «Այդ քերժից էր կախված այն տունը, որտեղ ծնվել եմ ես»: Այստեղ արժե հիշատակել բանաստեղծ-գրականագետ Վ.Յակոբյանի դիտարկումը. «Կարդալով Մաքսիմ Զոլիաննիսյանին, այն պատկերացումն ես կազմում, որ ոչ միայն ինքն է կերտում իր հերոսներին, այլ հերոսներն, իրենց հերթին, վերակերտում են գրողին, այսինքն՝ աստվածային արարչությունն ընթանում է զուգահեռ»<sup>9</sup>:

Գյուղական ամբողջական կյանքի խտացված մի պատկեր է «Վանի» պատմվածքը: Գյուղացի-նախագահ-կուսշրջկոմ փոխհարաբերությունների ցուցադրմամբ հեղինակը բնութագրում է տասնամյակների մի ժամանակահատված, որտեղ սովետական տոտալիտար ռեժիմի երկաթե շղթայի շրջագծում էր մարդը: Հեղինակը կերպավորման արվեստի հմուտ կիրառմամբ ստեղծել է տիպական կերպարներ՝ կուսշ-

րջկոմի նման ուժեղ թիկունք, եւ խմբագրությունում բարեկամ ունեցող նախագահը, սրամիտ, վաստակաշատ, կոլխոզնիկ Վանին:

Պատմվածքում ցույց է տրված հղփացած նախագահի արարքները՝ ֆերմայի վարիչի գեղեցիկ կնոջ՝ Սաթիկի հետ ունեցած հանդիպումները, հանրային սեփականության ցաքուցրիվ անելը: Պատմվածքը շահում է պատկերների բնական հաջորդականությամբ, որի շնորհիվ ստեղծված է մի միասնական տրամադրություն: Գյուղացի Վանին նկատել է, որ նախագահը գիշերվա ուշ ժամին թանգունց տան ճանապարհին է: Նախագահին էլ գլխի է ընկել, որ Վանին արտի եզրին պատահականորեն ընկած գարու մի խրձի համար է անհանգիստ: Երկուսն էլ իրար հասկանում են: Բայց տարբերությունը մեծ է: Նախագահը աչքը տնկել է ֆերմայի վարիչի կնոջը՝ թանգունց Սաթիկին, իսկ Վանուն ի՞նչ, ընդամենը ճանապարհին սայլից ընկած գարու մի խուրձ է, որ ուզում է բերել հավերի համար:

Նովելային ավարտ ունի պատմվածքը: Կոլխոզի վարչության նիստում որոշում են Վանու տաս աշխօրը զանց անել, դաշտապահությունից հանել, «ֆելիետոնի փոխարեն» նյութ տպագրած թերթին էլ պատասխան գրել, որ փաստերը հիմնականում համապատասխանում են իրականությանը: Յեղինակը իր հերոսի՝ Վանու հուզաշխարհի ընթերցմամբ գնահատում է ժամանակի սոցիալական կացութաձեւի անարդարացիության արմատավորումը. «Նախագահի գործերն են, Վանին դրանում չի կասկածում: Բայց, ախր, մի

խուրձ գարու համար մարդուն խաղք ու խայտառակ կանեն: Ուրեմն ապրանքը ոտի տակ փչանար՝ լա՞վ էր, էլի... Վանու գլուխն այս մեկը սկի չէր մտնում: Նախագահի աներձագը թերթում էր աշխատում, նրա ձեռքով է գործը կազմակերպել: Վարչությունում ծպտուն չհանեց, բայց հո բուլորը գիտեն, որ դա նախագահի գործն է: Վանին, իհարկե, չի ասի այդքանը, բայց նրա շանտառությունը մտքում կպահի»<sup>10</sup>:

Այս մտորումներից հետո հանդիպում են նախագահն ու Վանին: Վերջինս ատելության ներքին մղումով նետում է. «Ուրեմն, ագրոնոմ Սուրենի ասելով «Ֆելիետոնի փոխարենը քիչ է, էլի, իսկական ֆելիետոն լիներ... Բա դու քո լալիկ լեզվով չասացի՞ր, թե խուրձը վերցրու՝ կտաս ձիուն: Ինչո՞ւ էդ բացբերանի ռեխը չփակեցիր»<sup>11</sup>: Զեղինակը իր հերոսի այս հարցադրումի պատասխանը չի տալիս, եւ հասկանալի է, որ խորհրդային ժամանակահատվածն էր դարձել բացբերան՝ անմեղ Վանիների հանդեպ:

Մ. Զովհաննիսյանի գրելաոճին հատուկ է հուճորը, որով մի նոր նրբերանգ է ձեռք բերում նրա արձակը: Ինչքան էլ դժվարին լինեին պայմանները, գրողի նրբանկատությամբ, ծիծաղը պահում էր մարդկանց, տառապանքին ու ցավին դիմակայելու ուժ ներարկում: Գրողն այդ հուճորը փոխառել է լեռնաղբյուրցիներից, հուճոր, որ դարձել է առանձին-առանձին տոհմածառերի առողջ շյուղեր, դարից-դար բերել հասցրել գրողի ապրած ժամանակաշրջանին: Այդ հուճորը ձեռ առնող է, բայց աշխարհաշեն է:

Զոլովման մեջ առնենք «Կուրան ապան» պատմված-

քը, որի շաղախը կյանքի լուրջ եւ շոշափելի խնդիրներ են, ծիածանված հունորի երանգներով: Կուքան ապան անցել է կյանքի ամենադժվարին ճամփաներով, տուն ու տեղ դրել, երեխաներ մեծացրել, թեւեր տվել եւ գյուղում մնացել իր պառավի հետ: Ու մի անգամ էլ երջանկություն է ապրում, երբ որդին՝ Վահանը, իր բաժնի վարիչի՝ Մարությանի հետ գալիս է գյուղ: Ծնողները որդուն եւ հյուրին ընդունում են սրտաբաց: Կուքան ապան որձատած այծը մորթում է, թարմ խորոված անում, հյուրասիրում: Եվ հենց սեղանի շուրջ բացվում է Կուքան ապու հունորի կծիկը: Նրա առաջին հարցը Թումանյանի ծերունու խոսքի երանգով է հնչում. «Շրջանից եկած մարդ եք՝ ինչ կա, ինչ չկա, աշխարհի վրա, պատմեք լսեմք»: Տղան հոր ծայնի մեջ որսում է ծանոթ ծաղրը: Եվ ընթանում է ժամանակաշրջանի անհմաստ էությունը բնութագրող երգիծական երկխոսությունը.

- Ի՞նչ է, քաղխմբակի չե՞ս հաճախում,- հոր հանգը վերցրեց Վահանը, գուցե թերթ չե՞ս ստանում:

- Վա՛յ, քեզ մատաղ, ոնց չեմ ստանում, բա քո մերը պարապ ժամանակ ի՞նչ է անում:

Շարունակվում է զրույցը եւ աստիճանաբար բացահայտվում է նաեւ ծերունու դժգոհությունը որդուց՝ Վահանից: Մերժվել է ծնողների խնդրանքը: Բազմաերեխատեր Վահանը չի համաձայնել մեկին գյուղ ուղարկել: Եվ երբ Մարությանը դիմում է Վահանին՝ ինչու է մերժել ծնողներին, Կուքան ապան հունորախառը պատասխանում է.



- Բա քաղաքի երեխան գյուղի օդը կվերցնի՞,- միամիտ-միամիտ ասաց Կուքանը: - Չարսն ասում է, որ գյուղի օդը սուր է, հետո էլ ասում է՝ երեխաներին մանկապարտեզ պիտի տամ, որ ոտանավոր սովորեն: Բա մեր կինը ոտանավոր գիտի՞:

- Կուքան ապա, դու էն պատմիր, թե ոնց ես մեր շրջկոմի քարտուղարին ձեռ առել,- զրույցի թեման փոխելու համար ասաց Մարությանը:

Գյուղ է այցելում նաեւ քարտուղարը, եւ տեղի է ունենում քարտուղարի եւ Կուքան ապու զրույցը, որ մի կողմից կյանքի մատուցած զարմանալի դասն է, մյուս կողմից ծերունու հումորախառը զարմանքը: Կուքան ապան խոսում է հումորով, բայց չգիտե՞ ժպտա՞, թե՛ լա: Պարզվում է, որ որոշել են Կուքան ապուն ուղարկել ֆերմա, չնայած՝ ծերունին կյանքում այդ գործով չի զբաղվել: Քարտուղարի եւ Կուքան ապու միջեւ սկիզբ առած երկխոսությամբ բացվում է գաղտնիքը: Պարզվում է, որ որդին՝ Վահանը, շրջկոմի կողմից անրացված է իրենց գյուղին, Վահանն էլ դիմում է հորը. «Լեռնաղբյուրի գործերը որ տապալվեն, շրջկոմի առաջ ես պիտի պատասխան տամ»: Չոր պատասխանի մեջ հնչում է ծնողական տագնապ-հումորը. «Բա ես կթողնե՞մ, որ դու խայտառակվես...»<sup>12</sup>:

Վերջապես Կուքան ապան գնում է ֆերմա, կնոջը՝ Մարիամին թողնելով մենակ: Նկարագրվում է ֆերմայում անմարդ Օսաննայի հարգալից վերաբերմունքը Կուքան ապոր հանդեպ, ապա Մարիամի խանդը:

Պատմվածքի հյուսվածքի մեջ հունորի վառ դրսեւորում է Վանիի վրիժառութունը նախագահից: Վանին, որ նախորդ նույնանուն պատմվածքի հերոսն է, Թանգունց Սաթիկի դռանը թակարդ է սարքել ու նախագահին բռնել գիշերվա կեսին: Դա դեռ բավական չէ, Վանին բաց է թողել Օհաննեսի կատաղած շանը, որն էլ շալվարահան է արել նախագահին: Հեղինակը շարունակում է. «Շան հաչոցի ու Սաթիկի ղժղժոցի վրա մարդիկ հավաքվում են: Նախագահի կինն է գալիս, Սաթիկի եղբայրն է հրացան քաշում: Մի խոսքով, ստացվում է թատրոն»<sup>13</sup>:

Այս պատմվածքը եւս նովելային ավարտ ունի:

Նախագահին հանում են աշխատանքից ու նոր նախագահ դնում Վահանին: Կուքան ապան ուրախանում է, որ Վահանը կգա գյուղ եւ միաժամանակ զարմանում, թե հարւր ո՞նց է համաձայնել, որ տեղափոխվի Լեռնաղբյուր:

«Գյուղացի մարդիկ» շարքը մի ամբողջություն է կազմում: Ներքին կապը ամուր է կոմպոզիցիոն առումով: Դրանով էլ պետք է բացատրել այն հանգամանքը, որ նախորդ պատմվածքների նույնանուն հերոսները հանդես են բերված հաջորդ գործերում: Մի շարք պատմվածքներում երեւում են Վանին, Կուքան ապան եւ ուրիշներ, սակայն միանգամայն նոր իրավիճակներում, բնավորությունների բացահայտման նոր կողմերով: Նրանցով ընդգծվում է գյուղական կոլորիտը՝ հոգսերի, տագնապների, ակնկալիքների, կենցաղային սովորությունների դարավոր կնիքով: Այդ գործերի մեջ է մտնում նաեւ «Բուրի» պատմվածքը:

Լեռնադքյուրի կյանքի ընթացքը ներկայացնող խիստ բնութագրական գործ է «Բուդին» պատմվածքը: Հնարավոր չէ չհաստատել, որ գրողը եւս նկարագրվող կյանքի եւ հոգսի մասնակիցն ու կրողն է: Դրանով էլ պետք է բացատրել նյութի պատկերման մաներան: Նախ բացվում է դարբին Մելիքի դարբնոցի վարագույրը, եւ ինչպես բեմում, ներկայացվում գյուղի ամռանին աշխատանքներում եղած պահանջները, գյուղից քաղաք եկածների եւ այստեղ ապրողների վարքն ու բարքը, բրիգադիր Սավադի, Քոռ Մութանի, Կուքան ապու բնութագրական գրույցները եւ ապա այդ համապատկերի վրա՝ գլխավոր հերոսը՝ կաղ Բուդին, որ Մ. Հովհաննիսյան-արձակագրի ինքնատիպության վկայագրերից է: Բուդին, որպես կերպար, աչքի է ընկնում իր եւ երկրային արարքներով, եւ ինքնատիպ մտածողությամբ: Երկրայինը հաստատվում է լեռնադքյուրցուն հատուկ աշխատասիրությամբ, ազնվությամբ, պատվախնդրությամբ, ընտանիքի հանդեպ ունեցած մի քիչ պարզամիտ, բայց ծովածավալ մաքրությամբ: Իսկ մտածողությունը թելադրված է հարազատ լեռնաշխարհում իր նախնիների հոգեբանության, հերոսական ոգու, չխաթարվող խղճի, ազգային արժանապատվության դարավոր կուտակումներից: Եվ գրողի վարպետության շնորհիվ նրա ոգեղեն եւ հողեղեն բարեմասնությունները բացահայտված են ներդաշնակությամբ, հանոզիչ: Այդպիսին է Բուդին պատերազմից առաջ, բանակում ծառայելիս, զինվորական շարքերում անհամաչափ քայլելիս, հրամանատարից թաքուն կարոտի զգացումով

տուն վերադառնալու պահերին, Սերգու դավաճանության հասնող վերաբերմունքից եւ վերջապես բանակում իրեն կպցրած «դասաւիքի» եւ «շտրաֆնիկի» պիտակը մաքրելիս:

Պատմվածքում հումորախառն երանգների հյուսվածքով բացահայտվում է Բուդու ամբողջական կերպարը՝ համեմված ֆաշիստական հորդանների դեմ մղված պայքարի հերոսական դրվագներով: Բնական են Բուդու, հրամանատար Ռիժիկի կերպարները: Հետպատերազմյան շրջանում գյուղում տեղի ունեցող իրադարձությունների նկարագրությունը մի նոր ավիշ է հաղորդում Բուդու կերպարին, երբ նրան նշանակում են դպրոցի ֆիզկուլտուրայի եւ ռազմական գործի դասատու, իսկ Սերգուն՝ փոստատար: Ապա Սերգու բանասարկությամբ Բուդուն ազատում են ուսուցչի պաշտոնից՝ իբրեւ շտրաֆնիկի:

Մ. Հովհաննիսյան-արձակագրի հուզաշխարհը ձեւավորվել է գյուղաշխարհի ներսում, որն ունի մի ուրիշ առավելություն: Նրա կերպարները Լեռնադըրյուրի գյուղացիներ են, սակայն նրանց բնութագրող գծերը համամարդկային: Վերցնենք «Բուդի» պատմվածքի մուտքի խտացված խոսքը գլխավոր հերոսի վերաբերյալ. «Ուտքի ցավը Բուդին պատերազմից է բերել: Ուտքում մնացած արկի բեկորը ձմեռները շարժվում է ու նրան տեղատակ գցում: Բուդին պատերազմից մի արկի բեկոր է բերել եւ յոթ-ութ շքանշան ու մեդալ: Մեկ էլ շտրաֆնիկի անունը: Բուդու պատմությունը բոլորը գիտեն, բայց էլի հարմար առիթին նրան նորից

են պատմել տալիս՝ երբեմն ուղղելով սխալները: Հիմա Բուդին տրամադրություն չունի՝ ոտքը ցավում է, իսկ ոտքից ավելի՝ սիրտը: Կինը երեկ այնպես լուրջ հիվանդացավ, որ ինքը ստիպված էր ոտի կանգնել:

Իսկ շտրաֆնիկի պատմությունը, իրավ, հետաքրքիր է, լսում ես ու չգիտես՝ խնդա՞ս, թե՞ լաս»<sup>14</sup>:

Հարազատ աշխարհի մի գործելեն են կազմում «Բուդի» պատմվածքի պատկերավորության միջոցները՝ համեմատությունները, մակդիրները, փոխաբերությունները: Բերենք օրինակներ. «Բուդին կրակելում՝ ոնց որ պետք է, մի վերստի վրա խնձորը կարող է կիսել, թեկուզ տար ֆելդշեր Այվազի կշեռքովը ստուգիր», կամ «դասակի հրամանատարը մի շեկ տղա էր, ազգանունն էլ Ռիժիկ: Ճշմարիտ որ Ռիժիկ՝ սոխի կլեպի պես շեկ-շեկ ոնց որ աղբահարում, արեւի տակ ընկած պեզնիկ»: Իսկ երբ հրամանատար Ռիժիկը Բուդուն շշպռում է. «Ռիժի չորտ, ե՞րբ ես քայլելը սովորելու»: Մի օր էլ Բուդին չի դիմանում, ասում է. «Շեկ եմ, բայց քեզ նման գեշումեշ շեկ չեմ: Սկի քո գույնի ճակնդեղը մեր գյուղում թթու չեն դնում»<sup>15</sup>:

Այստեղ արժե ընդգծել անվանի արձակագրի բնորոշ մի կարեւոր առանձնահատկություն եւս: Դա վերիուշի եւ գրական դիմանկար ստեղծելու հնարանքն է, ի օգուտ գրողի, որ հանդես է բերվում միասնաբար: Գրողի պատմվածքներում անձնավորման գործոնն այնքան եւ այնպես է ընդգծված, որ վերիուշ են ապրում եւ բնությունը, եւ առարկաները: Վերցնենք «Դրախտի ձորում» պատմվածքը: Կար-

դում ենք մուտքը. «Դրախտի ծորում աշուն է: Աշունը մարմանդ շաղում է Դրախտի ծորում: Դրախտի ծորը լուռ թախծում է: Արդյոք իր անցած կանաչներն է հիշում, իր խենթ գարունները...

Քայլում են լքված այս հովտով, նայում մոշի թփերին, Լալիկի խոսքին են ականջ դնում, հուսահատ հարցում են անում ծանոթ փռնչեցնուն: Մոշի թփերում շորերիս ծվեցներն են թողել, որտե՞ղ են դրանք: Լալիկ աղբյուր, պատմիր, խնդրում են, իմ մանկությունը: Գուցե դու, հնօրյա փռնչեցի, հիշես անցած օրերը: Գիտե՞ս, քո պտուղներն իմ մանկության համն ունեն՝ դառնահամ-քաղցր: Դե, խոսեք, պատմեք իմ մանկությունը...»<sup>16</sup>:

Հիրավի, դառնահամ-քաղցր մի մանկություն է ներկայանում անցյալից, որ բնութագրական է մի ամբողջ ժողովրդի ճակատագրին՝ պատերազմական շրջանում: Պատմվածքը կարդալուց հետո մտորում են՝ սա արծա՞կ է էպիկական նրբերանգով, թե արծակ բանաստեղծությո՞ւն, որի հուզական ծփանքները արցունք են քամում սրտիցդ: Այստեղ արվեստի առեղծվածային օրենքը հուշում է, որ Մ.Հովհաննիսյանը էպիզմի եւ լիրիզմի շնչի ստեղծագործող է: Իսկ դա բխում է տառապանք ու ցավ տեսած գրողի հուզաշխարհից, կյանքի հարվածներն իր սրտի վրա զգացած արվեստագետի սպիացած վերքերից: Դրախտի ծորի լանջերին խաթարված ճակատագրեր են դաջվել, հույսեր փշրվել, օրեր խունացել:

Արծակ այս բանաստեղծության կայացած կերպարներ են Մանուկը, Սաթիկը, որոնք կյանքին հարաբերվում էին

մանկության փշուր-փշուր երազներով, ականատես լինում իրենցից մեծերի հասունացած դառնությունից ակունքված ամոթաբեր հաճույքին՝ կյանքի հյուսթով լիքը-լիքը Սիրուշի կատակ խաղին կաղ, խելքից էլ մի քիչ թույլ Մելիքի հետ, ապա Սիրուշի սիրախաղին՝ Արշոյի հետ: Այս երեւոյթները պատմվածքի հերոսի համար ցավաբեր մրմուռներ են: Ախր Սիրուշը նրա քեռու նշանածն էր, որ կռվում էր հեռո՛ւ-հեռո՛ւ ափերում: Պատերազմ էր, որ Լեռնադքյուրի նահապետական օրենքները մեջ էր բերում ամոթալի երեւոյթներ, որի զոհն է դառնում եւ Սիրուշը. «Ձմռանը Սիրուշը հեռացավ Լեռնադքյուրից: Առմիշտ հեռացավ: Երբեմն-երբեմն վատ լուրեր էին գալիս քաղաք գնացած Սիրուշից: Եվ մարդիկ անիծում էին Դերունց Արշոյին:

Կյանքը չէր ստացվում Դրախտի ծորում...»<sup>17</sup>:

Պատերազմական տարիների հասցրած ճակատագրական հարվածները գեղարվեստական մի պատկեր է «Գյուղի ծուռը» պատմվածքը: Այն սկսվում է շրջանից եկածի դասախոսության երգիծական նկարագրությամբ՝ հյուսվածքի մեջ ներառված մարդկանց հոգնած աշխուժությունն ու կատակները: Սակայն կյանքը հիմնահատակ փոխվում է, երբ հասնում է պատերազմի բոթը:

Կոմունարը, որի բնավորության մեջ ինչ որ ծուրթյուն կար, սիրում էր Ծովիկին: Հարազատները նրան հորդորում են՝ անուսնանալ, մեկին տուն բերել: Սակայն Կոմունարի սիրտը Ծովիկի վրա էր եւ այդ սերն արտահայտում էր սրնգի նվագով:

Պատերազմը զինվոր դարձրեց նաեւ Կոմունարին: Ու աշնան մի տխուր օ մարդիկ գյուղխորհրդի նախագահ Քոռ

Մուքանի հանձնարարությամբ, պատմության դասատու ընկեր Ահարոնը ծոցից հանում է թերթը եւ հուզված կարդում. «Հայ ժողովրդի հերոս զավակը ենթարկվեց բազում տանջանքների, գազանաբար խոշտանգեցին նրան, բայց նրանից չկարողացան ոչ մի խոսք կորզել: Այսպես զոհվեց սովետական քաջարի զինվորը՝ հայրենիքի անվեհեր որդին»<sup>18</sup>:

Անտեր մնացած Սահակի տանը Կուքանը թելով սրբում է սնդուկի փոշին, բարձրացնում կափարիչը, որտեղ նորահարսի շորեր կային, շորերի վրա Կոմունարի սրինգը եւ մի փոքրիկ լուսանկար: Ծովիկի լուսանկարն էր:

Մ.Հովհաննիսյանի պատերազմական թեման արժարծող պատմվածքներում կերպարների մի պատկերասրահ է հանդես գալիս: Լավն այն է, որ նրանք իրար չեն կրկնում: Հոգեբան գրողը կոմպոզիցիոն կառուցվածքի տարբեր միջոցներով եւ ձեւերով ցույց է տալիս կերպարների ապրումները կյանքի արտաքին եւ ներքին պայմանների հորձանուտում: Իրականությունը թելադրում է կերպարների անհատական բնավորությունների դրսեւորումը: Այս առումով խոսում օրինակ է «Նշանի մատանին» պատմվածքը: Պատումի մեջ առնելով 1930-ական թթ. տեղի ունեցած քաղաքական-հասարակական իրադարձությունները, գրողը կերտում է կոմսոմոլ Վաչեի կերպարը, առանձնապես ընդգծելով նրա սերը Աշխենի հանդեպ: Պատմվածքում խորհրդանիշ է բերվում նշանի մատանին, որ նվիրել էր Վաչեի մայրը հարսին՝ Աշխենին: Սկսվում է պատերազմը, ռազմաճակատ



Ե՛մ մեկնում Վաչեն: Մի օր Աշխենին կանչում են զինկոմիսարիատից եւ հանձնում Վաչեի «սեւ գիրը»: Հաղթահարելով ժամանակի հարուցած բոլոր դժվարությունները, քաղաքից գյուղ տեղափոխված Աշխենը խնամում է երեխաներին՝ Ռութենին եւ Արամին եւ Վաչեի հիվանդ մորը:

Պատերազմից վերադարձած մի թեւանի Գուրգենը առաջարկում է Աշխենին՝ ամուսնանալ հետը: Աշխենը խղճում էր նրան, բայց ամուսնանալ նրա հետ՝ չէր կարող: Ախր, ո՞վ կարող էր փոխարինել Վաչեին:

Դրամատիկ մի պատկեր է պատմվածքի ավարտը: Գալիս է երջանիկ լուրը՝ վերադառնում է ամուսինը՝ իր կոմսունով Վաչեն: Աշխենը դիմավորում է Վաչեին: Սակայն նրա կողքին մի կին ու փոքրիկ աղջիկ շվար կանգնած: Վաչեն մոտենում է Աշխենին եւ լսում նրա շշուռը:

Գրողը հուզական արտահայտչամիջոցներով ասես մարդկային ճակատագրերի մի լեզունդ է հյուսում. Աշխենի «ծայնի մեջ աղաչանք կար, գունատ մի հույս: Թող Վաչեն հերքի, թող ասի, որ այն շվար կանգնած կինը, այն անմեղ փոքրիկ աղջիկը անծանոթ են, որ ավտորուսում է հանդիպել նրանց:

- Այո, Աշխեն, իմ աղջիկն է... Ներիր, կյանքն այսպես դասավորվեց:

- Նա...

- Նա էլ էր Օվսենցիմուն...

Գլուխը նորից պտտվեց: Ձեռքը տարավ դեպի գլուխը ու նկատեց նշանի մատանին: Իսկույն ձեռքը տարավ տեսե

ու մատանին աննկատելի հանեց:

Աշխենն այլևս չհագավ իր նշանի մատանին...»<sup>19</sup>:

Մ. Հովհաննիսյանի գեղագիտական ընկալումների եւ դրսեւորման բեկված ճակատագրեր կրողներից առաջինը Հեղուշն է: Նրա ամուսինը՝ Աշոտը, նետվեց Մեծ հայրենականի հրդեհների մեջ՝ հաղթանակով վերադառնալու հույսով, բայց այլևս չվերադարձավ, սիրտն ընծայեց Մեծ Միություն կոչված երկրին, որ իր Արցախն ու Հայաստանը ազատ ապրեն: Աշոտը չվերադարձավ, իսկ 21-ամյա կինը՝ Հեղուշը, «ծանր շիրմաքար դրեց իր սրտին ու հաշտվեց»: Կյանք է... անսպասելի իրադարձությունների կծիկ: Բանակից վերադարձած Մուշեղը ձորի լոբուտում հանդիպում է արդեն 25-ամյա Հեղուշին: Ծնվում է Սոնան, որը դառնում է Հեղուշի «ցավերի ու դարդերի պատճառն ու ունկնդիրը»: Սոնան էլ ամուսնացավ ու գնաց: Գարեգինը, որ չէր մոռանում զոհված հորը՝ Աշոտին, գնացել էր քաղաք՝ հորեղբոր մոտ: Տարիներ անց, առաջին անգամ գյուղ է գալիս Գարեգինը. Հեղուշը խորհում է, որ Գարեգինը կմնա որոշ ժամանակ ու կգնա: «Ի՞նչ կլինի իմ կյանքի վերջը... Ի՞նչ իմաստ ունի ապրելս»: Տառապանքի ծովի մեջ է նա: Հերսիկը, որ Մուշեղին էր սիրում, բայց չէր սպասել, ամուսնացել էր ուրիշի հետ եւ դարձյալ դժբախտացել: Բեկված ճակատագիր ունեցող Հեղուշը, որ գյուղում մնացել էր մենակ, չի մոռացվում: Գարեգինը որդի է ունենում, անունը կնքում զոհված հոր՝ Աշոտի անունով, որը ծնողների ցանկությամբ գալիս է՝ ապրելու տատիկի՝ Հեղուշի մոտ: Պատմվածքն ա-

վարտվում է լավատեսությամբ: Ինչպես գրում է հեղինակը «Չեղուչը պարզ գիտակցեց, որ ապրելը հիմա իմաստ ունի: Չկարողացավ զսպել արտասուքները, երջանկության արտասուքները»<sup>20</sup>:

Կյանքի թելադրած սոցիալ-հոգեբանական հարցադրումների գեղագիտական լավագույն պատասխաններից է «Կոխ» պատմվածքը: Կերպավորման հնարանքի մեջ առնելով ներկան՝ անցյալի դառն հուշերի հենքի վրա, Ս.Յովհաննիսյանը գրողի իր ինքնատիպության մի խոսուն վկայություն է ստեղծել: Շարադրանքի պատկերավորությունը, տրամաբանական անցումները, իրականության անսքող ցուցադրումը, կերպարների կենցաղային եւ հասարակական վիճակների հակադրումը պատմվածքի հաջողության գրավականներն են: Ստեղծագործության մուտքում գրողը ընթերցողին ծանոթացնում է Հարութի հետ, որը դժվարանում է լուծել տեխնիկումի առաջադրած խնդիրը, ախր ինքը «ցաքատ կարող է բռնել, բահ ու գերանդի, հիմա էլ տրակտորի դեկ: Իսկ գրչակոթի ձեռքն ուրիշ է՝ պստիկմատիկ ու ցորեն հացի պես սպիտակ, հացի վրայից էլ կարագ քսած: Իսկ իր մատները՝ չամգոտ փետեր: Մեկի երեսով տար՝ արյուն կկաթի: Դրա համար էլ խնդիրը չի ստացվում ու կուրսայինն էլ հետը»<sup>21</sup>: Հարութի համար կյանքը միշտ եղել է դժվարին կոխ... Կոխ՝ այն օրերին, երբ ինքը դեռ պատանի, իր ուսերին էր նաեւ մորը բաժին ընկած տատի, երկու քույրերի հոգսը: Խնդրի լուծման ընթացքի մեջ Հարութը հիշում է, թե ինչպես է փայտը բարձել էշին եւ տարել քաղաք վաճառե-

լու, առաջին անգամ հանդիպել երես առած, բարվոք կյանք ունեցող Գարիկին: Ապա հեղինակը իրադարձության մեջ է բերում Հարութի համագյուղացի Արշոյին, որ արդեն աշխատում էր որպես «գյուղտեխնիկայի» շրջանային բաժանմունքի պետ եւ ուշադրություն չէր դարձնում հայրենի գյուղի հոգսերին:

Հարութը հայրենասերի սրբազան օրինակ է: Նա ազնիվ է, արդարամիտ, հայրենի գյուղի նվիրյալ: Նա խարազանում է Արշոյի անտարբերությունը հարազատ գյուղի պահանջների հանդեպ, նրա հաճոյանալը շրջկոմի քարտուղարին: Գյուղը ավելի լուրջ հիմնախնդիր է քննարկում՝ կապված կուսակցության շրջկոմի ցուցադրական քաղաքականության հետ, որի պատճառով քայքայվում էին շատ գյուղեր:

Արշոյի արդարացման պատճառները չի ընդունում Հարութը. «Հարութի գլուխը չի մտնում, թե կարող է մարդ իր հարազատ գյուղին ուրիշի աչքով նայել: Ախր, պորտոլ այստեղ են կտրել, այս հող ու ջրի ծնունդ ես, ոնց կարող ես անտարբեր մնալ... Մարդու սիրտը պիտի ցավի իր գյուղի համար... Ի՞նչ անենք, որ հիմա քաղաքացի ես դարձել, բայց հո մեր գյուղի ծնունդ ես»<sup>22</sup>:

Ճշմարտության դեմ մեղանչած չենք լինի, եթե ընդօժենք, որ կոմունիստական քարացած կացութաձեւի օրերին հեղինակը համարձակորեն թելադրել է կյանքի բոլոր էտապներում հայրենի գյուղը չմոռանալու անհրաժեշտ պահանջը: Իսկ ի՞նչ է ժամանակը. «Ժամանակը՝ ոնց որ սելավ,

ամեն ինչ սրբում-տանում է: Ժամանակի մեջ շատ բաներ մոռացվում են: Շատ, բայց ոչ ամեն բան: Բաներ կան, որ չեն մոռացվում»<sup>23</sup>: Եվ Հարութը, որ որոշել էր խնդրի լուծման համար օգնություն խնդրել բարձրագույնն ավարտած Արշոյից, այլևս չի խնդրում: Պատմվածքն ավարտվում է կյանքի հանդեպ իր ազնիվ ու անպարտելի համոզմունքն ունեցող Հարութի վճռականությամբ. «Արշոյի առաջ վիզ չեմ ծռի, մտքում որոշեց նա ու դուրս եկավ գրասենյակից: Տանը բոլորը քնել էին: Նա մանր քայլերով մոտեցավ հացի սեղանին մնացած տետրին, որտեղ չլուծված խնդիրն էր: Գրիչն առավ ձեռքը ու նորից կոխ մտավ խնդրի հետ: Կյանքի հետ շատ է կոխ բռնել, սովոր է: Կոխ է մտել ու հաղթել...»<sup>24</sup>:

Գյուղական կյանքի հմուտ գիտակ Մ.Հովհաննիսյանը գեղանկարչի դիտողունակությամբ կարողանում է շոշափելի գույներով ներկայացնել գյուղացու թե առտնին աշխատանքները եւ թե մարդկանց բարոյահոգեբանական մթնոլորտը: Այս առումով խոսուն օրինակ է «Շենամեջ» պատմվածքը: Չնայած նրանում թվարկվում են շատ անուններ, որի պատճառով նրանցից ոմանց դիմանկարները թերի են մնում, սակայն ընդհանրության մեջ հայկական գյուղի եւ հայ գյուղացու դարավոր հոգսն ու աշխարհընկալունը ներկայացնող հաջող գործ է: Շենամեջը ասես թատերական բեմ է, որտեղ հանդես են գալիս գյուղատնտես Սուրենը, գյուղացիներ Վանին, Մուքանը, Սավադը, Աղավնիկը, Մեխակը, որոնք ունեն իրենց բնավորությունը՝ հեն-

քով նահապետական, հյուսվածքով՝ նոր օրերի մատուցած մղումներով ազնիվ-խորամանկ, աշխատասեր-պաշտոնատենչ, անբասիր-խաթարվող: «Շենամեջ»-ը Լեռնադքյուրի վկայականներից է, որի վրա գրողի գեղագիտական իդեալի կմիքն է՝ գեղարվեստական ինքնատիպ երանգներով:

Կյանքի տարողունակ շերտերի եւ մարդկային յուրովի ճակատագրերի հրաշալի հյուսվածքներ են Մ.Յովհաննիսյանի ստեղծագործությունները: Այդ է վկայում նաեւ «Օսաննա» պատմվածքը: Այստեղ իրականության հանդեպ գրողական մեղանջումի ոչ մի հետք չկա: Եվ լավը դա է, լավը նաեւ այն է, որ նրա խոսքը կոլորիտային եւ պատկերավոր է: Օսաննան ամուսին չունի, միշտ աշխատել է կոլխոզի ֆերմայում՝ որպես կովկիթ: Մեծացրել է տղային՝ Անուշավանին, որ կրթություն ստանալուց հետո մնացել է Երեւանում եւ աշխատում է շրջկոմում, ամուսնացել է, ընտանիքի տեր է, աղջիկը՝ Աղավնիկը, գյուղում ամուսնացել է, ունի երկու երեխա, բայց բաժանվել է ամուսնուց: Ահա պատմվածքի ատաղձը: Սակայն Օսաննայի միջոցով հեղինակը ոչ միայն բնութագրել է առաքինությունը, այլեւ խառագանել է կյանքի մատուցած կեղտերի մեջ խրված, կենսական արատներ ունեցողներին: Դա Աղավնիկի ամուսինը՝ Մեխակն է, որը «կապվել է փոստի Սիրունիկի հետ ու կին-երեխա թողել»: Ապա Մեխակի հայրը՝ Օհաննեսն է, որին չի ներում Օսաննան. «Լա՛վ, Օհաննեսը իր չալ մորուքից չամաչե՞ց, ինչո՞ւ իր անառակի կապը չքաշեց: Լեզուն գոմեշը կոխել է՞ր, որ ասեր՝ այ որդի, կմիկ-երեխայի տեր

«ես, ձեռք քաշիր անամոթ լրբից»: Օսաննան չի հաշտվում նաեւ որդու՝ Անուշավանի մեղմ բնավորության հետ, որ ընտանիքում խեղճ է պահում իրեն. «խեղճ տղասս ի՞նչ անի, մի սեւ օձի է պատահել ու ձեռքին տանջվում է... Պաշտոնը քանի կոպեկ արժե, որ օր ու արեւ չունի: Մայր ու աղջիկ առավոտ իրիկուն երեխայիս միսը ուտում են: Մեկը չկա, ասի՝ այ հարս Նազիկ, այ տիկին Աննա, կողքից նայողը ի՞նչ կասի, որ տան տղամարդը մեծ բոյն առնի, թե ինչ է՝ գնում եմ կնկանս համար փալաս-մալաս առնելու, թե ինչ է՝ խանութից պետք է կարագ առնել, թե ինչ է... փողը տանը, դուք տանը, գործներիդ անունը ի՞նչ է, առեք, էլի: Մեղավորը Անուշավանն է, շատ է թույլ տվել»<sup>25</sup>:

Իսկ երբ Անուշավանը դիմում է մորը. «Այ մեր, ծեծե՞մ»: Մայրը պատասխանում է. «Մտերը չեն հալի... մեկ կնկան եմ ծեծում, մեկ էլ մեկին, որ դու լավ գիտես, կծեծեն, որ տիրոջը սովորի»:

Իհարկե, ինչպես տեսնում ենք՝ մոր եւ որդու միջեւ անցյալի եւ նորի հակադրությունն է ընդգծված: Սակայն, ամեն դեպքում Օսաննայի շրթերով խոսում է հայոց նահապետական ընդունելի մի սովորություն՝ ընտանիքում տղամարդն իր տեղը պիտի ունենա, կինը՝ իր: Ասել է, թե՝ Օսաննան չի ընդունում մայրիշխանությունը:

Օսաննան քաղաք էր գնացել՝ որդու մոտ որոշակի օրեր հանգստանալու: Բայց արի ու տես, «Չարսի հետ յուրա չգնաց: Խեղճ տղան էլ չգիտեր, թե ինչ անի: Մոր կողմն էր պահում՝ կինն էր պռոշ անում, կնոջն էր պաշտպանում՝ մայրն էր

վիրավորվում: Պակասն էլ զոքանչն էր լրացնում: Անամոթ, անամոթ, քալթառ կին է, բայց այնպես է զուգվում-զարդարվում, կարծես հարսատեսի է զարդարվում՝ էլ պռոշները քսել, էլ մագերը գույն տալ... Մեկը չկա, որ հարցնի, ա՛յ, հերամեռ, բա քո երեսին մեռոն չեն քսե՞լ, ամոթ ու հարգանք չունենա»<sup>26</sup>:

Դժվար չէ նկատել, որ Օսաննան ջատագովում է դարերով սրբագործված «երեսի մեռոնի», ամոթի եւ հարգանքի պահպանումը:

Մ.Յովհաննիսյանը պատկերվող թեմատիկայի շրջանակներում ստեղծում է գործեր, որոնք թեկուզ շարունակվող կյանքի պատկերներ են, սակայն չեն կրկնում միմյանց: Ամենից կարելուրը կերպարների տարբերակումն է: Եվ նշենք, որ գրողը այդ առումով նախանձելի վարպետություն է ձեռք բերել: Օրինակ, «Մրցակիցներ» գործում պատմողը ականատեսն է՝ պատմում է Հարութի՝ ամառային հնձի ժամանակ գյուղացիների ցուցաբերած աշխատասիրության, աճեցրած բերքի հանդեպ ունեցած սրտացավության առումով: Այս գործի մեջ Մ.Յովհաննիսյան գրողին մեծապես օգնել է Յովհաննիսյան-լրագրողը: Գեղարվեստական ակնարկի ընձեռած հնարավորությունների շնորհիվ բնութագրական կերպարներ են դարձել Մուխան ապան, Համոն, Ծաղիկը, Սուրենը, Շահենը, Համբարձումը: Վերջապես մրցությունը շահում է Համբարձումը, որ հոգատարություն է ցուցաբերել ոչ միայն ամբարվող ցորենի, այլև ծղոտի վերաբերյալ, գիտակցելով, որ ծղոտն էլ անասունների համար է բերք:



Սակայն պատմվածքն ունի քննարկման մի կենսական երանգ, որով էլ պայմանավորվում է գրողի փիլիսոփայական մոտեցումը: Դա Համոյի եւ Ծաղիկի հանդիպումն է եւ վերջում կատարված հեղինակային ընդհանրացումը. «... Հիմա գնում ենք գյուղ: Հունձը վերջացրել ու գնում ենք գյուղ: Պետք է, որ տրամադրությունս բարձր լինի, բայց չէ, ինչ որ թախիժ կպել է ինձ ու պոկ չի գալիս: Ու ես երկար ժամանակ մտածում եմ, թե ինչո՞ւ մարդիկ սիրում են ուրիշի արյունը պղտորել: Ախր, ինչո՞ւ»: Սա մարդկային բնավորության մեջ ազնվությունն ու ընկերասիրությունը միշտ արթուն պահելու պահանջ է:

Կյանքի համար անչափ կարեւոր հիմնախնդիր է արժարժված *«Բարձրագույն Արեւհատը»* պատմվածքում: Ծնողների վեճը բորբոքվում է միայն մի առիթով, թե ինչո՞ւ նրանց որդին չի ցանկանում բարձրագույն կրթություն ստանալ՝ մոռանալով երիտասարդի նախասիրությունը եւ կարողությունների դրսեւորման սահմանները: Հոր՝ Սավադի եւ մոր՝ Արեւհատի վեճի ավարտը նովելային հետաքրքիր հանգուցալուծման է տանում: Մինչ Արեւհատը տառապում է որդու՝ Վանիկի բարձրագույն կրթություն ստանալու ծարավով, Վանիկը տուն է գալիս իր սիրած աղջկա՝ Աշխենի հետ եւ ներկայացնում ծնողներին: Հետաքրքիր ու կենսաստատ, ծնողական ներողամիտ վերաբերմունքի ընդգծումով է ավարտվում պատմվածքը: Երբ Վանիկը երջանկության ժպիտը դեմքին ներկայանում է Աշխենին, տեղի է ունենում ամեղծվածային-հոգեկան մի երեւոյթ. «Գոգնոցի տուտը վայր ըն-

կավ Արեւիատի ծեռքից եւ կուտը թափեց: Արեւիատի աչքերում շողացին երկու ջինջ արցունքներ: Ցավի արտասուքներ էին, թե՞ ուրախության, տարիների երազանքի փլուզման, թե՞ որդու երջանկությանը ուրախացող մոր արցունքներ: Ոչ ոք չիմացավ: Իսկ Սավադը դեռ երկար ժամանակ, բուլորից անկատ, կանգնել էր մի կողմ, ջարդված փայտը գրկին:

Ժամանակը գարնանամուտ էր, օրը՝ արեւուտ»<sup>27</sup>:

Մ. Հովհաննիսյանի մտորումները կյանքի եւ երկրի մասին բխում են արմատների եւ շիվերի փոխհարաբերությունից: Նա երբեք չի մոռանում, որ երկիր-ժողովուրդ հասկացությունները ներդաշնակ կարող են հարատեւել, եթե տոհմածառը չի հատվում, որ նրա ճյուղերը արեւից լույս ընթռչխնելով առողջ ու հավերժող են պահում արմատները: Այս գաղափարի առիւնքնող մի պատում է «Դալարող արմատը» հյուսվածքը: Որդին քաղաքից գալիս է՝ մորը իր մոտ տանելու: Սակայն մայրը մերժում է. «Ես, ասեմք, եկա, բա քո հոր ոսկորները գերեզմանում չե՞ն տնքա, բա չի ասի՞, որ իրեն մենակ եմ թողել»: Որդին որոշում է իր տղային՝ Սուրենին թողնել տատիկի մոտ: Դա նաեւ Սուրենի ցանկությունն է: Պատմողը ներքին բավականությամբ խոստովանում է. «Ակամա նայեցի մորս՝ բավականության մի լույս էր սահում դեմքով: Արմատը չի չորանում»<sup>28</sup>: Գյուղի հոգսերի, մարդկային ճակատագրերի պատկերման տեսակետից գեղարվեստական մնայուն արժեքներ են նաեւ «Սոռացված բուրմունքներ», «Եթե կինս համաձայներ», «Ճանապարհը ձյան տակ», «Հրաժեշտի խոսք» պատմվածքները:

Մ.Յովհաննիսյանի «Գյուղացի մարդիկ» շարքում ռեալիստական երանգներով է ներկայացվում իրականությունը: Իր թախճոտ, տխուր, նույնիսկ արցունքոտ պահերի միջից ժպտում է կյանքը: Ապրեցնող են գրողի պատումները, եւ դա խրախուսելի է, դա թումանյանական սկզբունքի առհավատչյան է, որ արժանի է խրախուսանքի:

Ով ցանկանում է ծանոթանալ 20-րդ դարի 40-90-ական թթ. արցախյան գյուղի կյանքին եւ նրա ծանրությունն ու ակնկալիքները ուսերին ու սրտերի մեջ առած գյուղացիներին, կարող է հստակ պատկերացում կազմել՝ կարդալով Մ.Յովհաննիսյանի «Գյուղացի մարդիկ» շարքը: Ծանոթանալով նրանում հանդես բերված կերպարներին, ընթերցողը ապրում է գեղարվեստի հրճվանքը, հաստատում, որ Մ. Յովհաննիսյանն իր իսկ առաջին պատմվածքում իրեն դրսևորել էր որպես կայացած արձակագիր: Ժամանակին ճիշտ է նկատել գրականագետ Ժ. Անդրյանը. «Ուշագրավ է Մ. Յովհաննիսյանի «Ինչ պայծառ են աստղերը» պատմվածքը, որը հասուն գրչի ստեղծագործության տպավորություն է թողնում: Դա Յովհաննիսյանի առաջին պատմվածքն է, բայց այն իր լեզվով եւ ամբողջության մեջ կատարյալ է արդեն»<sup>29</sup>:

Ականավոր գրող Բ. Սեյրանյանը, որ միշտ հետեւել է Մ.Յովհաննիսյանի գրական խոսքի հարստացմանը, նշել է. «Արձակագիր Մ. Յովհաննիսյանի գրական «հույժ» աղբյուրը իր ծննդավայրն է, հայրենի գյուղը, որը պատմվածքներում Լեռնաղբյուր անունն է ստացել՝ սիմվոլացնելով

առհասարակ ավանդական ու նոր Լեռնային Ղարաբաղը իր աշխատասեր ու խոսքաշեն մարդկանցով, իր չքնաղ բնությամբ, իր կենցաղով ու սովորություններով: Պատու-մի բնական հնչերանգով, գույների մի հանդարտ համադ-րությամբ հեղինակը տեսանելի է դարձնում միմյանցից այնքան տարբեր հերոսների, շարժման մեջ դնում մարդ-կային պարզ ու բարդ հարաբերությունները, գծում գյու-ղի համայնապատկերը: «Գյուղացի մարդիկ» շարքում ա-ռավել խորությամբ ու ամբողջությամբ է խտացվել գրողի տաղանդը»<sup>30</sup>:

### ԱՆԴՐԱՂԱՐՁ ԲԱՑ ԴՈՆԵՐԻՑ

Կյանքը փիլիսոփայություն է. փիլիսոփայությունը՝ կյանք: Երեւի հենց այս երեւույթն է թելադրում գրականու-թյան փիլիսոփայությունը: Ընթերցում ես Մ.Յովհաննիսյա-նի «Բաց դռներ» շարքը եւ համոզվում դրանում: Եիշտն ա-սած՝ դժվար է պատասխանել այս առեղծվածին՝ ինչի՞ց է բխում խոհականության այն աղբյուրը, որ հեղինակին տա-նում է իր հոսքի հետեւից: Նրա ստեղծագործության «գյու-ղացիական թեմայի՞ց», թե՞ գեղագիտական սկզբունքնե-րից, գուցե եւ խոհականության աստվածային պարզեւից: Մեզ թվում է հենց այս երեք գործոնների միասնությունից, եւ այն անհրաժեշտ պահանջից, որ գրողն անցել է կյանքի այն շերտերի միջով, որ դարձել են նյութ-թեմա-ապրում-խոհ-երանգ:

Նշել ենք, որ Մ.Յովհաննիսյանը բնության գիտակ է եւ

Կարողանում է նկատել այն: Դրան ավելացնենք, որ գրողը նկատում է նաեւ կերպարի ներաշխարհը: Ահա, այստեղ է, որ բնապաշտն ու հոգեբանը մի ներդաշնակություն են կազմում Մ.Յովհաննիսյան-արձակագրի հուզաշխարհում: Վերցնենք շարքի առաջին՝ «Անդրանիկ» պատմվածքը: Այստեղ գրողը ցուցաբերել է հոգեբանական նրբերանգների նախանձելի դիտողականություն: Մոր-որդու-հարսի-թոռների ոսկե շղթան նա այնպիսի նրբանկատությամբ է քանդակում, որ առանց իր միջամտության ընթերցողին պարզ է դառնում հայ ընտանիքի նահապետական արմատների գեղեցկությունն ու հարատելելու ուժը: Այդ են հուշում Սոնա տատիկի, Անդրանիկ որդու, Երան հարսի եւ յոթ երեխաների կերպարները՝ զգացմունքայնության ամենանուրբ եւ ամենաանբիծ խտացումներով: Տան արմատը Սոնա տատն է, որի դիմանկարի արարումը գրողի խիզախումներից է: «Մենակ էր. հարս ու տղա գնում էին աշխատանքի, ինքը մնում էր Աստծո կրակ այդ լակոտների ձեռքին խաչվելիս, մեկը մյուսից՝ գիժ, չար-կրակ: Առավոտից իրիկուն Սոնա տատի ծկլթոցը փողոցը բռնած էր կենում: Չարեւանները վարժվել, համակերպվել էին դրան ու եթե Սոնա տատի ձայնը չէր լսվում, մարդիկ անհանգստանում էին.

- Երեխաներից հիվանդացող հո չի՞ եղել»<sup>1</sup>:

Սոնա տատի կերպարը արցախյան բարեբեր բնության անխառն պատկերն է: Նա ինքնամոռաց մայր է, վեհանձն կիսուր, անձնուրաց տատիկ, հոգեհարազատ հարեւանուհի: Դժվար է տարբերել բնությունը Սոնա տատի ներաշ-

խարհից: Դրանք պայմանավորված են իրարով, իրար հասկանում են՝ ինչպես ծնող ու զավակ: Բնությունը Սոնա տատի բժիշկ-ուսուցիչն է, մեծ այան: «Երեխաներից մեկը թե քիթը կախում էր, բժշկի դիմել չկար: Սոնա տատը հիվանդությունն իսկույն ատտորոշում էր ու իր դեղատան դեղերից մեկը նշանակում՝ թթու լավաշ, այծի փորայուղ, չորացած հոնից շորվաջուր, հավի քարճիկի կլեպից չորացրած մամրոն, հազար տեսակի սեզ ու ծաղկից սարքած թարմ ու էլի այնքան բաներ, որ բուրդը չես հիշի: Իսկ ինքը հիշում էր, որովհետեւ մեկի ականջն էր ցավում, մյուսի աչքացավն էր բռնում, ձեռ ու ոտի հողախախտ կա, սանջու բռնել կա, փորլուծ կա, գլխացավ, կապույտ հազ, բկուռուց եւ էլի, էլի, էլի... Եվ դարձյալ հանդի շուշանն առաջինը նա էր թթու դնում, ավելուկը ծամ անում կախում՝ չորացնելու, կրմզուկ կապում, դոշաբի ու չամչի պաշար տեսնում»<sup>2</sup>:

Բաց են ոչ միայն Սոնա տատի եւ Անդրանիկի հոգու դռները, այլեւ տան դռները: Մարդկային ամենաառինքնող բարեմասնությունների տեր են նրանք, որոնց շնորհիվ քաղաքից եկած բարեկամ-ազգական լինի, թե հարեւան գյուղը մարդու տված աղջկա սկեսուր-սկեսրայր, նրանց տանն էին իջեւանում:

Պատմվածքում մի առանձին բաժին են կազմում Անդրանիկի հուշերը մոր մասին: Մոր մատներով էին կողք-կողքի շարվում խոնջաները՝ խաշած հոն ու սալորով լիքը, մեզարների վրա չորացված քուլատանձի ու ջրը խնձորի չիրը, պղնձի սինիներում պատրաստվում մոշի ու սալորի հյուսը, իսկ

տանիքի տակ մարմանդ չորանում ընկույզն ու տխիլը, հատիկ մասուրը, ուրցը, ավելուկը:

Ինչքան կար Սոնա տատը, ծիածանված էր նաեւ Անդրանիկի եւ Երանի համերաշխ սերը: Գրողը պատմվածքի վերջնամասում պատկերում է մի միջադեպ՝ կապված Երանի հիվանդանալու հետ: Հասակ են առնում նրանց զավակները, կյանքում գտնում իրենց տեղը, Երանը անում է այն, ինչ սովորել է Սոնա տատից: Հարեւան Սեխակը այդ ընտանիքի օրինակով հասկանում է մի պարզ ճշմարտություն. «Կարելորդ շատն ու քիչը չէ, կարելորդ երեւի այն է, որ կյանքում գոհանաս եղածով: Աստված թող մեր թամահից կտրի, մեր սերության վրա դնի: Դա է երեւի ճամփադ հեշտ ու թեթեւ անցնելու հնարավորությունը»<sup>3</sup>:

Մ.Հովհաննիսյանը գրել է նաեւ երգիծական պատմվածքներ, որոնց գաղափարական ուղղվածությունը ամեն դեպքում առնչվում է նրա ժողովրդական կյանքի բարեմասնությունները հաստատող մոտիվի հետ: Գրողը չի հաշտվում ժողովրդի դարավոր սրբացած սովորությունները, վարքի կանոնները, բարքերի ջերմությունը խաթարող երեւույթների հետ: Հայուհին տան կանթեղն է, երեխաների աստվածուհին, ամուսնու հավատարիմ ընկերուհին ու պատվի կրողը: Ահա այս հաստատված ապրում-զգացումների խախտումները փլուզում են օջախը, խաթարում մեր նախնիներից մեր օրերին հասած ազգային դիմագիծը: Այս գաղափարն է ընկած «Անթառամը» պատմվածքի հիմքում: Հեղինակային կծու կամ ծիծաղ հարուցող արտահայտու-

թյուններ չկան այստեղ: Ընդհակառակը, կան Անթառամի ընկած-ցեխտոված վարքը խարազանող ռեալիստական պատկերներ, որոնցում ընդգծված են ե՛լ գրողի դիրքորոշումը, ե՛լ ժողովրդի առողջ մտածողությունը՝ օժված պրակտիկ կյանքի ոսկեփոշով:

Պատմվածքի հենց մուտքից ընթերցողը կռահում է նկարագրվող երեւոյթի ահավորությունը. «Անուշավանը նրան հարս բերեց, իրեն էլ կրակի մեջ զցեց, թաղի ժողովրդին էլ: Անելո՞ւ բան էր, որ արեց, բերեց ու անխռով փողոցը խլրտում զցեց: Եվ փողոցը խլրտաց, ալիք տվեց ու հիմա ափնակոծում է՝ սպառնալով հիմն ու հատակը քանդել»<sup>4</sup>: Խոսքը Անուշավանի Կնոջ՝ Սեղա Փառավոնովնայի մասին է, որ կնքվել է Անթառամ անունով: Նրա երեւան գալու հետ մի խլրտում է առաջացել թաղի տղամարդկանց՝ Օսեփի, Աղվանի, Մեխակի, Սոկրատի եւ մյուսների մեջ: Բորբոքվել են կանայք՝ Ելենը, Արփենը, կորցրել իրենց հանգիստը: Աղտոտվել է նաեւ ժողովրդական բարեւուր խոսքը, շրթից-շուրթ են թռչում Անթառամին վերաբերող որակումները. «Անթառամը մի մարդու բան չի», «Անթառամը տեղափոխվում է Կիսլովոդսկ», «Անուշավանը նամուս ունի՞, հասկանո՞ւմ է, թե ինչի համար է կինը Կիսլովոդսկ գնում»: Անուշավանի անունը եւս ծամոն է դառնում եւ հարեւանները նկատում են, որ «Անուշավանը գնում է աշխատանքի, տուն գալիս, բայց բոլորն էլ՝ տեսնում են, որ տղան էշը կորցրել է»: Իսկ Անթառամը մոռացած իր անցյալը, Երեւան ու Բաքու չի հավանել, Մոսկվա-Լենինգրադ է ուզել, «իբր տուրիստական ճանապար-



հորդության է գնացել, բայց դու մի ասա, միտքը ծուռ է եղել»։ Երկու երեխատեր Անթառանը իրեն փողոց է նետում, սովորելու պատրվակով կորցրած պատվի, խղճի եւ ամոթի զգացումը։ Եվ նրա այդ արարքը բնութագրում է Մեխակը. «Աչքից հեռու, խղճից հեռու»։ Մեխակի արհամարհանքին է արժանանում նաեւ Անուշավանը. «Կամ նա, կամ էշի մեջքին զցած ջուլը : Իսկ Օսեփն ավելացնում է. «Մի ասա, կնիկը բախտի բան է... Անուշավանը ումի՞ց է պակաս, դիպլոմը՝ կռնատակին, գործատեղը՝ արեւով երդվում են, բայց էս մի հարցում տղու բախտը չի բերել»<sup>5</sup>։ Օգտվելով ժողովրդական բառ ու բանից, հեղինակը գործող անձանց միջոցով բերում է Անուշավանի ճակատագրի հետ կապված թեւավոր խոսքեր. «Ճիպոտը իրա քուլիցը կտրեր», «Օրենք է՝ սեխի լավը չաղալը կուտի»։ Փողոցում բուլրի խոսքի ու զրույցի առարկա դարձած Անուշավանը մեծ ողբերգությոն է ապրում։ Պատմվածքի վերջում նկարագրվում է հացկերույթ, որի ընթացքում հեղինակը գնահատում է Անթառանի անբարոյական վարքը ամուսնու՝ Անուշավանի ծանր ապրումների ցուցադրմամբ. «Անուշավանը մնացել է լուռ, գունատ, մի անիմաստ ժպիտ դեմքին։ Նա իրեն ստորացած է զգում, անօգնական, խեղճ ու կրակ, այն մարդու նման, որը երազում իրեն մերկ է տեսնում, որ զցի վրան, մի ապահով պատսպար չկա, որ թաքնվի եւ այդպես տանջվում է, տանջվում է եւ դրանից ելք ու ազատում չկա»<sup>6</sup>։

Սակայն դրանով չի ավարտվում պատումը։ Ընկերների բանբասանքների ազդեցության տակ Անուշավանի խնած

գինին խփում է գլխին... եւ նրա աչքերի մեջ գլոր-գլոր արցունքներ են գոյանում «ոնց որ թաղից նոր կտրած մատաղ վարունգը ճոթ անես, այդպես զուլալ կաթիլներ գոյացան նրա աչքերում: Դեմը պղտորվեց ամեն ինչ, արցունքները դողացին թարթիչների վրա եւ ընկան ձեռքին՝ տաք ու ցուլուն»:

Անուշավանի անձնական ցավը անցնում է եւ հարեւաններին, քեֆը մնում է կիսատ, ինչպես հեղինակն է ընդգծում. «Ամեն ինչ դառավ գլխներին եկած»: Ահա, այսպես, պատմվածքում սերունդներին է հաղորդվում ազգային առողջ դիմագծի բուլորին պատկանելը, անձնականի եւ անանձնականի միասնության կարեւորությունը:

Մ.Յոզիաննիսյանի արձակը հագեցված է իր ժամանակակցի ճակատագրի բազմերանգ շերտերով: Նրա գրական կերպարների ներաշխարհում մի կողմից կյանքի թրթռներն են, մյուս կողմից՝ գրողի գեղագիտական իդեալի ծլարձակող ծիրը: Յոզիաննիսյանը զգայուն է արդիականության պահանջի հանդեպ, որոնումները թեմայի, գլխավոր հերոսի եւ գեղագիտական իդեալի շրջանակներում արդյունավետ են: Նրա ստեղծագործական նախասիրություններին խորթ է սխեմատիզմը: Կյանքի թելադրած թեմաների հանդեպ ազատ է, եւ ասում է իր խոսքը: Եթե հաստատում է երեւոյթը՝ հաստատում է հանուն ժողովրդական ավանդական լույսի, եթե ժխտում է՝ դարձյալ լուսավոր շերտերի համար: Դրա լավագույն վկայություններից մեկն էլ «Անմարդ Ելենը» պատմվածքն է, որտեղ հեղինակը հասել

Է անհատի ճակատագրի գեղարվեստական պատկերման շոշափելի հաջողության: Դիող խփող, խաբեբա Վանոյի հանդեպ ունեցած չարաբաստիկ համակրանքն ու հանդիպումները Ելենին տանում են ազգային մաքուր ավանդույթների խախտման: Ամուսինը՝ Սահակը, թողնում է Ելենին եւ երեխաներին ու հեռանում: Հասունանում են երեխաները, առաջնեկի հարսանիքն է սկսվում, սակայն Ելենը իրեն մենակ է զգում, անջատվելով հարսանքավորներից, ազատություն է տալիս արտասուքներին: Այս եւ մյուս պատկերներում առանց հրապարակախոսական ճչան ընդգծումների, գրողն ստեղծել է գեղագետի իր աշխարհը՝ աշխարհայացքի եւ ստեղծագործական ես-ի միասնությամբ: Այդ նշանակում է, որ նա հստակ պատկերացրել է իր անելիքն ու դիրքորոշումը: Մ. Հովհաննիսյանի արձակն ապացուցում է, որ իր գրական շնորհքով պատկերավոր մտածողության ժամանակակից մակարդակով, երեւույթների մեջ խորանալու հմտությամբ կարողացել է ընթանալ ժամանակաշրջանի առաջավոր գրողների հետ՝ հարստացնելով մեր գեղարվեստական խոսքը:

Կյանքը հարափոփոխ է, այն իր հավերժական փիլիսոփայության թեւերին է առնում անհատներին, սերունդներին, հին օրերի իմաստության արմատների ավիշով սնում նրանց եւ թելադրում նորերի անելիքը: Սակայն, միեւնույն է, մի գլխավոր երակ մնում է անփոփոխ, դա աշխատանքի արարող ուժի եւ նրա հուշած խոհականության միասնությունն է: Կենսական արժեք ունեցող այս մտորումների ար-

դուք է «Աստղաթափ» պատմվածքը: Ստեղծագործության գլխավոր հերոսի՝ Օսեփի անցած ճանապարհը, մարդկային բնավորության ազգապահպան գծերը, աշխարհայեցողությունը նրան կոփել ու ներկայացրել են նոր ժամանակներին, որպես աստղ: Հենց այս հանգամանքն է, որ տարիների բարձունքին երբ Օսեփն ասաց՝ լավ չի, «մարդիկ նրա ասածը ականջի ետևի գցեցին»:

Փորձաշատ, իմաստուն հեքիաթասացի հանգույն Մ. Հովհաննիսյանը ոչ միայն պատմում է իրադարձությունները, այլև բացահայտում է մարդկանց հուզաշխարհի ազգային հյուսվածքը՝ կենցաղը՝ համեմված փիլիսոփայությամբ, փիլիսոփայությունը՝ օժված կենցաղով: Լսելով Օսեփի տրտունջը՝ հիվանդության պատճառով, հարեւանները ե՛ւ ցավում են, ե՛ւ ձգտում են արդարանալ, որ հասու չեն հարգված ու պաշտված Օսեփի վիճակին: Գրողը ուղղակի հյուսում է այս իրավիճակը. «Ո՞վ չի հիվանդանում, մեծն էլ է հիվանդանում, փոքրն էլ է հիվանդանում, մարդ պետք է հիվանդանա, որ հետո լավանա, որպեսզի Անդրանիկը հարցնի.

- Օսեփ ապա, քանի օր է չես երեւում:
- Լավ հարեւան ես, շուտ նկատել ես:
- Լակոտները խե՞լք են թողացել գլխումս, խնամի Դուսյան էլ մի կողմից է բկիս կանգնել:
- Հը՞...
- Իբրև թե մենք կարողացանք մերոնց ճարը տեսնել: Մարդը տղային ու կնոջը ուղարկել է, թե՛ հարսնացու ճարեք:

Այսպես Անդրանիկը խոսքը շուռ է տալիս, եւ Օսեփը չի կարողանում Անդրանիկից մի կարգին նեղանալ»<sup>8</sup>:

Համատեղ ճանապարհը, կյանքի հարուցած դժվարությունների հաղթահարումը, տառապանքի եւ ակնկալիքների ներդաշնակ ընթացքը հարեւաններին դրել է միեւնույն տեսադաշտում եւ ինչպես հայելում տեսնում են միմյանց, ճանաչում բնավորությունների ուժեղ ու թույլ կողմերը: Այս ամենը փիլիսոփայական խորքով, տրամաբանական հարցումների օգտագործմամբ գրողը կերտում է Օսեփի կենտրոնական դիմանկարը, նրա հետ մեկտեղ՝ Անդրանիկի, Մեխակի, Ապավենի, Աղվանի, Սիմոնի, Օսեփի հարսի՝ Անահիտի, թոռան՝ Ավետիքի էպիգոդիկ, սակայն բնութագրական կերպարները: Դրանք բոլորը մի-մի աստղ են, իսկ եւ իսկ մի աստղաբույլ: Նրանց հոգիներում սոցիալական իրավիճակի թելադրած կռվաններն են՝ հույզերի առատությամբ, հասարակական կյանքի երանգներով, եւ գրողի դրանց հետ կապված պատկերավորության եւ արտահայտչական միջոցները: Այսպես, հոգեբանական-սոցիալական ընթացքի ցուցադրմամբ գրողը ստեղծել է Օսեփի կերպարը, որի ներկայությունը մթնոլորտի շիկացում է, իսկ բացակայությունը՝ աստղաթափ: Օսեփը՝ հարեւան, Օսեփն՝ ընկեր, Օսեփը՝ որդեկորույս հայր ու սրտացավ կեսրայր, Օսեփը՝ պապ:

Ժողովրդական դարավոր կենցաղի առինքնող կողմերի հաստատումը հեղինակային մտահղացման եւ պատկերման կարեւոր միջոցներից է: Օսեփի հարսի՝ Անահիտի հար-

Վանքը կեսրայրի հանդեպ, ամուսնու հիշատակի սրբազան պահպանումը, տղայի՝ Ավետիքի նկատմամբ ցուցաբերած մայրական պատասխանատվության զգացումը, հարեւանների վերաբերյալ ունեցած պատշաճ հյուրասիրությունը հիացնում են Անդրանիկին, եւ վերջինիս սրտից է բխում երախտիքի օրհնանքը: «Օրհնվի ծիծղ,- մտքում ասաց Անդրանիկը ու հիշեց Օսեփի գնացած Գրիգոր որդուն, Ավետիքն էլ Ավետիքը չի, Գրիգորն է էնտեղ դրած: Անահիտ հարսը նստեց ու Գրիգորի երկու որբերին մեծացրեց: Ջահել էր, շատ էր ջահել, բայց արդար կաթ էր կերել, կեսրայր պահեց, երեխա պահեց, աղջկան մարդու տվեց, Ավետիքն էլ ահա այսպես կամաց-կամաց հասնում է: Քարի փոքրը չի մեծանում, մարդու փոքրը մեծանում է: Է՛, աշխարհքի հոգեւորը ինչո՞ւ էսքան շատ են՝ այս մտածումից Անդրանիկը իրեն ճնշված զգաց»<sup>9</sup>:

Օսեփի հուզաշխարհը լեփ-լեցուն է աստղերով: Այդ աստղերի լույսերը չեն մարում անգամ մահամերձ Օսեփի կրծքի տակ: Հռռետես չէ Օսեփը, նա գիտակցում է, որ մարդը մահկանացու է, սակայն մտահոգված է դեռեւս մատղաշ թռռան՝ Ավետիքի ճակատագրով: Օսեփը մի կողմից հոգեբանորեն կապված է անցյալի հետ, մյուս կողմից՝ ապագայի՝ հանձին իր թռռան: Համոզիչ ու տեսանելի գծերով է նկարագրում Մ. Հովհաննիսյանը Օսեփի այդ ապրումները. «Գրիգորս գնաց, Սանամը գնաց, եղբայր Սարգիսը, իրենից շատ էր ջահել՝ գնաց: Սանամը լավ կին էր, հավատարիմ, Սանամը մենակ կին չէր իր համար, թիկունքում կանգնած

ախպեր էր: Գրիգորի մահին չդիմացավ, շուտ գնաց որդու հետեւից: Չերթը հասել է իրեն: Օսեփը զարմացավ, որ այդպես խաղաղ մտածում է իր մահվան մասին: - Ավետիքիս հարսանիքը չեմ տեսնի,- ավստոսաց նա ու գլուխը խուժած մտածումներից հոգնած, թե անհասկանալի մի ծանրության ճնշումով աչքերը փակեց ու ոչ այն է քնեց, ոչ այն է՝ իրեն տվեց մոռացության»<sup>10</sup>:

Մ.Յովհաննիսյանը պատումի մեջ ներառելով հուշի կոմպոզիցիոն ձեւը, ներկայացնում է Օսեփ ապրո անցած ճանապարհը բանակում, նրա բարոյական մաքրությունը, ստացած պարգեւների արժանիությունը՝ հարեւանների կատակ-գրույցների լույսի տակ: Եվ բոլորն էլ այն մտքին էին, որ Օսեփ ապան լավանում է: Սակայն լուսադեմին Անդրանիկը ծեծում է Մեխակի դուռը եւ իրեն մի կերպ զսպելով ասում. «Օսեփ ապան չկա»: Այստեղ հմտորեն պատումի մեջ են բերվում կեցության այնպիսի խնդիրներ, որ չնայած մանրուք թվալուն, կարելորվում են ժողովրդի հոգու հարստությունը, գոյատեւելու առեղծվածները ցուցադրելու համար: Օսեփ ապու մահվանից անմիջապես հետո «Անդրանիկը ամեն-ինչ իր ձեռքով պարտակեց, ասաց իմ հոգու պարտքն է՝ պիտի տամ. իր ձեռքով լողացրեց դրեց դագաղում, բոլորին ուղարկեց քնելու, ինքը գիշերը մնաց կողքին արթուն: Ամբողջ ժամանակ արցունք չկաթեց, բայց երբ դիակը հանում էին տնից, երբ Անահիտ հարսը «հայրիկ, վա՛յ» արեց, Ավետիքը իր տղայական կերկեր ծայնով «ապպիկ» ասաց, Անդրանիկը չկարողացավ իրեն պահել՝ փուլ

եկավ, ուսերը ցնցվեցին ու, այն է, դագաղը պիտի ուսից  
զցեր, բայց Աղվանը ժամանակին մտավ դագաղի տակ ու  
Անդրանիկին ասաց.

- Դուրս եկ»<sup>11</sup>:

Օսեփ ապու մահը նկարագրվում է մեծ կորստի ցավով:  
Ախր, Օսեփի նման մարդկանցով է գեղեցկանում ու հարա-  
տեւում կյանքը, նրա նմաններով է կյանքը իմաստավոր-  
վում, նրա օրինակով է նորը պահպանում ու հղկում մար-  
դու աստվածային պարգեւը՝ Մարդ մնալու գաղտնիքը:

Մ.Յովհաննիսյանը բարոյահոգեբանական այս հիմ-  
նախնդիրները պատկերում է բակունցյան, մաթեւոսյանա-  
կան պահանջի սահմաններում:

Օսեփի հուղարկավորությունից հետո Անահիտ հարսը  
եւ Ավետիքը մնացին մենակ՝ հիշողությունների ծանրության  
տակ: «Երեկոն ծանր ճնշելով խորանում էր: Մնացել են մայր  
ու տղա... Ինքը նստել է սեղանի մի ծայրին, Ավետիքը մյուս  
ծայրին ու երկուսով մնացել լուռ: Տեսնես Ավետիքը ի՞նչ է  
մտածում: Ուզեց հարցնել, բայց մի տեսակ վախեցավ իր  
ծայնից: Անսպասելի Ավետիքի կոծքից մի թառանչ դուրս ե-  
կավ: Մայրը նայեց որդուն, որդին մորը նայեց, իսկ զուլալ  
արցունքները կախվեցին երեխայի թարթիչներից: Երկուսն  
էլ այդ թուպեին իրենց որբ էին զգում: Միայն հիմա զգացին,  
որ Օսեփ ապան չկա ու այլեւս չի լինելու: Այդ միտքը նրանց  
անարդար դաժան թվաց»<sup>12</sup>:

Ահա, Մ.Յովհաննիսյանն այսպես է նկարագրում մարդ-  
կանց կյանքի իմաստը, ապրելու գեղեցկությունը, որոնց



կորուսող ժամանակին թե անժամանակ, համարվում է աստղաթափ:

Մ.Յովհաննիսյանի տաղանդի եւ գրողի անհրաժեշտ փորձի արդյունք է «Անդրեաս» պատմվածքը: Կերպարի ստեղծման նրա կարողությունը այստեղ տվել է հրաշալի իր արդյունքը: Կյանքի խորքային իմացությունը, մարդկային ճակատագրերի հոգեբանական ընթերցումը, անհատի եւ ընտանիքի ջերմացնող կապերին ծանոթ լինելը, պատմելու աստվածատուր շնորհքը հնարավորություն են ընձեռել գրողին ստեղծելու արցախյան արմատներ ունեցող հայ մարդու մնայուն կերպար: Համարձակորեն կարող ենք նշել, որ այս գործը հայ արձակի փառավոր էջերից է՝ Դ. Դեմիրճյանի «Ավելորդը», Ստ. Ջորյանի «Խնձորի այգին», Շ. Շահնուրի «Պճեղ մը անուշ սիրտ», Ա. Բակունցի «Միրհավը», Յր.Մաթեոսյանի «Ալխո» եւ անվանի մեր մյուս գրողների լավագույն պատմվածքների շարքում:

«Անդրեաս» պատմվածքը հաջողված եւ համոզիչ մի պատասխան է նորագույն շրջանի հայ գրականության մեջ քննարկված «Մարդ եւ պայմաններ» հիմնախնդրին: Նրանում Մ.Յովհաննիսյանը իր գլխավոր կերպարին՝ Անդրեասին ներկայացրել է որպես պատմահասարակական համապատկերում հառնած մի սուբյեկտ, որի մեջ խտացված են հայ մարդու բնավորության ազգային գծերը: Անդրեասի անհատական ճակատագրի, սոցիալ-բարոյական նկարագրի բացահայտմամբ գրողը հասել է իր նպատակին: Անդրեասը իր նախնիներից ժառանգել է աշխատասիրության, պատ-

վախնդրության, արդարամտության, ընտանիքի ամրության, ժառանգափոխության, ծուխ-ծխանիի հավերժության, կնոջ եւ երեխաների հանդեպ ունեցած վերաբերմունքի ամենակայուն եւ անհրաժեշտ զգացումները, որոնց առկայությամբ միայն կարելի է պահպանել ազգային դիմագիծը: Այս բոլոր հասկացությունների պրակտիկ կրողն ու լուծողն է նա:

Պատմվածքում հանդես են բերված մի քանի գործող անձեր, որոնք իրենց բնավորությամբ եւ արարքներով տարբեր են, չեն կրկնում միմյանց: Դրանք. Անդրեասն է՝ ընտանիքի հայրը, Անդրեսաի կինը՝ Արեւհատը, որդիները՝ Վարշամը, Կամոն, Անուշավանը, թոռները:

Անդրեսաի բնավորության բացահայտումը տեղի է ունենում նրա կողմից հավանած, իր ամենաառինքնող գեներ պահպանած միջնակ որդու՝ Կամոյի միջոցով, որը, սակայն, ավիովթարի պատճառով զոհվել է Սիբիրի անտառներում եւ նույնիսկ աճյունը չեն գտել՝ հայրենի հողին հանձնելու: Ապա մեջտեղ են բերվում մյուս որդիները՝ ավագը՝ Վարշամը եւ փոքրը՝ Անուշավանը: Սոցիալական երեւույթների ընթացքի մեջ հեղինակը ստեղծում է կերպարների պատկերասրահը, ինքը բնութագրող ոչինչ չի ասում, խոսքը տալիս է Անդրեսաին եւ դրանով իսկ ցուցադրում իր գեղագիտական իդեալը: Ճշմարիտ գրողի անկեղծությամբ Մ.Յովհաննիսյանը իր կերպարների միջոցով պատասխանում է ժամանակաշրջանի հարուցած սոցիալ-բարոյական հարցերին:

Անդրեասի հոգին ու հավատը Կամոյի հետ էր: Մյուս երկուսին՝ Վարշամին եւ Անուշավանին էլ սիրում էր, բայց արի ու տես, որ հայրը հպարտանում է Կամոյով, թեւեր առնում նրանից եւ դողացող շրթերով կրկնում. «Կամոս կթողե՞ր, որ ամաչեմ»: Անդրեասը Կամոյի մեջ իր դրսեւորումը տեսնում էր կատարյալ: Նա խորհում էր՝ գուցե «Աստված մյուս երկուսից քաշել էր տվել Կամոյիս: Էդ երկուսը նվազ են ստեղծվել»: Թե ինչ պատճառ է, որ մեծն ու փոքրը թույլ դուրս եկան, Անդրեասը դժվարանում է պատասխանել: Մեծը՝ Վարշամը, ծնվել է, երբ Արեւիատը դեռ երեխա է: Ուստի մի բանի պետք չէ, ներսը փուչ է, ձեռքը մաքուր չի, քանի անգամ է դանակի տակ ընկել, մի կերպ ճարուճուրով պահում են: Վարշամը նույնիսկ չի կարողանում հանդիմանել Աղվանին եւ Ապավենին, որոնք լեզուները քորում էին եւ սրա նրա, եւ իր հասցեին: Սիմոնն էլ կրակի վրա չոր չոփ է դնում, որ անպարկեշտ զրույցը բորբոք մնա: Դեռ ավելին. «Չարսը բլուզը տանում է Վարշամին: Մարդ էդ շոգին ճաքվում է, բայց Վարշամը բլուզը հնազանդ առնում է մեջքին ու շնորհակալություն ասում, ասում է՝ մերսի, ջանս: Ոնց էլ լավ էլ սովորել է երեւանների խոսքերը: Շան որդին քեռոնց է քաշել՝ կնկա փեշում ձվածեղ ուտող քեռոնց: Մերսի, ջանս, ջան ու դուրբանս, էշի քուռակ, կատվի մլավոց, ախմախ շան որդի: Մեջը իր ցեղի պողվատը չկա, իր ցեղի տղամարդիկ ուժեղ են լինում ու սարթ»: Անդրեասի պատկերացումը հայ տղամարդու վերաբերյալ պահանջկոտ է. «Մենք սարթ ենք... մենք կամ շիտակ ու կանգուն ենք լի-

նում, կամ ճռնչալով ջարդվում ենք, մեզ կռանալ-ծնովել չկա: Կամոս՝ դրա օրինակը»<sup>13</sup>:

Վարչամից խեղճ է դուրս եկել Անուշավանը, որը, ըստ հոր, գլուխ ունի, բայց կամքից խեղճ է, հարսի ոտքը դուրսն է, եւ դրա համար ամաչում է Անդրեասը եւ մտորում «փողոցում ծափ են տալիս, ծիծաղում, իսկ շան որդու լակոտը ա-կանջները կախ՝ ամեն նետած լափ ուտում է: - Դա ինչ մարդ-տղամարդ է... գարիով փոխած բան»:

Անդրեասը կրկին վերհիշում է Կամոյին. «Կամոս ուրիշ էր, Կամոս կենդանի լիներ, մուկ բռնող Փառավոնի աղջիկը կկարողանա՞ր ծին ոնց ուզենար՝ քշեր: Կամոս թող չէր անի, կացինը կդներ վզին, մեջը պողպատ կար»<sup>14</sup>:

Կյանքի հարվածները Անդրեասին՝ անողոք են: Կամոյի կինը շատ էր սիրում ամուսնուն: Մի նամակ է թողել, որ այլեւս առանց Կամոյի չի կարող ապրել, երեք երեխային թողել է Անդրեաս պապին, որ պահի-մեծացնի: Անդրեասի հոգսերից ամենածանրը, սակայն, ոչ թե թոռների նյութական պահանջների ապահովումն է, այլ որ երեխաները մեծանալու են առանց ծնողների հովանու: Մարդասիրության ամենաբարձր դրսեւորումը Անդրեասի խոհերն են այս կապակցությամբ. «Առանց ծնողի երեխան ինչի՞ նման է՝ քանու բերանն ընկած տաշեղ՝ ոնց ուզենա քշի: Մեկը իր երեխայի թշից պաչի՝ որքը թառանչ է քաշելու, մյուսը մի նվեր բերի՝ որբի աչքերը լցվելու են»<sup>15</sup>:

Յոթանասունամյա Անդրեասը ծանր ապրումներից ինֆարկտ է տանում, բուժվում, կազդուրվում եւ լծվում Կամո-

յի որբերի խնամքի ծանր բեռանը: Սոցիալական պայմանների ամենադժվարին պահերին անգամ նա չի կորցնում հոգու արիությունն ու կամքի ուժը, ընդհակառակը, դառնում է նաեւ ուսուցիչն ու խորհրդատուն Կամոյի արդեն հասակ նետած որդու՝ Վահրամի համար: Մ. Հովհաննիսյանը քայլ առ քայլ բացում է իր կերտած հերոսի հոգու լուսավոր դռները: Անդրեաս պապը ասես Ավ. Իսահակյանի Օհան ամու, Ուստա Կարոյի հանգույն սերունդներին առաքում է մարդկայնության իր լուսավոր խորհուրդները. «Երեխան պետք է փոքրուց սովորի մեծին գնահատել: Երեխան պիտի գնահատի, որ մեծին հարգի-սիրի»: Ապա «Մուկ բռնող Փառավունի աղջիկը ասում է՝ մարդու ոտքերը լվանալը հետամնացություն է», «Մի հարկի տակ ապրողների մեջ խորթություն դնելը մեղք չի՞, Աստծոն վատ չի թվա՞, թե դրա ժամանակներն էլ են անցել, մարդկությունն է վերացել»: Թռռան՝ Վահրամի հարցին, թե ամենալավ արհեստը որն է, հյուսն Անդրեասը պատասխանում է. «Աշխարհքիս երեսին երեք ամենալավ զբաղմունք կա՝ հող մշակելը, տուն շինելը, մեկ էլ այգի զցելը: Դրանք բոլորն էլ լավ են, բայց տուն շինելը ինձ համար ամենալավն է»:

Աշխարհի տեսած, տառապած, աշխարհաստեղծ Անդրեասի համար ամենածանր հարվածը դառնում է այն, երբ գործից գալուց հետո տեսնում է Վարշամի եւ Անուշավանի երեխաների անհամերաշխությունը: Նրանց դաժան վերաբերմունքը Կամոյի երեխաների, առանձնապես Վահրամի հանդեպ՝ անմեղ մի խաղի պատճառով: Եվ Անդրեասի պա-

Իհանջով Վարշամի եւ Անուշավանի ընտանիքները, որ եկել էին անառային հանգիստն անցկացնելու, հեռանում են հայրական տնից: Ջարմանում եւ ցավում են հարեւանները, իսկ Անդրեա՞սը: Այս հարցին հմտորեն պատասխանում է գրողը. «... Գիշերով ուշ Վահրամը ծեծեց Մեխակի տան դուռը: Երբ Շուշան մայրիկը բացեց դուռը, Վահրամն արտասուքները կուլ տալով ասաց.

- Քեռի Մեխակը թող շտապօգնության կայանը զանգի: Պապը էլի հիվանդացել է:

Շուշանը խփեց ծնկանը՝ որբի բա՛խտը, որբի բա՛խտը...

Այդ գիշեր փողոցի բնակիչները ոտի վրա լուսացրին»<sup>16</sup>:

«Անդրեաս» պատմվածքը ստեղծագործական-հոգեբանական կոնկրետ գործոնների արդյունք է: Խորհրդային տարիներին գրողի ստացած տպավորությունների հենքի վրա, առանց քաղաքականություն խաղալու, գրողը արծազանքել է ժողովրդի ցավին, անդրադարձել մի չափազանց կարեւոր հիմնախնդրի՝ դարերի խորքից մեր օրերին հասած ժողովրդական այն սրբասուրբ հոգեւոր մասունքներին, որոնցով ազգը պահպանում է իր դիմագիծը եւ այն փոխանցում սերունդներին:

Նորագույն շրջանի հայ գրականության մեջ գյուղական արձակի զարգացմանը Մ. Հովհաննիսյանը նպաստել է նաեւ այնպիսի պատմվածքներով, որոնցում ժողովրդական ավանդական սովորույթներին գունարվում են նաեւ

Մորօրյա մղունները: Այս առումով բնութագրական են «Կնունք», «Օգոստոս, շոգ» պատմվածքները: Նկատվել եւ նշվել է, որ Մ.Յովհաննիսյանի հերոսներն անցնում են պատմվածքից-պատմվածք: Դա ընդունված գրական մաներա է, որ նկատելի է մի շարք գրողների պատմվածաշարերում: Սակայն պետք է ընդգծել, որ այդ կերպարներն իրար հաջորդող ստեղծագործություններում հանդես են գալիս նոր պայմաններում, վարքի ու բարքի, արարքների նոր կողմերով եւ նպաստում են նոր կերպարների բնավորությունների բացահայտմանը: Այսպես, վերջին երկու պատմվածքներում հանդես են գալիս մարդաթող Ելենը, Սեդա Փառավոնովնան, Յակոբը, Սոկրատը («Կնունք»), Աղվանը, Ապավենը, Սիմոնը, Սահակը («Օգոստոս, շոգ»), որոնք ընթերցողին ծանոթ են նախորդ գործերում: Գրողի ստեղծագործական այս հնարանքը գնահատվել է ժամանակին: Գրականագետը նշել է. «Մ.Յովհաննիսյանը թեմատիկայի, նյութի գեղարվեստական յուրացման որոշ հատկություններով ուղղակի սերում է սովետահայ արձակագիրների այն զարմից, որի գլուխ կանգնած է Հրանտ Մաթեոսյանը»<sup>17</sup>:

### ՀԱՐԱՐԸ ՆԱԵՎ ՄԵՐ ԳՅՈՒՆ Է

Անվանի գրականագետ Ազատ Եղիազարյանը «գյուղական արձակի հարցերից» հոդվածում ընդգծել է. «Գրականության պատմությանը հայտնի են ոչ քիչ թվով փաստեր, երբ զարգացման մայրուղուց հեռու ընկած (կամ գոնե առաջին հայացքից այդպես թվացող) երեսույթները ի-

րենց մեջ խտացնում են ժամանակի «ցավոտ» հարցերը: Մեր օրերում նման ճակատագիր ունեցավ գյուղական թեման:

Մեքենայական քաղաքակրթության հաղթարշավը, կյանքի ռացիոնալիզացիան, նրա արագ եւ հետզհետե ավելի արագացող ընթացքը ոչ միայն անխուսափելիորեն վերացնում են այն, ինչ իսկապես հետամնաց է, այլեւ հարվածի տակ են դնում դարերով սրբագործված բարոյաէթիկական որոշ արժեքներ: Երկար ժամանակ թվում էր, թե հեռանում է միայն իր դարն ապրածը, հնացածը: Բայց պարզվեց, որ այդպես չէ, գիտատեխնիկական հեղափոխությունը սպանում է այնպիսի արժեքների, առանց որոնց մարդու կյանքը, նյութապես ավելի ու ավելի ապահովվելով, ներքնապես աղքատանում է»<sup>1</sup>:

Նշեմ, որ գրականագետի այս դիտարկումը հիշեցի եւ մեջբերեցի Մ. Հովհաննիսյանի «Փարշի գորգը» պատմվածքը կարդալուց հետո: Եվ համոզված եմ՝ նա, ով ընթերցի այս ստեղծագործությունը, արթնանալու են ոչ միայն հոգում ծիածանված ամենաթանկ հուշերը, այլեւ խիղճը, որ պահանջվել է ե՛ւ Աստվածաշնչի Աբելի ու Կայենի ժամանակաշրջանում, ե՛ւ այսօրվա բարոյականության օրակարգի առաջնահերթ հարցերից է:

1941-45 թթ. Հայրենական մեծ պատերազմի հասցրած վերքերը, ապա ետպատերազմյան տասնամյակների մի ամբողջական հատվածի թողած հետքերը, իրենց կնիքն են դրել ե՛ւ կյանքի ամբողջական ընթացքի, ե՛ւ մարդկանց հո-



գու աշխարհի վրա: Եվ ողբերգականն այն է, որ նկատելի, թե աննկատ, ժամանակները չսպիացող հետքեր են թողել նաեւ ծնող-որդի, եղբայր-քույր, աղջիկ-փեսա, պապ ու տատ-թոռներ հարազատների հոգեւոր կեցութեան վրա՝ խախտելով ժողովրդի դարավոր առինքնող սովորութիւնները, մթագնելով հոգատարութիւնը միմյանց նկատմամբ, որի գեղարվեստական պատկերման լավագույն օրինակներից է «Փարշի գորգը» պատմվածքը: Պատուհի հիմքը փարշի գորգի շուրջ ծավալված կոնֆլիկտն է, որով պայմանավորվում է ծնող-որդի փոխհարաբերութիւնը՝ բառի ամենամուրբ եւ ամենաբուն իմաստով:

Հեղինակը ներկայացնում է Հարար գյուղի ընտանիքներից մեկի անցած դժվարին, բայց պատվաբեր ճանապարհը: Ընտանիքի հայրը՝ Հայկազը, մասնակցել է Մեծ հայրենականին, վիրավոր ոտքերով վերադարձել է, կնոջ՝ Թանկագինի հետ կրկին լծվել ծնողական իրենց աստվածահաճո պարտականութիւնների կատարմանը: Հասակ են առել որդիները: Արմիկը աշխատում եւ ապրում է Բաքվում, Սերոբը՝ Ստեփանակերտում, Մեխակը մնացել է գյուղում եւ ապրում է հայրական պատակից տանը՝ իր ընտանիքով: Աղջկան՝ Վարսիկին էլ են ամուսնացրել: Սակայն ծնողների բեռը չի թեթեւացել, շարունակվում են բարեբեր աշխատանքային օրերը, որովհետեւ նրանք չեն էլ գիտակցում, որ կարելի է հանգստանալ, որովհետեւ որդիներից յուրաքանչյուրը դեպի իրեն է քաշում:

Հոգեբանի իմացությամբ Մ.Հովհաննիսյանը բացահայ-

տում է ծնողների եւ նվիրվածությունը, եւ լուռ տրտունջը: Սակայն դրան ավելանում է մի նոր հոգս, որ ավելի շուտ բարոյահոգեբանական արժեք ունի, ոչ թե նյութական: Արմիկը Բաքվից գալիս է եւ դիմում հորը, որ մինչեւ երկու շաբաթը աղջկա՝ Արեգայի հարսանիքն է լինելու, որ՝ «Ամեն ինչ կա, բացի մի հիմնական բանից», որ Արեգան ուզում է տեղական գորգ ունենալ, եւ դա տատիկի փարշի գորգն է: Յոր զարմանքին Արմիկը պատասխանում է. «Ես չէի ուզում գալ, Արեգան զոռով ուղարկեց: Ասում է՝ Յայկազ պապի առաջին թռռն են, չի մերժի»: Պատմվածքի սյուժեն հագեցվում է, ահա, այս խնդրի հոլովմամբ, եւ պարզվում է նաեւ գրողի գեղագիտական իդեալի ասպարեզը, որի վրա ուրվագծվում են մի կողմից ծնողների հուզաշխարհը եւ մյուս կողմից՝ զավակների բարոյական երերումները:

Մ.Յովհաննիսյանը կենսական տարբեր հանգամանքներում ներկայացնում է պատումը՝ անմիջական, պատկերավոր, համոզիչ, նրբանկատ: Բանն այն է, որ ծնողների տնից որդիները ամեն ինչ քաշել-տարել են. մնացել է միայն փարշի գորգը, որը միայն զարդ չէ, այլեւ մոր ճակատագիր է, հուշ ու հիշատակ, անցած օրերի մի պայծառ ժպիտ: Այս խոհերով ծանրաբեռ, Յայկազը մտածում է. «Մենք տուն չենք, բրիշակ ենք: Մինչեւ հիմա արածը, հիմա էլ որ անում ենք՝ քիչ է՞: Կարտոֆիլի բեռները, խուրջիմներով լրբին, քանի տեսակի մուրաբաներ, օր ծերության Թանկագինին կրմիզուկ ու շուշան կապել սովորեցրին: Բերանների տեղն էլ լավ գիտեն, բերանների համն էլ: Ամեն տարի Բաքվից

Բաքվեցիք, Ստեփանակերտից ստեփանակերտցիք կոռպտատիվից առած բանկաների համար կափարիչներ են ուղարկում: Կանոնավոր: Եվ աշնանը Յարարա հանդերից գոյացած փող չտվածը տարվում է՝ Ստեփանակերտի բաժինը՝ Ստեփանակերտ, Բաքվի բաժինը՝ Բաքու: Փոխարենը Արմիկի՝ մորթին հանած ու շուռ տված-նորացված օձիքով հին վերարկուն, հետեւը դեռ չծակված շալվարը, ուրիշ շալվարի նոր պիջակը, որի վրա բորաթթուն մի քիչ կաթել է ու շատ էլ երեւացող տեղ չի կաթել: Սերոբը քամհար է առել, դրել կամոդի վրա, որպեսզի քրտնած հայրը հանդից գա, մայրը ժամանակ ունենա մի ահագին տոկոսով էժանացրած կոշիկը հագնի, եւ մարդ ու կին երկուսով կանգնեն քամհարի դիմաց, ու քամհարը երեսներին փչի: Իր բերած արաղը ինքը խմում է ու գնալուց առաջ հոր մեջքը թփփազնում, ասում է՝ արաղը ինձանից, հավը քեզանից: Բաքու-Ստեփանակերտ տղաներ ունի, բրիգադիր տղա ունի, բայց նրանց ծառայող-սպասարկողը Վարսիկն է, փեսա Աբելն է, նրանց չորս աղջիկներն են»<sup>2</sup>: Այս մտորումը երկու ծայրաբեւեռներում գտնվող ծնողների եւ որդիների հակադրության ճշմարիտ պատկերն է: Այս ամենը երկրորդական հոգս էին համարվում ծնողների համար: Էական հոգս-հարվածը փարշի գորգի հետ կապված միջադեպն է: «Մեզանից պտկածը մեր միսն ուտում է», - դառնությամբ մտածում է հայրը:

Անսպասելի մի հարված է ստանում Թանկագինը, երբ ամուսինը հայտնում է, որ Արմիկը մոր հերանց տնից բե-

րած փարշի գորգն է ուզում աղջկա համար:

Հավատարիմ գեղարվեստական ճշմարտացիությանը, Մ. Հովհաննիսյանը կատարում է հոգեբանական խոր պեղում, տեսադաշտի վրա է դնում իր ճակատագրով, զգացմունքով, բաժին հասած հոգսով ծանրաբեռ հայ մոր կերպարը: Այստեղ խաչավորվում են ցավն ու ափսոսանքը, սերն ու երախտիքի կորուստը: Արմիկը ինչ որ պահի հիշում է մորը, նրա կրած տառապանքը, գեղեցկությունը: Պատմվածքի սկզբում կարդում ենք. «Նայելով արտորանքով ներս ու դուրս անող մորը, մտածեց՝ երկու կրակի մեջ նա է տուժում: Խղճահարություն ունեցավ, հիշեց շատ տարիներ առաջվա մոր ճապուկ մեջքին պատ տված թուխ հյուսքերը: Ամեն տարի խազալաթափին Բազլին գետում գորգերը լվանում էին: Մայրը իրենց փարշի գորգի երկու ծայրից բռնում էր ու ջրի մեջ թափ տալիս: Կռանում էր, բարձրանում, կռանում էր, բարձրանում եւ ամեն անգամ կռանալիս հյուսքերը հոսում էին առաջ ու ջրերի վրա ալիք տալիս: Արմիկը նայեց մորը ու սրտի ցավ զգաց՝ որտե՞ղ գնաց նրա գեղեցկությունը: Անսպասելի վերահաս թախիժը պաշարեց նրան»<sup>3</sup>: Այս խոհերից հետո շարունակվում է ծնողներին ցավ հարուցող պահանջը: Թանկագինի մտքով չէր էլ անցնում, որ բոլոր գորգերը նվիրելուց հետո փարշի գորգն էլ կուզեն: Տան պատերը կեղեքվել են, սանդուղները դատարկել են, մնացել է իր ջահելության, ուրախ-տխուր օրերի, լավ-վատ ապրած կյանքի վկան:

Փարշի գորգը, իրոք, Թանկագինի լավ ու վատ օրերի

վկան է: Այս ապրումը ծաղկապսակի հյուսվածքով է ներկայացնում հեղինակը. «Միջի արեցին, ու թաղի կանայք, բարեկամները կարճ փետրվարում գործեցին պրծան: Մաքադին երգում էր, Արեւիատը սրա-նրա հանգը անում էր, ու ծիծաղից կոտորվում էին: Մինչեւ մի ամիսը գորգը կտրեցին: Հայրը Աղդամից փութուկես Իրանի բրինձ էր բերել եւ ամեն օր կաթով ճաշ էին պատրաստում, Թանկագինի կյանքի անհոգ օրերը դրանք էին, գնացին ու էն գնալն էր: Ամեն նախշի հետ ուրախանում էր, գորգը կարծես կենդանի լիներ, երեսին ծիծաղում էր: Հարարեցի կանայք ծիծաղում գորգ էին գործում իր ապագա կյանքի կանաչ-կարմիր օրերի համար: Կանաչ-կարմիր օրեր չեղան, ճումի ծանրությունից ճկվել եղավ, եղավ բեռան տակ տնքալ, կռվի գնացած Հայկազի բաժին հնձվորն ու գերանդի բռնողը, կալ անողը, տուն պահողը, երեխաներ մեծացնողը, Հայկազի «անհայտ կորածի», «սեւ թղթի» հարվածին դիմացողը: Եվ այդ հոգեմաշ շարանից՝ պոկված ուրախության մի ծպեղ, ծիծաղի մի փշրանք: Ամեն գորգ լվանալիս Թանկագինը իր ջահելությունն է հիշում: Այդ հիշողության տեսրակը փարշի գորգն էր, որ Արմիկն ուզում է տանել»<sup>4</sup>:

Ծնողների որոշումը լինում է արդարացի եւ տխուր՝ «Որ մեռնենք, մեր ունեցածն էլի իրենցն է»:

Պատմվածքն ավարտվում է անսպասելի: Սեղանի շուրջ ընտանիքի բոլոր անդամներն են: Արմիկը իրենն է պնդում: Թանկագինը առաջ է մղվում. «Մենք տուն չե՞նք, հիսուն տարի կապած է էն պատին, հիսուն տարին մի մար-

դու կյանք է: Մեր ապրելուն ինչ է մնացել, կմեռնենք, էլ ի ինչպես ուզում եք՝ էնպես էլ կանեք»<sup>5</sup>:

Հայկազը կնոջ խոսքից խեղճացած բորբոքվում է եւ կնոջը ստիպում, որ կացիւնը բերի. «Երեք ախպեր են, երեք տեղ էլ հավասար կես են անելու, երեք կես, թող տանեն իրենց աչքը կոխեն, աչքները կոխեն, կշտանան»:

Հոր այս բորբոքված պահին տմից դուրս են գալիս բուլորը, նրանց հետեւից նաեւ Արմիկը, որ աստիճանների վրա մի պահ կանգ է առնում, ետ գալիս, բացում դուռը եւ ասում. «Իմ ոտը էլ չեք տեսնի էս տանը: Ես մեռնեմ՝ դուք չգաք, դուք մեռնեք՝ ես չեմ գալու»<sup>6</sup>: Արմիկի ոտքերի ծայնը մարելուց հետո Թանկագինը դիմում է ամուսնուն. «Տայիր՝ տաներ»:

Պատկերը սրտառուչ է: Հայոց հազարամյա ճանապարհին ծնողների եւ որդիների միջեւ եղած հակասութիւնների, ծնողների անձնուրացութեան, որդիների երախտամոռութեան անընդմեջ կրկնվող երեւոյթի մի նոր պատում:

Մ.Հովհաննիսյանի այս պատմվածքը Ավ.Իսահակյանի «Մոր սիրտը», «Մայրը» լեզենդների, Ստ. Ջորյանի «Խնձորի այգին», Ս.Խանգաղյանի «Սպիտակ գառը» ստեղծագործութիւնների թեմատիկ շարունակութիւնն է՝ թելադրված կյանքից, նկարագրված գեղարվեստական բարձր մակարդակով:

«Հարար, Հարար» շարքի պատմվածքներում տիպական մի աշխարհ է ծիածանված, դա արցախցիների դարա-

Վոր կենցաղի եւ սովորույթների աշխարհն է՝ խաչավորված մերթ տխուր ու կսկծալի, մերթ ուրախ ու երանելի տրամադրություններով: Ժողովրդական ավանդություն դարձած ուրույն մի տիեզերք է կանանց աշխարհը, եւ պատահական չէ, որ գրողը որպես իր «Կնանիք» պատմվածքի բնաբան բերել է ժողովրդական «Դըն դոբուդում հարսանիք, Պապունց տանը կընանիք» ասացվածքը: Իրեն հատուկ նուրբ ու իմաստալից հունորի օգտագործմամբ Մ.Յովհաննիսյանը պատմվածքում շեշտում է նախ կանանց տեղն ու դերը աստծո պարգեւած կյանքում, միաժամանակ նաեւ նրանց հոգու գեղեցկությունը, վիշտն ու ցավը տանելու կամքի ուժը, միմյանց տեղի ու անտեղի ձեռ առնելու սրբագործված ավանդույթը: Պատմվածքում շեշտվում են գյուղական դաշտային ու առտնին աշխատանքներին նրանց աշխույժ մասնակցությունը, տուն ու տեղ պահելու ու պահպանելու եռանդը, սրբագործված սիրո դիրքերից արատավոր երեւույթները քննադատելը: Պատմվածքը ոչ միայն ներկայացնում է կանանց աշխարհը, այլեւ կոլորիտային մի հետաքրքիր հյուսվածք է՝ խորհրդային տարիների կոլտնտեսային կյանքը ցուցադրելու առումով: Պատմվածքն ավարտվում է արցախցի տղամարդու հպարտության ու վստահության ամենանուրբ ընդհանրացմամբ. «Հարարցի կանանց կողքով անցնել կլինի՞»: Տեղին ու ճշմարիտ է ասված:

Մարդկային ճակատագրերի գեղարվեստական մի ասք է «Մոռացված արահետներ» պատմվածքը: Հասարակա-

կան ու տնտեսական նոր պայմանների թելադրանքով մարդիկ ե՛ւ գտնում են իրենց տեղը քաղաքներում, ե՛ւ այդ հենքի վրա քայքայվում է գյուղը: Ինչ որ տեղ խաթարվում են նահապետական հին լավագույն հարաբերությունները, ինչ որ տեղ դեռեւս ճիգ ու ջանք չեն խնայվում պահպանելու այն ամենը, ինչ մարդուն մարդ է պահում: Այս պատմվածքում եւս Մ. Հովհաննիսյանը գեղարվեստական բարձր մակարդակով հմտորեն խորացել է պատկերվող երեւույթների մեջ եւ հասել իր նպատակին: Գրողը պարզապես ներկայացրել է XX դարի 40-ական թվականներից սկիզբ առած մարդկային փոխհարաբերությունները, թափանցել հերոսների ներաշխարհը, ճշմարտացիորեն հայտնաբերել նրանց: Նա, ինչպես ժամանակի աչքի ընկնող հայ արձակագիրները, կարողացել է պատասխանել Պ.Սեւակի ուսուցանող հարցադրումին. «Վաղուց է եկել ժամանակը մտածող-մտավորական-իմացականությամբ լեցուն հերոսի՝ լինի դա քնարական հերոս, թե հերոս վեպ ու վիպակի»<sup>7</sup>:

*«Մոռացված արահետներ»* պատմվածքում մնայուն կերպարներ են Սիրան մայրիկը, որդին՝ Արտոն, Արտոյի ընկերը՝ Մխիթարը:

Սիրան մայրիկը ծերացել է, բայց չի գնում քաղաք, որտեղ ապրում եւ աշխատում է որդին՝ Արտոն: Վերջինս էլ չի կարող վերադառնալ գյուղ, նա աշխատում է դիսերտացիայի վրա, տարերքը գիտությունն է: Սիրան մայրիկի հոգում ծնողական սիրո ծիածանը չի խամրում երբեք, միշտ լավն է մտածում եւ արտահայտվում զոհունակությամբ:



Արտոն խնդրում է ընկերոջը՝ Մխիթարին, որ գնա գյուղ եւ մորը տանի հիվանդանոց: Բայց Սիրան մայրիկը, թեկուզ տառապում է շաքարախտով, չի ցանկանում գնալ ու պառկել քաղաքային հիվանդանոցում: Գրողը հոգեբանական նուրբ զգացողությամբ, պատումի շարադրման վարպետությամբ ի ցույց է դնում գյուղացի մոր աստվածային բնավորության բոլոր երանգները: Սիրան մայրիկը չի ուզում անգամ խորհել այն մասին, որ Արտոն չի ցանկացել գործը թողնել եւ այցելել մորը: Մխիթարի եւ Սահակ քեռու թախանձագին խնդրանքի պահին, որ Սիրան մայրիկը համաձայնվի քաղաքային հիվանդանոցում պառկելու համար, ներկայանում է Արտոն: Մ. Գովհաննիսյանը հոգեբանական մի պատկեր է ստեղծում հիվանդ մոր ու կարոտած որդու հանդիպման առիթով: Պարզվում է, որ Արտոն վատ երազ է տեսել, դիսերտացիայի պաշտպանությունը թողել անավարտ եւ այցելել մորը: Պատմվածքում ասես ոչ թե կարդում, այլ տեսնում ենք մոր եւ որդու հանդիպումը. «Դուռը բացվեց եւ դռան մեջ երեւաց Արտոն: Տեսավ թախտին ծվարած մորը, իրեն նետեց գիրկը: Ձեռքն է պաչում, երեսն է պաչում, մազերն է պաչում, ձեռքը տանում է խորշամած երեսով, մազերին է քսում, գլուխը դնում է մոր գրկում, շրթունքը դողում է»:

Մայրը ոչ թե խոսում, այլ խոսող շողեր է ցանում. «Եկա՞ր, եկել ե՞ս: Պիտի գայիր, ինչո՞ւ չպիտի գայիր: Որ փոքր էիր, ծվածեղ էիր ուզում, ծվածեղին ցացա էիր ասում, հիշում ե՞ս, ասում էիր՝ ցացա եմ ուզում, ճաշի համար պա-

Իհաճ յուղից մի քիչ թավան էի գցում, ասում էիր՝ էլի, անում էի էլի ու դառնում էր յուղը շատ ցացա՝ պուճուրիկ Արտոյի համար:

... Արտոս սրտահեռիչ է, Արտոս լավ Արտո է: Արտոս ոտանավոր է գրել իր Սիրանի մասին, ոտանավորը պահում եմ, անգիր գիտեմ: Ուզում ես ասեմ, Մխիթարն էլ լսի»<sup>8</sup>:

Սոր անսպառ ու արցունքոտ կարոտը Արտոյի մեջ արթնացնում է կյանքի, ճակատագրի, արարքի, խղճի պատասխան չգտնող խոհեր: Դիմելով Մխիթարին, մա ասում է. «Նա՛յիր ինչ ստորություն է,- Արտոն առաջ մղվեց ու ձեռքը մեկնեց Բինաձորի կողմը,- ո՞վ է ասել այսպիսի դաժան գեղեցկություն ստեղծվեր: Գնում ենք անտեր եղած քաղաք ու մոռանում ամեն ինչ՝ վագիր գործի, վագիր խանութ, վագիր, վագիր, ժամանակ չի մնում, որ մարդ ինքն իրեն տեսնի ու զգա...

- Ինչո՞ւ են մայրերը կարոտում իրենց որդիներին:

- Եթե մայրերը չկարոտեն իրենց որդիներին, որդիները կմոռանան իրենց մայրերին,- Արտոն մայեց Յեղուշին ու ժպտաց.- Գուցե ես սխալվո՞ւմ եմ:

Յեղուշը լուռ սեղմվեց ամուսնուն:

- Սենք միշտ էլ ժամանակ չենք ունենում մեր սերն ասելու մեր հարազատներին: Դա մենք ուշացած ենք հասկանում, երբ այլևս չկա մա, ում պիտի ասվեն մեր սիրո ու կարոտի խոսքերը»<sup>9</sup>:

Գյուղական կյանքի նկարագրությունը Մ.Յովհաննիսյանի մի շարք պատմվածքներում համեմված է սրամտու-

թյունների, աշխույժ զրույցների, անեկդոտների հնարանքներով: Դրա լավագույն վկայությունը «Ծաղրատեղ» պատմվածքն է: Դարերի ընթացքում ձեւավորված սրամտությունը հասել է նոր օրերին, եւ մարդիկ գործի ժամին լինի, թե հանգստանալու պահերին, նրանով բնութագրում են միմյանց:

Առաջին պահից թվում է, թե պատմվածքի կերպարները թվարկված են մակերեսային բնութագրումներով, սակայն դա միայն առաջին հայացքից: Պատմվածքում Անաստասը, Երվանդը, Սոկրատը, Շամիրը, Վարյան, Անտիկը, Գավրուշը, Մեխակը հանդես են բերված իրենց բնավորություններով: Նրանք մրցում են սրամիտ արտահայտություններով, սակայն կոլորիտային նրբերանգներով, աշխատանքի ժամերին, ընդհանուր սեփականության պահպանման ձգտումներում: Գրողը կարողացել է իր խոսքին գումարել ժողովրդական բառ ու բանը, աշխարհընկալման դրսեւորումները: Իրար հետ զրուցելիս անպայման առկա են բնութագրական սրամտությունները: Բերենք օրինակներ. «Ընկեր Անաստասն ու Երվանդը Սոկրատի բերանից խլում են անմեղ ասված խոսքն ու մասանորի անում: Իբր թե ընկեր Անաստասը Սոկրատին հարցրած լինի, թե Սոկրատի սիրտը ամենից շատ ինչ է ուզում, ու Սոկրատն էլ իբր թե ասած լինի՝ աշխարքիս տակ երկու բան է ուզում՝ մեկ որ երկիր-խաղաղություն լինի ու մեկ էլ, որ նախագահն իրավունք տա՝ որտեղից ուզենա կովի համար խոտ հարի»<sup>10</sup>:

Շամիրը պատերազմի մասին իր հուշերն է պատմում:

Սոկրատը ցանկանում է իմանալ, թե ընկեր Շամիրը քանի օրդեմ ու մեղալ է ստացել: Երվանդը սրամտում է. «Ետեւից կարողացել են հասնե՞լ, որ մեղալ տան»: Ավանդականն այն է, որ իրար ձեռ են առնում, լինում է, որ խռովում են միմյանցից, սակայն չեն թշնամանում, դարավոր սովորություն է:

Գրողը հետաքրքիր տեսարաններ է ստեղծել պատմվածքում: Օրինակ, խոտհարքի ժամանակ խոզ մորթելը ու խնջույք կազմակերպելը, գյուղ եկած հովեկների մասին զրույցը, Գավրուշի եւ Անտիկի երկխոսությունը, նախագահի եւ Սոկրատի զրույցը արտեզրին եւ այլն:

Կոմպոզիցիոն տարբեր ձևերի առկայությունը եւ թեմատիկ բազմազանությունը Մ.Յովհաննիսյանի պատմվածքները դարձնում են բազմերանգ ու հետաքրքիր: Ստեղծագործական հմտության արդյունք է դա, որ երբեք չի մոռացել զրողը: Փոքրածավալ մի պատմվածք է «Յարեւաններ» պատումը: Նրանում ե՛ւ դիմանկարի միջոցն է օգտագործված, ե՛ւ ականատեսի զրույցը, ե՛ւ հեղինակային բնութագրումները, ե՛ւ երկխոսությունը: Յարեւաններ են Աբելն ու Սիմոնը՝ բնավորության տարբեր խառնվածքով: Աբելը ձեռ առնելու չափ կատակասեր, Սիմոնը՝ նահապետական ավանդույթներով խրատված: Սիմոնն ու Աբելը գյուղի բնակիչների սրամիտ զրույցների առարկա են դարձել: Եվ ահա, Սիմոնը որոշում է գյուղում նոր տուն կառուցել, որ Աբելից հեռու լինի: Վերջինս թեկուզ միշտ ձեռ էր առնում Սիմոնին, սակայն ներքուստ գոհ էր նրանից եւ ան-

հանգստանում է, երբ լսում է նրա որոշման մասին: Աբելը ներկայանում է Սիմոնին եւ լսում նրա վերջնական վճիռը: Պատմվածքը հանգուցալուծման մեջ վերածվում է նովելի: Աբելի խնդրանքին, որ Սիմոնը ուրիշ տեղ տուն չկառուցի, Սիմոնը պահանջում է.

- Ուզո՞ւմ ես հարեւան մնանք, Հերսիկին տուր Վիտալիկին:

Եվ Աբելը համաձայնվում է, որ իր դուստր Հերսիկին աճուսնացնեն Սիմոնի ուստր՝ Վիտալիկի հետ:

Այսպիսով, ամրապնդվում է Աբելի եւ Սիմոնի ավանդական հարեւանությունը, որ գրողի գեղագիտական իդեալի հաստատումն է:

Մ.Հովհաննիսյանի առանձին պատմվածքներ սկսվում են գլխավոր կերպարների մենախոսությամբ, որ կոմպոզիցիոն միջոցների ընդունված մուտք է: Լավն այն է, որ այս մենախոսությունները մի կողմից բնութագրող են, մյուս կողմից՝ սյուժետային զարգացման հաջող ընթացքի նախադրություն: Ընթերցողը հետամուտ լինելով պատումի իրադարձությունների նկարագրությանը, մինչեւ վերջ համոզվում է կերպարների զարգացման ընթացքի մեջ: Դրա լավագույն վկայություններից է «Գոտկացավեր» պատմվածքը: Այստեղ արժե անդրադառնալ մի կարեւոր հարցադրման, որը վերաբերում է ստեղծագործության թեմային, թեմա, որ վերցված է հասարակական կացութաձեւի պարտադրած կոլտնտեսային կյանքից: Կոնկրետ, «Գոտկացավեր» պատմվածքի նյութը կոլտնտեսության խոզա-

բուժական ֆերմայում խնորվող հարաբերություններն են: Սակայն ընդգծենք, որ Մ.Հովհաննիսյանը հենց էն գլխից գեղարվեստական իր երկերում առաջին հերթին ուշադրություն է դարձրել գրականության գլխավոր պրոբլեմի՝ մարդու կերպարի ստեղծմանը: Նրա գործերում գաղափարը բխում է ո՛չ ընդգծված միտումնայնությամբ, այլ տիպական բնավորությունները տիպական պայմանների հյուսվածքում ցուցադրելու հմտությամբ: Եզրակացությունը կատարում է ընթերցողը, որ գրողի հաջողության գրավականներից է: Այսպես, «Գոտկացավեր» պատմվածքի կերպարները՝ երկու խմբի բաժանված, դրսևորում են իրենց աշխարհընկալումները եւ արդյունքում՝ բնավորության գծերը: Մի կողմում երիտասարդ մասնագետ Մարտիկն է, Մեխակը, վերջինիս դուստրը՝ Սիրունը, որ սիրում է Մարտիկին, մյուս կողմում՝ կոլտնտեսության նախագահն է, ֆերմայի վարիչ Համոն, պահեստապետ Զառիկը:

Խարազանվում է նախագահի ազահությունը, ժողովրդի ընդհանուր սեփականության հաշվին ուռճանալու ձգտումը, ֆերմայի վարիչի համագործակցությունը նրա հետ եւ Զառիկի գործիք դառնալը նախագահի ճիրաններում: Գրողը ցույց է տալիս ժողովրդի դարավոր ազնվությունը մարմնավորող մարդկանց՝ Մարտիկի, Մեխակի, Սիրունի լուսավոր ձգտումների հաղթանակով:

Մ.Հովհաննիսյանի պատմվածքներում մտացածին տեղանուններ չկան: Ամեն ինչ արցախյան է՝ պատմական եւ նոր հնչերանգներով: Սակայն դա երբեք չի խանգարում

գեղարվեստական հյուսվածքի մեջ առնելու գրական կերպարներին: Գրողն ստեղծում է իր աշխարհը՝ երանգավորված իր երազներով, իր ներկայնակներով: Կարողում ես «Գարուն է, գարուն չէ» պատմվածքը, որի գործողությունները տեղի են ունենում Ցեխձորում եւ Կաչաղակաբերդում, դեմո հառնում են հոգնած, վրդովված, հայրենամուտ, խորհրդային կացութաձեւին հատուկ եսակենտրոն ու կեղծ դեկավարների դեմ ըմբոստացող Օսեփը, Մեխակը, Անդրին, Աշոտը... Մի ամբողջ համայնք կրակի ձեռքն է ընկել քաղաքում բնակվող, բայց կոլխոզի նախագահ նշանակված Վանեսյանի ձեռքին, որը տնտեսության համար ստեղծված ամենադժվարին եւ վտանգավոր օրերին չի հետաքրքրվում, թե ինչ է տեղի ունենում գյուղում: Այս պատմվածքը մի ամբողջական հաջող պատկեր է:

Գրողը հարցեր է բարձրացնում եւ քննարկում՝ ելնելով ժողովրդին ծառայելու արվեստագետի իր պարտականությունից: Այս պատմվածքը խորհրդային գյուղի սոցիալական անմխիթար կյանքը պատկերող, համարձակ ու մնայուն մի վավերագրություն է:

Նրանում կերպարների շրթերով ներկայացվում են արդեն խարխլվող կոլտնտեսային կարգերը: «Կոլխոզնիկն էլ մարդ է°, ամառ-ձմեռ շան քթից ջուր ենք խմում»,- բողոքում է Անդրին:

«Գոմը փլվել է, Առուշանի ոտն էլ ջարդվել է, անասունն էլ բաց երկնքի տակ է մնացել... Հետո էլ ուտելիքը վերջացել է, մարդիկ սոված են, սոված, կոտորվում են»,- ֆերմա-

յից լուր է բերում Աշոտը: Մեխակը ներսում չարացած խորհում է. «Նախագահը քաղաքում է... նախագահին ինչ, հիմա նա կնոջ ծոցումը հանգիստ քնած է: Քաղաքում ապրում է, գյուղում նախագահություն անում»: Աշոտը դժգոհ թոնթորում է. «Ծխախոտն ինչ է, որ չեք ուղարկում: Էստեղ տաք, կուշտ ապրում եք, կոթավոր ծխախոտ վառում, կարծես մենք ստրուկ ենք: Հաց չկա, որ զահրումարվենք, ես լեմ ու բոլ աշխարհում հաց չկա: Մենք մարդ չենք: Ամեն մեկդ իր կնկան ծոցը մտած, չեք ասում, որ մարդ կա Ցեխծորում, պետք է նրանց հոգսը քաշել: Հիմա էլ դուք գնացեք Ցեխծոր, մենք գյուղում ապրենք»<sup>11</sup>: Եվ Ցեխծորում մոռացված անասնապահների հոգսը քաշելու փոխարեն նախագահը բանսարկությամբ եւ իր կողմնակիցների ջանքերով բրիգադիր Մեխակին համարեց մեղավոր: Դա էր չարիքը, որ գրողի աչքից չի վրիպի: Նման գործերը կարդալուց կրկին ու կրկին համոզվում ես, որ գրողը խորապես ճանաչում է գյուղը եւ գրում է հարազատ եզերքի եւ նրա քրտնաթոր մարդկանց հանդեպ ունեցած սիրո եւ հոգատարության մղումով:

Արդեն մշել ենք, որ Մ.Հովհաննիսյանի պատմվածքները որոշ դեպքերում շարունակում են մեկը մյուսին: Դրանով էլ պայմանավորված, նա իր ընտրանին բաժանել է շարքերի: Նրանցում դեպքերի եւ իրադարձությունների ընդհանուր շղթայի մեջ հանդես են գալիս կերպարներ՝ նույն անուններով, նույն մասնագիտությամբ, սակայն միանգամայն կյանքի թելադրած մոր պայմաններում: Եվ



գրողին հաջողվում է պատմվածաշարի ընծեռած միջոցներով կյանքը ներկայացնել տեսանելի կտավի վրա, կերպարների զարգացումը ընդգծելով սյուժեների զարգացման տեսադաշտում: Այստեղ արժե նշել «Քարկեծ» պատմվածքը, որ փաստորեն «Գարուն է, գարուն չէ» ստեղծագործության շարունակությունն է: «Քարկեծում» գլխավոր կերպարները նույն են՝ նախագահ Վանեսյանը, բայց արդեն պաշտոնազուրկ Մեխակը, որոնց բնավորությունների նոր դրսևորումները բացահայտվում են նոր կերպարների՝ Ջոիրաբի, Արուսի, Եգորի շրջապատում: Կյանքը շարունակվում էր խորհրդային բռնատիրությանը հատուկ ամենաթողության պայմաններում: Եվ գրողը չէր կարող կեղծել իրեն, նրա ըմբոստությունն ու անհամաձայնությունը երեսույթի դեմ բացահայտված են ռեալիստական պատկերների հենքում:

Մ.Յովհաննիսյանին հաջողվել է հոգեբանական խորքային ընդգծումներով ցույց տալ Վանեսյանի դաժանությունն ու ամենահաղթ լինելը, նույնիսկ այնքանով, որ Ջոիրաբը վախից հրաժարվում է Մեխակին վերցնել գործի՝ որպես քարհատ-բանվոր:

Մ.Յովհաննիսյանը պատկերավորության միջոցներին տիրապետում է այնպես, որ ուղղակի դեպքը, իրադարձությունը, կերպարի ներաշխարհը նկարում է: Նրա արցախյան-կոլորիտային նկարագրություններն ու լեզվաոճական հնարանքները ինքնատիպ են: Հենց դրանցով էլ պայմանավորված է պատմվածաշարերի ընդհանուր հաջողու-

թյունը:

## ՆԱՐՆՁԱԳՈՒՅՆ ԳԻՇԵՐՆԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾՆԵՐԸ

Ելնելով իր պատումների մեջ հոգու ծիածաններից հյուսված «Նարնջագույն գիշերներ» ստեղծագործության հաջողությունից, Մ. Հովհաննիսյանը իր սիրո թեման արծարծող պատմվածաշարը կոչել է նույնանուն նովելով: Եվ ճիշտ է վարվել, որովհետեւ մարդու աստվածապարզեւ սիրո երջանկության զգացումը նա միանշանակ չի պատկերել, դիտարկել ու համոզվել է, որ սերը կյանքի ավիշն ու փիլիսոփայությունն է, որ սերը միագույն ու պարզունակ չէ, այնպիսի եւ այնքան առեղծվածներ ունի, որ նույնիսկ Աստծուն չի հաջողվել հարթել նրա ճանապարհը, արարել է Լիլիթին, որ վառի Ադամին, ապա ստեղծել է Եվային, որ իր Ադամը մենակ չզգա իրեն եւ կողքին ունենալով Եվային, միշտ երազի ու տենչա Լիլիթին, որ միշտ մնա սիրո ծարավ, հաստատելով, որ իսկական սերը ծարավի եւ կարոտի աղբյուրն է՝ հավերժախոս, մշտազմա:

Կարդալով Մ.Հովհաննիսյանի սիրային ստեղծագործությունները, համոզվում ես, որ դեմդ կյանքի բովում կոփված, կենսափորձով իմաստնացած գրող է, որ յուրացրել է հայ եւ համաշխարհային գրականության լավագույն ավանդույթները, ստեղծել սեփական առեջները եւ հյուսել մի հրաշք գոթելեն, որ իրենն է՝ կոլորիտով, ոճով, պատկերման նրբանուրբ միջոցներով, հոգու ջերմացնող բացահայտում-

ներով: Մենք ընդգծում ենք սիրո թեմա հասկացությունը, սակայն միաժամանակ ուշադրություն սեւեռելով թեմայի արծարծման միջոցներին եւ ձեւերին: Մեծ Լոռեցին 1899 թ. իր ընկերոջը՝ Փիլիպոս Վարդազարյանին գրած նամակում անդրադարձել է ստեղծագործության ձեւին եւ ուժին: Փ.Վարդազարյանը նշել է, որ պետք է այնպես գրել, որ նրանում արծարծված միտքը ուրիշները արտահայտած չլինեն: Թումանյանը հիշեցրել էր. «Բանաստեղծությունը փիլիսոփայություն հո չի... Ո՞ր բանաստեղծն է մի նոր միտք հայտնել: Ես, որ աստվածացնում եմ Շեքսպիրին, իսկի չեմ էլ մտածում, թե նա ինչ միտք է հայտնել, դրա վրա չեմ հիանում, այլ թե ինչպես է հայտնել»<sup>1</sup>:

Ս. Հովհաննիսյանի «Նարնջագույն գիշերների» յուրաքանչյուր պատում մարդկային հոգեբանության եւ բնության պատկերների մի թարմ, հեքիաթային համաձուլվածք է, որ կարդալուց գեղագիտական սիրտ շոյող հաճույք ես զգում: Թեմայի բացահայտման նրբերանգները քեզ մեկ տանում են բնության գիրկը եւ այնտեղից դեպի կյանք, մեկ էլ՝ ընդհակառակը: Հենց այդպես էլ սկսվում է «Նարնջագույն գիշերներ» նովելը. «Գրիգորը երեկոները թախծում է, ու թախծելը նրան դուր է գալիս: Պառկում է դեռ չհովաքած գետնին ու նայում աստղոտ երկնքին: Գիշերը կես է դառնում, իսկ նա, դեռ մեջքին պառկած, բաներ է մտածում: Երկնքում ցուցնում են աստղերը, հովը խաղում է դեմքին, իսկ կրակին դրած թեյամանը մանր տոժալով արծարծում է հիշողությունը»<sup>2</sup>: Գրիգորի ուշքն ու միտքը Մանուշակի

մոտ են, որին սիրել է անմնացորդ, եղել է իր առաջին սերը, եւ ամեն մի պահի նա չի մոռանում անցած օրերը: Մ. Հովհաննիսյանը քնարական շեղումների միջոցով ներկայացնում է այդ պատմությունը եւ կրկին անդրադառնում Գրիգորի ներկա ցանկությանը. «Գրիգորը սթափվում է մտքերից ու դժկամ բարձրանում տեղից:

Աստղաբույր գիշերը հոգնած բնությանը խաղաղ քուն է բերել: Իսկ Գրիգորի քունը չէր տանում, Մանուշակին տեսնելու ցանկությունը բորբոքել էր երեւակայությունը»<sup>3</sup>: Այս մտորումներից հետո հեղինակը կրկին քնարական շնչով վերհիշել է տալիս Գրիգորի եւ Մանուշակի ամոթխած սերը, նրանց առաջին հանդիպումը գյուղական կյանքի խաչմերուկներում, ապա ամուսնությունը, Մանուշակի հղիությունը, կովը կթելիս՝ կովի քացին եւ վիժելը: Չնայած ծնողների հորդորանքին, որ Գրիգորը բաժանվի Մանուշակից, նա այդ անել չէր կարող, սիրում էր Մանուշակին: Տեղի է ունենում նաեւ անսպասելին: Հանդում Գրիգորը գայթակղվում է Սիրանից եւ հանդիպում նրան, խորհրդածելով. «Սիրանը մեղք է... մարդաթող կնկանը մեղադրելի չէ»: Միեւնույն է, Գրիգորը բռնկված է Մանուշակի սիրով. «Իմ Մանուշակը ուրիշ է... էլի նույն ամոթխածն է մնացել»: Եվ կնոջը տեսնելու տենչը նորից տեղահան է անում նրան: Ախր մի շաբաթ չէր եղել տանը: Եվ նա քայլում է դեպի գյուղը:

Պատումի ընթացքը փոխվում է անսպասելի: Անակնկալի է հանդիպում Գրիգորը, նա ցնցվում է, երբ տան դուռը բացում եւ տեսնում է Մանուշակին ուրիշի գրկում: Հուզիչ է ներ-

կայացվում տեսարանը. «Առաջին պահ Գրիգորը չհավատաց աչքերին՝ ո՛չ, չլինելու բան է, ո՛չ, ո՛չ: Անսպասելի մի դող բռնեց մարմինը, ու սկսեց ատամներն իրար զարկել, այնքան բարձր, որ կարծես ատամներով քար էր ջարդում: Յետո սիրտը մեկից փուլ եկավ, երեխայի պես պռոշ արեց ու պետք է փղձկար, բայց մի կերպ իրեն դուրս տարավ, որ լացը ուրիշ մեկը չտեսնի»<sup>4</sup>:

Ստեղծագործությունը նովելային ավարտ է ունենում: Գրիգորը հետ է գնում բանջարանոց: Աղբյուրի գլխաքարին նստած նա դեռևս անզգայացած էր: Քիչ հետո այցելում է Մանուշակը, ձեռքի կապոցը դնում գետնին: Սակայն Գրիգորը խռոված իր բախտից եւ Մանուշակից, չի արձագանքում, դանդաղ իջնում է մարզերը:

Ահա այսպիսի ավարտ է ունենում Գրիգորի սերը, որը երջանկություն էր խոստանում, սակայն ավարտվում է ողբերգությամբ: Այս առումով էլ մեր խոսքի սկզբից ընդգծել ենք, որ Մ.Յովհաննիսյանի պատմվածքները սիրո ծոցեր չեն, հեռու են ստերեոտիպից, սերը ներկայացվում է տառապանքի ելեւէջներով: Ինչ մնում է «Նարնջագույն գիշերներ» նովելի ժանրային առանձնահատկությանը, ապա չպետք է շրջանցենք այն ազդեցությունը, որ հեղինակը կրել է Գ. Ջոհրայի «Ջաբուղոն» նովելից: Գրիգոր-Ջաբուղո, Մանուշակ-Վասիլիկա կերպարների ճակատագրերը խաչաձեւվում են սիրո ճանապարհին: Սակայն այդ ազդեցությունը նկատվում է միայն նովելի կառուցվածքի մեջ: Նրա պատկերային հյուսվածքը, թեմայի բացահայտման նրբե-

րանգները, բառամթերքի կոլորիտային ծփանքները նովելը դարձնում են ինքնատիպ ու բարձրարժեք:

Սերը կյանքի փիլիսոփայությունը՝ չէ, գուցե ասենք՝ կյանքն է սիրո փիլիսոփայությունը՝ բազմանկար, բազմերանգ, ժպիտ-արցունք, արցունք-ժպիտ, իրական-անակնկալ, երազ-տառապանք: Մ.Յովհաննիսյանի «Նարնջագույն գիշերներ» պատմվածաշարի սիրո փիլիսոփայությունը այդ շերտերի եւ ապրումների բացահայտումներ են՝ բնական, անմիջական, պատկերավոր: Անդրադառնալով «Ակամա փեսացուն» պատմվածքին: Նրանում հանդես են բերված սյուժետային զուգահեռ գծեր: Գեղամ-կորուսյալ երկիր, կորուսյալ սեր-Արմինե, որոնք ներկայացնում են 1915 թ. եղեռնին զոհ դարձած ժողովրդի ողբերգությունը: Գեղամը, որ Վանում սիրում էր Արմինեին, չի հասնում իր սիրուն: Արմինեին խլում է թուրք փաշան, իսկ Գեղամը կորցնելով հարազատների, ապաստան է գտնում նոր հայրենիքում եւ կյանքից հեռանում տառապալից կարոտով: Պատմվածքում հանդես է բերվում բժիշկ-Արմինե-ընթանարտիկ եռանկյունը: Բժիշկը դառնում է Արմինեի ականա փեսացուն, իսկ Արմինեն սիրո իր պատմությունն ունի՝ ընթանարտիկի կողմից խաբված աղջկա ճակատագրով: «Կարապ» ռեստորանում հանդիպումների ժամանակ լույս է սփռվում սիրո իմաստի, սիրո առեղծվածային օրենքների վրա: Եզրակացությունը ընդգծվում է Արմինեի եւ բժշկի երկխոսության միջոցով: Խոսքը բացում է Արմինեն:

- Եվ ինչո՞ւ են տղամարդիկ կարծում, որ տիրելով կնոջ

մարմնին, տիրում են նաեւ հոգուն...

- Նա ձեզ սիրում է, հանուն ձեր սիրո բաժանվել է կնոջից:

- Տղամարդիկ միշտ էլ ուշ են խելոքանում, եթե նրանք կարող են խելոք լինել...

- Ես եղել եմ նրանց տանը, երեխան հիվանդացել էր, իսկ կինը չկար:

Երկխոսությունն ավարտվում է ռեստորանի մոտ: Արմինեն առաջարկում է մտնել ռեստորան եւ խմել Գեղամի հիշատակի կենացը: Բժիշկ-ակամա փեսացուն պատասխանում է. «Եվ մեր, չէ՞ որ ամեն մեկս յուրովի Գեղամ է...»:

Անսքող զգացումների, սիրո քաղցրության եւ նրա պատճառած դառնության խոստովանություն է *«Իմ հին լոռենի»* պատմվածքը: Եթե չափածո շարադրվեր, ժանրային առումով կհամարեի ասք՝ բնական, անխաթար, ազնիվ, ցավեցնող սիրո եւ նրա անդարձ կորստի մասին:

Համարձակորեն նշենք, որ պատմվածքում հաջողությամբ է լուծվել «հերոս-կերպար-անհատականություն» օրինաչափ պահանջը: Արմենը, Հասմիկը, Ռուբենը, Ալեքսանդր Դուկասյանը հասցված են անհատականության խտացված աստիճանի: Մ. Հովհաննիսյանը հմտորեն թափանցել է կերպարների հոգեւոր կեցության խորքը, քննության ենթարկել կյանքի սոցիալական շերտերի մատուցած ակնկալիքներն ու անակնկալները, գնահատել մարդկանց մեջ ելեւէջող բարոյական արժեքները, սիրո հոգեբանության ընդգրկումներն ու տվայտանքները: Պատմվածքի

այուժեն զարգանում է հասարակական-սոցիալական համապատկերի վրա: Հասմիկն ու Արմենը, որ դեռևս դպրոցական տարիներից սիրում էին իրար, չեն արժանանում միմյանց: Հասմիկը թողնելով բարձրագույն իր կրթությունը, ամուսնանում է Սաշա-Ալեքսանդրի հետ՝ ելնելով կոմբինատում նրա բարձր դիրքից եւ աշխատավարձից: Արմենը ծառայել է բանակում, վերադարձել, դարձել կոմբինատի օրինակելի եւ արդարամիտ բանվոր, դեռևս չգիտե Հասմիկի ամուսնության մասին: Վերջապես պարզ է դառնում ամեն ինչ: Սակայն ուշ է արդեն: Առաջին սիրո կորուստը դժվար է վերականգնել: Սիրո պատումի ընթացքում գրողը գեղագիտական ամենանուրբ շտրիխներով ցույց է տալիս Ռուբեն-Ալեքսանդր հակամարտությունը, Արմենի վեհանձնությունը Սաշայի հանդեպ, սակայն միեւնույն է, նա չի մոռանում այն լորենին, որի սոսափյունի տակ ամոթխած իր սերն է հաղորդել Հասմիկին:

Վարպետության կնիք կա այս պատմվածքի վրա: Թարմ ու բնական համեմատությունները, հոգեբանական բացահայտումները՝ բնության երեւույթների զուգակցությամբ, պատմվածքը դարձնում են բարձր մակարդակի մի գործ:

Ժամանակին ճիշտ է նկատել գրականագետ Կիմ Աղաբեկյանը. «Հովհաննիսյանը չի սիրում գույների անհարկի խտացումներ. էպիտետներն օգտագործելիս բավականին զգույշ է, դիալոգներն աշխույժ են, տրամաբանական: Գրողը գիտի թափանցել իր հերոսի հոգու խորքերը, տեսնել նրան, ինչպես կա եւ զարմանալ, որ հերոսը անսպասելի ա-



րարքներ է գործում»<sup>5</sup>:

Երջանիկ սիրո ճամփան դժվար է լինում, երջանիկ սիրուն հասնելու համար տառապել է պետք, պետք է ձգտել, մաքառել: Այս գաղափարի համեմունքն է լուսավորում «Գնում ենք արեւին դիմավորելու» պատմվածքի ենթաբնագիրը: Ասում են պատմվածք, սակայն գեղագիտության օրենքն ինձ հուշում է, որ այն արձակ բանաստեղծություն է՝ երաժշտական, հնչեղ, սրտառուչ ու թեւավոր, որովհետեւ նրա ընթացքը պայմանավորված է պոեզիայի առանձնահատկություններով: Ինչպես միշտ, այստեղ եւս գրողը բնության գիտակ է, բնապաշտ՝ բառի բուն իմաստով: Այստեղ բնությունը մարդեղանում է, մարդը ծուլվում բնությանը: Այստեղ անդունդը զգուշացնում է, արելը՝ կանչում: Այդ նրանք են ասում. «Քայլում ենք կիսամութի մեջ, - մեր ոտքերի ձայնը խախտում է ներդաշնակ լռությունը: Նվարդը սայթաքում է, - քարը աղմուկով գլորվում է ձորը:

- Ահո՛ւ, շը՛շշ,- սպառնալից զգուշացնում են ցածր անդունդները»<sup>6</sup>:

Արմենը եւ Նվարդը մենակ չեն: Հրաշապատում հեքիաթի հերոսի պես նրանց հանդիպում է դաշտապահ Արամը եւ իմաստունի հանգույն ցույց տալիս երիտասարդների ուղին: Քսանհինգ տարեկանում կնոջը կորցրած (նա մահացել է) Արամը խորհրդանշում է սիրո չկարդացվող առեղծվածը եւ միաժամանակ պահը չկորցնելու խորհուրդը: Իսկ Լալիկ աղբյուրի լեգենդը անդրադարձ է դարերի ընթացքում դաժանություններին եւ բռնություններին զոհ

դարձած սիրո պատմությունը:

Արմենը հանոզված է, որ Բերդասարի կատարին բարձրացած արելը փնտրում եւ սպասում է իրենց: Կրկին նրանց ճամփին դաշտապահ Արամն է՝ «Դժվար է, պետք է որսալ պահը» խորհուրդը շրթերին: Երկխոսության մեջ Արմենը հանոզվում է, որ կյանքը փիլիսոփա բանաստեղծ է դարձրել Արամին, որ ճակատագիրը հուշում է, որ թեկուզ դժվար, բայց պետք է Բերդասարի կատարին դիմավորեն արեւին, արեւ, որը խորհրդանշում է անձնուրաց սերը:

Մ.Յովհաննիսյանի արձակը կյանքի ընդգրկման եւ մարմնավորման էպիկական օրինաչափություններ ունի: Նա հերոսների ներաշխարհը բացահայտելու համար անդրադառնում է սոցիալական հանգամանքներին, մարդկանց փոխհարաբերություններին՝ հասարակական եւ անձնական շահերի ներառումով:

Հետաքրքիրն այն է, որ հերոսները գործում են կյանքի կանչերով եւ որ ամենից գլխավորն է՝ սրտի թելադրանքով: Այս տիպի ստեղծագործություններից *«Եվ սիրտն ասաց»* պատմվածքն է: Հեղինակը խարազանում է բացասական գծերով օժտված, կյանքի իմաստը միայն փողի մեջ տեսնող Միշիկին, որ իր քրոջ՝ Աշխենի հորդորանքով ցանկանում է ամուսնանալ Մելինեի հետ, իսկ դրան դեմ է Վահանը: Սյուժեի զարգացման մեջ հիմնականում առնելով արդեն ամուսնացած, դուստր ունեցող Վահանի եւ օրիորդ Մելինեի հեքիաթային սերը, գրողը մի կողմից ընդգծում է սիրո առինքնող ու գայթակղիչ ուժը, մյուս կողմից շեշտում է

խղճի արթուն մնալը: Գալիս է պահը, Վահանը քաղաք գործուղվելու պատրվակով (Մելինեն տեղափոխվել էր քաղաք) որոշում է թողնել կնոջը՝ Աշխենին եւ արդեն հասուն աղջկանը՝ Մանուշին, սակայն սիրտն ուրիշ բան է ասում:

Չեղինակը պատոււնը ներկայացնում է գլխավոր հերոսի՝ Վահանի լեզվով: Պատմվածքն ավարտվում է խորհրդանշական այսպիսի պատկերով. «Աստիճաններով իջնելիս լսում եմ Աշխենի խեղդված հեկեկոցը: Ցանկանում եմ արագ իջնել, որ չլսեմ լացի ձայնը, բայց ոտքերս չեն ենթարկվում: Ձեռքս տանում եմ գրպանս: Ծխախոտատուփը հանելիս մի թուղթ ընկնում է ոտքերիս տակ: Գործուղման թերթիկն է: Ես երկար ժամանակ չեմ կարողանում տեղից շարժվել...»<sup>7</sup>:

Չեղինակը եզրակացությունը թողնում է ընթերցողին:

Ինչքան եւ ինչպիսի շերտեր ու երանգներ ունի կյանքը, այդքան եւ այդպիսի կենսական թրթիռներ ունի Մ. Հովհաննիսյանի սիրո թեման գեղարվեստական աշխարհի բերող պատմվածաշարը: Անբիծ սիրո լեզենդված եւ մեր օրերին հասած գաղափարի խաթարումներն ու փոթորկումները հստակ է տեսնում նա, եւ գտնում է, որ հավատարիմ սերը կարող է զույգերի սրտերից փոխադարձաբար թափանցել միմյանց հոգու խորքը: Գրողի այս մոտեցումը միաժամանակ տերտերական «Տեր ես» քարոզի ժխտումն է: Պարզվում է, որ սիրո աշխարհը հակասությունների, իրարամերժման, իրարաբզկտման դրվագներ եւս ունի: Իհարկե, դա ցանկալի չէ, սակայն կյանքի օրինաչափությունը թելադրում է այդ

բարդությամբ: Մ.Յովհաննիսյանը հոգու աչքերով է տեսնում սիրո աշխարհը, նա հոգեբան է նաեւ այս բարդույթի խաչմերուկներում: Կարդում ես նրա «Առավոտ հուսո» պատմվածքը եւ համոզվում դրանում: Աշտը եւ Արփիկը սիրո կապանքները փշրող կերպարներ են: Աշոտի կինը խախտելով հայ ընտանիքի բարոյական դիմազօծին հարիր սովորույթները, դառնում է ազգային ավանդական ընտանիքը փլուզող թեթեւամիտ մայր եւ դատարանի կողմնակալ որոշմամբ նույնիսկ արգելում է, որ Աշոտը հանդիպի իր աղջնակին: Իսկ Աշոտը տառապում է, նա նույնիսկ պատրաստ է հանուն իր դստեր, հաշտվել կնոջ հետ: «Աստված վկա,- ասում է նա,- ես կհամաձայնվեի նորից միանալ կնոջս, միայն թե երեխային չբաժանեին ինձնից»:

Դեպքերը հաջորդում են միմյանց: Աշոտը գտնում է իր սերը՝ հանձին Արփիկի: Ժպտում է հույսի առավոտը, շարունակվում է կյանքը՝ օժված սիրո ջերմացնող շողերով:

Հիրավի, սերը առեղծվածներ շատ ունի: Մեկը նրան հասնում է հասուն կյանքի հենց առաջին քայլից, մյուսը հասնում է, բայց ձեռքից թռչում է հեռացող լորի մման, մի ուրիշն էլ՝ չի հասնում, միշտ ուշանում է, ինչպես պատկերված է «Կյանքը 300 քայլի վրա» պատմվածքում: Արմենը եւ Անուշը դասընկերներ էին: Սիրո զգացումը ուժեղ էր Արմենի մոտ, որ երազում էր հասնել Անուշին: Սակայն Անուշն ամուսնանում է ուրիշի հետ եւ բաժանվում: Արմենը սկսում է իր ընկերությունը, հանդիպումները, զբոսանքը, որ տեսնում է ընդամենը 300 քայլ: Հեղինակը ստեղծում է դեղին

կամրջի պատրանքը, որ բաժանման խորհրդանիշ է: Մի անգամ էլ, երբ Արմենը ներքին մղումով առաջարկում է Անուշին ամուսնանալ իր հետ, Անուշը խախտում է լռությունը. «Արմեն, դու միշտ ուշանում ես»: Կյանքը ունենում է նաեւ այսպիսի թախժոտ սեր, որ տեսնում է գրողը:

«Իսկապես, մարդուն դժվար է ճանաչել» ժողովրդական խորհուրդով է ավարտվում «Անտառապահ Մելիքը եւ ուրիշներ» պատմվածքը: Հենքում ուսանող Գեւորգի եւ Մարգոյի պատմությունն է: Մարգոն թեթևալիկ աղջկա տպավորություն է թողնում, որին չեն հասկանում Գեւորգի ընկերները՝ Մելիքը եւ Զինավորը: Բայց կյանքն ապացուցում է, որ Մարգոն բարեխիղճ եւ ազնիվ է, քան Գեւորգը՝ թեթևամիտ, սիրո գինը չհասկացող: Նա խաբելով Մարգոյին, մի ուրիշ աղջկա հետ մեկնում է Ռուսաստան:

Ծիշտ ու տեղին է նկատել գրող-գրականագետ Ն. Ադալյանը. «Երջանիկ սերն աբսուրդ է. սերը միշտ դրամա է, հոգու վեհացում, եթե խաղ չէ, այլ ինքնամոռաց թռիչք՝ ողբերգական անկումներով: Սերն ու խաղը հակապատկերներ են, մեկը՝ միշտ խորքում, մյուսը՝ մակերեսի վրա»<sup>9</sup>:

Այդպես էլ կա: Սիրո հեքիաթը գունավոր է նաեւ Մ. Հովհաննիսյանի պատմվածքներում, սակայն այդ գույները իրենց մեջ պարունակում են սիրո երազ, սիրո կարոտ, սիրո ժպիտ, սիրո արցունք: Եվ դրանք աստղացողների պես իջնում են «Ծեր պինգվինի հեքիաթում» եւ հերոսը երազում է, որ այդ «հեքիաթը երջանիկ ավարտ ունենա», բայց ի՞նչ անել, երբ սիրո մեջ տառապած մարդու «իմացած բոլոր

ի եքիաթները տխուր են վերջանում», ի՞նչ անուն տալ այն սիրուն, որ եռում է քունքերին ձյուն նստած անհատի եւ վարդի պես նոր փթթող աղջկա սրտերում: Պատասխանը գտնում է հեղինակը եւ սիրո պատումն անվանում էլեգիա:

Կյանքը, հիրավի, մատուցում է իրական-երազային, շոշափելի-ծարավ սեր, որը հոլովվում է գրողի «*Իրիկնային թախիծ*» պատմվածքում:

Մ.Յովհաննիսյանի «*Նարնջագույն գիշերներ*» պատմվածաշարի երանգները բազմաշերտ ու քնքուշ են եւ գեղագիտական հաճույք են պատճառում ընթերցողին:

### ՄԵՆՔ ՄԵՆՔԻՆ ՍՈՒՆՔ ԵՆՔ ԱՍՈՒՄ

Մ.Յովհաննիսյանի երկերի երկրորդ հատորը (2006) բացվում է «*խոստովանություն*» ինքնաբացահայտմամբ, որ իր ծննդյան 50-ամյակի կապակցությամբ Ստեփանակերտում կայացած հանդիսության ելույթն է: Այդ ժամանակ երեւույթների տաք շրջապտույտների մեջ գուցե քիչ ուշադրություն ենք դարձրել դրան, որակելով որպես շնորհակալական խոսք: Սակայն այս օրերին, երբ մեր սրտերը թրթռում են մեր ժողովրդի անցած ճանապարհի արյունոտ ու հուսալառ ելելեջներով, երբ մեր գիտակցության ու ցավի նժարին են դրվում ապրած տառապանքն ու փնջած պատվի ծաղիկները, երբ հայոց քաղաքների ու գյուղերի փեշերին խաղացող երեխաներին բարձունքներից դիտում եւ հրճվում են մեր հազարավոր նահատակների անմինջ հոգիները, նոր իմաստ են ստանում այդ ելույթի առիւնքնող,

հասուն ու ծանրակշիռ մտքերը, որ ընթերցողին ուղղակի տանում են դեպի այն ստեղծագործությունների խորքը, որից հառնում է արցախցի հայը՝ մաքառման հազարամյա կամքի կոփվածքով, ցավածին փիլիսոփայությամբ, հարատևելու վճռականությամբ, բարոյականության ազգային դիմագծով:

«Խոստովանություն»-ում, որ պարզապես առաջաբան է տվյալ ժողովածուի համար, Մ. Հովհաննիսյանն ընդգծում է ազնիվ գրականության պահանջը՝ ճշմարտախոսությունը: Սակայն ի՞նչ բան է ճշմարտությունը: Հարցնում է նա եւ անմիջապես պատասխանում. «Ես այն ճշմարտության մասին եմ ասում, որ հույս է ներշնչում, եռանդի մղում: Այն ճշմարտության մասին եմ խոսում, որ մարդկային կեցության իմաստն է կազմում, գոյության նպատակն է, դեպի որը քայլում են մարդիկ ու սերունդներ եւ որին հասնելու համար պետք է օգտվել տրանսպորտի այն տեսակներից, որ մորից է ժառանգվում»<sup>1</sup>: Սակայն, ըստ գրողի, ճշմարտությունն առավել բեռ է, որ պետք է տանել մեջքի վրա, ստեղծած գրականության ուսերին: Խոսում այս առաջաբանում գրողը վերհիշելով իր ծանր մանկությունը 1941-1945-ի պատերազմական տարիներին, իր Գյուլի տատին եւ Բախշի պապին, լրիվ բացում է «ճշմարտություն» հասկացության փակագծերը՝ նրան վերագրելով տատի բարությունը, պապի արդարությունն ու աշխարհաշեն ոգին: Ահա, այս երեք ճշմարտությունների ընկալման եւ իրականացման մղումով Մ.Հովհաննիսյանն արարեց եւ հասավ

1988-ի շեմին, հասավ եւ դարձավ մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի տաղանդավոր տարեգիրը, որի մասին դեռ խոսվելու է ապագայում:

1989 թ. երեւանում «Խորհրդային գրող» հրատարակչութիւնը լույս ընծայեց Մ. Զովհաննիսյանի «Մենք» ժողովածուն: Այն լայն արձագանք գտավ ոչ միայն ընթերցողների, այլեւ գրչակից ընկերների եւ գրաքննադատների շրջանում: Անվանի բանաստեղծուհի Ալիսա Զովհաննիսյանը գրեց. «Մաքսիմ Զովհաննիսյանի «Մենք» գիրքը կարդալուց հետո ականա ձեռքդ մեկնում ես հեղինակին՝ շնորհավորելու»<sup>2</sup>: Գիրքն արժանացավ Հայաստանի գրողների միութեան Դ. Դեմիրճյանի անվան ամենամյա մրցանակի:

«Մենք» ժողովածուի բոլոր տասնմեկ պատմվածքները հեղինակը զետեղել է երկերի երկրորդ հատորի նույնանուն շարքի մեջ, դրանց ավելացնելով հետագա պատերազմական թոհուբոհի ընթացքում գրված եւս յոթ պատմվածք: Զեղինակը շարքի մեջ ընդգրկված ստեղծագործությունների մի մասը ժամանակին ներկայացրել է որպես ակնարկաշար, մի մասն էլ՝ պատմվածաշար: Զենց այստեղ ընդգծենք, որ դրանք բոլորն էլ գեղարվեստական խոսքի փայլուն նմուշներ են, որ կրկին ու կրկին հաստատում են անվանի գրողի պատկերավոր մտածողության ինքնատիպութունն ու հողաբույր թարմութիւնը:

Մ.Զովհաննիսյանի ստեղծագործական հաջողութեան գրավականը տվյալ դեպքում ընդգծվում է մի քանի առումներով: Նախ, ինչպես ինքն է խոստովանել, այն փոքրիկ լեռ-



Մային ածուն է, «որին սիրում ենք խանդոտ սիրով, որին նվիրված ենք ակամա՝ մեր արյան բաղադրությամբ, դարձավ ինձ համար նյութ, դարձավ շունչ ու ոգի, իր կոշտ ու տաք գրկի մեջ փայփայեց ինձ որպես գրողի ու քաղաքացու»<sup>3</sup>:

Ահա, իր փոքրիկ լեռնաշխարհի վտանգված պահին Յովհաննիսյանն իրեն դրսևորեց որպես մարտիկ-հրապարակախոս-գրող: Այդ նշանակում է, որ, հիրավի, նրա համար նյութը դարձավ շունչ ու ոգի: Յայտնի են Մ.Յովհաննիսյանի այն պատմվածքները, որոնցում պատկերված են Մեծ հայրենականի տարիներին արցախցիների ծանր ու տառապալից կյանքը թիկունքում, Արցախի քաջազունների հերոսամարտերը հեռավոր ավերում ընդհանուր միության ազատության համար, այդ մարտերում տասնյակ հազարավոր նահատակ արցախցիների կորուստի ցավը, այդ պատճառով խաթարված կյանքերն ու մշուշված երազանքները: Մեծ հայրենականի թիկունքի մարդկանց վիշտն ու հույսը նկարագրող արձակագիրը ցավի եւ հույսի զգացումով ձեռնամուխ եղավ իր ժողովրդի նորօրյա գոյամարտը նկարագրելուն:

Այն ամենը, ինչ տեղի ունեցավ գրողի հայրենիքում հենց իր աչքերի առջեւ, ներկայացվեց արվեստագետի առավելագույնս փորձված գրչով, հոգու ջերմությամբ, լուսառաք հավատով: Այստեղ նրա սրտին թրթռներ հաղորդեցին ոչ միայն հարազատների տառապանքն ու նահատակությունը, այլև փոքրիկ լեռնային ածու-օջախի

Կորստյան տագնապը: Հայրենիքի եւ ժողովրդի ներկան եւ ապագան միաձույլ խոսեցին գրողի արյան հոսքում որպես անձնական ճակատագիր՝ օժված համայն հայության բազմադարյան մաքառումի ոգով, ցավի մրմուռով, հույսի ոգորումով: Վերջապես, Մ.Հովհաննիսյան-գեղագետն արդեն ձեռք էր բերել հայրենի բնության եւ նրա տիրոջ միասնության առեղծվածները տեսնելու եւ վերարտադրելու վարպետություն:

Մ. Հովհաննիսյանի «Մենք» էսսեի եւ նույնանուն շարքի վերնագիրը խորհրդանշական է եւ գրողի ներաշխարհի բացահայտման, եւ արցախցիների արժանի հպարտության դրսեւորման առումներով: Գրողն արցախցի է եւ գրում է իրեն ծնած ու սնած հարազատների մասին: Արցախի պատմությունը ոչ միայն իրենն է, այլ ինքն էլ է դարձել այդ պատմության լեզու առած մի էջը: Նա փաստագրական աղբյուրներից չի խոսք փնջել, նրա խոսքը իր նախնիների արյան կանչ դարձած ծայնն է, հոր ու մոր ապրեցնող խորհուրդ, եղբոր ու քրոջ տագնապած, թեւավորող շշուռ, լեռան ծերպերից ժպտացող մասրենու շրշյուն, ամենօրյա երազի ու ցավի, կարոտի ու սիրո հուշերգություն, երկրի եւ նրա քաղաքացու արժեքը ծածանող խոհ: Այստեղից էլ «Մենք»-ի առասպելական ժամանակներից փնջած հերոսության ու ներքին հպարտության հոլովումը, ազգային արժանապատվության զգացումի ծածանումը, աշխարհիկ ներկայանալու աներկբայելի իրավունքը:

Մ. Հովհաննիսյանը հոգեբան-արվեստագետի նրբան-

կատուքյամբ ներկայացնում է «Մունք»-ի արցախյան հավաքական ուժի գործոնները: Դրանք մեր Սխտորաշենի 2000 տարեկան սոսեմին է, որի մասին ընդգծվում է պատմվածքում. «Գնա ուրիշ երկինքների տակ այսպիսի ծառ գտիր: Լինեն էլ, կամ քիչ թվով կլինեն կամ պակաս տարեկան: Դեռ իր ժամանակ Նիկոլայ թագավորն է ամիսը մի քանի ռուբլի թոշակ նշանակել... ոչ մարդուն՝ ծառին»<sup>4</sup>:

Մ. Հովհաննիսյանը խոսում է «Մենք»-ի անունից եւ նրա հպարտության տեսադաշտի հերթական գործոնը համարվում են Գանձասարը, Կաչաղակաբերդը, Ամարասը, որտեղ 1600 տարի է, ինչ հավերժի հետ խոսում է Մ. Մաշտոցի բացած դպրոցը, որ գիր սովորեցնելու հետ մեկտեղ որպես պատգամ, երեխաների վարժվող ուղեղներում կաթեցրել է զբանս հանճարոյ... «Այսինքն՝ Ամարասի պարարտ հողերում ցորյան ցանեք՝ ձույլ, դեղին խնկահոտ զարդա, որից ելած հարսնածոց հացը քաղցր է, մենք համեղին մաեւ քաղցր ենք ասում, ասում ենք՝ քաղցր խոխա, քաղցր աղբյուր, քաղցր հող ու հայրենիք.- այսպես ցորյանի արտեր ենք աճեցրել, այգեստաններ տնկել, եւ ձիերի երամակներն էլ վարգել են լեռնապարտի ուսերով, եւ նրանց սլացքը շատ մման է եղել երկնամերձ մեր սարերին, այդ մերծուքունը դուր է եկել Վարպետին եւ երբ նա Ամարասում քարը քարին է դրել, միշտ միտն է պահել մեր սարերի մերծուքունը երկնքին, եւ երբ իրար շարած քարերը սկսել են լեզու առնել խոսել, խոսել են ոչ թե խոսք ու բառով, այլ այս երկրի հետ իրենց նմանությամբ: Ահա այդ քարերը, որ այլեւս քար

չեն, այլ Ամարաս վանք, պատմել են այս կողմերի բաների մասին: Դրանից հետո Վարպետը գլուխը հանգիստ դրել է քարի տակ»<sup>5</sup>:

Մ.Յովհաննիսյանի արցախաբույր հպարտությունը նաեւ ցավի երանգ ունի: Այն կապված է ժամանակի բարոյա-հոգեբանական որոշակի խաթարումների հետ: Կարմիր շուկայի մոտ գտնվող Սխտորաշենի ճանապարհին կարծես դժվար է եղել մի սյուն տնկել եւ վրան հայերեն-ռուսերեն-անգլերեն գրել, որպես ցուցանակ: Յեղիմակը Սխտորաշենը հիշում է նաեւ ուրիշ զուգորդությամբ: Աշակերտական տարիների ծանր հուշ է դա: Դասարանում իր կողքին նստած աղջնակի պայուսակում կարմիր տաքացած ճոթ հացն է բուրում: «Աղջիկը՝ Սխտորաշենից, մոր ու երեխաների հետ նոր տեղափոխվել են քաղաք, հայրը մնացել է գյուղում, նախագահ է, «բրոն» ունի, բանակ չեն տարել: Գյուղից եկած զարդա ցորենի խնկահոտ հացի բուրմունքը բռնել է դասարանը, եւ բուրմունքը հողմի պես պտույտ է տալիս եւ մեզ՝ երեսուն երեխա, գումարած ընկեր թավրիզյան, կոտորում, կատիկներս վեր ու վար անում, հացի բուրմունքը անխիղճ խեղդում է մեզ, ուտես-ուտես-ուտես՝ս, ու այնպես լինի, որ կշտանաս,- մենք երեսուն սովալլուկ երեխա՝ գումարած ընկեր թավրիզյան, հանած նոր եկած սխտորաշենցին,- խեղդվում ենք հացի բուրմունքներում»<sup>6</sup>: Սա ցավի մի կողմն է: Ամբողջական ցավը Սխտորաշեն գյուղի փլուզումն ու անհետացումն է: Եվ կորստի արցունքներով թացված տողերում գրողի սիրտը կսկծում է. «Սխտոր

րաշենցուն Կարմիր շուկայում գտիր, Ստեփանակերտում, Բաքու, Երեւան ու ուրիշ նշանավոր քաղաքներում»<sup>7</sup>: Գրողը առաջ է քաշում Սխտորաշենի վերականգնման, շենացման խնդիրը: Գործ անելու, բան անելու ժամանակներն են եկել: Մեր խեղճությունը թոթափել է պետք, մեր տուն-օջախը շենացնել է պետք, եկել են մեր վարուցանքն անելու, մեր կիսատությունը լցնելու ժամանակները: Սորփեոսիցմրափեոսից հրաժարվելու ժամանակն է:

«Մենք» ստեղծագործության մեջ նոր օրերի պահանջի արմատները հասցված են անցյալին, որտեղից հնչում են Մուխան ապու, Սարգիսջանի հորդորները: Դպրոցներին իսկական երեխաներ են պետք: Մղկտում է գրողի սիրտը. «Ակումբը դարձել է ջրատված ջաղաց՝ ջահելների պակասից, սիրտ չլինելու տխրությունից, ակումբ-գրադարան-հավաքատեղ չլինելու կաթվածից:

Գործ անենք, որ տներ շինվեն, բարիքներ ծնվեն: Երեխաների շատությունից սրտներս մի անգամ նեղվի: Որ հետո իրավունք ունենանք ասենք՝

Մե՛նք»<sup>8</sup>:

Ահա, այսպես, «Մենք»-ը հնչում է ե՛լ որպես արմատակալած պատմական անցյալ, ե՛լ որպես խելոք ու շրջահայաց ապրելու եւ հարատեւելու հրամայական:

«Մենք» պատմվածքի գաղափարն անցնում է շարքի բոլոր գործերի միջով: Գրողի ուշքն ու միտքը, սիրտն ու հոգին կռվախնձոր դարձած մեր պապենական լեռնաշխարհի հետ է: Նրա խոսքը հաճախ հնչում է որպես ճիչ, պատկերը

վերածվում ընթրոստության, ցավը դառնում ուսանելի խորհուրդ: Դրա լավագույն վկայությունը «երբ հողը գնում է գյուղի տակից» գեղարվեստական ակնարկն է: Մենք ընդգծեցինք գեղարվեստական բնորոշումը, որովհետեւ Մ. Դովհաննիսյանի ակնարկները հասնում են բարձր մակարդակի պատմվածքների: Այդ առանձնահատկությունը ոչ բոլոր գրողներին է հաջողվում:

Տվյալ ակնարկի մեջ Դովհաննիսյանին մտահոգում է Մարտունու շրջանի Ննգի գյուղի ճակատագիրը: Փաստն այն է, որ գյուղի տակից գնում էր հողը, սակայն, ցավոք, շրջանի-մարզի-երկրի ղեկավարության աչքից հեռու էր, լավ չէին տեսնում: Գյուղի գլխին ծանրացած սարը փլուզվում էր, պատերը ճեղք էին տալիս, ծեփը թափվում էր, բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում: Այս անտարբերությունն ինչ որ չափով անցել էր նաեւ գյուղի բնակիչներին: Ինչպես գրում է հեղինակը. «Այդ բաներն այնքան սովորական են դարձել ննգեցու համար, որ նա, պատն անհանգիստ ճաք տված, հանգիստ քնում է: Գյուղխորհուրդ-շրջխորհուրդ բողոքներից հետո նա ձեռքը թափ է տվել՝ տիրուհերը, ինչ ուզում է թող լինի»<sup>9</sup>:

Մ. Դովհաննիսյանը Ննգին սովորական բնակավայր չի համարում: Այն դարերի իմաստությունն ու հայի ստեղծարար ոգին ուսած հասել է 20-րդ դար, թանգարանների, աշխարհահռչակ զավակների լեզվով խոսում է սերունդների հետ, սակայն ավերիչ մի անտարբերություն, ազերական մի ներքին չարություն հենց այդ է ցանկանում: «Ննգեցիների

ուզածն ինչ է,- գրում է գրողը, իրենց փողով ու պետական գներով շինանյութ առնել, որ նոր գյուղում տուն կառուցեն: Մեկին երկու չտան, ոչ անհայտ Իբրահիմի շինանյութերի բազայում աչքները չթողնեն, թե երբ է մարզի սպառողին հասնելու»<sup>10</sup>:

Գյուղի տեղափոխման եւ վերակառուցման խնդիրը գրողի կողմից ներկայացվում է ռոմանտիկական պատկերներով: Նա հոգու աչքերով ասես տեսնում է Սարտունու գյուղշինի վարպետներին՝ գյուղի նոր տները կառուցելիս, հեռուներ տեղափոխված ջահելները վերադառնալիս, պտղատու նոր այգիներ աճեցնելիս, բրուտագործությունը զարգացնելիս, «որպեսզի Բալթիկ ծովի ձկնորսն էլ, Նովոսիբիրսկի ակադեմիական քաղաքի գիտնականն էլ իմանան, որ մենք էն չենք, ինչ որ ցույց են տվել մեր էն-ը հարկադրված վիճակ էր, մեր բնական վիճակը էՍ է»<sup>11</sup>:

Հարցերն անթիվ են, այնքան շատ, որ գրողի կոկորդին դեն են առել, ուզում են խեղդել: Այս բոլոր հարցադրումներից յուրաքանչյուրը նշելուց հետո հեղինակը կրկին ընդգծում է *Մենք* -ը՝ արցախցու փիլիսոփայական ընկալումների խորհուրդով: Հենց պատումի խոհա-փիլիսոփայական ընդհանրացումներն էլ խոսքը դարձնում են վառող-տնտրող-ոգեկոչող-ապրեցնող: Եվ ընթերցողի սրտի եւ հոգու հետ գրույց են բացում Արցախանախշ Ննգիի բնությունը, գերեզմանատունը, ճանապարհի եզրերին աշնան ճառագող գույները՝ «վայրի տանձի որդան կարմիրով ներկած տերեւները, սալորենու օրանժը, մասուրի ծիծղուն դեղինը

Եւ դրանց երանգները»<sup>12</sup>:

Եվ այսքանից հետո հեղինակը մատնացույց է անում ամենատազնապալից վտանգը՝ Ադրբեջանի ղեկավարների նենգությամբ Արցախը հայաթափվելու քաղաքականութիւնը:

Մ.Յովհաննիսյանի սույն պատմվածաշարի պատկերային սահմանները տեսանելի եւ շոշափելի են, հարազատ բնակավայրերի անուններից բաղկացած էսսեներ են, դա Սզնեքն ու գյուղական դպրոցի անմխիթար ճակատագիրն է («Ինչի մասին է լռում զանգը»), Շուշի քաղաքն է, այն պահի մեջ, երբ բռնագաղթեցրել են, եւ ութ երեխաներից բաղկացած ընտանիքն անտանելի պայմանների մեջ է ընկել Ստեփանակերտի հյուրանոցում: Դրանից էլ ծնվում է մի նոր խնդիր. «Մենք-ի այս հարցականն ո՞վ է լուծելու»: Դա արցախուհի Յասմիկի սրտաբաց զրույցն է խմբագիր Յովհաննիսյանի հետ՝ արցախյան հիմնախնդրի աղավաղման մասին: Յասմիկն ասում է՝ «Ընկեր Յովհաննիսյան, չկարծեք ես հուսահատված եմ: Ոչ ոք հուսահատված չի, տեսնես՝ մերոնք ո՞նց են իրենց պահում հրապարակում: Թատերականում հավաքված բոլորս:

Մե՛նք: Մո՛ւնք:

Ասում է, ինչո՞ւ մի անգամ մեր օգտին մի խոսք չի ասվում, ինչո՞ւ մեր լավը մեր թերությունը համարվեց»<sup>13</sup>:

Մ.Յովհաննիսյանը գեղագետ-տարեգրի հմտությամբ մեջտեղ է բերում ժամանակի այրող խնդիրները՝ առնչված արցախցիների միամիտ-արդար-վճռական պայքարի հետ:



Դեղատոմսեր է առաջադրում հեղինակը իր հերոսների շրթերով: «Հասմիկն ասում է՝ մեզ ինչո՞ւ չեն սիրում»: «Ես ասում եմ՝ Հասմիկ,... դու գործոն չունես, դու մատաղացու գառ ես, դա է քո գործոնը:

Մենք»:

Հասմիկը Երեւանից հեռախոսով ասում է՝ «Ընկեր Հովհաննիսյան, դուք լսո՞ւմ եք ինձ... նրանց գործոնը՝ եւ մենք՝ մատաղացու գառ: Որովհետեւ քանի հազար տարի տաճարներ ենք կառուցել եւ այդ տաճարների հատուկ հատկացված տեղում մատաղ ենք մորթել՝ ի պատիվ աստվածների, որոնց մասին հրաշալի պատմությունները գրվել-պահվել են մատյաններում, եւ այդ մատյաններից ունենալը նոտարական գրասենյակում կնքված փաստաթուղթ է այն մասին, որ դու հնուց եկած ժողովուրդ ես եւ կարող ես ձեռքդ մեկնել մի տաճարի ու ասել՝ սա իմն է, այլասեր մի անվանում, ասես մի սիրուն ոտանավորն էլ անգիր անեն, ասեն՝ իմն է, որպեսզի ես էլ մի տեղ գնացած տեղը բոխչաս բացեն ու հագուստ-կապուստ կապեն: Որպեսզի ուրիշներից շիլ չընկնեն»<sup>14</sup>:

Հոգեբանական բացահայտումների շնորհիվ հեղինակը կարողանում է ստեղծել ժամանակաշրջանի սոցիալ-հոգեբանական պատկերը: Պատմվածքում կարդում ենք. «Երեւի այսպես է լինում, որ մարդ հուսահատվում է: Երեւի հուսահատությունից է, որ մարդ դիմանում է: Երեւի դիմանալով է մարդ դառնում մարդեղեն...»<sup>15</sup>: Սակայն հեղինակը դասեր է առնում մարդու մեր այդ տեսակի նման փիլիսո-

փայլությունից: Արդեն կարիք է զգացվում վերապատրաստվելու: Վայրենի թշնամուն դիմակայել է պետք: Մենքի եզրահանգումն է այս, որ հարատևելու ճամփան է բացում:

Մ.Յովհաննիսյանի տվյալ շարքի մեջ խոսում է արցախցի հայր, հայաստանցի հայր, սփյուռքի հայր, բոլորը միասին՝ հայի ճակատագրով, հայի դիմացկունությամբ, հայի ցավով եւ ակնկալիքներով: Հեղինակը երբեք չի սքողում ցավը, չի շրջանցում արցունքը, զարմանում է սուտփութ աշխարհի անտարբերությունից, դառնանում եւ ըմբոստանում է նենգ հարեւանի սանձարձակության դեմ: Այդ մասին է խոսում *«Այս դժվար օրերին, հույսի այս օրերին»* վավերագրական պատմվածքը: *«Հայությամբ շրջապատված մի Խոջալու իրավունք է վերապահում իրեն ավտոբուսներ ջարդել, գեղովի մարդկանց մերժիմահ ծեծել»<sup>16</sup>*: Եվ գրողը խարազանում է խորհրդային մեքենայի կեղծիքը, անմտությունը, անհեռանկարային քաղաքականությունը: Չմոռանանք, որ այս ստեղծագործությունը գրվել է այն օրերին, երբ դեռ օդում շառաչում էր ԽՍՀՄ օրենքը եւ Արցախում մտցվել էր պարետային ժամ: Մ. Յովհաննիսյան գրող-քաղաքացին իր որդիական խորհուրդն է հղում իր ժողովրդին. *«Այս մի տեսակն էլ տեսար, արցախական աշխարհ, իմացար-զգացիր, թե ինչ է պարետային ժամը: Ձյուն է եկել, որ ոտք մրսի: Բայց չիմանամ-չլսեմ, որ հոգեպես մրսել ես»<sup>17</sup>*:

Գեղարվեստական վավերագրության հրաշալի մի օրինակ է *«Արցախի ռուս հարսը»* պատումը:

Գրականագիտական հերթապահ բնութագրմամբ այդ գործի թեման հայ-ռուս ժողովուրդների բարեկամությունն է: Սակայն պատմվածքի գաղափարը հեռու է նշված թեմայի շրջանակներից: Այն պարզապես Արցախի հայության արդարացի պահանջի հնչեցումն է Արցախի հարս դարձած Բելգորոդի մարզի Չերվոնովկա գյուղի բնակչուհի Թամարա Շվեդովայի շրթերով:

Հեղինակը պատումն սկսելով Ռուսաստան սեզոնային աշխատանքի մեկնած Սուրենի ճակատագրի պատկերումով, հոգեբանի հմտությամբ ընդգծում է երկու ժողովուրդների սովորությունները, մեկը մյուսի հանդեպ ունեցած հարգանքն ու հավատը, որն էլ հիմք է հանդիսանում Թամարայի եւ Սուրենի ամուր ընտանիքի ստեղծմանը: Թամարան արդեն իրեն զգում է արցախյան ազգային-ազատագրական պայքարի մասնակիցը: Գեղարվեստական պատումի ռեալիստական-սրտառուչ էջեր են Թամարայի ծնողների նամակները՝ ուղղված Թամարային, նամակներ, որոնցում արտահայտված են ծնողական անհանգստությունը՝ Մոսկվայից հնչող զանգվածային լրատվական միջոցների աղբբեջանամետ հաղորդումները, որոնցում արցախցիները որակվում են որպես ահաբեկիչներ, էքստրեմիստներ: Ռուս ծնողների նամակները նման են Հ. Թումանյանի «Գիքորը» եւ Ա. Չեխովի «Վանկա» պատմվածքներում եղած նամակներին: Սակայն դրանց կրկնությունը չէ: Մ. Հովհաննիսյանը ստեղծել է 20-րդ դարի վերջի համապատկերը ներկայացնող էջեր՝ արժանի բարձր գնահատականի: Բերենք Թամարայի մոր

Նամակը:

«Բարեւ ձեզ, թանկագին մեր զավակներ,

Թամարա, Սերյոժա, թոռներ Արթուրիկ, Արկադիկ:

Չայտնում ենք մեր որպիսության մասին, առայժմ տանն ամեն ինչ բարվոք է, միայն ուժներս է պակասել, պառավել ենք: Կարտոֆիլն այս տարի ամեն տեղ սիսեռի նման մանր է, բազուկը չի աճել, նախ մի ամիս իրար վրա անձրեւ եկավ, հետո երաշտ սկսվեց, հողը չորացել ճաքել էր, բայց ոչինչ, շատից-քչից ստացել ենք, զավակներս, շատ վատ է, որ այդպիսի դրություն է ձեզ մոտ` մինչև հիմա գործադուլի մեջ եք, դուք դրանց հետ գործ չունեք, իրանք ինչ ուզում են` անեն, առանց ձեզ էլ անելին կարվի, ձեզ համար նստեք տանը, իսկ ով գործադուլ է անում, նրանց պետք է սովամահ անել եւ ոչ թե մթերքներով օգնել, երեխաներին ոչ մի տեղ բաց չթողնեք, ինքներդ էլ տարածամ դուրս մի եկեք տնից, սիրտս ուզում է երեխաներին, երկու ծանրոց են ուղարկում, որոշ շոր-շիրթ, Արթուրին ու Արկադիկին կոշիկ, քեզ համար էլ, աղջիկս, մի սվիտեր, ութանասուն մանեթով էստեղ գործել ենք տվել, էդ փողի 25 մանեթը քո եղբայր Կուկան է տվել, Սերյոժա, ծխելը թող, ափսոս, որ էս տարի չտեսնվեցինք, խնամուն լավ նայեցեք, ինչ պիտի անես, ծերացել է` պիտի հիվանդանա, մենք էլ էդ օրին ենք, սրանից առաջ 100 ռ. ենք ուղարկել, ստացե՞լ եք, չեք ստացել` իմաց արեք:

Ցտեսություն` ձեր ծնող Վարվառա Իվանովնա Շվեդովա»<sup>18</sup>:

Հայ փեսայի եւ իր թոռների հանդեպ ծնողական իր անհանգստությունն ու սերն է ցուցաբերում նաեւ Թամարայի հայրը՝ Վասիլի Եգորովիչը, որը, սակայն, ավելի սթափ է նայում իրադարձություններին, քան կինը:

Պատումի մեջ նկարագրվում է 47-ամյա Սուրենի հայրենասիրությունը, ազերի-թուրքերի կողմից նրան աքցանի մեջ առնելը եւ մազապուրծ ազատվելը: Այդքանից հետո Թամարան գլխավոր հրապարակի ինքնաշեն ամբիոնից պատմում է իր ամուսնու մասին, Ղարաբաղում ապրած իր տարիների, իր հոգում կուտակածի մասին: Նրա ասածը ոտանավորի նման ազդում էր ու երբ խոսում էր, մարդկանց աչքերում վշտի, ցավի, երախտագիտության արտասուքներ էին երեւում: Այդ դեպքից հետո Թամարային հոգեհարազատ էին համարում բոլորը: Ինչպես ներկայացնում է գրողը. «Շվեդոյվա Թամարան ասաց՝ մեր Արցախը:

Հրապարակի մարդիկ ասացին՝ մեր Արցախի հարսը: Հետո բոլորը միասին ասացին՝ մի-ա-ցուն»<sup>19</sup>:

Ռուս ժողովրդի նորօրյա խղճի, ազատասիրության, Արցախի արդար պայքարի հանդեպ ողջախոհ վերաբերմունքի հաջողված էսես կարելի է համարել Հովհաննիսյանի *«Ինեսա Բուրկովա»* պատումը: Կոնկրետ, փաստացի իրադարձությունների նկարագրության համապատկերում գրողը ներկայացնում է ռուսական մշակույթի ներկայացուցիչներից մեկի՝ Ինեսա Բուրկովայի ազնիվ ու անշահախնդիր պայքարը ազերական կեղծ ու չարամիտ հերյու-

րանքների դեմ:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի առաջին օրվանից սկսած ազերի-թուրք ղեկավարը, պատմաբանը, գիտնականը, բանաստեղծը հազար ու մի նեոգարարքների դիմելով, ձգտել են համաշխարհային հանրության ուշադրությունը շեղել եւ արցախյան շարժումը ներկայացնել անարդարացի, ահաբեկչական գործարարք: Եվ այդ հակահայկական ոռնոցները չէին կարող չարժանանալ Մ. Հովհաննիսյան-գրողի ուշադրությանը: Կարդում ես նրա «Մղձավանջ» վավերագրությունը եւ կրկին համոզվում, որ նա ձգտել եւ հասել է գրողի առաքելության իրականացմանը: Պատումի առաջին էջում կարդում ենք. «Արցախ, ինչո՞ւ դու եղար իմ հայրենիքը: Ինչո՞ւ այդպես մեղրահաց դարձար, որ ուզեման քեզ լիզել... Քաղցր ես, չեմ հագեցնում, մղվում եմ դեպի քեզ, պոռնկացրին քո կուսությունը եւ ուզում են քեզ միշտ վայելել... Ուզում են քեզ սիրուհի ունենալ: Ջահել արյունը եռում է, քեզ է տենչում...»: Ապա գրողը հարցադրում է՝ «Թույլի մասին առակն ինչո՞ւ մենք պետք է հնարեինք: Մեր տան ապրելու կարգն ուրիշը պիտի որոնի»<sup>20</sup>: Պարզ է, նման հարցադրումին պետք է հետեւի պայքարի կոչը, որովհետեւ եթե դրացի թշնամու հոտը որպես զանգված, ուժ, հոտային բթություն, որ սարսափ է ծնում, պետք է սրել ոչ միայն միտքը, այլ նաեւ թուրը: Ուրիշ ելք չկա: Մղձավանջից դեպի լույս քայլելու միակ ելքը մարդասպանի դեմ մարտնչելն է, որպեսզի Արցախ աշխարհը որպես հայրենիք, կարողանա հայրություն անի:

Այս մտորումները ծնվել են 1988 թ. նոյեմբերին՝ Սուևգայի-թյան ջարդերից ութ ամիս անց:

Նշել ենք, որ Մ. Հովհաննիսյան լրագրողի եւ գրողի ջրբաժան սահմանները միաձուլլ են, ավելի շուտ՝ ընդգծենք, որ այս ավիից այն ավի հյուսված է մի կամուրջ-ծիա-ծան արցախցու հոգուց բխած, Արցախի ուսերին կամարված: Ընթերցում ես «Բախշի պապս» - պատմվածք անվանենք թե ակնարկ, մեկ է, ոչինչ չի փոխվում ու չի տուժում, դեմդ հառնում է իմ պապը, քո պապը, նրա պապը, մեր պապը: Նա սովորական կերպար չէ, ոտից-գլուխ արցախցի է՝ իր դարավոր ճանապարհի կեռմաններով, ճակատագրով, մեծ սրտով, բարի հոգով, հայի վճռականությամբ՝ ի հեճուկս բոլոր դժբախտությունների՝ լավ արարքով, աշխարհը լավ գործերով զարդարելու երազանքով:

Բախշի պապը,- գրում է արձակագիրը,- «Սահիռնագ կնոջ հետ հինգ տղա է ծնել ու երկու աղջիկ, ստացվել է այնպես, որ բոլորին իր ձեռքով ջահել է թաղել, որպեսզի նախախնամության անագորույն պահանջով կորստի ցավը մեծ լինի, որ մորմոքը հնար չլինի սփոփել:

Այդ կորուստները բնության հարվածների հետքեր չեն: Սաքունց Բախշու Հարուն որդուն Մալիբեկլու գյուղում թուրքերը ցաքի մեջ են դրել ու վառել: Բախշին որդու դիակի տեղ տաք-տաք մոխիր է բերել ու Սաքունց Աղջաբադի տափում փոս փորել, էդ մոխիրը լցրել փոսը, մատղաշ ծառ տնկել, հետո ուրիշ ծառեր է տնկել եւ մինչեւ վերջերս էդ այգուց մնացած ծառերին ասում էին՝ Հարունի

տանձուտը»<sup>21</sup>:

Դա դեռ ամենը չէ: Սաքունց Բախշին վաղաժամ մահացած Խաչատուր որդու հիշատակին ջրաղաց է կառուցել: Ջրաղացի ձորում թշնամու գնդակից զոհված Արշակ որդու հիշատակը զարդարել է թթի այգով:

Բախշի պապի հոգու ցավոտ շերտերը խորն են: Նրա Սամվել որդին գնացել էր քաղաք, դարձել Նոյի ագռավ: Միայն շատ տարիներ հետո, երբ հինգ եղբայրներից ինքն էր կենդանի մնացել, Սվերդլովսկ քաղաքից հեռագիր տվեց իր գոյությունը իմաց տալու: Սամվելը Բախշի պապի հոգում վաղուց մահացել էր:

Մ.Յովհաննիսյանը շարունակում է Բախշի պապի պատմությունը՝ հասցնելով մինչեւ Մեծ հայրենական, «Երբ փոքր որդու՝ Գարեգինի «սեւ թուղթը» Բախշի պապը ստացավ, աշխարհքը մթնեց գլխին՝ իր մեծ գերդաստանից եսթեր աղջիկն էր մնացել: Նա քարի մի մեծ բեկոր բերել տվեց ու սկսեց իր գերեզմանաքարը շինել: Գերեզմանաքարի վրա ոչ ծննդյան թիվը գրեց, ոչ էլ մահվան թվի համար տեղ թողեց, միայն գրեց՝ աստ հանգչի Բախշի Ավանեսյան»<sup>22</sup>:

Թվում է, թե այս բնութագրմամբ կարելի է ավարտված համարել պատմվածքը: Սակայն հեղինակը անցյալի այդ ծանր ճակատագրի տուտը բերում միացնում է արցախյան ազգային-ազատագրական պայքարի փեշին ու ճշմարտացիորեն ընդգծում հայի անձնական կյանքի եւ ժողովրդի ճակատագրի նույնակերպությունը: Պատմվածքն ավարտ-



վում է այսպես. «Այս աղետի օրերին ինչո՞ւ հիշեցի Սաքունց Բախշու կյանքի պատմությունը: Հիշեցի, որ շատ ցավ քաշած այս մարդու կյանքը շատ է նման իր ժողովրդի կյանքին»<sup>23</sup>:

Շարքի պատմվածքները մի ամբողջություն են կազմում այն առումով, որ նրանցում կերպարները լրացնում են մեկը մյուսին միայն իրենց հատուկ բնավորություններով: Կերպարների մի ամբողջական պատկերասրահ է շարքը: Այստեղ ծանոթանում ես դեպուտատ արցախուհուն, որ գյուղից մեծ դժվարություններ հաղթահարելով, ոտքով հասնում է Ստեփանակերտ՝ մասնակցելու 1988-ի փետրվարի 20-ին տեղի ունեցած մարզային խորհրդի պատմական նիստին («Չատուկ դրություն»):

Արցախցիների միասնական եւ միավճիռ պայքարի հաջողված մի պատկեր է «Դավթասար» պատմվածքը: Նկարագրության ծայրերը լայն են, ամբողջ լեռնաշխարհն է՝ պայքարի առաջին ամիսների տագնապալից շնչով, ազերիների կատաղի-անմարդկային արարքներով, խորհրդային զորքերի եւ ազերի օմօնականների թշնամական կեցվածքով: Ստեփանակերտում հրապարակ են ելել «մեր կանայք, մեր սիրասուն, մեր փխրուն, մեր տղամարդ կանայք՝ դարձած իրենց որդու, իրենց եղբոր, իրենց ամուսնու մեջքին կանգնած հավատարիմը», իսկ Չափար-սահմանային գյուղի կանանց համար հրապարակը Մռովասարի փեշերն են, ուր պետք է հոտը տանել, որպեսզի Մռովասարի իրենց պատկանող արոտները մնան իրենցը, որպեսզի ծաղկա-

Վետ նրա լանջերին չափարեցու հնավանդ սովորությունն ու կենցաղը շարունակվի, բարիքներ ստեղծելու ջանքը պսակվի բերքի տոներով: Իսկ դա հարատեւել է օվշար քուրդ ցեղի դեմ մարտնչելով, նրանց «օխտը պորտը» նախշելով: Եվ իրենց պապենական անտառներին, արոտավայրերին տեր մնալու համար չափարեցի տղաները բռունցքովել են եւ դարձել պահակներ: Յեղիմակը ռեալիստորեն ներկայացնում է մինչարցախյան պատերազմի պատկերը. «Գյուղի տղաները՝ երկուսին՝ մի հրացան, պինդ կանգնել են, որ սարը պահվի: Ումի՞ց պահեն, ինչո՞ւ պահեն, սարը չորքոտանի գոմշակով չի, որ առաջդ արած տանես քո յուրտը, սարը աչքադրած աղջիկ չի, որ դնես ձիուդ թամբին ու փախցնես մեկ ուրիշ սար: Ստացվում է, որ անասան սարը կարելի է առեւանգել»<sup>24</sup>:

Դեպքերի աստիճանական զարգացման համապատկերի վրա արձակագիրը պատմում է, որ տղաներից Դավիթը անհետ կորել է: Գյուղն անհանգիստ է, անհանգիստ են նաեւ տղաները, գուցե թուրք-ադրբեջանցին կամ քուրդ-օվշարը նամարդություն են արել:

Վերջապես պարզվում է, որ Դավիթը հոնի օդու ազդեցության տակ քնով է անցել: Պարզվում է նաեւ, որ Դավիթը հանդիպել է օվշարի ջահել սիրուհին: Եվ քանի որ պատմությունն իսկական է, սարի անունը դրին Դավթասար, ինչպես անցյալ տարի, ինչպես հարյուր տարի առաջ: Եվ սար են գալիս Նագիկը, նրա մեծ տղան՝ պարմանի Անդո-

նը, որ արդեն ձին վարում է՝ ինչպես իր քաջ պապերը: Սարեն գալիս գյուղի տղամարդ կանայք, անասունը բերում են Դավթասար ու սարը նորից դառնում է իրենցը:

Պատումը շարունակվում է: Գյուղի տղաները պետք է մեքենայով գան սար: Եվ նրանք հաշվի չառնելով, որ քուրդ-օվչարների հողով են անցնելու, ծուղակի մեջ են ընկնում: Եվ ազերի օվչար զինվածները կանգնում են չափարցիների դեմ-դիմաց եւ կանչում. «Ո՞ր եք գնում, ինչու՞ եք գնում, դուրս եկեք մեքենայից, մի քիչ հեռացեք, որ մեքենան ստուգվի»<sup>25</sup>: Մեր տղաները սխալվում-հավատում են նրանց եւ հեռանում մեքենայից: Ինչպես ազերի-թուրքերի խարդախ նախնիները մեր տղաների կոները ծալում են մեջքներին ու տանում Քելբաջար: «Գործ» են ստեղծում, տղաներին ջարդ տալիս, ռիսերիմությամբ տրորում: Գյուղի տագնապալից պահանջով է միայն հաջողվում ջարդված տղաներին Ստեփանակերտ բերել:

Պատումի վերջում Մ.Հովհաննիսյանը նկարագրում է չափարցիների հույսի եւ հավատի դրսեւորումը պապենական հողի վրա ընթացող աշխատանքի մեջ: Ինչպես ընդգծվում է. «Այսպես կյանքը շարունակվում է Արցախի ավանդական գյուղերից մեկում»:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարը 1988-ից ընթանում էր արյունալից դեպքերով: Այդ տարիների գեղարվեստական-վավերագրական պատկերը ներկայացված է շարքի «Պաշարում», «Ստեփանակերտ, Մուրացան փողոց», «Մարդու ցավը մեկը լիներ», «Ների՛ր, Ի-գոր: Ներեցե՛ք, տղաներ», «Աստված Արցախը դրախտի

«համար է ստեղծել», «Տերունական աղոթք» պատմվածքներում: Դրանցում գրողը կատարել է փիլիսոփայական ընդհանրացումներ: Նրա գլխավոր հերոսը առաջին հերթին ժողովուրդն է, պատկերային հյուսվածքը՝ համաժողովրդական սխրանքը, իդեալը՝ Արցախի պահպանումը, նրա ազատության ձեռքբերումը: Այս մտորումների եւ խոհերի ճշմարիտ հենքից հյուսվում է նրա «Տերունական աղոթք» բարձրակետային ստեղծագործությունը:

Բնաբան բերելով Մատթեոսի «Եվ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող», ապա Երեմիայի «Եվ Տերը, ձեռքն ինձ երկարելով, հպեց բերանիս ու ասաց. «Ահա իմ խոսքը քո բերանը դրեցի» պատգամները, Մ. Հովհաննիսյանը պատումը վերածում է Արցախյան կյանքի, արցախցու կենսափիլիսոփայության, մաքառումի եւ հարատեւելու վճռականության բարձրարվեստ հյուսվածքի:

Պատմվածքի հենց առաջին նախադասությունը հուշում է, որ հեղինակը ներկայացնում է կյանքը՝ մեր շուրջ եւ մեր ներսում: Ահա, հենց դրսի եւ ներսի ամենատեսությունն է, որ գրողին պսակել է հաջողությամբ:

«Այս ի՞նչ է կատարվում մեզ հետ, մեզանով՝ մեզանից դուրս. անըմբռնելին ու բացահայտը, ցավի ճիչն ու խոկումի հայտնությունը, սխրանքի ու ստորածին կոքերի անպարկեշտ հարեւանությունը, մի գծի վրա զետեղված հոգու թռիչքի ու անկումի անպատշաճ համակեցությունը, այդ ամենի անընդգրկելի տարբերությամբ բորբոքված արյանդ պատեպատը, որ տարընթացության ուժով ուզում է կեղեւդ պատռել:

Կյանքը լափու է տալիս...»<sup>26</sup>:

Ոչ միայն կյանքն է փոթորկված, այլև գրողի ներաշխարհը, որ հենվելով ժողովրդի կենսափորձին, ինքն էլ տնտղում է նորը եւ նրա հանդեպ լցվում անվստահ, անորոշ մտորումներով, քանզի շարժման մեջ հաստատուն ու չինչ չի մնացել, երերում է ոտքերի տակի հողը, իրականության կտտանքներից ե՛լ ցավ է զգում, ե՛լ հալածանք:

Արցախն իր օրինական պահանջն է ներկայացրել, իսկ խորհրդային ամենաթողության պատճառով պատերազմ է պարտադրվել արցախցուն, նենգ հարեւանը ոչ միայն կրակի է մատնել Ղարաբաղը, այլև հսկա ավտոմեքենան դեմ է արել եւ արցախցու ունեցավածքն է դուրս հանում: Սակայն արհավիրքը միայն դա չէ, այլ այն, որ «որոշ մարդիկ ապրելու ձեւը գտել են՝ գյուղերից մեկտակ առնում են, բերում հինգտակ ծախում, մերոնց վրա չեն համարձակվի ծախել, Հայաստանից եկած «կատու ներկողների» վրա են սաղացնում,- եւ դեռ ասում են վառելիք չկա, թալան լինի՝ ավտո էլ կգտնվի, վառելիք էլ կճարվի,- ագահ, անկշտումի պակասը չի եղել, անկշտում շունշանորդներն ընկնում են թուրքի ծուղակը, որպեսզի տղաները՝ մեզ համար շատ թանկ իրենց կյանքը վտանգելով, թուրքից գերի ու պատանդ վերցնեն ու փոխանակեն մեր էդ անարժանների հետ»<sup>27</sup>:

Մ. Հովհաննիսյանը ոչինչ չի սքողում, ներկայացնում է ե՛ւ ժողովրդի մաքառող ոգին, ե՛ւ այն արատները կրողներին, ուն առաջին հերթին հետաքրքրում է անձնական շա-

իդ: Մի պարմանի մորից թաքուն մեծ եղբոր անձնագրով զինվոր է գրվում, մյուսի ինժեներ որդին Ռուսաստանի քաղաքներից մեկում բիզնես է անում, ղեկավարությունն էլ տեսնում է, բայց չտեսնելուն է տալիս: Բոլոր դժվարություններն ու մեր ժողովրդի բարոյական դիմագծին անհարիր երեւոյթները հաղթահարելով մեր քաջագունները նետվում են մարտի՝ փրկելու օջախն ու հողը, ներկան ու գալիքը: Արցախցու այս ներաշխարհի գեղեցկությունը հպարտության աղբյուր է դառնում, եւ գրողը երկիրը պաշտպանողների մասին գրում է. «Վսեմ, զուլալ, ոնց որ սրբած թուր՝ նայում ես նրանց շիմշատ հասակին, սիրտդ ուռչում է, մտքիդ մեջ հպարտանում ես, օրհնանքի պես, օժումի պես, ինչպես երդում տալիս փառավորված, վստահ, հպարտ ու գոռոզամիտ ասում ենք՝ մեզ հաղթել չի լինի, թող ասեն, որ մեր ճակատագիրն աշխարհի հզորների ձեռքին է, թող որ այդպես է,- բայց մեկ էլ մտածում ես, որ այս վսեմ գեղեցկության դեմն առնելն անկարելի է»<sup>28</sup>:

Դիմանալ է պետք եւ սա է գրողի խորհուրդը. ճակատագրով դա է մեզ բաժին հասել, «ատամ սեղմած ուղիղ նայենք ազերի թուրքի աչքի մեջը, որպեսզի սա՝ անամոթն ու լկտին, այլեւս չդիմանա ու բացքամակ փախչի, փորհարինքով ընկածի պես կեփերը ողողելով մերոնց հռհռոցի տակ թուրքը փախչի, նրանց էսինչն ու էնինչը...»<sup>29</sup>:

Պատերազմը ե՛լ փորձություն է, ե՛լ մարդկանց բարոյական դիմագիծը բացահայտելու ազդակ: Արձակագիր Մ.Յովհաննիսյանը հմտությամբ ներկայացնում է այս կռ-

վանները: Նա նկատում է, որ վաշտի տղաները թուրքից խլած կովը տալիս են զոհված ընկերոջ հորը, որը պահպանում է նահատակ մինուճարի չորս որբերին: Հոր պարտականություններից պապի պատասխանատվության խաչը ուսերին առած արցախցին ուժերը չի խնայում թռներից սոված չթողնելու համար: Բայց կա եւ մի ուրիշ գործոն, որ կարծես դեմ է առնում պատմեչի: Ռումբը փլում է մարդու տունը, քաղխորհուրդը ասում է՝ շինանյութ չկա, հենց որ ստանան, նկատի կառնեն: Բայց կան մարդիկ, որ օրը մեղր ու կարագով են սկսում, խորովածով վերջացնում. «Երեւանում տուն են առել, գործ բացել, փող են կտրում, հիմա ամեն ինչ օրենքը թույլատրում է, օրենքն իրենք են ստեղծում, օրենքից օգտվողն էլի իրենք են»<sup>30</sup>:

Արցախում պատերազմ է, կյանքը հակասությունների թատերաբեմ է: Ռեալիստ գրողը չի մեղանչում իրականության դեմ: Նա ե՛ւ վրդովվում է անառողջ երեւույթների դեմ, ե՛ւ լացում է սիրող հոր, եղբոր, ընկերոջ նման՝ անթիվ զոհերի համար: «Գերեզմաններում էլ տեղ չկա, ինչպե՞ս է, որ հողը կաթվածահար չի լինում, ինչպե՞ս է կարողանում այսքան ջահելի տեղավորել իր ծոցում,- ամեն օր երաժշտության ալեհեր դասատուն ջութակը կոնատակին գալիս է գերեզմանները ու տխուր լարերն աղիողորմ քաշում՝ կռունկ, կանչում է, ուստի՞ կուգաս, հետո լարին խփում՝ դարդս լացե՞ք,- մարմինը թույլ է, մատները՝ բարակ, իր բաժին կռիվը ալեհերն այսպես է անում,- մարդիկ հավաքվում են, իրար նեցուկ լինելու մոտիկությամբ լուռ կանգնում, եւ

այդ լռությունից ծնվում է իրար սատար լինելու, մեր ուսերին փլված այս ծանրությունը միայն այդպես կրելու հնարավորությունը»<sup>31</sup>:

Մ.Յովհաննիսյանի համար գոյապայքար նշանակում է երկիրդ է քո ապրելու եւ մեռնելու տեղը: Այս հրամայականն է համոզմունք դարձել յուրաքանչյուր ազնիվ քաղաքացու հոգում: Դա չի հասկանա օտարերկրացին, որովհետեւ նրա համար մեր տարածքը բնակավայր է, իսկ մեզ համար՝ «մեր հողուջուրը»: Հենց այս մղումով է, որ մեր աղբյուրների մոտ բացված սեղանների շուրջ հնչում է այս մաղթանքը. «Մեր հողուջրի կենացը»:

Հոգեհարազատ, սրտի հետ խոսող պատկերներ է ստեղծում հեղինակը եւ ափիդ մեջ դնում հող-հայրենիի գեղեցկությունը. «Տերելը նոր բացվող գարնանը Գանձասարից նայում ես հորիզոնին հառնած Կաչաղակաբերդին ու քեզ թվում է՝ դեմդ երկնային տեսիլք է,- արելի շիկացած պղինձն ամպերի միջով բոսոր շառափը շաղ է տալիս բիբլիական այս սարերին ու ձորերին, երբ իրիկնամուտի քաշաթուխպը՝ անտառների մատաղ կանաչին քսմսվելով, մակաղում է բերդի ոտքերի տակ, ու թվում է, թե սպիտակ, փափուկ քուլաների միջից սիգապանձ ելնում է անխառն Գեղեցկությունը, որի քարակոփ կողերին արելի շողերը ծնծղա են խփում,- բերդի մաքուր վսեմությունը խոր զրնգում է հոգուդ մեջ, ու քեզ թվում է՝ դրանից կատարյալը չկա եւ այդ կատարյալը պատմությամբ ու վերին նախախնամությամբ քեզ է ժառանգվել»<sup>32</sup>:



Այս բնական-աստվածային գեղեցկության համապատկերի վրա գրողը նկարագրում է Արցախում տիրող քաղաքական-հասարակական վերափոխումների ընթացքը՝ խարազանող գրչով: «Ծաղրում էինք՝ ծաղրատել դարձանք. մեր պտկի ծաղկածների նստել-վերկենալը հիմա պաշտոնապես կազմակերպվում է խորհրդականներով ու օգնականներով, նախկինում քարտուղար, հիմա մամուլի ծառայության՝ շուտ գլխի ընկնող ու հընթացս կողմնորոշվող ճապուկ ջահելով՝ պատրաստ շեֆի ամեն բառը փոխանցել ձայնագրիչին ու տեսաժապավենին,- նոր անվանումով նազիր-վեզիրների պարսով շրջապատված, թանկ նստող Երեւանի հետ հեռախոսային ուղիղ կապով, «Նիվա» «24»-ների ամենօրյա բենզինով, իրենց կարելություննից ճաքվում են»<sup>33</sup>:

Իսկ ժողովրդի սերուցքը ներկայացնողները շրջանցում են նման երեւոյթները՝ ասելով՝ «դրա ժամանակը չէ»: Իսկ դա վրդովեցնում է գրողին: Նա վերհիշում է 1988-ի եւ հաջորդ տարիների մղձավանջը, միասնության դրսեւորումը, հույսի առկայծումը: Կարդում ենք. «Այս ի՛նչ նյութից են սարքված. նկուղի անլույս մեջտեղում տոնածառ են սարքում, ու երեխաներն իրար ձեռքից բռնած պահելով երգում են՝ «Արդյոք ո՞վքեր են»,- մեծերը դաժանության բերանից մի փոքր ուրախություն են պռճկոտել, բաժանել սմբած ու միհարած երեխաներին, որ նոր տարում մեր երեխաներն ուրախանան...»<sup>34</sup>:

Արցախյան գոյապայքարի սկզբից մինչեւ 1993 թ.

վերջը (պատմվածքը գրվել է 1993-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին) տեղի ունեցած իրադարձությունների խտացված ու խոսուն պատկեր է սույն պատմվածքը: Շարժման սկզբի կոչեր, ռմբակոծություն, դիմակայություն, փախստականներ, թուրքի բնազդային-դաժան-անմարդկային արարքներ, հալածանքներ - այս ամենը պատկերված է վարպետությամբ: Դիմակայել ու դիմանալ է պետք: Մեր պապերի այս խորհուրդը նոր հնչեղություն է ձեռք բերում պատմվածքում, եւ տեղ-տեղ գրողը դիմում է վերինին. «Երկնային Աստված, տուր մեզ ուժ այս դժնդակ ճակատագրի հարվածները վանելու, տուր մեզ դիմանալու կամք, գորություն հաղորդիր մեր աղոտ մարմնին, որ կարողանանք շարունակել մեր սրբազան կռիվը, թող որ գալար-գալար մղկտանք, բայց տուր մեզ ուժ, որ կարողանանք սփոփել մեր մայրերի վիշտն անձիր, տուր մեզ ուժ, որ հետո՝ ովքեր այս հողի վրա գերեզման չունեցան, ովքեր իրենց ցավը լացելու հնար չունեցան, ովքեր անանուն ու անտեղյակ գնացին, ովքեր հեռու զնդաններում խաչվեցին Արցախի հողի համար,- տուր մեզ ուժ,- որ հետո հնարավոր դառնա Տանջանքի սյուն բարձրացնել եւ այն հռչակել սրբատեղի, որպեսզի կարողանանք մրմնջալ՝ այս չարչարանքը իզուր չի երկել...»<sup>35</sup>:

Գրողի աղոթքն առ Աստված չի վերջանում, ձգվում է, քանզի չի վերջակետվում պատերազմը: Զինվորը չի հասցնում տեսակցության գալ այն աղջկան, որին սիրում է: Եվ գրողը սրտի անհուն կսկիծով խոնարհվում է սգաշոր,

ջահել հարսների մեծ վշտի առաջ: Հիմա էլ կողկողում է առերկինք՝ սեւաշոր հարսների վշտով: Կյանքի այս դաժան հարվածների արանքում գրողը սփոփանքի մի երակ է նշմարում, դա զոհված սիրեցյալի նշխար հիշատակն է՝ այն մանկիկը, որ պիտի ծնվի հոր զոհվելուց հետո եւ կայացնի արցախյան գոյատեւման վճիռը:

Գրողն այս դեպքում խոնարհվում է այրիացած հարսերի քաջության առաջ եւ պատրաստվում աշխարհով մեկ ծնծղա զարկելու եւ հայտարարելու տոկուն որոշումը:

Օրինական հպարտության զգացումով գրողը բացականչում է. «Ժամանակի երկար հոլովություն փշուր-փշուր, թել առ թել զատվել-մաքրվել, ընտրվել ու կոփվել է հայ ցեղի արցախյան հանճարը,- սգակիր ջահել հարսներ, ձեր արգանդում դուք հիմա բուծում եք մեր հանճարի ազնվական սաղմը, որ վաղը պիտի դառնա բացակա հայերի շարունակական պայքարի Ձինվորը...»<sup>36</sup>: Այս սրտաբուխ ցավի եւ հպարտության խոստովանությունից հետո գրողը վերհիշում է Հայոց էպոսի հազարամյա իմաստությունը եւ շշնջում. «Դառնամ ու փառաբանեմ, դառնամ ու փառաբանեմ, դառնամ ու փառաբանեմ»:

Արցախի ճակատագիրը Հայոց նոր ճանապարհի համար վճռորոշ պատգամ է: Հայ ժողովուրդը արցախյան ճակատամարտում պետք է հասնի հաղթանակի: Գրողը, որ որոշ տեղատվությունների համար ցավ է զգում, միաժամանակ վստահ է, որ հարատեւման մարաթոնը շարունակվելու է, որովհետեւ ազգային շահերով էրվող-փոթոթվողներին թիվ-հաշիվ չեղավ. «Ձեռքդ ուժեղ խփում ես նա-

Խօրոք մերկացված կրծքիդ ու Քրիստոսի պես ասում՝ ահա իմ մարմինը, առեք, հաջողությունն ապահովված է, ժողովուրդը գլուխը կախ գալիս է քո ետեւից, եւ դու դառնում ես ազգային գործիչ, մինչդեռ քեզ կարծում էիր սովորական ինչ անուն ասեմ, որ վիրավորական չլինի,- ահա այդպիսի մեկդ դառնում ես նշանակալի անձնավորություն»<sup>37</sup>:

Ըստ Մ. Յովհաննիսյանի, եթե գաղափարը սրբազան արմատներ չի նետում սրտերում, դառնում է մորթված եզ, որի շուրջ շատանում են դանակավորները, ազահ անկշտումները: Հայրենիքին ծառայել է պետք՝ անշահախնդիր: Բարեգործությունն էլ պետք է անշահախնդիր լինի, այլապես «հետոն կդառնա ազգային աղբահար»: Պետք է բացառել նաեւ հոգեւոր ուժացումը, աշխատել է պետք, չպետք է հույսը դնել միայն մի տեղից օգնություն ստանալու վրա:

Չպետք է մոռացության տալ Արցախին համակած ցավը: «Խրամորթից միայն բրիչակ է մնացել, մարադեցիներից շատերը սպանվել ու գերեվարվել են,- ահա այդ գյուղերի գյուղացիք աշխարհասփյուռ ցրվել են, Ռուսաստանի որ քաղաք գնում ես՝ մարտակերտցու բարբառն ես լսում»<sup>38</sup>:

Թրքուհին՝ Լալա անունով, քննադատում է իր ազերիներից, որ վճռական չեն Ստեփանակերտը շուտ խանքենդի, Մարտունիին՝ Խոջավենդ, Մարտակերտը՝ Աղդարա դարձնելու ուղղությամբ: Հեյդար Ալիեւը մոջահեդներ է վարձել, որ նրանց թիկունքում պատսպարված ազերի աս-

Լյարները հող ու հայրենիք պաշտպանեն: Իսկ մե՞նք՝ հայերս: Գրողն ընդգծում է. «Ելք չկա՝ ճղում-անցնում ենք, դուռ չկա՝ կոտրում-մտնում ենք, հարկադրված մեր սահմանները պաշտպանում ենք Աղդամում, Յորադիզում, մեզ մոտավորապես մերձակա, Իրանի հետ խիստ սահմանակից Ջանգելանում,- տեղը եկել է՝ ասենք, ես չեմ ասել, ինձնից շատ հարյուր տարի առաջ ասողն է ասել՝ քաջաց սահման՝ սուր յուրյանց...»<sup>39</sup>:

«Տերունական աղոթք» պատմվածքը հանրագումարային պատում է՝ 1988-93 թթ. իրադարձությունների եւ եղելությունների ընդգրկմամբ: Այս հանգամանքը ստեղծագործությանը հաղորդել է հրապարակախոսական-գեղարվեստական համաձույլ ընթացք, որն էլ հնարավորություն է տվել գրողին շոշափելու պատերազմին հատուկ խնդիրները: Պատմվածքում հիմնական հակադիր կողմերը Աղբբջանն է, որ պարտադրել է պատերազմը եւ Արցախն է, որ դատապարտված է հաղթելու: Սակայն պատումի մեջ արժարժվող կարելոր խնդիրները առնչվում են պատմական անցյալին՝ իր դասերով: Խոսք է բացվում նաեւ Խրիմյան Հայրիկի խրատի մասին: Այս պետք է գոյատեւման սեպագիր բանաձեւ դառնար, սակայն, ափսոս, ինչ որ հատվածում մոռացվել է: Եվ Արցախյան իրադարձությունների ընթացքում երկիրը դարձավ փորձադաշտ, եկողը խփում էր գլխին, որ, ենթարկվի: Էլ Պոլյանիչկո - սաֆոնովյան ռեժիմ, էլ կառավարման հատուկ կոմիտե, էլ օմօն, անձնագրային ռեժիմ եւ այլն եւ այլն: Այս ամենը դասեր են: Եվ այն դեպքում, երբ ազերիներ-

րի դպրոցում անընդմեջ քարոզում են, որ իրենց թշնամին հայն է, ուստի պատմության դասը ավելի հրամայական է դառնում, պատրաստ լինել մարտի՝ միշտ, ամեն օր, ամեն պահի: Ուստի հեղինակի վերջին աղոթքներից մեկը հնչում է այսպես. «Երկնավոր Արդար, իմաստունը դու ես, բեղմնավորիդ դեգերող մեր միտքը, պայծառատեսությամբ մեզ զվարթացրու, որպեսզի խճճած, թաղուճ սարքած մեր պարզ ցանկությունն ի կատար լինի, որպեսզի այս Երկիր աշխարհում բոլոր ազգերի հետ ու նրանց նման մեր կալի ու կուտի տերը լինենք, մեր երեխաների ձեռքից բռնած տանենք դպրոց, մենք էլ խաղաղ սրտով գնանք մեր գործին, մոռանանք, որ հայ ենք, ուրիշների պես ապրենք պարզ, որպես մարդ-մահկանացու...»<sup>40</sup>:

Պատումի վերջում հեղինակը ներկայացնում է մորուսը նոր աճած պատանուն՝ իր սիրած ջահել աղջկա հետ: «Աղջիկն արյան խլրտումից շառագունել է, ոնց որ թե վարդի կոկոն է ձմեռվա ճերմակ բացվածքում, տղան ակամա ձեռքը տանում է կողքից կապած ատրճանակին, աղջիկը քնքշանքով ու սիրահարված նայում է տղայի աչքերի մեջ, ու ես մտածում եմ՝ այս ջահել, կորովի, այս հրաշալի պատանին թույլ չի տա, որ աշխարհի աշխարհաքաղաքականությանը կուլ գնա իրենց մատաղ սերը: Անհնարին է: Անկարելի է: Չի կարելի»<sup>41</sup>:

Ընթերցողը հոգու ներքին շիկացումով ընդունում եւ միանում է գրողին: Արվեստի ուժը հենց կայանում է դրանում:

### ԳՈՅԱՍԱՐՏԸ՝ ՆԱԵՎ ՊԱՏԳԱՄ

Յուրաքանչյուր արդարացի պատերազմ սրբազան է, քանզի այն վարվում է անմեղ ժողովրդի գոյությունը պահպանելու համար: Ծիշտ այդպես տեղի ունեցավ Արցախի հետ: Եվ պատահական չէ, որ մեզ պարտադրված պատերազմում մեր ժողովուրդը իր պատասխանը անվանեց գոյամարտ: Պատահական չէ նաեւ այն ընտրությունը, որ Մ. Յովհաննիսյանը իր պատմվածքների, ակնարկների, էսսեների եւ այլ ժանրի գործերի ընդհանուր շարքը հենց այդպես էլ կոչեց՝ *Գոյամարտ*:

Ժողովրդական իմաստությունն ասում է՝ «Լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել»: Այս իմաստությունը վերաբերում է նաեւ գեղարվեստական գրականությանը՝ այն առումով, որ պատերազմական տաք հետքերով ստեղծված երկերը ոչ միայն ճշմարտացիորեն ներկայացնում են իրադարձությունները, այլեւ հավաստի տեղեկություններ են կտակում ապագա սերունդներին՝ արվեստի նոր կոթողներ ստեղծելու համար: Այդ են վկայում մեր պատմիչների մատյանները՝ Եղիշեից սկսած մինչեւ Թովմա Արծրունի, Յովհաննես Դրասխանակերտցի հայրապետից՝ մինչեւ Եսայի Յասսան Ջալալյան, որոնց ցանած հունդերից ականավոր գրողների շնորհիվ, հառնեցին հայոց անցյալի լեգենդված կերպարները՝ մեր պատմության հավերժախոս վկաները:

Այս դիտարկումը կատարեցինք այն առումով, որ

Մ.Յովհաննիսյանի «Գոյամարտ» շարքը որքան ունի գեղարվեստական արձակի բարձր մակարդակ, այնքան էլ հետագայում կարելորդվելու է ճշմարտացիության որակով, գնահատվելու է երկուստեք, որպես ե՛լ պատերազմի մասնակցի, ե՛լ ականատես-գեղագետի պատում:

Այս շարքում եւս Մ.Յովհաննիսյանի պատումները ստեղծված են կոմպոզիցիոն տարբեր ձեւերի եւ միջոցների հյուսվածքով, որ կյանքի թելադրանքի արդյունք են: Պարզապես պատերազմական օրերի պատճառած ցավի, վշտի, ոգեւորության, գոյատեւելու վճռականության, բաժին հասած խաչը կրելու, արցունքների միջից ժպտալու, նոր սերունդներին արարման կոչելու զգացումների մի-մի պատկերներ են շարքի գործերը: Այսպես. սկսենք շարքի առաջին հյուսվածքից, որ կրում է «Ռաֆո» (Արշալույս տատի պատմածը) խորագիրը: 1994-ի փետրվարին գրված գործ է՝ ընդամենը գրքի ութ էջի վրա: Սակայն խոսքի դիմանկարային այնպիսի հակիրճությամբ ու խտացմամբ, որ, ինչպես ասում են, գեղագիտական հաճույքն անպակաս է: Նախ պատմվածքի գլխավոր հերոսին՝ Ռաֆոյին գրողին է ներկայացնում օպերատոր ժորիկը, որ հպարտությամբ ասում է. «Ծանոթացիր՝ Ռաֆոն է, մոլորոյների հրամանատարը»: Եվ Ռաֆոյի փոխարեն ժորիկը պատմում է, որ Ռաֆոն դեռահաս տղաներից մի ջոկատ է ստեղծել ու մասնակցում է Մարտակերտի շրջանի ազատագրմանը: Իսկ Ռաֆոն Մարտակերտի շրջանից է՝ Ներքին Հոռաթաղից: Ռաֆոն՝ «Պն-



դակագն, լիքը թշերով պատանյակ, խոշոր աչքերով, ցուցող ժպիտով»: Մի շատ լավ էլ տատիկ ունի: Ժորիկի առաջարկով հանդիպում են Ռաֆոյի տատիկին, ոչ թե հայրենի գյուղում, այլ Մարտակերտից տեղահանվածների համար առանձնացված օջախներից մեկում՝ Ստեփանակարտի հաշվապահական դպրոցին հարեւան մանկապարտեզում: Տեղի է ունենում հանդիպումը Արշալույս տատիկի հետ՝ «Արշալույս մայրիկը,- Արշալույս որ Արշալույս՝ դեմքից բարութուն է կաթում, արտահայտիչ ազնվական դիմագծերով, որ չասի էլ, հասկացվում է, որ մի ձեռքը յուղի մեջ է, մյուսը՝ մեղրի»<sup>1</sup>: Իսկ հիմա: Մանկապարտեզի մի մեծ սենյակում, որ երեխաների խաղադահլիճ է եղել, տեղավորվել է մի քանի ընտանիք: Սենյակի վերին մասում վառ գույներով մի կարպետ է փռված, որի վրա նախշերով գորգ ու դրանց վրա ծաղկանկար տեղաշորեր: Արշալույս տատիկը ցույց տալով այդ տեղաշորերը, պատմում է. «Թուրքի բերանից փախցրածը էս է... Կորցրածը փալաս փլուսը լինի, միայն խոխեքը ողջ-առողջ մնան»<sup>2</sup>: Սկսվում է զրույցը նրանց միջեւ: Պատմության կծիկը բացում է Արշալույս տատիկը: Նա պատմում է, որ Ռաֆոն, առաջածորցի Սամոն, որը եւս պատանյակ է, որոշել են իրենց հասակակիցների հետ մեկտեղ կազմակերպել «նալադոյ ջոկատ»: Նրանց միանում է նաեւ գորիսեցի Սուրոն: Հրաշքներ են գործում պատանիները, որոնց հրամանատար է նշանակվում Ռաֆոն: Իրենց ավագ ընկերների պես նրանք մարտնչում են դաժան թշնամու դեմ, դիմակայելով ամենաժանր պայմաններին, տանելով թե վերք, թե հիվանդություն:

Պատումն ավարտվում է լավատեսական ընդհանրացմամբ, թեկուզ Ռաֆոն պետք է գնար Երեւան՝ բուժվելու:

«Ռաֆո» պատմվածքում ռեալիստական գույներով ցույց է տրվում Արցախյան գոյամարտի համաժողովրդական բնույթը՝ ոչ միայն հայոց տարբեր հատվածների ընդգրկմամբ, այլև բոլոր տարիքի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հենց դրանումն էր կայանում գոյամարտի հաղթական ավարտի առեղծվածը, որը հասկանալի է խորապես:

Գոյամարտի համաժողովրդական բնույթի մասին է խոսում նաև «Գրիշայի պատմածը» ստեղծագործությունը, որտեղ ներկայացված է 54-ամյա զինվորյալ Գրիշայի սխրագործությունը իր տղաների հետ մեկտեղ, որ մարտնչում են Աշոտի եւ Դեւի հայտնի վաշտերում:

Հունորի հաճելի շաղախով Գրիշան պատմում է իր վիրավորվելու, ոտքերից զրկվելու մասին:

Գրիշան զրկվում է ոտքերից, սակայն հմտորեն կարողանում է ավտոմեքենան հարմարեցնել ձեռքով վարելու համար: Դեռ ավելին, նա պահում է կով, այծեր, ոչխար եւ պահովում ընտանիքի կարիքները: «Շարժումը սկսվեց, - ասում է Գրիշան, - տունը կիսատ մնաց, պիտի վերջացնեմ... Ամեն ինչ կլինի: Կռիվը վերջանա, ամեն ինչ կլինի»<sup>3</sup>: Պատումի մեջ ներկայացվում է պատերազմական ժամանակաշրջանի արցախյան գյուղի հյուրասիրությունը՝ հաց, մածուն եւ օղի: Կարելորդ այս չէ, այլ գրողի խորիմաստ ընդհանրացումը. «Մինչեւ Գրիշային այցելելը ես ճնշվածու-

թյան զգացում ունեի՝ հաշմված մարդ, «մի տուն լիքը մանուկներ», աղքատություն: Այդ ամենը ներկա էր, բայց չկար ճնշվածության հետքն անգամ, եւ պակասը լրացրեց կինը, որ ինչ որ գործով տեղ էր գնացել: Եկավ, տան աղմուկը ավելացրեց, իսկ երբ ցանկացանք «ընտանյոք հանդերձ» լուսանկարվել, ծիծաղ էր, որ բոլորին բռնել էր: Գրիշան լուրջ դիտողություն արեց.

- Զծիծաղեք, լուրջ նայեք ապարատին»<sup>4</sup>:

Արցախյան պատերազմը նաեւ դպրոց էր՝ զինվորներ կռող, սպաներ թողարկող, գեներալներ կոփող դպրոց: Այս եղելության հրաշալի մի պատկեր է «Օրը արեւոտ էր, մարտ» երկը: Հայ ժողովրդի վտանգված ճակատագիրը Բաքվից Արցախ է բերել Ռոմա Ռոբերտի խաչատրյանին, որի տասնհինգը լրացել է, բայց տանկերի վերանորոգման վաշտի շարքային է, այստեղ Մաքսիմ Վանյանն է՝ նույն վաշտից, այստեղ մարտադաշտում հրաշքներ գործող Ռաֆիկն էր, որին ընկերները Օբեթա են կոչում: Այստեղ է նաեւ տասնվեցամյա Նաիրին, որ 10 տարեկանից փամփուշտներ է հասցրել առաջին զօի զինվորներին: Այդ նրանք են, որ Հորադիզից մինչեւ Օմարի բարձրադիր լեռներ արյուն են թափել եւ փրկել հող հայրենին՝ Արցախը՝ Հայոց երկրի դուռն ու դարպասը: Այդ երիտասարդներից յուրաքանչյուրը ունեցել է իր երազանքը, սակայն ինչպես արձակագիրն է արձանագրում՝ «... մարդը ծրագրում է, կյանքը կարգադրում, իսկ արցախյան այսօրվա հրամայականն է, որ Նելսոն Սոդոմոնյանը հանրահաշվական բարդ խնդիրները լուծելու իր

հնարավորությունը, ինժեներ-մեխանիկի իր հմտությունը էս հողին պորտալարով կապվածությամբ իր ընկերների հետ, նրանց գլուխն անցած կռվի թշնամու դեմ, որպեսզի ոչ մի թուրք զենքը ձեռքին չանցնի «Էլչին» ճամփաբաժանը, որտեղից մի ճյուղը ծռվում է դեպի նոր կնքանունով Բերդաշեն, նախկինում՝ Ղզղալա, իսկ պատմականորեն ու սիրուն սազական՝ Կուսաբերդ»<sup>5</sup>:

Ահա, այդպես է մեր պատերազմը սնել ու կոփել իր հողի զինվորյալ տերերին, որոնց իր շուրջն է հավաքում հրամանատար Նելսոն Սողոմոնյանը եւ խոստովանում, որ հրամանատարը եթե հրեղեն էլ դառնա, մարտը շահողը զինվորն է, որ պետք է խելոք կռվի, որպեսզի կարողանա թշնամուն ջարդել: Ասում է եւ ծրագրում հայրենիքը պաշտպանելու գիտությունը՝ «սկզբնաղբյուրներով»: Այդպես է թելադրում երկրի ներկան եւ ապագան:

Չունորի կենսահաստատ ցուցադրման հաջողված երկ է «*Խնուշինակը պակաս գյուղ չի*» գործը:

Մեջբերելով տարածված անեկդոտների մի շարք, Ս. Չովհաննիսյանը պատկերում է այդ անեկդոտների հեղինակների անսպառ ընդունակություններն ու հոգու գեղեցկությունը, նրանց աստվածատուր տաղանդը՝ թշնամուց խլված տանկերը նորոգելու եւ օգտագործելու մեջ, ուստի նրանք իրենց կոչում են «տանկին շունչ տվողներ»: Այդ տղաները Խնուշինակից են, Եմիշճանից, Գիշուց, Սարտունուց, Բերդաշենից, Աշանից, ուրիշ գյուղերից, Երեւանից, ինչպես գրողն է ընդհանրացնում. «Ամեն տեղից էլ կան, մի

խոսքով՝ բոլորն էլ դարաբաղի են... բոլորն էլ հայ տղաներ են»: Յենց այս միասնության մեջ էլ հեղինակը տեսնում է հաղթանակի գրավականը եւ վավերագրում կոնկրետ-ճշմարտացի փաստերով ու անուններով:

Իմաստուն, բնութագրող հումոր ունի Մ. Հովհաննիսյանը: Նրա գրչի տակ երգիծական երանգները դառնում են կերպավորման հիանալի միջոցներ: Այս տեսակետից ընդգծվում է *«Ընկեր պարոն գնդապետ»* վավերագրական պատմվածքը: Հրամանատարի եւ զինվորների մտերմիկ, դեռեւս ռազմական խստագույն հրամաններին անսովոր զինվորայլները ձեռ առնելու չափ կատակում են, աշխուժանում, սակայն դրանով հանդերձ վճռականությամբ լի են՝ հարեւան-զավթիչ թշնամու յուրաքանչյուր ոտնձգության պատասխանել ինչպես հարկն է: «Հրամանը կատարում են եւ ոչ թե քննարկում»... Գումարտակի ամեն մի ֆիդայի-զինվոր ընդունում է այս օրենքը, հպարտանում, որ հյուրերը տարբեր երկրներից գալիս են եւ ընդունում, որ Ղարաբաղի բանակը արժանի է ամենայն գովեստի: Սակայն օրենքի այդ ընդունելը զուգահեռվում է եւ ինքնաքննադատությամբ՝ ավելի լավը լինելու միտումով.

- Մի անգամ էլ գան, որ սնունդը լավացնեն:
- Ծխախոտն էլ միշտ տան:
- Սիրտդ ռուսի մատուշկա չի՞ ուզում:
- Դրա ժամանակը չի, կանոնավոր շարժվե՛ք,- եւ ավագը ձեռքը մեկնում է, որ իրենից հետո՝ ձեռքի ուղղությամբ, դասակը շարք կանգնի:

- Եդ բոլորը հասկանալի է, բայց ինչո՞ւ մեր թանկագին հյուրերը նմուշի համար մի աղդամցի չեն բերել, որ իր աչքով տեսներ ու Աղդամին կարոտ մյուս աղդամցիներին պատմեր, թե ինչպես է «արեւելյան պաշտպանական շրջանի «Ն» գումարտակը Աղդամի հրապարակում մարտական փեսատես անցկացրել,- Գրիգորն էլ հո չի ասո՞ւմ,- էն Աղդամո՞ւմ, որ մեզ վրա մատ էր թափահարում՝ մենք յոթ միլիոն ենք, մենք էսպես ու էնպես:

- Հետաքրքրության համար չհաշվե՞նք, թե ամեն մի ղարաբաղցու քանի ազերի թուրք է հասնում:

- Յոթ միլիոնը բաժանիր 450 հազարի վրա՝ էդքան:

- Որ ճիշտն ասենք, հիմա Ղարաբաղում էդքան էլ չկա, բայց ենթադրենք կա, ուրեմն ի՞նչ է ստացվում՝ մնացորդով ստացվում է, որ մի ղարաբաղցուն հասնում է 46 ազերի եւ մի պոչ էլ ավելի»<sup>6</sup>:

Այսպես, վստահությամբ, ճշմարտության հաղթական շառաչով հայ զինվորյալները հասկացնում են ոչ միայն Բաքվին, այլեւ էսենգեին, որ Արցախի վճիռը դեռ 88-ին է կայացվել ու բեկման ենթակա չէ:

Հետաքրքիրն այն է, որ նոր կազմակերպված արցախյան բանակի զինվորը ունի կոփվածք, նույնիսկ ծիծաղում է, երբ հրամանատարը հրամաններ արձակելիս դեռեւս չի կարողանում հայացնել տերմինները, արտաբերում է ռուսերեն:

Կատակախառն խոսք ու զրույցի մեջ ընդգծվում է հարեւան թշնամու նենգ քաղաքականության եւ կազմակեր-

Կած արյունահեղության դեմ անզիջում պայքարելու գաղափարը:

Խոսելով շտաբի պետի մասին, բոլորն էլ՝ դարձյալ կատակով, մատնանշում են պահի բախտորոշ լինելը: Ջրույցի մեջ հնչում է. «Ո՞վ չի իմանում, որ ամենագրագետը շտաբի պետն է, էդպես էլ պիտի լինի, հատկապես քարտեզը պետք է լավ իմանա, որ քնած տեղից վեր կացնես՝ իմանա Փափրավենդը Աղդամից հյուսիս է, թե՞ հարավ, Աղդամից քանի կիլոմետրի վրա է, կամ Ղարաբանդը, բոլորդ էլ լսել եք Ղարաբանդ անունը, բայց քարտեզի վրա ցույց տալն է կարելու, կամ Աղդամից արեւելք է, թե արեւմուտք, ես օրինակի համար ասացի, իհարկե, Աղդամից արեւմուտք Ասկերանն է, էդքան էլ անգրագետ չենք, էդտեղ վերջացրեք, ուրեմն շտաբի հրամանատարը...»:

Կատակի ծայրը հասնում է նրան, որ զինվորը խորհուրդ է տալիս խոսել բանիմացությամբ, ոչ թե ասել շտաբի հրամանատար, այլ՝ շտաբի պետ:

Զինվորները սրտաբուխ, արժանապատիվ հունորի միջից ցուցադրում են իրենց երազանքը՝ ունենալ նաեւ գեներալ, եւ որոշում են՝ ոչ թե «տավարիչ» անվանել, որովհետեւ դրա ժամանակն անցել է, այլ՝ «պարոն»: Ահա այսպես հուլովվում է «ընկեր պարոն գնդապետ»-ը, որի շուրջ Մ. Հովհաննիսյանը ուղղակի մանրամկարչի երեւակայությամբ հյուսել է տվյալ ստեղծագործությունը:

Հայ ժողովրդի ծանր ու հերոսական պատմությունը հյուսվել է որպես դաս ու ազդակ: Արարելով իր էպոսը, նա

իր ծռերի լեզվով խորհուրդ է տվել հարեւանին՝ ապրել խաղաղ ու համերաշխ, արարել իր սեփական հողի վրա, որ տրված է վերուստ: Սակայն, ցավոք, կյանքի ընթացքը ցույց է տվել, որ ասողին լսող պիտի լինի: Առանձնապես հեռավոր ավազուտներից Հայաստան ներխուժած քոչվոր ազգերի ցեղերին հետաքրքրել են միայն բնիկ ժողովրդի տարածքները զավթելն ու սեփականացնելը, որի հետեւանքում բռնկվել է արցախյան գոյամարտը: «*Զորանոց*» պատմվածքում Հովհաննիսյանը շոշոփում է այդ թեման: Խաղաղասեր եւ արարող արցախցին դիմել է զենքի եւ սովորել զորանոցային կյանքի կարգ ու կանոնին, նույնիսկ հինգ օրով տուն գալուց, երրորդ օրը վերադառնում է զորանոց: Վերադառնում է, որովհետեւ անելիք ունի եւ մտահոգված է հարազատ օջախի ճակատագրով. «Ինչո՞ւ է շունշանորդի թուրքը իր քահանանաններից եկել ու մեր սարերում մահ փնտրում: Ես խոսքին ի՞նչ պատասխանես: Որովհետեւ դամմազ է, քանի գերի թուրքի է ասել՝ ա՛յ թուրք, ինչո՞ւ ես զգվել կյանքից, պակասը մի ութ երեխա ես աշխարհ զցել, ապրի, էլի, որ քո քորփեքդ պահես, մենք էլ մեր մեկ-երկուսը մեծացնենք»<sup>9</sup>:

Սակայն դա բուրդը չէ: Արցախցին գիտե, որ կռիվը զգվելի գործ է, միաժամանակ համոզվել է. «Կռվի օրենքը ո՞րն է, եթե դու թուրքին չսպանես, թուրքն է քեզ սպանելու, կռվումը գաթա չեն բաժանում»<sup>9</sup>:

Պատմվածքի կերպարներից Ավետիքի այս մտորումները ժողովրդական կենսափորձից եւ հայոց ճակատագրից բխած խորհրդածություններ են: Ավետիքը, որ ունի Գո-



հարիկ, Անուշ, Աղավնիկ անուններով դուստրեր եւ Վաղարշակ անունով մանչուկ, պահպանել է պապենական սրբացած հոգեբանությունը: Հրաժեշտին հայրն ասում է՝ պինդ կաց, մոր աչքերը տամկանում են, կինը ծնողներից քաշվում է, ամաչելով մատների ծայրերը մեկնում է Ավետիքին, Ավետիքի մարմնով սրսփոց է անցնում: Եվ նա կատակով հասկացնում է կնոջը, որ անչափ սիրում ու կարոտում է նրան:

Պատերազմական այս տրամադրության շիկացման մեջ նա կրկին երկու օրով տուն վերադառնալուց առաջ ընկերներին պահ է տալիս. «Մի քանի թուրք էլ ինձ համար կպահեք, էս երկու օրը գալու են»:

Զորանոցում էր նաեւ Աշոտը, որին «ճուտիկ» են անվանում եւ երգիծում. «Տասնութ տարեկանում երկու բաժին ուտում է եւ էլի թե՛ փորս բան չմտավ»:

Աշոտի հետ կատակում են ընկերները, նա գնացել է տուն, եկել՝ աչքի տակը կապտուկ, ասելով, թե՛ փետը ջարդելու ժամանակ է եղել, մեկ էլ թե՛ հայրը, որին բոլորը Պապաշա են անվանում, ջղայնացել է ու ապտակել: Սակայն պարզվում է, որ ուրիշ դեպք է տեղի ունեցել Աշոտի հետ, սիրել է մի աղջկա, իսկ աղջկան ամուսնացրել են ուրիշի հետ: Բայց պատումի կիզակետում այդ խնդիր չէ: Հեղինակը ներկայացնում է Աշոտի հորը՝ Գրիգորին, որ ազատագրական պայքարում կորցրել է ոտքերը, բայց էլի ուզում է վերադառնալ զորանոց: Մի գործ կանի, կօգնի կռվող տղաներին:

Գրիգորի Աշոտ որդուց հետո Միերն է, որ դեռնւս պատանի, համոզում է հորը, որ ինքն էլ է ցանկանում մասնակցել պատերազմին, կռվել թուրքի դեմ: Մ. Հովհաննիսյանը

Ի հետաքրքիր կոմպոզիցիոն ձևերի օգնությամբ ներկայացնում է Միերի եւ հոր հանդիպումն այգում, պատանու՝ զենքին տիրապետելը, վերջապես հոր համաձայնությունը, որ նա եւս զինվորագրվի:

Ջորանոցում լեզենդներ են հյուսվում նոր հերոս-նահատակների մասին, որոնցից է նաեւ Գեւորգը, որ ընկերներին թշնամու շրջափակումից ազատելու համար հնծել է 26 թուրքի եւ ինքն էլ զոհվել: Հիմա Գեւորգը իսկ եւ իսկ հավերժախոս լեզենդ է դարձել: Գրիգորը ոտքերին պոռտեզներ է սարքել տվել եւ եկել զորանոց՝ իր մատուցած Միերիկի հետ: Այսպես, գերդաստաններ են զինվորագրվում արցախցիների անզիջում գոյամարտին - այս է «Ջորանոց» ստեղծագործության լեյտմոտիվը, դեռ ավելին՝ Արցախն է հենց ամբողջությամբ դարձել մի անպարտելի զորանոց:

Մ. Հովհաննիսյանը ուշի-ուշով հետեւել է պատերազմական ամենօրյա գործողությունների ընթացքին, եղել զինվորների մոտ, հանդիպել ազատամարտիկների հետ, ականատես-գրողի նրբանկատությամբ գրի առել կարեւոր իրադարձությունները, նաեւ կռվի թեժ պահերին ծնված կատակներն ու սրամտությունները: Այս առումով պատմագեղարվեստական նշանակություն ունի նրա «Ռազմաճակատում հարաբերական հանգիստ է» պատումը: Նույնիսկ դժվար է այն որակել կոնկրետ որեւէ ժանրի սահմաններում, որովհետեւ գրողը անկաշկանդ ներկայացնում է պատերազմող երկու կողմերի միջեւ ռացիայով տեղի ունեցող զրույցները, որոնք կերպավորման հիանալի եղանակաձեւ

են՝ հայ ազատամարտիկի եւ ազերի-թուրք զավթիչի բնավորությունների կերտման, հոգեբանությունների դրսեւորման, նպատակների ընդգծման առումներով: Եվ հենց սկզբից նշենք, որ երկը երգիծական մի կատարյալ մնուշ է արցախյան պատերազմի թեմատիկան արծարծող արծակի բնագավառում: Պատումի սկզբից հանդես է գալիս Մարտինը՝ զինվորի իր օրինակելի վարքով, ապա՝ Մանուկը՝ սրամտությամբ, որոնց զրույցներում եւ հերոսական ոգին է ծածանվում, եւ ընդգծվում-քննադատվում նաեւ եղած թրուքունները՝ զինվորներին ժամանակին սննդամթերք մատակարարելու գործում:

Մի քանի մետրի վրա է թշնամու դիրքը. «Հեռադիտակով լավ երեւում է, հեռադիտակով տեսնում ես, որ շանորդի թուրքերը՝ թուրք է, ազերի է, ադրբեջանցի է, չկարողացան իրենց համար մի անուն ջոկել, որ համ սազական լինի, համ էլ կրկնված չլինի»<sup>10</sup>:

Պարզվում է, որ ռացիայով թուրքը հայ զինվորին ձեռառնելու նպատակով կոչում է Վազգեն,- մեր կաթողիկոսի անվամբ, իսկ հայը նրանց՝ մոլլա անունով:

Հրադադարին ռացիայով սրամտում ու մրցում են միմյանց հետ: Թուրքը խոսում է.

- Վազգեն, Վազգեն, Վազգեն...

Հայ զինվոր Մարտինը նախ մի լավ նախշում է. «Քո հոր գլխատակի քարը պրանեն, ի՞նչ է եղել» եւ ապա արտաբերում.

- Մոլլա, մոլլա, մոլլա:

- Վազգեն, լա՞վ ես լսում ես:

- Ոնց որ քեռակինդ ծնկիս նստած ականջիս խոսի:

Եվ շարունակվում է ձեռ առնելու երանգավորումը: Թուրքը Կասպից ծովի օսետրին, հայր՝ Սեւանի իշխան ձուկն էր փառաբանում, խոսքը հասնում է պատերազմի քաղաքական նպատակներին: Հայն ու թուրքը շարունակում են զրույցը. «Էլչիբեյն իմացել է Սեւանի տեղը ու խոստացել է Սեւանում լողանալ: Որ էլչիբեյին հանդիպեք, մեր կողմից բարեւ կանեք: Մարդն ուզում էր Ստեփանակերտում խորոված ուտել, Շուշվա Ջիդիրդուզի հովին թեյ խմել Շուշվա մաքուր օդերում: Աչքներս ջուր դառալ չեկավ:

- Հոսանք չունեք, հեռուստացույց չեք նայում, չեք իմանում, որ հիմա մեր նախագահը Հեյդար Ալիևն է: Գուցե, Վազգեն, բարտեր անենք՝ ես օսետրինա ուղարկեմ, դու էլ՝ իշխան: Հարեւան չե՞նք:

- Մուլլա, իշխանը ուշ-ուշ են տալիս, միայն տոն օրերին: Պիտի սպասես մինչեւ մայիս:

- Մայիսի մե՞կը, դուք մայիսի մեկը դեռ նշո՞ւմ եք:

- Չէ, մայիսի 9-ը:

- Հաղթանակի օ՞րը:

- Հա, մուլլա, հաղթանակի օրը, ոչ թե 1945-ի հաղթանակի, այլ 1992-ի, երբ Շուշին ազատագրեցինք»<sup>11</sup>:

Եվ այստեղ անջատվում է ռացիան, լռում է թուրքը, էլ ասելիք չունի: Շարունակվում է Մանուկի, Մարտինի, Վրեժի, Անուշավանի, Չախի աշխույժ զրույցը: Սակայն Վրեժի հայտնած բոթը տակնուվրա է անումն ամեն ինչ: Թուրքերը Հովիկին գերի են տարել անհավասար մարտի ժամանակ:

Մտատանջվում են տղաները, ճանաչում են թուրքին, գիտեն, որ կարող են տանջել Հովիկին: Որոշվում է ելքը: Պետք է անցնել թշնամու թիկունք եւ գերեվարել մի թուրքի՝ Հովիկի հետ փոխանակելու համար: Ահա, այս իրադարձությունների դիտարկումն էլ հենց որակվում է ռազմաճակատի հարաբերական հանգիստ, որ հեղինակը ճշմարտացիորեն վերնագիրն առել է չակերտների մեջ՝ ասել է թե ռազմաճակատում հայ զինվորը չի կարող հանգստանալ:

Պատերազմը ոչ միայն թշնամական կողմերի հաշիվներն է մաքրում, այլեւ հստակեցնում է անհատների փոխհարաբերությունները եւ ափի մեջ դնում ճակատագրեր՝ հերոսական-ողբերգական, երջանկաբեր-արցունքոտ: Նման կենսական խնդիրների մի ընդհանրացնող գործ է Մ.Հովհաննիսյանի «Գոտկատեղից ցածր» պատմվածքը: Նրանում որպես գլխավոր հերոսներ Ռուբիկն ու Վաղոն են:

Պատմությունը ներկայացնում է հեղինակը՝ իր հերոսի՝ Ռուբիկի միջոցով:

Ռուբիկը եւ Վաղոն տեսել են Սումգայիթի ողբերգական դեպքերը: Ռուբիկը դժկամությամբ է հիշում Սումգայիթի օրերը: Ռուբիկը հարմար բառեր չի գտնում՝ պատմելու իր տեսածը, որ եղել է վատ երազի պես: Նա ականատես է եղել, թե ոնց «հրապարակում գլուխը խուզած ադրբեջանցի կինը՝ արտասուքը աչքերին, կուրծքը ծեծում էր, մուսուլման կնոջն անվայել մերկացրած կուրծքը ծեծում էր, եւ պահին հարմար ու ազդեցիկ ողբածայն կոծում.

- Ահա տեսե՛ք Ստեփանակերտում ինչպես են մուսուլման կնոջը անպատվում: Հայերը մեզ ծաղրում են, թալանում են, մեզ մեր տնից հանում են: Ալլահ, ալլահ...- Ու

խփում է մերկ կրծքին:

Տեղահան արված ժողովուրդը ալիք էր տալիս:

- Մա՛հ հայերին: Սպանե՛լ...»<sup>12</sup>:

Ռուբիկը լսել էր եւ համոզվել, որ այդ թուրքավարժ սրբապղծությունը նաեւ իր դեմ է, իր ծնողների, երկու քույրերի, ավագ եղբոր, Սումգայիք քաղաքը կառուցած հայերի:

Եվ Նազարյանների ընտանիքը տունուտեղ շան բաժին արած, հասել է Ստեփանակերտ, տեղավորվել հանրակացարանում: Եվ Ռուբիկը դարձել է արցախյան պատերազմի արծիվներից մեկը եւ ֆագոտի միջոցով ոչնչացրել թշնամու շատ տանկեր:

Սակայն Ռուբիկին հուզում է մի միջադեպ՝ կապված դարձյալ Սումգայիքից Արցախ եկած իր ընկերոջ՝ Վաղոյի հետ: Վաղոն՝ քաջակորով մի զինվոր, մեկնում է Երեւան, հանդիպելու Սումգայիքից Երեւան տեղափոխված իր առաջին սիրո հետ: Այնտեղ շուրջկալի է ենթարկվում, մետվում բանտ, մի կերպ ազատվում: Ապա հասու լինելով, որ խարդախությամբ իրենից խլել են իր առաջին սիրուն՝ Ռուզանին, մեծ հուսախաբություն է ապրում:

Մ.Յովհաննիսյանը դեպքերը ներկայացնում է ռեալիստական գույներով, նա ընդգծված միտումայնություն չի ցուցադրում, հայրենասիրության դրսեւորումը տեսնում է նաեւ հայրենակիցների խոհեմության, ընկերասիրության մեջ, որ նման վերաբերմունք չտեսնելով, Վաղոն ասում է. «Ախպերս, իմ բաժին Ղարաբաղը պրծավ, ինձ համար Հայաստանն էլ պրծավ, Ղարաբաղն էլ: Գնում եմ Ռուսաստան,

շուտով իմաց կտամ իմ մասին»<sup>13</sup>: Պատմվածքն ավարտվում է ցավը օղու մեջ խեղդելու նկարագրությամբ: Հեղինակը եզրակացությունը թողնում է ընթերցողին:

Արցախյան պատերազմը համաժողովրդական գոյամարտ էր: Այն ազատության եւ արժանապատվության կռիվ էր: Գլխավոր ուժը միասնությունն էր՝ պատանի-երիտասարդ-ալեհեր, քույր-մայր-աղջիկ ուժերի միջեւ: Ահա այս վճռականության շնորհիվ էր, որ իրականացավ մեր հաղթանակը: Այդ միասնության մեջ գիտակցված անձնուրացության փայլուն օրինակ է Մանվելը, որ Արաքսից մինչեւ Օմար հաղթահարելով անսովոր տապն ու սառնամանիքը, կրելով նույնիսկ անբուժելի վերքեր, չի թողնում դիրքերը (*«Մանվել»*), դա տանկային գումարտակի հրամանատար Մխոն է՝ Մխիթար Ավետիքյանը, որ Ադդամի համար մղվող ճակատամարտում ծանր վիրավորվում է՝ զգեստը դարձնելով արդար արյամբ ներկված դրոշակ (*«Տարեմուտի նվեր»*): Ահա, այսպես, առանց ավելորդ եւ ընդգծված ճառի, արցախյան պատերազմի բոլոր մասնակիցների հոգիներում ծիածանվել է Մեծն Չարենցի խորհուրդը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Մ.Հովհաննիսյանի երկերի երկրորդ հատորի մի զգալի մասը կազմում է *«Մաճկալաշենի ֆեմոմենը»* շարքը: Վավերագրական պատմվածքներ են դրանք՝ գրված Արցախում տեղի ունեցած պատերազմի թե՛ հետքերով: Արցախի տարբեր շրջաններում եղել են ճակատագրական նշանակություն

ունեցող ճակատամարտեր, որոնց շարքում պատմական էր նաև Մաճկալաշենը: Դժվար է գերազնահատել Մաճկալաշեն գյուղի մատույցներում հայ ազատամարտիկների ջախջախիչ հարվածը ազերի-թուրք ունակներին: «Իսկ *Լորենցը 14 տարեկան էր*» էսսեն մաճկալաշենցիների անկոտրում կամքի, մահու եւ կենաց կռվի մեջ նրանց անձնուրացության մի հրաշալի պատկեր է:

1992 թ. հուլիսի սկզբից ազերի թուրքերը մի քանի անգամ փորձել են գրավել Մաճկալաշենը եւ ճանապարհ բացել դեպի Ստեփանակերտ: Նույնիսկ եղել են կարծիքներ՝ եթե հնարավոր չէ գյուղը պահել, կարելի է նահանջել: Սակայն հրամանատար Մելքունյան Արմենը ուսը հենել է թաց խրամատին եւ տապակվել մտքերի մեջ՝ ինչպե՞ս կարող է իր ծննդավայրը հանձնել ազերի թուրքին, ախր, գյուղի կողքին Ամարաս վանքն է, ամեն օր էլ Քարամյան Ռազմիկը գնդակների տարափի տակ բարձրանում է վանքի զանգակատունը ու զանգերը հնչեցնում:

Մ.Հովհաննիսյանը հոգեբանական բացահայտումներ է կատարել, հերոսի հուզաշխարհը ներկայացնելով այսպես. «Որ Մաճկալաշենը տա, ուրեմն խազազ սարն էլ է տալու, ամբողջ Ամարասն էլ է տալու ու էդպես իր բաժին աշխարհը պրծնելու է իր համար: Մելքունյան Արմենը տապակվում էր այս մտքերի մեջ ու չէր կարողանում մի վճիռ կայացնել. կամ քսանչորսով պիտի կործանվեն, կամ գյուղը պիտի հանձնեն»<sup>14</sup>:

Եվ 24 մաճկալաշենցիներ կրծքով փակելով թշնամու



Ճանապարհը փրկում են հայրենի գյուղն ու սուրբ Ամարասը: Եվ մաճկալաշենցու իր անօրինակ դիմանկարը ներկայացրեց նաեւ Արսեն բիճայի Լորենց թռռը, որ գումարվեց 24 ավագ համագյուղացիներին: Այդ օրը՝ 1992-ի հուլիսի 28-ին, ազերի թուրքը հասկացավ, որ հեշտ չի լինելու իր համար իր իսկ կողմից սկսված պատերազմում: Հետագայում հայրենիքի տասնչորսամյա զինվորը մասնակցել է Մաճկալաշենի մեծ ճակատամարտին, երբ Ղաջարի թուրքի մեջքը մի օրում կոտրեցին, տասնչորս տեխնիկայի մի մասը ոչնչացրին, շատ ավար վերցրին, թուրքի տասնյակ լեշեր փռեցին Ամարասի հողում: Պատմվածքը ավարտվում է տեղեկատվության ոգեւորիչ ընդհանրացմամբ. «Այդ օրվանից անցել է երկու տարի. Լորենցի մատաղ սիրտը քանիցս մղկտացել է կողքին զոհված մարտական ընկերների համար, գլոր-գլոր արտասվել է զոհված հոր մահվան բոթն իմանալով: Բայց վառվող երեսը հովացել է, ոնց որ Խազազի սարից եկած իրիկնադեմի քամուց է հովանում, երբ իր առաջին ազերի թուրքը փախել է, երբ իր ավտոմատից արծակած գնդակից շուն թուրքը դիտապաստ փռվել է: Իր կյանքի տասնվեց տարում՝ երկու տարվա մարտական ճանապարհ է անցել, 1992-ին Ղարաբաղի համար փրկել է Մաճկալաշենը: Տասնչորս տարեկանում Լորենցը կատարել է իր կյանքի գլխավոր քայլը...»<sup>15</sup>:

Ասվում է, եւ պիտի ասվի, որ Սարդարապատի զանգերի դողանջները մի օր հասել են Ամարաս, ձուլվել նրա լռեցրած զանգերին, որպեսզի առիթ լինելու դեպքում արթնա-

ման եւ սաղմոսի օրինանքով հնչեցնեն. «Յակառակիր, Տեր, ինձ հակառակորդների հետ եւ կռվիր ինձ հետ կռվողների հետ»: Եվ եկել է պահը՝ 1988-ը, երբ լցվել է արցախցու համբերության բաժակը, դողանջել են սրբավայրի տաճնապի զանգերը՝ ազերի թուրքի դեմ: Մաճկալաշենցի Ռազմիկը ավտոմատն առած, դարձել է նաեւ զանգահար: Եվ գրող Մ. Յովհաննիսյանը այդ դողանջները լսել է եւ՝ ականջով, եւ հոգով, եւ սրտով ու դարերին հանձնել արձակ մի բանաստեղծություն *«Ամարասի զանգերը»* խորագրով: Դա սովորական երկ չէ... նրանում զանգերի լեզվով խոսում են Արցախի անցյալը, հողն Արցախի, երկրի սիրտը, ժողովրդի ավանդական վճռականությունը: Գրողը ոչ թե պատմում, այլ նկարում է Ամարասի զանգերի դողանջները դեռ լույսը չբացված, դողանջներ, որ ալիքվում են Ամարասի սրտից. «Մաճկալաշենցից հասնում Սոս, այնտեղից՝ Քերթ ու Քարահունջ, ապա Կոլխոզաշեն է հասնում, մյուս թեւից ալիք է տալիս դեպի Յերիեր ու Ծովատեղ, հասնում բարձրամիստ Խերխանը: Մարդիկ լռելյայն աղոթքի բառեր են ասում. «Տեր, դու մեր հակին կաց, մեր ծանր բեռը թեթեւացրու, որ կարողանանք մեջքներս շտկել»<sup>16</sup>:

Պատկերային հյուսվածքների մեջ զանգերի դողանջները ձուլվում են ավտոմատների կրակոցներին, վանքի աստվածային ուժը այդ դողանջներն առնում եւ հասցնում է հովտի բոլոր շեները, այնտեղից «հասցնում Գանձասար, Գոխչ վանք ու միանգամից Արցախի բոլոր զանգերը ձայնձայնի տալով՝ իրենց որդկերանց հանում հայրնեյաց ոգե-

կոչման հրավերք են անում»<sup>17</sup>:

Մ. Յովհաննիսյան գրող-լրագրողի գրիչը ստեղծում է մի պաննո, որտեղ խտացված ներկայացվում են ազատամարտիկ որդուն օրհնանքով կռվի դաշտ ճանապարհող հայ շինականը, օրվա բարուն սպասող ծերացած այան, որ երեսին խաչ է հանում եւ պաղատում սուրբ Աստվածածնին, որ զավակներին անփորձանք պահի, զինվոր տղան, որ հագցնում է փամփշտակալը ու հորից սովորածով թքում բռան մեջ, կարծես պիտի մտնի խոտհարի շարը, բահը պիտի խոր խրի հողը, հողի հետ ամեն օրվա իր գործը պիտի շարունակի, բայց գիտե, որ հիմա գործը թուրքին ետ տալն է, գործիքն էլ Կալաշնիկովի ավտոմատն է:

Դա դեռ ամենը չէ: Ամարասի տարածքին աչք տնկած թշնամին է, որ սերվել է կարակոյունլուներից եւ աղկոյունլուներից եւ եկել-չոքել է հովտի մերձակա տափերում եւ ուզում է լռեցնել Ամարասի զանգերը:

Ամարասի մոտակա գյուղերից խմբված ազատամարտիկների մարտնչող ոգու խտացում է մաճկալաշենցի Ռազմիկ Գրիգորյանը, որի սրտում զանգերի ղողանջները զորացրել են այն հավատը, որ Ամարասի հովտում ապրելու իրավունք է կտակել հավիտյանս հավիտենից: Եվ այդ հավատը գեղագետի վրձնով սերունդներին է հանձնել Մ. Յովհաննիսյանը:

Կարդալով Մ. Յովհաննիսյանի «Մատաղ» ստեղծագործությունը, մտքի թելերով այցելում ես Վարդանանց պատերազմի օրերին, ծնկի գալիս հայոց փափկասուն կա-

Մանց՝ մեր սրբացած տատիկների առջեւ, ապա ճեղքելով դարերը, հանդիպում ես Անիի պարիսպներից թշնամուն խոցող Այծեմնիկին, լինում ես Եղեսիայում, սրբուն ողբացող մոր արցունքները, քայլում դարից-դար, հասնում արցախյան գոյամարտի զրկանքները կրած, որդեկորույս մեր մայրերին, համբուրում նրանց ձեռքերը եւ շշմջում երախտիքի-ցավի-հպարտության այն խոսքերը, որ թղթին է հանձնել Ս. Հովհաննիսյանը՝ մասնակիցն ու ակնատեսը ոչ միայն գոյամարտի սխրանքների, այլեւ որդեկորույս մայրերի զարմանալի իմաստուն ողբին: «Մատաղ» պատումը ժանրային առումով բանահյուսական ժանրի նորօրյա արտահայտություն է: Սակայն որդեկորույս մոր լացի մեջ ծիածանվում է անկախ, պատվով ապրելու գիտակցությունը, որի համար զոհեր են պահանջվում: Մայրը երկրորդ անգամ որդի է հանձնում հողին եւ լացի միջից զրուցում ժողովրդի հետ. «Կոմիտասս հինգ եղբոր ամենափոքրն է եղել: Ասել են՝ ա՛ ժողովուրդ, էս մինս Ղարաբաղի հողին մատաղ: Ասել են, սուտ չի եղել, բոլորդ էլ լսել եք, ասել են՝ Կոմիտասս՝ մեր Ղարաբաղին մատաղ: Մենակ խոխասս պսակված չի եղել, էս աշխարհից կարոտ է գնացել»<sup>18</sup>:

Ջոհվել է նաեւ մոր Կարեն որդին, եւ մայրը լացի միջից փառաբանում է նաեւ Կարենին եւ սփոփում իրեն, որ մեծացնելու է Կարենի աղջիկ երեխային, որ Կարենի նշանածն էլ իր համար հարս չի լինելու, աղջիկ է լինելու: Իմաստության արտահայտություն է նաեւ պատումի հեղինակային ընդհանրացումը. «... Գարնան ապրիլի ճաք տված հողում

են դրել մի նահատակ եւս: Մաճկալաշենցի մայրը դողացող շրթունքը բացել է ու էս խոսքերն ասել: Որդեկորույս մոր էս խոսքերն ուրիշ տեղ չփնտրեք: Արցախի մայրն արգանդի գալարվող ցավը կաշկանդել է ներսում, իրեն հավաքել բռան մեջ, սրտի մղկտանքը թարգմանել էս խոսքերով ու ասել: Դժվար ասվող Աստծո կենդանին էս խոսքն է ասել...»<sup>19</sup>:

Արցախյան գոյամարտի համաժողովրդական բնույթի պատկերն է ներկայացնում «Պուտունց Արամ» պատմվածքը: Արամը, որ կյանք տեսած, տարիքն առած կոլխոզաշենցի այր էր եւ կարող էր գյուղի բնակիչների հետ հեռանալ ապահով վայր, կես ճանապարհին որոշում է հետ դառնալ եւ միանալ դիրքերում թուրքի դեմ կռվող երիտասարդներին: Այդպես էլ անում է: Գրողը հոգեբանական խորքային ընդհանրացումներ է կատարում, որի շնորհիվ Պուտունց Արամը դառնում է պատերազմական շրջանի արցախցի հայի անձնուրաց օջախասսիրությունն ու արժանապատվությունը ներկայացնող հաջողված կերպար: Գյուղից հեռացող բնակիչների ընթացքի մեջ Արամի գրույցը կնոջ՝ Ազնիվի հետ սրտառուչ ու համոզիչ մի պատկեր է: Պատմվածքում կարդում ենք. «Կոլխոզաշեն չհասած, էն, որ ճանապարհի դիքը կռանում է գյուղի կողմը, Պուտունց Արամը կնոջը ձեն տվեց.

- Ազնիվ, ոտդ կախ գցի:

Կինը կանգնեց, որ ամուսինը մոտենա:

- Դու գնա, ես ետ եմ դառնում,- ասաց, մռայլ աչքերը հառելով կնոջը.- Դու գնա, իսկ ես վերադառնում եմ գյուղ:

որ մեռնեն, իմ կոծի տակ մեռնեն»<sup>20</sup>:

Պուտունց Արամը վերադառնում է հրամանատար Արմենի մոտ: Մաճկալաշենի պաշտպանության կազմը մեկով էլ է լրացվում:

Հայ ժողովրդի ճակատագրի դժվարությունն ու ամենածանր պահին ծլարծակման կարողությունը պատկերող սրտառուչ գործ է Մ.Հովհաննիսյանի «Մաճկալաշենի Ձորի Միրոն» պատմվածքը: Գլխավոր հերոսը Գրիգորն է, որ իր կնոջ՝ Հավատարիմի հետ օրինակելի տուն ու տեղ է դրել, չորս աղջիկ ունեցել, ամուսնացրել, աստժո օրհնանքով նաեւ ունեցել արու զավակ ու կնքել հոր անունով՝ Խաչիկ:

Դեռ Խաչիկին չամուսնացրած, Ղաջարից ազերի թուրքը լափու տալով եկել է Մաճկալաշենի վրա, որպեսզի ավերի եւ ավարի Ամարասա այգիներն ու արտերը, ապականի Ամարասա սրբատեղին: Արցախի մեծ կռվին մատաղ դարձավ նաեւ Գրիգորի մինուճարը՝ Խաչիկը: Ծանր էր, բայց Գրիգորը հասկանում է, որը «միայն իր Խաչիկը չի զոհվում, ամեն օր Ամարասի գյուղերի գերեզմաններից ավտոմատի համազարկերը հովտի շեներին գուժում են, որ նորից հողը մի նոր զոհ է ընդունում»<sup>21</sup>:

Շարունակվում էր պատերազմը: Արկի պայթյունից զոհվում է նաեւ Գրիգորի կինը:

Գրողը ներկայացնում է Գրիգորի հետագա օրերի ծանր ապրումները, նրա հիշողությունը՝ կապված հոր՝ Խաչատուրի հետ, հիշում է, թե ինչպես է հայրը 60-ամյա տարիքում ամուսնացել, ունեցել երեք որդի, այդ թվում եւ ի-

րեն:

Եվ մի օր էլ Մաճկալաշենը լսում է, որ Գրիգորը հարս է բերել տուն: Ամեն մեկը մի բան է ասում: Մեկն ասում է՝ ճիշտ է արել, մյուսը՝ չի համաձայնում: Մեկը կռահում է, գնահատում, մյուսը քամահրում է, թե ինչու այդ տարիքում Գրիգորը որոշեց ջահել կին ունենալ:

Գրողը պատումի վերջում առանց փակագծերը բացելու, հմտորեն ընդհանրացնում է. «Չետո գյուղը հանդարտվեց, չիմանալով, թե Գրիգորի սրտում ինչ ծրագրեր են գոյացել»<sup>22</sup>:

Ադրբեջանի կառավարող շրջանները անվերջ հոխորտում էին յոթ միլիոն ազերական ժողովրդի անունից: Սակայն պատերազմի ընթացքում պարզվեց, որ 150 հազար ազգաբնակչություն ունեցող Չայոց Արցախի դեմ պետք է տարբեր երկրներից հավաքագրեն-բերեն եւ վարձու բանակ ստեղծեն: Եվ այդպես էլ արվում է: Արձակագիր Մ. Զովհաննիսյանի ուշադրությունից չի վրիպել ազերական այդ մարդկային առեւտուրը: Չետաքրքիր է *«Ընդոծիներ»* պատմվածքը:

Բերել են Ուկրաինայից, Սիջին Ասիայից, Թուրքիայից, Աղվանստանից: Եվ վարձկանները եկել են եւ մնացել Արցախ աշխարհի բկին: Գերի են վերցվել ուկրաինացի Ալեքսեյ Սուսլոն, 17-ամյա թուրքը, ծննդաբերած ադրբեջանուհին: Պատմվածքի հեղինակի հանդիպումը նրանց հետ դառնում է այդ երեւույթի բացահայտման գեղարվեստական հնարանք եւ ընթերցողը ներքին մի լարվածությամբ

Ծանոթանում է Բարձր թուրք իշխանավորների նենգ քաղաքականությանը, ուրիշի ձեռքերով կրակից շագանակ հանելու նրանց դարավոր ստորությանը: Պատմվածքի վերջում հեղինակի գրույցը Ալեքսեյի հետ, արցախյան պատերազմի բնույթը, արցախցու ազատաբաղձ ոգին, անպարտելիության առեղծվածը բացահայտող հրաշալի մի պատկեր է:

Այն հարցին, թե ինչպես է հաջողվում, որ 150 հազար դարաբաղցիներ 7 միլիոն ազերիներին ծակուծուկ են կոխել, եւ որ հրաշքի նման մի բան է, ուկրաինացի գերին պատասխանում է.

- Ես ամբողջն ինձ համար դաս է, կյանքումս չեմ մոռանա: Իսկ իմ հարազատներին, ընկերներին ինչ ասեմ, գուցե կհաջողվի հանդիպել:

Տվյալ թեմայի մի հաջող պատկեր է նաեւ «Վարձկաններ» պատմվածքը: Նյութն իրական է: 1992 թ. օգոստոսի 20-ին Արցախի երկնքում խփվել է Ադրբեջանի հերթական ռազմական օդանավը: Օդաչուն կարողացել է կատապուլտով վայրէջք կատարել: Նույն թվականի նոյեմբեր ամսին խփվել է եւս մի ինքնաթիռ, օդաչուն կրկին հաջողվել է վայրէջք կատարել: Այդ օդաչուներն էին Յուրի Վլադիմիրովիչ Բելիչենկոն եւ Անատոլի Գեորգովիչ Չխտյակովը:

Մ.Յովհաննիսյանը նրանց հանդիպել է Շուշիի բանտում, զրուցել եւ արդյունքում ստեղծել հոգեբանական պատում: Ադրբեջանի կողմից տարվող պատերազմի անարդարացիության եւ դրան մասնակցած վարձկանների հանցագործության բացահայտման լուրջ հյուսվածք է այդ



Ստեղծագործությունը, որի գաղափարական բովանդակությունն ընդգծվում է երկի սկզբում եւ վերջում: Պատումն սկսվում է «Չեչտությամբ ներում շնորհվելով՝ խրախուսվում է հանցագործությունը» հեղինակային խորհրդածությամբ, գերհների հետ ունեցած զրույցից հետո գրողը պատումի վերջում ընդգծում է բոլոր ժամանակների համար դաս հանդիսացող մի խորհուրդ. «Անկեղծության այս ործկանքը՝ «ես կռվել եմ փողի համար», պոռնկածին այս ապաշխարանքը՝ ես ոխ չունեմ հայերի նկատմամբ, այլ ցանկանում էի, ցանկանում էի մոտ ապագայի խնդիրը լուծել... Բարոյական այս պատվանդանի վրա՞ չի տեղի ունենում սպանությունը: Ափաշկարա: Ի տես աշխարհի:

Այս չէ՞ վարձկանի բարոյական անատոմիան»<sup>23</sup>:

Մ. Յովհաննիսյան-արձակագիր-լրագրողի կենսափորձը տեսանելի եւ ուսանելի ընդհանրացումներ է կատարել «Ռեպորտաժ դեպքի վայրից» շարքում: Արցախյան շարժման եւ պատերազմական ժամանակաշրջանի թելադրած քաղաքական, տնտեսական, հասարակական եւ այլ խնդիրների արտացոլման ճշմարտապատում էջեր են դրանք:

Որպես շարքի մուտք, գրողը այդ բաժինը գնահատել է այսպես. ««Ռեպորտաժ դեպքի վայրից» բաժինը ընդգրկում է արցախյան գոյամարտի առավել լարված ժամանակահատվածը: Նյութերը մեծ մաքառումի թեժ օրերի ճեպընթաց արձագանքներ են: Գրվել են իրադարձությունների թարմ հետքերով, դրա համար էլ շատ հրապարակումներում

Պզգացնունքը գերիշխում է սառը վերլուծությանը: Մեր հայացքը ուղղված էր ապագային, խանդավառ էինք գալիքով: Օ՛ն, առաջ»<sup>24</sup>:

Պետք է ընդգծել, որ Ս. Հովհաննիսյանը այդ տարիներին «Խորհրդային Ղարաբաղ» թերթի գլխավոր խմբագիրն էր: Ի պաշտոնե մասնագիտության բերունով եւ ազգային նկրտումների հրամայականով իր բաժին նպաստն էր բերում նա: Հասկանալի է, որ այդ օրերին խոսքի ուժը շատ մեծ էր, այն հավաքագրում էր մարդկանց, մղում գործի:

Լրագրական տարբեր ժանրերի օգտագործումն ապացուցում է գրող-լրագրողի նաեւ մի ուրիշ բնագավառի տիրապետումը: Շարքում զետեղված են տարբեր ելույթներ՝ ուղղված գոյապայքարին լծված մարդկանց առօրյա գործունեությանը («Գործ անելու ժամանակը»), խոհեն լինելու պահանջին («Այսօր, քան երբեւէ, մենք պետք է իմաստուն լինենք»), կենսափորձի հրամայականին («Հիշվի, որ չկրկնվի») եւ այլն: Շարքում զետեղված են նյութեր, որոնցում արտացոլված են ադրբեջանական պրոպագանդայի, հոխորտանքի եւ թշնամանքի բարբառանքները: Դրանցից են «Միստեր Սվյատիխովսկին հայտնագործում է», «Էլմիրա խանում Կաֆարովան գտնում է», «Ղարաբաղյան սինդրոմ կամ մի ուրվական է շրջում Ադրբեջանի պառլամենտում», «Սումգայիթ՝ նշանակում է ցեղասպանություն», «Էլ-ձիբեյի խոսքն ու գործը», «Քարոզչական շախսեյ-վախսեյ» եւ այլն: Այս շարքը կարելի է համարել արցախյան պատերազմի մի խոսուն տարեգրություն՝ գրված զգայուն հայրե-

Մասերի եւ վարպետ լրագրողի հմտությամբ:

Ս. Յովհաննիսյանի ստեղծագործությունը հայոց արդի գեղարվեստական արձակի նվաճումներից է: Կարիք չկա գլուխկոտրուկի հարցադրումներ ներկայացնել դրա հաջողության առեղծվածն իմանալու միտումով: Պարզապես պետք է ընդգծել, որ Ս. Յովհաննիսյանի ստեղծագործությունն անկեղծ ու մաքուր է, ինչպես իր հայրենի բնությունը, որ նրանում զգացվում է հայրենի հողի շնչառությունն ու հայրենակիցների սրտի բաբախյունը, որ այնքան անմիջական եւ այնքան զուլալ են: Ինչպես գրել է ականավոր գրականագետ, ակադեմիկոս Ս.Արզումանյանը. «Այո՛, իր աշխարհի հանգույն, իր աշխարհի շնչով է ապրում Ս. Յովհաննիսյանը, ստեղծում պայծառ գործեր, ընթերցողին պարզելում հոգեւոր ինքնամաքումի ու ինքնաճանաչողության պայծառ պահեր...»

Իսկ եւ իսկ իր աշխարհի հանգույն, իր աշխարհի շնչով...

Ուրիշ ոչ մի առեղծված, ոչ մի գաղտնիք կամ թախսման»<sup>25</sup>:

Ակադեմիկոս Ս. Սարինյանի գնահատմամբ Ս. Յովհաննիսյանի արձակը բարձր մակարդակի հունձք է՝ խոհական, հոգեբանական, ապրեցնող: Նա դիմելով Ս. Յովհաննիսյանին, նշել է. «Միստիկ չեմ, բայց հավատում եմ, որ կա մարդկային կեցության գուցե անբացատրելի, բայց զգացող մի... օրենք ասեմ, օրենք չէ՝ երեւի թե վիճակ, որից շեղումը բացառում է ինքն իրեն... Համամիտ եմ մարդաբա-

նական քո տեսությանը, որ տեսակն ինքնաստեղծում է եւ բանահյուսվել է տիեզերական արարչությանը, կեցություն ձեւավորել կենցաղավարական բարքերում՝ Ննգիի բրուտագործը, որմնադիր հարավցին, դերծակ սզնեքցին, կարծր ու անորոնելի Բախշի պապը, Մաճկալաշենի Ձորի Միրոն, Ամարասի զանգի դողանջները, որոնք հուշում են, որ «իր գեղեցկությամբ անկրկնելի, իր կենարարությամբ անմրցելի այս տեղերը պետք է պահեն իրենց բարբառը ջրերի խոխոջյունում, խոտերի սվսվոցում, մեր երկնակամարում ծնվող ամպոպների հրամաններում»<sup>26</sup>:

Մ.Յովհաննիսյանի արծակը բարձրարվեստ մի հյուսվածք է՝ խոհական, հոգեբանական, ազգային արժանապատվության, գոյատեւման, ազնվության, գեղեցկության, սիրո, երազանքի, թախծի, լույսի անթառամ երանգներով: Այն արդի հայ արծակի մշտախոս նվաճումներից է:

### Մ. ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԱՐՎԵՍՏԻ ՄԻ ՔԱՆԻ ՅԱՐՅԵՐ

Մ. Յովհաննիսյանի արծակն աչքի է ընկնում ոչ միայն թեմատիկ բազմազանությամբ, հույզերի եւ զգացմունքների բնականությամբ, գաղափարական խորությամբ, այլեւ լեզվաոճական ինքնատիպ միջոցներով եւ հնարանքներով. նա երբեք չի մոռացել գեղարվեստական երկի բովանդակության եւ ձեւի կուռ միասնության նշանակությունը: Յուրաքանչյուր թեմա, որին ձեռք է մեկնել նա, հյուսել է լեզվական իր բնական ատաղծով, գտել պատկերավոր-

ման եւ արտահայտչական իր երանգները, տաղանդավոր արձակագիրների շարքում սեփական նպաստը բերել հայ գեղարվեստական գրականության լեզվի զարգացմանը:

Ինչպես ժամանակին նկատել են գրաքննադատները, Մ. Զովհաննիսյանի գրական մուտքը հաստատեց, որ ասպարեզ է մտել գեղագետի մտածելակերպ ունեցող եւ ինքնատիպ ոճի ձգտող մի արձակագիր: Կյանքն ասպացուցել է նրանց կռահումները: Մ. Զովհաննիսյանը քայլ առ քայլ հյուսել է լեզվաոճական իր համակարգը: Դա կապված էր այն ճշմարիտ պահանջի հետ, որ գրողը պետք է իր արյամբ, մտավոր թթխմորով, ոգեւորության ծեփծեփումներով սերտորեն կապված լինի կյանքի հետ: Տիրապետելով մայրենի գրական լեզվին եւ հայրենածին դարավոր բարբառին, Մ. Զովհաննիսյանը կարողացավ հայտնաբերել իր ժամանակակիցների հոգու շերտերը եւ ցույց տալ գեղանկարչի ամենանուրբ արտահայտչամիջոցներով, դրա շնորհիվ եւ արդյունքում ստեղծելով մնայուն գրական կերպարներ:

Մ. Զովհաննիսյանը ծագմամբ, կերտվածքով, աշխարհատեսությամբ եւ ընկալմամբ Արցախի անկրկնելի բնօրրանի զավակն է, ուստի գրողի նրա հոգու եւ մտքի տեսադաշտից դուրս չեն մնացել հայրենակիցների սովորությունները, բարքերը, օջախապաշտ, հայապատկեր, նահապետական սրբագործված օրենքները, աշխատասիրությունը, ազգային արժանապատվության զգացումը, թշնամուն դիմակայելու, հպարտ ապրելու պապենական պատգամները, այդ ամենը հայրենի բազմերանգ բնության հանգույն լեզվաոճական հմայքով ընթերցողին ներկայացնելու կարեւորությունը: Այստեղ որպես ուսուցիչ նրա թիկունքին

Խառնած է եղել մեծատաղանդ Ակ. Բակունցը, իսկ կողքին Ջր. Մաթեոսյանը, որոնք ամեն դեպքում եւ անընդհատ հուշել են սեփական արահետը գտնելու եւ ինքնահաստատման ուղին մտնելու խորհուրդը: Այդպես, Արցախ աշխարհի համապատկերի վրա Մ.Յովհաննիսյանը ստեղծեց արցախածին ու արցախաբույր, բնական ու անկեղծ, հայահոլով ու հայածուկի իր լեզուն ու ոճը, որի առանձնահատկությունների բնութագրությունը եւս կարելուովում է նրա ստեղծագործությունն ամբողջական գնահատելիս:

\*\*\*

Մ.Յովհաննիսյանը միշտ հիշել է, որ գեղարվեստական խոսքը պետք է լինի պատկերավոր, որ լեզուն գրական երկերում ծառայում է պատկերի ստեղծմանը, կյանքի պատկերավոր նկարագրմանը: Ուստի նա ձգտել է մարդկային կյանքը, մարդու ներաշխարհը, բնությունը ընթերցողին ներկայացնել շոշափելի եւ տեսանելի պատկերավորությամբ, որոնց շնորհիվ նրա լեզուն դրվել է գեղագիտական իր դերի սահմաններում: Մ. Յովհաննիսյանի լեզուն ճշգրիտ է, սեղմ, գեղեցիկ, ճկուն, ներդաշնակ: Հայոց լեզվի բառապաշարի, արտահայտչական միջոցների քերականական ձևերի իմացությամբ նա ստեղծել է կյանքի պատկերման իր խոսքաշխարհը:

Գեղարվեստական արձակը արարման իր սկզբունքներն ունի: Տեսնենք, թե ինչ առանձնահատկություն ունի նրա երկերի *հեղինակային խոսքը*: Հայտնի է, որ գրողն առաջին հերթին հեղինակային իր խոսքի միջոցով է ներկայացնում

դեպքերը, գնահատում դրանք: Խոսելով իր անունից, հեղինակը պատումի մեջ շարադրում է գործողությունը, բացում հերոսների բնավորությունը, հոգու աշխարհը, ներկայացնում նրանց բնութագրական արարքները: Մ.Յովհաննիսյանի պատմվածքների, վիպակների, ակնարկների մեծ մասը գրված է հեղինակային պատմության եղանակով: Բերենք «Նարնջագույն գիշերներ» պատմվածքի սկիզբը.

*«Գրիգորը երեկոները թախծում է, ու թախծելը նրան դուր է գալիս: Պառկում է դեռ չհովացած գետնին ու նայում աստղոտ երկնքին: Գիշերը կես է դառնում, իսկ նա, դեռ մեջքին պառկած, բաներ է մտածում: Երկնքում ցուլցում են աստղերը, հովը խաղում է դեմքին, իսկ կրակին դրած թեյամանը մանր տոժալով արծարծում է հիշողությունը»<sup>1</sup>:*

Ինչպես տեսնում ենք, հեղինակն այստեղ ուղղակի չի մասնակցում դեպքին, սակայն ընթերցողի համար դառնում է պատմողի կերպար: Ամբողջ պատումի ընթացքում նա ուրվագծվում է որպես իր ստեղծած հերոսների ճակատագրով ապրող անհատ:

Մ. Յովհաննիսյանն ունի երկեր, որոնցում հիմնականում հանդես է գալիս հերոսներից մեկը: Սակայն նա պասիվ դեր չի խաղում, այլ դառնում է գեղարվեստական կերպար՝ մտածողությամբ եւ բնավորության էական գծերով: Բերենք մի օրինակ գրողի «Ակամա փեսացուն» պատմվածքից: Խոսում է ակամա փեսացուն. «Ես չգիտեի, որ ինձ չի սիրում, բայց ինչ որ հույս մղում էր, որ չվիատվեմ: Մանավանդ, որ հարսնացուս, թող այդպես էլ ասեմ, ամեն կերպ ինքն էր հանդիպումներ որոնում: Չնայած ես ինձ նախապատրաստել էի այսպիսի վախճանի, բայց ինչ որ ամայու-

թյուն է իջնում հոգուս: Կարծես աշխարհը պարպվեց, ամեն ինչ դարձավ անիմաստ, եւ ունայն: Ես արդեն երեսունն անց եմ եւ արդեն կարողանում եմ գնահատել զգացմունքներս: Այնուամենայնիվ չէի կարծում, որ նրան սիրում եմ այդքան: Բայց ինչո՞ւ ինձ չի սիրում եւ, չսիրելով հանդերձ, հանդիպումներ է որոնում: Կանացի խա՞ղ տղամարդու գլխին...»<sup>2</sup>:

Այս մտորումներն ընթերցողին հուշում են, որ պատմում է դեպքերի մի մասնակիցը, որ հուզաշխարհի իր իսկ բացահայտմամբ դառնում է որոշակի կերպար:

Գեղարվեստական երկերում կարելոր դեր է խաղում գործող անձանց լեզուն: Երկխոսության կամ մենախոսության օգնությամբ կերպարները բնութագրում են իրենց: Այս դեպքում դրանք ամռնչվում են հեղինակային պատմությանը: Ահա մի խոսուն օրինակ «Եվ սիրտն ասաց» պատմվածքից.

*«Կենտրոնական կինոթատրոնի մոտ հանդիպում ենք Սելինեին: Ծանոթանալուց հետո Աշխենը նրան հրավիրում է տուն:*

*- Ավելի լավ է գնանք կինո,- իր հերթին առաջարկում է Սելինեն,- ասում են հույժ գաղափարական նկար է, հայրենական արտադրության:*

*- Արդեն ուշ է, երեխան հարելանի տանն ենք թողել:*

*- Չասկանալի է, Աշե ջան, վերջին սեանսին գնում են նրանք, ովքեր դեռ չեն դասավորել իրենց կյանքը:*

*Եվ էլի նույն ծաղրական տոնը: Դա ինձ դուր չի գալիս:*

*- Տարօրինակ է,- նկատում եմ ես,- գնում եք, նախօրոք իմանալով, որ վատ նկար է:*

*- Ասացի չէ՞, փեսատեսի եմ գնում,- հետո դառնալով*



կնոջս ասում է.- Աշխեն, կարող ես շնորհավորել, արդեն նշանակում եմ ստացել՝ դեղատան լաբորատորիայի վարիչ»<sup>3</sup>:

Գրական երկերին հատուկ է նաեւ գործող անձանց խոսքի անուղակի ձեւը: Նման դեպքերում գործող անձի խոսքը վերաշարադրվում է եւ դառնում հեղինակային խոսքի մի մասը, սակայն չդադարելով կերպարի խոսքը լինելուց: Բերենք օրինակ «Դալարող արմատը» պատմվածքից.

«Ակամա նայեցի մորս՝ բավականության մի լույս էր սահում դեմքով: Արմատը չի չորանում: Այդ արմատը այս հողում է թաղված, որ խարխափելով որոնում է կենսատու երակներ, որ նոր ուժ ձեռք բերի, որ նոր շյուղ ընծյուղվի: Անսպասելի պարզ զգացի, որ մայրս ու որդիս իրար ավելի հարազատ են, քան ինքս»<sup>4</sup>:

Գեղարվեստական երկում ուշադրություն է դարձվում նաեւ հերոսի ներքին խոսքին: Այս դեպքում հեղինակը հերոսի դատողությունները շարադրում է իրենց բնականոն ընթացքով: Օրինակ բերենք «Բուդի» պատմվածքից.

«Մուքանը բրիգադիրի խոսքը չլսելուն է տալիս: Ստրուկդ եմ, կանեմ, մտքում փնթփնթաց նա: Եթե բրիգադիր ես, ուրեմն քո ստրուկը պիտի լինեմ: Կարգադրես, կգնամ քո Անահիտի շապիկն էլ կլվանամ: Անամոթ, անամոթ: Մենք դեկավար չենք եղե՞լ, քեզնից էլ կարելոր: Եվ Մուքանը երանությանք հիշեց պատերազմի տարիները, երբ ինքը գյուղխորհրդի նախագահ էր»<sup>5</sup>:

Խոսքի տարբեր ձեւերը գրողը ամեն դեպքում ծառայեցնում է կերպարի անհատականացմանը: Գրական երկի

մեջ յուրաքանչյուր կերպար պետք է ունենա խոսքի իր լեզվական առանձնահատկությունները, որպեսզի դրանով իսկ արտահայտի իր էությունը:

Մ.Յովհաննիսյանի արձակը առանձնանում է նաեւ *բառապաշարի առանձնահատկություններով*: Հայտնի է, որ ականավոր գրողների լեզուն առանձնանում է նաեւ բառապաշարի հարստությամբ եւ բազմազանությամբ, որ հեղինակի կողմից օգտագործվում են կերպարի տիպականացման, ժամանակի եւ միջավայրի գունավորում ստեղծելու եւ այլ գեղարվեստական նպատակների համար: Այս դիտակետից եւս աչքի է ընկնում Մ.Յովհաննիսյանի լեզուն: Անհրաժեշտ դեպքերում նա դիմել է *հնաբանությանը, նորաբանությանը, բարբառային եւ օտարազգի բառերին*:

Այսպես, «Մենք» պատմվածքում Մ.Յովհաննիսյանը օգտագործել է «*մտորք երեխաներ*», «*զբանս հանճարոյ*», «*ցորյան*» եւ այլ գրաբարյան արտահայտություններ, որ նպաստել են 5-րդ դարի Ամարասի ժամանակի եւ միջավայրի գունավորմանը:

Գրողները չեն սահմանափակվում գրական լեզվի բառապաշարով: Նրանք օգտվում են ն՛ր բարբառներից, ն՛ւ տեղական խոսվածքներից: Բարբառային բառերը նման դեպքում տարբեր դեր են խաղում: Այստեղ լուրջ ուշադրություն է դարձվում գործող անձանց խոսքը տիպականացնելու գործին, առանձնապես, երբ պատկերվում է գյուղական միջավայրը:

Մ. Յովհաննիսյանի երկերում հանդիպում ենք տեղին օգտագործված տեղական խոսվածքների, բարբառային դարձվածքների: Այսպես, «Գյուղացի մարդիկ» շարքի հա-

ջողության գրավականներից մեկը արցախյան ժողովրդական խոսակցության օգտագործումն է՝ համեմված գրական լեզվի երանգներով, որոնց հմուտ օգտագործումը հեղինակային խոսքին անմիջականության երանգ են հաղորդում: Բերենք օրինակներ<sup>6</sup>. «Կինն ականջների մտերը կուտեր» (էջ 112), «խոսքը ականջի ետելը զցեց» (էջ 113), «չափարը ճմռում ես» (էջ 114), «աշխօրը զանց արին» (էջ 115), «ձեռքի գործը թոթխար թողեց» (էջ 118), «ծերունու մեջքը տփտփեց» (էջ 118), «մի ծածուկ տեղ տապո կենում», «աշունքվա ճուտ թմփացնես» (էջ 128), «ես կզո-մզո անելը չեմ սիրում, բայց դու երիշդ փոխած ես ինձ հետ խոսում», «վիզը քոռ չինով կտրել» (էջ 129), «ծերատ հաց դնել», «պրնկած նստում է» (էջ 130), «մարդիկ կենտ ու կաթուկ տալով» (էջ 135), «թեկուզ անխեն ու կտոր հաց», «երկու հակ ցորեն» (էջ 148), «հաշամին զցած կոնթուժ ճիպոտ», «մատները չանգոտ փետեր» (էջ 160), «կովը մար տալ», «ցաքատը խրում սատուրի մեջ», «արելը ծիպուլի արեց» (էջ 166), «թթեւականջ երեխա է» (էջ 167), «մճեճը ո՞նց պիտի տեղափոխի», «անասունը ցեխը շաղ տալով յորթ ընկավ», «հավուճիվի հոզը քաշում» (էջ 172), «Անուշավանս սրտահեռիչ է» (էջ 174), «ձեր բրիշակից մի բան բեր հագնեն» (էջ 175), «ավանակը սկի էդպես խնդուզի չի տալիս» (էջ 176), «կոռս ծանր է, բայց պիտի ծիզ տամ» (էջ 179), «թրջված հացը ցեխածամ տալ» (էջ 187), «սովից ջլամորթ եղանք» (էջ 190), «խիյարը ծուռ է բուսնում», «աչքիս ցավ է տալիս» (էջ 195), «առավոտյան լիքբերան ծիծաղում էիր» (էջ 199), «ցախավելը գիլմասրի հոռով ենք կապում» (էջ 207), «աչքերով ուտել» (էջ 266), «մեջքը ծկցեց» (էջ 271) եւ այլն:

Մ.Յովհաննիսյանը դիմում է նաեւ բարբառային բառերի՝ մի կողմից տեղային գունավորում (կոլորիտ) ստեղծելու, մյուս կողմից ազգային գրական լեզուն հարստացնելու միտումով: Օրինակ՝ *ղլղան, կածուկ, պրանվի, շախկա, կյեվաթ, թերխաշ, խլատել, շաղված, բխովել, ղլավ, քոռուփոշման, բեջիթ, թուշին, ինադու, երեսառանք, ծուվարան, տակահան, չանա, չոլախ, դաչատեղ, ճոնդ, շիմշատ, բխովել, մեկտակ, կոռեկոռ, թոսխոտել, դարթու, կյեղ, լկլկոց, բալեք, ճընգլճտեր, բնակալ, թլտրում, մթնածոռած, թուփակ, փթրաղ, դոթմա, պեքի, օշնակ, դանգլա, փուստ, մրճեղն, ճմոռել, հոռ, փլիքան, զղզղան, կեծ, դուզղուզ, շմալ, թալաշա, տունդը* եւ այլն:

Մ.Յովհաննիսյանը հմտորեն եւ տեղին օգտագործում է օտարազգի բառեր: Առաջին հերթին նա դիմում է այդ շերտին որոշակի գեղարվեստական նպատակով, ավելի հաճախակի հերոսների լեզվի եւ բնավորության տիպականացման համար: Այսպես, գործող անձանց խոսքի մեջ հանդիպում ենք *նաշալնիկ, կանցեյար, շտրաֆնիկ, ֆրոնտավիկ, չովուշ, կլիկ, կոմպրես, ինկուբատոր, սարայ, վերտալյոտ, կուկուռուզ, մանեթ, կոռումպացված* եւ այլ բառերի:

Գրական լեզվի բառապաշարի հարստացումը տեղի է ունենում նաեւ նոր բառերի գոյացումով: Մ.Յովհաննիսյանի պատմվածքներում հանդիպում ենք նորաբանությունների՝ ստեղծված հիմնականում արցախյան բարբառային բառարմատների վրա: Այսպես, *ցեխածամ, զուռնաղավալ, ոտնիծոց, կարկուտաթակ, խոսքատակ, ոտագալիք, հեռաքաշ, մարդաթող, աղբահար, կուլակապ, կծուկոթել* եւ այլն: Սա-

կայն դժվար չէ նկատել, որ այս բառարմատները հայոց բառամթերքի գանձերից են, եւ կասկածից դուրս է, որ դրանց մեծ մասը մտնելու է մեր ազգային գրական լեզվի գանձարանը:

Մ.Յովհաննիսյան-գրողի պատկերավոր մտածողությամբ պետք է բացատրել այն հաջողությունը, որ նա հասել է պատկերավորության միջոցներն օգտագործելիս: Թարմ են նրա մեջբերած համեմատությունները, միաժամանակ գունավորող են: Ահա նրա ստեղծած մի քանի համեմատություններ. «Միտքս առանցքակալի գնդակի պես խփում է գանգիս պատերին» (էջ 35), «Քայլերս մտքերիս պես մոլոր ու մտքերիս պես տենդային, ինձ տանում են հեռու՝ քաղաքից դուրս», «Այլեւս կիրակի օրերը շորերը խնամքով չէր արդուկում եւ կոշիկները հրացանի փողի պես փայլեցնում» (էջ 37), «Վերջալուսին երկինքը մի հսկայական թոնրի է նման» (էջ 53), «Նախամուտքում ցնծում են միայն Մելիների կոշիկները՝ ասեղնակրունկ, արյան պես կարմիր» (էջ 64), «Աստված իմ, ինչպե՛ս է դողում, թպրտում է անօգնական թռչնի պես» (էջ 66), «Ռոզիկը շաքվի խնձորի պես կարմրում է եւ հուզմունքը քողարկելու համար դեմքը ծամածռում» (էջ 69), «Երկինքն էլ ծակ կտուրի պես կաթում է» (էջ 371), «Նախագահի երեսը հարթ, մաքուր սափրած, ոնց որ երեխայի տուտուզ» (էջ 387):

Արցախի բարբառը հարուստ է հարադիրներով: Մ. Յովհաննիսյանի ինքնատիպ ոճին հատուկ է նաեւ հարադիրների օգտագործումը: Դա մի կողմից ցույց է տալիս գրողի ոճական կիրառությունների սահմանները, մյուս կողմից՝ նպաստում կերպարների խոսքի ոճավորմանը: Բերենք հարադիրների

ի հետաքրքիր օրինակներ. «Մոտաթակ տալ», «շիւ ընկնել», «տազ կենալ», տապռ կենալ, «հակին կենալ», «դարթու տալ», «գլուխը վարել», «թող անել», «մարաղ կենալ», «հակին կենալ», «շուրուշուղ անել», «նիստա կենալ», «աջքառ անել», «կոտր ընկնել», «հեռ գալ», «չարխու տալ», «պարան գալ», «կոխ տալ», «ծոթ անել» եւ այլն:

Ս. Հովհաննիսյանի պատմվածքներում հերոսներն իրենց խոսքի մեջ ներառնում են գյուղական խոսվածքի տարրեր, որոնց շնորհիվ արցախյան գուճավորումն ավելի է ընդգծվում:

«Փարշի գորգը» պատմվածքի հերոսը՝ Հայկազը, ի պատասխան որդու պահանջի, ասում է.

*«Հիմա էլ սերմաքաշի պես ուզում է մոր գորգը տանի: Մենք տուն չենք, բրիշակ ենք: Մինչեւ հիմա արածը, հիմա էլ որ անում ենք՝ քի՞չ է: Կարտոֆիլի բեռները, խուրջիններով լորին, քանի տեսակի մուրաբաներ, օր ծերության թանկագինին կրմիզուկ ու շուշան կապել սովորեցրին: Բերանների տեղն էլ լավ գիտեն, բերանների համն էլ: Ամեն տարի Բաքվից բաքվեցիք, Ստեփանակերտից ստեփանակերտցիք կոոպերատիվից առած բանկաների համար կափարիչներ են ուղարկում: Կանոնավոր: Եվ աշնանը Հարարա հանդերից գոյացած փող չտվածը տարվում է՝ Ստեփանակերտի բաժինը՝ Ստեփանակերտ, Բաքվի բաժինը՝ Բաքու»<sup>7</sup>:*

Օրինակները կարելի է շարունակել, բայց այսքանը եւս բավարար է՝ կրկին ընդգծելու Ս.Հովհաննիսյանի պատկերավոր մտածողությունը:

Վաստակաշատ լեզվաբան Լեւոն Եգեկյանը ուսումնա-

սիրելով մեծանուն Յ. Մաթեոսյանի արծակի խոսքարվեստը, ընդգծել է. «Բարբառները, ժողովրդախոսակցական լեզվի տարրերը մեր արդի գեղարվեստական գրականության լեզվի զարգացման եւ հարստացման ամենահիմնական (բայց ոչ միակ) միջոցները պետք է համարել...

...Չայ գրողները առանց վարանելու պետք է բարբառներից վերցնեն այն, ինչը անհրաժեշտ է ու մատչելի, բառային ու քերականական այն ձեւերն ու միջոցները, որոնք չկան գրական լեզվի մյուս ոլորտներում եւ որոնք կարող են դառնալ ընդհանուր գործածական, համաժողովրդական-խոսակցական...

... Բարբառային տարրերի օգտագործման հարցում գրողը ամենից առաջ պետք է դրսեւորի չափի, ճաշակի եւ գեղագիտական ճիշտ զգացում»<sup>8</sup>:

Մ.Յովհաննիսյանը հմտորեն օգտագործելով բարբառային ձեւերը, հասել է իր նպատակին: Նրա խոսքարվեստը արժանի է ամենայն ուսումնասիրության, քանզի հենց դրա շնորհիվ է նա ձեռք բերել իր սեփական ոճը:

2007 թ.

## ԿՈՄԻՏԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆ



Կոմիտաս Դանիելյանը՝ ծնունդով նորշենցի, որպես գրող՝ արցախցի է բառի ամենալայն իմաստով: Վկան՝ գործունեության այն էջերը, որ իմաստավորվել են Արցախում, արցախցու անունով եւ սերունդների հետ խոսելու են արցախավարի՝ հայաշունչ, հայապատիվ: Քրտնաբույր է նրա կենսագրության գրքույկը: 1970թ. բարձրագույն կրթության դիպլոմն առած՝ նա վերադարձել է ծննդավայր եւ աշխատանքի լծվել լրատվության ասպարեզում:

Կ.Դանիելյանը ծնվել է 1947թ. սեպտեմբերի 7-ին, Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Նորշեն գյուղում: Միջնակարգից հետո ուսումը շարունակում է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժնում եւ ավարտում 1970թ.: 1971-1972թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1972-1978թթ. աշխատել է Արցախի ռադիոհաղորդումների մարզային կոմիտեում՝ որպես թղթակից, խմբագիր եւ ավագ խմբագիր: 1979-1999-ին Ասկերանի շրջանի «Կարմիր դրոշ» («Խաչեն») թերթի խմբագիրն էր, 1990-1992թթ.՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի սեփական թղթակիցն Արցախում: 1993-94-ին խմբագրել է ԼՂՀ Գերագույն խորհրդի «Արցախ» պաշտոնաթերթը, 1995-ին՝ Ար-



Արցախի գրողների միության «Եղիցի լույս» ամսաթերթը: 1995-96թթ. ծառայել է ԼՂՀ Պաշտպանության բանակում: 1997-ից աշխատել է ԼՂՀ մշակույթի նախարարության համակարգում, 2000-2006թթ. խմբագրել է «Հայրենյաց պաշտպան» թերթը, այնուհետև նրան վստահվել է Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրենի պաշտոնը:

ԽՍՀՄ գրողների միության անդամ է 1989-ից, իսկ Արցախի գրողների և Հայաստանի գրողների միության անդամ՝ 1994-ից:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարին ակտիվորեն մասնակցելու համար արժանացել է ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» և «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալների:

Որպես լրագրող, Վ. Դանիելյանը ժամանակին ձեռք է բերել իր ձեռագիրը, որը պայմանավորված է քաղաքացիական պարտքի խոր զգացումով. երկրի ճակատագրի հանդեպ ունեցած ակտիվ դիրքորոշմամբ, լրագրողական էթիկայի պահպանմամբ, զրագիտության անհրաժեշտ մակարդակով: Այս առանձնահատկություններն ընդգծում ենք՝ հաստատելու, որ լրագրողի նրա նախասիրություններն ու փորձը, կենսական նշանակություն ունեցող երեւույթներն ընտրելու և արժարժեւելու պահանջը, կուռ ու բովանդակալից խոսք ասելու հմտությունը դրսեւորվել են նաեւ արձակում, որ գրող Վ. Դանիելյանի ձեւավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստել է լրագրող Կոմիտասը, ինչպես նաեւ

լրագրող Կոմիտասին՝ գրողը: Նման ստեղծագործողներ շատ ունենք: Ակնառու են հայտնի արձակագիրներ Ս. Խանգադյանի, Յր. Քոչարի, Վ. Անանյանի, Խ. Գյուլնազարյանի եւ այլոց օրինակները: Նրանք իրենց գրողական մկրտությունն ստացել են Մեծ Հայրենականի զինվորական բազմատիրաժ թերթերում՝ որպես լրագրողներ: Հայ ժամանակակից գրականության մեջ կարող ենք նշել Յր. Մաթեոսյանի, Վ. Պետրոսյանի, Արցախում՝ Ս. Հովհաննիսյանի, Ս. Պետրոսյանի, Կ. Գաբրիելյանի, Հ. Մարտիրոսյանի եւ ուրիշ գրողների անուններ, որոնց գեղարվեստական գրականությունն բերող ճանապարհն սկսվել է լրագրությունից:

Կ.Դանիելյանն ինքնատիպ արձակագիր է՝ աստվածային շնորհքով, աշխատասիրությամբ, բառի հանդեպ ունեցած պատասխանատվության զգացումով, ինքնաբացահայտվելու արգասաբեր ձգտումով: Այդ են հաստատում նրա «Անկմիք նամակներ» (1981), «Երաշտ տարի» (1989), «Արցախն իմ տունն է» (1994), «Երկու պատմվածք» (1999), «Արցախը՝ չսանձած նժույգ» (2006), «Դեմ-հանդիման» (1996), «Եիչ» (2004), «Ամարասի զանգերը» (2006), «Պորտալար» (2007) ժողովածուները:

Կ. Դ անիելյանի բոլոր գրքերն արժանացել են ճանաչված գրաքննադատների ուշադրությանն ու դրվատանքին: Առանձնապես արժե նշել ակադեմիկոս Ս. Արզումանյանի, գրականագետներ Ա. Եղիազարյանի, Լ. Գրիգորյանի եւ այլոց անունները:

Որո՞նք են Կոմիտասի ստեղծագործական հաջողու-

թյունների գործոնները: Նախ պետք է նշել այն կարելուր կռվանը, որ վերաբերում է գրողի եւ կյանքի սերտ կապին: Այստեղ կյանք հասկացությունը ամբողջությամբ ներառում է ժողովրդի ճակատագիրը, երկրի անցյալը, ներկան եւ ապագան: Այս առումով Կ. Դանիելյանի գործն ու վարքն ուղղակի արգասաբեր եղան: Նա իր ճակատագիրը կապեց հարազատ ծննդավայրի, իր պապերի կտակած ավանդույթների ու կենսափորձի, իր սերնդակիցների դրսեւորած մաքառումների, երկիրը պաշտպանող նոր սերնդի անձնուրաց նվիրումի հետ:

Երկրորդ, Կ. Դանիելյանը ընկալեց արվեստի մեջ ճշմարտացիության ուժը: Եվ քանի որ նա ծնվել, հասակ է նետել գյուղում, սնվել նրա չխամրող երանգներով, ուստի, նրա երկերի հենքն ու հյուսվածքը արցախյան գյուղից առած պատկերներն են: Այս առումով նա մեծանուն Զր. Մաթեւոսյանի խորհուրդների կրողն է: Խոսքը վերաբերում է գյուղագրությանը: Ժամանակին բանավիճելով արծակագիրներ Վ. Պետրոսյանի եւ Գ. Արշակյանի հետ՝ Զր. Մաթեւոսյանը հաստատել է. «Ոչ գյուղն ու քաղաքն են սոցիալական հակադիր բեւեռներ, ոչ գյուղացին եւ քաղաքացին են հակադիր որակներ, ոչ էլ ժամանակներն են դատարկվում հին բովանդակությունից ու լցվում նոր բովանդակությամբ այնքան արագ, որ հետնորդ սերունդը չհասկանար նախորդ սերնդին, եւ գրականությունն էլ դեռեւս մնում է իր հին մարդագրության կոչման բարձունքին... Չկա գյուղագրություն կամ քաղաքագրություն, կա միայն մարդկային

«հայացք բնությանն ու աշխարհին»:

Երրորդ, Կ. Դանիելյանը միշտ էլ նկատի է առել այն ճշմարտությունը, որ գրականությունը պատկերավոր մտածողություն է, որ երբեք չպետք է մոռանալ լեզվի գեղարվեստական դերը: Այստեղից էլ՝ նրա լեզվաոճական նկատելի առանձնահատկությունները:

Կարդում ես նրա «Գյուղական նովել», «Աշնանային ցրտեր», «Աղուհաց», «Շիկաքար», «Հողմահար ծառեր», «Երաշտ տարի» եւ այլ գործեր ու համոզվում դրանում:

Ինչպես մեր լեռնաշխարհում ապրող եւ ստեղծագործող ճանաչված գրողները, այնպես էլ Կ. Դանիելյանը ինչի մասին խորհում ու գրում է, արդյունքում ստացվում է Արցախ: Եվ դա շատ լավ է: Նա աշխարհին ներկայանում է արցախցու նկարագրով, ասել է թե՛ ազգային ոգու երանգներով է գնում դեպի համահայկական գրականություն: Որպես վկայություն բերենք անվանի պատմավիպասան Հայկ Խաչատրյանի կարծիքը Կոմիտասի «Ծիչ» գրքի վերաբերյալ. «Չնայած հեղինակի նկարագրած միջավայրն Արցախն է, բայց գիրքն ընթերցողի հոգում տարածքային սահմանափակման հետք չի թողնում: Դանիելյանի կերտած կերպարներն իրենց հուզաշխարհով, արարքներով, պարզամտությամբ, բարությանբ ու հավատամքով ստանում են համահայկական փայլ: Գրողի պատկերած արցախական աշխարհը ստանում է ընդհանրապես վերջին տասնամյակներին բնորոշ հայ գյուղաշխարհի գրական կենսագրության հնչողություն»:

«Ճիչ» ժողովածուն 2004-ին տպագրվեց ԼՂՀ պետական աջակցությամբ: Գրքում հեղինակը զետեղել է նաև տարիներ առաջ գրած «Ծիր կաթին» վիպակը, որ կրկին ու կրկին հուշում է գրողի նախասիրությունների ու հայրենանվեր հոգսերի մասին: Սակայն գրքի առյուծի բաժինը նոր պատմվածքներն ու ավանդապատումներն են, որոնք գալիս են կրկնապատկելու եւ հաստատելու գրողի տեղն այսօրվա մեր ընդհանուր հայկական գրական ընտանիքում: Մարդու ճանաչման, անհատի հոգու խորքերը թափանցելու, անձնականը անանձնական ապրումների շաղախով ընթերցողին ներկայացնելու մի-մի ինքնատիպ հյուսվածքներ են «Հայր ու որդի», «Հրածեշտ», «Այն հեռավոր ամռանը», «Ճիչ» եւ այլ պատմվածքներ: Ինչ վերաբերում է «Եկել եմ, որ ասեմ գալու եմ» պատմվածքին, կարող ենք արվեստի առջեւ պատասխանատվության ազնիվ զգացումով հավաստել, որ Արցախյան ազգային-ազատագրական շարժման եւ պատերազմի հետեւանքով հայ մարդու եւ նրա զինվոր որդու սխրանքների ու կրած տառապանքի մասին նման գործ չի ստեղծվել հայոց արդի արձակի անդաստանում: Այն մի հուշակոթող է ոչ միայն գրողի, ոչ միայն արցախյան արձակի, այլև ամբողջ հայ գրականության մեջ: Գրողն իր ապրած տառապանքի, ցավի, հույսի երանգներն ի մի է բերել երազի կոմպոզիցիոն ձևի միջոցով: Երկխոսությունների սեղնությունն ու հղկվածությունը, ապրումի փիլիսոփայական խորքերի, ծնողական սիրո համակող թրթռների, սպասումի դարակազմիկ վայր-

կյանների պատկերները, հմուտ վրձնի ծնունդ են, իսկ եւ իսկ հոգեկան ապրումների հասուն գորելեն:

4. Դանիելյանը գյուղական կյանքը պատկերում է իմացությամբ: Կոմպոզիցիոն տարբեր միջոցների ու ձևերի օգտագործմամբ նա կարողանում է ստեղծել եւ գյուղական կյանքի պատկերը, եւ բացահայտել կերպարների հուզաշխարհն ու վարքագիծը կյանքի հարուցած դժվարին խաչմերուկներում: «Գյուղական նովել» երկը, որ հեղինակը նվիրել է իր զավակներին՝ Նարեկին, Պարույրին, Արսենին, Միհրանին, Գեղանուշին, դրա լավագույն վկայություններից է:

Դա սովորական պատմվածք չէ, այլ ծնողների ու զավակների միջեւ եղած աստվածային սիրո եւ ժամանակի առաջացրած կարոտի եւ սպասումի մի բանաստեղծական հյուսվածք, որտեղ համաձուլվածք են կազմում լիրիզմն ու դրամատիզմը: Որդին՝ Հունանը, բարձրագույնն ավարտելուց հետո մնացել է քաղաքում, աշխատում է որպես լրագրող, ամուսնացել է Նվարդ անունով աղջկա հետ, որը շարունակում է կրթությունը ասպիրանտուրայում: Որդին գործուղման մեջ է եւ առիթ է գտել այցելելու ծնողներին:

Հոր ու մոր եւ որդու զրույցները գյուղաշխարհի մարդկանց եւ արդեն քաղաքում իր կյանքը կարգավորող որդու երկխոսություններ են: 4. Դանիելյանը կերպավորման հոգեբանական երանգներով ստեղծել է ժամանակակից գյուղացիների հոգեվիճակը դարաշրջանի ներկայացրած պայմանների համապատկերում: Բանն այն է, որ Հունանի 6 քույրերը եւս հեռացել են գյուղից, տարբեր քաղաքներում

ամուսնացել եւ ծնողների հետ հաղորդակցվում են նամակներով կամ ծանրոցներ ուղարկելով: Ահա այդ բարդ իրավիճակի հասուն պատկերն է ստեղծել գրողը, որ աչքի է ընկնում ճշմարտացիությամբ ու հոգեբանական բացահայտումներով: Ինչ-որ տեղ թվում է, թե հայրն ու մայրը հակադիր կերպարներ են, սակայն նույն վերաբերմունքն ունեն վեց դուստրերի միակ եղբոր՝ իրենց տան ճրագը հանդիսացող որդու հանդեպ: Նրանք երազում են, որ իրենց որդին՝ Յունամը, վերադառնա գյուղ, շենացնի իրենց օջախը:

Գրողն ուղղակի մանրանկարչի հմտությամբ ցուցադրում է մոր ներքին ապրումները՝ դժգոհությունը հարսից, կարոտից ծնված տագնապը, որդու առողջության կապակցությամբ փայփայած ակնկալիքները՝ առնչված նրա վերադարձին: Բերենք մոր ու որդու գրույցից մի հատված: Մայրն է հարցնում.

- Ինչո՞ւ հարսին էլ չես բերել:
- Աշխատանքի է, ո՞նց բերեմ: Բացի այդ, սովորում է, չէ՞:
- Չվերջացա՞վ դրա սովորելը:
- Այս ամառ կավարտի:
- Յունամն ջան, դու ի՞նչ ես մտածում: Չե՞ս ուզում շարունակել:

Նա պատասխանում է.

- Ինչի՞ս է պետք, մա:
- Մա-ն գլխավոր շուռ տա, բա էդ ո՞նց կլինի, ինքը շարունակի, դու մնա՞ս:
- Իրեն պետք է, շարունակում է:
- Ավարտի, կասի՞ ես քեզանից բարձր եմ:

Այս երկխոսությունը մոր եւ որդու կենսահայեցողության եւ դրա դրսեւորման լավագույն օրինակ է: Կարելոր պրորբլեմ է քննարկում հեղինակը, որ դեռեւս նորովի լուծվելու կարիք ունի:

Չեղինակն անդրադառնում է գյուղի եւ քաղաքի փոխհարաբերությունների տարբեր խնդիրներին: Հունանի մակուկայան ընկերների վերաբերմունքը գյուղում իր ծնողների հանդեպ չափազանց հուզում է նրան:

Նա ժխտում է կեղծիքը, չի ընդունում նյութապաշտությունը, որ վերջապես մարդուն գրկում է խղճից եւ դարձնում երեսպաշտ:

Երբ խոսք է բացվում գյուղի դեկավարի՝ Մնացականի մասին, Հունանի մայրը պատասխանում է.

- Հորդ հիմա քաղցր-մեղցր բարեւում է... Ասում են՝ թերթում գովել ես, գրել ես, թե Մնացականը լավ նախագահ է:

Երբ որդին հաստատում է, որ ճիշտ են ասում, մայրն ավելացնում է.

- Դե ասա, դրա համար է մեզ մարդու տեղ դնում, է՛լի: Այդպես է աշխարհի բանը: Լավ ես անում, քեզ մատաղ, համագյուղացիներ ենք, լավը գրիր, վատի հետ գործ չունես:

Ինչպես ասում են՝ այստեղ բացատրություններն ավելորդ են: Կ. Դանիելյանը նման դեպքերում, որպես հեղինակ, չի միջամտում գործող անձանց փոխհարաբերություններին եւ չի ընդգծում իր գեղագիտական իդեալից բխած միտում-գնահատականը, որ առավելություն է հոգեբան-գրողի հա-



մար:

«Գյուղական նովելը», հիրավի, հարուստ է ոչ միայն մեկ անսպասելի լուծմամբ, այլև տարաբնույթ քնարական շեղումների առկայությամբ ու բացահայտումներով: Եվ անցումները բնական են՝ իրավիճակների ռեալիստական անմիջական պատկերներ: Այն պահին, երբ Հունանի մայրն ակնարկում է գյուղի ղեկավարի՝ Մնացականի արարքների մասին, հայրը գուրգուրանքով նայում է բակի կողք-կողքի շարված տանձենիներին եւ դիմում որդուն.

- Ծառերդ, տեսնո՞ւմ ես, ինչպես են մեծացել:

Այստեղ Կ. Դանիելյանը հմտորեն օգտվում է գործող անձի հուզաշխարհը բացահայտող մեմախոսությունից, որն ուղղված է ծնողական անմնացորդ սիրո եւ ակնկալիքների պատկերմանը: Հունանը մտորում է. «Ես մեր բակում ամենից շատ, թերես, այդ ծառերն են սիրում. չէ՞ որ դրանք իմ կենսագրությունն են: Ծառերից ամենամեծը իմ տարիքին է, այն հայրս տնկել է իմ լույս աշխարհ գալու օրը: Երկրորդ տանձենին իմ դպրոց գնալու առթիվ է տնկել, երրորդը՝ երբ ավարտել եմ միջնակարգը, մյուսը՝ երբ համալսարանն եմ ավարտել, իսկ վերջինը՝ ամենափոքրը, իմ ամուսնության վկայականն է» (էջ 8):

Հիմնախնդրի քննարկման ընթացքը շարունակվում է: Նշեցինք, որ ծնողների ցանկությունը որդու կյանքը գյուղում՝ իրենց օջախում շարունակելն է: Հեղինակն աստիճանաբար դիմում է խնդրի հոգեբանական բացահայտմանը: Երբ բակից բարձրանում են պատշգամբ, արդեն մայրն է ա-

Մուղղակի հիշեցնում որդուն.

- Բա այդպիսի տուն ունեցողը վարձով կապրի:

Հունանը հասկանում է, որ մայրն իր բոստանն է քար նետում: Սակայն ինքը զգուշորեն հասկացնում է մորը, որ իր եւ կնոջ՝ Նվարդի մասնագիտությունները կապված են միայն քաղաքային միջավայրի հետ: Որդու կատակախառն պատասխաններից հետո մայրն ասում է. «Ձեռ առ, ձեռ առ հարազատ մորդ: Վեց աղջկա գլխի մի տղա են բերել, որ հիմա ինձ ձեռ առնի»:

Ապա ծնողները որդուն պատմում են գյուղում իրենց հանդեպ կատարված մեծ ու փոքր ոտնձգությունների մասին մեկ մղումով՝ որդու ուշքը դարձնել դեպի գյուղ, դեպի իրենց օջախը: Մեջտեղ են բերում իրենց կեռասենու բերքը գողանալու պատմությունը, բակը ջրածորակ չքաշելը եւ այլն: Ապա խոսք է բացվում Հունանի դասընկերուհի Ռոզայի եւ ամուսնու՝ Ռաֆիկի մասին, որ ապրում են գյուղում եւ արդեն չորս երեխա ունեն: Իսկ մայրը երազել է, որ Հունանն առներ Ռոզային. «Ուզեիր, հիմա այսպես չէինք լինի, գլուխ տաքանալ կա, անկողին ընկնել կա, դուռս բացող կլինի»: Սակայն, մեկ է, մոր սիրտը դարձյալ մղկտում է որդու համար: Ուստի իր հանդիմանությանն ավելացնում է. «Չէ՛, չէ՛, ոչ մեկին չեմ փոխի իմ հարսի հետ: Քեզ էլ մատաղ, Նվարդին էլ: Մե՞նակ աչքս մի տղա թռռան վրա է, տեսնեմ, նոր մեռնեմ: Աչքերս կուրանան, ավելուկ են եփել, Նվարդը շատ է սիրում: Հունան, մի քիչ քաղեմ տար» (էջ 11): Իսկ երբ որդին հարցնում է ընկերոջ՝ Սուրիկի մասին, մայրը օ-

րինակ է բերում նրան. «Հինգ երեխա ունի... Քո ընկերն է, է՛: Հի՛նգ երեխա: Տան գլխին տուն էլ է շինել, կողքին գոմ է կառուցել, երկաթե դարպասն է կանգնեցրել» (էջ 11):

Հունանը մի կողմից ցավում է, որ ծնողները մեծակ են մնացել գյուղում, մյուս կողմից գիտե, որ վերադառնալն անհնարին է, իմաստ չունի: Նրա մտորումները եւս հեղինակի կողմից բերվում են հոգեբանական նուրբ զգացումներով: Նա խորհում է. «Մայրս սնդուկից հանում է ձյունի նման ճերմակ սփռոցը, զցում սեղանին: Այն մտքից, որ ինձ իմ հայրական տանը հյուրի նման են ընդունում, սիրտս ծմվում է: Ես սեղանից վերցնում եմ սփռոցը, մայրս լուռ ինձ է նայում, բայց ոչինչ չի ասում» (էջ 12): Արարողությունը, սակայն, շարունակվում է: Մայրը սովորականից աշխույժ շարժումներով զարդարում է սեղանը: Թարխունի, քամած մածոնի, պանրի, թարմ կարագի հետ մեջտեղ են գալիս նարինջ, արմավ, խաղողի չամիչ, սառնաշաքար:

Հայրը որդուն աչքով է անում եւ ականջին փսփսում. «Մայրդ թաքստոցը բացեց»: Հեղինակի միտումը, սակայն, ծնողների ուրախությունն ընդգծելը չէ, այլ վառող կարոտը բացահայտելը, որ յոթ երեխաներից այսօր ոչ մեկը գյուղում չի մնացել, ապրում են հեռուներում՝ սփոփվելով միայն այն վերաբերմունքից, որ ինչ-որ նվերներ կամ մթերքներ են ուղարկում ծնողներին:

4. Դանիելյանն այս պատկերով եւս իրեն դրսեւորել է որպես նրբանկատ հոգեբան: Մայրը զարդարում է սեղանը եւ հետն էլ ասում. «Սա Ծովինարն է ուղարկել Բաթումից,

Սա՝ Աշխաբադից Սիրանն է ուղարկել, սա Սամարղանդից է, Անուշիկն է ուղարկել, սա՝ Ռոստովից. այնպես է մեկ-մեկ թվարկում, ասես ես չգիտեմ, թե որ քույրս որտեղ է բնակվում: Որտեղի՞ց իմանայի, որ ամեն մեկի անունը տալով, մայրս մտքով մի պահ տեղափոխվում է իմ քույրերի՝ իր աղջիկների մոտ, կարոտն առնում» (էջ 12):

Յոթանասունհինգամյա հոր եւ ոսկրացած մատներով մոր հոգատարությունն ու կարոտը հեռուներում ապրող զավակների հանդեպ գրողը ներկայացնում է անհուն կսկիծով: Նա չի սքողում իրականությունը, իրերը կոչում է իրենց անուններով, ճակատային ոչինչ չի հորինում, չի կեղծում: Ռեալիստական արվեստի առինքնող ու համոզիչ ուժով ներկայացնում է ժամանակի առեղծվածային փոխհարաբերությունները ծնողների ու զավակների միջև:

Որդին անքուն գիշեր է անցկացնում պատշգամբում եւ պատկերացնում է, որ շուտով ավտոբուսն իրեն կբաժանի իր մանկության կածաններից: Մայրը զոռով ձեռքը կխոթի ձվով, պանրով ու ավելուկով լի տոպրակը եւ կշշնջա ականջին իր կենսական խորհուրդները, իսկ հայրը ոչինչ չի խոսի, լուռ, ինչպես միշտ, կկանգնի, հեռվում ու մտքում կասի որդուն. «Որ պառկում ես քնելու, երեսդ դեպի հորդ տունը պառկիր...»:

Կ.Դանիելյանը կերպարների ստեղծելիս օգտագործում է տարբեր հնարանքներ եւ ձգտում է, որ պատմվածքները տարբերվեն իրարից ե՛ւ էպիզմի, ե՛ւ կերպավորման արվեստի դրսևորումների առումով: Այս տեսակետից ուշագրավ է

«Այն հեռավոր ամռանը» պատմվածքը: Կարելորն այստեղ դառնում է գլխավոր կերպարի՝ Չայկի ինքնաբացահայտումը: Չայկը դպրոցի առաջադեմ աշակերտներից է, աչքի է ընկնում սրամտությամբ, ստեղծագործելու ունակությամբ, ընդունված ճակատային արտահայտությունները սրբագրելու կարողությամբ, դառնում է աշակերտների սիրելին: Սակայն նրա հետ չի հաշտվում ուսմասվար Ավանյանը, ամեն կերպ ձգտում է արգելակել Չայկի ազատ մտածողությունը, խանգարել նրա առաջընթացին: Չայկը լինելով հովիվ Մարութի միակ տղա զավակը հինգ աղջիկներից հետո, դառնում է օջախի հույսը: Ոչ միայն այդ: Չայկը գրի է առնում նաեւ հոր հուզաշխարհում տեղի ունեցած փոփոխությունները. «Տղան «հինգեր» էր ստանում, եւ Մարութ հայրը մտքում ասում էր՝ փառքդ շատ լինի, Աստված: Ու ծառեր էր տնկում բակում՝ տանձենի, խնձորենի, կեռասենի, բայց ամենից շատ՝ տանձենի, պնդացնում ցանկապատը, նորոգում տանիքը: Տղա ուներ տանը, բա՛: Իսկ տղան շարունակում էր «հինգեր» ստանալ: Յոթերորդում, դպրոցական օլիմպիադայի ժամանակ, խնդիրը նույնիսկ նախագահի Գեղեցիկից շուտ լուծեց, բայց Գեղեցիկը գնաց շոջան, որով հետեւ յուրաքանչյուր դասարանից մեկ գրավոր պետք է ներկայացվեր» (էջ 16):

Մարութ հայրը լսում էր այդ ամենը եւ նորից փառք տալիս Աստծուն, որ իրենք՝ Չոբանենք էլ են մարդ դառնում ու նոր ծառեր էր ավելացնում տնամերձում:

Չայկի կենսագրությունը պատմվածքում ներկայաց-

վում է որպես խորհրդային տարիների ստանդարտ եւ վտանգավոր մտածողության ճշմարիտ պատկեր: Օրինակ, 8-րդ դասարանում քիչ էր մնացել, որ Հայկին հեռացնեն դպրոցից, որովհետեւ նա դիմումի մեջ փոխանակ գրելու «Բուռն ցանկություն ունեմ ընդունվելու ՀամԼԿԵՄ շարքերը», գրել էր՝ «Ցանկություն ունեմ»: ավելորդ էր համարել «բուռն» բառը:

Ի հեճուկս ուսմասվար Ավանյանի, Հայկ Հովիվյանը հաջողությամբ ոչ միայն ավարտում է դպրոցը, այլեւ ստանում է համալսարանական կրթություն:

Պատմվածքում դեպքերը զարգանում են նովելի ժանրային առանձնահատկություններով: Արդյունքում Հայկը թեւավորվում է Ավանյանի դստեր՝ Վեհանուշի հանդեպ ունեցած սիրով, որի հետ պարապում է հաճույքով:

Կ. Դանիելյանը խոսքի սուղ միջոցներով կարողանում է ստեղծել դիմանկարներ, որոնք ներկայանում են որպես ընդգծված բնավորություններ, ինչպես օրինակ, Հայկի հայրը՝ հովիվ Մարուքը, մայրը, նախագահի աղջիկը՝ Գեղեցիկը, Ավանյանի որդին՝ Ավանյան կրտսերը, Վեհանուշը:

Կ. Դանիելյանը նաեւ ստեղծագործության ընդհանրացնող ավարտի հմուտ մշակ է: Այստեղ նրան օգնում է կոմպոզիցիոն շրջանակի օգտագործումը: Խոսու՛ն օրինակ է «Այն հեռավոր ամռանը» պատմվածքի ավարտը, որտեղ առանց ավելորդ ճիգ ու ջանքի, ընդգծվում է սիրո նշանակությունը երիտասարդի համար: Այսպես. «Հուլիսի վերջին Վեհանուշը հոր հետ Երեւան մեկնեց: Անձրեւները կտրվել էին արդեն, եւ գերանդիավորները Խամհատ բարձրացան:

Չայկն էլ՝ նրանց հետ: Նա չավարտված պատմվածքի մասին այլեւս չէր մտածում: Համագյուղացիների հետ եռանդով խոտ էր հնձում եւ մտածում, որ այդ ամառը սովորական ամառ չի լինելու իր համար:

Գյուղում ասում էին, որ Չայկը հրաշալի հնձվոր է, որովհետեւ նրա հետեւից չէր կարողանում հասնել նույնիսկ ամենափորձառու խաչի ամին» (էջ 20):

Կ. Դանիելյանի պատմվածքներին հատուկ է խոհափիլիսոփայական երանգը, նա ձգտում է գեղագիտական հայտնագործությունների, փորձում է բացել երեւութների հոգեբանական իմաստը, գնահատել փաստերի էությունը կյանքի առեղծվածների հյուսվածքում:

Բակունցյան ավանդների յուրացմամբ Կոմիտասը ձգտում է բացել կյանքի նոր էջերը՝ ներկայացնել մարդկային ապրումները, ցույց տալ կերպարներից յուրաքանչյուրի ճակատագիրը: Որպես նմուշ բերենք «Աշնանային ցրտեր» պատմվածքը:

Հոգեբանական նրբանկատության եւ դիտողականության արդյունք են պատմվածքի գլխավոր կերպարները՝ Մարիամ նանը եւ ծերունի Ալեքսանը: Երկուսն էլ կյանքի քաղցրությունն ու դառնությունը ճաշակած մարդիկ են: Մարիամ նանը տղաների, հարսների ու թոռների տեր է, որոնք, սակայն, ապրում են քաղաքում, նույնիսկ իր գործած գուլպաները չեն հավանում, չեն հագնում, թեկուզ ինքը գործում է: Մահացել է ամուսինը (ալեւորը), ինքը մնացել է միայն իր խոհերի հետ: Նրան այցելում էր հարեւան Ոսկի աքերը, որ գյուղում էր, մինչեւ ուշ գիշեր գրուցում էին, կամ ինքն էր գնում նրանց տուն, եւ օրը հեշտ էր անցնում: Ոսկի

աբերն էլ մեկնել էր քաղաք՝ տղայի մոտ: Աշնանավերջին՝ գնում էր, գարնանը վերադառնում:

Այս պատկերին հաջորդում է պատմվածքի առանցքային պատումը: Մարիամ նանի տուն է այցելում Ալեքսանը: Մարիամ նանը գյուղական կենցաղին հավատարիմ, հոնի ու մոշի մուրաբա է դնում սեղանին, մի քանի կտոր կաթնահունց, կծուճից մեղր է հանում, հյուրասիրում թեյով: Եվ սկսվում է նրանց զրույցը, ինչպես հեղինակն է գրում՝ «Նրանք լուռ թեյում էին: Ով գիտե, գուցե եւ վերհիշում իրենց ջահելությունը, անցած տարիները: Քի՞չ բան կարող են հիշել ծեր մարդիկ: Իսկ հիշելու բան կար: Իսկ հիշելու բան նրանք ունեին» (էջ 45):

Ահա հենց այս հիշողության կծիկն է, որ բացում է հեղինակը՝ դրանով իսկ ի ցույց դնելով կերպարների վերաբերմունքը կյանքին, կյանքից ստացած նրանց խորհուրդները:

Երկու տարեցների զրույցը վերհիշել է տալիս երիտասարդ տարիների այն պահը, երբ անտառապահ Ալեքսանը հմայվել էր Մարիամի գեղեցկությամբ: Մարիամը գնացել էր անտառ՝ հոն քաղելու: Հենց այստեղ էլ զգացնել է տալիս Ալեքսանի՝ տարիների երազը Մարիամի հանդեպ: Մարիամին ամուսնացրել են Չոփուռ Կոստու հետ, որ աղջկա սրտովը չէր: Իսկ Ալեքսանի սիրտը ջերմացել էր այն պահից, երբ տեսել էր նրան հարսանեկան շորերում:

Պատմվածքում հաջողված պատկեր է Ալեքսանի եւ Մարիամի «մեղքի» նկարագրությունը: Ալեքսանը անտառում օգնել էր նրան՝ հոնը քաղելու, եւ «երբ քաղել-պրծել էին, եւ Ալեքսանը կռացած կապում էր տոպրակի բերանը,



Մարիամը նկատեց, որ դողում են ձեռքերը: Հետո սարսափով զգաց, որ այդ դողը անցել էր իրեն, ողողել ոտից մինչեւ գլուխ: Տե՛ր աստված, միայն թե Ալեքսանը չիմանար, միայն թե չիմանար... Անզորությունից քիչ էր մնում լաց լիներ Մարիամը, բայց այդքան ուժ որտեղի՞ց... Սոտիկ, շատ մոտիկ ծկլթաց միրիավը եւ տազնապահույզ թպրտաց Մարիամի սիրտը» (էջ 46):

Հոգեբանական հյուսթեղ գույներով ստեղծված այս պատկերին հաջորդում է մյուսը, որտեղ կատարվում է այնքա՛ն անմեղ, այնքա՛ն աստվածային եւ անմոռանալի դիպվածը: «Անտառապահն ուղղեց մեջքը, աչքերը մշուշվել էին: Եվ նրան պատրանք էր թվում ամեն-ամեն ինչ՝ Մարիամի լիքը կոծքերը, ողորկ պարանոցը, կաթուկ հոնի նման կարմիր ու փափուկ շուրթերը, շուրթերի վերելի թեթեւ աղվամազը, որ, ասում են, կրքոտության նշան է. Ալեքսանը չիմացավ ինչպես առաջ մղվեց, ինչպես ձեռքերի մեջ առավ Մարիամի գլուխը եւ համբուրեց նրա կիսաբաց շուրթերը... Հետո հառաչելով գրկեց Մարիամի մեջքը, որ թուլանում ու թուլանում էր եւ սկսեց համբուրել կրքոտ, ազահաբար, ցնորվածի նման ինչ-որ բառեր շնչալով... Հեռվից, արդեն հեռվից նորից հնչեց միրիավի կանչը՝ խաղաղ ու անմեղ:

էդ էր ու էդ (էջ 46-47):

Ալեքսանի հանդիպումը Մարիամի հետ առաջինն ու վերջինը դարձավ: Իսկ ինչպե՞ս է ծագել անտառապահի համակրանքը Մարիամի հանդեպ, երբվանի՞ց: Հեղինակը

բնական եւ հուզական պատկերներով ներկայացնում է այսպես. «Ալեքսանը երկու երեխայի հայր էր, երբ Մարիամը իրենց գյուղ հարս եկավ: Թունդ, աղմկոտ հարսանիք արին: Ու այնտեղ էլ, հարսանիքում Մարիամը անտառապահի սիրտը մտավ: Միանգամից: Հանկարծակի: Երբ զուռնայի ծղրտոցի, հարսանքավորների տեղատարափ, անզուսպ գոռում-գոչյունների ուղեկցությամբ նորահարսին հրապարակ դուրս բերին, եւ նա սկսեց ամոթխած ու կաշկանդված կաքավել (մեղք կլիներ այն պար անվանել), Ալեքսանը զգաց, որ խեղճանում է... Ու խմեց, շատ խմեց՝ փորձելով խեղդել անսպասելիորեն սիրտը շուլալված այդ անպատկառ ու մրմռացող ցավը... Հետո, շատ հետո, մի անգամ էլ այդպես խմեց՝ իրեն կորցնելու աստիճան, Կյաժ Ցականի հարսանիքում: Երբ Մարիամը սկսեց պարել, անտառապահը խելագարի նման էր արդեն (նրա աչքից չէր վրիպել Մարիամի հղիությունը) եւ որպեսզի ինչ-որ անհամություն չաներ, գոռով թողեց հարսանքատունը: Անզորությունից ու հուսահատությունից չգիտեր ինչ անել: Գնաց անտառ, փռվեց թաց խաշամին ու թավալվե՛ց-թավալվեց ու բառաչեց՝ մորթվող կիստարի նման (էջ 47):

Հետագայում Մարիամին փախցնելու գաղափարն անհանգստացրեց Ալեքսանին: Սակայն այդպես էլ անցնում են տարիները՝ ցավալիորեն իրար նման, երկար ու սրտանաչ:

Հիմա ծեր են ե՛ւ Մարիամը, ե՛ւ Ալեքսանը: Եվ վերջինիս խոհերի մեջ հեղինակը ներկայացնում է մարդկային ճակա-

տագրերի ընթացքը՝ տարբեր ելելեջներով: «Ամեն մարդ, Մարիամ,- ասում է Ալեքսանը,- իր կյանքում միշտ որոնում է մեկին, որին կամ չի գտնում, կամ գտնում է, երբ ուշ է լինում: Իմ կարճ խելքով ես այսպես եմ մտածում: Դու ինձ համար այդպես եղար» (էջ 48):

Հայոց նահապետական կյանքի գիտակ է Կ. Դանիելյանը: Նրան այս պատմվածքում հետաքրքրել է ոչ միայն անտառապահի փիլիսոփայությունը, այլև կենսական ուրիշ չափանիշներ: Մարիամը ինչքան էլ դժգոհ լիներ իր ամուսնական ճակատագրից, պահպանել է հայուհի-մայրերի հավատարմությունն ու սրտացավությունը իրենց ամուսինների հանդեպ: «Վատ մարդ չէր,- ասում է Մարիամ նանը,- երեխայի սիրտ ուներ... Պիտի մեր երեխաներին մեծացնեինք, չէ՞: Մենք արդեն մերը չէինք: Նրանց էինք պատկանում: Երեխան որ ծնվում է, ծնողն էլ իրեն չպիտի հիշի, էլ իր մասին չպիտի մտածի, պիտի մտածի միայն երեխայի համար» (էջ 42):

Սակայն սրանով չի վերջակետվում հեղինակի ասելիքը: Երեխաները եւս պիտի մտածեն ծնողների մասին, նորերը չպետք է գյուղը, ծնողներին լքեն:

Հեղինակի խոսքը այժմեական հնչողություն է ծեռք բերում: Նրան հուզում է կոնկրետ գյուղերի, ասել է թե՛ ամբողջությամբ ավանդական երկիրը կանգուն պահելու գաղափարը: Մարիամ նանի կարծիքն է. «Հիմիկվա կնանիք ոչ ավել, ոչ պակաս, խանում-խաթուններ են: Հանդ-մանդ գնալս ո՞րն է: Նրանց մնա, երեխա էլ չեն բերի: Այդ ջահել-

ներին էլ Աստված կարծես մի բան է տվել՝ ավտոտ կամ տրակտոր քշելը» (էջ 42):

Մարիամ նաև միտքը շարունակում է ծերունին. «Յրեն, գնում են, ով գիտե՝ որտեղից մարդ-մուրդ գտնում-բերում, որ մեր տավարը պահեն: Մերոնք չեն կարող կով կթել, անասուն արածեցնել: Ինչո՞ւ չեն կարող: Բայց չեն գնում: Մեծանում քաղաք են վազում: Ասում են՝ ճանապարհ չկա, մի կարգին ակումբ չկա: Եղ ուրիշների համար կա՞ որ գալիս են» (էջ 42):

«Այս ուրիշները», որ ընդգծում է ծերունի Ալեքսանը, ազերի թուրքերն են, որոնց խորհրդային տարիներին Ադրբեջանի կառավարող շրջանների որոշմամբ բերում էին Արցախի հայկական գյուղերը, որպես ոչխարաբուծական ֆերմաների աշխատող ուժ: Գալիս էին եւ արմատավորվում դառնալով չարիք հայ ազգաբնակչության համար: Ճիշտ է, Կ. Դանիելյանը պատմվածքում չի ընդգծում ուրիշների ազգությունը, սակայն ընթերցողը ճիշտ կռահում է, որ հեղինակին ցավի պես հուզում է այդ հարցը: Բերենք Ալեքսանի մտորումների շարունակությունը. «Ո՞ւմ համար ակումբ կառուցեն, թող գան, եւ նոր ակումբ կլինի եւ իսկական ճանապարհ կլինի: Ո՞վ պիտի իրենց համար, իրենց գյուղի համար մտածի, եթե իրենք փախչում են գյուղից: Խելք չունեն մեր քահելները: Յետո, երեւի, խելքի կգան, բայց ուշ կլինի» (էջ 50):

Ալեքսանի եւ Մարիամ նաևի երազանքն ու հարցի լուծման ելքը օդից կախված չի մնում:

- Կյաժին տնազ ենք անում,- ասում է Մարիամ նանը,- բայց տես՝ ինչպես են ապրում: Երկու տղաներն էլ մնացել են գյուղում, կարգին տուն-տեղ դրել: Չորս-հինգ կթու կով են

պահում, քառասունից ավելի փեթակ ունեն, բակը գառ-ուչխարով լիքը, ավտոն դաճանը» (էջ 49):

«Աշնանային ցրտեր» պատմվածքն ավարտվում է պատկեր-ապրումի ընդհանրացմամբ, որ կարելուրում ենք բերել ամբողջությամբ. «Աշնանային կարճ ու ցուրտ օրը հետզհետե աննկատելիորեն հալվում էր դրսում: Իսկ ճթճթացող վառարանի շուրջ չէր հատնում մարդկանց գրույցը: Նրանք հերթով, միմյանց լրացնելով խոսում, անձանձիր պատմում էին անցած դեպքերը, նորից ու կրկին վերհիշում իրենց ջախելությունը, անցած տարիները:

Սկսել էր մթնել, երբ ծերունին հրաժեշտ տվեց:

Թեթեւ, անծրեւային ձյուն էր տեղում, Ալեքսանը իջեցրեց գլխարկի ականջակալները, բարի գիշեր մաղթեց եւ ձեռնափայտին հենվելով՝ դանդաղ, նոր-նոր քայլով մանկան նման առաջ շարժվեց՝ զգույշ շրջանցելով ջրափոսերը:

Մարիամ նաճը, ձեռքերը շալի տակ ծալած, կանգնել էր դռնակի մոտ ու կարեկցանքով նայում էր նրա հետեւից, ինքն իրեն նախատելով, որ մի բերան անգամ չհարցրեց՝ վառարան ունի՞, փայտ ունի՞: Ուզեց կանչել, բայց, չգիտես ինչու, երկմտեց:

Տուն մտնելով՝ Մարիամ նաճը սրբեց աչքերը, որ քամու սառը շնչի՞ց, թե մի ուրիշ բանից, արցունքոտվել էին...» (էջ 52):

Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղը հայաթափելու քաղաքականությունը շարունակվում էր յոթ տասնյակ տարի: Ցավալին այն էր, որ որոշ հայ ղեկավարներ տեղի էին տալիս: 4. Դանիելյանը իր պատմվածքներում ներկա-

յացրել է այդ կործանարար երեւոյթը: Նման հաջողված ստեղծագործութիւնն է «Դարակազմիկ հարսանիք» երկը:

Ինչպես բոլոր շնորհաշատ գրողները, այնպես էլ Կ. Դանիելյանը միշտ հավատարիմ է մնացել ստեղծագործական իր խառնվածքին, առանձնապես դրա էական հատկութիւններից երկուսին՝ էպիզմին ու լիրիզմին, եւ այդ ձիրքը նրան տարել է դէպի կերպարների հոգեկան աշխարհի բացահայտում: Այստեղ էլ հենց նա իրեն զգում է անկաշկանդ, պատմելուն վարժ, պատկերների ստեղծման մեջ՝ հմուտ: Բացի այդ, նկատվում է, որ Կոմիտասը միմէլ գրիչ վերցնելը մոտիկից շփվում է կյանքին, շոշափելի դարձնում մտահղացումը եւ ձեռնամուխ լինում ստեղծագործական ընթացքին՝ ունենալով գաղափարական հստակ դիրքորոշում: Կոմիտասի յուրաքանչյուր դրական հերոս կարոտի, ցավի, հույսի արդյունք է: Չենք կասկածում, որ նրա գեղարվեստական կերպարներն ունեն նախատիպեր:

«Սիմոնի այրին» պատմվածքում նման գործող անձերից են Սիմոնի այրին՝ Յայկանուշը, Արմենը՝ իրենց առինքնող բնավորությամբ, Գրիգորը, Տիգրանը, Գարսեւանը՝ անհիմն հերյուրանքներով, ինչպես նաեւ վերջիններիս կանայք՝ իրենց կույր խանդով ու վարվելակերպով: Այդ կերպարներից է Յայկանուշը, որի Սիմոն անունով ամուսինը կնքում է մահկանացուն, թողնելով երկու մանկահասակ երեխաներին: Արմենը, որ լավ ճանաչելով համազոյրացի վարպետներին, որոնք զրպարտել էին Սիմոնի այրի Յայկանուշին, ամուսնանում է նրա հետ եւ կազմում գեղեցիկ ըն-

տանիք: Այս պատուովի թեման, անշուշտ, առնված է մեր իրականությունից եւ ներկայացվել է հմտությամբ:

Գեղարվեստական առանձնահատկություններով, կյանքում լավ անուն վաստակելու գաղափարի գեղագիտական բացահայտմամբ աչքի են ընկնում «Աղուհաց», «Երաշտ տարի», «Լքված աղբյուրը», «Հայր ու որդի», «Խելանց հարսը» եւ այլ պատմվածքներ: Նորից ու կրկին կցանկանայինք ընդգծել մի ճշմարտություն, որ գրողի ստեղծագործական հաջողության գրավականը նրա աստվածատուր շնորհքի եւ կյանքի ճանաչողության մեջ է:

Կ. Դանիելյանի մի շարք պատմվածքներ բարոյահոգեբանական եւ սոցիալ-հոգեբանական երեւույթների պատկերավոր ընդհանրացումներ են, որոնք ներկայացվում են միայն ու միայն կերպարների միջոցով: Դրանք վկայում են գրողի սեփական ոճի, ինքնատիպ ձեռագրի մասին: Այդ գործերից են «Հայր եւ որդի», «Նովելի վեզը», «Դեմ-հանդիման» եւ այլ պատմվածքներ: Ծիշտ է, Կ. Դանիելյանը հիմնականում նկարագրում է ժամանակակից կյանքը, սակայն նա չի մոռացել ժողովրդի պատմական անցյալը, որ անմոռաց դաս է ներկայի եւ ապագայի համար: Գրողի գնահատականը անցյալի հավերժալուր երեւույթներին՝ տրված է ավանդապատումներում: Օրինակելի նմուշներ են «Ամարասի գանգերը», «Քարե վկան», «Երկվորյակ թագաժառանգներ», «Մասիսն ի վեր», «Մայրը» եւ այլ ավանդապատումներ: Օրինակելին այն է, որ ժողովրդական իմաստություններին հավատարիմ՝ Կ. Դանիելյանը Արցախ աշխարհի

Կատնությունը տեսնում եւ ներկայացնում է համահայկական թե՛ տարածքային եւ թե՛ հոգեւոր միասնության համապատկերի վրա: Բացի այդ, Կ. Դանիելյանը կարողանում է կոնկրետ անձնավորել ավանդական պատումները եւ ստեղծել մանկական հոգեբանական զրույցներ, որոնք դաստիարակչական արժեք են ձեռք բերում: Նման գործերից է «Քաջաղբյուր» երկը, որի հերոսները Արսեն պապն ու Նարեկ թռն են: Այստեղ քննադատվում են նենգությունը, սուտը, փառաբանվում այն ուժն ու քաջությունը, որ սնվում են հայրենիքից, ծառայում հայրենիքին: Արսեն պապի ներկայացրած իմաստուն քաջը հիանալի օրինակ է դառնում թռան համար:

Պատումում է Արսեն պապը, որ իրենց հայրենակից քաջը «գիտեր, որ մեր անտառաշատ գյուղի հողերի ընդերքը հարուստ է անուշահամ ջրերով, որոնք տեղ-տեղ գետնի երեսից շատ մոտ են: Բավական է մի քիչ հողը փորփրես, եւ աղբյուր կբխի, ինչպես դա եղավ մեր քաջ համագյուղացու մտրակի հարվածից: Հիմա էլ կա այդ աղբյուրը՝ քաղցր, սառնորակ ջրով: Քաջաղբյուր է կոչվում:

Մի անգամ քեզ կտանեն այնտեղ: Կիսնես այդ աղբյուրի ջրից եւ քաջ, ավելի քաջ տղա կդառնաս, լա՞վ:

- Լա՛վ,- ուրախացավ Նարեկը:- Պարոն Մեսրոպյանն ասում է՝ արցախցին քաջ պետք է լինի, շա՛տ քաջ:

- Ճիշտ է ասում ձեր Մեսրոպյանը, քաջ եւ...

Քաջ եւ խելոք:

- Խելոք եւ...



- Խելոք եւ քաջ,- բացականչեց Նարեկը, եւ երկուսով ծիծաղեցին (էջ 281-283):

4. Դանիելյանն իրեն ազատ է զգում տարբեր թեմաների նկարագրության մեջ: Լինի սոցիալական, բարոյական թե քաղաքական մոտիվ, նա գտնում է համոզիչ հնարանքներ եւ պահանջվող մակարդակով ներկայացնում ընթերցողին: Հայտնի է կոմունիստական կուսակցության անհաշտ եւ հանցավոր քաղաքականությունը ազգային մյուս քաղաքական ուժերի, առանձնապես Հայ Հեղափոխական Դաշնակցության հանդեպ: Այդ պատճառով 1920-ական թվականների սկզբից դաշնակցությունը գործեց արտերկրում, կոնկրետ՝ Սփյուռքում: 1918-1920 թվականների հայ ժողովրդի փրկության գործում ճակատագրական դեր խաղաց Սարդարապատը, որի արդյունքում ծնունդ առավ Հայոց առաջին հանրապետությունը, որի ղեկավարության կորիզը դաշնակցությունն էր: Սակայն հայտնի է նաեւ, որ հենց այդ ժամանակաընթացքում ազերի-թուրքերը Օսմանյան Թուրքիայի օրինակով սկսել էին հայկական ջարդերը Կովկասում՝ Բաքվում, Շուշիում, Գանձակում եւ հայաշատ այլ տարածքներում: 1920 թվականի մարտի 23-ին ազերի հրոսակները թուրքական բանակի ստորաբաժանման եւ անգլիական ներկայացուցչի հովանավորությամբ հրի մատնեցին Շուշիի հայկական թաղամասերը՝ սրի քաշելով հայ ազգաբնակչությանը: Արհավիրքն ապա տարածվեց Արցախի գյուղերում: Այդ արհավիրքի դեմ դժվար է գերազնահատել հայ ազգային հերոսների սխրանքը: Նման քաջագունների հետ

Էր Թեւան Ստեփանյանը, առանց որի հազիվ թե կոտորածից փրկվեր առանձնապես Դիզակի շրջանը: Իշխանության գլուխ անցնելով՝ կոմունիստներն սկսեցին ոտնձգություններն ու հալածանքները հայրենասեր խմբապետների, դաշնակցության ակնառու գործիչների հանդեպ: Թեւան Ստեփանյանին հաջողվեց անցնել Իրան՝ կրծքի տակ անթեղած կարոտի հուրը հայրենի Արցախի, իր ծննդավայր Տունի գյուղի հանդեպ:

Խորհրդահայ գրողներից նրանք, ովքեր ունեին քաղաքական հասունություն, տեղի չտվին կոմունիստական գաղափարախոսությանը, գոնե չարժարժեցին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած այն հայակործան իրադարձությունները, որ կազմակերպում էին կարմիր Մոսկվայի ներկայացուցիչները, ազերի թուրք ղեկավարները եւ նրանց հլու հայ բուլչեւիկները:

Խորհրդային իշխանությունները, առանձնապես Բաքվի ղեկավարությունը Միրջաֆար Բաղիրովի գլխավորությամբ 1941-1945 թվականներին ձեռնամուխ եղան Թեւան Ստեփանյանին կալանքի ենթարկելու եւ ոչնչացնելու ստոր գործին: Եվ դա հաջողվեց նրանց:

Կ.Դանիելյանը մեր գրական օջախում առաջինն է, որ կատարեց շնորհակալ գործ՝ գրելով «Թեւան» պատմվածքը՝ իրական փաստերի հիման վրա: Նրան հաջողվել է ներկայացնել Ադրբեջանի ղեկավար Միրջաֆար Բաղիրովի հայակործան գործունեությունը հենց հայ մոլորյալ գործիչների ձեռքով: Պատմվածքի գործող անձերից է Էդվարդ Մարտի-

րոտովը, որն Իրանի տարածքում տեղակայված խորհրդային հետախուզական ջոկատներից մեկի հրամանատարն էր: Կենտրոնից հատուկ ծածկագրով կարգադրում են շտապ վերադառնալ Բաքու: Դա 1941թ. աշնանն էր: Էդվարդ Մարտիրոսովը ներկայանում է կառավարական տուն: Բաղիրովը Էդվարդ Մարտիրոսովին ընդունում է արտակարգ սիրալիրությամբ եւ հայտնում որոշումը. «Իրանում է ապրում խորհրդային իշխանության կատաղի թշնամի, դաշնակցական նախկին խմբապետ Թեւան Ստեփանյանը, որը քսանականների սկզբներին Ղարաբաղում մի շարք արյունահեղությունների, երկու բախտակից ժողովուրդների՝ հայերի եւ ադրբեջանցիների ընդհարումների կազմակերպիչն էր, կարմիր բանակի դեմ մարտական գործողություններ ձեռնարկած դաշնակցական ուժերի գլխավոր հրամանատարը Ղարաբաղում» (Կ. Դանիելյան, «Պորտալար», Ե., 2007, էջ 7): Բաղիրովը հայտնում է, որ տվյալների համաձայն, Թեւան Ստեփանյանը գտնվում է Մազանդարանի գավառում, ուստի պետք է Թեւանին ոչ միայն չեզոքացնել, այլեւ ձերբակալել ու հասցնել Բաքու: Այդ էր պահանջում նաեւ Մոսկվայից ուղարկված գեներալը, որին այդ առաջադրանքը հանձնարարել է անձամբ Ստալինը: Եվ Էդվարդ Մարտիրոսովի տրամադրության տակ դրվում են Մոսկվայից գեներալի հետ եկած տասը փորձառու չեկիստները, որոնցից մեկը ծննդով ղարաբաղցի է եւ լավ է խոսում Ղարաբաղի բարբառով: Միրջաֆար Բաղիրովին հետաքրքրում էր մի ստոր նպատակ, որ նշ-

վում է պատմվածքում. «Չայի տունը հայի ձեռքով պիտի քանդել»:

4. Դանիելյանը պատմվածքում աստիճանաբար պատկերում է Մարտիրոսովի խմբի հանցավոր գործունեությունը: Նրանք խաբեությամբ ձերբակալում են Թեւան Ստեփանյանին եւ հանձնում Բաղիրովի ձեռքը:

Պատմվածքն ավարտվում է Բաղիրովին եւ Մարտիրոսովին ներկայացնող պատկերով, որ առանց գրողի միջամտության ինքնին բնութագրում է նրանց ճիվաղային կերպարները. «Մի առժամանակ անց ձեւական դատից հետո Թեւան Ստեփանյանին գնդակահարում են: Ասում են՝ իբր Բաղիրովն ինքն էր կրակել մի ամբողջ պահունակ, Թեւանից խլված մաուզերով: Իսկ եղվարդ Մարտիրոսովն արժանացավ կենտրոնի հատուկ շնորհակալությանը եւ ոսկե ժամացույցի՝ ընծայագրով: Այդ թանկարժեք պարգեւը նրան հանձնեց անձամբ Միրջաֆար Բաղիրովը» (էջ 11):

4. Դանիելյանի ոչ միայն «Թեւան» պատմվածքում, այլեւ «Տոհմածառ»-ում գործում է արծարծում խորհրդային տարիներին կոմունիստական կուսակցության ղեկավարների վարած այդ քաղաքականության սահմնկեցուցիչ հարվածները հասարակ մարդկանց ընտանիքներին:

«Տոհմածառ» պատմվածքի հենց մուտքից ներկայացված է կոլտնտեսականների քրտնաթոր աշխատանքի տեսարանը խոտհնձի ժամանակ, որտեղ բրիգադիր Չայկազն է իր կեղծ ու շողոքորթ հորդորներով «խրախուսում» հնձվորներին: Չենց այս տեսարանում էլ ընդգծվում է ներքին այն

Մոդկանքը, որ կա Նշանի հոգում՝ Հայկազի հանդես:

Սկսվում է Մեծ Հայրենականը: 1943թ. վերջին, թե՞ 44-ի սկզբին ստացվում է Նշան Երենյանի՝ Եղսա աքոր միմուճար զավակի «սեւ թուղթը»: Ինչպես գյուղի բոլոր որդեկորույս մայրերը, այնպես էլ Եղսա մայրիկը զարմանալի տոկունությամբ տարավ այդ ծանր հարվածը: Նա նույնիսկ չէր հավատում ծանուցագրի ճշմարտացիությանը: Սառնասրտորեն մերժեց, չընդունեց նրա բովանդակությունը:

Կ. Դանիելյանը, որի ստեղծագործական խառնվածքին հատուկ է հուշագրության ժանրի ներառումը պատուհի մեջ, անդրադառնում է Եղսա մայրիկի կրած տառապանքին՝ սկսած 1937 թվականից: Ամուսնուն՝ Համբարձում Երենյանին, տարել էին, մի անհամ, անհեթեթ պատճառով: Գյուղի նորաստեղծ կոլտնտեսության ժողովում Համբարձումն ասել էր՝ ինչո՞ւ մեր աղբյուրների ջրերն անտեղի հոսելով գնանկորչեն, պետք է ջրամբար կառուցել, ջուրը հավաքել ու ջրել հայրենի ջրով բոստանն ու արտը: Եվ ինչպես հատուկ էր այն ժամանակների քաղաքական մթնոլորտին, գտնվեցին մարդիկ, որ Համբարձումին «մեղադրեցին» հակաադրբեջանական արարքների մեջ՝ նրան համարելով դաշնակցական ձեռնարկման հեղինակ: Դրան էին սպասում Ադրբեջանի կառավարող շրջանները: «Ժողովրդի թշնամի» Համբարձում Երենյանին Սիբիր քչեցին: Արդյունքում, ինչպես պատկերում է հեղինակը, «Ջրամբարը, բնականաբար, չկառուցվեց: Լեռնային զանգակ աղբյուրների պաղպաջուն ջրերը, գետակ կապելով, շարունակում էին անարգել հոսել

դեպի պապակ, ամենակուլ տափաստանը՝ դառնալով գրկաչափ ձմերուկ, մեղրածոր սեխ, թուզ ու ծիրան, վառվռուն նուռ ու լուլիկ, որոնք էշերին բարձած՝ հսկա կողովներով բարձրանում էին լեռնային գյուղերը, թուրքի գրպանում դառնում խշխշան փող, ապրուստ» (էջ 38):

Համբարձումին աքսորելուց հետո Եղսա մայրիկը եւ մանչուկը՝ Նշանը, տարան բուրդ դժվարություններն ու տառապանքը. քուն թե արթմնի, պատահական ծայնից վեր էին թռչում, իրար գիրկ մետվում, հո չե՞ն եկել իրենց հետեւից: Այդպես տեսում է երկու-երեք տարի: Մինչեւ այն օրը, երբ ստացվեց բոթը՝ իբր անտառ հատելիս ծառը շրջվել, տակովն էր արել Համբարձումին:

Եղսա մայրիկն ուժ է գտնում իր մեջ եւ մեծացնում Նշան որդուն, որի զոհվելուն չի հավատում: Մոր սիրտ էր...

Հեղինակը քնարական շեղումով կրկին վերհիշել է տալիս Նշանի մանկության ու պատանեկության խոցված տարիները: Ամենից վիրավորականն այն էր, որ ոչ միայն երեսին աջ ու ձախ շարտում էին նվաստացուցիչ պիտակներ, դասերի ժամանակ նրա պատասխանները նշանակում էին մեկ միավորից ցածր: Նշանը, որպես «ժողովրդի թշնամու» որդի, իրավունք չունեի «գերազանց» ստանալ, բեմից արտասանել, բարձր խոսել, ծիծաղել...

Ինչպես պատմում է հեղինակը, «այդ սեւ բիծը իր կենսագրությունից քերելու նպատակով «ժողովրդի թշնամու» որդին, որի տասնութը դեռ չէր լրացել, կամավոր գրվեց,

պատերազմ գնաց» (էջ 39):

1945թ. մարտին բանակից մի «թուղթ» էլ ստացվեց, որը հերքում էր նախորդը, այսինքն՝ չի զոհվել Նշան Երեմյանը: Այս լուրն ստանալուց հետո Եղսա մայրիկի սիրտը դադարում է բաբախելուց: 1946-ի ձմռանը վերադառնում է Նշանը: «Գերի էի ընկել,- ասաց,- կարծել էին, թե սպանվել եմ»: Սակայն շուտով նրան կանչում են շրջկենտրոնից ու քսորում: Մինչեւ 1954-ի գարունը նրան ոչ ոք չտեսավ, ոչ ոք չիմացավ նրա տեղը: Վերադառնալուց հետո նա հայտնում է, որ գտնվել է Յակուտիայում, այնտեղ, որտեղ հայրն է եղել քսորված:

Պատմվածքի կառուցվածքը հետաքրքիր է նրանով, որ յուրաքանչյուր մասում հեղինակը բացում է հերոսի բարդ ճակատագրի մի նոր էջ՝ ծանր ու հոգեկան, խորին ապրումներով: Նշանը գյուղ վերադառնալով՝ չի կարողանում գտնել իր տեղը: Ստացվում է այնպես, որ նախագահը նրան առաջարկում է աշխատել որպես ծիապան: Նա սիրում եւ ամուսնանում է ծիապան Սեւիի սիրուն աղջկա՝ Բեղուշի հետ: Զարսանիքը իսկական արցախյան էր, ողջ գյուղի մասնակցությամբ: Շարունակվում է կյանքը: Երանակը ցրելուց հետո Նշանը մասնակցում է գյուղական աշխատանքներին:

Պատմվածքի հաջորդ էջերում նկարագրվում է խոտհունծը, Բեղուշի օգնությունը, ապա Զայկազի սրիկայությունը, Նշանի գայրանալը, իր սեփական ծիուն տանջելը, իրեն մեղսագործ զգալը, մահվանից առաջ մղձավանջը եւ խոսքը. «Ուչինչ, ոչինչ... Գոնե ինձ այստեղ, գյուղում կթաղեն: Մեր գե-

րեզնանոցում տղամարդու շիրիմ չկա... Խեղճ հորս 37-ին տարան, պապիս 18 թվին Բաքվում սպանեցին... Հորս պապը ռուս-թուրքական պատերազմում մնաց: Մյուսներին չգիտեմ: Նրանցից ոչ մեկը 30 չկար... Ես արդեն 36 տարեկան եմ» (էջ 57):

Նշանը փակում է աչքերը՝ բնավ չիմանալով, որ օրեր առաջ իրենից պոկված մի պուտ արյուն էր սկսել հունդավորվել Հեղուշի ներսում:

Խորհրդային տարիների քաղաքական շիկացման մթնոլորտից անհատի պաշտամունքի հասցրած սահմնկեցուցիչ հարվածների ռեալիստական հաջողված պատկեր է «Պորտալար» ժողովածուի համանուն պատմվածքը: Ամենդ մարդկանց, առանձնապես Արցախի հայ ազգաբնակչության դեմ Ադրբեջանի կառավարիչները, պատրվակ ընդունելով հակախորհրդային դաշնակցական տարրերի դեմ մղվող պայքարը, աքսորում կամ մահվան էին դատապարտում ազնիվ աշխատավորներին, ստորացման, արհամարհանքի պայմանների մեջ գցելով նրանց հարազատներին, որդիներին, հարեւաններին, բարեկամներին: Սա եղելություն է, որ կատարվել է Արցախի բոլոր բնակավայրերում անխտիր: ՊԱԿ-ի գործիչները չէին բավարարվում հայ ազգային ազնիվ փրկիչների հետապնդումներով ու ոչնչացումով, ստալինյան-բաղիրոսյան համաճարակի զոհ էին դարձնում նաեւ անմեղներին՝ իբրեւ խորհրդային կարգերի թշնամիների գաղափարակիցներ: Ամբողջ Ղարաբաղի գյուղերում մարդորսության մի թակարդ հյուսեց «թեւանիստ»



արտահայտությունը:

Ինչպես Կ. Դանիելյանն է սկսում իր պատմվածքը, «Այդպիսի տներ գյուղում շատ կային (հիմա էլ կան), երկհարկանի, լայն, սյունաշար պատշգամբով, փայտե (հավանաբար՝ կաղնե) հսկայական կամարակապ դարպասով: Միակ տարբերությունը, թերևս, նրանում էր, որ միշտ էլ փակ էր լինում այդ դարպասը, ժանգոտած կողպեքի տակ, որը մի տեսակ առեղծվածային խորհրդավորություն էր հաղորդում թեևանիստ Եսայու (գյուղում բոլորն այդպես էին ասում) տանը, ճնշող, վանող տպավորություն թողնում հատկապես երեխաներիս վրա» (էջ 30):

Սարսափելին այն էր, որ երեկոյան ժամերին երեխաները խուսափում էին այդ կողմերում երեւալուց, իսկ եթե պատահում էր, որ ոտքները մեկ-մեկ ընկնում էին այնտեղ, ջանում էին հնարավորին չափ արագ հեռանալ՝ ստեպ-ստեպ նայելով ետ՝ քարե, տեղ-տեղ փլված, թանձր մոշաթփերով պարուրված մարդաբոյ պարսպին: Գրողը բնութագրում է այդ ահավոր երեւույթը. «Ոչ, դա վախ չէր, այլ ինչ-որ ուրիշ անբացատրելի մի բան, որ մեր փոքրիկ հոգիներում բույն էր դրել այդ լքված տանը տիրող սառը լռությունից, անշարժությունից: Ինձ վրա ճիշտ այդպիսի ազդեցություն էր թողնում նաեւ գյուղամիջի կիսաքանդ եկեղեցին (էջ 30):

Կ. Դանիելյանը պատումը շարունակում է հեղինակի անունից՝ որպես ականատեսն այն օրերի, երբ սարսափն էր իշխում: Վախենում էին պապը, հայրը, մայրը, ուսուցիչը... բոլորը: Եվ ահավորն այն էր, որ մատաղ սերնդի դաստիա-

րակությունն ընթանում էր հենց այդ վախի ճիրաններում: Երբ պապը պատմում է, թե տարիներ առաջ ինչ-որ մեկը ցանկացել է գնել թեւանիստ Եսայու տունը, Եսայու տղան, որ մարզկենտրոնում էր ապրում, մերժել է: Ասել է՝ ով ուզում է թող ապրի մեջը, ինչքան ուզում է թող ապրի, բայց ծախել չի կարող: Թոռան այն հարցին, թե ով է թեւանիստ Եսային, պապը պատասխանել է.

Մարդ էր, էլի... Մե՛զ պես մի հայ մարդ:

Մահացե՞լ է...

Թոռան այս հետաքրքրությամը պապը պատասխանել է ցավով ու ափսոսանքով, որ ժամանակաշրջանի էության ճշմարիտ բնութագրությունն է: «Դա մեծ բախտավորություն կլիներ նրա համար,- ասել է պապը,- էն ժամանակ ո՞վ էր իր մահով մահանում. «էն էլ՝ հա՛յը, էն էլ՝ արցախցի՛ հայը...» (էջ 30): Դեռ ավելին, պապը, տազնապելով թոռան համար, վրա է բերել. «Դու լավ կանես դասերդ սովորես ու քիթդ չխոթես ամեն տեղ» (էջ 30):

Դեպքերը հաջորդում են միմյանց: Եվ պարզ է, որ մի օր պետք է այրվեր Եսայու տունը՝ ծայրից ծայր հրո ճարակ դառնալով: Վառված տնից փրկվում է միայն մի օրորոց, փայտե հին, շատ հին օրորոց:

Գրողն ականատես երեխայի միջոցով ներկայացնում է պապի ծանր ապրումները: «Անընդհատ շուռումուռ էր գալիս, խուլ ախուժախ անում: Կարծես հիվանդ լիներ» (էջ 31):

Հետեւյալ առավոտ երեխաներն անգամ կարող էին մտնել Եսայու տան բակը, որտեղ ամեն ինչ մոխրի էր փոխվել:

Երեխաներին ավելի շատ հուզեց լայնեզր գլխարկով մի վտիտ մարդ, որ նստել էր փրկված օրորոցի մոտ: Այս համապատկերին գրողը ներկայացնում է գյուղխորհրդի Շավարշին, մի հրշեջի եւ մեկ միլիցիոների: Այստեղ համոզիչ ու բնութագրող երկխոսության միջոցով ընդգծվում է կեղծ ու անմարդկային այն իրականությունը, որտեղ մարդու իրավունքները լրիվ ոտնահարված էին:

Եսայու տղան բակում հավաքված գյուղացիներին շնորհակալություն է հայտնում, որ փրկել են օրորոցը: Պահն այնքան հուզիչ էր, որ ականատես պատանուն հասունացնում է եւ բնութագրում ժամանակաշրջանն ու ազնիվ մարդկանց ազգապահպան գործը: Պատմում է պատանին. «Իմ մեջ հանկարծ անդիմադրելի ցանկություն առաջացավ վազել, հասնել նրա հետեւից ու պատմել այն ամենը, ինչ գիտեի նրա հոր՝ թեւանիստ Եսայու մասին, թե ինչպես է խմբապետ Թեւանի միջոցով Դրոն, թե՞ Նժդեհը (մեկն ասում էր Նժդեհը, մեկը՝ Դրոն) ատրճանակ նվիրել՝ ընծայագրով, ինչպես է նա թքել Շուշիի քաղաքազուլիս Ռուբեն Մելիք-Շահնազարյանի երեսին, ինչպես է Բաքվից եկած Արմենակ Կարակոզովին թուրք անվանել» (էջ 34):

Չնայած պապի զգուշավորությանը, թոռան համար պարզ է դառնում Եսայու հայրենասիրական, ազգապահպանության համար կատարած գործը, որ այժմեական նշանակություն է ձեռք բերում: Եվ ոչ միայն այդ: «Պորտալար» պատմվածքը անցյալի եւ ներկայի անխախտ առնչությունների գեղարվեստական մնայուն պատկեր է: Պատմվածքն

ավարտվում է պապի իմաստուն եզրակացությամբ, որ թռան համար հանդիսանում է որպես ապրեցնող դասեր: Պապն ասում է. «Արեւը կժեն, տեսա՞ր ինչ արեց»: «Ո՞վ»: «Ո՞վ: Եսայու տղան»: «Ի՞նչ արեց»: «Ի՞նչ արեց: Ոչ մեկը այդպիսի բան չէր անի, ոչ մեկը գլխի չէր ընկնի, ո՛չ ես, ո՛չ հերդ, ո՛չ, գուցեւ, դու»: «Այդ հնոտի օրորոցը»: «Քե՞զ ու մորդ համար է հնոտի, իսկ իր համար, իրենց համար՝ նշխար: Իրենց տոհմից մնացած նշխարը: Իր պորտալարը» (էջ 34-35):

Կ. Դանիելյանը այս եւ այլ պատմվածքներում հաստատում է մի ճշմարտություն՝ դարերի ընթացքում բռնապետություններն ու միապետները եկել են ու անցել, սակայն ժողովուրդը, դիմակայելով բոլոր արհավիրքներին, գոյատեւել է՝ ինչպես հայրենի անտառները՝ կորուստներով ու վերածնունդով: Այդ են հուշում եւ Գամբարծումի «մեղադրյալ» Նշան որդին «Տոհմածառ» վեպում, եւ թեւանիստ Եսայու որդին՝ «Պորտալար»-ում:

Եթե ինչ-որ տեղ կարող են Արցախի գրական ընտանիքի անդամների կատարած հունձքի արդյունքում նրանց կշտամբել թեմաների սահմանափակության համար, ապա մեր կյանքին հասու եւ մեր ժողովրդի աստվածբաժին ճակատագրին քաջածանոթ արվեստագետները կարող են ընդգծել հենց դրա առավելությունը՝ նկատի առնելով 1988-ից սկսած այն Գոյամարտը, որ հայ ժողովրդի դարավոր մաքառումի շարունակությունն է՝ պասկված հաղթանակով:

Շահած հաղթանակը պահպանելու ամենահզոր գոր-

Ժոններից մեկը գեղարվեստական գրականությունն է, որը ոգեկոչումի, արիության, սեփական ուժին ապավինելու, հավատի պատգամների անթառամ փունջ է:

Տեղին է վերհիշել հռչակավոր գրականագետ ու հայագետ Մ. Աբեղյանի խոսքը: Նա մեր հին դպրությունը բնութագրել է որպես եկեղեցական-քաղաքական մաքառման գրականություն: Հիրավի, այդպես է: Ինչպես դարերի ընթացքում, այնպես էլ այսօր հայ գրականության գլխավոր թեման հանդիսանում է ազգային մաքառման, կամքի ուժի, հարատևելու իմաստության ընդգծումը: Այսօրվա մեր գրականության մեջ էլ հնչեցվում են պատմության դասերը՝ մեր նորօրյա Ավարայրի ու Սարդարապատի՝ Արցախյան պատերազմի նշանակությամբ: Այս դիտակետից արժեւորվում է Կ. Դանիելյանի «Պորտալար» ժողովածուն, ուր զետեղված է «Արցախը՝ չսանձած նժույգ» հուշագրական վեպը, որը երկրորդ հրատարակությունն է՝ լրամշակված տեսքով:

Վեպի մուտքում հեղինակը, 1988 թվականից սկսած, Արցախյան շարժումը Ավարայրի ու Սարդարապատի զուգորդմամբ գնահատում է որպես ազատաբաղձ ժողովրդի երեք աստեղային ժամեր: Նա նշում է, որ այսօրվա ապրողներս պարտավոր ենք մոռացությունից փրկել ու վաղվա սերնդի սեփականությունը դարձնել այն ամենը, ինչ առնչված է զոհաբերությամբ նվաճված մեր հաղթանակին: Հենց պարտքի այդ գիտակցումով նա ձեռնամուխ է եղել վեպի ստեղծմանը:

Հայտնի է, որ Կ. Դանիելյանի ավագ որդին, որ սովորում էր Արցախի պետական համալսարանի պատմության ֆա-

կուլտետում, տուն չի վերադարձել 1992թ. օգոստոսին՝ Մարտակերտի շրջանում տեղի ունեցած հերթական մարտից եւ համարվում է անհայտ կորած: Ուստի, ընթերցողներին հասկանալի են այն դառնություններն ու անպարփակ ցավը, որ ապրում են խիզախ զինվորյալ Նարեկի ծնողները՝ Կոմիտասն ու գրականագետ-մանկավարժ Լենան:

4. Դանիելյանը գրքի մուտքում մեծ սփոփանք է համարում այն, որ ինքը գտնվել է Արցախյան շարժման ակունքներում եւ ջանացել է ինչ-ինչ մասնակցություն ունենալ նրա ձեւավորմանը:

Վեպի առաջին մասն ականատեսի, դեպքերի մասնակցի վկայություններ ու խորհրդածություններ են, իսկ երկրորդ մասը, որ հիմնականում նվիրված է մեզ պարտադրված պատերազմին, շարադրված է ազատամարտիկների պատմվածքների եւ պաշտոնական տեղեկությունների հիման վրա:

4. Դանիելյանին հաջողվել է ստեղծել մի գործ, որտեղ հուշերի ու գործողությունների ռեալ պատկերները հյուսված են հմտությամբ: Դրանք կոփված ու իմաստնացած այր մարդու խորհրդածություններ են՝ ուսանելի եւ ճանաչողական առունով, եւ դաստիարակչական: Նրանում հինգ դրվագների հյուսվածքով 4. Դանիելյանը կոնկրետ փաստերի եւ տրամաբանական ընդհանրացումների միջոցով ապացուցում է, որ մեր ժողովուրդն ազատագրական պայքարի ելավ իր արյան կանչով, չընկրկեց հակառակորդի ճնշումների ու դաժանությունների առջեւ, համոզված, որ հայը

զենքով միայն կարող է փրկվել՝ չմոռանալով «Ակն ընդ ա-  
կան» ավետարանական պատգամը:

Կ. Դանիելյանի «Արցախը՝ չսանձած մտույզ» վեպը հրա-  
շալի մի տարեգրություն է՝ գրված գրող-պատմաբանի ան-  
ժխտելի տաղանդի շնորհիվ: Նկատի առնելով արցախյան  
հիմնահարցի շուրջ արդի խնդրումները՝ նա քննադատում է  
Արեւմուտքի հոլովվող տարածքային ամբողջականության  
սկզբունքը, որը բացառում է ազգային ինքնորոշման արդա-  
րացի պահանջը:

«Կհաջողվի՞ մեզ պատռել այդ կարծրացած տեսության  
քողը,- գրում է Կոմիտասը,- կկարողանա՞նք արժանապատ-  
վորեն հաղթահարել վերջին խոչընդոտը... Պիտի կարողա-  
նալ՝ համազգային ջանքերի գնով, բովանդակ հայության  
միասնական ուժերով: Քանզի Արցախի համար միայն մի  
հավաստի երաշխիք կա՝ անկախության ամրապնդումը (լի-  
նելն էլ, վաղ թե ուշ, պիտի հանգեցնի մայր երկրի հետ վերա-  
միավորմանը): Այդ են պահանջում մեր հազարավոր նահա-  
տակները: Այդ հավատով են հայրենիքի զինվորներն իրենց  
գլուխները դրել մայր հողի փրկության զոհասեղանին... Ու-  
րեմն՝ վառողը միշտ չոր պիտի պահել: Այժմ եւ ընդմիշտ»:

Ծիշտ է նկատում գրողը, որովհետեւ չի մեղանջում իրա-  
կանության հանդեպ:

Կ. Դանիելյանի արձակը հասուն գրչի արտահայտու-  
թյուն է՝ ճանաչողական, դաստիարակչական եւ գեղագի-  
տական երանգներով:

## ՄԱՐՏԻՐՈՍ ՈՐՆ (ՀԱՍԼԵՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

Մի առիթով Հրանտ Մաթեոսյանն ասել է. «Գրականություն պետք է մտնել պատասխաններով...»: Կարդալով արձակագիր Մարտիրոս Որնի «Թողեք ապրեն» նոր ժողովածուն, կրկին հիշեցի տաղանդաշատ գրողի վերոհիշյալ խորհուրդը եւ ներքին գոհունակությամբ նկատեցի, որ Մարտիրոս Որնը գրականություն է մտել պատասխանատվության ամենախիստ զգացումով:



«Թողեք ապրեն» ժողովածուն ապացուցում է Մարտիրոս Որնի ստեղծագործական աստվածային շնորհքը, աշխարհընկալման եւ կենսափորձի ինքնատիպությունն ու հարստությունը: Գրողը ոչ միայն խորապես հասկացել է գրական ընթացքի մեջ «ինչի եւ ինչպիսի» մշտահուլով խնդիրը, այլեւ ուժը պատել է լուծելու այդ կարեւորագույն պրոբլեմը՝ աչքի առջեւ ունենալով ստեղծագործական նպատակների իրականացման հնարավորությունները:

Հեղինակի ճշմարիտ տաղանդը փայլում է ժողովածուի բոլոր պատմվածքներում: Դա բացատրվում է մարդկային ճակատագրերի հանդեպ եղած նրա տազնապով ու ցավով: Երեւոյթների ու բնավորությունների նրա հաստատումն ու ժխտումը ծնվում են գրողի մարդասիրությունից: Այս պարա-



գայում Մարտիրոս Ոբնի գեղագիտական սկզբունքները եւ հաստատուն են, եւ նրբերանգ: Մարդու հանդեպ ունեցած ազնիվ սեր եւ տառապանքի խոր զգացում է նկատվում գրողի ստեղծագործություններում: Գրքի՝ թեմատիկ առումով բազմազան պատմվածքները վերջին հաշվով ամբողջանում են գրողի հիմնական միտումի շուրջ: Ընդհանրության մեջ դրական թե բացասական կերպարները երեւան են բերվում մարդու կոչման փիլիսոփայական հասկացության մթնոլորտում: Մարտիրոս Ոբնի տաղանդի ստեղծագործական ներուժը այդ մթնոլորտում բացահայտվում է ստեղծագործությունների թե՛ կառուցվածքային (կոմպոզիցիոն-սյուժետային), թե՛ կերպավորման արվեստի, թե՛ հոգեբանական պատկերային երանգավորումներում: Այս ընդհանուր ֆոնի վրա արձակագիրը ոչ թե թաքվում է պատումի հետեւում, այլ անտեսանելի կռվաններով ձուլվում պատումին: Ընթերցողը նրան չի տեսնում, այլ զգում է այնպես, ինչպես կյանքի խորհուրդներին հետամուտ մարդը կարող է հետեւել հարազատների ճակատագրական արարքներին ու քայլերին: Այստեղ գրողի հաստատումի կամ ժխտումի սկզբունքներն անմիջական են, հավաստի, ռեալիստական արվեստի մշտարթուն չափանիշներին հարազատ:

Մարտիրոս Ոբնի «Թողեք ապրեն» ժողովածուի կերպարները գործում են կյանքի տարբեր շերտերի, սոցիալական իրավիճակների, մարդկային հոգսերի եւ կարիքների, ճակատագրերի եւ մղումների բարդ խաչմերուկներում: Այնտեղ հանդիպում ես մարդկանց, որոնք հաստատում են

մեր առօրյա կյանքի շերտավորված գույները, ներկայացնում որպես մոլորված-խաթարված, աղավաղված-թեւաթափ, երազող-հուսավառ էակներ: Եվ նրանց ընդհանուր արարքների ընթացքում զգում ես գրողին, մի դեպքում՝ ցավի ճիչը սրտում, մյուս դեպքում՝ երազի շողը հայացքում, եւ բոլոր դեպքերում էլ գեղագիտական իր լուսավոր իդեալի դիրքերում՝ Պարույր Սեւակի «Եղիցի լույս» աստվածաշնչյան երազանքը շուրթերին:

«Թողեք ապրեն» ժողովածուում Մարտիրոս Ոբնը արարել է բազմաբնույթ կերպարների իր աշխարհը: Գրքի հենց առաջին՝ «Փաղիժ» ծավալուն պատմվածքում (այն կարելի է համարել վիպակ) ծանոթանում ես կալանավորների խարդախված աշխարհին, ականատես դառնում նրանց աղավաղված բնավորությունների դրսևորումներին՝ ապրելով ցավի եւ ակսոսանքի խորին զգացումներ: Գեղարվեստական կատարյալ կերպարներ են Խանը՝ երկարահասակ եւ Վրեժը՝ Զիկի մականուններով: Գրողը պատկերների հետեւողական եւ հոգեբանական ընթացքի մեջ բացահայտում է նրանց բնավորությունները: Թեպետ նրանք գործողությունների մեջ ընդհանուր նպատակ են հետապնդում՝ փախչել եւ ազատվել բանտից, սակայն տարբեր բնավորություններ են: Խանը երկար տարիների բանտային պայմաններում կորցրել է մարդկային բոլոր դրական գծերը՝ առանց խղճի խայթ զգալու սպանում է անտառապահին, խորհում է վերացնել իր հավատարիմ ընկերոջը՝ Վրեժին, ձգտում է տիրանալ նույնիսկ ավտովթարից

ջարդված, վերջին շունչը փչող երիտասարդ մի կնոջ:

Այլ է Վրեժը: Նա տարիներ առաջ ավտոյով վրաերթ կատարելու պատճառով կալանվել է: Նրա համար ազատութունը քաղցր երազանք է: Վրեժի հոգու խորքում առկայծում են մերթ իր մոր հայացքը, մերթ սիրելու եւ սիրվելու, ընտանիք կազմելու տենչը: Վերջապես նա չի հաշտվում իսանի գազանային արարքի հետ, որը ձգտում էր թալանել ջախջախված երիտասարդ կնոջը եւ հագուրդ տալ անասնական տարփանքին: Վրեժն առանց վարանելու հրացանով վերջ է տալիս գազազած իսանի կյանքին եւ սպասում հորիզոնում արդեն երեւացող, իրենց հետապնդող ուղղաթիռին:

Մարտիրոս Որնը լավ է հասկանում, որ գրականությունը ծնվում է կյանքի կարոտից, որ այն հյուսվում է մարդուն ազնվացնելու երազով, որ գրողը մարդկային տառապանքի եւ տենչերի խաչակիրն է: Արվեստի նկատմամբ ունեցած այս ընկալումները նրա համար տեսական սերտումներ չեն. ինչի մասին գրում է, նյութն առնում է ծանոթ միջավայրից: Դրանով պետք է բացատրել նրա պատմվածքների անմիջականությունն ու ազդելու ուժը: Այս առումով աչքի է ընկնում «Սալամանդրը» պատմվածքը:

Մարտիրոս Որնը հոգեբանական այնպիսի թրթիռներ է բացահայտում եւ այնքան համոզիչ, որ նրան կարելի է կոչել հոգեբան գրողի ընծայականով: «Սալամանդրը» ստեղծագործության հերոսը՝ Մարատը, ոտքից-գլուխ հոգեբանություն է: Լեռնային ավան մասնագիտությամբ աշխատե-

լու եկած երկրաբան Օքսաննայի պատճառով Մարատի եւ Գրիգորի միջեւ ծագած վեճն ավարտվում է Գրիգորի դանակահար լինելու տխուր դիպվածով: Մարատը, պարզ է, պետք է պատասխան տա օրենքի առջեւ, այն էլ՝ բանտում:

Պատմվածքի հեղինակը Մարատին ներկայացնում է գաղութային կյանքի 1096-րդ օրը: Դեռ առջեւում կար 2556 օր: Ինչպես գրողն է ընդգծում. «2556 օր: Մարդկային վաղանցուկ կյանքից, որի լինել-պրծնելը չես հասցնում նկատել աչք ճպելու պես, այդ կյանքից էլ հանես պիտի 3652 օր, կամ ուրիշ բերանով ասած՝ տասը տարի, տարիներ, ուրոնք դու չես ապրել, քոնը չեն եղել, ուրիշինն էլ չեն եղել, ինչպես աղբանոցի իրերը չեն պատկանում ոչ մեկին» (էջ 29-30):

Չեղինակն իր կերպարի մտորումներում կարողավոյլ այս թիվն ու խոհերը՝ լրիվ բացում է նրա հոգու դռները, հետեւում վճիռներին, մտորումներին, խաբուսիկ տեսչերին: Կյանքի առինքնող կանչերը դրսի աշխարհից, Մարատի կարոտն ու ծարավը դեպի այդ կանչերը կոյուղում, որտեղով ձգտում էր փախչել, մարդու աղետաբեր գործողության եւ գեղեցիկ երազանքի հոգեբանական իրարամերժ ապրումների հաջող պատկեր է, թուպներն անցնում են ձգտումի եւ խորտակումի մրրկահույզ ընթացքով: Պատմվածքը վերջանում է ողբերգական տեսարանով: Մարատը շնչահեղձ է լինում կոյուղում...

Մարտիրոս Ուրնը, որպես արձակագիր, հասել է արտահայտման ինքնատիպության: Դա նրան հաջողվել է իր կեն-

սագիտության շնորհիվ: Նրա պատումները ճշգրիտ են, կուլորիտային: Բնապատկերներում լինի, թե գործող անձանց խոսքի մեջ՝ ընդգծված երեւում են գրողի պատկերավոր մտածողության երանգները եւ հոգեբանական բացահայտումների հմտությունը: Ոբնի պատմվածքները հաճախ ունենում են նովելային ավարտ: Այդ տեսակետից հատկանշական են «Կողոպտված սեր», «Կորցրածս ետ տվեք», «Վերադարձ» պատմվածքները, որոնցում արծարծված են կենսական նշանակություն ունեցող պրոբլեմներ՝ հոգեբանական վերլուծությունների հենքով: Գրողն ընթերցողին մասնակից է դարձնում նկարագրվող իրադարձություններին՝ օգտագործելով դրամատիկ ու զավեշտական հնարանքներ:

Ոբնի նախընտրած կոմպոզիցիոն ձևերի մեջ ակնառու է պատումը հեղինակի կողմից վարելը: Նա համոզես է գալիս որպես գործող անձ, եւ դա որոշակի անմիջականություն է հաղորդում ստեղծագործությանը: Ընթերցողն զգում է պատմողի մտերմական շունչը, հետաքրքրվում նրա ճակատագրով: Այդ առումով արժե ընդգծել «Կորցրածս ետ տվեք» պատմվածքը: Պատումի սկզբից ներկայացնելով Ջանգեզուրի անգուգական բնությունը՝ գրողն անմիջապես պատկերում է խորհրդային տարիներին ՊԱԿ-ի կատարած չարագործությունները: Հեղինակը հոգեբանական նրբերանգների իմացությամբ ընթերցողի առջեւ բացում է սրտի դռները, նշում այն մղձավանջային մթնոլորտը, որ կապված է հայոց մեծ ե-

ղեռնի 50-ամյակի հետ՝ 1965թ.: Հայը իրավունք չուներ խոսելու համաժողովրդական իր ցավի, Արցախ-Ղարաբաղի, Նախիջեւանի, մեր կորուսյալ երկրի մասին: Այդ արգելքների դառնությունն զգում է պատմվածքի հերոսը՝ անձամբ ստանալով ՊԱԿ-ի կեղծիքի եւ աննարդկայնության հարվածները՝ Հովհաննես Շիրազի «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը... լսելու համար: Գրողը բնութագրական երանգներով է ստեղծել ՊԱԿ-ի չորրորդ բաժնի պետ Հայրապետովի կերպարը: Պատմվածքը ժամանակի առումով ընդգրկում է 20-րդ դարի վերջին երեք տասնամյակների իրադարձությունները: Ստեղծագործության ավարտում Հայրապետովին տեսնում ենք շքերթում. պատվավոր թոշակառուների շարքում նա պատմում էր, թե իբր «ինքը՝ գյուղի մի մատ երեխա, օգնել է Անդրանիկի բանակին»: Մինչդեռ պատմվածքի հերոսը ձգտում էր մոտենալ եւ ասել. «Մայրո Հայրապետով, կյանքը մի անգամ ենք ապրում... կորցրածս ետ տվեք»: Չէ՞ որ հենց Հայրապետովի մեղքով է, որ շնորհալի պատանին երգիչ չի դարձել:

Կենդանի կերպարներ են նաեւ զինվորը, որ դժվարությամբ ձեռք է բերում Վիսոցկու ձայնապնակը, սակայն սպանների անտարբերության պատճառով զրկվում է նրանից («Կողոպտված սեր»), զույգ զավակների երիտասարդ հայրը, որ հեռուներից վերադառնում է ընտանիքի եւ մարտնչող հայրենիքի գիրկը («Վերադարձ»):

Մարտիրոս Ոբնը հանրածանոթ երեսույթները կարողա-

նում է ներկայացնել նորովի: Նա կյանքի խորհուրդները, մարդկանց փոխհարաբերությունները բացահայտում է սեփական դիտակետից: Ժամանակների փոփոխվող ընթացքի մեջ կրկնվող մարդկային թուլությունները ներկայացնում է քաղաքացիական ու բարոյական իր ըմբռնումներով: Նրա հունորը եւս մեծ դեր է կատարում պատումների հետաքրքիր ընթացքի մեջ: Այդ են վկայում «Կողոպուտ», «Պասյանս՝ ծաղկեփնջով», «Դիլիժանս», «Ռեկետ» ստեղծագործությունները:

«Թողեք ապրեն» ժողովածուի ուշագրավ էջերից է «Համազարկ՝ հրաժեշտից առաջ» պատմվածաշարը: «Ամառ էր, կիրակի», «Հորադիզ», «Տեղ պիտի հասնենք մինչեւ լուսաբաց» պատմվածքները մի ամբողջություն են կազմում եւ կրկին վկայում հեղինակի գեղարվեստական հմտությունների եւ ուրախալի ձեռքբերումների առկայությունը: Այստեղ հարկ է նշել, որ Մարտիրոս Որբնը շարունակում է Ակ. Բակունցի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Ջորյանի ավանդույթները, ինչպես նաեւ առնչություններ ունի Հր. Մաթևոսյանի եւ Մ. Գալշոյանի գրական հունձքի հետ, իհարկե՝ ունենալով իր սեփական ձեռագիրը:

Մարտիրոս Որբնի «Թողեք ապրեն» գիրքը աչքի է ընկնում նաեւ գեղարվեստական պատկերավոր խոսքի երանգներով: Նրա լեզուն բազմաշերտ է՝ ժամանակակից գրական լեզվի ամենախիստ չափանիշներով: Նա միաժամանակ հմտորեն է օգտագործում ժողովրդական խոսակցական լեզվի եւ բարբառի տարրերը: Հարազատ մնալով

լեզվի ժողովրդայնության եւ ռեալիստական պարզությամբ՝ ստեղծում է ինքնատիպ համեմատություններ, մակդիրներ, փոխաբերություններ, հմայիչ ամբողջական պատկերներ:

«Թողեք ապրեն՝» գիրքը ազդարարեց, որ հեղինակը արդի հայ գրականության շնորհալի ներկայացուցիչներից է: Ճիշտ է նկատել ժողովածուի խմբագիրը՝ անվանի արծակագիր Ս. Հովհաննիսյանը. «Մարտիրոս Որբնի «Թողեք ապրեն՝» պատմվածքների ժողովածուն գրական լուրջ հայտ է եւ ընթերցողի մեջ գրական ակնկալիքների տեղիք է տալիս»:

\*\*\*

Համլետ Մարտիրոսյանն (Մարտիրոս Որբն) արծակագիր դարձավ բառի բուն իմաստով: Այդ ապացուցեցին եւ նրա նախորդ ժողովածուները, եւ «Հրեշտակին այցելի գիշերով» պատմվածքների գիրքը: Իմ այս կարծիքն սկսեցի այսպես, որովհետեւ ոչ միայն կարդացել եմ Համլետի ստեղծագործությունները, այլեւ պատասխանատվության ամենախիստ զգացումով գրախոսել եմ թե՛ պատմվածքները եւ թե՛ վիպակներն ու վեպերը:

Հ. Մարտիրոսյան-արծակագրի հաջողության գրավականները միանշանակ չեն, բազմաշերտ են՝ ինչպես կյանքը: Իսկ ով կյանք կոչված իրողության տակ չի ճգնվել, նրա քաղցրությունն ու դառնությունը չի համտեսել, ժպտալիս



չի արտասվել եւ արցունքի միջից չի ժպտացել հուլիսի լուսարձակով, նա գրող չի դառնա: Այս պահանջները վերացական դատողություններ չեն, այլ կյանքի ճանաչողության այն հրամայականը, որ ներկայացվում է աշխարհի բոլոր արվեստագետներին Մեծ Լոռեցին արվեստի ուժը տեսնում էր ճշմարտացիության մեջ, իսկ XX դարի հզոր Յ. Մաթեւոսյանը ամեն անգամ սպիտակ թղթի առջեւ նստելիս տառապում ու քրտնում էր: Օրինակներ շատ կարելի է բերել մեր եւ աշխարհի մեծերի իմաստուն ասույթներից՝ գրողի եւ կյանքի սերտ կապի մասին եւ այն մասին, որ գեղարվեստական գրականության գլխավոր առարկան մարդն է, որի ճակատագրի, զգացմունքների ու գործողությունների պատկերման միջոցով գրողը մարմնավորում է որոշակի դարաշրջանի եւ միջավայրի բնորոշ գծերը: Ուրեմն գրողի հիմնական խնդիրը պետք է հանդիսանա կերպարների ստեղծումը, իսկ առանց մարդկանց անձնական եւ հասարակական կյանքի բազմակողմանի իմացության հնարավոր չէ վերարտադրել եւ ոչ մի մտահղացում: Համլետը ճանաչում է կյանքը եւ հասկանում է արձակագրի իր պարտականությունը, նաեւ գիտե, որ գեղարվեստական գրականությունը որակվել է որպես մարդագիտություն:

Սակայն այս հասկացությունը դեռեւս ամեն ինչ չէ: Գրողը պետք է տիրապետի իր ազգային եւ գրական լեզվին, եւ գոնե այն բարբառին, որի ներկայացուցիչն է ինքը, միաժամանակ չմոռանա, որ գրականության լեզուն պահանջում է պատկերավորություն: Համլետը տիրապետում է գրական

մայրենիին եւ մի քանի բարբառների: Ահա այս գրավակա-  
նը եւս նրան հնարավորություն է տալիս անհատականաց-  
նելու իր ոճը եւ պատկերը հագեցնելու գաղափարական եւ  
հուզական հատկանիշներով:

Համլետը նաեւ քաջածանոթ է կոմպոզիցիոն տարբեր  
ծելերին եւ միջոցներին, որոնք էլ կիրառում է հմտորեն, ուս-  
տի նրա պատումները չեն ձանձրացնում ընթերցողին: Այս  
հաճելի ընթացքին նպաստում է նրա բառապաշարը, որն էլ  
օգնում է ներկայացնել իր հերոսներին՝ բնավորություննե-  
րի երանգավորմամբ:

Այսօր կան մարդիկ, որոնք ձգտում են գրականության  
համամարդկային նշանակությունը հակադրել նրա ազգա-  
յին յուրահատկություններին, իբրեւ ժամանակի պահանջ:  
Նմանները չարաչար սխալվում են, մոռանալով, որ լինելով  
իրենց դարաշրջանի եւ միջավայրի ծնունդ՝ գեղարվեստա-  
կան մեծ երկերը ընթերցողին ներկայացնում են տվյալ ազ-  
գության կյանքի, բնավորության եւ մտածողության անկրկ-  
նելի գծերը:

Մեզ համար այստեղ ուրախալի է ընդգծել, որ Արցա-  
խում ապրող եւ ստեղծագործող արձակագիրներն ու պոետ-  
ները լավ են հասկանում գրականության ազգային յուրա-  
հատկության կարեւորությունը, որ վճռականը գրականու-  
թյան ազգային բնույթի համար հարազատ ժողովրդի ոգու՝  
նրա ազգային բնավորության եւ մտածողության, նրա կյան-  
քի պատմական առանձնահատկությունների գեղարվես-  
տական մարմնավորումն է: Ապացույցը Վ. Հակոբյանի, Մ.

Հովհաննիսյանի, Ն. Ավագյանի, Կ. Դանիելյանի, Ռ. Եսայանի, Ն. Գասպարյանի, Կ. Գաբրիելյանի, Մ. Պետրոսյանի, Ա. Ղահրիյանի, Ս. Քամալյանի, Ն. Սողոմոնյանի եւ այլոց հաջողված երկերն են: Համարձակորեն լավերից լավերի կողքին նշում են նաեւ Զ. Մարտիրոսյանի անունը: Նրա նշված ժողովածուի «Երկու խոսք» առաջաբանում բանաստեղծ, գրականագետ Վ.Հակոբյանը ընդգծում է. «Համլետ Մարտիրոսյանի պարագայում սխալված չենք լինի, եթե ասենք, որ «թեման ինքն է նրան ընտրում», ոչ թե հակառակը: Եվ դա բացատրվում է հեղինակի խառնվածքով ու բնույթով: Արցախյան համազգային գոյամարտը, գրողի աշխարհայացքն ընդգրկում եւ խորը դարձնելով հանդերձ, երեւութները նորովի մեկնելու, ապագայի աչքերով դրանք դիտելու փորձով հարստացրեց նրան: Համլետ Մարտիրոսյանի տեսածն ու գրածը ոչ միայն ականատեսի, այլեւ ապրածի ու մասնակցի գեղարվեստական վկայություններն են, ոճի եւ ձեւի, բովանդակային կառույցի մեջ ուշադրության արժանի» (էջ 6): Ճշմարիտ ու բնութագրական դիտարկում է այս գնահատականը, որի հետ կրկնակի ես համաձայնվում, ժողովածուն ընթերցելուց հետո:

Ավելորդ չհամարելով մեր այս մտորումները, այժմ անդրադառնանք Համլետի պատմվածքներին՝ զետեղված «Հրեշտակին այցելիր գիշերով» ժողովածուում: Զ. Մարտիրոսյանը յուրաքանչյուր պատումին որպես նախաբան, բերում է պոետական մի հյուսվածք, իսկ եւ իսկ բնութագրական՝ հաջորդող պատմվածքի համար: «Գիշերերգ ինտիմ»

բանաստեղծությունը, հիրավի, բացում է դեպի «Նիրվանա» պատկերի խորքը տանող դռները: Իսկ այդ խորքում երկու կենդանի մարդիկ են՝ իրենց բնավորություններով, տարաբնույթ ճակատագրով, հաճույքի զգացողության աստվածային պարզելով, սակայն հասարակական կարծիքի զոհը դառնալու ավանդական շղթայի մեջ: Դրանք Վահեն ու Վիոլետն են: Վիոլետն ամուսին ունի, որն առևտրով է զբաղվում եւ գործով Երեւան է մեկնել: Վիոլետը իր հաճույքի դարպասները բաց՝ ընդունում է Վահեին: Իսկ Պատճա՞ռը: Վահեն իր արարքն արդարացնող զգացումը շողարծակում է խոհերի միջից. «Ինձ էիր սիրում, բայց նրա հետ ամուսնացար»:

Վահեի ու Վիոլետի հանդիպման պահը, նրանց սիրախաղի քնքշանքները, հոգեկան բավականության երանգավորումը ներկայացված են վարպետությամբ: Սակայն հեղինակի միտումն այդ չէ, որ բացահայտվում է զգացումների ամենաթեժ պահին, երբ պատմվածքի գագաթնակետային հյուսվածքում, ինչպես ներկայացնում է հեղինակը, Վահեի սիրտը հրաժարվում է տրոփելուց: Ահա, այստեղ է, որ գրողը բացում է խաղաքարտերը եւ ընթերցողին մղում դեպի իր հարցադրումի պատասխանը: Վահեն մահամերձ է, փրկել է պետք, իսկ Վիոլետը հարեւանների կարծիքների փշե կարծիքներին տեղի տալով, շտապ օգնություն չի կանչում: Հրեշտակի մատուցած նիրվանան օժվում է մահվան դեղինով: Հասարակական կարծիքից այլայլված, սիրած էակի հանդեպ անտարբեր դարձած Վիոլետը գործում

Ե՛ւ աններելի հանցանք՝ խաբելով Վահեին, որը նույնպես ընտանիք ուներ: Իսկ Վահե՞ն... Վահեն «...՞ հառաչեց: Երկվայրկյան անց աջ ձեռքով բռնեց կուրծքը: Ցավի՞ց, խաբվա՞ծ լինելուց, թե՞ հիասթափությունից էր, կասես մեկեն շիկացած երկաթ դրեցին կրծքին, սիրտն իսկույն բռունցքվեց ու... տղամարդը բղավոցով բարձից կտրվեց թափով, բայց չհասցրեց տեղը նստել, թուլացած ետ ընկավ բարձին, հը արեց ու մնաց այդպես: Հրեշտակը, որ կանգնած էր իր դիմաց, այդ ընթացքում արագորեն հեռացավ, հեռացավ, հեռացավ... Չէ, այդ ինքն էր սահուն հեռանում, իսկ հրեշտակի փոխարեն իր երկու դուստրերն էին վազում իր ետևից բղավելով հայրի՛կ, մի գնա՛: Սակայն ինքը չէր պատասխանում: Այդպես երեխաները ետ մնացին, ետ մնացին ու հալվեցին մշուշում: Իսկ մշուշը խտացավ, դարձավ մեզ...» (էջ 24-25):

Վիոլետի աղերսանքն անօգուտ էր: Նա ստիպված, խորհում է պարտակել տեղի ունեցածը: Գիշերվա կեսին Վահեի դիակը մի կերպ տանում է դուրս, իրենց տան նրբանցքից հեռու. նստեցնում Վահեի դին՝ ուսով պատին հենված: Ապա երերալով վերադառնում տուն, բայց ներս չի մտնում: Պատմվածքն ավարտվում է հոգեբանական բացահայտությամբ. «Հենց աստիճանների վրա ոտքերն անսպասելի ծալվեցին թուլացած, նա դանդաղ նստեց, գլուխը թեքեց բազրիքին ու... նվվաց: Նվվոց չէր, անտեր մնացած շունն է այդպես կաղկանծում»:

Գրողը, ինչպես տեսնում ենք, կատարվածի եզրակա-

ցությունը թողնում է ընթերցողին:

Հ.Մարտիրոսյանը արդի արձակի հոգեբանական ուղղությանն է պատկանում: Դա առավելագույնս նկատվում է նրա սույն ժողովածուում:

Համաշխարհային գրականության (իհարկե նաեւ հայ) մեջ հազիվ թե լինի մի գրող, որ իր գեղարվեստական որեւէ երկ նվիրած չլինի իր անդարձ մանկությանը: Ու շահել են նրանք, ովքեր իրենց իսկ մանկության պատկերմամբ կարողացել են ներկայացնել մի ողջ դարաշրջան, ովքեր իրենց մանկության տարիների նկարագրության միջոցով գալիքին են հանձնել մի ամբողջ սերնդի կենսագրություն: Այս առումով կարելի է ընդգծել հայ դասականներից Դ. Աղայանի, Հ. Թումանյանի, Ջ. Եսայանի, Գ. Մահարու, Ստ. Ջորյանի երկերը: Ռուսական գրականության մեջ հռչակված են Լեւ Տոլստոյի, Մ. Գորկու եռագրությունները: Մեր նորօրյա գրականությունն առանձնապես չի փայլում այս բնագավառում, կարծես՝ մոռացության է մատնվել այդ կարեւոր թեման:

Յուրաքանչյուր անգամ, երբ ընթերցում ես նման մի գործ, սիրտդ խանդաղատանքով է լցվում, մտքիդ թելերով հասնում ես քո երազ դարձած մանկության օրերին, կարոտում, ժպտում, արտասվում, հեզնում, ափսոսում, կրկին ու կրկին համոզվում, որ երազը կյանք է, կյանքը՝ երազ: Հոգուս մեղք արած չեմ լինի, եթե նշեմ, որ Հ.Մարտիրոսյանի «Եղերերգ շեփորի համար» պատմվածքը վերջին շրջա-

Մում ստեղծված մեր արծակի լավագույն էջերից է: Գտնված է առաջին հերթին վերնագիրը: Եղերերգը եւ շեփորը զուգորդված են՝ կորած անցյալը հնչեցնելու միտումով: Պատմվածքը՝ նվիրված հեղինակի ընկերների՝ Ռոբերտի, Յենրիկի, Լորիկի, Վալերիկի հիշատակին, հիրավի, եղերերգ է: Նրանում միահյուսված են ժպիտն ու արցունքը, իրականն ու տեսիլքը, տիրությունն ու անտիրությունը, որբությունն ու թողտվությունը, դառնությունն ու հույսը: Պատմվածքում հումորի եւ կարոտի երանգներով ներկայացված է գեղարվեստական լիարյուն կերպարների հասցված Գրենիկը, Կրոմվելը, Նիկոլը, Յիպպի կոչված քնարական հերոսը, որ դեպքերի պատմողն է (կոմպոզիցիոն միջոցն է), շիկահեր, տարիքն առած ռուս կինը... Նրանց միջոցով հեղինակը ներկայացնում է մի կողմից կյանքի ուղին ճիշտ ընտրած երիտասարդներին (Գրենիկ), մյուս կողմից անմեղության մեջ մոլորվածներին (Կրոմվելը), ապա՝ նրանց, ովքեր ինչ-որ թողտվությամբ դառնում են հանցագործներ (Նիկոլը), վերջապես այն պատամիներին, ում համար կյանքի ընթացքը ուրվագծվում է իշային ճակատագրով (Յիպպի): Բերենք պատմվածքի ավարտը. «Յենց այդ ժամանակ էլ, թեեւ առանց ակնոցի, մառախուղի մեջ նկատեցի շարժվող մի կետ: Սեւ կետը ընդառաջ էր գալիս: Նիկոլն էր: Քիչ անց սկսվեց ուրվագծվել: Գալիս է համաչափ քայլերով: Գիշերային լռության մեջ հստակորեն լսվում էր

Եկողի քայլերի ծայրը: Ձայնը ծանոթ էր եւ արծազանքում էր գլխիս մեջ... Չէ, եկողը Նիկոլը չէր, մառախուղի միջից ի վերջո դուրս եկավ մի էշ: Էշը գալիս էր ուղիղ դեպի ինձ՝ միապաղաղ զնգզնգացնելով ոտքերին հազցրած թիթեղյա դատարկ բանկաները: Այդ էշը իմ ճակատագիրն էր» (էջ 68):

Հ. Մարտիրոսյանը մարդու հոգեւոր ներքին աշխարհը ցուցադրելու անժխտելի կարողություն ունի: Նրա ստեղծագործական ձեռքբերումներում համարյա սխեմա չկա: Նա նախատիպը գեղարվեստական ճշմարտության է հասցնում պատումի անկաշկանդ հնարանքներով: Եղելությունը, որին դիմում է Համլետը, դառնում է պատկեր՝ կյանքի դրամայի առկայությամբ: Այս հնարանքը հստակ տեսնում ենք նաեւ «Դիլիժանս» պատմվածքում, որի ենթավերնագիրը անվանված է (Հանրակառք): Հոգեբանական-գեղարվեստական վերլուծություն կարելի է համարել այս գործը: Հնարավոր չէ այն կարդալիս ամբողջությամբ մտքով չփարվել պատանեկությանդ խենթություններին՝ համենված առաջին սիրո զգացումի բույրով, երազով, միամտությամբ, որ հաճախ ուղեկցվում է փորձառու անհատների հեզմանքով ու վիրավորանքով: Պատմվածքի կերպարները երեքն են՝ Թամարը, Հիպպին եւ Քեռին: Նրանում հմտորեն ներկայացված է միջավայրը՝ մշակույթի պալատը, որտեղ կյանքում առաջին անգամ Հիպպին զգում է կնոջ հպումը իր ուսերին՝ Թամարի երազաբեր շփումի օգնու-



թյամբ: Պատմվածքը շաղխված է երազի-հուսահատության-վրեժի զգացումներով: Քեռին, որ հասուն պատանուն խորհուրդ է տալիս հեռու մնալ Թամարից, ժամանակին սովորել դասերը, ինքն է Թամարի հետ սիրախաղերով զբաղվում՝ մոռացած ընտանիքը: Հիպպին լցվում է վրեժանդրությանը՝ քարեր նետելով ջարդոտում է Թամարի տան պատուհանները: Դժվար չէ նկատել, որ գրողը քննադատության կրակի տակ է առնում նրանց, ովքեր բարոյականություն են քարոզում՝ ոտնահարելով բարոյականության ամենասուրբ օրենքները:

Մարդկային ապրումների հմուտ վերարտադրման մի հրաշալի նատյուրմորտ է «Պասյանս՝ ծաղկեփնջով» հյուսվածքը: Այս գործում եւս Հ. Մարտիրոսյանը արձակագրի ինքնատիպ առանձնահատկությամբ է դրսևորում իրեն: Նա պատումի քնարականությունը հումորի հաճելի երանգով է օծում: Պատմվածքի գլխավոր հերոսը պատմողն է, որը ուսանող է, բայց նաեւ ծաղիկների ջերմոցների գիշերային պահակ է: Ռոմանտիկ բնավորությամբ երիտասարդը մեջբերում է Քամիլի Կորոյի «Դիանայի լոգանքը» կտավի պատմությունը, եւ ապա Դիանա անունով հրեշտականման կնոջ այցելությունը իրեն: Տեղի է ունենում կնոջ եւ ուսանողի հանդիպումը, սակայն առանց վերջինիս երազանքի իրականացման: Ի՞նչ էր պետք ուսանողի ցանկությունը շոշափելի դարձնելու համար՝ կոնյակ, այն էլ Վասպուրական: Իսկ ուսանողին որտեղի՞ց կոնյակ, այն էլ պահակակետում: Պատումը շարունակվում է հմայիչ տեսարանների նկարագ-

րությանը, որի համապատկերի վրա ընդգծվում է ուսանողի ավստասանքը՝ թե մեկ էլ ե՞րբ տեղի կունենա նրանց հանդիպումը: Պատմվածքն ընթերցողը պարզապես մխրճում է նկարագրության երանգների մեջ, մինչև վերջ սպասում հերոսի ապրումների զագաթնակետային հրաշագործությանը, սակայն մնում է ծիծաղի ալիքների մեջ՝ հենց իր՝ հերոսի հետ մեկտեղ: Համլետը հումորի նրբազգաց վարպետ է: Եվ զարմանալի չէ, քանզի Համլետ Մարտիրոսյանը նույն ինքը՝ հանրահայտ Իշխան Փարավոնիչն է:

Հ.Մարտիրոսյանի սույն ժողովածուի հիմնական առանցքը եւ ելակետը ժամանակակից երիտասարդության բարոյա-հոգեբանական կերտվածքի եւ վարքագծի պատկերումն է: Նրա պատմվածքներում իրականն ու տեսիլքայինը ներկայացվում են հոգեկան ապրումների համաձուլվածքով՝ առանց սքողումների: Այս առումով կարելի է ընդգծել «Եկլեկտիկ պատմություն» երկը: Կենտրոնում Սիլվա անունով հայ աղջիկն է եւ նրան հետապնդող Գեղամն ու Ստյոպան: Գրողը ռեալիստական երանգներով ներկայացնում է երիտասարդների արդեն սանձազերծության հասած բարքերը եւ վերաբերմունքը աղջկա հանդեպ, մյուս կողմից էլ հայ աղջկա վարքագիծը, որ անհարիր է հայոց նահապետական սրբագործված ու մինչեւ հիմա պահպանվող սովորությանը: Պարզապես աղջիկը չի պահպանել կուսութունը, ուստի դարձել է հեշտասեր: Սակայն հեղինակը այդ աղջկանը ներկայացնում է մի ուրիշ տեսանկյունից: Աղջիկը տրվում է համակրանքի զգացումով, միայն մեկին, ուս-

տի չի ընդունում բռնաբարությունը, որին դիմել է Ստյոպան: Գեղամի նախատինքն ընկերոջ հանդեպ տեղին ուսուր է, վերջապես գոյություն ունեն բարոյական օրենքներ, որոնք խախտելու դեպքում մարդ կարող է պատժվել: Աղջկա վերջնական հանդիպումը Գեղամի հետ պատմվածքում ներկայացվում է հանուն բարոյական մի այնպիսի գործոնի, որ երբեք չի կարելի ուռնահարել: Դա ասպետականությունն է, որ անհրաժեշտ է կանանց հետ ունեցած շփումներում:

Կյանքում Գեղամն առաջին անգամն էր գործ ունենում աղջկա հետ: Եվ երբ աղջիկն իմանում է այդ մասին, մոռանում է վիրավորանքը եւ խորհում այն մասին, որ Գեղամը կհիշի իրեն ամբողջ կյանքում: Գեղամի մտորումը եւս կենսական արժեք ունի: Այն իրական է, առիքնող, ընդունելի: Ահա այդ խոհը. «Հաճախ մտածում եմ՝ մեր կյանքում մենք ավելի շատ գտնո՞ւմ ենք, թե կորցնում: Երեւի գտնում ենք՝ կորցնելով, քանի որ տասնմեկ ընկալում տղամարդ ենք դառնում, իսկ տղամարդ մնալու համար մեզ պետք է լինում մաքառել ամբողջ կյանք» (էջ 130):

«Արեւամուտ, ծլլան թախիծ» - այսպես է վերնագրված Հ.Մարտիրոսյանի խոհափիլիսոփայական պատմվածքներից մեկը: Հասուն գրչի արդյունք է այն, որին նպաստել է գրողի դառնահամ կենսափորձը: Ով գտնում է, որ գրողի կենսագրությունը կարելուր չէ ստեղծագործական աշխատանքում, սխալվում է: Գերմանացի հանճարեղ Գյոթեն նշել է, որ իր սիրային երգերի մեջ ինքը կա, սակայն խոսում

Է ընթերցողի անունից: Այս երեւոյթը չի հնացել եւ չի կորցրել արժեքը: Ապացույցը հենց այս պատմվածքն է, որի մեջ կատարված փիլիսոփայական ընդհանրացումները տառապանքից ու երազից ծնված իմաստութիւններ են՝ սիրո եւ բաղձանքի, կյանքի եւ մահվան վերաբերյալ:

Վերը նշել ենք, որ Յամլետի որոշ վերնագրեր ուղղակի գյուտեր են: Այդ նկատվում է նաեւ այս դեպքում: Արեւամուտն ու ծլլան թախիծը այնպես կիպ են ձուլված միմյանց, որ մնանվում են մարմնի եւ հոգու միասնութեան:

Պատմվածքի կերպարները՝ Սոֆիին եւ Ստեփանը, հեղինակի մտորումների խոսուն կերտվածքներն են: Նրանք տարբեր անհատականութիւններ են, սակայն մույնն են ճակատագրերով: Երիտասարդութեան շեմին նրանք համտես են արել առաջին սիրո հաճույքը: Սակայն նրանց ճամփաները բաժանվել են կյանքի անարդարացի հարվածով: Տարիներ անց հանդիպում են նրանք. Ստեփանը՝ չորս գրքի հեղինակ՝ ընտանիքից բաժանված, իսկ քառասնամյա Սոֆին՝ երկու երեխաների մայր՝ ամուսնալուծված:

Նրանց հանդիպումը տեղի է ունենում գերեզմանոցի ճանապարհին: Անժամանակ կյանքին հրաժեշտ է տվել Սոֆիի եղբայրը՝ Լորիկը, որ միաժամանակ Ստեփանի մտերիմ ընկերն էր: Կարոտն ու կորուստների ակտուսանքը Ստեփանին եւ Սոֆիին իրական աշխարհի շոշափելի երանգներից տանում են դեպի հուշերի անմինջ խառնարանը: Ստեփանը Սոֆիին է նվիրում իր նոր գիրքը՝ «Արեւամուտ, ծլլան թախիծ» խորագրով:

Հասնելով գերեզմանոց, ծաղիկներ դնելով Լորիկի շիր-  
մաքարին, Ստեփանն ու Սոֆին սկսում են խորհել կյանքի  
անցողիկության, մարդկային ճակատագրերի անկայունու-  
թյան մասին: Երկխոսությունների ցավատանջ արդյուն-  
քում հնչում է Սոֆիի առաջարկը՝ ուղղված Ստեփանին.-  
«Տիրացիր ինձ... Սիրիր ինձ... խնդրում եմ, այնպես սիրիր,  
ինչպես կսիրեիր քսան տարեկանում»: Ստեփանի տարա-  
կուսանքին՝ «Բայց շատ չէ՞ ուշ». Սոֆին հայացքի փաղաք-  
շանքով շշմջում է. «Ուշը մահից հետո է»: Ի՞նչ է սա, ինչո՞վ  
բացատրել նման հանդիպման անսպասելիքը: Դրա պա-  
տասխանը հոգեբանական արժարժույթով տալիս է հեղի-  
նակը. «Բայց դա սեր չէր: Դա անցյալից մնացած հանդի-  
պումն էր, ուշացած վերադարձ: Դա չկայացած կյանքերի  
ապտակն էր ճակատագրին, դա վրեժխնդրություն է մահից,  
ոչնչացնող ծաղր էր մահին՝ հենց մահվան տիրույթում: Եվ  
վրեժխնդրության հաճույքից Սոֆին կյանքում առաջին ան-  
գամ ցմրուր տրվում էր երբեք չունեցած սիրո վայելքին, եւ  
կրքառատ ու ինքնամոռաց, զնալով ավելի ու ավելի բարձ-  
րածայն էր ճչում, որպեսզի իր երանության ճիչերը գերեզ-  
մանոցում շրջող ծանրականջ վիուկը լսի...

Արեգակը վաղուց էր մայր մտել, մինչդեռ վայրի մեղրի  
նման դառնահամ, ծլլում էր թախիծը...» (էջ 159-160):

Հ.Սարտիրոսյանի «Հրեշտակին այցելիր գիշերով» ժո-  
ղովածուն եզրափակվում է «Թերեզը, Տրեզորը եւ մահը»

պատմվածքով: Երկի չափածո նախաբանում ընդգծվում է մենության ծանրությունը, որի գոյությունը երջանկության ավերակների պարզեւած հեծծանքն է: Բուն պատմվածքը հայրերի եւ որդիների չխաթարված, սրտացավ, անմոռաց փոխհարաբերությունն է, որի համապատկերի վրա մի կողմից ընդգծվում է որբության հոգեցունց ու սրտախոց հարվածները, մյուս կողմից կյանքի բուժող ավիշն ու առեղծվածների ապրեցնող բողբոջունը:

Պատմվածքի սկզբից մինչեւ վերջը իշխում է էպիկականի եւ քնարականի թախծոտ ու կենսաբույր զգացումը: Ուզածդ ժանրային փայլուն առանձնահատկությունը կարող ես նկատել նրանում: Յեքիա՞թ է, թե զրույց, բալլա՞դ է, թե լեզենդ, արծակ բանաստեղծություն՞ է, թե՞ կենսաթրթիռ էսսե: Կոնկրետ՝ ամեն ինչ է, որ խոսում է հեղինակի իմաստասիրության, փորձառության, հոգեբանական երեւէջների ամենատեսության, պատմողի աստվածանվեր շնորհքի մասին: Նրանում բնության եւ առարկաների պայմանական նկարագրությունները այնպես են ձուլված մարդկային ճակատագրերի բացահայտմանը, որ դժվարանում ես արտածել, թե որն է որից սկսում: Այստեղ մնում է ընդգծել, որ բնությունն ու մարդը դարձել են ձուլածո ճակատագիր, տվյալ դեպքում հայի հնաբույր, տառապյալ, հուսավառ բախտ եւ ընթացք:

Կերպավորման արվեստի բազմերանգության սահմաններում հեղինակն ուղղակի կերտել է կնոջ մահից հետո

իր զավակներին փայփայող, մանկատանը մեծացած հոր Անդրանիկի, նախ մորը, ապա հորը կորցրած, տառապանքի մեջ առասպելական ուժ ձեռք բերած որդու, ապա վերջինիցս տաս տարով մեծ, կենասասեր ու սիրո ջերմությամբ նրան հասուն դարձնող Թերեզի կերպարները:

Պատմվածքում առկա են գեղարվեստական խոսքին հատուկ մի շարք գործոններ, որոնց շնորհիվ հեղինակը հասել է նպատակին: Տեղին են օգտագործված ագռավի, Տրեգոր անվամբ շան, մատաղացու գառան պայմանական պատկերները: Ծիծաղի եւ կարոտի արցունքներ են քամում պատանիներ Գեւորգի, Սաշիկի չարաճճիության հասնող արարքները, ֆերմայի շրջակայքի եղեգնուտները հրդեհի մատնելը, ֆերմայի վարիչի սպառնալիքները եւ որբերեխաների հանդեպ խեղճանալը, հարեւանների սրտացավությունն ու իմաստուն խորհուրդները, տղայի մշտաբուն հուշերը՝ նախ երազ դարձած մոր եւ ապա հոր մասին: Բերենք մի հուշ-պատկեր: Տղան հիշում է, թե ոնց «Մայրը գալիս էր արելի հողմից: Աշխատանքից էր գալիս: Այնինչ տղային թվում էր, թե գալիս էր հեքիաթից: Մոր շուրջը առատ լույս էր, հագինը ծաղկավոր խշխշան, կարճթեւ շրջագգեստ, վրան՝ հազար մանուշակ: Շուրջ բոլորը ձվածեղ լույս էր, ներսում՝ հազար մանուշակ: Հեքիաթ չէր, ինչ էր...» (էջ 170): Մորից միայն նման հուշեր են մնացել, ինչպես ընդգծվում է հեղինակի կողմից, «Մոր ժպիտը հիմա ճաշատենյակի պատից կախված շրջանակի մեջ էր»:

Հմուտ գեղագետի ստեղծած մի հրաշալի պատկեր է

պատմվածքի ավարտը. «Տղան դեմքը խրած բարձի մեջ, երեխայի պես լաց էր լինում: Թերեզին ծանոթ լաց էր, որովհետև վերջացել էր իր պատանեկությունը, լաց էր լինում, որովհետև իր բոլոր բջիջներով հիմա էր հասկանում ինչ է մահը, լաց էր լինում, քանի որ այսուհետև ստիպված էր երկրորդ կյանքն ապրելու՝ առանց ծնողների: Լաց էր լինում, որովհետև հոր վրա լաց չէր եղել, ու հիմա լաց է լինում, որովհետև հոգին փրքքում էր մեղքի զգացումը, քիչ առաջ կին անունով աշխարհամաս էր հայտնաբերել, սակայն հոր կորստի գնով...» (էջ 219-220):

Յ. Մարտիրոսյանի «Յրեշտակին այցելիդ գիշերով» գիրքը ժամանակակից հայ արձակի նվաճումներից է, որն ունենալու է ե՛լ իր խստապահանջ ընթերցողի, ե՛լ գրաքննադատի սրտաբուխ գնահատականը:

\*\*\*

Մինչ գրականության ընթացքին անհաղորդ մարդիկ աղմկում են հայոց արդի գրականության լճացման մասին, աստվածաշնորհ գրողները հարազատ ժողովրդի կրած տառապանքներից ու ակնկալիքներից հյուսում են երկեր, որոնցում արտացոլվում են մեր կյանքը՝ թեմատիկ-գաղափարական խորքով ու գեղարվեստական ինքնատիպ երանգներով, երկեր, որ կարող են դիմանալ ժամանակի դաժան քննությանը, հաստատել ժանրային բազմազանու-



թյան առկայությունն ու զարգացման միտումները:

Առավել եւս, երբ խոսքը վերաբերում է Արցախյան ազգային-ազատագրական պայքարի գեղարվեստական պատկերմանը, դարձյալ հնչում են իրողությանն անտեղյակների կարծիքներ՝ իբր, թե չեն ստեղծվում արժանի գործեր: Վերջին տարիների ընթացքում Արցախում լույս աշխարհ են եկել առանձին ժողովածուներ եւ երկեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ տեսական ընդհանրացումների՝ թե՛ պոեզիայի եւ թե՛ արձակի առումներով: Որպես ասվածի ապացույց, կարող ենք մատնացույց անել Մարտիրոս Ռբնի «Դժոխքից եկածին հարցեր չեն տալիս» վեպը:

Հայ գրականությանը խորթ չեն դժոխային իրականության արտացոլման կոմպոզիցիոն եւ սյուժետային բազմազան ձևերը: Վերհիշենք Ե. Չարենցի «Դանթեական առասպելն» ու «Մահվան տեսիլը», Հ. Շիրազի «Հայոց դանթեականը», Վ. Դավթյանի «Ռեքվիեմը»՝ Հայոց մեծ եղեռնի թեմատիկայով, Վ. Հակոբյանի «Գողգոթան», Ռ. Դավոյանի, Ն. Ավագյանի «Ռեքվիեմները» Արցախյան գոյամարտի մասին: Մ. Ռբնի վեպը գալիս է լրացնելու թվարկած շարքը:

Հետաքրքիր հնարանքների, պատկերավորության բազմազան միջոցների առկայությամբ վեպը հաստատում է Մարտիրոս Ռբնի պատմելու վարպետությունը, խոհակա-նությունը, բառապաշարի հարստությունը, որոնցով էլ պայմանավորվում է սեփական ձեռագիրը:

Ակադեմիկոս Ս. Սարինյանը ժամանակակից վեպի վերաբերյալ իր տեսական հոդվածում ընդհանրացրել է. «Ժանրի զարգացումը կարծես հակում ունի դեպի ինտելեկտուալ-հոգեբանական վեպը, որը նման է մենախոսության եւ եսակենտրոն հերոսի ինքնավերլուծության» (*«Գրական թերթ»*, 2005, թիվ 1): Մարտիրոս Որբնի վեպը գալիս է հաստատելու անվանի գրականագետի դիտարկումը:

Սյուժեի կառուցվածքով վեպը առանձին բարդություն չունի: Գլխավոր հերոսը հեղինակն է. նա է պատմում իր տեսածի, ապրածի, ցավի եւ հույսի մասին: Սակայն հեղինակի «ես»-ը խտացնում եւ ներկայացնում է արցախցիների կրած տառապանքը նորօրյա գոյամարտում՝ միաժամանակ բացահայտելով նրանց ներաշխարհի գեղեցկությունն ու վեհությունը, զոհաբերությունից ճառագող լույսը՝ միտված ազատ եւ անկախ ապրելու ամենասրբազան բաղձանքին: Հայտնի է, որ գեղարվեստական երկի հաջողության գրավականը ճշմարտացիության մեջ է: Մարտիրոս Որբնը, գիտակցելով այս պահանջը, չի սքողել իրականությունը. դրանով էլ պայմանավորված է պատումի անմիջականությունն ու ջերմությունը, որի հետեւանքով ծնվում է ընթերցողի հավատը գրողի հանդեպ:

Մարտիրոս Որբնի խոսքը կոնկրետ է՝ ունի իր նշանակետը: Գրողը չի հաշտվում պատերազմի հետ, որի ճիրաններում մարդիկ ավելի մոլեգին ու դաժանաբար են սպանում,

բռնանում, քանդում ու ավերում այն ամենը, ինչը գեղեցիկ է ու կատարյալ: Վեպի նախամուտքում հեղինակը գրում է, որ նման մտորումներից է ծնվել ներկա ստեղծագործությունը, որ գրքում ընթերցողի ապրած ժամանակաշրջանն է՝ ծանոթ իրադարձություններով: Բայց պատերազմը եղավ ազերի-թուրքերի պարտադրմամբ: Արցախն ու հայությունը պատասխանեցին նրանց, եւ պատերազմը վերածվեց ազգային-ազատագրական գոյամարտի: Հեղինակն իրեն համարում է ժամանակագիր՝ ճշմարիտ եւ անկեղծ: Դեռ ավելին. «Փորձ եմ արել ժամանակաշրջանի նկարագիրը տալու, եւ կարծում եմ, ավելին է, քան ժամանակագրությունը: Սա գեղարվեստական ստեղծագործություն է մեր եւ մեր ապրած ժամանակի մասին» (էջ 6):

Քիչ է ասել՝ Մարտիրոս Ռբնին հաջողվել է իրականացնել իր խոստումը: Նա կրկին հավատարիմ է մնացել այն ճշմարտությանը, որ գրականությունը կյանքի կախարդական հայելին է՝ որպես պատկերավոր մտածողություն, որ այն գեղարվեստական երկն է առինքնող, որը կտրված չէ կյանքից եւ իրականությունից:

«Դժոխքից եկածին հարցեր չեն տալիս» վեպում ներկայացված է Արցախը՝ մայրաքաղաքի մաքառող տագնապներով, թեժ ռազմաճակատով, փրկարար նկուղներով, մարդկային փոխհարաբերություններով, ընտանեկան ճակատագրերով, հայոց նահապետական կյանքի բարեմասնություններով եւ աղավաղումներով, սոցիալական միջա-

վայրի բարդացմամբ: Կարելորն այն է, որ այս ամենի պատկերման խաչներուկներուն ներկայացված է արցախցու հոգեւոր կեցութիւնը: Վեպում իրականը եւ երեւակայականը ներկայացվում է միաձուլ: Իրականի համապատկերում կերպարը հառնում է հոգեւոր աշխարհի թեւաբացումով՝ հաստատելով հեղինակի կենսափիլիսոփայութիւնը:

Հաստատումի եւ բացառումի փիլիսոփայութեան ակունքը վեպում պատերազմն է: Պատերազմն է պատճառը, որ մարդ 19 օր շարունակ փորձում է Երեւանից ժամանել Ստեփանակերտ, սակայն չի ստացվում. «ՅԱԿ-40»-ը արգելվել է, ազերիները խփել են Երեւանից Ստեփանակերտ ժամանող մարդատար ինքնաթիռը, ԼՂ կազմկոմիտեի նախագահ, Ադրբեջանի կամակատար, թուրքամետ Պոլյանիչկոն տասնապատիկ կրճատել է ուղղաթիռների թռիչքը, Խոջալուի օդանավակայանում իշխում են ազերի հրոսակները: Հենց այստեղից էլ բացվում են դժոխքի դռները արցախցիների առջեւ:

Մարտիրոս Որնի պատկերած դժոխքը կրոնական-առասպելական պարունակների հետ կապ չունի: Արցախցու մեղքով չի դժոխքի մմանվում Արցախը, որի պարունակներով անցնում է հեղինակ-հերոսը, որ շոշափելի պատկերներով ընթերցողին հիշեցնում է իր իսկ կյանքը: Ով մասնակիցն ու ականատեսն է եղել Արցախյան գոյամարտի, նա կարող է ձեռքը դնել ցաված սրտին եւ ասել. «Այս վեպի գլխավոր անձը ես եմ»: Ով գոնե մեկ անգամ փորձել է մեկնել Երեւան կամ Երեւանից վերադառնալ, վեպը կարդալուց

կարող է վերհիշել մղձավանջը, ծեծը, ջարդը, որի մասին պատմում է հեղինակը, ներկայացնում իր գլխով անցածը, կապանցի հայերեն խոսող թուրքի հետ զրույցը, վարդենիսցի թուրքի գազանությունը, նրա սպառնալիքները՝ նենգամիտ ու հերյուրող. «Վարդենիսում տունս վառեցի՞ք... արի... Միշտ ես մոմենտն եմ երազել... քեզ մման մեկը ձեռքս ընկնի: Հիմա ես քու մերը... Դու իմանաս...» (էջ 38): Եվ սկսվում է ջարդը: Վարդենիսցի թուրքի այս արարքը հիշեցնում է Բուդապեշտում տեղի ունեցածը, երբ սպայի հավակնություն ունեցող թուրքը կացնահարեց հայ սպա Գուրգեն Մարգարյանին՝ հենց նրա համար, որ հայ է:

Վեպի երկրորդ պարունակում ներկայացված են Արցախից Կապան մեկնելու դժվարությունները: Այդ օրերին օդային կապը կատարվում էր ուղղաթիռների միջոցով, որ թռչում էին ամենատարբեր շրջաններ եւ յուրաքանչյուր թռիչք մարդկանց տեղափոխում էր որպես մահապարտների: Վտանգը մեծ էր: Սրտածնլիկ մի տեսարան է վեպում նկարագրված այն դեպքը, երբ հեղինակ-հերոսը օգնում է անծանոթ դեռատի մի կնոջ՝ նորածնի եւ վեցամյա որդու՝ Գեւորգի հետ: Մարտակերտի անտառամիջյան ճանապարհով, ավտոմեքենայով նրանց ուղարկելուց հետո լսվում է, որ թուրքերը շուրջկալ են արել ու գերել: Հեղինակը ցավով մտորում է. «Ուղեղս սառչում է այն մտքից, որ հիմա, ահա այն անտառում, փոքրիկ Գեւորգն ու նրա մայրը փորձանքի մեջ են: Գուցե սպանված են արդեն: Ես իմ ձեռքով ճանապարհեցի մահվան» (էջ 57): Իսկ երբ իմանում է տեղի ունե-

ցած ողբերգության մասին, հայրաբար մղկտում է. «Վեց գա-  
րուն ապրած Գեւորզը ի՞նչ հասկացավ այս աշխարհից, ո՞րն  
է նրա աշխարհ գալու նպատակը, եթե պիտի անհեթեթ կեր-  
պով մեռներ: Մի՞թե այն, որ ինչ-որ թուրքեր, որոնք մինչ այդ  
չգիտեին էլ Գեւորզի գոյության մասին, սպանեն հայ լինելու  
համար» (էջ 61):

Մարտակերտի շրջանի Վերին Հռոաթաղ, Դրմբոն, Չլդ-  
րան գյուղերի պատերազմական դրության նկարագրու-  
թյունը, չլդրանցի ծերունու «օջախ ես եկել, յանի առանց  
հաց ուտելու ո՞նց կլինի» հրավերը մի կողմից պատկերում  
է Արցախի ծանր վիճակը, մյուս կողմից՝ ընդգծում արցախ-  
ցու հազարամյա բարի բնավորության անփոփոխ ընթաց-  
քը, մարդասիրությունն ու անկոտրում կամքը:

Պարունակից պարունակ հեղինակը պատմում է իր  
վարած պաշտոնների եւ կատարած աշխատատեղերի մա-  
սին: Որպես գրադարանի տնօրեն՝ նորաստեղծ լրատվա-  
կան ծառայության աշխատակից, ուսուցիչ, նրա տեսա-  
դաշտում պատերազմական տարիների ծանր իրադարձու-  
թյուններն են, բարդ ու տազնապալից վիճակները, մարդ-  
կանց կրած ցավն ու վիշտը, լավատեսությունը, նոր ժամա-  
նակների հասցրած հարվածները ոչ միայն նյութական, այ-  
լեւ բարոյական ներաշխարհին:

Հրաժարվելով խորհրդային կացութաձեւից, իրեն ա-  
պահովված ու պաշտպանված զգացող քաղաքացին այժմ  
մտել է նոր հասարակարգի ոլորան, ուր ինքն անորոշ որո-  
նումների մեջ է: Մյուս կողմից էլ արցախյան գոյամարտն է,

որ ազատ ապրելու տենչը հերոսացնում է երկրի տիրոջը, սակայն ամեն քայլափոխի հանդիպում է հարեւան ազերի-թուրքի կատաղությանն ու հրեշավոր ոտնձգություններին: Ահա պատմական այն ժամանակաշրջանը, որ սկսվում է եզրափակվում են՝ 1988-1994 թվերով: Հեղինակ-հերոսն ունի ցաված սիրտ, սակայն հեռու է անկման հոգեբանությունից: Ընդհակառակը՝ նա խարազանում է նրանց, ովքեր արագ բորբոսնում են ժամանակի ընծեռած տհաճ նամությունից՝ դրանք լինեն բարձր թե ցածր պաշտոնյաներ, բարեկամներ թե հարեւաններ, ծնողներ թե զավակներ: Գրքի հաջողություններից մեկն էլ հենց հեղինակի գեղագիտական իդեալի վեհությունն է, որ հաստատում է դրականը, ժխտում բացասականը: Եթե լուսավոր դիտակետից հեղինակը հաստատում է, որ «վշտի պահին մարդիկ ազնվանում են», դառնության պահին էլ ճշում է. «Պատերազմի ժամանակ ծնեռը դաժան է լինում: Պատերազմը մարդու մեջ շատ եղկելի կողմերի հետ նաեւ անպատժելիության պատրանք է ծնում»:

Վեպի սկզբից մինչեւ վերջը պատերազմող Արցախը եւ արցախցիները չեն վրիպել գրողի ուշադրությունից: Գիշտ է, գրքում կոմպոզիցիոն ձեւը հեղինակային խոսքն է, սակայն հանդես են գալիս նաեւ գործող անձեր, որոնց դիմանկարներն ստեղծված են հոգեբանության նուրբ իմացությամբ: Այդ պատճառով բնութագրական են ԼՂ կազմկոմիտեի նախագահ Պոլյանիչկոյի, Խոջալուի օդանավակայանի պետ Հաջիեւի, վարդենիսցի թուրքի դիմանկարները՝

անմարդկային կեցվածքով ու զազանային էությամբ: Հոգեբան գրողի նրբանկատությամբ են ստեղծված Բելայի եւ Դոնարայի, չլորանցի ծերունու եւ Սիմոնի, Էմմայի եւ Սոնայի, Սիրայի եւ Սիրանի, Եպրաքսիայի եւ Միխայելի, Բարխուդարյանի եւ Դանիելի, Յաշայի եւ Մադաթի, Արուսյակ մայրիկի եւ նրա դուստր Սեդայի դիմանկարները:

Մարտիրոս Ոբնի հուշամատյանը հարուստ է բանաստեղծական երանգներով, թարմ պատկերներով: Նրանում հանդիպում ենք պատկերի տարբեր տեսակների: Պատկեր-կերպարին զուգահեռ խոսում են կոլեկտիվ-պատկերը, պատկեր-գործողությունը, պատկեր-ապրումը, բնանկարը, որոնց օգնությամբ հեղինակը հասնում է համոզիչ հոգեվերլուծության: Վեպի լեզուն համեմված է ժողովրդական խոսքի իմացությամբ: Հեղինակը ժողովրդական բառուբանը հասցնում է գրական լեզվի գանձարանին: Օրինակներ՝ «Սիրտս ճկռում է բեռան տակ ու ցավից բառաչում», «Լռությունը լռության պոչից բռնած սկսեց երկարել» եւ այլն: Համեմատություններն ստեղծված են պատերազմական իրավիճակների հաշվառումով: Կարդում ենք. «Քաղաքի մերձակայքում գտնվող անտառակը վերացավ այնքան արագ, որքան վարսավիրի ձեռքի տակ գլուխ է ճաղատանում», «Ուղղաթիռը բառացիորեն ցատկում է մի կողմ՝ մորեխի նման»: Բավականին բարբառային բառեր են գրականացված: Դրանցից են. քամաթակ, մթնժող, ծղան, ձորապռունկ, իծահագ, նամահոտ, թառվեթառ, սնկսնկալ, ճամփատակ, սրտաճաք, պուճախ, աչքակապուկ, տնազա-



տեղ, պտռել, քացահարել եւ այլն:

«Դժոխքից եկածին հարցեր չեն տալիս» վեպը հայրենասիրական զարկերակ ունի, սակայն խոսքը ճչան չէ: Ցույց է տրված, թե ինչպես է ժողովուրդը զավակների կյանքի գնով նվաճում ազատ եւ անկախ ապրելու իրավունքը՝ հետեւում թողնելով դժոխային մղձավանջը, իր հերոսական պատմության էջերում գրելով հաղթանակների կենսառաք ու պատվաբեր շարքը՝ Արաքսից մինչեւ Օմար: Այն հայոց արդի արձակի մնայուն արժեքներից է, որին ընթերցողները երկար են սպասում:

2007 թ.

## ՄԱՐՍԵԼ ԶԱՅԿ (ՄԱՐՍԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ)



Հայ մանկական գրականությունը հարուստ ավանդույթներով հարյուրամյակներ շարունակ պատվով է կատարել իր պատմական առաքելությունը: Բազմաթիվ սերունդներ են դաստիարակվել Խ. Աբովյանի, Ղ.Աղայանի, Զ.Թումանյանի, Ա. Խնկոյանի երկերով: Մեր այդ հռչակավոր արվեստագետների ավանդած մարդասիրական-դեմոկրատական սկզբունքները շարունակել են նորագույն շրջանի ականավոր գրողները, որոնք մտահոգված են եղել փոքրերի համար ստեղծվող մեծ գրականության հիմնախնդիրներով: Եվ պետք է նշել, որ բոլոր մեծությունները, մանկական երկեր ստեղծելով հանդերձ, ինչ-որ չափով դժգոհ են եղել մանկագրության ընթացքից, որովհետև շատ քչերն են իրենց ստեղծագործական տաղանդը նվիրել այդ հույժ կարեւոր գործին: Մի առիթով Զ. Թումանյանը գրել է. «Կարծում են հեշտ ու հանաք բան է մանկական գրվածք գրելը, դա ամենադժվար գործն է, երեխայի հոգու հետ գործ ունես, պարզ ու հասկանալի պիտի տալ, զգույշ ու նուրբ պիտի մոտենալ, անպայման ճաշակով պիտի հրատարակել»: Իսկ Ե.Չարենցը ընդգծել է. «Ինքս ոչինչ չեմ գրել եւ ոչինչ չեմ գրում մանուկների համար, որովհետև դա համարում եմ լուրջ գործ, որ պահանջում է հատուկ աշխատանք»:

ել ժամանակ: Եթե երբեւիցե ազատ լինեն ընթացիկ աշխատանքներից՝ կփորձեն գրել»: Ականավոր բանաստեղծը միաժամանակ խորհուրդ է տվել մանկական գրքերը հրատարակել նկարազարդ, հղկված ու հստակ լեզվով, անխալ, քերականական օրենքներին հարազատ:

Ծիշտ է, նորագույն շրջանում մի շարք արձակագիրներ ու բանաստեղծներ իրենց կարողություններն անվերապահ նվիրել են մանկագրության հարստացմանն ու զարգացմանը, միեւնույն է, ժամանակի հետ անընդմեջ զգացվել է մանկական հետաքրքիր երկերի պահանջը: Նույնիսկ այն դեպքում, երբ առկա է Վ. Անանյանի, Խ. Գյուլնազարյանի, Ռ. Դարբինյանի, Վ. Տալյանի, Գ. Գաբրիելյանի, Ս. Մուրադյանի, Էդ. Միլիտոնյանի, Յու. Սահակյանի եւ այլոց մանկական ստեղծագործությունների գունագեղ փունջը, դարձյալ մանկապատանեկան երկերի պակասն զգացվում է: Ուստի՝ ուրախանալու առիթ են պատճառում այն գրողները, ովքեր իրենց ուժերը լրիվ ընծայում են այդ պատվաբեր գործին: Եվ կրկնակի հաճելի է, երբ հայ մանկագիրների ներկա գործընթացին մասնակցում են նաեւ Արցախ աշխարհի գրողները: Գ. Գաբրիելյանի մանկական գրքերին զուգահեռ՝ փոքրերի համար առանձին ժողովածուներ են հրատարակել Վ. Հակոբյանը, Յ. Բեգլարյանը, Ս. Խանյանը, Դ. Միքայելյանը, Կ. Գաբրիելյանը, Վ. Ստեփանյանը եւ ուրիշներ:

Արցախի մանկագիրների շարքում ընդգծվում է Մարսել Հայկի (Մարսել Պետրոսյան) անունը, որ ամբողջությամբ զբաղվում է մանկագրությամբ, գրելով դպրոցական կրտսեր

Եւ բարձր տարիքի երեխաների համար: Հայտնի են նրա «Կախարդական ակնոցները» (1992), «Միջօրե» (2002), «Հնարամիտ աստղագուշակը» (2003) գրքերը, ինչպես նաեւ «Առածանի» հավաքածուն:

Մ.Հայկը որպէս մանկագիր՝ մի կողմից հավատարիմ է թումանյանական պատմելաոճին, մյուս կողմից սնունդ է առնում ժողովրդական ստեղծագործությունից՝ խոսքը համեմելով ժողովրդի կենսափորձից ծնված խորհուրդներով: Նրան հաջողվում է ստեղծել ուշագրավ սյուժեներ, բնական ու կենդանի գործողություններ եւ պատկերներ, պատմողական սահուն շեշտերով ընթերցողին հրամցնել իր գաղափարներն ու գեղարվեստական իդեալը: Մտահղացումը ներկայացնում է ռեալիստական գույներով եւ այլաբանական միջոցներով: Կոմպոզիցիոն տարբեր ձեւերի օգտագործումը հնարավորություն է ընձեռում նրան պատումը հրամցնել առանց ձանձրացնող քարոզի: «Կախարդական ակնոցները» գրքի մի շարք պատմվածքներ դրա վկայություններից են: Նրանցում շոշափված թեմաները գեղարվեստական մարմնավորում են ստանում տարբեր հնարանքների շրջանակներում: Հերոսները հիմնականում երեխաներ են՝ շրջապատված հարազատներով: Նպատակին հասնելու համար գրողը մանուկների հետ խոսում է մտերմորեն, նրանց մասնակից է դարձնում զրույցներին, իրադարձություններին, ուշադրության կենտրոնում պահելով մանուկների խոսքի կենդանի շունչը, տարիքային առանձնահատկություններից բխող դատողություններն ու հետաքրք-

րությունները: Որպես հաջողված օրինակ, տեղին է բերել «Վարուժանը, տատիկը եւ պատերազմը» պատմվածքը:

Ինչպես մեր բոլոր գրողները, Մ. Հայկը եւս դիմել է Հայրենական մեծ պատերազմի թեմային՝ նպատակ ունենալով ցույց տալ ժողովրդի կրած տառապանքն ու անանցանելի ցավը: Որպես կերպարներ, հանդես են բերված տատն ու թոռը: «Փոքրիկ Վարուժանը աչք է բացել, իր տատիկին տեսել է սեւի մեջ: Ինչ գույնի զգեստ ասես, որ չէր հագնում մայրիկը, ինքը նույնպես, բայց տատիկը միշտ սեւ էր հագնում: Սկզբում Վարուժանին թվացել է՝ աշխարհի բոլոր տատիկներն էլ անպայման սեւ պիտի հագնեն, իսկ երբ նկատել է, որ ուրիշների տատիկները նույնիսկ ծաղկավոր զգեստներ են հագնում, շատ է զարմացել»: Այսպես սկսելով պատմվածքը, արձակագիրը մանկան հոգեբանության շերտերը բացելով՝ իր հերոսին է հասցնում սիրելի տատիկի սեւ հագնելու պատճառը: Երեխան իմանում է, որ «ինքը հորեղբայր Վարդան է ունեցել, կռվել է ֆաշիստների դեմ ու զոհվել»: Սակայն, պատումը դրանով չի ավարտվում: Գրողը Վարուժանի հոգու ամբիժ աշխարհում նկատում է ցավի եւ սիրո մի նոր զգացում՝ տառապած տատիկի հանդեպ: Պատմվածքում օգտագործված է ժողովրդական մի լեզենդ՝ կաջադակի մասին: Այս թռչունը համարվում է լրաբեր: Թոռը հետաքրքրվում է, թե ինչու տատիկը իրեն դպրոց ճանապարհելիս, հացի կտորը միշտ դնում է ցանկապատին: Տատի պատմածից պարզ է դառնում կաջադակի հետ կապված լեզենդը: Տատիկը հացը դրել է պարսպին, որ կաջադակը

Իհասցնի կռվի դաշտ, գուցե որդին սոված է: Փոթորկվում է փոքրիկ Վարուժանի նուրբ հուզաշխարհը՝ լի բարությանը դեպի տատիկը եւ երախտագիտությանը՝ զոհված հորեղբոր նկատմամբ: Վարուժանը տատիկից թաքուն ոչ թե հացի մի կտոր է դնում ցանկապատին, այլ մի ամբողջ թոնրահաց, դիմելով այսպես. «Տատի, ամեն անգամ դու մի փոքր կտոր ես դնում ցանկապատին: Իսկ կաչաղակը չի իմանում՝ ինքն ուտի՞, թե՞ տանի... Ես էլ որոշեցի մի ամբողջ թոնրահաց տալ նրան: Թող ուտի կշտանա, մնացածն էլ տանի... Վարդան հորեղբորը»:

Մ. Հայկի պատումները անբռնազբոս ու գրավիչ են: Նա լավ է հասկանում մանկան հոգեբանությունը: Բերենք «Հայրիկի հրաշքը» պատմվածքը: Ներկայացվում է մի մեծ ընտանիքի առօրյա կյանքը, որի առանցքում փոքրիկն է: Նա թեկուզ անհանգստացնում է տան անդամներին, սակայն՝ միաժամանակ արժանանում է բոլորի համակրանքին: Փոքրիկ Միհրանիկը, պապիկից լսելով շան եւ կատվի մասին լեգենդը, ստիպում է, որ հարազատները Բողարին նկարեն գլխաբաց: Իսկ երբ դիմում է հորը, պահանջում է, որ «փիսոն Բողարի փափախը բերի, ցուրտ է, կմրսի»:

Պատմվածքները ստեղծելիս Մ. Հայկը դիմում է կոմպոզիցիոն տարբեր ձևերի: Մի շարք պատմվածքներում դեպքերի, իրադարձությունների մասին պատմում է հեղինակը: Ավելի շատ խոսքը տալիս է կենդանական աշխարհի ներկայացուցիչներին՝ անձնավորելով նրանց: Իսկ հայտնի է, որ այլաբանական պատումները հեշտ են յուրացնում եւ ըն-

կալում երեխաները: Այս եղանակներով գրողը արժարժուն է տարբեր հարցեր, որոնք ուղղված են ապագա հասուն քաղաքացիների բնավորության ձևավորմանը: Փառաբանվում է բարությունը («Ճնճղուկն ու սարդը»), հոգատարությունը բնության արարածների հանդեպ («Դեղնակտուց թռչնակները», «Վիրավոր ճնճղուկը»), հավատարմությունը («Հավատարիմ շունը»), ազնվությունը («Դերենիկը եւ կրկեսի փիղը»): Մի շարք գործերում խարազանվում են խորամանկությունը, խաբեությունը, դաժանությունը, անբանությունը («Աղվեսի դասը», «Երբ աղվեսն է հարեւանը», «Ախ, դու կկու»): Մանկագիրը հմտորեն օգտվում է ժողովրդական գրույցներից, հեքիաթներից՝ օրինակ բերելով ժողովրդի կամքի ուժը, սրամտությունը, աշխատասիրությունը, վճռականությունը («Վանականը, սատանան եւ Պըլը Պուղին», «Պըլը Պուղին ու հարուստները», «Արքայի գավազանը»):

Մ.Հայկի լավագույն գործերից մեկը «Աստղագուշակը» պատմվածքն է: Դիմելով պատմական խոր անցյալին, գրողը արժարժուն է հայրենասիրության եւ հերոսության գաղափարները: Ասորեստանի թագավորը Հայաստանի դեմ սկսվող մարտից առաջ հրամայում է աշխարհի ամենափմաստուն աստղագուշակին՝ հայտնելու, թե ո՞ւմ օգտին է ավարտվելու վերահաս ճակատամարտը: Արցախից գերեվարված այդ աստղագուշակը հայտնում է, որ պատերազմը շահելու են արմանները, որովհետեւ այս անգամ նրա դեմ

Մնարտնչելու են Հայոց արեւելից կողմաց քաջերը՝ Արցախի հայերը: Թագավորը հոխորտում է, որ ինքն այդպես էլ գիտեր, որ արցախցին պետք է գուշակեր իր հայրենակիցների օգտին, եւ եթե այդ պատերազմում հաղթեն արմանները, գուշակին զոհելու է ասորաց աստվածներին:

Տեղի է ունենում պատերազմը, գլխովին ջախջախվում է ասորական բանակը, իսկ թագավորը հազիվ փրկվում է: Պարտված տիրակալը դիմում է աստղագուշակին.

- Ասա ինձ, իմաստուն ծերունի, արմանները մեզանից շատ թույլ են, բայց հաղթեցին: Ինչո՞ւ այդպես եղավ:

- Երբ արմանները միավորվում են, աստվածներն անգամ չեն կարող խաթարել նրանց կամքը:

- Դու ճշմարիտ ես, արմաններին անհնար է հաղթել, եթե նրանք միասնական են:

Գրողի գեղագիտական իդեալն հաստատող այս գրույցով ավարտվում է պատմվածքը, որով էլ ընդգծվում է պատումի ճանաչողական եւ դաստիարակչական նշանակությունը:

Մ.Հայկի երկրորդ՝ «Միջօրե» ժողովածուն նախատեսված է դպրոցական բարձր տարիքի երեխաների համար: Գրքից զգացվում է, որ հեղինակը նկատի է առել իր ընթերցողների տարիքային առանձնահատկությունները: Այդ առումով խոսում օրինակ է «Որոգայթ» վիպակը, ապա պատմվածքներն ու «Ապագան ապականված չէ» դրաման: Գրողը նրանցում դրսևորել է նուրբ հոգեբանի հմտություն,



Ստեղծել ռեալիստական լիարյուն կերպարներ: Չթուլացող ուշադրությամբ է կարդացվում «Շրջադարձ» պատմվածքը, որ ժանրային առումով կարելի է համարել նովել:

Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտի տարիներին հայ ժողովուրդն աշխարհին ներկայացրեց ֆիզիկական եւ բարոյական ուժերի բռունցքման իր վճռականությունն ու ազատաբաղձ ոգու հմայքը: Ազգային գոյության այդ վճռորոշ բարենասնությունները դրսևորվեցին եւ ժողովրդի, եւ յուրաքանչյուր հայի վեհ ու վսեմ ապրումի եւ արարքի մեջ: Ազատ եւ անկախ ապրելու երազանքը ոտքի հանեց աշխարհասփյուռ հայությանը: Պատերազմը բռնկվեց Արցախում, որն իր կամքից անկախ Խորհրդային տարիներին գտնվել է օտարի՝ Ադրբեջանի երախում: Ազերի-թուրքերի կողմից հայ ժողովրդին պարտադրված պատերազմն ընթացավ դաժան ու անզիջուն: Հազարավոր հայորդիների կյանքի գնով ազատության կապույտ թռչունը թևածեց Արցախ աշխարհում: Թե՛ պայքարի տարիներին եւ թե՛ հետագայում գրվեցին գեղարվեստական ոչ քիչ գործեր: Այդ ուղղությամբ կարելի է նշել Մարսել Հայկի նկատելի ձեռքբերումը՝ հանձին «Միջօրե» ժողովածուի: Գրողի ստեղծագործական ոճի մի շարք առանձնահատկություններ նորովի բացահայտվեցին գրքի տարբեր պատումներում: Վերցնենք «Շրջադարձ» պատմվածքը: Այստեղ առկա են դիպուկ պատկերներ, համոզիչ բնութագրումներ, խոսքի անմիջականություն, պատումի քնարականություն: Թեման պատերազմից ծնված ցավն է եւ այդ վշտից դեպի լույս ելք

գտնելու ուժը: Հանդես են բերված զոհյալի այրին՝ Մերին, եւ նրա 7-ամյա որդին՝ Դավիթը: Նրանց մոտ կանգնում է երիտասարդ Գեւորզը, ստեղծվում է մի եռանկյունի, որի շրջանակներում գրողը շոշափում է կենսական հարցեր՝ ուղղված պատերազմի հարվածները կրած ընտանիքի վերքի բուժմանը: Մերին բարձր է պահում նահատակ ամուսնու հիշատակը, երդվել է այլեւս չսիրել: Սակայն զգում է աշխատանքային ընկերոջ՝ Գեւորգի սերը, որ աստիճանաբար վերածվում է հոգատարության թե՛ Մերիի եւ թե՛ փոքրիկ Դավթի նկատմամբ: Մերին, չնայած վիրավորված էր Գեւորգից, այնուամենայնիվ, զգում է, որ Գեւորգի շնորհիվ լուսավորվում է ե՛ւ որդու սիրտը, ե՛ւ իր օջախը: Նովելի ավարտը ընթերցողին հուշում է մարդկային երջանկության անհրաժեշտությունը, որի գաղափարախոսն է հեղինակը: Պատմվածքը ընթերցվում է ուշադրությամբ: Կերպարների հոգեկան ապրումները ճշմարտացի են, կենսական, որոնք էլ ապահովում են պատումի հաջողությունը:

Աշխատելով «Մարտիկ» գինվորական թերթում՝ որպես խմբագիր, Մ. Հայկը խորապես ուսումնասիրել է պատերազմական մի շարք իրադարձություններ, ծանոթացել մարդկային ճակատագրերին, լսել կռվի մասնակիցների զրույցները: Արդյունքում հյուսվել են ոչ քիչ ուշագրավ ստեղծագործություններ, որոնցից է «Կյանքի եւ մահվան խաչներուկում» պատմվածքը: Այստեղ նկարագրված են ազերիների կողմից պատանդ վերցված հայ երիտասարդ գինվորի դժոխային օրերը եւ նրա ազատ արձակվելը:

«Գյավուր» (անհավատ) համարվող հայ զինվորին մահվան ճիրաններից փրկում է հենց նրան իր նկուղում պատանդ պահող 60-ամյա թուրք Չասանը, որ գերել էր հայերի մոտ գերության մեջ գտնվող որդու հետ փոխանակելու նպատակով: Չայ զինվորի՝ Վահրամի հանդեպ առանձնահատուկ հոգատարություն է ցուցաբերում Չասանի դեռատի աղջիկը՝ իրեն դրսևորելով որպես գթության քույր: Անցնում են տառապալից օրերը: Չասանին են ներկայանում ագերի բուժակն ու զինվորը եւ առաջարկում վաճառել Վահրամին: Չասանը համաձայնվում է, սակայն՝ լսելով, որ հայերը գերի ընկած որդուն բուժել են եւ փրկել կյանքը, օգնում է Վահրամին, որ վերադառնա: Նրան ընծայելով զինվորական դաշտային հանդերձանք, Չասանն ասում է. «Ձերոնք իմ վիրավոր որդու հետ մարդավայել են վարվել: Ես ինձ պարտավոր եմ զգում վարձահատույց լինել: Գնացինք... Կուղեկցեմ մինչ սահմանամերձ գոտի: Չետո բախտը քեզ հետ»: Կարդալով պատմվածքը, պարզ է դառնում գրողի գեղագիտական իդեալը՝ այո՛, պատերազմը դաժան երեւույթ է, սակայն անմարդկային արարքը չպետք է դառնա դաժնային օրենք: Միաժամանակ հեղինակն ընդգծում է հայ ժողովրդին հատուկ վեհանձնությունն ու մարդասիրությունը, որ գալիս է դարերի խորքից:

\*\*\*

Պատերազմական թեմայի հաջողված արժարժում է նաեւ «Մի կրակեք, ի սեր Աստծո» պատմվածքը: Յոթ հո-

Ղգուց բաղկացած հայ հետախույզների ջոկատն անցնում է թշնամու թիկունքը, վերացնում հայրենի Արցախ ներխուժած ազերի մի ավազակախմբի: Սակայն, նրանցից փրկվում է Յուսուբ անունով 17-ամյա մի պատանի: Հայ զինվոր Հրահատը մարդասիրական մղունով որոշում է նրան ազատ արձակել: Սակայն, Յուսուբը վախենում է վերադառնալ յուրայինների մոտ: Հրահատը վճռականորեն հրամայում է նրան. «Եթե չվերադառնաս, ես քեզ կգնդակահարեմ»: Յուսուբը ծնկի է գալիս եւ աղերսում. «Որ վերադառնամ, նրանք էլ կգնդակահարեն: Գոնե դուք մի կրակեք, ի սեր Աստծո՞ւ»: Հրահատը ազերի գերուն բերում է հայ զինվորների մոտ, խնայելով նրա կյանքը: Պատմվածքը ռեալիստական հիմք ունի: Հեղինակը արհեստական երանգներ չի հորինում, ճշմարտացի ներկայացնում է հետախույզների վտանգավոր գործունեությունը, խիզախությունը, համարձակությունը: Հայ հետախույզ զինվորներին վճռականություն, ուժ ու կորով է ներարկում հայրենի օջախների ազատագրման կանչը: Պատմվածքի հաջողությանը նպաստում են նաեւ անմիջական երկխոսությունները, որոնց ընթացքում պարզ երեւում են կերպարների հուզաշխարհն ու նպատակը:

Պատերազմի պատճառով լքված գյուղի եւ նրա բնակիչների այրող կարոտի հուզիչ մի պատկեր է «Կարոտի բույրը» պատմվածքը: Թշնամու հանկարծակի հարձակման պատճառով տեղահանվել է գյուղը, որի նահապետներից մեկը՝ Գեւորգ պապը, վառել է իր իսկ ձեռքով կառուցած սե-

Վիական տունը, որ թշնամին չվայելի: Գեւորգ պապը համագյուղացիների հետ տեղափոխվել է հեռուներ, իսկ թռռը, որ կրում է իր պապի անունը, միացել է գինվորներին՝ պաշտպանելու իրենց գյուղը, որտեղ սովորել է, սիրել համադասարանցի Սոնային: Այժմ նա մի բարձունքից տեսնում է գերված գյուղը, հիշում իր մանկությունը, պատանեկան սիրո շշուկները, ամեն ինչ եւ բոլոր հարազատներին: Պատմվածքում պատերազմական դեպքեր չեն նկարագրվում: Բայց հմտորեն բացահայտվում են պատանի Գեւորգի հոգեկան ծանր ապրումները, կարոտի այրող զգացումները: Նրա հայրը կռվում է Հադրութի կողմերում, իսկ ինքը հայրենի գյուղի մոտակայքում վառվում է վրեժի հրով՝ թշնամու հանդեպ, կարոտի կանչով՝ փարված հարազատ վայրերին: Պատմվածքն ավարտվում է հույսի լուսավոր ծփանքով: Միրութբավոր հայ հրամանատարի գլխավորությամբ ջոկատը նախապատրաստվում է գրոհի, 20-ամյա Գեւորգի Գեւորգ պապը մեկ տասնյակից ավելի ընտանիքների հետ վերադարձել է, որ վերակառուցի իր վառած սուրբ օջախը: Պատմվածքն աչքի է ընկնում կերպարների հոգեկան ապրումների ճշմարտացի պատկերումով: Առանձնապես, կենտրոնում պատանի Գեւորգն է, որի կարոտը շաղախված է հույսով, որն էլ հերոսին մղում է վճռական գոտեմարտի՝ հայրենի գյուղն ազատագրելու համար:

20-րդ դարի վերջին համաշխարհային գրականության մեջ լայն տարածում ստացավ դետեկտիվ գրականությունը, որի հիման վրա եւ ստեղծվեցին կինոֆիլմեր: Այդ ժանրը

արծազանք գտավ նաեւ հայ արծակում: Արցախի գրական ընտանիքում այդ ուղղությամբ հանդես եկան Կ. Գաբրիելյանն ու Վ. Ստեփանյանը, ապա՝ Մ. Հայկը, որ ընթերցողին նվիրեց «Որոգայթ» վիպակը: Թե՛նա ընտրելով հանցագործ աշխարհի իրադարձություններից, գրողը ի հայտ է բերել դետեկտիվ պատում ստեղծելու անհրաժեշտ կարողություն: Պատմության թանգարանում կատարված կողոպուտն ու սպանությունը բացահայտելու ուղղությամբ կատարված աշխատանքը պատկերված է բնական ու տրամաբանական պատկերային համակարգով: Կենդանի կերպարներ են օպերատիվ քննչական խմբի ղեկավար Նոյ Վարոսյանը, հատուկ կարեւոր գործերի նախկին քննիչ Սիիրան Սարյանը, որոնց ջանքերով բացահայտվում է հանցագործների որոգայթը: Բավականին հաջողությամբ են ներկայացված Հասմիկ Սահակյանի, Սերո Բալյանի, Գայանե Սեւյանի, Բենիամին Ռաֆայելյանի բնավորությունները:

«Միջօրե» ժողովածուն հետաքրքրություն է առաջացնում նաեւ «Ապագան ապականված չէ» դրամայի շնորհիվ: Հեղինակը այդ երկը նվիրել է Շուշիի ազատամարտի մասնակիցներին: Այստեղից էլ երկի մտահղացման շարժառիթն ու միտումը: Մ. Հայկը անդրադարձել է 18-րդ դարի իրադարձություններին, նորովի քննարկելով Մելիք Շահնազար Երկրորդի դավաճանական արարքը, Շուշվա բերդի գլխով անցած արհավիրքների համապատկերում ներկայացրել Արցախի մելիքների ոգորումները՝ վերջնական հանգույցում միասնությունը վերականգնելու համար:

Մ.Յայկի գաղափարական լուծումները պիեսում բխում են արցախյան ազգային-ազատագրական գոյամարտի թելադրանքից, ասել է թե՛ պատմությունը օգնում է կերտելու ներկան՝ հանուն ապագայի: Պիեսի հաջողությունը պայմանավորված է պատմական կոլորիտի առկայությամբ, կերպարների հոգեկան ապրումների բացահայտմամբ, համոզիչ կոնֆլիկտով, երկի պատմականության ապահովմամբ:

Մ.Յայկի ստեղծագործությունները ապացուցում են, որ մեր մանկապատանեկան արձակը ի դեմս նրա՝ ունի կենսափորձով հարուստ, շնորհաշատ մի գրող, որից ընթերցողները դեռ ակնկալելու են նոր, ուշագրավ արժեքներ:

\*\*\*

Մ.Յայկը քաջածանոթ է մանկական գրականությանը ներկայացվող պահանջներին: Ընթերցելով նրա պատմվածքներն ու վիպակները, համոզվում ես, որ նա հեշտ ճանապարհով չի ընթանում, պատասխանատվության զգացումով է վերաբերվում գեղարվեստական այն հնարանքների ու լեզվական պատկերավորության միջոցներին, որ պահանջվում է մանկագրից: Ամենից առաջ Մ. Յայկը խորապես հասկանում է մանկան հոգեբանությունը, երկի մեջ ճյուղավորված սյուժետային գծեր չի ստեղծում, նկատի է առնում տարիքային առանձնահատկությունը, պատմում է հստակ եւ անմիջական, օգտագործում ժողովրդական ասացվածքներ եւ առածներ, խոսքը համեմուն է երգիծանքի երանգներ:

րով եւ այլն, եւ այլն:

Դարերի ընթացքում հայ ժողովուրդը, դիմակայելով հարեւան բռնապետությունների եւ հեռուներից խուժած քոչվոր ցեղերի ավերումներին եւ ոտնձգություններին, ոչ միայն կոփել է իր կամքը եւ պահպանել հայրենի հավատը, այլեւ փայլեցրել է ստեղծագործական իր ոգին՝ նյութական եւ հոգեւոր մշակույթի անմահ կոթողների արարումով, որոնցում բացահայտվել են նրա բնավորության բարեմասնությունները՝ աշխատասիրությունը, հայրենասիրությունը, ազատասիրությունը, գրասիրությունը, խոհեմությունը, բարությունը, հարգանքը մեծերի հանդեպ, մեծահոգությունն ու սերը փոքրերի նկատմամբ, որոնք ընդհանրության մեջ խտացվել են որպես կենսափորձ եւ ապահովել նրա հավերժող երթը դեպի գալիք:

Ճշմարտության հանդեպ մեղանչած չենք լինի, եթե նշենք, որ Մ. Հայկի մանկական ստեղծագործությունների մեջ արծարծված են վերոհիշյալ ազգաբնույթ բոլոր երանգները, որ անհրաժեշտ են մատաղ սերնդի հայեցի դաստիարակության համար: Եվ պատահական չէ, որ գրողը դիմել է ժողովրդական հեքիաթների ընձեռած միջոցներին՝ մի կողմից շարունակելով Դ. Աղայանի, Հ. Թումանյանի, Ստ. Ջորյանի եւ այլ դասականների ավանդույթները, մյուս կողմից՝ հաստատելով այն սկզբունքը, որ հեքիաթագրության միջոցով կարելի է ներկայացնել ժամանակակից սերնդին հու-



զող ամենակարելոր հիմնախնդիրները, վերջապես հիշեցնելով, որ ժողովուրդն է ամենամեծ փիլիսոփան եւ ուսուցչապետը՝ իր հավերժախոս խորհուրդներով, կեցության իր ընկալումներով ու խրատներով: Ժողովրդի իմաստությունից ու փորձից դասեր առնելու եւ մանուկների հուզաշխարհը ձեւավորելու նպատակամետ օրինակներ են Ս. Հայկի հեքիաթային պատկերները, որոնցում յուրաքանչյուրը ընդհանրացվում է կոմպոզիցիոն նոր միջոցներով ու ձեւերով: Այսպես, «Արքայական ծիրանին» ստեղծագործությունը սկսվում է երկխոսության հնարանքով: Ս. Հայկ-պատմողը դիմում է իր ընթերցողներին, ինչ որ տեղ ինքն է բացատրում երեւույթը եւ հմուտ հեքիաթասացի հանգույն բացահայտում ասելիքը՝ նպատակի ճանաչողական եւ դաստիարակչական արժեքով: Թագավորի համար ծիրանի կարելու պատվերը իրականացնելու ավանդական պատումի մեջ իրենց բնավորություններով ընդգծվում են թագավորը, հմուտ դերձակը, նրա աշակերտը: Սյուժեի զարգացման հետ հեղինակն աստիճանաբար, առանց քարոզի բացահայտում է երկի գաղափարական բովանդակությունը՝ սովորելու ձգտումը, համբերատարությունը, «յոթ անգամ չափելու եւ մեկ անգամ կտրելու» ժողովրդական խորհուրդը ոչ միայն կյանք արարող, հասարակ մարդկանց համար, այլեւ թագավորի, որի կերպարի միջոցով գրողն ընդգծում է բոլոր ժամանակների համար «ճշմարիտ վճիռ կայացնե-

լու» մարդասիրական արդարացի պահանջը:

Արձակ բանաստեղծության հմայիչ օրինակ է «Ծովի կարոտը» ստեղծագործությունը: Ժողովրդի հավաքական ուժն ու գոյատեւման ընթացքը նրա միասնության մեջ են. Ղ. Աղայանի «Ցախավելի գաղտնիքը» բանաստեղծությունից սկսած մինչեւ մերօրյա գրողների տվյալ թեման արժարժող երկերը՝ միտված են սերունդների միասնության կարելոթության ընդգծմանը:

Մ. Հայկը նորովի, թարմ պատկերներով է անդրադառնում այդ թեմային՝ ստեղծելով «Ծովի կարոտը» գործը: Նրանում անձնավորված է ամբողջ բնությունը: Լեռան կրծքից ժայթքած սառնորակ աղբյուրը, երկրի գեղեցկությամբ հմայված, սկսում է իր ընթացքը: Կոտրելով այծյամների, ծաղիկների, ծառերի ծարավը, ճանապարհին հաղթահարելով դար ու փոսերը՝ հանդիպում է մի այլ աղբյուրի ու դառնում առվակ, ապա առվակներին միանալով՝ փոխվում գետի ու հասնում ծով: Սակայն ծովում միաբանված հայրենի ջրերը կարոտում են հարազատ լեռներին, դիմում արեւին՝ պատմելով իրենց կարոտի մասին: Արեւի օգնությամբ ջրերն ամպերի են փոխվում, թեւածում ու փարվում մայր լեռներին: Սակայն ընթացքը դրանով չի ավարտվում: Հեղինակը խորհրդանշական ընդհանրացումով ընդգծում է լեռների եւ դրանցից ծնված ծովի հավերժական կապն ու կարոտը խոսուն տողերով. «Ու այսպես ահա քանի՛-քանի՛ հազարավոր տարիներ պահմտոցի են խաղում ծովը, ամպերն

ու արելը: Հենց հայտնվում է արելը, քնքշանում է ծովը, դառնում հեզ ու բարի: Հենց արելը թաքնվում է, մոլեգնում է ծովը, որովհետեւ այդ պահին թանձրանում է լեռների հանդեպ նրա կարոտը» (էջ 14):

Այս պատկերի ենթաբնագրային արժարժումներում մեր աշխարհասփյուռ ժողովրդի ճակատագիրն է խոսում, որ միաժամական հայրենիքի հանդեպ եղած տագնապների եւ սիրո արտահայտություն է:

Մարդկային բնավորության արատավոր գծերից է ծուլությունը, որ քննադատվել է ժողովրդական բանավոր ստեղծագործություններում: Վերհիշենք «Քաջ Նազար» հեքիաթը, որ մշակման են ենթարկել Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Մ. Սարգսյանը: Հայկական առածանիում ծուլությունը բնութագրող բազմաթիվ առած-ասացվածքներ կան: Դրանցից են «Ով ալարի, ոչ դալարի», «Ալարողի ապրանքը լաց կլինի», «Ծառի տակին պառկելուն՝ բերանդ տանձ չի ընկնի», «Ես աղա, դու աղա, մեր աղունը ո՞վ աղա» եւ այլն: Մ. Հայկի «Արքայական հիվանդություն» երգիծական հեքիաթի սուր սլաքը եւս ուղղված է ծուլության եւ ծուլ մարդկանց դեմ: Գլխավոր հերոսը՝ Ծուլոս արքան, հայտարարում է ծուլների մրցույթ, խոստանում, որ հաղթանակը կշահի նա, ով իր ծուլությամբ կգերազանցի իրեն, իսկ հաղթանակողը կամուսնանա արքայադստեր հետ եւ կհայտարարվի արքայի փոխանորդ: Մրցույթի ար-

դյունքում Ճուլոս արքան իրեն փոխանորդ է նշանակում մի մարդու, որ գերադասում է կենդանի թաղվել, քան եփած կարտոֆիլը ծամել: Հեքիաթի հենքը ծիծաղն է, որի հիմնական ուղղվածությունը ծուլության քննադատությունն է:

Հունորի զգացումը աստվածային պարզել է ժողովրդի համար: Նրանով հնչել է ծիծաղը՝ ժխտելով այն ամենը, ինչ խաթարում է ե՛լ առողջ բանականությունը, ե՛լ առաջընթացը: Երգիծական հեքիաթները, զրույցները, սրամտությունները, անեկդոտները ժողովրդի առողջ մտածողության ել լուսավոր կենցաղի հաստատմանը միտված դասեր են: Թունանյանական մի «Սուտլիկ որսկանը», մի «Կիկոսի մահը» անփոխարինելի դասագրքեր են սերունդների ճանապարհին: Մ. Հայկի «Պոչատ քուռակը» զրույցը կարդալուց հետո մտորում ես՝ ինչքան լավ է, որ ավանդույթը շարունակվում է, ինչքան լավ է, որ այսօր Լեւոն Հարությունյան ունենք, որ էջ առ էջ դարաբաղյան բանավոր ստեղծագործության մասունքներն է հավաքում եւ կտակում սերունդներին, ինչքան խրախուսելի գործ է կատարում Ռոբերտ Ղահրամանյանը՝ մշակելով արցախական աշխարհի բանավոր խոսքաշարը, խրախուսանքի է արժանի Դ. Միքայելյանը՝ իր ծիծաղապատումների համար, ինչ հրաշալի գործի է ձեռնամուխ եղել Հր. Բեգլարյանը, որ ամուր կանգնել է «Պըլը-Պուղի» երգիծահանդեսի ակունքների մոտ, օգտակար գործ են անում Ն. Ավետիսյանը, Ար. Սարգսյանն այդ ուղղությամբ եւ ողջունելի է գրողների միության նախագահ Վ. Հակոբյանի աջակցությունն այդ լավ գործին:

Մ. Հայկի «Պոչատ քուռակը» գրույցի կերպարները՝ երիտասարդ Հաթանը, մայրը, հայրը, որ ներկայացնում են Մուքունց օջախը, գյուղական միամտության խոսուն վկայություններ են, միաժամանակ դեպի առողջ մտածողություն եւ թրթռուն կենցաղի մղող խորհուրդներ: Հաթանը մտատանջության մեջ է՝ Սաղաթելենց Յուռունց էշը երկու քուռակ է ծնել, որոնցից մեկը պոչատ է: Իսկ եթե իր աչքադրած Յուռին օժիտի հետ բերի այդ պոչատ քուռակը, որ պիտի մեծանա եւ պոչատ էշ դառնա, եւ եթե այդ պոչատ էշով ջրադաց գնա, բեռան տակ նստելուց ինչի՞ց պիտի բռնի, բարձրացնի: Ահա, օջախի համար ողբերգություն բերող «մտորումների» հաջող լուծումը լինում է այն, երբ Յուռու հայրը՝ Մուքին, գալիս է Հաթամի հորը՝ Սաքուն խնդրում, որ օգնի՝ սատկած պոչատ քուռակին հողին հանձնեն: Յոգեպես խաղաղվում են ծնողները, իսկ Հաթամի մայրը փսփսում է ամուսնու ականջին. «Սաքի ջան, էս ի՞նչ լավ եղավ: Ասում եմ՝ Մուքուն մի կես բերան աղջկա մասին խոսք ասա, տես գոդից ինչ գարի է ընկնում»: Ամուսինը վստահեցնում է. «Կասեն»:

Հայոց ժողովրդական հեքիաթներում հարուստ մարդիկ միշտ ձգտել են խորամանկությամբ խաբել աշխատավոր մարդուն, չվճարել նրա կատարածի դիմաց: Սակայն հանդես են եկել աշխատողների փոքրիկ եղբայրները եւ իրենց պայծառ բանականության շնորհիվ պատժել ազահ ու խաբեբա շահագործողներին: Հիշենք Մեծ Լոռեցու մշակած «Տերն ու ծառան» հեքիաթը: Մ. Հայկի «Մկրտիչ ապոր թվա-

բանությունը» ստեղծագործությունը եւս շոշափում է այդ թեման, սակայն նոր օրերի թելադրանքով: Այստեղ հանդես են գալիս վարպետներ, որոնք փոխանակ լծվելու արդյունավետ նորոգման, օգտվում են Մկրտիչ ապոր ընտանիքի հյուրասիրությունից, օջախը վերածում քեֆատեղի: Մկրտիչ ապերն ավելի սրամիտ եւ արդարացի է գտնվում: Մեջտեղ է բերում ամենօրյա մեծ ծախսերի ծոցատետրը եւ հանգիստ ասում. «Էսպես որ հաշվում ենք, դուք ինձ պարտք եք... Ընդամենը... դատարկ բան է, հազիվ մի յոթ հազար դրամ: Հաշվենք թե՛ ես ձեզ պատիվ եմ տվել: Մի խոսքով, ոչ ես եմ ձեզ պարտք, ոչ էլ դուք՝ ինձ: Քվիտ ենք»:

«Այսօրվա գործը վաղվան մի թողնի» առածի սյուժետային հաջող պատում է «էքսի օրը ծյուն կգա՛» գրույցը, որտեղ մոր ու աղջկա կերպարների միջոցով Մ. Հայկը խորհուրդ է տալիս մատաղ սերնդին օրվա գործը վաղվան չթողնել: Իսկ «Հարուն Ղուրունի գաղտնիքը» հեքիաթում ընդգծվում է աշխատասիրության եւ հայրենի հողի պատամունքն ունենալու գաղափարը: Մեծահարուստ Հարուն Ղուրունի միակ ձգտումը եղել է այն, որ իր հարազատները, թոռները եւս լինեն աշխատասեր, ինչպես ինքը: Դրան հասնում է թոռը եւ լսում իմաստունի խորհուրդը. «Նա գիտեր... մի պարզ ճշմարտություն՝ աշխարհի ամենածանրակշիռ հարստությունը հողն է. եթե սիրես, փայփայես, զավակիդ պես հոգատար լինես նրա նկատմամբ, կյանքում երբեք դժբախտ չես լինի...»: Ստեղծագործության այս առինքնող ավարտը հնչում է որպես դաս բոլոր ժամանակների համար:


Ժողովրդական հունորի եւ կենսափորձի խորաթափանց իմացության արդունք են «Կնոջ քանդածը աստված չի կարող սարքել» գրույցը եւ «Իսկ նախրապանը շտապում էր» ժամանակակից դետեկտիվը: Մի դեպքում հաստատվում է ժողովրդի կարծիքը կնոջ ամենակարող ուժի մասին, մյուսում՝ խիստ քննադատվում է ծուլությունը:

Մ. Հայկի «Դերենիկը եւ կրկեսի փիղը» ժողովածուն մի նոր ներդրում է ոչ միայն հեղինակի ստեղծագործության, այլեւ արդի հայ մանկապատանեկան գրականության մեջ: Ուստի կցանկանայինք մեր խոսքն ավարտել ժողովրդական հեքիաթներին հատուկ ընդհանրացմամբ: «Երկնքից երեք խնձոր ընկավ ցած, մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ հեքիաթ ստեղծողին»:

Լսողն ընթերցողն է, որ հաճելի զգացում է ապրում գրողի երկերն ըմբռնելուց հետո, ասողն ու հորինողը ինքը՝ Մարսել Հայկ-մանկագիրն է, ուրին հասած երկրորդ խնձորը խորհրդանշում է ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան մրցանակով՝ արժանի մի պարգեւ, որի առիթով շնորհավորում ենք գրողին եւ ակնկալում նոր, ինքնատիպ ստեղծագործություններ:

2006 թ.

## ԱՐՏԱՇԵՍ ԴԱՅՐԻՅԱՆ



2002թ. «Ազատ Արցախ» հրատարակչությունը լույս ընծայեց արձակագիր Արտաշես Դահրիյանի «Լեռան հուշ» պատմվածքների ժողովածուն: Գիրքը բացվում է ակադեմիկոս Ս. Սարինյանի գնահատականով, փակվում Վ.Հակոբյանի վերաբերմունքի ընդհանրացմամբ: Դա պատահական չէ, դա արձակագրի տաղանդի նկատմամբ ունեցած հարգանքի արտահայտություն է: Ս.Սարինյանի գնահատականով ընդգծվում է հետևյալ դիտարկումը. «Արտաշես Դահրիյանը գրական ասպարեզի վրա երեւաց աննկատ, միանգամից, առանց նախապատրաստության: Եվ սակայն նրա առաջին պատմվածքներն արդեն տիրապետող գրչի դրոշմն ունեին իրենց վրա: Ե՛վ աշխարհն էր որոշված, ե՛ւ ոճի ինքնատիպությունը»:

Արտաշես Ծատուրի Դահրիյանը ծնվել է 1937-ի հուլիսի 1-ին, Ղարաբաղի Հանրապետության շրջանի Մեծ Թաղեր գյուղում: 1956-ին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1961-ին՝ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժինը: Այնուհետեւ որպես սրբագրիչ աշխատել է «Սովետական Հայաստան», «Ավանգարդ» թերթերի, «Պատմա-բանասիրական» հանդեսի եւ «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրություններում: 1976-ից «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրությունում եղել է գրական աշխատող: Կենսաթոշակի անցնելուց հետո Ա.Դահրիյանը Երեւանից տեղափոխվել է հայրենի գյուղ՝ հասնելով ստեղ-



Ծագործական նոր հաջողությունների: Նա մի քանի բարձրարվեստ ժողովածուների եւ պոետական հետաքրքիր շարքերի հեղինակ է:

Ա.Ղահրիյանի ստեղծագործական աշխարհի եւ ինքնատիպ ոճի ընդհանրացված դրսեւորում է «Լեռան հուշ» գիրքը, որի լույսը ըմբռնելուց առաջ արժե բերել հենց իր խոստովանությունը. «Վերադառնալով ծննդավայր՝ ես ինձ վերստին գտա»: Այս գտնելու նշանակությունը ճիշտ է ընդգծել Վ.Հակոբյանը՝ գրելով. «Սիրելի գրողը Արցախ վերադառնալով, ավելի շատ զոհվածների կողքին ու տեղը կանգնեց ու փրկեց նրանց շարունակության առասպելը՝ զգալով, որ իր համար Աստծով նախատեսված օղը Զիարաթի շուրջն է ալիքվում... Հիմա Արտաշեսը կանգնած է ճիշտ իր տեղում, իր այգում, բոստանում, բառի մեջ, գյուղամեջում, աշխարհամեջում...»: Մեր գրականագետների նման դիտարկումները բխում են ճանաչված արծակագրի ստեղծագործությունների արցախյան բնապատկերից եւ ղահրիյանական պատկերասրահի երանգներից:

Պատմելու մեջ անմիջական, ապրումի մեջ՝ ավանդական, պատկերի մեջ՝ արցախաշունչ գրող է Ղահրիյանը: Քիչ է ասել սուր աչք ունի, պետք է ընդգծել նրա ներքնատեսությունը՝ հոգեբանական լուսարձակի օգնությամբ: Պատկերի տարբեր տեսակների հյուսման հմտությունը երեւի սովորել է Մեծ Թաղերի գորգագործ տատիկներից, որոնց հյուսվածքները կարող են մրցել աշխարհի ամենահմուտ վարպետի գործած գորգերի հետ: Արտաշեսին կարդալիս իր հայրենի բնության հրաշքներն ես տեսնում, իսկ Գոչավանքը ուսելին տանող հայրենի գյուղի բնությամբ նայելիս զգում ես նրա

արծակի շունչը: Սա է Ղահրիյան գրողի հաջողության գրավականը: Նրա գրական կանգուն շենքի ռոք-քարերից են «Գյուղամեջ», «Սիրուշի երջանկությունը», «Անորոշություն», «Աշխենի փեսան» եւ այլ պատմվածքներ: Դիմանկար ստեղծելու յուրահատուկ հնարանք է գտել արծակագիրը: Դրանք հունորախառն, ժողովրդական իմաստությունների խտացված հյուսվածքներն են, որոնք վերցված են կյանքի շերտերից, առանձնապես, գյուղական բնակչության դարերի կնիքը կրող մտածելակերպից՝ եւ միամիտ, եւ սուր, եւ ձեռ առնող, ամենից կարելորդ՝ կենսահաստատ: Միայն «Գյուղամեջ» պատմվածքը բավական է թվարկածս երանգները վկայակոչելու համար: Վեց էջի վրա Ղահրիյանը մի ամբողջական պատկերասրահ է ստեղծել, որտեղ հանդես են գալիս ազգային ցավով տառապող Միսակը, որ դեռ անասուններին կեր չտված, շտապում է գյուղամեջ ու տագնապած հայտարարում. «ՕՕՆ-ը, արա, իրիկունը «Վրեմյայով» որոշեց, որ Ղարաբաղը Ադրբեջանինն ա...» (էջ 3): Պավլունց Ուհանը սփրթնում եւ կռնչում է. «Վա՛, Ադրբեջանի՞նը»: Եվ երբ Միսակը նորից է հաստատում իր լսածն ու տեսածը, Ուհանը մղկտում է. «Պահո՛»: Զրույցին միջամտող երկար Վարազդատը վրա է բերում. «ՕՕՆ-ը... ՕՕՆ-ն էլ մեր գյուղխորհրդի օրում բան է, էլի:

- Կորա՞վ, ուրեմն, ամեն ինչ, էսքան չարչարանքը... Խե՛ղճ էդքան զոհեր:

- Տեսնեմ ՕՕՆ-ի որոշման վրա ով ա տռում:

- Բա ինչի՞ չես գնում դեկավարես,- չդիմացավ Ուհանը:

- Տեսնում ե՞մ, որ գնամ,- երկար երեսով մեկ հռռռաց

Վարազդատը:

Աշխարքը դառել ա պրեզիդենտներինն ու ժուռնալիստ-

ներինը, ինչ ուզեն՝ կանեն» (էջ 3):

Այս երկխոսության մեջ ընդգծվում են Միսակի, Ուհանի եւ Երկար Վարազդատի կերպարները, որոնք Ղահրիյանի՝ դիմանկար ստեղծելու հնարանքի արդյունք են: Կա եւ դիմանկար ստեղծելու ուրիշ ձեւ: Պատմվածքում Խաչունց Սոկրատի դիմանկարը վրձնվում է ահա այսպես. «Արա, դե, մեծ մարդ եք, ամոթ ա... ը՛մ,- միշտ դեպի ժողովուրդը թեք ու հեռու կանգնած, ձեռքերի ափերը կիսով չափ գրպաններում, հոնքերից վեր ճակատը կնճռոտած, ինքնիրեն ու ցածր ասում էր Խաչունց Սոկրատը,- արա, ասա, ինչ եք...,- արհամարհալից նրանց ասում ու երբեք մոտ չէր գալիս, նախատինք էր տալիս, բայց չէր խառնվում իբր թե իրենից շատ քիչ իմացող-հասկացող էր բոլորի վեճ-կռվին» (էջ 4):

Ձրույց-վեճին մասնակցում են Մուխայեղը, Սուրենը, Վաղին, Ռուբենը, Սուրենը:

ՕՕՆ-ի, Ամերիկայի, աշխարհի մասին նրանց զրույցի հենքը Ղարաբաղի ճակատագիրն է: Գյուղամեջ հավաքված մարդիկ հայրենի գյուղից սկիզբ առած պորտով կապվել են աշխարհի հետ, Շուկչին են կարդում, ճանաչում են Գլեբին եւ գալիս մի եզրակացության. «Ամեն տեղ նույնն ա, էլի, ծալը պակաս ժողովուրդ, մեջը՝ մի Գլեբ, մի ես, մի դու, էդ ա» (էջ 8):

Ա. Ղահրիյանը Գ. Մաթեոսյանի հետ է գրողի ճամփա մտել: Քանի որ Արտաշեսի եւ Զրանտի մոտեցումները կյանքին եւ այն պատկերելու խնդիրը հարազատ են, ուստի, ինչ որ նմանություններ կան նրանց երկերում արժարժված թեմաների եւ գաղափարական-գեղարվեստական լուծումների միջեւ: Գ. Մաթեոսյանի մահվան կապակցությամբ Ա.


Ղահիրիյանը փստփանքի իր խոսքում նշել է. «Հրանտ Մաթևոսյանը մեր գրականություն բերեց նոր ոճ... Լեռներում բռնկվող ու շողարձակող կայծակի նման թարմաշունչ է նրա գրելաձեւը, վարակիչ, այս իսկ իմաստով ես նրանից շատ բան սովորեցի» («Եղիցի լույս», թիվ 2, 2002): Ինչպես նկատում ենք, այստեղ ընդգծվում է սովորելու գործոնը, որ երբեք չի կարելի տանել դեպի ընդգծված ազդեցության ուղի: Երկու այս գրողները նույն ժամանակի, նույն աշխարհի, քաղաքական-հասարակական նույն խմորումների ներկայացուցիչներն ու արվեստագետներն են՝ իրենց սեփական աշխարհընկալմամբ ու սեփական ոճով: Ուրեմն՝ այս պարագայում ընդգծվում է տիպաբանական կապը: Մենք այս համոզմանն ենք եկել՝ կարդալով Ա. Ղահիրիյանի «Գյուղամեջ», «Նո՛ռնիկ, Նո՛ռնիկ ջան», «Հնդկահավը» եւ այլ գործեր, ապա՝ «Երկրորդ ներշնչանք» պատմվածաշարը:

Արտաշես Ղահիրիյանի ակնառու «պատկերասրահը» թելադրում է, որ արդի հայ գրականությունը գործ ունի չափազանց լուրջ արձակագրի հետ, որից դեռեւս նոր, հոգեպարար էջեր է սպասում:

2007 թ.

## ԿԻՄ ԳԱՔՐԻԵԼՅԱՆ

Արդի հայ արձակի արցախյան ընտանիքի ճանաչված արձակագիրներից է Կիմ Գաբրիելյանը: Նա մի շարք ժողովածուների հեղինակ է: Առանձնապես նրան լայն ճանաչում բերեց «Ինքնաթիռներ՝ աղավնու թևերով» ժողովածուն: Նրանում գետեղված 11 պատմվածքները բավականաչափ երանգներ են հաղորդում՝ հեղինակին ներկայացնելու դրվատանքի ընդգծումով: Կիմ Գաբրիելյանի արձակին հատուկ է բանաստեղծական պատկերավորությունը: Դա պատահական չէ. նա արձակ է մտել պոեզիայից: Միաժամանակ ընդգծենք, որ նա պահպանում է արձակի չափանիշները: Գրողի այս ժողովածուի, ինչպես ասում են, լեյտմոտիվը արցախյան գոյամարտն է, որի կիզակետում հայ-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցն է, սակայն՝ ոչ տրաֆարետ, ինչպես եղել է խորհրդային տարիների ընթացքում՝ ժողովուրդների «լեռնայան» բարեկանության ծխածածկույթով շղարշված:



Կիմ Եղիշեի Գաբրիելյանը ծնվել է 1960-ի սեպտեմբերի 8-ին, Ասկերանի շոջանի Դլիջբաղ գյուղում: Ավարտելով Ասկերանի միջնակարգ դպրոցը, մեկնել է Խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո ընդունվել է ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը եւ աշխատանքի անցել գրողների միությունում որպես գրական խորհրդատու: 1988-90-ին աշխա-

տել է ԼՂՀ ռադիկոնմիտեում՝ որպես գրական-գեղարվեստական հաղորդումների բաժնի վարիչ: 1994-ին «Արցախ» հանդեսի գլխավոր խմբագիրն էր: 1994-ից աշխատում է ԼՂՀ Ներքին գործերի մամլո ծառայությունում որպես ղեկավար:

Կ.Գաբրիելյանը ԼՂՀ ժուռնալիստների միության նախագահն է:

Կ.Գաբրիելյանը գրողի նրբանկատությամբ, հոգեբանական ներաշխարհի իմաստությամբ նկարագրում է Ադրբեջանի լծի տակ հայաթափման եզրին կանգնած Հայոց Արցախի վիճակը: Դրա խոսում վկայությունը «Քիրվայության ժամանակներ» պատմվածքն է, որը կարելի է բնութագրել որպես ազգային բնավորությունների հոգեբանական հաջող նկարագրություն: Գրողը հմտորեն, գործող անձերի հուզաշխարհի ազգային գույների իմացությամբ ներկայացնում է հայ որմնադիր թորոսին եւ Նազիմ Քիրվային: Պատմվածքի հենց առաջին էջերից ընդգծվում են նրանց բնավորության տարբերիչ գծերը՝ ինչպես որ ձեւավորվել են դարերի ընթացքում եւ ինչպես որ կան այսօր: Թորոսը հայտնի որմնադիր է: Նազիմ քիրվան խնդրում է, որ հայ քիրվան գնա եւ իր համար տուն կառուցի: Գրողն այսպես է ներկայացնում Նազիմի խոսքն ու պահվածքը. «Թորոս քիրվա,- եւ աչքամիջին ժպտում է,- Թորոս քիրվա,- ու շողջորթ ժպտում է,- Թորոս քիրվա,- ու ճարահատ անզորությամբ ժպտում է,- երեխեքիդ արեւը, երեխեքս չոլում են մնացել: Տասը քորփեքս գլխներին տանիք չունեն, տուն են ուզում շինել»: Իսկ Թորոսը,

Ինչպես բնութագրված է պատմվածքում. «Մարդկայնությունն ասածը որմնադրի վարպետության համբավի մեջ չի պահում, եփած-թխած խոսքերի մեջ չի պահում, այլ իր գեների ամենաթաքուն խորքերում հեշտորեն մերժելու բնատուր շնորհք չունի, որ մերժի: Եվ չմերժեց»: Սակայն պատումի մեջ դա չէ կարելուրդ: Նազին քիրվան աղքատության պատրվակով խորանարդիկ քարի փոխարեն գետնաքարեր է հավաքում, միաժամանակ քանդում Ջրվեր հայկական գյուղի հնադարյան եկեղեցու պատերը, քարը տեղափոխում որպես իր նոր տան շինանյութ: Իսկ Նազինը այդ հանցագործությանը դիմում է ե՛լ Ադրբեջանի իշխողների թելադրանքով, ե՛լ հայ սատրապների անտարբերությամբ: Հարթավայրից տեղափոխել են քոչվոր ցեղերի ընտանիքներին, միավորել հայկական գյուղերին, անունը կնքել Հասանլու, որովհետև առաջին եկողը, մյուսներին իր ետևից քարշ տվողքերողը Հասանն էր: Ինչպես հատուկ է թուրքերին, իրենք թվով աճելուն պես սկսեցին ծայր առնել անհամաձայնություններն ու վեճերը: Եվ ինչպես ընդգծվում է պատմվածքում, «վիճելն ավելի շատ հասանլվեցիներին էր ձեռնտու, որովհետև երբ վեճի ճոնդը նեղանում էր, օղակը մայրաքաղաք էր շարտվում: Իսկ դա սկիզբն էր հանրապետությունից նոր ցիլինդրավորի առաքելության: Նեղացնողի մերալացն սկսվում էր գրավոր նկատողությամբ, ավարտվում աշխատանքից ազատումով: Այդպես եղավ Հասանլվում ազգալեզու նոր դպրոց բացելիս, նոր խանութ բացելիս, նոր ակումբ

ու գրադարան բացելիս: Ամեն մի ցիլինդրավորի հերթական առաքելությունից հետո սովխոզի տնօրենը փոխվում էր: Իսկ փոխողը կուսշրջկոմի ճաղատ քարտուղարն էր» (էջ 9):

Կ.Գաբրիելյանը քաջածանոթ լինելով Արցախում խորհրդային տարիներին տեղի ունեցած ազերական հայահալած քաղաքականությանը, ռեալիստորեն պատկերում է նաեւ այն հայ քաղաքական ու տնտեսական գործիչներին, ովքեր խաղալիք էին դառնում թուրք ղեկավարների ձեռքին: Նման հայ գործիչների մարմնավորումը սովխոզի վերջին տնօրեն Եղյանի կերպարն է:

Պատմվածքը նովելային ավարտ ունի: Վարպետ Թորոսը Նազիմի տան հիմքերը դնելուց հետո նկատում է, որ շարվելիք պատի քարերը եկեղեցու պատից են: Թորոսի հարցին, թե այդ քարերը որտեղից է բերել Նազիմ քիրվան, վերջինս կարկամում է: Նա արդարանալ չէր կարող, որովհետեւ Թորոսը նկատել էր, որ քարերից մեկը եկեղեցու խաչքարի կեսն է: Եվ հնչում է Թորոսի բորբոքված ծայրը. «Ստոր, գող շան որդի: Մեր հավատը պղծող սրիկա շան որդի: Թաքցնել էիր ուզո՞ւմ: «Տնօրենն է հրամայել»: Տնօրենն, իհարկե, կիրամայի, տեսնես ինչ ես ռեխը գցել: Բա ո՞նց, համարյա մի տան քար է, ծրի քար: Ես ձեր պիղծ մերը... Գյուղը գողացել եք, հերիք չէ, հիմա էլ եկեղեցին եք գողանո՞ւմ: Կոտրում-գողանո՞ւմ եք» (էջ 22-23): Ինչպես եզրակացնում է հեղինակը, դա չար մարդու մաղձ չէր, հայիոյանքի սովոր բերանի խոսք չէր: Ընդվզումի պոռթկում էր, կուտակված պայթյուն, որ ան-



Ղապելի էր: Այդ պահին Նազիմի հասուն տղաները, որ օգնում էին վարպետ Թորոսին, բահը գցում են եւ փախչում: Ցավի միջից լսվում է Թորոսի ճիչը. «Կորե՛ք: Մեր գյուղից գնացեք, կորե՛ք,- ու հերսից սկսեց լաց լինել... Քիչ հետո, երբ մի քիչ հանգստացել էր, վեր կացավ, պատշարի իր գործիքները գոգնոցի մեջ փաթաթեց, գոգնոցի քուղերով պինդ կապեց ու ծանրաքայլ շարժվեց դեպի տուն» (էջ 29):

Կարդալով պատմվածքը՝ կրկին ու կրկին համոզվում ես Արցախյան ազգային-ազատագրական պայքարի աղարացիության մեջ: Նշենք, որ խորհրդային տարիների «քիրվայության» մասին գրել են նաեւ մեր մյուս գրողները: Կցանկանայինք առանձնապես նշել արձակագիր Դիանա Չամբարձումյանի «Այրված կամուրջների վրայով» վիպակը, ուր արտացոլված են Սյունիքում տեղի ունեցած իրադարձությունները՝ տիպաբանական նույն զուգահեռի վրա:

Կ. Գաբրիելյանի «Ինքնաթիռներ աղավնու թևերով» ժողովածուի մեջ զետեղված «Լուծ», «Ինքնաթիռներ աղավնու թևերով», «Վերադարձ ամենասկիզբը», «Վերջին թռիչք» եւ այլ պատմվածքներ ապացուցում են հոգեբան գրողի սեփական ձեռագիրը:

2007 թ.

## ՎԱԼԵՐԻ ՔՈՉԱՐՅԱՆ



### ԹՈՒՉՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Տոհմածառի թելադրանքով, թե ճակատագրի բերումով՝ կան մարդիկ, որ աշխարհ են գալիս արծվային սրտով, արծվի թելերով, եւ պարզ է, նրանց հայացքները միշտ ուղղված են լինում բարձունքներին: Այդ նշանակում է, որ նրանք միշտ էլ ունենում են խիզախելու տենչ, արարելու երազ, լույսի սերմնացան դառնալու վճռականություն: Հենց նմանների շնորհիվ է, որ հազարամյակների ընթացքում երազը դարձել է կյանք, կյանքը՝ երազ: Ասել է թե՛ մարդու մեջ համանվագային ծուլվածք են դարձել հողեղենն ու ուզեղենը, առանց որի կյանքի ընթացքը չէր լինի այսքան հմայիչ ու հեքիաթային, եւ նոր սերունդները չէին ունենա անցյալից փնջած ապագայամետ երազներ:

Մեր այս մտորումների լավագույն վկայություններից է Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտը, որ հայ ժողովրդի ազատաբաղձ ոգու եւ արծվենի սրտի արտահայտություններից է, որի նշանակությունը ոչ միայն պատմական է, այլ նաեւ հոլովվող դաս՝ գալիքի խաչմերուկներում: Այդ հայածին դասի առիւննող էջերից է նաեւ կյանքն ու ճակատագիրը մի արցախցու, որի անունն է ՎԱԼԵՐԻ ՔՈՉԱՐՅԱՆ:

Վալերին այնպիսի անհատականություններից է, որի կյանքն առասպելվում է օրերի հրամայականով եւ օծվում ժամանակների ոսկեփոշով: Այդ մասին է խոսում «Արծվաթռիչք» գիրքը, որ կազմել ու ձեւավորել է Վալերիի դուստրը՝ Իրինա Քոչարյանը, հայերեն եւ ռուսերեն առաջաբանը հեղինակել է հրապարակախոս Ջորի Բալայանը, խմբագրել են ակադեմիկոս Ավիկ Իսահակյանը եւ Արմենակ Ղազինյանը:

«Արծվաթռիչք» ժողովածուն բաղկացած է երկու մասից: Առաջին մասում, որ կոչվում է «Սրտաբաց զրույց», զետեղված են Վ. Քոչարյանի վիպակներն ու պատմվածքները, երկրորդում փնջվել են նրա հարազատների եւ ընկերների հուշերն ու հոդվածները:

Վ.Քոչարյան՝ քաղաքացի-գրող հասկացություններն առաջադրում են նախ անդրադառնալ նրա մասին ներկայացված հուշերին ու հոդվածներին եւ ապա գրքում տեղ գտած գրական երկերի գաղափարական-գեղարվեստական առանձնահատկություններին, որովհետեւ Վալերիի անցած ճանապարհն ու սխրանքն ինքնին մի ոչուցազնավեպ են, դարակազմիկ կենսագրություն, որի կնիքն ամբողջությամբ տեսանելի է նրա գրական հունձքի մեջ: Նման դեպքում է ընդգծվում, որ գրողի կյանքը զարդարում է նրա ստեղծագործությունը, իսկ ստեղծագործությունը՝ կյանքը:

Վալերին ծնվել է 1952թ. հունվարի 26-ին, Ստեփանակերտ քաղաքում: Նա Լեռնային Ղարաբաղի մարզկոմի

Նախագահի առաջին տեղակալ, կենսաբանական գիտությունների թեկնածու Սեդրակ Սարգսի Քոչարյանի եւ բիոքիմիայի լաբորատորիայի վարիչ Էմմա Արսենովնայի երկրորդ զավակն է: Առաջինն աղջիկ էր, որին կնքել էին Իվետա անունով, իսկ երկրորդը՝ կրտսերը, Ռոբերտն է: Իսկական մի եռաստեղություն ծնողների համար, իսկ տարիներ անց՝ ժողովրդանվեր զավակներ, զինվորական ու քաղաքական հանրահայտ գործիչներ:

Վալերիի մայրը՝ տիկին Էմման, իր «խոսք որդուս մասին» կարոտալից հուշերում գրում է. «Փոքր հասակից Վալերան միշտ ունեցել է ուժեղ կամք: Եթե մտածել է մի բան անել, ասենք՝ գնալ գետը լողալու կամ Շուշիի քարանձավներն ուսումնասիրելու եւ շատ նմանատիպ բաներ, ապա անպայման փորձում էր ծրագրածն իրականացնել՝ որքան էլ մենք դեմ լինեինք, թե՛ ես եւ թե՛ հայրը՝ Սեդրակը... Նա ձգտում էր անել այն, ինչ մտադրվում էր, նաեւ ծանր վիրավորվելուց հետո անում էր այնպիսի մեծ գործեր, որ կարող էր անել միայն ֆիզիկապես առողջ տղամարդը» (էջ 331):

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն իր եղբորը գնահատում է որպես ընկեր: «Ռոմանտիկ, արկածներ ուրոնող, ծայրահեղությունների սիրահար, հարուստ երեւակայության եւ ֆանտազիայի տեր... Մանկությունից նա հակում ուներ այն ամենի հանդեպ, ինչը կրակում էր կամ պայթում: Մշտապես պատրաստում էր ինչ-որ պայթյունավտանգ խառնուրդներ եւ փորձարկում դրանք, Ի դեպ,

ինձ էլ ակտիվորեն մասնակից էր դարձնում այդ գործերին:

Այդպես էլ նա ողջ կյանքում հավատարիմ մնաց իր այդ կրթին: Եվ շնորհիվ դրա, դարձավ գերազանց հրաձիգ ու զենքի մասնագետ: Մտածում եմ, որ հենց այդ կիրքն էլ վճռորոշ եղավ Վալերայի համար՝ ընտրելու զինվորական ծառայությունը» (էջ 336):

Ռոբերտ Սեդրակովիչը առանձնահատուկ հպարտությամբ ու կարոտով է ընդգծում Վալերիի մասնակցությունը Արցախի ազատագրական պայքարին եւ նշում, որ նույնիսկ ստացած ծանր վերքերը նրան հաշմանդամ չդարձրին. «Մենք մտերիմ ընկերներ էինք, եւ նրա կարիքը զգում եմ», - գրում է Ռ. Քոչարյանը:

Հետաքրքրությունների մի աշխարհ էին Վալերիի սիրտն ու հոգին: Միջնակարգում՝ դեռեւս սովորելիս, նա տիրապետում էր լուսանկարչական գործին, յուրացնում կինոմեխանիկի, էլեկտրիկի արհեստները, դառնում է երրորդ կարգի փականագործ-հավաքող, արհեստավարժ ավտովարորդ, տասնութ տարեկանում նվաճում է առաջին կարգի աստիճան՝ ընթշամարտի եւ հրաձգության գծով: Մանկուց հրապուրվել է հրատեխնիկայով:

Վ. Քոչարյանը միջնակարգն ավարտելուց հետո ուսումը շարունակում է Լենինգրադի ներքին զորքերի բարձրագույն ռազմական ուսումնարանում, ապա սպայական ուսադիրներով վեց տարի ծառայում Ռուսաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի տարածքների գաղութներում: Այդ ժամանակահատվածում էլ հենց ի հայտ են գալիս

Մրա ստեղծագործական ընդունակությունները:

«Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթում մի քանի հրապարակումներից հետո ԽՍՀՄ ՆԳՆ ՆԶ սպա Վ. Քոչարյանին առաջարկում են տեղափոխվել թերթ՝ որպես սեփական թղթակից: Մեկ տարի թերթում աշխատելուց հետո Վալերին նոր հրավեր է ստանում՝ գլխավորել ԼՂԻՄ ՆԳՎ հասարակական կարգի պահպանության պահակային բաժինը:

Ժամանակի հետ նոր զարթոնք է ապրում երբեք չմարած Ղարաբաղյան շարժումը, որի հրաբխային ժայթքումը սկիզբ առավ 1988 թվականի փետրվարին: Շարժման հորձանուտի մեջ Վ. Քոչարյանը միանշանակ գտնում է իր տեղը, հաստատում իր դերը՝ ժողովրդին օտարի լծից ազատելու սրբազան մարտահրավերում: Ահա թե ինչ է գրում ԶԶ նախագահ Սերժ Սարգսյանը. «Վալերի Քոչարյանին ճանաչում են 1970-ական թվականներից՝ աշխատանքի բերումով, հետո դարձանք մտերիմ ընկերներ: Նա վառ երեւակայության տեր եւ սուր զգացողություններ ունեցող անհատականություն էր:

Անշուշտ, մեր հարաբերություններն ավելի սերտացան 1988 թվականից հետո, երբ Ստեփանակերտում հաստատվեց պարետային ժամ, եւ Վալերին իր օպերատիվ գիտելիքներով, իր սրտամոտ վերաբերմունքով մեզ չափազանց մեծ օգնություն էր ցուցաբերում» (էջ 363): Հայտնի է, որ Վալերին մեր ազատամարտիկների համար պատրաստում էր նռնակներ ու այլ տեսակի զենքեր: Ինչպես նշում է գեներ-

րալ-մայր Արկադի Տեր-Թադեւոսյանը (Կոմանդոսը), Վալերիի սենյակը հիշեցնում էր ռազմական գիտահետազոտական լաբորատորիա: Դրանք տարբեր տիպի ականներ էին, նռնակներ, մինի-հրթիռներ: «Այդպիսի մարդկանց շնորհիվ մենք հաղթեցինք Արցախում», - գրում է Կոմանդոսը:

Գնդապետ Վ. Քոչարյանը Ղարաբաղյան պատերազմի ժամանակ, երբ փակվել էին ցամաքային եւ օդային ճանապարհները, ու ոչ մի կերպ հնարավոր չէր զենք ու զինամթերք հասցնել ռազմի դաշտ, իր վրա է վերցնում զենք պատրաստելու խնդիրը: Ստեփանակերտից 10 կիլոմետր հեռավորության վրա՝ Հասանաբաղ գյուղում, որտեղ ապրում էր իր ընկեր Էդիկը, որոշում են միասին Էդիկի տանը պատրաստել նռնակներ, փամփուշտներ ու զենքեր: Ահա այդ զենքերի փորձարկումներից մեկի ժամանակ Վալերին ծանր վիրավորվեց: Դա 1992թ. մարտի 22-ին էր: Ցուցադրական փորձարկման ժամանակ ներկա էին Արցախյան շարժման ղեկավարները՝ Ռոբերտ Քոչարյանը, Վազգեն Սարգսյանը, Սերժ Սարգսյանը, Արկադի Ղուկասյանը եւ ուրիշներ: Վալերին նռնակի պայթյունի ժամանակ պահում է նռնակի դեմը՝ պաշտպանելով բարեկամների ու զինակիցների կյանքը:

Տեղափոխվելով Երեւանի եւ ապա Գերմանիայի անհրաժեշտ հիվանդանոցներ՝ Վալերին դրսևորում է մահվան դեմ մարտնչելու կամքի ուժ, կյանքը շարունակելու վճռականություն: Նրան բուժող վիրահատները՝ Երեւանի թիվ 1

հիվանդանոցի տնօրեն Արտավազը Սահակյանը, բոլոր պահերին բժիշկների մոտ գտնվող բժիշկ, գրող, հրապարակախոս Ջորի Բալայանը, գերմանացի Դուդան եւ ուրիշներ հիացնունքով, նաեւ զարմանքով են ընդգծում Վ. Քոչարյանի անկտորում կամքն ու մահվան դեմ մաքառելու անսովոր ուժը: Ինչպես ներկայացնում է Ջորի Բալայանը, Վալերին «իսկը Արցախի պես, կարողացավ հաղթահարել իրեն: Ես նրա մոտ հիվանդասենյակ էի բերում վիրավորներին, որոնց լքել էր ոգին ու կամքը: Եվ միշտ նրանք Վալերիի մոտից կարծես թե էլեկտրականացած էին դուրս գալիս: Վալերին մարտիկներին ոգի է ներշնչում» (էջ 361):

Վ. Քոչարյանը բուժվեց, աշխատանքի անցավ: Նա ոչ միայն ոտքի կանգնեց, այլեւ կրկին սկսեց մեքենա վարել, լողալ եւ տպագրել գրամեքենայի վրա: 1993թ. լույս տեսավ նրա «Չամաշխարհային տիրապետության հայտ» գիրքը, իսկ 1997-ին՝ այդ գրքի հայերեն լրացված հրատարակությունը: Նա իրեն դրսեւորեց նաեւ որպես բանիմաց ձեռնարկատեր: Ստեփանակերտում իր միջոցների հաշվին հիմնադրեց Ղարաբաղյան ազատամարտի վետերանների եւ հաշմանդամների օգնության հիմնադրամ: Բացեց նաեւ հրատեխնիկական խաղալիքներ արտադրող ձեռնարկություն, որտեղ աշխատում էին միայն վիրավորներն ու հաշմանդամները: Վալերիի մասին ստեղծվեց վավերագրական ֆիլմ: Նա լեցուն էր ստեղծագործական մոր մտահղացումներով ու ծրագրերով, որ աստիճանաբար կյանքի էր կոչում: Սակայն տարիների երազանքը նրան հանգիստ չէր



տալիս: Ինչպես վկայում է աղջիկը՝ Իրինան, «Հայրիկը նորից սովորեց թռչել դելտապլանով, բայց այս անգամ՝ մոտոդելտապլանով... Ես ու եղբայրս հայրիկի դելտապլանի առաջին ուղեւորներն էինք: Նրա հետ բարձրացել ենք 4500 մետր ծովի մակերեսույթից, սավառնել Արագածի շուրջը... Զորի Բալայանը, որը նույնպես թռել է հայրիկի հետ նրա դելտապլանով, պատմում էր, որ թռիչքի ժամանակ ինքն ունեցել է զգացմունքների այնպիսի պոռթկումներ, որ ինքնաբերաբար սկսել է բացականչել եւ բարձրաձայն արտասանել տարբեր բանաստեղծների ստեղծագործություններ» (էջ 352-353):

1999թ. հունվարի 4-ին Արզնիի մոտ գտնվող հրաձգարանում մարդաշատ էր: Վալերիի մասին նոր ֆիլմի համար կադրեր էին նկարահանում: Վալերին ցուցադրում է բարձրակարգ թռիչքի մի քանի ձեւեր: Ներկաները հիացմունքով դիտում էին նրա սեւ «թռչունի» վստահ թռիչքը: Բուպեներ անց տեղի է ունենում անսպասելի՝ Վալերիի «թռչունը» օդում շրջվում է, ծալվում են թևերը...

Վալերի Չկալովի անվանակիր Վալերի Քոչարյանը հրաժեշտ է տալիս կյանքին՝ սերունդներին կտակելով օրինակելի մի կենսագրություն եւ ուշադրության արժանի գրական ժառանգություն:

Հաստատված է, որ Սասունն ու Արցախը երկվորյակ եղբայրներ են՝ մման առանձնապես իրենց քաջասիրտ ծռերով: Քաջասիրտ ծուռ էր Վալերին, որի սիրտը բաբախում էր հայածին Արցախի սիրով, իսկ ոգին սավառնում էր

աստղածիրերում: Այդ են վկայում նաեւ կարոտալից հուշե-  
րը, որ գրել են նրա զինակից ընկերներն ու բարեկամները:  
ԼՂՀ նախկին նախագահ Արկադի Ղուկասյանը գրում է.  
«Նրա մոտ զարմանալիորեն ներդաշնակվում էին պրագ-  
մատիզմն ու ռոմանտիզմը, սերը կյանքի ու ռիսկի հանդեպ,  
խստությունն ու մարդկայնությունը» (էջ 365): «Բարգավաճ  
Յայտատան» կուսակցության նախագահ, ԱԺ պատգամա-  
վոր, գործարար-բարեգործ Գագիկ Ծառուկյանի բնու-  
թագրմամբ, «Վալերին արտակարգ խիզախ էր, մահից  
բնավ չէր վախենում, կյանքում որոնել է միշտ դժվարին ու-  
ղիները եւ շատ ինքնուրույն էր» (էջ 385): Արցախի թեմի ա-  
ռաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Սարտիրոսյանը գրում  
է. «Նա, լինելով խիզախ մարդ, ամբողջովին նվիրված էր  
ազգի իդեալներին, պատրաստ էր ամեն ինչ անելու հանուն  
հայրենիքի ազատության» (էջ 389): Երեւանի պետական  
համալսարանի պրոֆեսոր, պետական մրցանակի դափնե-  
կիր Սեմյոն Յախունյանը հաստատում է. «Նրա խառն-  
վածքն իսկական հայի խառնվածք էր, որն ամբողջ սրտով  
ու հոգով սիրում էր իր ժողովրդին, իր հայրենիքը, որի հա-  
մար ամեն ռոպե պատրաստ էր զոհաբերել իր կյանքը» (էջ  
391): ՀՀ ոստիկանության գեներալ-լեյտենանտ Յովհան-  
նես Վարյանը Վալերիին գնահատում է մարդկային ամե-  
նանվիրյալ զգացունով. «Ես ինձ երջանիկ մարդ եմ հա-  
մարում, որ ունեցել եմ լավ ընկերներ: Դրանցից մեկն էր  
միլիցիայի գնդապետ Վալերի Քոչարյանը: Պայծառ մտքի  
տեր մարդ, բազմակողմանի զարգացած, բանաստեղծ եւ

«Աստժո ձեռամբ» գյուտարար, շռայլ, հաջողակ գործարար, քաջ սպա, որ անմնացորդ նվիրված էր իր ժողովրդին» (էջ 392): Բանաստեղծ-գրականագետ, ԼՂՀ գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը վերհիշում է այն անմոռանալի ժամանակները, որ ունեցել են պատանության օրերին եւ ապա «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրությունում՝ համատեղ աշխատանքի ընթացքում: «Մեր ընկերությունը,- գրում է Վ. Հակոբյանը,- վերածվում էր աշխատանքային համագործակցության: Եվ դրանից թերթը մշտապես շահում էր, որովհետեւ միշտ որոնող էր, անհանգիստ, պրպտող, ձեռք բերածով չբավարարվող, նախածեռնող ու որ ամենակարելորդն է, հաստատական եւ արդարադատ: Իսկ նման մարդիկ խմբագրությունում շատ էին պետք: Այսօր էլ, երբ որեւէ առիթով թերթում են «Սովետական Ղարաբաղ» թերթի այդ տարիների արխիվը, աչքի են զարնում ոչ միայն Վալերի Քոչարյանի կողմից կատարված գեղարվեստական թարգմանությունները, այլ նաեւ նրա բարձրացրած հարցերը, թղթակիցների նամակների հետ կատարած աշխատանքները» (էջ 395-396):

Վ.Հակոբյանը այդ ժամանակ «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրի տեղակալն էր, որի շնորհիվ նրանք համագործակցում էին գրական նախածեռնություններում: «Մեր յուրաքանչյուր հանդիպում վերածվում էր յուրօրինակ գրական ասուլիսի: Վալերիի հետ սիրում էի մշտապես զրուցել, մանավանդ՝ ռուս գրականությանը վերաբերող հարցերի շուրջ, լսել նրա բավականին ինքնատիպ

Կարծիքներն ու եզրահանգումները, մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր, ասենք, Եսենիմին, Մայակովսկուն, Բլոկին կամ Վիսոցկուն... Վալերին մեր Գոյապայքարի հերոսներից էր, հերոս՝ բառի ամենալայն իմաստով: Նա վեհ մարդ էր: Եզակի: Անկրկնելի: Նա մեծ հայրենասեր էր: Եվ ընդհանրապես, մարդու անսպառ հնարավորությունների մասին, ինձ թվում է, բնությունը շատ բան էր ուզում ասել Վալերիի միջոցով» (էջ 399): Հայրենակցի, բանաստեղծ ընկերոջ սրտառուչ խոսք է ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Արտեմ Հարությունյանի «Նա իսկական արցախցի էր՝ համարձակ ու բարի» հուշապատումը, որտեղ Վ. Քոչարյանը հանդես է բերված որպես ընկերասեր, կենսախիղ, կիրթ ու բարի. փիլիսոփայության եւ ռուսական մշակույթի գիտակ անհատականություն: Կինոռեժիսոր Կարեն Գեւորգյանը ցավով է հիշում այն օրը, երբ Վ.Քոչարյանը զոհվեց մոտոդելտապլանի վթարի պատճառով: «Չհիանալ այդպիսի մարդով՝ հնարավոր չէր,- գրում է նա:- Հաղթահարելով անմարդկային տանջանքները՝ թվում էր, նա իր առջեւ խնդիր էր դրել հասնել իր իսկ կողմից իր առջեւ դրված բոլոր նպատակներին: Դա առաջացնում էր հիացմունք ու զարմանք: Նպատակին հասնելու այդպիսի կրքոտությունը եւ առաջ գնալու այդպիսի ձգտումը, անկասկած, հատուկ է միայն հերոսական անհատականություններին» (էջ 407):

Լրագրող, արձակագիր Վարդես Բաղդյանը, երբ ԼԴՀ հեռուստատեսության եւ ռադիոյի կոմիտեի նախագահն էր, կազմակերպել է հարցազրույց Վ. Քոչարյանի հետ:

Մինչև այդ, 1988-ին, նրա մասին գրել է իր «Ֆենոմեն» գրքում, ապա անդրադարձել 1998-ի նոյեմբերին՝ «Թռիչքը շարունակվում է» հեռուստահաղորդման մեջ: Այս ամենից հետո Վ. Բաղդյանը գրում է. «Եվ հիմա, երբ նա մեզ հետ չէ, անհրաժեշտություն կա ի մի բերելու, ամբողջացնելու այդ ամենը, որպեսզի մարդիկ իմանան նրա մասին, իսկ մենք՝ ապրողներս, սովորենք ապրել, ապրել այնպես, ինչպես դա արել է Վալերի Քոչարյանը» (էջ 408):

Վ. Բաղդյանը Վալերիին բնութագրում է որպես շնորհաշատ լրագրող-ստեղծագործող, որի հոդվածները, ֆելիետոնները, պատմվածքները լայն արձագանք էին գտնում: Դրանք հաղորդվում էին նաև մարզային ռադիոյով:

Վարդգեսն ու Վալերին հասակակիցներ էին, մտերիմ ընկերներ, որոնք կյանքի նոր հունի մեջ մտան 1988-ի սկզբից: Վալերին ելույթներ չէր ունենում հանրահավաքներում, անում էր այն, ինչի մասին հատուկեմտ մարդիկ գիտեին: Եվ վերջապես ժողովուրդն իմացավ, որ իր անձնուրաց զավակներից է Վալերին՝ երազող իր Չկալովը, պողպատյա կամքի տեր իր Մերեսելը: Այն հարցին, թե ինչ կուզենար տային, Վալերին պատասխանել է. «Այն մարդիկ, այն տղաները, ովքեր վիրավորվել են, ովքեր հայտնվել են ծանր վիճակում, թող ուժ գտնեն իրենց մեջ, նրանք անհրաժեշտ են կյանքին, Արցախին» (էջ 422):

Վ. Բաղդյանը հարցնում է. «Վալերի Քոչարյանի առասպելական թռիչքը շարունակվում է: Հետաքրքիր է, է՛լ ինչով նա կզարմացնի մեզ»:

Հպարտությամբ կարող ենք պատասխանել. «Ինչպիսին Վալերիի կյանքն է՝ հողաբույր ու աստղաշող, այդպես էլ նրա գրական ստեղծագործությունն է՝ կենսաթրթիռ ու արեւատենչ»:

\* \* \*

Վ.Քոչարյանը իր առաջին գրքի առաջաբանում գրել է. «Խառնաշփոթ ապրած կյանքս իր կնիքն է դրել նաեւ իմ գրական ստեղծագործության վրա: Խառնաշփոթ մշուշն աստիճանաբար սկսեց գլխումս թանձրանալ, խտանալ եւ ստանալ կոնկրետ նյութական ձեւ ու ուրվագծեր: Իմ մեջ ամրապնդվել է այն զգացողությունը, թե ես ասելիք ունեմ մարդկանց: Այդպես է թե ոչ՝ կարելի է դատել այս ժողովածուի մեջ ներկայացված գործերից: Շատ կցանկանայի արդարացրած լինել ընթերցողի հույսերը» (էջ 11):

Այո, Վ. Քոչարյանն ասելիք ուներ եւ ասաց իր խոսքը գեղարվեստական այնպիսի հնարանքներով, որ իրենն էին: Նրա գլխում թանձրացած կյանքի շփոթը հստակեցվեց, դարձավ կոմպոզիցիոն տարբեր ձեւերի ու միջոցների աղբյուր, հետաքրքիր սյուժեների արտահայտություն:

Վ. Քոչարյանն իր առաջին գրքի առաջաբանում ընդգծել է, որ դեռեւս պատանության տարիներին հայտնագործել է այնպիսի գրողների, ինչպիսիք են՝ Ժյուլիենն, Օֆրե դե Լամետրին, Անատոլ Ֆրանսը, Վոլտերը, Օսկար Ուայլդը, Բուլգակովը, Սալտիկով-Շչեդրինը: Կարդալով նրա «Մենք ծնվել ենք, որ հեթիաթն իրողություն դարձնենք» պատմ-

վածքը, որ Վալերիի առաջին շրջանի գործերից է, հանդավում ես նրա ի ծնե գրող լինելու աստվածատուր շնորհքի մեջ: Կյանքի էպիկական ու դրամատիկական իրավիճակների նկարագրության, նախատիպերի կերպավորման, հասարակական արատավոր կողմերի ընդգծման, երգիծական հնարանքների օգտագործման, երկխոսությունների կիրառման նրա հմտությունն ու իրականացումն իրավունք են տալիս նշելու, որ Վ. Քոչարյանը գրական ասպարեզ է մտել հասուն ու կայացած:

Վալերին առաջիններից էր, որ մերկացրեց սովետական իրականության մեջ գոյություն ունեցած այն ծխածածկույթը, որ առնչված էր գաղութներում տիրող անմարդկային վերաբերմունքին: Կալանավորների հանդեպ իրականացվող դաժանությունները, հալածանքը, կաշառակերությունը, այլասերվածությունը, մարդկային տարրական իրավունքների ոտնահարումը դարձել էին օրինական գործընթաց: Եվ ոչ միայն այդ: Ինչպես մատնանշում է Վալերին պատմվածքում, «Գաղութի պետը»՝ Աղան, հսկայական գումարներ էր կուտակում, որոնցից բաժին էր հանում դատախազին, եւ նրանց մի մասն էլ այդ երկու խողովակներով բուրգն ի վեր, ակնհայտորեն գնում-հասնում էր հենց մինչեւ Չուրբանովն ու Լեոնիդ Բրեժնեւը» (էջ 100):

Գաղութի կյանքին ականատես գրողը քննադատում է ծիծաղ հարուցող գռեհիկ այն հասարակաբանությունը, որ իր շոշափուկներն էր տարածել ամենուրեք՝ տեղի-ամտեղի: Օրինակ, պատմվածքում ներկայացվող Վրաստանի

Ծովափնյա գաղութում պատերին խոշոր տառերով փակցված են հետեւյալ կարգախոսները. «Կուսակցությունը մեր դարաշրջանի խելքն է, պատիվն ու խիղճը», «Ազատություն՝ մաքուր խղճով», «Բարի գալուստ» եւ այլն: Իսկ տարբեր առիթներով միշտ հնչեցվում էր՝ «Մենք ծնվել ենք, որ հեքիաթն իրողություն դարձնենք» երգը: Նման կարգախոսների տակ բանտախցերում, սակայն, կալանավորների կյանքը վերածվում է դժոխքի, օրենքով գողերն իրենց զգում են տիրակալներ, թղթախաղը դառնում է մարդկային ողբերգության խթանիչ՝ ընդհուպ մինչեւ արժանապատվության ոտնահարում: Նման դժբախտության է արժանանում մարդ-գայլերի զոհը դարձած անմեղ մեկը, որը նույնիսկ չի ցանկանում հնչեցնել իր իսկական անունը, խնդրում է, որ պայմանականորեն իրեն անվանեն Ռեզո: Պարզվում է, որ հենց խորհրդային գոփող ղեկավարներն են նրան բանտ ուղարկել՝ իրենց կաշին փրկելու համար: Եվ դա դժվար չէր նրանց համար: Ինչպես Վ. Քոչարյանն է պատմում Ռեզոյի շուրթերով. «Ինչպես որ հարկն է՝ դատ եղավ, որ ներկայացում էր հիշեցնում, ուր բոլոր դերերը բաշխված ու պայմանավորված էին: Գնված վկաները գնված ցուցմունքներ էին տալիս, գնված դատավորները ունկնդրում էին գնված փաստաբաններին ու դատախազներին եւ ի վերջո, գնված պատիժը կրելով խիստ ռեժիմի գաղութում» (էջ 81): Խիստ ռեժիմի արդյունքում Ռեզոն թղթաղաղում տանուլ է տալիս... երկու երեխայի տեր կնոջը՝ Մարիային, որն էլ չտանելով խայտառակությունը, ինք-



նասպանություն է գործում:

Վ. Քոչարյանը իր այս երկուն ցավով ընդգծում է այն երևույթը, որ գաղութներում մեղսագործ կալանավորը դառնում է հանցագործ, հանցագործը՝ մարդասպան:

Կենսափորձը կարելու գործոն է գրողի համար: Դա հնարավորություն է ընձեռում նրան՝ քննարկման դնելու այնպիսի թեմաներ, որոնք ուղեկցել եւ ուղեկցելու են սերունդներին՝ Մարդ մնալու, Մարդ ապրելու հրամայականով: Վ. Քոչարյանի ամբողջ ստեղծագործությունը մարդասիրական զգացումների խտացում է: Վաղ շրջանում գրված պատմվածքներում լինի, թե հասուն շրջանի, Վալերին հանդես է բերել հոգեբան գրողի կարողություն՝ հումանիստական գաղափարների փունջը հոգու խորքում: Նրա «Կենացը» ստեղծագործությունը, որ ընթերցվում է չթուլացող հետաքրքրությամբ, լուսավոր մի խորհուրդ է երիտասարդներին: Նոր շրջանավարտների հավաքույթում ժենյայի ութսունամյա նավաստի պապը, պատմելով իրենց նավին պատահած արհավիրքի մասին, վերհիշելով վայրենացնող սովը եւ նավաստի Կիրիլի անձնուրաց ընկերասիրությունը՝ առաջարկում է խմել «ընկերության կենացը եւ այն բանի կենացը, որպեսզի երբեք, ոչ մի իրադրությունում չկորցնենք մեր մարդկային կերպարանքը» (էջ 241-242):

Վ.Քոչարյանը պատմվածքների կառուցվածքներում երբեք չի կրկնում իրեն: Նա որոնում ու գտնում է կոմպոզիցիոն տարբեր ձևեր, կերպարների հուզաշխարհը բացա-

հայտելու հնարանքներ: Այս առումով օրինակելի է «Վաչիկը» պատումը, որտեղ ընդգծված են հոգեկան երկվության գոյությունն ու հակադրությունը: Վաչիկը, որ ժամկետից շուտ թողնում է գործարանի աշխատանքը եւ ծլկում, զգում է մի անսովոր ապրում իր հոգում՝ իր խիղճն ու եսանդությունը վիճում են հենց արարքի մասին: Այստեղ նրան օգնության է հասնում գործարանի տնօրենը՝ Գրիգոր Վարդանովիչը, որն իր մեծահոգությամբ ու բարությանբ Վաչիկին հանում է երկվության ճիրաններից եւ նույնիսկ խրախուսում նրան՝ կյանքի ճիշտ ճանապարհ բերելով երիտասարդ բանվորին: Սոցիալական անհավասար պայմանների գոյությունը չի վրիպել գրողի ուշադրությունից: Պատանի Ռազմիկը, որ առաջին անգամ մոր հետ լինում է բարեկամի հարսանիքում, տեսնելով երաժիշտների առջեւ կուտակված փողը, երագում է դառնալ երաժիշտ:

Վալերին իր գեղարվեստական իդեալից բխած վերաբերմունքի մասին չի խոսում, նրա մոտ ստերեոտիպ գոյություն չունի, նա միայն պատկերում է, ցույց է տալիս, ընթերցողն ինքն է կռահում ու գնահատում երկի գաղափարը:

Պատերազմն արհավիրք է, մահվան հնձան, որի հասցրած վերքերը չեն սպիանում: Վարվառա Պետրովնայի ամուսնուն ֆաշիստները 1942-ին գնդակահարել են, մահացել է նաեւ նրա փոքրիկ երեխան: Տարիներ են անցել, ռուս դերասանները կինոնկար են ստեղծում Մեծ Հայրենականի մասին: Վարվառան, որ անդառնալի կորստի

Կատճառով հոգեկան ցնցում է ստացել, փորձի ժամանակ նկատելով դերասան Գերասիմ Պետրովիչին՝ ֆաշիստական սպայի համազգեստով, վերցնում է քարը եւ խփում նրա գլխին: Արյունլվա դերասանը ներողամտորեն սեղմում է Վարվառայի ձեռքը եւ դիմում ռեժիսորին. «Դա անպայման պետք է նկարահանել, կյանքն ինքը հիանալի սյուժե նվիրեց ձեզ, նույնիսկ տասնյակ տարիներ անց հնչում է պատերազմի արձագանքը»:

Վ. Քոչարյանը իր հոգում ամբարել է մի կողմից Լեւ Տոլստոյի, մյուս կողմից՝ Զ. Թումանյանի քրիստոնեական բարությունը: Դրանով պետք է բացատրել նրա պատմվածքների մեջ նկատվող բարության շաղախը, որով բնութագրվում են նրա դրական կերպարները: «Ուրիշի երջանկությունը» պատումի հերոսը՝ ինժեներ Վալերի Զարությունովիչը, բարությամբ նույնիսկ դաստիարակում է այնպիսի մարդկանց, ովքեր հակում ունեն չնկատելու իր մեծությունը: Դաժան օրեր է տեսել նա, ընկել է հանցագործների միջավայր, սակայն վերջնականապես ընտրել է իր ճիշտ ուղին եւ արյան կանչ դարձրել մաքուր խիղճը: Վ. Քոչարյանը գնահատում է նրա երբեք չքնող խիղճը:

Խղճի եւ անաղարտ սիրո թելադրանքով է վարվում նաեւ գրողի մի ուրիշ հերոսը՝ Արթուրը, որի սիրած կինը խորտակվել է ծովում, սակայն դիակը չեն գտել: Արթուրը միայնակ մենամարտում է կատաղած ծովի լեռնակուտակ ալիքների դեմ եւ ափ նետվում: Պատմվածքն ավարտվում է այս հուզիչ տեսարանով. «Հաջորդ ալիքն ավելի հեռու

շարտեց եւ ափ հանեց նրան: Ետ դարձող ջրի թույլ հոսանքով Արթուրը չորեքթաթ առաջ շարժվեց եւ հանկարծ դեմ առավ»: Մի ահավոր ճիչ թրատեց օդը...

Նույն գլաքարի մոտ, ուր ալիքներն ափ էին նետել կնոջ անշունչ մարմինը, Արթուրը ծնկաչոք ողբաց մինչեւ առավոտ...» (էջ 261):

Անգործունյա ու բամբասանքի սիրահար մարդկանց խարազանումն ենք տեսնում «Սեփական ցանկությամբ» պատմվածքում, որտեղ գրողը համոզիչ գույներով ստեղծել է կոլեկտիվին անարժան Նիկոլայ Կրուպիցինի կերպարը: Անհանդուրժելի վարքի պատճառով նրան հասկացնում են, որ գրի դիմում «սեփական ցանկությամբ» աշխատանքից ազատվելու մասին:

Վ. Քոչարյանի որոշ պատմվածքներ հիշեցնում են անմիջական զրույցներ, ճամփորդական նոթեր, ականատեսի վկայություններ, պատմողի խոստովանություններ, որոնց շնորհիվ դրանք գրավում են ընթերցողին, իսկ ընթերցողն ասես մասնակիցն է դառնում այն իրադարձությունների, որոնց անդրադառնում է գրողը: Նման ստեղծագործություններից են «Սրտաբաց զրույց», «Աննկատը», «Արդեն վճարված է», «Հին ծանոթը», «Ճանապարհին» եւ այլ գործեր: Առինքնող ու տպավորիչ հետք է թողնում «Իրինան» պատմվածքը: Պատումի կենսականությունը, հաճախակի պատահող երեւոյթը, սիրո առեղծվածային ուժը համոզում են ընթերցողին, որ այն նաեւ ինքնակենսագրական բնույթ ունի: Կենդանի, լիարյուն կեր-

Կարներ են Յուրի Աբգարյանը, Տիգրանը, Իրինան:

Յուրի Նիկոլաեւիչի ապրումները կապված են կնոջ եւ նորածին աղջկա հետ: Նա գոհ է, որ փրկված է կնոջ ու երեխայի կյանքը: Սակայն խորապես վշտացած է, որ ինքն այլեւս երեխա չի ունենա: Գիշերային զբոսանքի ժամանակ զբոսայգում նա հանդիպում է մի սիրահար զույգի, որ ջարդված լապտերի տակ, նստարանին նստած, քչփչում էր: «Ես աղջիկ ունեմ», - անընդհատ մտածում էր Յուրին: Նա դեռեւս չէր տեսել նրան, բայց քանի գնում՝ ավելի ու ավելի էր սկսում սիրել այդ փոքրիկ արարածին: Յուրին մտորում էր՝ ինչ անուն ընտրել աղջկա համար: Եվ հիշում է Իրինային, որ չնայած հանդիպել է ամուսնացել էր Տիգրանի հետ, սակայն սիրահարվել էր Յուրիին: Պատահում է այնպես, որ Տիգրանից նամակ է ստանում, որտեղ հայտնում է ավտովթարից Իրինայի զոհվելու մասին: Տիգրանը նրա պայուսակում հայտնաբերել է նամակների մի փաթեթ, որոնք Իրինան համարյա ամեն օր գրել է Յուրի Նիկոլաեւիչին եւ չուղարկելով՝ պահել իր մոտ:

Մի շաբաթ շարունակ Յուրի Նիկոլաեւիչը ծանր տկարություն էր զգում: Նա կարդում էր Տիգրանի երկտողը, Իրինայի նամակները: Յուրին դեռ խորհում էր՝ ինչ անուն դնել դստերը եւ չգիտեր, որ կինը, որին ծանոթ էր այդ պատմությունը, արդեն ընտրել էր անունը՝ Իրինա: Նովելային ավարտ ունեցող այս պատումը, հիրավի, Վալերիի սրտառուչ գործերից է:

«Արծվաթռիչք» ժողովածուում մի առանձին բաժին է

կազմում գրողի վերջին տարիների պատմվածքների շարքը:

Ինչպես ստեղծագործական առաջին շրջանի, այնպես էլ վերջին տարիներին գրած պատմվածքների մեջ իրականության արտացոլման ընթացքում գրողի հարազատ ոճն ու հայեցակետն է, ասելիքի կոնկրետությունը, հայացքի հստակությունը: Այստեղ եւս մարդու եւ ժամանակի փոխհարաբերություններն են, գեղեցիկի եւ ճշմարիտի հաստատումը, հասարակական կյանքի արատավոր կողմերի քննադատությունը, բարության ու լույսի փառաբանումը:

Կյանքի կենդանի, գեղարվեստական պատկերներ են «Նատաշկան», «Նատալի», «Վալենկաները», «Բիզը», «Գերեզմանատուն», «Լյուբա» պատմվածքները: «Նատաշկան» ստեղծագործության մեջ հեղինակը քննության է առնում բարություն, խիղճ եւ պարտք հասկացությունները, հոգեբանական բացահայտումներով արծարծում առողջ ընտանիքի, երեխաների հանդեպ պատասխանատվության ազգապահպան հարցեր:

Նատաշկան, որ փոքրիկ հրեշտակ է, նման է մորը՝ Լիդային: Սակայն պարզվում է, որ հրեշտականման Լիդան թեթևաբարո կյանք է վարում: Իսկ աղջիկը՝ Նատաշան, երբ իմանում է, որ հայր չունի, փախչում է մորից: Մինչեւ այդ նա արժանացել էր պատմվածքի հերոսի հայրական գուրգուրանքին, եւ նրա երազանքի մեջ հոր պատկերն էր երեւում: Դժվար չէ նկատել հեղինակի միտումը: Առողջ ընտանիքի հիմքում դարերով սրբագործված հավատարիմ սիրո հուն-

դերը պետք է ծլարծակեն, երեխան պետք է հասակ առնի հոր ու մոր միատեղ հոգատարության ու գուրգուրանքի պայմաններում:

Բնության եւ մարդու անտեսանելի կապի ու նմանության փիլիսոփայություն է «Զրույց ծառի հետ» երկը: Գրիշան աշխատում է կոշիկի ֆաբրիկայում: Նա նկատում է, որ ծմռանը ջեռուցման կաթսայատան մոտ ծաղկել են ծառերը, եւ սկսում է գրուցել նրանց հետ՝ ցավով նշելով, որ խաբվել են, միաժամանակ հայացքն ուղղելով ծաղկած ծառերի մոտ բողբոջող մի ուրիշ ծառի: Երբ ընկերը Գրիշայից հարցնում է, թե ինչ էր գրուցում, նա պատասխանում է. «Նրան համոզում էի՝ այդպիսի բան չանել, համոզում էի, որ պետք չէ կաթսայատանը հավատալ: Նույնիսկ իմ մասին պատմեցի: Լսե՞ց ինձ, թե չէ՝ չգիտեմ» (էջ 115):

Հասուն գրչի արդյունք է «Նատալի» պատմվածքը: Նրանում Վ. Քոչարյանը հաստատեց, որ ինքը գրականության հոգեբանական ուղղության ներկայացուցիչ է: Այստեղ լուսաբանված է առաջին, անփոխարինելի սիրո խնդիրը, որ ուղեկցվում է տեսիլքային պատկերներով: Նատալին եւ Վիկտորը ամուսնանում են փոխադարձ սիրո հիման վրա: Յոթ տարի անց մահը խլում է Նատալիի կյանքը: Մահվանից առաջ Նատալին Վիկտորի պարանոցին է հագցնում վզնոց-համայիլը եւ ասում. «Թող որ միշտ հիշեցնի իմ մասին, բայց հիշիր, եթե գեթ մի ակնթարթ որեւէ կին քեզ դուր գա, անհապաղ հանիր համայիլը եւ նետիր

Ղգետը այն նույն տեղից, որտեղ սիրում էի հանգստանալ: Խոստացիր, որ այդպես կանես»: Վիկտորը խոստանում է: Սակայն անցնող տարիների ընթացքում նա չի կարողանում մոռանալ Նատալիին, վերջինս երազների մեջ միշտ ներկայանում է Վիկտորին: Որոշ ժամանակ անց նա հանդիպում է Սեբաստյանի այրուն՝ Թերեզային: Միեւնույն է, Վիկտորը Նատալիին չի մոռանում, անգամ այն դեպքից հետո, երբ երազի մեջ ներկայանում է Նատալին եւ պատվիրում. «Այսպես շարունակվել այլեւս չի կարող: Ողջերին ապրել է պետք, այլ ոչ թե՝ սփոփվել ստվերի հետ հանդիպումներով»: Որպես պատասխան՝ Վիկտորն աղերսում է. «Նատալի, ներիր, քեզնից բացի ինձ ոչ ոք պետք չէ»: Ժամանակի հետ Վիկտորին հանգիստ չեն տալիս երազները: Տեղի է ունենում առեղծվածայինը: Նատալիի դիմանկարն այնպես է խուճանում, որ այլեւս երազների մեջ անգամ չի ներկայանում Վիկտորին: Վերջինս հուսահատ ու վշտահալած ծախում է տուն-տեղ ու հեռանում: Այդպես է՝ առաջին սերը անփոխարինելի է ու ցավի պես անմոռաց:

Համաշխարհային գրականության մեջ հայտնի է կենդանական աշխարհի նկարագրությունը՝ անձնավորման այլաբանական մղումով, մյուս կողմից էլ կենդանիների հանդեպ գթասրտորեն վերաբերվելու ցանկությամբ: Այս առումով գեղեցիկ մի նմուշ է «Մայա» պատմվածքը: Մայան եւ Դիկը որսորդական շներ են, որ որսի ժամանակ



միշտ հավատարիմ օգնել են որսորդ Եվդոկիմ Տերենտի-  
 չին: Սակայն Եվդոկիմի կինը՝ Պոլինան, ստիպում է, որ անուսինը վերացնի Մայային: Եվդոկիմն ստիպված Մայային տանում է անտառ, թեթև վիրավորում ու վերադառնում: Մայան ընկնում է թակարդ, մի կերպ հատած ոտքով, արյունաքամ վերադառնում իրենց բակ, լիզում իր զավակի՝ Դիկի սառած դունչը եւ փչում շունչը:

Մարդու անտարբերությունը իրեն ծառայող շան հանդեպ, իսկ շան հավատարմությունը՝ տիրոջը, պատկերված է գեղարվեստական ինքնատիպ հնարանքներով ու համոզիչ երանգներով:

«Վալենկաները» պատմվածքում արծարծված է ընտանեկան դաստիարակության չինացող խնդիր: Լեւոնի եւ նրա ռուս ընկերոջ՝ Ալեքսեյի միջոցով գրողն առաջ է քաշում երեխաների վերաբերյալ հոգատար լինելու պարտականությունը: Ալեքսեյը, որ Լեւոնի խնդրանքով հյուրընկալվում է Կառլենի տանը, հիասթափվում է՝ տեսնելով, թե ինչպես է տանտերը հարբած վիճակում ծեծում որդուն՝ փոքրիկ Պողոսին: Ալեքսեյը ջղայնացած հեռանում է: Լեւոնի հետ ունեցած գրույցի ժամանակ Ալեքսեյը հիշում է պատանի Վասյային, որի համար գնել էր մի զույգ վալենկաներ, սակայն հարբեցող հայրը խլում է այն եւ փոխանակում օղիով:

Հետաքրքիրն այն է, որ Վ. Քոչարյանը զուգահեռ է անցկացնում ռուս Վասյայի եւ հայ Պողոսի միջեւ, որոնց

Խայրերը խմիչքի ազդեցության տակ դաժանություն են ցուցաբերում իրենց երեխաների հանդեպ, որ անհարիր է ճիշտ դաստիարակությանը:

Վ. Քոչարյանի խոհերն ակունքված են ժողովրդական կենսափորձից: Նա ելնում է կյանքի իմաստն իմանալու, անցյալի սրբությունների հանդեպ հարգանք ցուցաբերելու ժողովրդական դասերից: Նման խոհեր են քննարկված «Գերեզմանատուն» պատմվածքում: Լավ է, որ ապրողները չեն մոռանում հուշ դարձած իրենց հարազատներին, սակայն անընդունելի է, երբ այնտեղ այցելելով, մարդիկ մոռանում են, որ գերեզմանոցը սրբատուն է, պետք է խստել շշուկով, իսկ ծնողներին մեծարել ոչ թե մահից հետո, այլ կենդանության օրոք: Գերեզմանատունը անցյալի հիշատակն է, որ նոր սերունդների հետ զրուցում է անշշուկ, սակայն հուշում է՝ ապրել գեղեցիկ ու արժանավայել:

Ամեն մի ճշմարիտ գրող առաջին հերթին ներկայացնում է իր հայրենի եզերքը եւ նրա կենցաղն ու սովորույթները, ոգին ու ակնկալիքները: Վ. Քոչարյանի կողմից նկարագրվում է Արցախն՝ իր տերերով, իր սրբագործված դասական կեցվածքով ու կերպով: Սակայն նա երբեք չի սքողում այն երեւույթները, որոնք անհարիր են արցախցու արժանապատվությանը, ընտանեկան սովորություններին, սիրո ընկալումին, օջախի հանդեպ ունեցած բարձր պատասխանատվությանը: Այս դիտակետից օրինակելի գործ

Է «Լյուբան» պատմվածքը: Արտյոնը եկել էր կայարան՝ ընկերոջը դիմավորելու: Վերջինս այդ օրը չի գալիս: Նրան է մոտենում մի ռուս երիտասարդ կին՝ նորածին երեխան գրկած, խնդրում, որ կայարանից փոխադրի քաղաք: Պարզվում է, որ Լյուբան ժամանում է Հադրուֆ՝ Ռազմիկ անունով ամուսնու մոտ: Ռազմիկը Լյուբային ծանոթացել է բանակում՝ ծառայության ժամանակ: Ջորակոչվելուց հետո նա երբեք չի հետաքրքրվել Լյուբայի ճակատագրով, թեկուզ ունեցել են երեխա: Տեղ հասնելուց Լյուբան ցնցվում է՝ տեսնելով, որ Ռազմիկը ամուսնացել է հարուստ մի ընտանիքի դստեր՝ Արփիկի հետ: Լսելով Արփիկի նախատինքը Ռազմիկի հանդեպ՝ Լյուբան ասում է, որ իբր ինքը որոնում է Գրիշային: Ռազմիկը կոտորակված շշմջում է. «Լյուբա՛, ուզո՞ւմ ես՝ միշտ կօգնեմ քեզ»: Լյուբան արհամարհանքով պատասխանում է, որ ինքը կդաստիարակի իր որդուն:

Արտյոնը Լյուբային վերադարձնում է կայարան, գնում տոմս եւ ճանապարհում՝ եղբոր հոգածությամբ:

Վ. Քոչարյանը խիստ խարազանում է Ռազմիկի վարքը՝ նրան հակադրելով արցախցու այն վեհությունը, որ դրսևորվում է Արտյոնի արարքում:

Հասուն գրչի արտահայտություն է «Հանրագումար» պատմվածքը, որը մարդու անցած կյանքի փիլիսոփայությունն է՝ արտահայտված գեղարվեստական ոչ սովորական հնարանքներով:

\* \* \*

Իր ինքնակենսագրականը ներկայացնելիս Վ. Քոչարյանն ընդգծել է. «Սինչեւ տասնհինգս լրանալը կարդացել են աշխարհի բոլոր ժողովուրդների բազմաթիվ այն հեքիաթները, որոնք կային մարզային գրադարանում: Այնուհետև ռազմական թեմատիկայով հրապուրվեցի, անցա ֆանտաստիկային ու երկար ժամանակ գամված մնացի տեղեկատվական, գիտատեխնիկական հոդվածներին, որպիսիք հրապարակվում են «Նաուկա ի Ժիզն», «Տեխնիկա մոլոդյոժի» տիպի հանդեսներում» (էջ 5): Ապա նշվում են այն գրողների անունները, ովքեր հարստացրել են համաշխարհային գիտաֆանտաստիկ գրականությունը: Եվ երբեք էլ չի կարելի պատահականություն համարել Վ. Քոչարյանի հաջող փորձերը գիտաֆանտաստիկայի բնագավառում:

Ընթերցողին հրապուրում է ոչ միայն Վ. Քոչարյանի ֆանտագիան, այլևս համաշխարհային ասպարեզում գիտատեխնիկական նորությունների, գիտության տարբեր բնագավառների հնօրյա եւ նորօրյա նվաճումների իմացությունը, 20-րդ դարում գիտության առջև ծառայած հիմնախնդիրներին եւ դրանց լուծման ծրագրերին ծանոթ լինելը:

Եվ պարզ է, որ առանց դրանց, գրողը չի կարող ստեղծել գիտաֆանտաստիկ երկեր, որոնց հիմքում ռեալ ձեռքբերումների պաշարն է, իսկ ակնկալիքներում՝ իրականու-

թյուն դարձվող ելակետերը:

Պետք է նշել նաեւ այն անհրաժեշտ գործոնները, որոնք կարելւոր են գրողի համար: Դա նրա պատմելու շնորհքն է, վառ երեւակայությունը եւ պատկերավոր մտածողությունը:

Գիտության բնագավառների ներկայացուցիչների գրական կերպարների ստեղծումը, նրանց գործունեության մթնոլորտի պատկերումը, հետաքրքրաշարժ երկխոսությունների հորինումը, երկրային եւ արտաերկրային առեղծվածների մատուցումը, մարդու եւ գերմարդու փիլիսոփայական ընդհանրացումների յուրացումը, տիեզերքի եւ արեգակնային համակարգի մասին եղած պատմությունների սերտումը հնարավորություն են տվել Վալերիին ընթերցողին մատուցել «Համաշխարհային տիրապետության հայտ կամ դիակի գաղտնիքը», «Դիտարկումներ, գործնական գրառումներ, զուգորդություններ, ընդունված վճիռներ եւ արդյունքներ», «Երկնագույն հուրը», «Թոմսոնի սխալը», «Պրոֆեսոր Կեպլերի օրագիրը» գիտաֆանտաստիկ երկերը:

Վ. Քոչարյանին առաջին հերթին հուզում են գիտական այն հայտնագործությունները, որոնք օգտակար են մարդկությանը եւ պետքական ճշմարտություններ են: Նա կիրթ արվեստագետի իմացությամբ նկարագրում է մարդկանց հոգեկանի վրա ներգործող ուժի առկայությունն ու անհրաժեշտությունը, ապագա քաղաքացիների ինտելեկտի

չափանիշների գոյությունը, առաջ քաշում հիմնախնդիրներ.

1. Մարդկությանը պե՞տք են, արդյոք, գերմարդիկ, գերսուպերմեններ:

2. Ի՞նչ հետեւանքների կարող է հանգեցնել գերմարդու երեւան գալը, եթե հանկարծ նրա մոտ ագրեսիվ մտադրություններ ծագեն:

3. Կենդանի ամեն բան անցնում է երեք փուլ՝ ծնունդ, զարգացում, մահ: Մարդու ինտելեկտը մշտական զարգացման մեջ է գտնվում, հետեւաբար, նա ապրում է եւ, ինչպես կենդանի ամեն բան, ունի զարգացման այդ նույն փուլերը: Ինչպե՞ս վարվել, որ գիտական հայտնագործությունները մարդկությանը դեպի իր շուտափույթ կործանումը չհրեն:

Իր գրական կերպարների միջոցով տրված այս հարցերի պատասխանները կարելի է գտնել Վալերիի գիտաֆանտաստիկ գործերում: Նա ձգտում է ձեւակերպել կենսաբանական գործոնի նշանակությունը, որը դրական լինելու դեպքում կյանքի տեսողությունը երկրի վրա կարող է մեծանալ: Գիտությունը կարո՞ղ է նպաստել ընդունակությունների խորացմանը այնպես, որ հեռավորության վրա մարդ կարդա ուրիշի մտքերը, ինչպե՞ս արագացնել նորաստեղծ տիեզերական տեխնիկայի զարգացումը՝ այլ մոլորակներին հասնելու համար, արդյո՞ք արեգակնային ուրիշ համակարգերում գործում են նույն օրենքները, ինչը եւ երկրում: Սրանք հարցեր են, որ տրվում են Վալերիի երկե-

րում, որոնց շնորհիվ ընթերցումը դառնում է հետաքրքրա-  
 շարժ: Նա վերջապես քննարկման է դնում մի զուտ կարե-  
 ւոր խնդիր: Ինչպե՞ս վարվել, որ բուսական ու կենդանական  
 աշխարհի տեսակների բազմացումը լինի օգտավետ: Մարդ-  
 կությանը հայտնի են կենդանի օրգանիզմների մի շարք մու-  
 տացիոն հնարավորություններ եւ դրական արդյունքներ: Ռ-  
 րակապես նոր տեսակներ են ստացվել նաեւ բուսական աշ-  
 խարհում: Սակայն բնությունը խնամքով պահպանել է իր  
 սահմանները, որ չի կարելի խախտել: Գիտության նվաճում-  
 ները չպետք է տրվեն ավանտյուրիստների տնօրինությանը:  
 Ինչպես գիտնական Ավենսոնն է որոշում. «Պետք է ամբողջ  
 աշխարհն իմանա, թե ինչ կարող է սպասել մեզ, երբ գիտու-  
 թյունը, ուժն ու իշխանությունը հայտնվում են սրիկաների  
 ձեռքում» (էջ 231):

Այս է Վ. Քոչարյանի գիտաֆանտաստիկ երկերի գա-  
 ղափարական ընդհանրացումը, որ ունի արդիական հնչո-  
 ղություն եւ ունենալու է ապագայում:

Իր գեղարվեստական ժառանգությամբ Վալերին ա-  
 պացուցել է, որ ինքը ծնվել է որպես գրող եւ իր երկերով  
 մտերմորեն զրուցելու է սերունդների հետ:

Ազատամարտիկ-հերոս Վ.Քոչարյանը զոհվեց թռիչքի  
 մեջ, սակայն այդ թռիչքը չի ընդհատվել, շարունակվում է  
 երկթեւյա՝ ե՛ւ իր հայրենանվեր կյանքով, ե՛ւ իր ինքնատիպ  
 գրական ժառանգությամբ:

## ԻԼՅԱ ԱՐՑԱԽԵՑԻ (ԻԼՅԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ)

Հայ ժողովրդի արցախյան ազատագրական գոյամարտը հայոց հարուստ պատմության անհրաժեշտ ու պատվաբեր էջերից է, էջ՝ վճռականության, ազատաբաղձ ոգու, արշալուսված հաղթանակի: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն իր եռագույնով, զինանշանով, օրհներգով ու սահմանադրությամբ ապացույցն է այն արդարածին ճշմարտության, որ դարերի բեռն ուսած քաղաքակիրթ ժողովուրդն իրավունք ունի ապրելու ինքնիշխան, անկախ եւ ազատ: Ապացուցված է նաեւ ժողովրդական այն իմաստությունը, որ թշնամու ամենակուլ երախից փրկվելու միակ միջոցը զենքն է, վկան՝ հազարավոր մեր նահատակների սրբագործված արյունն ու նժդեհված պատգամը: Իսկ այն սերնդապահ պատգամը մեր արդարացի պատերազմի գեղարվեստական վավերագրությունն է, որ ե՛ւ հյուսվել է, ե՛ւ պետք է հյուսվի պահանջվող մակարդակով: Այս առումով բավականին ներդրում ունեն Արցախի մեր գրական օջախի բանաստեղծներն ու արձակագիրները: Սակայն մեր գրողները դեռեւս անելիքներ շատ ունեն, քանզի նրանք ականատեսներն ու մասնակիցներն են այն համա-ժողովրդական հերոսության ու անձնվիրության, որ ցու-





ցաբերվեցին Ադրբեջանի կողմից մեզ պարտադրված պատերազմում:

Արդարացի չի լինի, եթե չընդգծենք Գ.Գաբրիելյանի, Վ.Չակոբյանի, Յ.Բեգլարյանի, Ն.Ավագյանի, Ա.Յովհաննիսյանի, Ս.Խանյանի եւ մյուս բանաստեղծների չափածո բազմաժանր ստեղծագործությունների առկայությունը, միաժամանակ արդարացի կլինի մատնացույց անել նաեւ արծակագիրներ Մ.Յովհաննիսյանի, Կ.Դանիելյանի, Մ.Պետրոսյանի, Կ.Գաբրիելյանի, Մ.Ռբնի եւ այլոց պատմվածքներն ու վիպակները, ակնարկներն ու օրագրությունները պատերազմական թեմաներով: Կրկնակի հաճելին այն է, որ իրենց չափածո եւ արծակ ստեղծագործություններով հանդես եկան նաեւ պատերազմական գործողությունների անմիջական մասնակիցներ Ս.Քամալյանը, Ռ.Եսայանը, Ն.Գասպարյանը, Յ.Ալեքսանյանը, Ա.Գրիգորյանը, Ս.Չասրաթյանը եւ այլոք: Այսօր կարող ենք հանգիստ խղճով ասել, որ Արցախի գրական ընտանիքը իր նկատելի նպաստն է բերել մեր գոյամարտի գեղարվեստական վավերագրության մեջ:

Անհրաժեշտ է նշել նաեւ այն երեւույթը, որ Ղարաբաղյան շարժման եւ արցախյան պատերազմի հանդեպ որդիական իրենց տազնապներն ու մասնակցությունն են ցուցաբերել Չայաստանում ապրող եւ ստեղծագործող գրողները՝ հերոսական մեր տարեգրությունը հարստացնելով չափածո եւ արծակ պատումներով: Այստեղ արժե խոսել Իլյա Արցախեցու գրական հունձքի մասին:

Իյա Արցախեցին ծնվել է 1935 թ., Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղում: Յոթնամյան ավարտել է ծննդավայրում, իսկ միջնակարգը՝ նույն շրջանի Կուսապատի տասնամյա դպրոցում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աշխատել է ՀՀ Ներքին գործերի (ոստիկանություն) նախարարությունում: 1980-1990-ական թվականներին վարել է «Աշխատանքային ուղիով» թերթի խմբագրի պաշտոնը:

ՀՀ Ժուռնալիստների, Արցախի եւ Հայաստանի գրողների միության անդամ է: Ավելի քան 20 գրքերի հեղինակ:

2005թ. լույս է տեսել նրա «Ձայն արդարության» բանաստեղծությունների ժողովածուն՝ թողնելով հաճելի տպավորություն: Իսկ 2006թ. Երեւանում «Ամարաս» հրատարակչությունը տպագրել է «Արցախի ճիչը» արձակ երկերի գիրքը, որը արցախյան շարժման, ազատագրական պայքարի մասին գրված՝ «Օրհնված հող» (1993), «Մարդու ճակատագիրը» (1994), «Երկունքի տարիներ» (1998), «Դարի երգով» (2000), «Հոգուս ճիչը» (2003) ժողովածուների ընտրանին է: Ինչպես տեսնում ենք, Ի.Արցախեցին գրողի բավականին ճանապարհ անցած, բնատուր շնորհքով օժտված ստեղծագործող է:

Գրքում զետեղված 19 պատմվածքները եւ «Կյանքը շարունակվում է» վիպակը ժամանակագրական առումով մեկը մյուսի շարունակությունն են կազմում: Առաջին պատմվածքը թվագրված է 1988, իսկ վերջինը՝ 1999: Սակայն խոսքը միայն թվագրությանը չի վերաբերում, այլ

Կատույնների թեմաներին՝ Արցախում եւ Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների ընդգրկումով: Հեղինակը պատկերավոր մտածողության սահմաններում ներկայացնում է ե՛լ ժողովրդի ըմբոստության ալիքը 1988-ին, ե՛ւ շիկացած պատերազմական գործողությունները՝ հերոսական ընթացքով, ե՛ւ որոշակի խաղաղ պայմաններում մարդկանց շրջանում բարոյահոգեբանական վայրիվերումները, ինչպես նաեւ հավատը հրդեհների միջից փրկված գալիքի հանդեպ: Ահա, այս դիտարկումով Ի. Արցախեցու ամբողջ ժողովածուն կարելի է համարել ստեղծագործությունների ընդհանրացնող շարք՝ առաջին հերթին ժողովրդի ճակատագրի, նրա կրած զրկանքների, հարատեւելու նրա աստվածանվեր կամքի եւ արարող մտքի վերաբերյալ:

Պատմելու առինքնող շնորհք ունի Ի. Արցախեցին: Կոմպոզիցիոն տարբեր ձեւերով եւ միջոցներով նա ընթերցողին մասնակից է դարձնում նկարագրվող երեւույթներին, հետաքրքրում, հուզում, ազդում: Չի քարոզում, պատկերում է գեղարվեստական հնարանքներով, երբեք չկեղծելով կերպարների հոգեկան ապրումները ցուցադրելիս: Այսպես, կարդում ես «Մենք հաղթելու ենք» պատմվածքը, ճշմարտացիորեն պատկերվում է հայ մտավորականության 1920-ական թվականներից մինչեւ 1988-ը դրսեւորած ընդվզումները՝ Արցախն Ադրբեջանի ճիրաններից ազատելու եւ Մայր Հայաստանին վերամիավորելու ուղղությամբ եւ այդ համապատկերի վրա 1988 թվականին

սկիզբ առած համաժողովրդական պայքարը: Պատմվածքի գլխավոր կերպարները հայր եւ աղջիկ են: Հայրը՝ Հայկը, Խորհրդային 70 տարիների ընթացքում կոմկուսի Կենտկոմի թուրքամետ քաղաքականության դեմ մարտնչող, արտորներում տաժանակիր կյանք տեսած ազնիվ հայ մտավորական է, իսկ նրա դուստրը՝ Աղավնին, 1988 թվականից ազգային ազատագրական պայքարի նվիրված զինվորյալ: Հայրը խարխլված հավատ ունի սովետական իշխանությունների հանդեպ, չի վստահում գորբաչովյան «Պերեստրոյկային», համարում է խաբեություն եւ տազնապում է դստեր ճակատագրի համար: Նա սովետական պետությունը որակում է «մսաղաց» դիպուկ անվանումով: Աղավնին, սակայն, վճռական է, գտնում է, որ եկել է պահը՝ Արցախի ազատությունն ապահովելու՝ թեկուզ կյանքի գնով: «Մենք հաղթելու ենք» պատմվածքը հաջողված մի պատկեր է հայ ժողովրդի հավաքական ուժի եւ լուսաբեր նպատակի մասին:

Ի. Արցախեցին հոգեբան գրող է: Նա ուշադրություն է դարձնում բնության պատկերի եւ պատկեր-ապրումի համաձուլվածքին, որոնցով էլ ապահովվում է կերպարների ներաշխարհի եւ բնության մասունքների ներդաշնակությունը: Նման դեպքում ուղղակի շահում է նա: Այս առումով օրինակելի է «Նա չէր մեռնում» պատմվածքը: Արցախյան տիպական մի պատկեր է այն թե՛ նկարագրվող միջավայրի եւ թե՛ բարբառի չափավոր օգտագործման տեսակետից: Պատմվածքի գլխավոր կերպարը Աթաբեկ դային է:

Նա սովորական մարդ չէ: Աշխարհ տեսած, տարիների վաստակ ունեցող, ժողովրդի կենսափորձով իմաստնացած հայ է: Անտառապահ, հանդապահ, դիպուկ որսորդ այդ գյուղացին հոգու մեջ է առել ոչ միայն հայրենի բնության անզուգական գեղեցկությունները, այլև հասկացել է կյանքի մատուցած եւ դեռ սպասվող հարվածների դասերը: Նա ներաշխարհով գեղեցիկ է այնքան, որքան իրեն սնող բնության հրաշքները: Սակայն զգայուն եւ զգոն է, քանզի ազերի-թուրք հարեւանը հեռուներից ներխուժել եւ աչք է տնկել Արցախի բնիկ տիրոջ հողի եւ օջախի վրա: Ազերի հարեւանը շողոքորթ է, նենգամիտ, խաբեբա եւ միաժամանակ սանձարձակ, որովհետեւ նրա անբարո իշխանության երախն է նետվել արցախցին: Եվ իր պապերի կյանքի դասերը սերտած Աթաբեկ պապը իր մահվան նախաշեմին սեփական դասն է հրամցնում նոր սերնդին, որի ներկայացուցիչը պատմվածքում բարձրդասարանցի Վրույրն է: Հեղինակը Վրույրի շրթերով, քնարական շնչով ներկայացնում է Աթաբեկ դայու տազնապն ու պահանջը մահվանից առաջ: Քաղաքից ժամանած նրա երկու տղաները՝ կանանց եւ երեխաների հետ, կարծես անտարբեր են ու չեն հասկանում, թե ինչ է ուզում ծերունին: Վերջինիս պահանջով ներկայացնում է հարեւանի տղան՝ Վրույրը: Պարզվում է առեղծվածը: Աթաբեկ դային խոսում է երկփողանի իր հրացանի մասին, որ օրեր առաջ միլիցիայից եկել, տարել էին՝ հրահանգելով, որ վերելից կարգադրություն կա: Իսկ օրեր անց Աթաբեկ պապիին պատմել էին,

որ Ստեփանակերտում ժողով է եղել, ժողովականներն ասել էին, թե Ղարաբաղը պիտի միանա Հայաստանին, իսկ Բաքուն էլ ասել էր՝ «Հողը մերն ա»: Եվ որպեսզի ախպեր դարձած հարեւաններն իրար չկոտորեն հրացանները հավաքել էին: Իսկ մի քանի օր հետո, երբ Աթաբեկ դային լսել էր, որ «ախպեր» կոչվող ազերիները հարձակվել էին հարեւան հայկական գյուղի վրա եւ հայերը մահակով ու եղանով եկել են իրենց ինչքն ու կյանքը պաշտպանելու, մոռացացել է, «Բա ես նենեցի գանգը ջարդեմ, որ այսօր գլուխս լեշահոտ թուրքի ոտի տակ դնե՞մ»: Եվ հենց այդ օրվանից Աթաբեկ դային անկողին էր ընկել եւ անգամ գառանցանքի մեջ իր հրացանն էր ուզում: Իրադարձությունների հրամայականով համագյուղացիներից մեկը մի ուրիշ երեքփողանի հրացան է բերում: Ծերունին շոյում, համբուրում է երեքփողանին, ապա դիմում Վրույրին. «Ա՛ռ, քեզ հալալ լինի, հողը պահողը տու ըս, հողը պահողինն ա»: Հուզիչ է նաեւ պատմվածքի ավարտը, իսկ եւ իսկ՝ հայոց-արցախյան: Ծերունու մահից հետո նրա գերեզմանին կանգնեցված շիրմաքարին քանդակվում է նաեւ՝ ձիու վրա նստած, հրացանն ուսին: Խոսուն այս պատկերը ներկայացվում է որպես գոյատեւման դաս գալիք սերունդներին:

Ի.Արցախեցու պատմվածքները կարդալիս ասես կինոէկրանի վրա տեսնում ես այն ցասունալից, դաժան օրերը՝ հակասական ապրումների, հուսալքությունների, վրիժառության լիցքերով: Ուրքի ելած Արցախին Սովետական իշխանությունը խաբեությամբ օղակի մեջ է առել,

Ժճնել աղբբեջանական ՕՍՕՆ-ը, Շուշիի բանտը դարձրել ազերի գեստապոյականների շտաբ, որտեղ տանջում ու ջարդում էին հայրենասեր հայ քաղաքացիներին: Այս սարսափելի արարքները պատկերող գործերից է «Հուշերը հանգչող ուղեղում» պատմվածքը, որտեղ նկարագրված է եղվարդի կրած տառապանքը եւ մահը:

Ցնցող մի պատկեր է նաեւ «Ծածկել էի աչքերը, որ...» պատմվածքը՝ Գետաշենի աղետալի օրերի մասին: Մեծ հայրենականի ժամանակ Կիելում ֆաշիստների վայրագությունների ականատես ուկրաինուհին դեպքերի բերումով, հետպատերազմյան շրջանում այցելում է Գետաշեն եւ ամուսնանում հայ երիտասարդի հետ: Ունենում են զավակներ, թոռներ: Սակայն Ղարաբաղյան շարժման ընթացքում ազերի ՕՍՕՆ-ականները խորհրդային տանկերի ուղեկցությամբ խուժում են Գետաշեն: Թուրքերը սպանում են նրա ամուսնուն, որդուն, հարսին՝ դաշտում խաղաղ աշխատանքի պահին, աչքերի առջեւ գնդակահարում նաեւ կեսրայրին: Գետաշենցի ուկրաինուհի տատիկը մի կերպ փրկում է փոքրիկ թոռանը՝ միշտ ծածկելով նրա աչքերը, որ չտեսնի ազերի ՕՍՕՆ-ականների վայրագություններն այնպես, ինչպես ինքն է տեսել ֆաշիստների կողմից կատարված զազանություններն անմեղ մարդկանց հանդեպ:

Ի. Արցախեցին պատմվածքներում մի կողմից փառաբանում է ազգային ազատագրական պայքարին նվիրված

քաջազուններին, մյուս կողմից երգիծական հնարանքներով խարազանում նրանց, ովքեր ժողովրդական պայքարը դարձրել են պատվանդան, ձեռք բերել պաշտոններ, ծառայելով իրենց անձնական շահերին: Նման գործերից է «Հետո կիմանաս» պատմվածքը: Այստեղ երգիծական կերպարներ են Աշոտը եւ Հակոբը, որոնք օգտվելով ընձեռնված հնարավորություններից, հասնում են շահաբեր պաշտոնների, արհամարհում ժողովրդին, իրենց համար կենսավորման լուուևգ դարձնելով «Թալանչիներից վերցնելը ո՛չ անաստվածություն է, ո՛չ էլ կաշառակերություն. ապրել է պետք» համոզմունքը:

«Վտանգավոր մարդը» պատմվածքում քննադատության սլաքը ուղղված է այնպիսի մարդկանց դեմ, ովքեր շահարկելով Ղարաբաղյան շարժումը, կազմակերպում էին «Ընկերություններ» եւ մսխում հավաքած գումարները: Նման «գործիչներից» է Գագիկը, որին «ուղտ Գագո» էին կոչում: Նա հիմնադրում է «Լույս» ընկերությունը, իրեն հայտարարում նախագահ, գրպանելով նվիրատվությունները: Դժվար չէ նկատել, որ հեղինակը քննադատում է «Ղարաբաղ» կոմիտեի մեջ մտած այն «գործիչներին», ովքեր հալածում էին նույնիսկ անձնուրաց ազատամարտիկներին: Պատմվածքի ազնիվ հերոսներից է ՀԱԲ-ի «Մաուզեր Բաթ» մականունն ստացած ազատամարտիկը, որը վտանգավոր տարր էր համարվում եւ կոմունիստական տոտալիտար իշխանության օրոք, եւ «Ղարաբաղ» կոմի-



տեի կողմից: Պատմվածքը կյանքի ճշմարիտ պատկեր է, օտյանական երգիծանքի երանգներով:

Ի. Արցախեցին հոգու աչքերով է տեսել ազատության համար ուղքի ելած ժողովրդի մարտնչող ոգին: Այս առումով խոսում է «Արցախի ճուտ» գործը: Նրանում ներկայացվում է մի գերդաստանի հերոսական պայքարը, որին լծված է նաեւ պատանի Հարությունը, որը թուրքերի շրջափակման մեջ գտնվող Կիչանից Վանք գյուղ է հասցնում հրամանատարի կարեւոր նամակը:

Պատմական ճշմարտության հավատարիմ գրող է Ի.Արցախեցին: Նա ոչինչ չի սքողում, չի հնարում, ներկայացնում է իրական փաստերը՝ գեղարվեստական միջոցներով: Դրա լավագույն վկայությունը «Արթնացած խիղճ» պատմվածքն է: Կյանքի ծանր օրերին հայուհին մայրություն է արել թուրք Ռաշիդին, կրթել, դասամատյանում գրելով Բալասանյան Ռաշիդ: Վերջինս երեւանում ստանալով բարձրագույն կրթություն, ժամանակին քննադատում էր Ադրբեջանի կառավարիչներին, որ հայաթափ են արել Նախիջևանը եւ ձգտում են նույն բախտին արժանացնել Արցախը: Իսկ երբ սկսվել է Ղարաբաղյան շարժումը, իր վերաբերմունքը փոխել է եւ նույնիսկ ձգտում է տիրանալ իրեն մայրություն արած Թամարի երկհարկանի տանը: Այնուամենայնիվ, գտնվում է մի ազերի՝ Ռաշիդի վարորդ Վագիֆը, որ հիշելով Բաքվում Շողեր տատիկի բարությունը եւ Աշոտի ազնիվ ընկերությունը, արթնացած

Խղճով փրկում է Թամարին՝ ավտոմեքենայով հայաթափված գյուղից հասցնելով Հայաստանի սահմանը:

Մեր ժողովրդին պարտադրած պատերազմի տարիներին նրա կրած տառապանքի, օջախների կորուստի, երազների բզկտման, մարդկային առինքնող բարեմասնությունների, միաժամանակ առանձին «ֆիդայիների» ոչ մարդկային արարքների հաջող մի պատկեր է «Կովը պանսիոնատում» պատմվածքը: Ով ականատես է եղել կամ մասնակցել է պատերազմական իրադարձություններին, կարող է հաստատել պատմվածքում նկարագրված երեւույթները, համոզվել կերպարների հոգեբանական բացահայտումներում: Պատմվածքի առաջին մասում պատկերված են Արցախում տեղի ունեցած ծանր օրերը, գյուղերի դատարկվելը, բնակչության տազնապները եւ փախուստը, եւ այդ համապատկերի վրա առանձին «ֆիդայիների» կազմակերպած ավարառությունները: Ներկայացվում են արցախցի Նախշուն տատիկի ծանր ապրումները՝ իր երկհարկանի լուսավոր տանը, Նարգիզ կովը հորթի հետ թշնամու ձեռքը անցնելու պատճառով: Նախշուն տատիկի թոռը՝ Նորայրը, մարտնչում է ռազմաճակատում: Տատիկը, որպես փախստական, տեղավորվում է հայաստանյան պանսիոնատներից մեկում, ուր ապրում է նաեւ Արցախից տեղափոխված մի քանի երեխա ունեցող ընտանիք: Մի անգամ ընտանիքի փոքրիկի հիվանդությունը ստիպում է Նախշուն տատիկին գնալ հարեւան գյուղ՝ կաթ խնդրելու նպատա-

Կով: Այստեղ նա հանդիպում է մի «Ֆիդայու», որի տանը տեսնում է իր ունեցվածքը, ինչպես նաեւ Նարգիզ կովին: «Ֆիդայու» կինը խղճի թելադրանքով դիմում է Նախշուն տատիկին, որ կովը տանի իր հետ: Պանսիոնատի տնօրենը զարմանում է, իսկ երեխաները ուրախանում են, որ կաթ կունենան: Սրտառուչ, ճշմարտապատում այս պատմվածքը արցախյան պատերազմի ծանրությունը պատկերող մնայուն գործերից մեկն է:

Ի.Արցախեցու արցախյան պատումները մեր ազգային ազատագրական գոյամարտը ներկայացնող բազմերանգ հյուսվածքներն են: Նրանցում բացահայտված են արցախեցու հավատի, ազնվության, հիասթափության, վճռականության, կամքի առանձնահատուկ երանգները: Արցախցի պապի, հոր, որդու, թռռան ավանդական փոխհարաբերությունների շրջանակներում գրողը ցույց է տալիս հայ մարդու եւ նրա դիմաց ազերի-թուրքի ներաշխարհները՝ ընդգծված տարբերությամբ: Հայը՝ իր պապերի բացած աղբյուրի պես զուլալ հոգով եւ վստահող սրտով, ազերի-թուրքը՝ սելավի պես պղտոր ձգտումներով եւ չարամիտ արարքներով: Այս առումով բնութագրական պատմվածքներից է «Ուշ հասկացավ» գործը: Հաստատված է, որ արվեստի ուժը ճշմարտացիության մեջ է: Ի.Արցախեցու պատմվածքները՝ պատերազմական թեմայով, հագեցված են իրական փաստերով: Տվյալ պատմվածքում նկարագրված է հայ ընտանիքը՝ հովիվ պապը, նրա որդին՝ կոլտնտեսու-

Յայն կոմունիստ նախագահը եւ վերջինիս որդին, որ հասակ է առնում մի կողմից պապի բյուրեղյա հավատի, մյուս կողմից էլ Ադրբեջանի հայակործան քաղաքականության հանդեպ հաշտվող հոր անընդունելի կեցվածքի մթնոլորտում: Հայ նախագահի նորոթյա եղբայրացուն Թալիբ անունով քելբաջարցի թուրքն է: Բաքվի կուսդպրոցում միասին էին սովորել: Մինչեւ դարաբաղյան շարժումը նրանք երկուսով, երբեմն էլ ընկերներով գալիս էին հայ քիթվայի տուն եւ օրերով քեֆ անում: Հայ հովիվ պապը չէր ուզում հացի նստել թուրքի հետ, որովհետեւ տեսել էր 1915-1918 թթ. նրանց գործած գազանությունները հայ հարեւանների հանդեպ: Միշտ վիճում էին հայր ու որդի: Եվ երբ սկսվում է Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմը, Թալիբը միանում է ազերի թալանչիներին եւ վայրագություններ գործում հայկական բնակավայրերում, նույնիսկ նպաստում անմեղ մարդկանց պատանդ վերցնելուն եւ զոհելուն: Իրար հաջորդում են պատերազմական տարիները, ազատագրում են Շուշին, Մարտակերտի շրջանի գյուղերը: Պապը հրաժեշտ էր տվել կյանքին: Նախագահ հայրը եւ նրա հասունացած որդին իրենց հարեւան, բազմազավակ Վարդգեսի հետ գնում են Քելբաջար: Հայրը ցանկանում է տեսնել, թե ինչ վիճակում է եղբայրացու Թալիբի բարձրահարկ տունը, ցնցվում է՝ տեսնելով իր տան թալանված կարողությունը: Որդին ավելի է ցնցվում՝ նկատելով, թե ինչպես են տատի գործած կարպետին իր անվան փոխարեն

ասեղնագործել կիսալուսին: Վերջում որդին հումորով դիմում է հորը. «Ջայրիկ, Թալիբը են մարդը չի, նա քեզ չի թալանել, բերել է՝ պահի, որ...»:

Հավատարիմ պատմական ճշմարտությանը, Ի.Արցախեցին առանց թունավոր խոսքի ներկայացնում է իրականությունը՝ բացահայտելով «հարեւանի» նենգությունը, կեղծիքը, ավարառուի ազգային գեներ:

Ի.Արցախեցու պատմվածքներում ընդգծվում է նաեւ այն կենսական ճշմարտությունը, որ պատերազմը քննություն է ոչ միայն մարդկանց ֆիզիկական-հայրենասիրական ուժերը բռննցքվելու առումով, այլեւ ստուգում է նրանց բարոյահոգեբանական ներաշխարհը: Իր «Անողջ ճակատագիր», «Իմ պապը», «Ծիչը», «Մենք կռվում էինք» պատմվածքները հարցադրումի կոնկրետ, գեղագիտական պատասխաններ են: Եթե գտնվում են քաջազուններ, որոնք իրենց սրտերի միջով ճանապարհ են բացում ժողովրդի ազատության եւ արժանապատվության համար, ապա հանդես են գալիս նաեւ այնպիսի հայ անձինք, որ իրենց դաժանություններով, վարքով, խաբեությամբ մրցում են անենաստոր թուրքի հետ, ինչպես հաստափոր հայ խանութատերն է («Անողջ ճակատագիր»), «Արջ» մականունը կրող Ծատուրն է («Ասֆալտի ֆիդային») եւ այլն:

Ժողովածուում գետեղված «Կյանքը շարունակվում է» վիպակը եւս հաստատում է, որ Ի.Արցախեցին արդեն ունի արձակագրի հասուն գրիչ: Չնայած վիպակի վերջին մա-

սերում հեղինակը ինչ-որ չափով կաշկանդվել է ակնարկա-  
յին փաստագրություններում, այնուամենայնիվ, հաջող-  
ված կերպարներ են Լուսիկը, Վահանը, Էմման եւ Լեւոնը:

Ի Արցախեցու «Արցախի ծիչը» ժողովածուն մի նոր ե-  
րանգ է ավելացնում հայ գրողների այն երկերի փնջին, որ  
նվիրված է արցախյան ազգային ազատագրական պայ-  
քարին եւ պատվաբեր հաղթանակին:

\*\*\*

Իյա Արցախեցին նոր անուն չէ արդի հայ գրականու-  
թյան ասպարեզում: Ընթերցողներին հայտնի են նրա տաս-  
նյակ բանաստեղծական եւ արձակ ժողովածուները: Հրա-  
պարակի վրա է նրա «Կյանքի բավիղներում» ընտրանին:  
Գրավիչն այն է, որ գրողը շարունակելով իրեն բնութագ-  
րող ոճը, պատումների մեջ ավելի է ընդգծել խոհա-փիլի-  
սոփայական մտորումները՝ առնչված հազարամյակների ըն-  
թացքում մարդկությանը հուզող բարու եւ չարի գոյությա-  
նը: Եվ պատահական չէ, որ գրքի սեղմ բնութագրականում  
նշված է. «Գիրքը հնի եւ նորի, բարու եւ չարի պայքարի  
արտացոլումն է կյանքի բավիղներում: Հեղինակը ընթեր-  
ցողին մղում է դեպի մարդը, սերն ու բարին»:

Հիրավի, այդպես է: Հեղինակի մտահղացումների հա-  
ջող մուտքն էլ հենց «Սիրո զոհը» պատմվածքն է, որի բո-  
վանդակությունը մտահոգում է ընթերցողին՝ առաջին հեր-  
թին ազգային ճակատագրի առումով: Բարդ հանգույցներ  
չունի պատումը, այն կոնկրետ է, կենսական, շոշափում է

անհատի ճակատագիրը, որ հատուկ է մեր օրերին, մեր ժամանակակիցներից ոչ քչերին:

Պատմվածքի կոմպոզիցիոն միջոցը հեղինակային գրույցն է՝ մի առողջարանում բուժվող հայ աղջկա հոգեկան խանգարման մասին: Հեղինակը ներկայացնում է Ցողիկ անունով մի աղջկա, որին ջերմորեն սիրել է երիտասարդը եւ սիրելով էլ կործանել: Պարզվում է, որ Ցողիկը նշանված է եղել, հարսանիքի օրն էլ որոշված: Սակայն տղայի ծնողները հետաձգում են հարսանիքը, տեղափոխվում Ամերիկա, իրենց հետ տանելով նաեւ տղային: Ցողիկը մնալով հայրենիքում, ապրում է սիրած էակի նամակներով: Բայց մեկ տարի անց նա նամակ է ստանում տղայից, որ արդեն ամուսնացել է ուրիշի հետ: Հարվածը ծանր է տանում Ցողիկը՝ ստանալով հոգեկան ցնցում:

Պատմվածքի հեղինակը մեծ չարիք է համարում արտագաղթը, որով, ցավոք, տառապում են ոչ քիչ ընտանիքներ: Արդյունքում ողբերգություն են ապրում երկրի հետ հոգու անխախտելի թելերով կապված Ցողիկները, որոնց ցավը վերածվում է շրջապատի համընդհանուր տառապանքի: Պատմվածքն ավարտվում է խոհական երանգով: Պատմող-հերոսը հրաժեշտ տալով Ցողիկի դառնացած հորը, մտորում է. «Ճնշող մտքերով բռնեցի ետդարձի ճամփան՝ մտածելով չարի ու բարու մասին, թե որն է շատ»:

Պատանեկան աննոռանալի հուշերի, մարդկային խաթարված ճակատագրերի, կորսված սիրո ցավալի զգացումների, փշրված երազանքի մի հուզիչ պատկեր է «Այս-

«պես» պատմվածքը: Անհատի պաշտամունքի տարիների արտոնյալ ՊԱԿ-ի ներկայացուցիչները իրենց կեղտոտ նպատակներին հասնելու համար ազնիվ մարդկանց մեղադրում էին չեղյալ նացիոնալիզմի մեջ, նրանց կպցնելով «դաշնակցական» պիտակը: Այդպիսի հարված է ստանում նաեւ պատմվածքի հերոսուհու՝ Նվարդի հայրը: Նվարդին սիրում էր նկարիչ դասընկերը: Սակայն նրան ամուսնացնում են ուրիշի հետ եւ տանում արտասահման: Հայրենիքում ապրող նկարիչը երբեք չի մոռանում Նվարդին, ձգտում է երազի տեսիլքային երանգներով ստեղծել նրա դիմանկարը: Տարիներ անց, անսպասելի հայտնվում է Նվարդը՝ պառավության նշանները դեմքին, հոգեբանորեն փոխված, մարդկանց վերելից նայող: Նա չի հավանում նկարչի արհեստանոցը, անդադար դիմելով դասընկերներից մեկին. «Օ՛Ֆ, էրթա՛նք, էրթա՛նք, Վադինակ, էսիզա մնալու տեղ չի»: Նվարդի անտարբեր վերաբերմունքից փշրվում է նկարչի երազող սիրտը, նրա երազային պատկերը ստեղծելու երազանքը: Թե պատկերային հյուսվածքով, եւ թե՛ կերպարների հոգեկան կերտվածքով պատուհնը հանոզիչ է, խոսուն, հավաստի: Այստեղ ավելորդ չէ հիշել Մեծ Լոռեցու խորհուրդը, որ արվեստի ուժը ճշմարտացիության մեջ է:

Գյուղի համար կենսափորձը կարելու գործոն է ստեղծագործական աշխատանքում: Ի.Արցախեցու պատմվածքների գերակշիռ մասում նկատվում է կենսափորձի դրական արդյունքը՝ գեղարվեստական պատկերների



Իյուսվածքում: Կցանկանայինք մեջ բերել ռուս գրող-բանասեր Կ.Պաուստովսկու դիտարկումը սեփական կենսափորձից մակաբերված ճշմարտության մասին: Նա գրել է. «Ամեն մի երկում, նույնիսկ փոքրիկ պատմվածքում, գրողի համար գլխավորն է առավել առանձնահատկությամբ ել մինչեւ վերջ, իրեն արտահայտել ու դրանով իսկ արտահայտել իր ժամանակը եւ իր ժողովրդին: Իրեն արտահայտելու գործում գրողին ոչինչ չպետք է սահմանափակի՝ ո՛չ կեղծ ամոթն ընթերցողներից, ո՛չ վախն այն բանը կրկնելուց, ինչ արդեն ասել են (բայց այլ կերպ) մյուս գրողները, ո՛չ էլ ավելորդ զգուշությունը քննադատներից ու խմբագիրներից:

Աշխատելիս պետք է մոռանաս ամեն ինչ եւ գրես ինքդ քեզ համար կամ աշխարհում սրտիդ ամենամոտ մարդու համար»:

Տեղին է ասված: Այս մտտեցումը պայմանավորում է գրողի եւ անկեղծությունը, եւ պատումի անմիջականությունը: Որպես օրինակ կարող ենք բերել Ի.Արցախեցու «Վաչագան դային» պատմվածքը: Դպրոցական տարիների վառ հուշերի հուզիչ մի պատկեր է այն: Վաչագան դային հանդես է բերված որպես հայրենի ծորերի, դաշտերի պահապան արծիվ, որի աչքից ոչինչ չի վրիպում: Գյուղի յոթնամյան ավարտած տղաները իրենց ուսումը պիտի շարունակեն հարեւան գյուղի միջնակարգում: Վաչագան դային մասնակցել է Մեծ հայրենական պատերազմին, վերադարձել մի թեւանի: Գյուղի ունեցվածքը պահպանելու նրա

Դաստուօթյան մեջ կա այնպիսի հոգատարություն դեպի չարածի դպրոցականները, որ պատերազմական հրդեհների մեջ կոփված մարդուն է հատուկ: Նա այդպես է վարվում 9-րդիներ Մուշեղի, Սուրենի եւ մյուսների հանդեպ: Վաչագան դային չի մոռացել հեռուներում զոհված իր համագյուղացիներին, ուստի նրանց երեխաներին ընդունում է հոր զգացումներով՝ իմաստուն, ներողամիտ: Ծանր հուշերի եւ խոհերի հոսքի մեջ հառնում է նա՝ որպես ավանդական-նահապետական հոգացուծյամբ կյանքին իմաստ հաղորդող հայ մարդու կերպար: Նրան լավ է հասկանում ավեհեր ջրաղացպանը: Վաչագան դային օգնել էր զոհվածի երեխային, որ շալակով ցորեն էր տանում աղալու: Ջրաղացպանը նրանց հյուրասիրում է երկու կտոր հացով, կանաչիով եւ պանրով ու հուսադրում. «Անո՛ւշ արեք, կռիվը վար լավ պրծնե, ուտելի պան շատ կլինի»:

Դպրոցականների մտերմությունը Վաչագան դայու հետ ավելի էր քաղցրացնում Արցախի լեռնալանջերին ծվարած գյուղերի պատանիների առօրյան:

Չեղինակը վերհուշի ձեւով ընթերցողին հասցնում է տարիներ անց տեղի ունեցած իրադարձությունների գիրկը: Երբեմնի դպրոցականներից ոմանք ուսանում են բուհերում, ոմանք ծառայում են բանակի շարքերում: Եվ երբ նրանք վերադառնում են գյուղ, անպայման հանդիպում են Վաչագան դայուն, շարունակում նույն կատակները, հին անեկդոտներին գունարում նորը եւ աշխուժանում:

Պատմվածքն ավարտվում է ավստսանքի եւ ներքին

անբացատրելի մի զգացումով, որ գալիս է դարերի խորքից եւ առեղծվածային երանգներով շարունակվում մեր օրերում: Սկսվում է Արցախի ազգային ազատագրական շարժումը: Արդեն ծերունագարդ Վաչագան դային իր երկփողանի հրացանը հանձնում է երիտասարդներից մեկին եւ պատվիրում. «Ա՛ խոխա, լա՛վ գիդացեք, կռիվա ինելու, էս մաշադիները Հիտլերից բեթարըն»:

Ճիշտ էր կռահել իմաստուն արցախցի Վաչագան դային, ճիշտ էր կռահել թուրք-մեշադիների նողկալի նկրտումը, սակայն չէր սպասել, որ 1992-ի ամռանը խորհրդային զինվորները պիտի ադրբեջանցիների հետ մտնեին իրենց գյուղը եւ մորթեին իրեն՝ անկողնուն գամված վիճակում:

Ընդհանրության մեջ կենսական երեւույթներից են ընտրված Ի.Արցախեցու ստեղծագործությունների թեմաները: Ժամանակավրեպ հարցեր չի շոշափում նա: Այդ է վկայում նաեւ «Կհասկանա» պատմվածքը: Նկարիչ Սերոբը, որ քաղաքից կարոտով այցելում է պապենական գյուղ, մի անգամ, աննկատելի նկարում է թախծի մեջ երազող մի կնոջ: Վերջինս կիսավեր բակում, նստարանին նստած, շոյում էր շանը: Այնքան հաջող է ստացվում այդ նկարը, որ արժանանում է մրցանակի: Արվեստագետ Բելովը հողված է գրում «Թախիծ» անվանված այդ նկարի մասին, տպագրում թերթում, զետեղելով նաեւ նկարի պատճենը: Երիտասարդ կնոջ անուսինը, որ արտագնա աշխատանքի մեջ է միշտ լինում, տեսնում է նկարը եւ խանդում: Սերոբը իր ընկերոջ՝ Անդրանիկի հետ գնում է գյուղ եւ բացատրում, որ նրա կի-

նը չի էլ նկատել, որ իրեն նկարում է: Վերջապես երիտասարդ անուսիճը հանոզվում է դրանում: Սակայն դա չէ հեղինակի միտումը: Նա ընկերոջ՝ Անդրանիկի միջոցով բացում է պատմվածքի գաղափարը. «Մեր ախպերը, եթե հասկանա, որ կինը աչքը ճամփին, այս խեղճ ու կրակ տանը մենակ, անուսնու հետ զրուցելու փոխարեն շան հետ էր զրույց անում...»:

Նովելային այս ավարտը, առանց ավելորդ պարզաբանման հասկանալի է դառնում ընթերցողի համար:

«Ով ինչով է ապրում» պատմվածքը մարդկային հարաբերությունների մեջ գոյություն ունեցող դեռևս չհղկված, վայրիվերո արարքների հիմնախնդրի մասին է: Պատումի մեջ հանդես են գալիս ընտանիքի հակամետ ներկայացուցիչներ: Մի կողմից տարիների փորձ ունեցող պապն է՝ թռռան հետ, մյուս կողմից մայրը, հայրը եւ որդին: Պարզվում է, որ մայրը կյանքը տեսնում է ծուռ հայելու մեջ: Չհասկանալով կենդանիների հանդեպ սրտացավ վերաբերմունք ցուցաբերելու պահանջը, նա իրեն դրսևորում է անմարդկային վարքով, վիրավորելով անգամ իր փոքրիկ տղային, որ ձգտում էր որպեսզի իրենց շունը չկեղտոտի հասարակական միջավայրը: Մոր անտեղի, ավելորդ խստությունը ստիպում է որդուն, որ մոր երեսին չպրտի. «Դու էլ միայն կեղտոտ շան համար ինձ ծեծել գիտե՛ս, լավ կլինի, որ իմ անունը «Տուզիկ» դնես, ի՛նձ սիրես, ոչ թե այդ կեղտոտ շանը»: Հեղինակի միտումը հասկանալի է դառնում հենց վերնագրով՝ «Ով ինչով է ապ-

րում»:

Մարդկային բնավորությունների դրսևորման մասին է նաեւ «Խելացի շունը» պատմվածքը, որտեղ հավատարիմ շան եւ մեծատառով Մարդու պահանջն է ընդգծում: Դրանք հակադրված են պատմվածքի բացասական կերպարին՝ անսիրտ ու ազահ Վահանին: Հեղինակային հարցադրումը հնչում է պատմվածքի մուտքում. «Ինչ որ լսել եմ, նման է հեքիաթի, բայց դե կյանքն էլ է հեքիաթ»:

Ի Արցախեցու պատմվածքները աչքի են ընկնում ե՛ւ գաղափարական ակտուալությամբ, ե՛ւ թեմայի խոր ու համակողմանի արծարծումով: Նրա յուրաքանչյուր ընտրած նյութի իմաստավորումը երանգավորվում է ազգային ավանդույթների ընդգծումով: Նա հայտնաբերում է կյանքից վերացարկված իր աշխարհը, ուր գոյություն ունեն ուրախություն, ցավ, տառապանք:

Գրողի խոսքը ուղղակի հնչում է որպես պատգամ: Որպես օրինակ, կարելի է նշել «Հեռախոսավարուհին» պատմվածքը, որտեղ առկա է սիրո ջերմ զգացումը եւ ապա հիասթափությունը: Սիրո առաջարկից ուշացած երիտասարդը խորհում է այսպես. «Դժբախտը միայն նա չէ, որ դժբախտ է ծնվում»:

Ծնողների եւ զավակների փոխադարձ վերաբերմունքի հարցն է շոշափված «Վիրավորված մայրը» ստեղծագործության մեջ: Չնչին, բայց տեղին մի դիտողության համար որդին ու հարսը լքում են մորը եւ հեռանում, այն դեպ-

քում, երբ մայրը երիտասարդ տարիքում կորցրել է ամուսնուն, չի ամուսնացել երկրորդ անգամ, կյանքը նվիրելով որդուն: Պատմվածքն ավարտվում է միայնության մեջ տառապող մոր խորհրդածությամբ: Նա վերհիշում է ընկերուհու կշտամբանքներն ու հորդորները. «Վարդիթեր, դու իզուր ես մերժում քո ձեռքը խնդրողներին, միշտ ջահել ու գեղեցիկ չես մնալու, ամուսնացի՛ր, քանի ուշ չէ: Ամեն մեկն իր կյանքն ունի: Իմացի՛ր, միշտ չէ, որ հույսը ծլում է»:

Երիտասարդ տարիների գեղեցիկ մի վերապրում է «Չմարող հուշ» պատմվածքը: Պատմողը տարիներ առաջ հանդիպել էր Անուշին, երկար ծամերով այդ գեղեցկուհուն, ժամադրվել Վարդան Մամիկոնյանի արձանի մոտ: Սպասել է երկար, սակայն Անուշը չի ներկայացել: Երեսուն տարի անց հանդիպման ժամանակ նա դժվար է ճանաչում Անուշին, մտորելով. «Մի՞թե սա այն պիրկ ու կաթնագուլյն աղջիկն է, որը լուսաշող հայացքով ինձ պարգեւել էր ամենամուտն ու ամնար զգացումը եւ մոռացել»:

Ինչի մասին գրում է Ի.Արցախեցին, ստանում են կենսական լիցքեր, հուզում, խորհել տալիս: Նրա հերոսները, լինեն դրական թե բացասական, դրսեւորում են իրենց հոգեկան ներաշխարհը, վարքագիծը, կեցությունը, արարքները: Այս դիտակետից օրինակելի մնուշ է «Չրաշք կատարվեց» գործը: Նրանում խարազանվում են այնպիսի մարդիկ, ովքեր կյանքի իմաստը, ուրախությունը տեսնում են օդու բաժակներում: Նման կերպարներից է Սաքոն: Իսկ Նվարդը չի ընդդիմանում Սաքոյին: Վերջապես Նվարդը

զղջում է իր սխալների համար, գիտակցում, որ երջանկության աղբյուրը ազնիվ ու համեստ ապրելակերպն է: Նվարդի կողմից իր սեփական սխալների ընդունումը հեղինակը համարում է հրաշք:

Պատմելու առիմքնող շնորհք ունի Ի.Արցախեցին: Նրա պատմվածքներն ընթացելիս թվում է, թե հեղինակը զրուցում է քեզ հետ՝ հաճելի, հետաքրքրաշարժ, հումորախառն: Ընթերցողը հավատում է նրան:

Ի.Արցախեցու ստեղծագործությունների մեջ զգացվում է Արցախի շնչառությունը: Եվ դա պատահական չէ: Գրողի հուզաշխարհում դեռևս պատանության տարիներին իրենց տեղն են գրավել հարազատ ծննդավայրի մարդիկ՝ իրենց խոհերով, լեռնաշունչ միամտությամբ, հայապարզել սովորություններով ու երազներով: Դրա փայլուն վկայություններից է «Միամիտ մարդը» նովելը: Գլխավոր կերպարը Վաղինակ դային է, որի շուրջ հանդես են գալիս դպրոցական Չարությունը, նրա մայրն ու կինը:

Չարությունը տասնչորս տարեկանում դառնում է սայլապան, դեռ քսանը չլրացած, ամուսնանում է, ունենում վեց աղջիկ, չորս տղա: Դրանով հանդերձ նա մնում է միամիտ: Ձիասայլը տեղի տալուց հետո դառնում է տրակտորիստ, արժանանում համագյուղացիների հարգանքին: Տասը երեխատեր Չարությունը հաճախ իրեն դրսևորում է որպես երեխա: Երբ մայրը դիմում է նրան, որ երեխայի է նման, նա պատասխանում է. «Ա՛յ մամ, դու որ կաս, ես հեջ, ես չեմ մեծանա: Դու ե՛լ հայր ես, ե՛լ մայր, ե՛լ ամեն ինչ: Իսկ

երբ կնոջը բազմազավակ մոր կոչում են շնորհում, զարմացած բացականչում է. «Տասը խոխա՞...»: Հարությունի համար գյուղի հանդերից ու դաշտերից այն կողմ ուրիշ աշխարհի գոյություն չունի, իսկ միակ հոգսը իր տրակտորն է:

Տարիների հետ հասակ են նետում Հարությունի աղջիկները ու լսում հոր պատգամը. «Վատ բան չանեք, փափախս տափավը չտաք, հա՛»: Հայի ամուր օջախին հատուկ նամուսի այս զգացումը ջերմացնում է Հարությունի սիրտը: Բայց տեղի է ունենում անսպասելին: Փախցնում են տեխնիկումում սովորող աղջկան: Թեկուզ աղջիկը փախել է իր սիրած համակուրսեցու հետ՝ սիրելով հանդերձ, միեւնույն է, Հարությունը չի հաշտվում երեսույթի հետ, սրտի ցավով մռնչում է. «Պահ, փափախս տափավը...»:

Հիվանդության պատճառով Հարությունին տեղափոխում են Երեւան: Այստեղ էլ նույն միամիտն է, ծիծաղահարույց հարցերով: Բնութագրական է ստեղծագործության ավարտը: Հիվանդանոցում սրտագրություն անելուց հետո բժիշկները առաջարկում են պառկել, որովհետեւ սիրտը բուժելու կարիք կա: Նա դժգոհ պատասխանում է. «Հիի՞նչ, ինձ դարկեք մեր տոն, սերտը հի՞նչա վար... Թորքերը մեր շենումըն էլըն ըսկաալ... Տղերքը լավ տասըն տվալ: Քյընամ, քյընամ տեսնամ...»: Բժիշկները ձգտում են բացատրել, որ սրտի հետ խաղ չեն անում, հանկարծակի մահ կբերի: Հարությունը պատասխանում է. «Ես էն վախտն ըմ մեռալ, վար փափախս տափավըն տվալ»: Նա կնոջ հետ վերադառնում է գյուղ, երկու ամիս անց հրաժեշտ տալիս կյանքին: Պա-



տունն ավարտվում է ափսոսանքի եւ սփոփանքի զգացումով. «Ամեն անգամ միամիտ դասընկերոջս հիշելիս դառնություն եմ զգում, որ նա կյանքում ոչինչ չտեսավ, բացի ծիուց եւ հին տրակտորից: Բայց սփոփվում եմ, որ ազնիվ ծառայել է իր ազգին, նրան պարգեւել վեց աղջիկ, չորս տղա, որոնց անունները հերթականությամբ չէր կարողանում թվարկել: Երբ շփոթվում էր, միամիտ երեխայի նման ժպտում էր ու ասում.

- Թող իրանք իմ անունը...

Բազմազան են Ի.Արցախեցու շոշափած թեմաները: Նրան հուզել է նաեւ Հայոց մեծ եղեռնի թողած անանցանելի համաժողովրդական ցավը: «Ճակատագիր» պատմվածքում եւ «Քսանհինգ տարի հետո» էսքիզում գրողը դատապարտում է ցեղասպանությունը եւ ժխտում այն որպես ազգային ճակատագրերի լուծման միջոց:

Դիպուկ ու խոսուն են Ի.Արցախեցու գործերի վերնագրերը: Դրանք երանգավորող, կոնկրետ անցագրեր են ընթերցողի համար: Նման գործերից է «Ուրախության արցունքները» պատմվածքը: Նրանում շոշափված է հայրերի եւ որդիների հիմնախնդիրը: Ընտանիքի ավագ որդին՝ Արամը, սիրում է իր ընտրյալին՝ Անահիտին, սակայն Արամի հայրը այդ աղջկա տոհմի անունն անգամ չի ուզում լսել, նա չի ընդունում այն հանգամանքը, որ փոխվել են ժամանակները: Արամի մայրը նրբանկատ է, ընդունում է որդու վճիռը: Անդրդվելի է հայրը: Արամը խռովում է, հեռանում ընտանիքից, աշխատանքի անցնում գործարանում եւ ապրում հան-

րակացարանում: Սկսվում է Արցախյան պատերազմը: Արանը նետվում է մարտի եւ զոհվում հերոսաբար: Ծնողներն իմանում են, որ Անահիտը պիտի շուտով մայրանա: Արամի հայրը ընդունում է Անահիտին եւ սփոփվում նրանով, որ թուրը ծնվելուց հետո կոչում են Արամիկ: Արամի փոքր եղբայրը եւս ծառայում է բանակում, սիրում իր համադասարանցի Անուշիկին, եւ երբ համոզվում է, որ Անուշիկը սրտանց համակրում է իրեն, ուրախության արցունքներով լցվում են աչքերը: Պատմվածքի հիմնական գաղափարը կյանքի հարուցած դժվարությունները հաղթահարելը եւ այն շարունակելն է, հայրենիքի պաշտպանությունն ապահովելու ջանքերի գործադրումը:

Երգիծանքի հնարանքներով աչքի է ընկնում «Թարս ու շիտակ» պատմվածքը: Նրանում արտացոլված են այն արհեստականորեն ստեղծված թերությունները, որ գոյություն ունեցան անկախություն ձեռք բերած Հայաստանում: Հեղինակն անհաշտ է նկատվող թերությունների հետ: Դրանք քննադատելու համար ընտրված է տեսիլքի միջոցը: Նկարագրվում է, թե ինչպես Վարպետը իջնում է պատվանդանից եւ զրուցում գրողի հետ, որի ընթացքում խարազանվում են օտարամոլությունը, հայրենի օջախներից հեռանալը, ուսման ցածր որակը, գրքերի տպագրության անմխիթար վիճակը, ոգու սովը եւ այլն:

Հասարակության բարոյական նորմերի, մարդկային փոխհարաբերությունների մասին է «Պուրակում» պատմվածքը: Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հե-

որոս մարտիկը լքվում է որդու կողմից եւ վարում ծանր ու թախծալի կյանք: Իսկ «Երա՞գ, թե...» ստեղծագործության մեջ խարազանվում է հասարակական չարիք հանդիսացող կոռուպցիան: «Մենակ չես մնա» պատմվածքը շոշափում է դաստիարակության կարելոր խնդիրը: Հետաքրքիր է Հռիփսիմեի կերպարը, որ ասես մեր օրերի Շուշանիկն է՝ Շիրվանզադեի «Քաոս» վեպի հերոսուհին, որ կարողացնում է ճիշտ ուղի հանել մոլորված ընկերոջը՝ Դավիթին:

«Կյանքի բավիղներում» գրքում զետեղված է համաճումն կատակերգություն, որ խոսում է Ի.Արցախեցու դրամատուրգիական կարողության մասին:

Պիեսում քննության է առնված ընտանիքի, փոխադարձ հասուն սիրո, հոգատարության կարելոր խնդիրը: Գլխավոր կերպարների՝ ամուսիններ, ոստիկանության մայր Սեյրան Համբարձումյանի եւ Արեւիկի միջոցով հեղինակը նշում է անհիմն, կույր խանդի կործանարար լինելը: Արեւիկի խանդի պատճառը ամուսնու գրած սիրային բանաստեղծություններն են: Նա չի հասկանում ստեղծագործողի «ես»-ի հասարակական բնույթը, ուստի կռիվներ է սարքում ամուսնու դեմ: Վերջինս ցավի զգացումով խորհում է. «Ինչո՞ւ այդպես եղավ, ո՞րն է իմ սխալը, մի՞թե բանականություն ունեցող կինը կարող է այնքան խելքը թոցնել, որ բանաստեղծություններն անգամ խանդի զոհ դարձնի: Ախ, այդ խանդը, բթամտության քույրը, հիվանդոտ ինքնասիրության ախտը, կասկածի վիժվածքը ինչեր ասես, որ չի արել ու չի անում»:

Չանդզված ենք, որ սույն կատակերգությունը բեմադրվելու դեպքում կունենա լուրջ հաջողություն:

Ի.Արցախեցու «Կյանքի բավիղներում» ժողովածուն կրկին եկավ հաստատելու, որ հանձին նրա արդի հայ արձակն ունի ուշադրության արժանի գրող:

\*\*\*

Ժամանակակից հայ գրականությունն այնքան էլ հարուստ չէ մանկավարժական-բարոյախրատական թեմաներ արծարծող ստեղծագործություններով: Եվ երբ տպագրվում է չափածո կամ արձակ որեւէ երկ՝ նշված թեմայով, անպայմանորեն գրավում է ընթերցողի ուշադրությունը:

Մեր իրականությունը այնքան բազմաբղետ շերտեր եւ երանգներ է պարունակում իր ընթացքի մեջ, որ կարիք է զգացվում տազնապով քննարկել հասարակության առողջ դիմագիծն աղավաղող երեւոյթները՝ փայփայելով ազգային լավագույն ավանդույթները, որոնցով զորացել ու արարել է մեր ժողովուրդը՝ համաշխարհային քաղաքակրթությանը բերելով իրենը՝ Չայկ Նահապետից սկսած մինչեւ մեր օրերի աստղալույս գիտնականն ու բարեբեր հողվորը, քաջազուն զինվորյալն ու ազգապահ ուսուցիչը:

Չաճելին այն է, որ այսօր նման երկերի ստեղծմանը մասնակցում են ոչ միայն հայտնի գրողները, այլեւ այնպիսի ստեղծագործողներ, որոնց անունները ինչ-ինչ պատճառներով շրջանցվում են:

Պարզվում է, որ ուզածդ ժողովրդի գրականության մեջ տեղի են ունենում երեւոյթներ, որոնցով լրացվում են ազգային մշակույթի խոսույն էջերը: Մեր այս մտորումները առնչվում են մի քանի գրքերի հեղինակ, արձակագիր Իլյա Արցախեցու ստեղծագործությանը, որին շրջանցելը կլինի ոչ ճիշտ:

2006-ին Ի.Արցախեցին հանդես էր եկել «Արցախի ճիշը» պատմվածքների ժողովածուով: Այդ կապակցությամբ «Գրական թերթ»-ը տպագրել էր մեր դրական գրախոսությունը: Իսկ վերջերս նա ընթերցողի գրասեղանին է դրել «Երկվորյակները» վեպը (Երեւան, «Աստղիկ» հրատ., 2007), որի թեման ունի արդիական հնչեղություն, գաղափարը ուսուցանող է, գեղարվեստական լուծումները՝ եթե երկի ոչ բոլոր մասերում համաչափ, ամեն դեպքում ինքնատիպ:

Չեղինակը ժամանակակից իրականությունից ընտրել է կենսական նշանակություն ունեցող նյութ: Դա ընտանիքում ծնողների փոխհարաբերության եւ երեխաների դաստիարակության խնդիրն է, որ ցավոք սրտի, մեզանում դեռեւս պահանջվող հիմքերի վրա չի դրված, որն էլ հաճախակի ցավ է պատճառում ոչ միայն անհատներին, այլեւ ողջ ժողովրդին: Այստեղ արժե կրկին հիշել անմահ Մուրացանի պատմափիլիսոփայությունը, որ ձեւակերպված է «Գեւորգ Մարգաբետունի» վեպի իդեալ-հերոսի խորհուրդներում: Մարգաբետունին մտորում է. «Ազգերի զորությունը ընտանիքների մեջ է. զորավոր է այն ազգը, որ ունի զորա-

վոր ընտանիքներ, սիրով, միությանը, առաքինի եւ հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ: Ով որ կամենում է զորավոր տեսնել յուր ազգը եւ հաղթող՝ հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքներ պիտի խնամե, ինչպես մի հոգատար պարտիզպան, որ ծառի ճյուղերը զորացնելու եւ նրանից պտուղ քաղելու համար խնամում է ծառի արմատները, որոնք թեպետ հողի մեջ են թաղված եւ չեն երեւում մարդկանց, բայց իրենց մեջ ամփոփում են ծառի կենդանությունը»:

Արդյոք, բոլո՞ր ծնողներն են այս իմաստնալից դասը դարձնում ականջի օղ: Մեր շրջապատը հուշում է՝ ՈՉ: Եվ այս ՈՉ-ի հիմքը հանդիսացող մի կարեւոր իրողություն է, որ դարձել է Ի.Արցախեցու վեպի ատաղձը: Ավելորդ չէ նշել, որ Ի.Արցախեցին մոտ տասը տարի է, ինչ խմբագրում է ՀՀ ՆԳ նախարարության (այժմ ոստիկանության) «Աշխատանքային ուղիով» բազմատիրաժ թերթը, որ տպագրվում է որպես դատապարտյալների դաստիարակության օրգան: Այդ նշանակում է, որ գրողը քաջածանոթ է իր ընտրած թեմային, որի ուսումնասիրությունը առանձին դժվարություններ չի հարուցել:

«Երկվորյակները» վեպում նկարագրված է մի ոչ երջանիկ ընտանիքի պատմություն: Նույն օջախում երկվորյակներից մեկը ընտրում է չարիքի ճանապարհը, մյուսը՝ բարության: Ամեն ինչ սկսվում է ծնողների անհամերաշխությունից, իսկ հայտնի է, որ չարիքը ծնվում է անհամերաշխ վարք ու բարքից:

Անհրաժեշտ է ընդգծել, որ նյութի խորագրին իմացությունը օգնել է գրողին՝ ստեղծելու համոզիչ պատկերներ: Քաղաքի գործարաններից մեկում գլխավոր ինժեներ աշխատող ամուսնու եւ կնոջ հակադիր բնավորությունների բացահայտումը վեպում կատարված է հոգեբանական ներքնատեսությամբ: Դրան նպաստում է կոմպոզիցիոն գլխավոր միջոցը: Գլխավոր հերոսը պատմողն է՝ երկվորյակներից՝ Յայկը, որին մտահոգում ու ցավ է պատճառում մոր անարդարացի, սովորություն դարձած հակադրությունը՝ ուղղված հորը:

Ծնողների վեճը տեղի է ունենում շրջապատում ընդգծված սոցիալական անհամաչափ պայմանների հիման վրա: Կինը անդադար տրտնջալով, դիմում է ամուսնուն. «Չէ, էլ չեմ կարող համբերել, սա ապրե՞լ է, որ ապրում ենք»: Յաջորդում է ամուսնու պատասխանը. «Ախր դու էլ չգիտես՝ ինչ ես ուզում, տուն ու տեղ ունենք, լավից-վատից՝ ուտելիք, հագնելիքը կա, երեխաներն էլ արդեն մեծացել են, դպրոց են գնում, քեզ էլ ի՞նչ է պետք երջանիկ լինելու համար: Յետո էլ ավելի լավ օրեր կգան»:

Սակայն ի հեճուկս ամուսնու, կինն ավելի է գունազարդում դժգոհությունը: «Էդ հետոներիդ շատ են լսել,- պատասխանում է նա,- արդեն այդ բառից «ալերգիա» ունեն: Նայիր շուրջդ, տես՝ ոնց են ապրում. «վոլգաներով» են երեխաներին դպրոց տանում, կանանց էլ խանում-խաթունի ման են պահում, իսկ դու...»:

Աշխատանքային կոլեկտիվում հարգանք վայելած ա-

մուսնուն ավելի շատ հետաքրքրում է երեխաների դաստիարակությունը, ուստի հիշեցնում է կնոջը. «Ա՛յ սիրելիս, այդ բնավորությամբ դու երեխաներին էլ կփչացնես»:

Կինը չի ընդունում ամուսնու խորհուրդը, իրենն է պնդում. «Կարծում ես՝ երեխաները քեզ նման են մտածում, երեսս պոկում են, ուրիշի երեխաներին մատնացույց անում, քեզ որ բան չեմ ասում...»:

Վեպի հանգույցի զարգացման հենց սկզբից ամուսինների վեճի համապատկերի վրա հեղինակը ներկայացնում է գործարանի աշխույժ, գլխավոր ինժեներ, ուսանողական տարիների ընկեր՝ Սերոբի կերպարը, որ խորհրդային տարիներին հատուկ գործելակերպով դիրեկտորի հետ մեկտեղ գտնվում են պետական միջոցներն ու կոլեկտիվի վաստակը եւ ուռճանում:

Կոնֆլիկտը ամուսինների միջեւ գնալով ավելի է թեժանում: Օրերից մի օր ամուսինը գործուղվում է Մոսկվա, ուր առաջարկում են աշխատել մայրաքաղաքի խոշոր գործարաններից մեկում՝ մինչեւ մեկ տարին բնակարան ստանալու որոշմամբ: Այս դեպքում եւս կինը անդրդվելի է, ինչպես հեղինակն է ընդգծում՝ չի հրաժարվում իր «պրինցիպից»: Նույնիսկ այն դեպքում, երբ երեխաներն արծազանքում էին հոր առաջարկին, մայրը կրկին շեշտում էր իր «համոզմունքը»:

Վեպում բնական ու անմիջական պատումի ընթացքում ներկայացվում է ընտանիքի ողբերգությունը: Հայրը չտանելով կնոջ անմտածված քայլերը, չդիմանալով երե-



խաների կարոտին, Մոսկվայում մահանում է սրտի նույնից: Իսկ մայրը չի կարողանում կազմակերպել երեխաների դաստիարակության գործը: Երեխաներից մեկի՝ Գագիկի հանդեպ ցուցաբերած նրա ավելորդ սիրալիրությունն ու ներողամտությունը որդուն մղում է դեպի հանցավոր-գողական աշխարհ, որի արդյունքում նա հայտնվում է բանտում: Հեղինակը չի սքողում ընտանիքին հասցված հարվածն ու դառնությունը: Գագիկը բանտում եւս իրեն դրսևորում է որպես եսամուլ, խաբեբա, անխիղճ ու անոթի զգացումից զուրկ մի էակ: Իր պահանջներով հանգիստ չի տալիս մորն ու եղբորը: Գումարներ է պահանջում՝ դիմելով նենգության ու խաբեության ամեն մի հնարքի: Նույնիսկ առաջարկում է, որ Հայկը մեկ ամսով իրեն փոխարինի բանտում, նախօրոք պայմանավորվելով իրեն հանցակից հսկիչների հետ: Վերջապես տեղի տալով մոր թախանձագին հորդորներին, Հայկը համաձայնվում է փոխարինում է եղբորը, տանելով բանտային բոլոր դժվարություններն ու վտանգավոր հարվածները: Մեկ ամիս անց Հայկը ամենածանր ու տանջալից ապրումներն է ունենում, երբ պարզվում է, որ Գագիկը խաբել է իրեն, միանալով գողական աշխարհի հանցավոր տարրերին:

Վեպի վերջին մասում նկարագրված այս իրադարձությունները տեղի են ունենում 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած ահավոր երկրաշարժից եւ Արցախում բռնկված ազգային-ազատագրական պայքարից առաջ: Հայկը, որ բանտում էր եղբոր՝ Գագիկի անվամբ, մի շարք դատա-

Կարտյալների հետ կամավոր մեկնում է Լեւինական, մասնակցում փրկարարական աշխատանքներին, գողերից խլում եւ միլիցիայի աշխատողներին հանձնում պետական բանկից բռնագրաված ահագին գումար, արժանանում է կառավարական բարձր ատյանների ուշադրությանը եւ ազատվում բանտից:

Վեպի հաջորդ էջերում Հայկը հանդես է բերվում Արցախում: Նա կամավոր մեկնում է Ղարաբաղ՝ մարտնչելու ազերի-թուրք հրոսակների դեմ, օգնելու Հայոց հինավուրց երկրամասում ապրող իր արյունակից հարազատներին՝ օտար զավթիչների լուծը թոթափելու արդարացի գոյամարտում:

Գրողը Հայկին ներկայացնում է Մարտակերտի շրջանի վտանգի ենթարկված գյուղերում, իր քաջազուն հայ եղբայրների հետ դրացի ոսոխների դեմ անհաշտ պայքար մղելիս:

Հայկը ընդհանրացնող, ամբողջական կերպար է: Նրանում խտացված են հայ ժողովրդի այն զավակների վարդանված բարեմասնությունները, ովքեր գիտակցեցին Արցախի փրկության համահայկական նշանակությունը, իրենց կյանքն ընծայելով մեր ազգային արժանապատվության վերականգնմանն ու հայկյան ոգու վերածնունդին: Հայկը ծանր վիրավորվելով ու զրկվելով ոտքից, չի ընկճվում, որովհետեւ գիտակցում է նվիրումի պատմական արժեքը մայր ժողովրդի հետագա ճակատագրում:

Վեպում քիչ չեն հաջողված տեսարաններն ու կեր-

Կարները: Ընթերցողը ջերմ զգացումներով է համակվում Չայկի մտերիմ ընկերոջ՝ Չովիկի նկատմամբ, որ զոհվում է արցախյան ազատամարտում՝ հավերժության ուղի մտնելով Եռաբլուրում: Չայուհու ավանդական անբիժ նվիրումով աչքի է ընկնում Չայկի սիրած աղջիկը՝ Անահիտը, որ վճռում է ամուսնանալ արդեն հաշմանդամ դարձած իր Առաջին Սիրո՝ Չայկի հետ: Իր վերաբերմունքի ու գործելակերպի մեջ համոզիչ կերպար է Անահիտի հայրը՝ քեռի Չակոբը, որ չէր հաշտվում Գազիկի անբարո վարքի հետ եւ չէր ցանկանում, որ իր դուստրը դառնա նրա եղբոր կինը: Սակայն Չայկի հերոսական արարքներին տեղյակ դառնալուց հետո, հայրաբար օրհնում է նրանց միությունը:

Չայոց ֆիդայիների նորօրյա ժառանգորդներ են Պետրոսը, Սարոն, Արամը, Սիսակը, Սաքոն, Բենոն, որոնց անձնուրաց հայրենապաշտության շնորհիվ ազատագրվում է Արցախ աշխարհը՝ մայր Չայաստանի դարավոր դուռն ու ամուր դարպասը: Առինքնող բնավորությամբ աչքի է ընկնում տիկին Աշխենը, որ Արցախում մայրություն է անում ոչ միայն Չայկին, այլեւ մարտնչող մյուս ազատամարտիկներին եւ որբ երեխաներին: Գրողի կենսափորձի խոսում արդյունք է աշխարհաճանաչ քեռի Սիմոնի կերպարը:

Վեպում գրողի ուշադրությունից չեն վրիպել նաեւ հասարակական կյանքն արատավորող երեւույթները, որ ներկայացվում են կոնկրետ կերպարների արարքներով: Նմաններից է բանտի պատասխանատու կառավարիչներից՝ Նավասարդյանը, որ Լենինականում ձգտում է պետա-

կան բանկից գողացված, սակայն Հայկի քաջության շնորհիվ փրկված փողերը յուրացնել:

Հայկը, որ ծանր վիրավորվելուց եւ ոտքը կորցնելուց հետո ավարտել է գյուղատնտեսական տեխնիկումը եւ ապա շարունակում էր ուսումը Արցախի պետական համալսարանում, Երեւան-Եռաբլուր այցելելուց անմիջապես սրտի անհուն ցավ ու վիշտ է ապրում: Նա չի հաշտվում այն երեւույթի հետ, որ թեկուզ Եռաբլուրում գտնվող Հովիկի շիրմաքարից շատ հեռու՝ Կարմիր բլուրում, կանգնեցված է գողության ժամանակ սպանված եղբոր՝ Գագիկի հուշարձանը գողական աշխարհի միջոցներով:

Վեպի հաջողությանը նպաստել է մի կողմից երեւանյան, մյուս կողմից էլ արցախյան միջավայրերի նկարագրությունը: Կերպարներից՝ Գագիկը խոսում է գողական աշխարհի ժարգոնով: Դիմելով եղբորը, նա շեշտում է. «Դե լավ, դեշեվիտ մի՛ արա», «Լավ, մուտիտ մի արա, ես պրամոդնի հարիֆ չեմ», «Ապեր ջան... որ հանդիպենք, ռազբիրատ կընենք... չասես՝ դեշեվիդ բան եմ անըմ, մուտիտ անում...Պրիվետ, ապ...» եւ այլն: Հմտորեն է օգտագործված նաեւ Ղարաբաղի բարբառը: Վեպում թարմ համեմատությունները եւս խոսում են գրողի կենսափորձի օգտին: Բերենք կոնկրետ օրինակներ. «Կռունկավարները...կանգնում են կռունկի խցիկում, ինչպես թռչունը բնում», «Մայրս հանգչող ու մեկ էլ՝ քամուց բոց տվող կրակի նման վեր էր թռչում, ծնկանը խփում ու վա՛յ, վա՛յ կանչում», «Ոչխարների նման փարախում կուչ եկած ամբաստանյալներն էլ

գլխիկոր ոտքի կանգնեցին», «Պարողներն ու երգողները ճռվողյունով ու խշշոցով ճնճողուկների նման դուրս թռան մարագի պես երկար ավտոբուսից», «Թարմ սելերում իջած սել ագռավների նման բակում հավաքված էին դատապարտյալները», «Մտորումներս ինձ տանող մեքենայի նման վեր ու վար էին անում», «Գաղութը պարս տված մեղավափեթակի էր նմանվում» եւ այլն, եւ այլն:

«Երկվորյակները» վեպը, սակայն զերծ չէ թերություններից: Առաջին հերթին դրանք վերաբերում են երկրորդ մասին: Հեղինակը գլխավոր հերոսին տանելով Արցախ եւ մասնակից անելով պատերազմական իրադարձություններին, պատումի մեջ է առել վավերագրական որոշ փաստեր, միտում ունենալով մեծարել կոնկրետ անհատների, ուլքեր, հիրավի, իրենց ուսերին էին առել գոյամարտի ծանրությունն ու վճռական գործողությունները: Այդ իսկ պատճառով երկի երկրորդ մասի շատ էջեր վերածվել են գեղարվեստական ակնարկի: Այստեղից էլ այն հանգամանքը, որ հայտնի հրամանատարների մասին հնչում են միայն հիացմունքի խոսքեր: Այս համապատկերի վրա Հայկը դառնում է գրողի խոսափողը: Նա պատմում է Վոլսկու գլխավորությամբ ստեղծված կառավարման հատուկ կոմիտեի մասին եւ բնութագրում որպես Մոսկվայի սարքած քաղաքական խաղ: Ապա ներկայացնում է Ադրբեջանի կենտկոմի քարտուղար Վեզիրովին փոխարինած Մութալիբովի խարդավանքները: Հայկի հիշողությունների մեջ նշվում են նաեւ ԼԴՀ Գերագույն Խորհրդի նախագահ Արթուր

Մկրտչյանի ինքնասպան լինելը, ԼՂՀ ՊԲ Մարտակերտի շրջանի հրամանատար Ն.Դանիելյանի մահը: Ատելության խոսք է հնչեցվում ԼՂ օդանավակայանի պարետ, նախկին դատապարտյալ Ասադովի մասին՝ հայերի հանդեպ կատարած ոտնձգությունների համար:

Գեղարվեստական երկը պահանջում է նկարագրվող ժամանակաշրջանը ներկայացնել պատկերի տարբեր տեսակների համադրմամբ, որի առանցքում կարելուր պետք է համարվի կերպարի ստեղծումը:

Գրողը պատկերման հիմնախնդիր պետք է դարձներ դպրոց-ընտանիք, այսինքն՝ ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունը, սակայն այդ մասին խոսվում է հարեւանցիորեն:

Տեղին ու ճշմարտացի է քննադատված ՀՀՇ ղեկավարության «շինիչ» քաղաքականությունը: Ամեն դեպքում, այն միայն ճանաչողական նշանակություն ունի, որ հնչեցվում է որպես հրապարակախոսություն եւ չի նպաստում կերպավորման արվեստի դրսեւորմանը:

Չնայած նշված մասնակի թերություններին, Ի.Արցախեցու «Երկվորյակները» վեպը նոր խոսք է ոչ միայն հեղինակի ստեղծագործության մեջ, այլև նույնատիպ երկերի շարքում:

2007 թ.

## ԿՅԱՆՔԻՆ ՉԱՄԸՆԹԱՅ

Արցախյան գրական ընտանիքի բոլոր անդամների հուզաշխարհում հայրենի եզերքի ճակատագիրն է: Ինչի մասին խորհում ու գրում են՝ արդյունքում ստացվում է Արցախ: Եվ դա շատ է լավ: Արցախցի գրողն իր հայրենի Արցախի եւ հարազատ արցախցու նկարագրով է ներկայացնում աշխարհին, այսինքն՝ ազգային ոգու երանգներով է գնում դեպի նախ՝ համահայկական, ապա նաեւ՝ համամարդկային ասպարեզ: Արվեստի նպատակն ու գեղեցկությունը հենց կայանում է դրանում: Նրանք, ովքեր սխալ մտածելակերպի եւ կեղծ նպատակամղումի հետեւանքով ձգտում են համամարդկային երանգներով գալ դեպի ազգային ոգու շրջանակները, տանուլ են տալիս: Ընդգծում ենք, որ Արցախի արձակագիրների ուշքն ու միտքը, հոգսն ու տագնապը հայրենի եզերքի եւ այն շեն պահող ժողովրդի հետ է:

Եթե ինչ-որ տեղ կարող են Արցախի գրական ընտանիքի անդամների կատարած հունձքի արդյունքում կշտամբել թեմաների սահմանափակության համար, ապա մեր կյանքին հասու եւ մեր ժողովրդի աստվածատուր ճակատագրին քաջածանոթ արվեստագետները կարող են ընդգծել հենց դրա առավելությունը՝ նկատի առնելով 1988-ից սկսած այն գոյամարտը, որ հայ ժողովրդի դարավոր մաքառումի շարունակությունն է՝ պսակված հաղթանակով:

Շահած հաղթանակը պահպանելու ամենահզոր գործոններից մեկը գեղարվեստական գրականությունն է, որը ոգեկոչումի, ոգու արիության, հավատի ու սեփական ուժին ապավինելու պատգամ ու կտակարան է: Այստեղ կրկին ուղորմի ասենք գրականության ռահվիրա Մանուկ Աբեղյանին, որ մեր դարավոր գրականությունը բնութագրել է որպես եկեղեցական-քաղաքական մաքառման գրականություն: Ինչպես դարերի ընթացքում, այնպես էլ այսօր հայ գրականության գլխավոր թեման հանդիսացել է ազգային մաքառման, կամքի ուժի, հարատևելու վճռականության փառաբանումը: Այսօրվա մեր արձակի մեջ էլ հնչեցվում են պատմության դասերը՝ մեր նորօրյա Ավարայրի եւ Սարդարապատի՝ Արցախյան պատերազմի գնահատմամբ:

Արցախի գրական ընտանիքի աստվածաշնորհ արձակագիրներից է ՍԵՅՐԱՆ ՔԱՍԱԼՅԱՆԸ, որն առաջին գրողն էր, որ գեղարվեստական ինքնատիպ պատկերների հյուսվածքում ներկայացրեց Ավոյին՝ ինչպես որ կար: Ապա ընթերցողին ընծայեց պատմվածքների նոր ժողովածուները: Սեյրան Քամալյանի ստեղծագործությունը իր երանգներով կարող է պատասխանել ժամանակակից հայ արձակին ներկայացվող ամենաբարձր պահանջներին:

Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի ընթացքում հայ ժողովրդի մարտական ոգու, նրա կրած տառապանքի ու այդ անլուր տառապանքից ծնված արեւային ոգու մասին գրած իր երեքհատորներով արժանի տեղ գրավեց ՆՎԱՐԴ ՍՈՂՈՍՈՆՅԱՆԸ: Վերջին տարիներին



նա ստեղծեց նոր պատումներ, որոնց սպասում էր ընթերցողը:

Վերջերս ԼՂՀ պետական աջակցությամբ հրատարակվեց *ՆՈՐԵԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ «Չավարտված խաղ»* պատմվածքների ժողովածուն: Մինչ այդ լույս էր տեսել Նորեկի բանաստեղծությունների երրորդ գիրքը՝ «Պար» խորագրով, որտեղ հեղինակը դրսևորել է ճշմարիտ բանաստեղծի իր ներքին այրումն ու պատկերավոր մտածողության թարմությունը: Եվ հանկարծ ընթերցողի սեղանին է դնում արծակ գործերի փունջը: Դա ե՛լ անակնկալ էր, ե՛լ ակնկալիք: Անակնկալ՝ այն առումով, որ Նորեկին գիտեինք որպես բանաստեղծության բեռն ուսած ճամփորդ, ակնկալիք՝ որովհետև հեռուստահաղորդումների նահապետ Նորեկը ամենօրյա իր արծակ խոսքով բարձրանում էր ինքն իրենից, հղկվում, լցվում բառաշերտերով: Եվ ահա, խոսում մի փաստ՝ ընթերցողի հետ զրուցում է արծակագիր Ն.Գասպարյանը: Պարզվում է, որ Նորեկը արծակին դիմել ու դիմում է պրեզիային զուգահեռ: Ստեղծագործող Նորեկին ճանաչելու համար որպես մուտք կարելի է հրամցնել նրա «Ես» պատմվածքը: Կարդալով գիրքը՝ էջ առ էջ քո առջև բացվում են գրողի հոգու դռները, ու այնտեղ նշմարում ես արցախցի հային՝ ծիծաղի մեջ արցունքոտված, արցունքի միջից՝ ժպտացող: Կարելորն այն է, որ երկու դեպքում էլ լուրջ է նրա հերոսը, հոգսաշատ է, մի տեղ գեներալ է («Գեներալները»), մի ուրիշ տեղ՝ մորաքրոջ փեշի տակ հասակ առած շուշեցի այր, որի շուրջը ա-

զերի-թուրքերի չարագույժ շղթան է («Մորաքույրս»), ապա՝ տեսած կուռքերի եւ ոչ կուռքերի աշխարհի վարագույրը բացող քաղաքացի: Ամենուրեք մարդամոտ, մարդուն ճանաչելու ձգտող, կյանքի առեղծվածների վարագույրները բացելու ծարավ («Չազը»), ձեռքը սրտի վերքին դրած («Չերոսը»), ժողովուրդների փոխհարաբերությունների ընթացքում պատերազմի չարիքները բացառող («Պատերազմ»), Աստծո նվիրած հաճույքը երազող («Տղամարդու հոտ»), կյանքը փիլիսոփայորեն ընկալող արծակագրի հայտ է ներկայացրել Ն. Գասպարյանը: Մենք հավատում ենք նրա արծակ խոսքի երանգների խտացմանը եւ սպասում ապագա գրքերին:

Մեր որոշ գրողներ թարմություն են բերում ոչ միայն թեմատիկ-գաղափարական առումներով, այլ նաեւ ժանրային բազմազանությամբ: Այստեղ պետք է ընդգծենք *ՎԱՐԴԳԵՍ ԲԱՂՐՅԱՆԻ* անունը: «Ավր» վավերագրական էսսեից հետո նա ճանաչվեց «Ֆենոմեն» ծավալուն երկով, ապա լույս ընծայեց «Սեզո» վավերագրական վիպակը: Այդ ամենը մեր մշակութային հարստությունն է, որ պիտի կտակվի սերունդներին:

Վերջին տարիներին Արցախի գրական ընտանիքի որոշ անդամներ իրենց դրսեւորում են երգիծանքի բնագավառում: Այդ ուղղությամբ կարող ենք ընդգծել *Յ. ԲԵԳ-ԼԱՐՅԱՆԻ* եւ *Դ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ* անունները: Եթե Յ.Բեգլարյանը Պըլը-Պուղու կերպարի թարմությամբ է խարազանում ժամանակակից հասարակական արատներն ու

մարդկային բացասական գծերը, ապա Դ. Միքայելյանը հանդիպել է լուսաձորցի Մուքուն եւ նրա անվամբ ժպիտներ է փնջում ցավի միջից: Հաճելին այն է, որ նրանց երգիծանքի միջից հառնում է հայաբույր, բարի, ավանդապահ արցախցու կերպարը:

Մեր գրական ընտանիքի ծանրակշիռ անդամներից է *ՄԱՆԿԵԼ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ*: Նրա պատմվածքները հյուսված են պատմական Ջրաբերդի բազմաթույր ծաղիկների թույրից ու բույրից: Մենք համոզված ենք, որ նրա ստեղծագործությունը գտնելու է իր գնահատողին: Նույն կարծիքն ունենք մաել վաստակաշատ ուսուցիչ *ՆՈՐԱՅՐ ԱԿԵՏԻՍՅԱՆԻ* մանրապատումների եւ էսսեների մասին:

Դարերի ընթացքում Մեծ Հայքի Արցախ նահանգում արարվել են իմաստուն ու բազմերանգ այնպիսի նշխարներ, որ անմնացորդ դրսեւորում են իր պապենական օջախներից ջերմություն առած, արհավիրքների մեջ կոփված ու իմաստնացած արցախցու հոգու լույսն ու հավատը՝ առաջին հերթին իր հանդեպ: Այդ նշխարները հավաքելու, սերունդներին կտակելու ուղղությամբ անուրանալի գործ է կատարում վաստակաշատ ուսուցիչ *ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ*, որը շարունակում է հայ ականավոր բանահավաքների պատվաբեր գործը: Այդ են վկայում նրա «Նշխարներ Արցախի բանահյուսության» երկու սովարածավալ հատորները՝ տպագրված երեսնում եւ Ստեփանակերտում:

Ծիշտ չէր լինի, եթե մենք չնշեինք Մեծ հայրենականի վե-

տերան, 90-ամյա **ԵՐՎԱՆԴ ՄԻՐՉՈՅԱՆԻ** «Իմ հարսանիքում ես չեմ պարել» վեպը, որտեղ ականատեսի զգացումներով, ճշմարտացիորեն պատկերված են խորհրդային մարդկանց կրած տառապանքն ու անձնուրաց պայքարը ֆաշիստական դեղին ժանտախտի դեմ:

Արցախի գրական ընտանիքում երեւան են եկել արծակագիրների նոր անուններ: Բանաստեղծուհի ժաննա Զակոբյանը ընթերցողին է հանձնել «Սիրո շղթաներ», «Արեւոտ արցունքներ», «Սիրո հովիտներ», «Սեր եւ պատիժ» վիպակները, որոնցում հեղինակը ձգտում է ռեալիստական գույներով ստեղծել ժամանակակից հայ կնոջ կերպարը: **ՍՈՖՅԱ ՍԱՐԳՍՅԱՆԸ** հրատարակել է «Ծիծաղափունջ» երգիծական գիրքը եւ «Անբասիր մրմունջներ» պատմվածքների նոր ժողովածուն, ուր զգացվում է նրա պատմելու կարողությունը՝ ազնիվ զգացմունքների շաղախով:

Խոստումնալից ուժ է **ԱՐՓԻ ՎԱՆՅԱՆԸ**, որ հենց վերջերս երեւանում հրատարակեց «Իմ բաժին լույսը» պատմվածքների ու մանրապատումների գրքույկը:

Ժամանակին նկատվել է, որ Արցախում ապրող գրողը միայն գրող չէ: Նա իր ուսերին տանում է հրապարակախոսի, լրագրողի, զինվորական թղթակցի, նաեւ զինվորյալի կարեւոր ու պատվաբեր բեռը: Մեր գրողներից Ս. Զասրաթյանը, Ա. Գրիգորյանը, Գ. Բեգլարյանը ու ուրիշներ շնորհակալ գործ են կատարում՝ հրատարակելով Արցախյան պատերազմի վետերանների, առանձնապես, նահատակների սխրանքները պատկերող վավերագրական պատում-

ներ, որոնք անհրաժեշտ են լինելու ոչ միայն ապագա սերունդներին, այլև այն գեղագետներին, ովքեր աշխարհ են գալու Արցախյան պատերազմի դյուցազներգությունն ստեղծելու համար:

Կցանկանայինք ընդգծել նաև հրապարակախոսության բնագավառի ձեռքբերումները: Մամուլում կյանքի տարբեր բնագավառների կարեւոր խնդիրների շուրջ հանդես են գալիս Վ. Հակոբյանը, Հ. Բեգլարյանը, Ն.Ավագյանը, Ն. Սողոմոնյանը, Դ. Միքայելյանը եւ ուրիշներ:

Արցախի գրական օջախի ստեղծագործական շնչառությունը առողջ է, այն այսօր իրավունք ունի իրեն համարելու հայոց արդի գրականությունը հարստացնող կենսաբար ջոկատներից մեկը:

2008 թ.

## ԲԱՑ ՆԱՄԱԿ ԳՐՈՂՆԵՐ ԿԻՄ ԳԱՔՐԻԵԼՅԱՆԻՆ ԵՎ ՎՈԼՈՂՅԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

Հարգելի Կիմ

Հարգելի Վոլոդյա

Կարդացի Ձեր «Սեր եւ արյուն» վիպակը: Մինչեւ կարողալը մի մտավախություն ունեի՝ կապված համահեղինակային ձեր աշխատանքի հետ: Չէ՞ որ դուք ստեղծագործական տարբեր խառնվածքի տեր գրողներ եք եւ վիպակը ձեր առաջին փորձն է: Երկրորդ՝ իմ ծանոթությունը ձեր նախկին երկերին համոզել էր, որ տարբեր են նաեւ ձեր ոճական երանգները: Բայց վիպակը ընթերցելուց հետո անմիջապես անցավ իմ մտավախությունը եւ թեթևացած շունչ քաշեցի: Որոշել էի առիթ եղած դեպքում բանավոր հայտնել իմ կարծիքը, սակայն նախընտրեցի նամակի ձևով ձեզ հետ կիսել այն տպավորությունները, որ ստացել եմ վիպակի ընթերցումից:

Արցախի գեղարվեստական մեր ամբողջական կուտակումներում դեղեկտիվ ժանրի ոչ մի գործ չի ստեղծվել: Ձեր համահեղինակած «Սեր եւ արյունը» առաջին փորձն է այդ ուղղությամբ եւ որպես այդպիսին ձեր պատմական ծառայությունն է մեր գրական օջախում: Շնորհավորում եմ ձեր առաջին հաջող փորձը եւ ուրախ եմ, որ մեր լեռնաշխարհի նորագույն շրջանի գրական ընթացքը իր մեջ է ներառում ժամանակակից գրականության մեջ տարած-

ված այդ ժանրը: Իմ այս շնորհավորանքը հիմնականում կապված է երկի հաջողության հետ: Դուք կարողացել եք հաղթահարել համատեղ ստեղծագործական աշխատանքի դժվարությունը, ճեղքել ձեր խառնվածքին հատուկ շրջանակները, հասնել միասնական ոգով հանդես գալու արդյունավետ հնարանքին:

Վիպակի կառուցվածքը գոհացուցիչ է, որովհետև սյուժեի զարգացման ընթացքում աստիճանաբար հանդես են գալիս ձեր կերպարները եւ լրիվ բացահայտում իրենց: Ընթերցողը հետաքրքրությամբ հետեւում է երկի կերպարների ճակատագրերին, հուզվում, համակրում, ատում: Յեղինակային այն նպատակը, որ կապված է ձեր շոշափած բարոյահոգեբանական կարեւոր խնդիրների հետ, իրականացված է: Գեղարվեստական ձեր իդեալի դիրքերից դուք բացահայտել եք երկի դրական եւ բացասական կերպարների հոգեբանությունը: Առինքնող կերպարներ են Արմավենը, Ինգան, Արարատը, որոնց շուրջ են պտտվում մյուս գործող անձերը, առանձնապես ներքին գործերի եւ դատախազության աշխատակիցներ:

Արմավենի եւ Ինգայի արարքները համոզիչ են, այսինքն՝ ձեր կերպարները հանդես են գալիս տիպական հանգամանքներում: Բնական, անմիջական ապրումների արդյունք է սիրող երիտասարդների՝ Արմավենի եւ Ինգայի սխալը, որից ծնվում է ողբերգությունը: Արարատի նման ծնողները քիչ չեն կյանքում, նրա հոգեբանությունը՝ հենված ազահության եւ հայրական «ծգտում-սիրո» թելադ-

րանքին, բացահայտված է հմտորեն: Արարատը յուրովի ընկալելով կյանքը, զգալով հեշտ ապրելու հաճույքը, իրեն դրսևւորում է ոչ թե որպես հայր, այլ իրասածի բռնակալ, որի զոհերն են դառնում Ինգան եւ Արմավենը: Այսպիսով երկի դաստիարակչական նշանակությունը ընդգծվում է երիտասարդ զույգերի սիրո «արդիական ընկալումի», դրանից բխող ողբերգության եւ ապա ծնող եւ զավակ փոխհարաբերությունների շուրջ:

Ռեալիստական հանգամանքներում են հանդես գալիս մայրը Ղուկասյանը, լեյտենանտ Անաստասյանը, ԲԽՍՍ-ի պետ Բաբայանը: Ճիշտ է, նրանք որպես անհատներ երկում ընդգծված չեն, սակայն քննչական աշխատանքի ընդհանուր ֆոնի վրա երեւում են: Նրանց ջանքերը ներկայացվել են ինչպես հարկն է: Թվում է՝ վիպակը ավելի կշահեր, եթե մայրը Ղուկասյանի փորձը եւ լեյտենանտ Անաստասյանի որոշ շտապողականությունը ավելի ընդգծվեր եւ բացահայտվեր ոչ թե հեղինակային միջամտությունների, այլ կերպարների գործողությունների եւ երկխոսությունների միջոցով: Երկի վերջում Արարատ Կարագյոզյանի մերկացումը արագ է տեղի ունենում: Ճիշտ է, նրա մարդասպանության առաջին դեպքն է, բայց չէ՞ որ որպես խանութի աշխատող բավականին փորձ ունի: Սրանք մասնակի դիտողություններ են: Վիպակը ընդհանրության մեջ հետաքրքիր է: Դուք հասել եք շոշափելի հաջողության թե՛ գաղափարական եւ թե՛ գեղարվեստական առումով: Խոր-



հուրդ կտայի շարունակել ձեր համատեղ ստեղծագործական աշխատանքը՝ մեզ մոտ դեղեկտիվ ժանրի հարստացման ուղղությամբ:

Կցանկանայի հիշեցնել հետեւյալը: Դ.Թումանյանը չէր ներում, երբ գիրքը տպագրվում էր տառասխալներով, աղավաղումներով: Ցավոք, ձեր վիպակում քիչ չեն ուղղագրական մեղանշումները: Օրինակ, ծածկեց բառի փոխարեն տպվել է ծակեց (էջ 53), ստիպված - ստիված (էջ 64), վերցնել-վերցրել (էջ 82), 64-րդ էջում նախավերջին տողը պետք է բերվեր էջի վերջը եւ այլն: Այս դիտողությունը վերաբերում է ոչ միայն ձեր գրքին, այլ վերջերս մեզ մոտ հրատարակված շատ գրքերի: Ուրեմն, սրբագրական աշխատանքը մեզանում անհրաժեշտ է բարձր հիմքերի վրա դնել:

Հարգելի գրչընկերներ, կրկին շնորհավորում եմ ձեզ՝ «Սեր եւ արյուն» վիպակի առթիվ, մաղթում նորանոր հաջողություններ մեր օջախի գրական ընթացքին ակտիվ եւ արդյունավետ մասնակցելու համար:

2008 թ.

## ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՐՏԱՇԵՍ ՂԱՅՐԻՅԱՆԻՆ

Սիրելի Արտաշես, ասել է թե՛ Արտաշես ախպեր, դու էլ դարձար 70 տարեկան, եւ հավատում եմ դրան, որովհետեւ այսօր ինքս ինձ հետ զրուցելով՝ համոզվեցի, որ 77 տարեկան եմ, քեզնից 7 տարով մեծ: Բայց խոստովանեմ, որ չտխրեցի՝ նկատի առնելով, որ Խաչի պապս ապրել է 110 տարի՝ մինչեւ կյանքի վերջը առույգ, հիշողությունը զուլալ, եւ այնքան բախտավոր, որ իր կինը, որին անունով չի կոչել, միշտ դիմել է «Միրզե աղջիկ», ապրել է 111 տարի, ասելով՝ «Մեր հայից մեկ տարի ավել ապրեմ, նրան հալալ-զուլալ հողին հանձնեմ, պարտակեմ, հետո մեռնեմ»:

Այդպես էլ տեղի է ունեցել: Իսկ քո տարիքով համագյուղացիները մի անգամ ինձ հաղորդել են, որ քո պապը՝ անվանել են Ղահրի, ապրել է 115 տարի, իսկ տատիկդ՝ 117: Երբ ես չհավատալուն եմ տվել, քո գյուղի գրագետ ծերունիներից մեկը շեշտել է. «Իսկ ինչո՞ւ ես հավատում, որ Տարոնում Մամիկոնյան Մուշեղ Իշխանը 120 տարեկանում մարտնչել է թշնամիների դեմ, իսկ չես ընդունում, որ մեր Արտաշեսի Ղահրի պապը 115 տարեկանում կնոջն ասել է՝ Ղուշի, արի քեզ սիրեմ»: Ուրեմն, Արտաշես ախպեր, պատրաստվիր, որ քո պապի անցած ճանապարհի ծայրին հասնես՝ մի նոր պատմվածք սիրո մասին, գրասեղանիդ:

Արտաշես ախպեր, քո մասին հրաշալի պատումներ եմ

լսել, ուղղակի լեզբենդանման զրույցներ: Դրանցից մեկը հիշեցնեմ քեզ: Ինչ պատմել են քո համադասարանցիները: 10-րդ դասարանում սովորելիս, քո սրամիտ ու չարածճի ընկերները նկատել են, որ ընկեր էսինչյանը հայիոյել չգիտե: Նկատել են ու զարմացել: Ընկերների դիմել են քեզ. «Արտաշես, դու արդեն պատմվածքներ ես գրում, ինչպե՞ս փորձենք՝ համոզվելու, որ իսկապես ընկեր էսինչյանը հայիոյել չգիտե»: Եվ դու գտել ես ելքը: Գնացել ես ձեր ոչխարներից մեկը բերել, դպրոցի դիմաց թփի ծառից կապել եւ դիմել ընկեր էսինչյանին՝ ձեր գրականության ուսուցչին. « Ընկեր էսինչյան, եթե մի անգամ հայիոյես, այս ոչխարը մորթելու ենք, մի լավ քեֆ անենք քո պատվին»: Ընկեր էսինչյանը մերժել է քո խնդրանքը: Իսկ երբ խոստացել ես՝ իր մասին մի լավ պատմվածք գրել, նա համաձայնվել է՝ շնջալով իր առաջին ուշունցը. «Ձեր մոր արյան շրջանառությունը կանգնի»: Ընկերների չեն ընդունել այս հայիոյանքը, իսկ դու սրամտել ես՝ «Ընկեր էսինչյան, դա ուշունց չէ, անծոք է»: Ընկեր էսինչյանը տեսնելով, որ ձեզնից պրծում չկա, մոտեցել է քո բերած ոչխարին, ձեռքը դրել աջ պոզին եւ դիմել բոլորիդ. «Ես ձեր հայրական տան անդամների բազմացմանն ակտիվորեն մասնակցեմ»: Եվ ընկեր էսինչյանի առաջին այդ հանճարեղ ուշունցը հիացրել է բոլորիդ, ու մինչեւ լույս քեֆ եք կազմակերպել նրա պատվին: Սակայն դու հարցրել ես ընկեր էսինչյանին, թե այդ իմաստուն ուշունցը ունից է սովորել եւ երբ, ընկեր էսինչյանը՝ քո գրականության ուսուցիչը, ձեռքը դրել է ուսիդ եւ ասել. «Արտա-

Շեն, դու իմ գերազանցիկ աշակերտն ես եւ շնորհալի ես, լսիր իմ խորհուրդը: Նայիր Գոչավանքին, որ սարի գագաթին է, նրա արարող լուսին հավատա, այդ լուսից քո հոգունք էլ կա: Ապա նայիր մեր անտառներին, նրա յուրաքանչյուր ծառ խոսք է ասում, խոսք՝ ապրեցնող, խոսք իմաստուն: Այդ ծառերին միշտ այցի կզնաս: Նայիր մեր գյուղի կենտրոնում, ապա չորս կողմ ստեղծված գերեզմանատներում հառնած խաչքարերին, նրանք մեր պապերի օրինանքներն են, միշտ կփայփայես այդ օրինանք-խորհուրդները եւ ականջիդ օղ կանես: Հիմա էլ նայիր գյուղամիջով քայլող մեր ծերերին, տատիկ-պապիկներին, նրանց կողքով հպարտ ու ձիգ քայլող գյուղացի երիտասարդներին, նազելի աղջիկներին: Արտաշես, որտեղ էլ գնաս, նրանց չմոռանաս երբեք, եւ իմացիր, որ նրանցից ես սովորելու ե՛ւ խոսքը, ե՛ւ իմաստությունը, ե՛ւ երազելն ու ապրելը: Հիմա իմացա՞ր, թե ումից եմ լսել ու լուռ փայփայել իմ այս ուշունցը, որ հավանեցիք»:

Ահա, այս զրույցը լսել եմ քո դասընկերներից, եւ այսօր, երբ վերընթերցում եմ քո պատմվածքները՝ գյուղաբույր, գյուղաշող, բնագեղ ու սրտառուչ, իմաստուն ու ապրեցնող, նորից ու կրկին համոզվում եմ, որ քո ստեղծագործական երազանքի արմատները քո Մեծ Թաղեր գյուղի դարերի մեջ են, քո հայրենի բնության խորհուրդների, քո հարազատ համագյուղացիների ապրած լավ ու վատ օրերի մեջ, նրանց ակնկալիքների եւ թախծոտ հավատի, Գոչավանքի լեռնագագաթից աշխարհը տեսնելու, չարն ու բարին հաս-

կանալու կենսափորձի մեջ:

Սիրելի Արտաշես, դու քո խոսքի մեջ, որ խոհեր են 70-ամյակիդ առթիվ, ափսոսում ես, որ քիչ ես գրել: Սակայն ասեմ, որ ե՛ւ ընդունելի են մտորումներդ, ե՛ւ ոչ: Ընդունելի այն առումով, որ հասկանալի, տնտեսական պատճառներով (պիտի քո սիրած գործը չկատարեիր, որ տունդ պահեիր) քիչ ես գրել, անընդունելի, որ իսկապես, թեկուզ քիչ, բայց բարձրորակ արժեքներ ես ստեղծել, վկան՝ «Տոհմական», «Պատրանք», «Լեռան հուշ» եւ այլ ժողովածուներդ եւ էլի դեռեւս մամուլի էջերում ցրված պատմվածքներդ, որ խոսում են քո վարպետության օգտին:

Սիրելի Արտաշես, այսօր կրկին բացեցի «Լեռան հուշ» ընտրանիդ: Ուրախացա, որ այն բացվում է ակադեմիկոս Ս.Սարինյանի բարձր գնահատականով եւ եզրափակվում Վ.Հակոբյանի սրտառուչ խոսքով: Ժամանակին ու ճիշտ է նկատել ակադեմիկոսը, որ դու գրական ասպարեզի վրա երեւացել ես աննկատ, միանգամից, առանց նախապատրաստության: Եվ սակայն քո առաջին պատմվածքներն արդեն տիրապետող գրչի դրոշմն են ունեցել իրենց վրա: Եվ հենց էն գլխից որոշված էր քո աշխարհը եւ ոճիդ ինքնատիպությունը:

Անվանի գրականագետը ճիշտ ու ժամանակին է նկատել, որ ստեղծած կերպարների ունեն անհատական ընդգծումներ: Այլ կերպ էլ չի լինի, որովհետեւ դու քո աշխարհընկալումը, կյանքի ճանաչողությունը, խոհի եւ իմաստության արարչությունը առաջին հերթին առել ես քո մի քանի հազար տարեկան գյուղի հուշամատյանից, այն էլ բանավոր:

Ձեր եւ գյուղն է փիլիսոփա, եւ բնությունը: Ուստի անձամբ ես չեմ գարձանում, որ դու եւս փիլիսոփա ես՝ պատկերների հյուսվածքով խոսող, խորհրդավոր ու խորհրդատու:

Արտաշես, քո խոհն ու իմաստությունը ծնվել են քո կարոտից, դեպի հայրական օջախը, քո թափուր մնացած օրորոցը, դեպի քո հոր թողած բահը, որով բաղ ու բոստան է բեջարել, դեպի մորդ ոտնահետքերը, որոնցից լույս ես փնջել, դեպի քո մանկության ու պատանեկության հուշաշխարհն ունեցած ծարավից:

Հիշո՞ւմ ես, Արտաշես, երբ Երեւանից նոր էիր վերադարձել հայրենի գյուղ՝ կյանքդ շարունակելու այնտեղ, երեկոյան քեզ տեսա Ձեր տան դարպասի մոտ: Հարցրի՝ Արտաշես, ո՞ւմ ես սպասում, պատասխանեցիր՝ «Մեր կովացու երինջին: Սպասում եմ, որ գա, իր բերած ծաղկաբույրերից մանկությանս կարոտն առնեմ»: Ես ժպտացի, դու էլ ժպտացիր, հետո միասին տխրեցինք մեր կորած մանկության համար: Բաժանվելիս՝ խորհեցի,- ահա թե որտեղից են քլքլքալքու անում մեր Արտաշեսի կենսական խոսքն ու ծարավը, որ պատմվածքներում ստանում են նոր իմաստ եւ դառնում դաս ընթերցողների համար: Այդ ամենի շնորհիվ է, որ պատմելու մեջ այդքան անմիջական ես, ապրումի մեջ՝ ավանդական, ստեղծած պատկերի մեջ՝ արցախաշունչ:

Արտաշես, քիչ է ասել՝ սուր աչք ունես, պետք է ընդգծել, որ քո ներքնատեսությունը հոգեբանի լուսարձակ ունի: Պատկերի տարբեր տեսակների հյուսման հմտությունը երեւի սովորել ես քո հայրենի գյուղի գորգագործ տատիկներից, որոնց հյուսվածքները կարող են մրցել աշխարհի ամենահ-

մուտ վարպետի գործած գորգերի հետ: Ախպեր, քո պատմվածքները կարդալիս քո հայրենի բնության հրաշքներն են տեսնում, մեր Արցախ աշխարհի վե՛սն ու խոհեն մարդկանց հոգեպարար երազանքն ու գործելու կենարար ծիածանն են շոյում: Այդ են վկայում քո գրական կանգուն շենքի ռոք-քարերից «Գյուղամեջ», «Սիրուշի երջանկությունը», «Անորոշություն», «Աշխենի փեսան» եւ այլն, եւ այլն: Դու, Արտաշես, գտել ես դիմանկար ստեղծելու քո յուրահատուկ հմարանքը, դու հմտորեն ես օգտվում հումորից, ժողովրդական իմաստությունից, գյուղական բնակչության դարերի կնիքը կրող մտածելակերպից: Միայն քո «Գյուղամեջ» պատմվածքը բավական է խոսքս հաստատելու համար:

Սիրելի Արտաշես, քո ստեղծած կերպարների ակնառու պատկերասրահը թելադրում է, որ հանձին քեզ արդի հայ գրականությունը գործ ունի չափազանց լուրջ արձակագրի հետ, որից ընթերցողները դեռեւս նոր, հոգեպարար էջերի է սպասում:

Ուրեմն, շնորհավոր հոբելյանդ, քո արարող գրչին նոր ուժ, ոգուդ՝ նոր եռանդ, սրտիդ՝ անսպառ ավյուն: Թող գալիք տարիներդ զարդարվեն նորանոր հմայիչ պատմվածքներով, թող քո 80-90-100-ամյա հոբելյանները նշելիս հիշես քո էսինչյան ուսուցչի սրամիտ, արցախյան ուշունցը ու արմատապես ձեւափոխած դիմես մեր գրական օջախին, ընդգծելով. «ես ձեր գրական ընտանիքի բարձրարվեստ երկերի բազմացմանն ակտիվորեն մասնակցեմ»:

2007 թ.

## ԲԱՑ ՆԱՍԱԿ ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի Մաքսիմ Երվանդի...

Մի քանի օր է, ինչ մտորում էի հայտնել իմ կարծիքը քո նոր՝ «Չաստվածների խնջույքը» գրքի վերաբերյալ: Դու լավ գիտես գրական քննադատության բազմապիսի ժանրերի մասին, սակայն որոշեցի ընտրել «նամականի» տեսակը, գտնելով, որ նման դեպքում կարող եմ անմիջակամորեն ներկայացնել իմ տպավորությունները:

Վերջին տարիներին ոչ միայն հայ իրականության մեջ, այլև համաշխարհային գրական ասպարեզում լուրջ ուշադրություն է դարձվում իմաստաբանական գրքերի, առանձնապես՝ աֆորիզմների ժողովածուների տպագրությանը: Լույս են տեսնում բոլոր ժողովածուների առած-ասացվածքներից փնջած հավաքածուներ, առանձին ակամավոր գրողների երկերից զտած թեւավոր մտքերի գրքեր, եւ պատկերացրու, որ բավականին լուրջ հետաքրքրության են արժանանում ընթերցողների լայն շրջանակներում: Նման ընդունելություն գտան Ավ. Իսահակյանի փիլիսոփայական արտահայտությունների, Պ.Սեւակի թեւավոր մտքերի առանձին ժողովածուները: Այդ ուղղությամբ հայ մտավորականները դեռ անելիքներ շատ ունեն, եւ հավատացած եմ, որ մեր մեծերի հավերժախոս մտքերը պետք է փեթակվեն՝ ինչպես մեղուներն են արարում իրենց մեղրը:



Երբ ես աշխատում էի քո ստեղծագործությունների դիտարկման եւ գնահատման ուղղությամբ, նկատում էի, որ քո ստեղծագործական խառնվածքին հատուկ է խոհականությունը, եւ քանի որ դու հենց էն գլխից ընտրել էիր գրականության հոգեբանական ուղղությունը, ուստի կատարում էիր փիլիսոփայական ընդհանրացումներ համարյա քո բոլոր գեղարվեստական երկերում:

Եվ երբ պատրաստելու վրա էի քո ստեղծագործության մասին գրած իմ «Մ.Յովհաննիսյան. Լեռնաղբյուրի վիպաշխարհը» մենագրությունը, նպատակահարմար գտա մի առանձին գլուխ հատկացնել քո խոսք-արվեստին: Այդպես էլ վարվեցի: Սակայն ելնելով քո պատմվածքներում, վիպակներում եւ էսսեներում եղած խոհա-փիլիսոփայական ընդհանրացումներից, մտորում էի՝ երանի ժամանակ ու հնարավորություն ունենայի ընտրել եւ հրատարակել առանձին մի շարք կամ հենց մի հավաքածու՝ քո աֆորիզմներից:

Ու չեմ թաքցնում, երբ լույս ընծայեցիր քո «Չաստվածների խնջույքը» գիրքը, եւ այն կարդացի մեկ շնչով, անչափ ուրախացա: Ուրախացա մի քանի առումներով, որ կծգտեմ հասցնել քեզ, միաժամանակ մեր ընթերցողներին:

*Առաջին*, դու եւս գիտես, որ տարածված է մի կարծիք, ըստ որի արձակագիրը 70-ից հետո, իսկ բանաստեղծը՝ 50-ից, համարյա դադարում են ստեղծագործելուց, եւ ապրում են միայն իրենց հուշերով:

Եղբայրս, դու քո այս նոր գրքերով, ուղղակի ձեռնոց նետեցիր նման կարծիքը մոզոնողներին եւ ապացուցեցիր ընդհակառակը, այսինքն այն, որ աստվածային շնորհքով օժտվածները մոտավորապես չեն ծերանում, ավելի են հասունանում, եւ իզուր չէ, որ ժողովուրդները իրենց հեքիաթներում որպես խորհրդատու իմաստուններ, ընտրել են ավեհեր մարդկանց, փորձառու ծերունիներին:

*Երկրորդ`* դու քո այս գրքով կրկին ու կրկին ապացուցեցիր, որ գրողը պարտավոր է ուսումնասիրել եւ յուրացնել համաշխարհային ոչ միայն գեղարվեստական գրականության ավանդույթները, այլ փիլիսոփայական միտքը, քաղաքատնտեսությունը, պատմությունը, մի խոսքով` քաղաքակրթության այն ձեռքբերումները, որ անհրաժեշտ են հասուն գեղագետ լինելու համար:

*Երրորդ`* դու խորն ես յուրացրել պատմության հանրահայտ օրինակների գործառական նշանակությունը, ուստի կարողացել ես կամրջել անցյալը ներկային, ներկան` ապագային: Այս առումով դու ներկայացնում ես մեր ժողովրդական հեքիաթներում գործող այն իմաստունների նման, ովքեր բախտորոշ խաչներուկներում մարդկանց ցույց են տալիս նպատակամետ ուղին:

*Չորրորդ`* Հայրենասիրությունը, կոնկրետ` արցախասիրությունը, դու ընկալում ես ոչ թե ինչպես գաղափար, այլ կեցություն-կեցվածք-ապրելակերպ-մարդկային դիմագիծ-արժանապատվություն: Իսկ դա շատ կարելուր զգա-

ցում է, որ ելնում է տոհմաճառի արմատից ու հասնում ճյուղ ու շյուղին: Հայրենասիրությունը քո պատկերացումով հենց ինքը՝ հայրենիքն է, որի հանդեպ կարելի է միայն գլուխ խոնարհել:

*Հինգերորդ*՝ քո խոհափիլիսոփայական մտորումներում հաջողությամբ խոյս ես տալիս քարոզից, որ խրախուսելի է, այսինքն քեզ դրսեւորում ես որպես ճշմարիտ գրող: Մեր ունեցած զրույցների ժամանակ միշտ ընդգծում էինք Արիստոտելի խորհուրդը. «Պոետը պատմաբանից տարբերվում է նրանով, որ մեկը պատմում է իրապես կատարվածի, իսկ մյուսը՝ ամեն հնարավորի մասին: Դրա համար էլ պոեզիան պատմությունից ավելի փիլիսոփայական է եւ խոր, քանի որ մեկը գործ ունի ընդհանուրի, մյուսը՝ մասնավորի հետ»: Այսօր ինձ համար հաճելի է ընդգծել, որ դու քո այս գրքում եւս մնացել ես գրականության (Արիստոտելը պոեզիա է կոչում) գեղարվեստական պահանջվածքի ոլորտում, ասել է թե՛ չես քարոզում, այլ ցույց ես տալիս:

*Վեցերորդ*՝ քո պատկերավոր մտածողությունը այստեղ եւս քեզ ներկայացնում է գեղագիտության չափանիշների ոլորտում՝ խոսքդ գունագեղ է, ասելիքդ՝ հստակ, խորհուրդդ՝ ընդունելի, բնապատկերդ՝ արցախցու հոգեբանության գորելեն:

Ես չեմ կասկածում, որ մեր որոշ ընթերցողներ կարող են երկմտանքով ընդունել քո հասցեին ուղղած իմ այսքան բարձր գնահատականները: Գուցե դա եւս բնական է: Սա-

կայն կցանկանայի խորհուրդ տալ նման մտածողներին՝ գտնել եւ կարդալ խնդրո առարկա այս գիրքը: Համոզված եմ, որ նրանք եւս կհաստատեն, որ Մ.Հովհաննիսյանի սույն ժողովածուն եզակիներից է, եւ եթե կենդանի լիներ հզոր Հրանտ Մաթեւոսյանը, սրտանց կողջուներ իր գրչեղբորը եւ առաջվա նման կընդգծեր, որ Մ.Հովհաննիսյանն արժանի է ամեն գովասանքի:

Վեցերորդին կարող եմ ավելացնել նոր կռվաններ՝ նշելու, իրոք, ե՛լ գրքի հաջողվածության երանգները, ե՛լ քո ինքնատիպության առանձնահատկությունները, սակայն բավարարվեմ ասածով եւ բերեմ մի քանի խոսու օրինակներ, որպես վկայություն՝ քո իմաստասիրության:

Սկսենք հենց «Հավատո հանգանակ» էսեից, որով բացվում է ժողովածուն: Քրիստոսի հարության եւ Թովմաս առաքյալի կասկածամտության հետ կապված առասպելական զրույցի կիզակետը Սուրբ Որդու խորհուրդն է. «Անհավատ մի՛ եղիր, այլ հավատացյալ»: Եվ ապա. «Որովհետեւ դու ինձ տեսար՝ հավատացիր, երանի՛ նրանց, որոնք չեն տեսել եւ սակայն կհավատան»:

Բերելով Հովհաննես Ավետարանիչի այս պատմությունը, դու վերհիշում ես հեռավոր 1964 թվականը, երբ գրվեց հանրահայտ նամակը՝ ուղղված ԽՄԿԿ Կենտկոմին, որի տակ ստորագրել էին 13 հոգի, այդ թվում եւ դու: Նշում ես, որ, անշուշտ, շատերը կցանկանային ստորագրել նամակի տակ, բայց բոլորը չէին, որ հավատում էին Արցախը Մայր

Հայաստանին վերամիավորվելու հնարավորությանը, եւ ապա խոսքը ընդհանրացնում եւ երանության առինքնող մտորումով. «Երանի՛ նրանց, որոնք հավատում էին: 13-ը հավատում էր, եւ նրանց ցանած սերմը պտուղ տվեց՝ քանզի ծլունակ սերմը ապառաժի վրա չընկավ, ընկավ պարարտ հողի վրա եւ հարյուրապատիկ պտուղ տվեց»:

Հրաշալի է գտածդ պատումը եւ կրկնակի ապրեցնող՝ ընդհանրացումը: Քրիստոս-Արցախ-ազատություն, եւ այդ եռամիասնությունն ընդգծող քո էսսեն, որ, իսկապես, հավատո հանգանակի փայլուն ցուցադրումն է: Ապա «*Modus vivendi*»: Կենսաձեւով քո գտածոն: Պատմական առասպելված փաստի՝ հայրենիքի հանդեպ ցուցաբերված անձնագոհության օրինակի փեշ-եզրը բերել-հասցրել ես մեր գերված Շուշիի ազատագրման հրաշքին, ընդհանրացնելով, «Պատանի Կուրիցիոսը գահավիժեց խորխորատը, իսկ մեր ազատամարտիկները խորխորատներից մաքառեցին դեպի վեր՝ խորխտ ժայռերի ձիգ բարձունքը:

Որովհետեւ Հռոմը պետք է կանգուն մնար, Արցախը պետք է գոյատևեր»:

Բացելով առասպելի կեղեւը, դու ճիշտ ես նկատել հերոսականության պատգամի առաքելությունը սերունդների, այդ թվում առաջին հերթին մեր սրբազան Արցախի քաջագունների համար:

Դիմելով Բիսմարկի, Սոֆոկլեսի, Վերգիլիոսի, Լյութերի, Էրազմ Ռոտերդամցու, Ֆեյերի, Պասկալի եւ այլ գոր-

Թիչների ու մարգարեների ասույթներին ու կեցվածքին, դու կատարում ես քո ընդհանրացումները: Եվ գիտե՞ս, Մաքսիմ, ինչու՞մն է կայանում քո հաջողությունը, նրանում, որ դու երբեք չես լքել Արցախը, այդ նշանակում է, որ քո մտահորիզոնի ու խոսքի մեջ մի կողմից արտատպվել է մեր անզուգական բնությունը, մյուս կողմից՝ խոսքդ հյուսվել է քո պապի, իմ պապի, բոլոր արցախցիների տառապած եւ իմաստնացած պապերի կենսափորձից ծնված փիլիսոփայությունից: Այլապես չէին ծնվի քո «Օ՛, ակնթարթ, կանգ առ» էսսեն՝ Մարդու երջանկության մասին, «Օ՛, ժամանակներ» խոհը, «Գողգոթա» պատումը, «Կամք» խոհական հյուսվածքը: Ապա քո դիտարկումները՝ էթնիկ բարդությունից, քո անկողմնակալ գնահատականները հարեւան ժողովուրդների ստեղծագործական ուժերին, մեր սեփական թերությունների քննադատությունը՝ մեղմ հունորով:

Գիտե՞ս, Մաքսիմ, երբ կարդացի «էթնիկ բարդությ» պատկերը, հիշեցի Բաքում: Ինչպես դու ես գրում, ազերի բանաստեղծը իր գրած չափածո գործը, երբ ներկայացնում է իր գրչակից ազերուն, վերջինս լսում է, եւ բաժանվելուց համաձայնվում են այն մտքի հետ, որ իրոք աննման բանաստեղծություններ են հորինել: Իսկ հայ բանաստեղծները միայն օրեր անց են հիշում, որ իրենց ընկերոջ գրածներում գտնված տողեր կան: Այնուհետեւ մտաբերեցի վերջերս ծայր առած «բանավեճերը» Երեւանում եւ Ստեփա-

Նակերտում: Միմյանց չեն հավանում, որովհետև իրար չեն կարդում, իրենց կարծիքները ի ցույց են բերում ընկերականության շրջանակներից: Ով ում համակրում է, նրա գրածն է լավ, իսկ եթե չի համակրում՝ ուրեմն ստեղծածը անարժեք է: Բանը հասնում է հայիոյանքի, ատելության, ժխտման: Եվ վատն այն է, որ թացը վառվում է չորի հետ: Ես, Մաքսիմ, կողմնակից եմ անկողմնակալ քննադատության, ինձ հաճույք եւ ուրախություն է պատճառում ընկերոջ հաջողությունը: Գրականության պատմությունը հյուսում են աստվածային շնորհք ունեցողները, որոնց իսկական, արդարացի քննադատը Յ.Թումանյանի բնորոշմամբ՝ ժամանակն է: Ուրեմն, պետք է լինել խոհեմ՝ լավին լավ ասել, վատին՝ վատ: Թայֆայաբազությունը միշտ խանգարել է գրական առողջ ընթացքին: Ազնիվ քննադատի նպատակը պետք է ուղղված լինի ազգային արժեքներ ստեղծողների խրախուսմանը:

Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ քո «Յրեաները» էստեն եւս հետապնդում է ազգային միասնության գաղափարը, որի կարիքը զգում ենք մենք:

Մաքսիմ Երվանդի, քո այս գրքում հիմնականում դու ես հեքիաթասացը, այսինքն՝ քնարական իմաստուն հերոսը դու ես, եւ գիտե՞ս, իսկական արցախցի հայ ես՝ հոգիդ օծված մեր պապենական օջախների հուսավառ հավատով, ինքնակատարելագործման արդար շողերով: Իսկ արդարություն տանող ճանապարհը դու տեսնում ես խո-

իեն իշխանավորի («Իշխանության անատոմիա») գործունեության մեջ, ժողովրդի անվտանգությունը՝ Սուլլա-Ստալին-Յիտլեր արնախումների բացակայության դեպքում («Կոտորումն մարդկանց»), մարդու կատարելության միակ ուղին նկատում ես հենց իր՝ մարդու մեջ («Եղի՛ր ինքդ քեզ նման»), երկիրը կանգուն պահելու հիմնական գործոնը համարում ես աշխատասիրությունը («Լուա՛ եւ ձիւնից սպիտակ կը լինեն») եւ այլն:

Թեկուզ գրքում զետեղված բոլոր էսսեներդ մի-մի խոհափիլիսոփայական կտավներ են, սակայն «Մտքեր» բաժինը ժողովրդական քո մտածելակերպի, քո իսկ կուտակումների, նախախնամության ընծայած քո բաժին լիաբուռ շնորհքի արդյունք են, մոռացա ասել նաեւ անքուն գիշերների քո արարող ոգու պտուղը:

Կարդալով քո խորհուրդները՝ «Ստածիր խաչակնքվելուց առաջ», «Եթե չենք կարող միշտ մնալ խելոք, ապա պետք է ձգտել չլինել ծիծաղելի», «Ինչո՞ւ ենք սիրում վիճաբանել: Որովհետեւ մինչեւ վերջ համոզված չենք, որ իրավացի ենք», «Եթե ուզում ես ձանձրալի լինել՝ պատմիր քո մասին: Հետո էլի պատմիր: Եվ էլի: Հորանջելու անհաղթահարելի պահանջ է առաջանում», «Քո առավելությունն այն կլինի, որ չնկատվի քո առավելությունը», «Ինչո՞ւ բժիշկներն առաջին հերթին ստուգում են հիվանդի լեզուն: Սկսում են չարյաց արմատից» (օրինակները շատ են), ընթերցողը կրկին համոզվում է տարիների քո մտա-



վոր ծանրակշիռ հունձքի, քո ոգեւորության եւ ինտուի-  
ցիայի կենսաթրթիռ ակունքի ու խոհառատ նվիրումի մեջ:

Աշխարհընկալման քո կուտակումները, Մաքսիմ Եր-  
վանդի, քեզ հասցրել են մի բարձունքի, որտեղից ինչպես  
ափիդ մեջ տեսնում ես կյանքի բոլոր էջերն ու երանգները:  
Դրա շնորհիվ է, որ քո այս ժողովածուի մեջ տեղ են գտել  
մեր ժողովրդի հոգեկան նկարագրին, մարդկային-հասա-  
րակական հատկություններին, բնավորությանը եւ խառն-  
վածքին, քաղաքական-սոցիալական հարաբերություննե-  
րին ու հասկացություններին, հայրենասիրական զգա-  
ցումներին, սերունդների փոխհարաբերություններին  
նվիրված փիլիսոփայական ընդհանրացումներ:

Դու քո այս ժողովածուի «Մենախոսություն ինքս ինձ  
հետ» բաժնում ընդգծել ես հետեւյալ մտորումը, «Արցա-  
խյան գոյամարտը եղավ Ոգու պոռթկում, մեր արյան ա-  
վյունը տվեցինք մեր մեծ պայքարին եւ հիմա նվիրվել ենք  
հոգնության միրվանային: Մինչդեռ ավելի մեծ գործեր կան  
առջեւում, որպեսզի հաղթանակն ավարտվի մեզ արժա-  
նավոր ոսկեհուռ պսակով»:

Մաքսիմ Երվանդի, քո այս գիրքը ոսկեհուռ մի նվեր է  
մեր մշակույթին, եւ ճիշտն ասած, կցանկանայի պատվի-  
րել, որ այդ ժողովածուն ունենա շարունակություն:

Հավատում եմ դրան, փառք Աստծո, դու կարող ես կր-  
կին ուրախացնել մեր ընթերցողներին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

- <sup>1</sup> Հ. Թամրազյան, Գրական ուղիներում, 1962, էջ 113:
- <sup>2</sup> Կ. Աղաբեկյան, Արդի հայ արձակի զարգացման միտումները, (1960-80-ական թթ.), 1992, էջ 42:
- <sup>3</sup> Ս. Աղաբաբյան, Արդի հայ գրականության պատմություն, հ. 2, Ե., 1998, էջ 258:
- <sup>4</sup> А. Бочаров, Требовательная любовь (концепция личности в современной советской прозе), М., 1977, стр.11.
- <sup>5</sup> Ս. Սարինյան, Քննադատությունը եւ գեղարվեստական զարգացումը, Ե., 1973, էջ 151:
- <sup>6</sup> Տե՛ս ժամանակակից հայ արձակը, Ե., 1981, էջ 166:
- <sup>7</sup> Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, 1977, էջ 210:

### ՍԱՐԳԻՍ ԱՐԱՂՅԱՄՅԱՆ

- <sup>1</sup> «Գրական Աղբյուր», 1957, հ. 3, էջ 122:
- <sup>2</sup> Նույն տեղում, էջ 124:
- <sup>3</sup> Նույն տեղում, էջ 115:
- <sup>4</sup> Նույն տեղում, էջ 126:
- <sup>5</sup> Ս. Աբրահամյան- «Սերունդների հետ», Ե., «Ամարաս», 2008թ., էջ 275-276:
- <sup>6</sup> Նույն տեղում, էջ 123:
- <sup>7</sup> «Գրական Աղբյուր», 1958, N 4, էջ 123:
- <sup>8</sup> Ս. Արզումանյան, «Սովետահայ վեպը», գիրք 1, 1980, էջ 377, 378:
- <sup>9</sup> Րաֆֆի, Երկերի ժողովածու, 1999թ., հ. 10, էջ 127:
- <sup>10</sup> Հեղինե Գրիգորյան, «Արցախի գրական ընտանիքը», Ե., 2007, էջ 22:

### ԲԱԳՐԱՏ ՈՒՆՈՒԲԱԲՅԱՆ

- <sup>1</sup> Բ. Ուլուբաբյան, Հայրենի հող, Երեւան, 1959, էջ 56-57:
- <sup>2</sup> Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, գիրք 2, Ե., 1980, էջ 321:
- <sup>3</sup> Հ. Գրիգորյան, Արցախի գրական ընտանիքը, Ե., 2004, էջ 54:
- <sup>4</sup> Բ. Ուլուբաբյան, Թարթառ, Ե., 1963, էջ 85:
- <sup>5</sup> Նույն տեղում, էջ 90:
- <sup>6</sup> Հ. Թունանյան, Երկեր 4 հատորով, հ. 4, Ե., 1969, էջ 248-249:
- <sup>7</sup> Բ. Ուլուբաբյան, Սարդարապատ, Ե., 1989, էջ 4:
- <sup>8</sup> Նույն տեղում, էջ 414:
- <sup>9</sup> Նույն տեղում, էջ 415:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 209-210:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 237:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 239:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 240-241:

## ՄԱՔՍԻՄ ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

### ՈՐՊԵՍ ՍՈՒՏՔ

<sup>1</sup> Մ. Զովհաննիսյան, «Երկեր», հ.1, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ»  
իրատ., 2005, էջ 4

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>3</sup> Զր. Մաթեոսյան, «Սպիտակ թղթի առջեւ», 2004, էջ 46:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 44:

### ԳՅՈՒՂԱՇԽԱՐՀԻ ՏԵՐԵՐԸ

<sup>1</sup> Ռոլան Բարթ, «Գրականությունը եւ ճշմարտությունը, էսսեներ»,  
Երեւան, 1999, էջ 6:

<sup>2</sup> Մ. Զովհաննիսյան, «Երկեր», հ.1, Ստեփ., 2005, էջ 103:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 103:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 104-105:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 110:

<sup>9</sup> Մ.Զովհաննիսյան, Կենսամատյան, 2004, էջ 8:

<sup>10</sup> Մ.Զովհաննիսյան, «Երկեր», Ստեփ., հ.1, 2005, էջ 115:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 115:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 121:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 124:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 130:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 134:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 142:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 149:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 159:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 160:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 164:

- <sup>23</sup> Նույն տեղում, էջ 164:
- <sup>24</sup> Նույն տեղում, էջ 165:
- <sup>25</sup> Նույն տեղում, էջ 173:
- <sup>26</sup> Նույն տեղում, էջ 173:
- <sup>27</sup> Նույն տեղում, էջ 192:
- <sup>28</sup> Նույն տեղում, էջ 195:
- <sup>29</sup> Ժ. Անդրյան, «Լեռնային վտակ», «Սովետական Ղարաբաղ» թերթ, 1963, 11 հոկտեմբերի:
- <sup>30</sup> Բ. Սեյրամյան, «Գրական Աղբյուր» հանդես, 1984, էջ 92-93:

### ԱՆԴՐԱԴԱՐՉ ԲԱՑ ԴՈՆԵՐԻՑ

- <sup>1</sup> Մ.Հովհաննիսյան, «Երկեր», հ.1, 2005, էջ 223:
- <sup>2</sup> Նույն տեղում, էջ 223-224:
- <sup>3</sup> Նույն տեղում, էջ 232:
- <sup>4</sup> Նույն տեղում, էջ 234:
- <sup>5</sup> Նույն տեղում, էջ 239:
- <sup>6</sup> Նույն տեղում, էջ 244:
- <sup>7</sup> Նույն տեղում, էջ 244:
- <sup>8</sup> Նույն տեղում, էջ 257:
- <sup>9</sup> Նույն տեղում, էջ 259:
- <sup>10</sup> Նույն տեղում, էջ 261:
- <sup>11</sup> Նույն տեղում, էջ 265-266:
- <sup>12</sup> Նույն տեղում, էջ 267:
- <sup>13</sup> Նույն տեղում, էջ 269:
- <sup>14</sup> Նույն տեղում, էջ 270:
- <sup>15</sup> Նույն տեղում, էջ 272:
- <sup>16</sup> Նույն տեղում, էջ 281:
- <sup>17</sup> Ս.Արզումանյան, «Իր աշխարհի շնչով», «Գրական թերթ», 1984, 20 ապրիլի:

### ՀԱՐԱՐԸ ՆԱԵՎ ՄԵՐ ԳՅՈՒՂՆ Է

- <sup>1</sup> «Ժամանակակից հայ արձակը», Ե., 1981, էջ 133:
- <sup>2</sup> Մ.Հովհաննիսյան, «Երկեր», հ.1, 2005, էջ 302:
- <sup>3</sup> Նույն տեղում, էջ 300:
- <sup>4</sup> Նույն տեղում, էջ 306:
- <sup>5</sup> Նույն տեղում, էջ 314:
- <sup>6</sup> Նույն տեղում, էջ 315:
- <sup>7</sup> Պ. Սեւակ, Երկերի ժողովածու, հ.5, 1974, էջ 260:

<sup>8</sup> Մ.Հովհաննիսյան, «Երկեր», հ.1, Ստեփ., 2005, էջ 334:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 335-336:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 337:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 375-376-378:

#### ԱՐՆԱԳՈՒՅՆ ԳԻՇԵՐՆԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾՆԵՐԸ

<sup>1</sup> Հ. Թումանյան, Երկեր 4 հատորով, Ե., 1969, էջ 341-342

<sup>2</sup> Մ.Հովհաննիսյան, «Երկեր», հ.1, Ստեփ., 2005, էջ 7:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>5</sup> «Գրական Ադրբեջան», 1971, թիվ 3:

<sup>6</sup> Մ.Հովհաննիսյան, «Երկեր», հ.1, Ստեփ., 2005, էջ 42:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 68:

<sup>8</sup> Ն. Աղայան, «Մեմախոսություն ժամանակի հետ», Ե., 2006, էջ 5-6:

#### ՄԵՆՔ ՄԵՆՔԻՆ ՍՈՒՆՔ ԵՆՔ ԱՍՈՒՄ

<sup>1</sup> Մ.Հովհաննիսյան, «Երկեր», հ. 2, Ստեփ., 2006, էջ 3:

<sup>2</sup> «Հայրենիքի ձայն», 1991, հունվարի 16:

<sup>3</sup> Մ. Հովհաննիսյան, «Երկեր», հ. 2, Ստեփ., 2006, էջ 7:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 16:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 21:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 40:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 41-42:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 69:

- 22 Նույն տեղում, էջ 71:
- 23 Նույն տեղում, էջ 71:
- 24 Նույն տեղում, էջ 99:
- 25 Նույն տեղում, էջ 102:
- 26 Նույն տեղում, էջ 143:
- 27 Նույն տեղում, էջ 144:
- 28 Նույն տեղում, էջ 145:
- 29 Նույն տեղում, էջ 145:
- 30 Նույն տեղում, էջ 146:
- 31 Նույն տեղում, էջ 146:
- 32 Նույն տեղում, էջ 147-148:
- 33 Նույն տեղում, էջ 148:
- 34 Նույն տեղում, էջ 150:
- 35 Նույն տեղում, էջ 154:
- 36 Նույն տեղում, էջ 155:
- 37 Նույն տեղում, էջ 155:
- 38 Նույն տեղում, էջ 157:
- 39 Նույն տեղում, էջ 160:
- 40 Նույն տեղում, էջ 171:
- 41 Նույն տեղում, էջ 171-172:

**ԳՈՅԱՄԱՐՏԸ՝ ՆԱԵՎ ՊԱՏԳԱՄ**

- 1 Մ. Հովհաննիսյան, «Երկեր», հ. 2, Ստեփ., 2006, էջ 3:
- 2 Նույն տեղում, էջ 198:
- 3 Նույն տեղում, էջ 208:
- 4 Նույն տեղում, էջ 208:
- 5 Նույն տեղում, էջ 215:
- 6 Նույն տեղում, էջ 222:
- 7 Նույն տեղում, էջ 223:
- 8 Նույն տեղում, էջ 225:
- 9 Նույն տեղում, էջ 226:
- 10 Նույն տեղում, էջ 238:
- 11 Նույն տեղում, էջ 239:
- 12 Նույն տեղում, էջ 247:
- 13 Նույն տեղում, էջ 250:
- 14 Նույն տեղում, էջ 273:
- 15 Նույն տեղում, էջ 275:
- 16 Նույն տեղում, էջ 276:

- <sup>17</sup> Նույն տեղում, էջ 277:
- <sup>18</sup> Նույն տեղում, էջ 279:
- <sup>19</sup> Նույն տեղում, էջ 281:
- <sup>20</sup> Նույն տեղում, էջ 283-284:
- <sup>21</sup> Նույն տեղում, էջ 286:
- <sup>22</sup> Նույն տեղում, էջ 287:
- <sup>23</sup> Նույն տեղում, էջ 308:
- <sup>24</sup> Նույն տեղում, էջ 311:
- <sup>25</sup> Նույն տեղում, էջ 518:
- <sup>26</sup> Նույն տեղում, էջ 523:

**Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԱՐՎԵՍՏԻ  
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

- <sup>1</sup> Մ. Հովհաննիսյան, «Երկեր», հ. 1, Ստեփ., 2005, էջ 7:
- <sup>2</sup> Նույն տեղում, էջ 27:
- <sup>3</sup> Նույն տեղում, էջ 47-48:
- <sup>4</sup> Նույն տեղում, էջ 196:
- <sup>5</sup> Նույն տեղում, էջ 124:
- <sup>6</sup> Օրինակները բերվում են գրողի ընտիր երկերի 1 հատորից (2005 թ.):
- <sup>7</sup> Նույն տեղում, էջ 162:
- <sup>8</sup> Լ. Եգեկյան, «Հ. Մաթեոսյանի խոսքարվեստի մի քանի հարցեր», Եր., 1986, էջ 45:

**ԿՈՄԻՏԱ ՂԱՆԻԵԼՅԱՆ**

Տես «Ծիչ», «Պորտալար» ժողովածուները:

**ՄԱՐՏԻՐՈՍ ՈՔՆ**

Տես «Թողեք ապրեն», «Հրեշտակին այցելիր գիշերով» ժողովածուները, «Դժոխքից եկածին հարցեր չեն տալիս» վեպը:

**ՄԱՐՍԵԼ ՀԱՅԿ**

Տես «Կախարդական ակնոցները», «Միջօրե», «Հմարամիտ աստղագուշակը» գրքերը:

**ԱՐՏԱՇԵՍ ՂԱՀՐԻՅԱՆ**

Տես «Լեռան հուշ» ժողովածուն:

**ԿԻՄ ԳԱՐԻԵԼՅԱՆ**

Տես «Ինքնաթիռներ՝ աղավնու թևերով» ժողովածուն:

**ՆՎԱՐԴ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ**

Տես «Կոլցո» եռհատորյակը:

**ՆՈՐԵԿ ԳԱՄՊԱՐՅԱՆ**

Տես «Չավարտված խաղ» ժողովածուն:

**ՎԱՐԴԳԵՍ ԲՎՂՐՅԱՆ**

Տես «Ավո», «Ֆենոնեն», «Սեզո» գրքերը:

**ՄԱՆՎԵԼ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

Տես «Ծիածանը լեռներում», «Արցախում պատմող հեքիաթներ» ժողովածուները:

**ԵՐՎԱՆԴ ՄԻՐՁՈՅԱՆ**

Տես «Իմ հարսանիքում ես չեմ պարել» վեպը:

**ՍՈՖՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

Տես «Ծիծաղափունջ», «Ամբասիր մրջյուններ» ժողովածուները:

**ԱՐՓԻ ՎԱՆՅԱՆ**

Տես «Իմ բաժին լույսը» պատմվածքների ժողովածուն:



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ձեռնարկ, որի կարիքն զգացվում է .....	3
Առաջաբանի փոխաբերն .....	6
Սարգիս Աբրահամյան .....	17
Իսահակ Ալավերդյան .....	43
Բագրատ Ուլուբաբյան .....	70
Մաքսիմ Հովհաննիսյան .....	106
Կոմիտաս Դանիելյան .....	270
Մարտիրոս Որբն .....	310
Մարսել Հայկ .....	344
Արտաշես Ղահրիյան .....	366
Կիմ Գաբրիելյան .....	371
Վալերի Քոչարյան .....	376
Իլյա Արցախեցի .....	406
Կյանքին համընթաց .....	445
Բաց նամակ գրողներ Կիմ Գաբրիելյանին եւ Վոլոդյա Ստեփանյանին .....	452
Բաց նամակ Արտաշես Ղահրիյանին .....	456
Բաց նամակ Մաքսիմ Հովհաննիսյանին .....	462
Ծանոթագրություններ .....	472

# Սուկրատ Աղալարի Խանյան

## ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Վեցերորդ հատոր

Խմբագիր՝	Հովիկ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
Գեղ. խմբագիր՝	Մնացական ԱԶԻԶՅԱՆ
Տեխ. խմբագիր՝	Ժաննա ԱՎԱՆԵՍՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝	Գայանե ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հանձնված է շարվածքի 10.05.2010թ.: Ստորագրված է տպագրության 14.06.2010 թ.:  
Տառատեսակ՝ «Dallak Helv»: Թուղթ՝ օֆսեթ, 42x 60 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպագրական 30 մամուլ:  
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակ՝ 250: Գինը՝ պայմանագրային:

«ՍՈՆԱ» գրահրատարակչություն  
ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների, 16  
Հեռ. 951555

